ԲՈՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԲՈՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Հետազոտությունների սույն ժողովածուում դիտարկվում են բռնության հիմքերը հայաստանյան իրականության մեջ՝ կենտրոնանալով հատկապես քրեական մշակույթի հիմքերի, բռնության դրսևորումների վրա՝ դպրոցում, բանակում և ընտանիքում: Գրքում վերլուծվում է բռնության կապը քրեական բարքերի, լեզվի և վարքագծի հետ, վեր է հանվում աղքատության և ընտանեկան բռնության կապը: Ամեն հոդվածում ձևակերպված են բռնության դրսևորումները հաղթահարելուն ուղղված քայլերի և քաղաքականությունների առաջարկներ բոլոր շահառու խմբերին՝ կառավարությունից մինչև անհատ:

Ժողովածուն կարող է հետաքրքրել ինչպես որոշում ընդունողներին, այնպես էլ ոլորտային քաղաքականությունների մասնագետներին և անհատներին:

ՀՏԴ 316.6:343
ԳՄԴ 88.5+67.408
Բ 898

Բռնության մշակույթը Հայաստանում
Գ. Տեր-Գաբրիելյան (գլխավոր խմբագիր),
Գ. Հովակիմյան, Հ. Սմբատյան, Դ. Պետրոսյան,
Բ 898 Յ. Ավագյան, Շ. Խուրշուդյան. – Եր.: Եվրասիա
համագործակցություն հիմնադրամ, 2020. – 404 էջ:

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

ԵՎՐԱՍԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Սույն ժողովածուն ստեղծվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից՝ Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի և Մարշալի գերմանական ֆոնդի տարածաշրջանային համագործակցության սևծովյան հիմնադրամի աջակցությամբ: Սույն հրապարակման բովանդակությունը պատկանում է միայն հեղինակներին և որևէ կերպ չի կարող ընկալվել որպես Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի, Մարշալի գերմանական ֆոնդի տարածաշրջանային համագործակցության սևծովյան հիմնադրամի և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի տեսակետ:

ՀՏԴ 316.6:343
ԳՄԴ 88.5+67.408

ISBN 978-9939-1-1200-8

© Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակ, 2020

© Մարշալի գերմանական ֆոնդի տարածաշրջանային համագործակցության սևծովյան հիմնադրամ, 2020

© Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020

2020 թ. դեկտեմբերի նախաբան

Գիրքը պատրաստ էր տպագրության, երբ տեղի ունեցավ Արցախյան 2020 թ. սեպտեմբերի 27 - նոյեմբերի 10 պատերազմը: Հրադադարի հաստատումից հետո, արտաքին ու ներքին քաղաքական ճգնաժամի խորացման պայմաններում, գիրքը կազմողներին և խմբագիրներին պարզ դարձավ, որ, նախ, գրքի բովանդակությունը հնարավոր չի լինի փոփոխել, որպեսզի պատերազմի իրողությունը հաշվի առնվի, և երկրորդ՝ գիրքը մնում է նույնքան ակտուալ, եթե ոչ ավելի, քան մինչև պատերազմը: Բանակային բարքերի քննադատությունը, որ տեղ է գտել գրքում, վերաբերում է նախ և առաջ համեմատաբար խաղաղ ժամանակվա բանակին և ոչ մի կերպ չի նսեմացնում զինված ուժերի և կամավորների հերոսությունը 44-օրյա պատերազմի ընթացքում: Մյուս կողմից, պատերազմը վեր հանեց և է՛լ ավելի ընդգծեց բազում խնդիրներ, որոնք նաև անդրադարձ էին գտել սույն գրքի հոդվածներում: Ուստի որոշեցինք գիրքը հրապարակել անփոփոխ:

բովանդակություն

Առաջաբան 7

Գայանե Հովակիմյան
Քրեական բարքերի, լեզվի և վարքագծի ազդեցությունը սոցիալական հարաբերություններում բռնության դրսևորման վրա 27

Հայկ Սմբատյան
Բռնության առաջացման պատճառները և կանխարգելման մեխանիզմները ՀՀ միջնակարգ կրթության ոլորտում 91

Դավիթ Պետրոսյան, Յուրի Ավագյան
ՀՀ զինված ուժերում առկա քրեական բարքերի և վարքային մոդելների վերլուծություն..... 145

Շուշանիկ Խուրշուդյան
Աղքատության և ընտանեկան բռնության կապը. ինչպես է աղքատությունն ազդում ընտանեկան բռնության առաջացման և դրսևորման վրա 215

Վերջաբանի փոխարեն 299

Սեղմագրեր 383

Summaries..... 387



ԱՌԱՋԱԲԱՆ

Բռնությունը դժվար ձևակերպվող երևույթ է: Ի՞նչ ենք հասկանում «բռնություն» ասելով: Առանց խորանալու այս երևույթի համակողմանի և համապարփակ սահմանման փորձերի մեջ՝ նշենք, թե բռնության ո՛ր տարատեսակները և համապատասխանաբար ո՛ր ձևակերպումներն են հասցեագրվում սույն աշխատության մեջ:

Բռնության մի շարք տեսակներ վերաբերում են այն դեպքերին, երբ մարդու կողմից մարդու վրա ազդեցություն է գործադրվում այնպես, որ այդ ազդեցության հասցեատիրոջ ֆիզիկական ամբողջականությունը տուժում է: Այդպիսի դեպքերն անվանում են ֆիզիկական բռնություն: Կա թույլատրված ֆիզիկական բռնության դեպք, երբ պետությունը, ի դեմս, օրինակ, ոստիկանների, ֆիզիկական բռնություն է կիրառում բերման ենթարկվողի նկատմամբ: Կան թույլատրված ֆիզիկական բռնության[1] դեպքեր: Կան արդար (օրինական, արդարացվող) և չարդարացված/չարդարացվող դեպքեր: Օրինակ՝

1. Թույլատրված կամ լեգիտիմ կամ մոնոպոլ բռնություն կամ ուժի արդարացված կիրառում է համարվում պետության կողմից օրինականապես կիրառվող բռնությունը. https://en.wikipedia.org/wiki/Monopoly_on_violence, ինչպես նաև ինքնապաշտպանության որոշ դեպքեր, բռնության որոշ (բնավ ոչ բոլոր) դրսևորումներ պատերազմական իրադրություններում և այլն: Միաժամանակ, պատմության ընթացքում և մեր օրերում հայտնի են բազում դեպքեր, երբ պետության կողմից կիրառվող իբր «լեգիտիմ» բռնությունն անհիմն է և չարդարացված, ինչի դեմ էլ հենց պայքարում է Մարդու իրավունքների հարացույցը:

խոշտանգումն արգելված է և չարդարացվող/չարդարացվելիք, ինչ պատճառով էլ այն կիրառվի: Շատ քիչ դեպքեր կան, երբ ֆիզիկական բռնությունը մարդու հանդեպ սկզբունքորեն թույլատրելի է:

Կա հոգեբանական բռնություն՝ բռնություն մարդու կողմից մարդու հանդեպ, որը ֆիզիկական չէ, սակայն խոսքով կամ վարքով խոցում է մարդու հոգեբանական ամբողջականությունը և/կամ արժանապատվությունը: Բանն այն է, որ խոցված արժանապատվությամբ և/կամ խոցված հոգեբանական ամբողջականությամբ մարդը հետագայում դրսևորում է այնպիսի վարք, որը բացասաբար է ազդում մարդկային հասարակության բարեկեցության վրա: Նա կարող է չդառնալ հասարակության լիիրավ և հաջողակ անդամ, կամ ինքն էլ կարող է դառնալ բռնարար: Մարդը բարձրագույն արժեքներից է, և նրա ֆիզիկական ու հոգեբանական ամբողջականությունը, ներառյալ արժանապատվությունը, պիտի պաշտպանվի և պահպանվի հասարակության կողմից: Սրա վրա է հիմնված Մարդու իրավունքների համաշխարհային հարացույցը: «Բռնություն» հասկացության ներմուծումն այդ հարացույց ընդլայնում է մարդու իրավունքների համար պայքարի ներկապանակը, քանի որ բռնությունը բացառելուն ուղղված քաղաքականությունները հասցեագրում են ոչ միայն պետության կողմից մարդու հանդեպ կիրառված չարդարացվող բռնությունը, այլև վերը նշածս տարբերակները՝ պետությունից պահանջելով ազդել մարդկանց և հասարակությունների, ինչպես նաև վարքային մշակույթների վրա, որպեսզի այդ դեպքերը վերանան: Այսպիսով՝ պետության վրա դրվում է ոչ միայն ուղղակի պատասխանատվություն՝ չկիրառել այնպիսի բռնություն, որն անհնար է արդարացնել, այլև ռազմավարական հեռակա պատասխանատվություն՝ իր ինստիտուցիաներով ազդելու հասարակության վարքային մշակույթի վրա այնպես, որ բռնության մշակույթը եթե չվերանա էլ, ապա հնարավորինս քչանա:

Գիտենք, որ հասարակությունը, նրա պատմությունը, տնտեսությունը, ավանդույթները և այլն, նույնպես պայմանավորում են բռնության դրսևորումներ: Այդ դրսևորումները մենք անվանում ենք կառուցվածքային բռնություն: Խոսքն այն մասին է, որ անարդար հասարակության մեջ մարդը կարող է ծնվել և ապրել այնպիսի պայմաններում, որոնք նրան թույլ չեն տալիս հասնել իր զարգացման բնականոն մակարդակին: Դրա տարբեր դրսևորումները կան՝ հեղինակության ճնշում, հասակակիցների ճնշում, բուլլինգ, մոբբինգ և այլն, տնտեսական ճնշում, և ընդհանրապես՝ պարզապես քո շուրջը ձևավորված ինստիտուցիոնալ աշխարհի անխուսափելի ազդեցությունը:

Միջավայրի և հասարակության ինստիտուցիոնալ համակարգի այդ ազդեցությունը նույնպես սույն գրքում դիտարկվում է, սակայն մասնակիորեն: Օրինակ՝ խորությամբ ցույց է տրվում՝ ինչպես հասարակության պատմությունը՝ ԽՍՀՄ-ի մաս լինելը, գուլագային[2] մշակույթը բերեցին գողաքրեական (հակա-, ենթա-) մշակույթի առաջացմանը հետխորհրդային Հայաստանում: Դիտարկվում է աղքատության և բռնության կապը: Սակայն գրքի սահմանափակումների պատճառով չի դիտարկվում, օրինակ, բնության և կենդանական աշխարհի հանդեպ բռնի վերաբերմունքի անդրադարձը՝ կրկին որպես բռնություն, սերունդների բարքերի, վարքի և հետևաբար բարեկեցության վրա:

Կա «բռնություն» երևույթի է՛լ ավելի բարդ ձևակերպում. սովորական դեպքերում բռնություն է համարվում այն ամենը, ինչը մարդը (անհատը) զգում է որպես իր հանդեպ կիրառված բռնություն: Այսինքն՝ եթե ես չեմ զգում, որ բռնություն գործադրեցի դիմացինի հանդեպ, սակայն նա դա զգում է, ես պիտի դադարեմ անել այն, ինչ անում էի: Սակայն մարդիկ հաճախ հրաժարվում են այդ կանոնին հետևելուց՝

2. Գուլագ – ГУЛаг – ռուսերեն Государственное управление лагерей կազմակերպության հապավումը, որը, որպես մեկ բառ, բնորոշում է խորհրդային շրջանի համակենտրոնացման ճամբարների համակարգը:

պնդելով, որ իրենք բռնություն չեն գործադրել դիմացինի հանդեպ, այնինչ նա պնդում է, որ իր հանդեպ բռնություն է գործադրվել անարդար կերպով, այս կամ այն շահադիտական նպատակներով, օրինակ՝ ինքնահաստատվելու, դիմացինին ճնշելու համար և այլն, կամ էլ պարզապես՝ քանի որ այդպիսի պնդումները նորաձև են: Այսպիսի դեպքեր հաճախ են պատահում գենդերային հարաբերություններում (բայց ոչ միայն), երբ տղամարդու «ավանդական» կոչված վարքը կանայք, օրինակ, մեկնաբանում են որպես «պատրիարխալ»՝ հայրիշխանական և բռնի, իսկ հակառակ կողմը կարող է պնդել, որ դա իրականում բռնություն է իր և իր ազատությունների հանդեպ, քանի որ իր մտադրությունն անմեղ է եղել այդ վարքը դրսևորելիս, և քանի որ այդպես «ընդունված է»: Այսպիսի դեպքերը նույնպես վերլուծված են սույն գրքում, գենդերային հարաբերությունների առնչությամբ՝ ընտանեկան բռնության մասին հոդվածում, իսկ այլ տարբերակները՝ բանակում և դպրոցում հարաբերությունների մասին հոդվածներում: Չէ՞ որ շատ տարածված մեխանիզմ է բռնության զոհին, որը փորձում է պատասխան տալ կամ հակադրվել, մեղադրել բռնություն հրահրելու կամ տարածելու մեջ:

Հասարակությունը պիտի ունենա առաջնորդներ՝ եթե ոչ քաղաքական, ապա մտքի և վարքի, որոնք ազդում են հասարակության պատկերացումների, արժեքների վրա և օգնում փոփոխել դրանք, եթե այդպիսիք բռնություն են պարունակում: Կան շատ դեպքեր, երբ հասարակության որևէ մասը՝ նույնիսկ գերիշխող մեծամասնությունը, տեղյակ չէ, որ տվյալ վարքը բռնություն է: Դա պարզորոշ երևում է կնոջը ծեծելու նկատմամբ վերաբերմունքի մասին վիճակագրությունից, որ ներկայացված է ընտանեկան բռնության մասին հոդվածում: Անհրաժեշտ է ուղղորդում: Պետք է վերլուծել անցյալից ժառանգած վարքային մոդելները, դրանց լավ մասը պահպանել, իսկ վատ մասից հրաժարվել: Անցյալից ժառանգված

ամեն ինչ չէ, որ արժեքավոր է[3]:

Ահա այսպիսի հարցերի մասին է սույն գիրքը: Այն ներկայացնում է ԽՍՀՄ քաղաքական և սոցիալական ազդեցություններից եկող բռնության պատմությունը, այդ ժառանգությանն առնչվող դրսևորումները դպրոցում, բանակում և գենդերային հարաբերություններում կամ ընտանեկան միջավայրում և բռնության այդ դրսևորումներից հրաժարվելու, դրանք վերացնելու միջոցներ է առաջարկում:

Բռնության այն տեսակը, որը որպես մոդել և սկզբնակետ է վերցված այս գրքում, հակամարդկային վարքի կուտակի իդեալական նկարագիր է (տե՛ս Պատկեր 1. «Բռնության իդեալական աշխարհ»): Եթե այս աշխարհն իրական լիներ և մեծամասնական, ամենայն հավանականությամբ, մարդկային քաղաքակրթությունն անհնար կլիներ և չէր զարգանա: Սակայն բռնության այս աշխարհն ունենում է իր խտացված տարբերակները՝ իդեալական բռնության աշխարհին մերձեցող մոդելները երևակայված (ասենք՝ հակաուտոպիստական գրականության մեջ) կամ մանավանդ՝ իրական տոտալիտար համակարգերում կամ ավելի փոքր հանրություններում՝ մաֆիաներում, գաղութներում և այլն:

Հենց այդ մոդելային բռնության աշխարհի ազդեցություններն են, գրքի հեղինակների կարծիքով, մեծապես պայմանավորել բռնության մշակույթի սողոսկումը և արմատավորումը հետխորհրդային Հայաստանում: Ավելին՝ անքակտելիորեն կապված լինելով անխնա «վայրի» շահագործողական կացութաձևին, որը ներդրվեց հետխորհրդային Հայաստանում

3. CEDAW-ի (Convention on the Elimination of all Forms of Discrimination Against Women, հայ.՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա) 5-րդ հոդվածի 1-ին մասում ասվում է, որ պետությունները պիտի փոխեն վարքագծի սոցիալական և մշակութային այն մոդելները, որոնք հիմնված են այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության կամ տղամարդկանց ու կանանց կարծրատիպային դերի գաղափարի վրա: Սա դեռևս հազվադեպ դրույթ է միջազգային իրավունքում, միայն CEDAW-ում է արտացոլված, սակայն ցույց է տալիս «իրավունք» հասկացության զարգացման ուղղությունը. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505 [դիտվել է 12.08.2020]:


«ԼՈՐՄԱԼ» ԱՇԽԱՐՀ. ԲՈՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ, ՍԱՄՍԱԿՈՎ, ՉՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ, ՀԱՏՈՒԿԵՆՏ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ
2018 թ. ապրիլ
բռնության հակամշակույթի և հակաբռնության մշակույթի հակասությունը մոցույթ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ/ ՍՈՂԵԼՆԵՐ/ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ
ԳԱՂՈՒԹ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐ
ԲՈՆԱԳԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՖԻԿ
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ. բռնության մշակույթի բյուրեղացում
պայմանական նշաններ
հակաբռնություն
բռնություն
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ԴԻԵՍԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
· Homo homini lupus est
· Тебя не гребут, не подмахивай
· Умри ты сегодня, я - завтра
· Բեապրեմդել
· Իշխանությունը հիմնված է անհատ առաջնորդի գաղափարի վրա
· Համակարգը երևակայվում է որպես ճշգրիտ բուրգ
· Համակարգի ներսում տիրում է անարխիա, որը հիմնված է միայն բիրտ ուժի իշխանության վրա (Ներսի անդամներն էլ են իրար հետ անընդհատ ուժային կոնֆլիկտի մեջ)
· Համակարգը բնորոշվում է ստվերության առկայությամբ
· Ամիատի բիրտ ֆիզիկական ուժը գլխավոր կարգավորիչն է

Պատկեր 1

անարդար կերպով քաղաքական իշխանության եկած ուժերի կողմից (նրանք օգտվեցին Հայաստանի ճգնաժամային վիճակից՝ պատերազմից և աղքատացումից), բռնության մշակույթը Հայաստանում է՛լ ավելի էր բյուրեղանում առնվազն մինչև 2018 թվականը: Ավելի նեղ իմաստով այդ համակարգը բնորոշվում է որպես կոռուպցիոն, բանդիտական, թալանչիական կամ այլ նորաձև եզրերով՝ կլեպտոկրատիկ (գողաիշխական) կամ նույնիսկ «պետության զավթում» (քրեական ուժերի/աշխարհի կողմից): Մենք դրան մոտ էինք, դա երևում է թեկուզ նրանից, թե գողական վարքի ջատագով և մշակույթի կրող որքան մարդ կար իշխանական ղեկերին՝ գործադիրում, օրենսդիրում թե դատաիրավական համակարգում:

Բռնության աշխարհի տարբեր դրսևորումները, ի բնե միմյանց հետ համագործակցության շահ, ինչպես և նույն արժեքներն ունենալով, հեշտորեն միմյանց հասկանալու շնորհիվ միավորվում էին՝ հավասարակշռությունից հանելով հասարակական համակարգը, որտեղ շատերի համար պարզ էր դառնում, որ միայն անարդար, շահագործողական, կոռուպցիոն, կարճատես նպատակներ ունեցող և բռնությունների դրսևորումներով լի վարքով է, որ հնարավոր է ադապտացվել և փորձել հաջողության ձգտել: Այդպիսով բռնության մշակույթը հայտ ներկայացրեց՝ դառնալու դոմինանտ մշակույթ հետխորհրդային Հայաստանում:

Սա նաև պայմանավորված էր պատերազմի գործոնով: Պատերազմն ինքնին պահանջում է հասարակության միավորում, միավորումն ավելի հեշտ է օտարի հանդեպ ատելության շուրջ, պատերազմի տագնապը, միասնության կոչերը մարդկանց թույլ չեն տալիս ելնել անարդարության դեմ, մինչդեռ պատերազմի մենեջերները, փոխանակ նրա հավանականությունը փոքրացնելու հնարքներ կառուցելու, զբաղված էին նրանից օգտվելով և նրա գաղափարախոսությունը տարփողելով՝ շարունակելով գռփել և շահագործել հանրությանը,

ներառյալ պատերազմի անմիջական «գործող անձանց»՝ բանակին և անվտանգային համակարգերին: Այս խնդիրը, որ շատ առումներով է պայմանավորել բռնության մշակույթի արմատավորումը Հայաստանում, գրքում քննարկվում է միայն բանակում ոչ ֆորմալ հարաբերությունների առումով, իսկ խնդրին, թե ինչպե՞ս են պատերազմական իրավիճակը, հոգեբանությունը, մշակույթն ազդում մարդկանց վարքի վրա՝ մղելով նրանց նաև այդ վիճակից դուրս բռնի վարքի, այս գիրքը չի անդրադառնում: Դա այլ ուսումնասիրության թեմա է, անշուշտ, շատ կարևոր: Հետտրավմատիկ սթրեսի համախտանիշի ազդեցությունը հայաստանյան հասարակության վրա հետազոտված չէ: Մինչդեռ այն կրում է հասարակության գերակշռող մեծամասնությունը պատերազմի պատճառով[4] և պարբերաբար ստանում է նորանոր պատերազմական իրադարձությունների պատճառով: Այդ համախտանիշի ազդեցությունը ամենօրյա բռնի վարքի դրսևորումների վրա նույնպես հետազոտված չէ: Ավելին՝ այդ սթրեսի գոյությունն իսկ հաճախ բացասվում էր Արցախյան առաջին պատերազմի հաղթական լինելը սթրեսի վերացման պատճառ ներկայացնելով: Հայաստանում նույնիսկ գրեթե չկան մասնագետներ, որոնք զբաղվում են այդ խնդրով՝ ի տարբերություն, ասենք, Վրաստանի, որտեղ զարգացած է պատերազմի հետևանքների ազդեցության ուսումնասիրությունը հասարակության վրա՝ բժշկական, հոգեբանական և հոգեբուժական առումներով:

Մի բան պարզ է. ինչպես որ բռնության մշակույթի ազդեցությանը ենթարկված չլինելը և այդ ազդեցությունից երաշխավորված ապահովվածությունը պայմանավորում են մարդու ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությունը,

4. Իսկ եթե գնանք ավելի խորքեր՝ առնվազն ցեղասպանությունից սկսած, ներառյալ ստալինյան բռնաճնշումների դարաշրջանը (դրա մասին ավելի մանրամասն խոսվում է սույն գրքի առաջին հոդվածում և վերջին զրույցում, ինչպես նաև Armenia 3.0 գրքում. տե՛ս Ter-Gabrielyan, G. (2020). Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. Yerevan: EPF. Available at: https://epfarmenia.am/document/Armenia–3–0–Understanding–20th–Century–Armenia [Accessed 18.07.2020]):

առողջությունն ու հասարակության մեջ առավել հաջողություններին հասնելու կարողությունը, նույնպես էլ բռնության մշակույթի կուլտիվացիան դեպ թշնամի (որքան էլ թշնամին իրական լինի, և խնդիրը՝ «օբյեկտիվ»)՝ հանդիպադրված հակաբռնության հռետորաբանական կոչերին (կամ անկեղծ սպասմանը) ամենօրյա կյանքում, ստեղծում է մարդու նկարագրի ամբողջականության խոտորում. մարդը (մանավանդ պատանին կամ երիտասարդը) մտքում պետք է պահի երկու արժեքային համակարգ. որ մարդիկ պիտի միմյանց հետ ոչ բռնի հարաբերություններ ունենան՝ մի կողմից, և որ, սակայն, կա մի պետություն («ազգ») (կամ՝ ավելի), որը քո տեսակի ոչնչացումն է ուզում, ուրեմն նրանք մարդ չեն, և նրանց հանդեպ ամեն ինչ թույլատրված է՝ մյուս կողմից: Բնական է, որ այդ հակասությունը, արժեքային այդ աղճատումը չի կարող չազդել հասարակական հոգեբանության և արժեքների վրա: Թշնամուն հանդիպադրվելու արժեհամակարգը, եթե կուլտիվացվում է իր պրիմիտիվ տարբերակով և շահադիտական նպատակներով, պայմանավորում է և՛ ներհասարակական աղճատված հարաբերությունները, և՛ կեղծ ավանդապաշտությունը՝ բռնության իր ցցուն դրսևորումներով, և սկզբունքորեն խանգարում առաջխաղացման հնարավորությանը:

2018 թ. ապրիլյան հեղափոխությունը եկավ քանդելու հենց այդ գորդյան հանգույցը: Բռնության առանձին դրսևորումների միավորումն ու այդ համակարգի բյուրեղացումը Հայաստանում դեպի միակ և դոմինանտ մշակույթ, որը հասարակությունը և պետությունը տանում էր դեպ կործանում, կարծես թե, կասեցվեց:

Սակայն բռնության մշակույթի կրողները, ելնելով իրենց շահից կամ ներարկված լինելով այդ արժեքներով, շարունակեցին պայքարը այն բոլոր միջոցներով, որ իրենք ունեն իրենց զինապահոցում: Այդպիսով, հեղափոխությունից երկու կամ ավելի տարի անց մենք ունենք բեկում՝ մի շարք կարևոր

առաջխաղացումներ. գլխավորը՝ բռնության մշակույթի համատարած բյուրեղացման կասեցում և, ընդհակառակը, հակաբռնության մշակույթի բյուրեղացման միտումներ, սակայն չունենք վերջնական հաղթանակ: Մարտը թեժ է: Բռնության մշակույթի իդեալական պատկերի իմացությունը թույլ է տալիս հասկանալ, թե դրա մնացուկները (երբեմն՝ բավական հզոր) ի՞նչ միջոցների կարող են դիմել: Քրեական մշակույթը, ԽՍՀՄ Գուլագից սերված և այնտեղ թրծված գողականների աշխարհը հասկանալը հնարավորություն է տալիս ճանաչել հակառակորդի վարքի ներկապանակը և միջոցներ ձեռնարկել: Այս գիրքը նաև դրա համար է կարևոր:

Չխորանալով այդ թեմայի մեջ՝ նշեմ բլատնոյների վարքին հատուկ երեք առանձնահատկություն, որոնք տիպական են երևում նաև մերօրյա պայքարը դիտելիս. ա) Թվում է՝ նրանք երբեք չեն հանձնվում և հաղթելու համար կօգտագործեն ցանկացած միջոց («բեսպրեդելի» արժեքը). թվում է՝ նրանց կարելի է միայն կոտրել: բ) Իրենց այդ վարքում՝ միշտ բեսպրեդելի պատրաստ, նրանք խաղացկուն են՝ խաղացող. նրանք խաղ են խաղում: Այն ամենը, ինչ ուրիշների համար սրբություն է, նրանց համար խաղ է: Ու նաև դա է նրանց ուժը՝ ի թիվս այլ հատկանիշների: գ) Նրանք, սակայն, չլինելով բազմակողմանիորեն զարգացած անհատականություններ և ներքուստ լինելով հաճախ շատ անվստահ, մեծապես հակված են ընդունելու և ընդօրինակելու «ընդունված» վարքաձևերը. հենց որ հասարակությունում մթնոլորտը փոխվում է, նրանք էլ սկսում են, թեկուզ ձևականորեն, ադապտացվել, հարմարվել խաղի նոր կանոններին (իսկ այդ ձևականությունը նրանց որոշ մասի դեպքում դառնում է միակ վարք՝ այդպիսով չեզոքացնելով նրանց գործոնը): Հենց այն, որ նրանք մի պահ «բեսպրեդելով» էին սպառնում կամ իրագործում դա (ինչպես Բելառուսում 2020 թ. մասսայական բողոքի ակցիաների օրերին), իսկ մյուս պահին «քնքուշ» են և «օրինապահ», նրանց վոլյունտարիստական՝ կամայական վարքի, էթիկական արժեքների բացակայության գլխավոր

արտահայտումներից է, ինչը և պիտի հասցեագրվի:

Նրանց ազդեցությունը և Հայաստանի՝ դեպի ճգնաժամ ընթացքը պայմանավորված էին նաև ԽՍՀՄ նախկին աշխարհի հետ Հայաստանի հարկադրված կապերով՝ հատկապես Ռուսաստանի հետ, որը գնաց նույն ուղղությամբ՝ դեպի բռնության համակարգերի միավորումն ու բյուրեղացումը, ինչ Հայաստանը, գրեթե նույն ժամանակից՝ 2000-ականների սկզբից ի վեր: Այս խնդիրը նույնպես գրքում շոշափվում է միայն այնքանով, որքանով որ ԽՍՀՄ ընդհանրական մշակույթի՝ Գուլագի միջոցով եկած գողականության մշակույթի վարքն ու լեզուն են շոշափվում, կամ բանակի՝ խորհրդային բանակից ժառանգածը: Տնտեսական՝ կառուցվածքային շահագործումը, Հայաստանի գաղութացման ակցիաներն այլ միջոցներով այս գրքի սահմաններից դուրս են, սակայն պարզ է, որ դժվար է հաստատել բռնությունը բացառող մշակույթ համեմատաբար սահմանափակ հասարակությունում, որը շրջապատված է բռնության վրա հիմնված ուժեղ մշակույթներով, որոնք խորապես ազդում են: Բայց հնարավոր է:

Ինչպես բռնության, այնպես էլ հակաբռնության մշակույթն ունի այդ հատկանիշը, ինչպես և հասարակական շատ այլ երևույթներ. դրանց ազդեցությունն ավելի լայն է, քան դրսևորման առանձին դեպքն ինքնին: Բռնության յուրաքանչյուր դրսևորում ազդում է իր վկաների հոգեբանության վրա և նրանց մեջ ստեղծում է պոտենցիալ սպասում, որ, ահա, բռնության աշխարհն է գալիս (և շատերն այդ դեպքում հակվում են դրան առանց դիմադրության, լռելյայն ադապտացվելուն): Չէ՞ որ մարդը բնազդաբար հակված է գերագնահատելու վտանգը: Երբ բռնության՝ միմյանց նման երկու դեպք է լինում, շատերը (մանավանդ մեր հասարակությունների ներկայացուցիչները՝ իրենց պատմական փորձով) ընդհանրացնում են, և դրանք իրենց առանձին նշանակությունների համեմատ սկսում են արդեն ավելի մեծ՝ մշակութային ազդեցություն ունենալ, այսինքն՝ շատերը դա ընկալում են

որպես բռնության մշակույթի հաղթարշավ: Էլ չասած՝ երեք կամ ավելի դեպքերը:

Հակառակն էլ է ճիշտ. եթե իրադրությունը, որը սովորաբար բռնության կտաներ, հարթվում է մասնակցի կամքով, հակաբռնական վարքի և արժեքների միջոցով, ապա դա նշան է, որ բռնության աշխարհը նահանջում է: Երկու, երեք և ավելի այդպիսի իրադրություն, և վկաները կարծես ընկղմվում են այլ արժեքային աշխարհ և ավելի քիչ են հակված լինում դիմել բռնարարքների:

Այո, ասում են, թե մարդն ավելի հակված է բնազդորեն ուշադրություն դարձնել վտանգին, սպառնալիքին, քան դրականին: Դրանով է պայմանավորված, օրինակ, այն, որ բացասական նորությունները գերակշռում են մեդիայում և համացանցում: Դա, իհարկե, իր հերթին ազդում է մարդկանց հոգեկերտվածքի վրա: Այս հարցերը նույնպես դուրս են սույն գրքի սահմաններից, սակայն աշխարհի հասարակությունների ուշադրության կենտրոնում են: Դավադրությունների տեսություններին հավատալու արագ տարածվելը արդյոք պայմանավորված չէ՞ նաև բռնության մշակույթի ազդեցությամբ. երբ մարդ, մի կողմից, տեսնում է, որ որոշ անհատներ սարսափելի ուժ ունեն և կարող են անպատիժ բռնություն կիրառել, մյուս կողմից՝ ինքն իրեն զգում է բացարձակապես ապահիշխանավորված, արդյունքում հավատում է, որ աշխարհում կան ուժեր, որ միայն մարդկության վատն են ուզում և իրենց ուզածին հասնում են (իսկ ինքը դրան հակադրվելու հարցում խաղացող չէ, հաշիվ չէ): Նույն կերպ էլ հայհոյանքի մշակույթի տարածումը համացանցում և մարդու հակումը՝ այնտեղ կոպիտ կերպով արտահայտվելու, ինչն արդեն ազդում է աշխարհի մշակույթների ամենօրյա վարքի վրա, պայմանավորված չէ՞ արդյոք նախորդող ագրեսիայով, որի չափաբաժինը մարդը ստացել է իր առօրյա կյանքում և, ահա, հնարավորություն ունի համեմատաբար անվտանգ կերպով արտահայտելու պատասխան ագրեսիան ամեն կողմ, ուր պատահի:

Վերջապես, արդյոք անամոթությունը, անարգելակությունը, որով մարդիկ փոխում են իրենց արժեքային համակարգերը (մարդու իրավունքների նախկին ջատագովները, օրինակ, արտահայտելով արյունարբու կարծիքներ, կամ ժողովրդավարության համար նախկինում պայքարողները՝ դառնալով բռնատիրության կողմնակիցներ), բացարձակապես չանհանգստանալով, որ հասարակական կարծիքում իրենց բարի համբավը ոչնչացավ, պայմանավորված չե՞ն, կրկին, «բլատնոյ» աշխարհին հատուկ որոշակի արժեքներով, ինչպես, օրինակ, գործողությունների կամակայանությունը (վոլյունտարիզմը), որը տակտիկական առավելություն է տալիս բռնության իրադրություններում (այսօր բարի եմ, վաղը՝ չար, քանի որ իշխն իմն է անքննարկելիորեն, ինչ ուզեմ՝ կանեմ, «հակառակորդի» («իշխվողի») համար անսպասելիորեն), ինչպես նաև այն հավատով, որ, ինչպես և բռնության կողմից խորապես ճնշված աշխարհում, մարդկանց հիշողությունը կարճ է, և նախկինում ունեցած բարի համբավին հղումները ոչ մի նշանակություն չունեն, քանի որ, բարոյաէթիկական ընդունելի արարքների վերաբերյալ հանրային կարծիքի մշակույթի բացակայության պայմաններում, մի քանի մարգինալ «ակսակալների» աչքերում բարի համբավիդ կորստյան պատճառով շոշափելի վնաս չես կրելու:

Հատկապես մեր՝ հետխորհրդային հասարակություններում, կարծես թե, առաջին դեպքը՝ բռնության մշակույթի բյուրեղացումը՝ առանձին դրսևորումների միավորումը մեկ ընդհանուր համակարգի մեջ, ավելի հեշտ է տեղի ունենում, քան երկրորդը՝ հակաբռնության՝ իշխող մշակույթ դառնալը: Ամեն դեպքում, «բարու» հաղթանակն այդքան հեշտ և արագ չէ, որքան, թվում է, տրամաբանությունն է թելադրում: Դրա պատճառներն էլ ինչ-որ չափով հասկանալի են և հետազոտված. ինստիտուցիոնալ «հիշողությունը»՝ «անցյալի արահետից կախվածությունը» (path dependency) պայմանավորում են մարդկանց անկարողությունը՝ հեշտությամբ համայնք կազմելու, նրանց ինքնազգացողությունը, Գալ-

տունգի տերմիններով՝ անոմիան (խոսքի և օրենքի ճգնաժամը), անեմիան (գործելու անկարողությունը) և ատոմիան (մասնատվածությունը, հասարակության տրոհվածությունը, ծայրաստիճան կարճատես էգոիզմը). միտումներ, որոնք դժվարացնում են մարդկային կառուցողական համայնքների սաղմնավորումը և զարգացումը:

Մյուս կողմից, վերջին տարիներին մենք տեսնում ենք, որ նույնիսկ ամենազարգացած (արևմտյան) հասարակություններում, որոնք տասնամյակներ, եթե ոչ դարեր շարունակ կառուցել են իրենց օրինակելի համայնքները և հակաբռնության մշակույթը, հակաբռնության մշակույթը կարող է տեղի տալ, ներառյալ՝ իրենց քաղաքական վարքում: Դա նշանակում է, որ երաշխիքներ չկան, և եթե հասարակությունն իրոք ուզում է հակաբռնության հաղթանակած մշակույթ կառուցել, պիտի որոշակի փիլիսոփայության, արժեքային համակարգի հետևորդ լինի: Այստեղ տեղը չէ դա մանրամասն քննարկելու, այդ փիլիսոփայությունը դուրս է այս գրքի սահմաններից, բավական է ասել, որ, եթե համառոտ ձևակերպենք, ամեն մարդու ամեն արարքից է կախված այդ գործընթացը, ամեն մարդ «զինվոր» է հանուն ոչ բռնի կացութաձևի պայքարում: Պայքարը գուցեև կտևի այնքան, որքան մարդկության պատմությունը, սակայն հնարավոր են նշանակալի մասնակի, հարաբերական, տևական, ընդգրկուն հաջողություններ, որոնք բռնության դրսևորումներն իրենց տեղը կդնեն՝ կսահմանափակեն ոչ ընդգրկուն և մասնավոր դեպքերով: Եվ Հայաստանն ունի բոլոր շանսերը՝ այդ հաջողությունները դարձնելու իր մշակույթը:

* * *

Քանի որ ժողովածուում ներառված աշխատություններում ընթերցողը կտեսնի ոլորտային քաղաքականությունների փոփոխմանն ու զարգացմանն ուղղված բազմաթիվ առաջարկներ, ինչպես նաև դրանց և դրանց շնորհիվ արդեն տեղի ունեցած փոփոխությունների գնահատում, իմ առաջարկներն այս նախաբանում մշակվել են այլ սկզբունքով՝ վերը ասածիս լույսի ներքո: Այն է. իհարկե, լավ է, երբ պետությունը հանձն է առնում ոլորտային քաղաքականություններ փոխել, քաղաքացիական հասարակությունը ջատագովում է, երկխոսության, երբեմն՝ սուր վեճի մեջ կա պրոգրես, քաղաքականությունը տալիս է օրենք, օրենքին պետք է հետևել, իրադրությունը կամաց-կամաց լավանում է, սակայն հաճախ օրենքը քիչ է, քաղաքականություն փոխելու առաջարկը հաճախ անիրագործելի է: Ի՞նչ անել այդ դեպքում: Ձեռքերը ծալած նստել և մեղադրել պետությա՞նը, թե ապաշնորհ է: Իհարկե, այդպիսի վարքի դեպքում մարդիկ երբեք հաջողության չէին հասնի:

Ստորև առաջարկներն էլ, ուրեմն, մշակված են հենց այդ խնդիրը մտքում ունենալով: Պատկերացնենք, որ ոչինչ չի փոխվում, բայց ես (դու) ուզում եմ (ուզում ես) ինչ-որ բան փոխել. ի՞նչ է հնարավոր անել սեփական անմիջական միջավայրում, եթե ես աշակերտ եմ կամ ուսուցիչ, զինվոր կամ սպա, տղամարդ, կին կամ երեխա: Ի՞նչ է հնարավոր անել առանց օրենքներ փոխելու, առանց սպասելու «վերադասների» գործողությանը. ի՞նչ է հնարավոր անել սեփական ուժերով: Իսկ երբ և եթե «վերից» էլ օգնություն գա, պետությունը փոխվի, զարգանա, ճիշտ գործի, է՛լ ավելի լավ. կգա, արդեն գոյություն ունեցող հաջողություններին կավելացնի իր ուժը: Մեր հասարակության ապահիշխանավորվածությունը դրսևորվում է նաև նրանում, որ հենց այսպիսի՛ առաջարկների հստակ պակաս է զգացվում մեր շահառուների կարծիքներում, որոնք արտացոլվել են հետազոտություններում.

շատ քչերն են տեսնում ոչ խուսափողական, պրոակտիվ ելք բռնության իրադրություններից՝ պայմանավորված սեփական, անձնական արարքների ուժով: Մինչդեռ մեր շուրջը այդպիսի արարքները շատ են, և հենց դրանք են պայմանավորում այն, որ այս հասարակությունը, չնայած նախկին դժվարություններին, ամբողջությամբ կուլ չգնաց բռնության մշակույթին և հաջողությամբ այդ վտանգը հեռացրեց իրենից: Բայց մարդիկ պիտի սովորեն դրանք նկատել, տեսնել, ձևակերպել ու օգտագործել և նոր տարբերակներ հայտնաբերել:

ՀԱԿԱԲՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ. ԽՄԲԻՑ ՀԱՄԱՅՆՔ, ՀԱՄԱՅՆՔԻՑ՝ ԹԻՄ

Մեթոդական սկզբունքներ

- Համակարգը կազմավորվում և գործում է ոչ թե «վերից վար», այլ «վարից վեր»:
- Պրոյեկտային մոտեցում. ռեֆորմը տեղի է ունենում ոչ թե այնպես, որ ամեն գործող անձ իր անելիքն ունի (փազլի, անշարժ համակարգի պես, երբ բոլոր «թելերը» ղեկավարի ձեռքում են), այլ ըստ գործողության, որը բերվում է առաջին գիծ (ալիքային հոսքի պես). բոլոր գործող անձինք/խմբերը անելիք ունեն այդ գործողության իրագործման մեջ, նրանց անելիքները պարբերաբար ձևակերպվում են, փոխանակվում, քննարկվում կոլեկտիվ կերպով:
- Դերերը հակակարծրանում են, փոխարինելի են, ոչ մեկն իր դերի մեջ «մեխված» չէ:
- **Սա նշանակում է, նախ և առաջ, հայացքի փոփոխություն.** հիերարխիկ կառույցից, որտեղ ղեկավարը գագաթն է, հայացքը տեսնում է «թարս եռանկյունի», գագաթը՝ ստորին կետ. այդ գագաթն ամենապատասխանատուն է, ոչ թե ամենաիշխանավորվածը:

Հնարավոր գործողություններ

Մրցակցայինից նույնիսկ դերային բռնության դուրսմղում (սպորտ):

Դրական արժեքների դավանող առաջնորդ-կազմակերպիչ (հակացինիզմ):

Դպրոցում (դասարանում, վաշտում) գոյություն ունեցող դրական հասարակական կարծիք:

Լավ ուսուցիչ (սերժանտ, սպա):

Միասնական գործ՝ համախմբող, պաշտոնական գործից դուրս:

Միմյանց մասին պատմություններ իմանալ, բայց պիտի կարողանան ներկայացնել. կազմակերպում:

«Ավարայի» օրենքի փոխարկում՝ դիտորդների մասնակցություն հասարակական կարծիքի ակտիվ ձևավորմանը:

Համամասնական հարգանքի բաշխում, ամեն մեկին՝ իր արժանիքների համար: Չկա մեկը, որ չունենա հարգանքի արժանի հատկանիշ:

Փոխօգնության համաստեղիկներ-համակարգիկներ (մենթոր-պատրոնաժ):

Նախագծերի զարգացում վերոնշյալ կետերն իրականացնելու համար, իրագործում թիմերով:

Ռեֆլեքսիայի ուժգնացում (ինչ կատարվեց այսօր, երեկ):

Անսպասելի բարենպաստ իրադրությունների օգտագործում (երբ ռազմական առաջադրանքից վերադառնում եք անվնաս. բոլորը հաճելի են, ողջագուրում):

Արդարության հասնելու օրինակի վերլուծություն:

Մշակույթի միջոցով ամենօրյա ժարգոնային և հայհոյական բառերի արգելում/դուրսմղում:

Եթե դասարանում իրենց կարգին են պահում, իսկ հսկո-

ղությունից դուրս՝ ոչ. ռեֆլեքսիա, «երկերեսանիության», «շիզոֆրենիկության» բացահայտում, ամբողջականացման մշակույթի պահանջ:

Հարգանք, իշխանավորում, «պաշտոնական» հարցերին վերաբերող խնդիրների՝ «ներքևից վերև» լուծման մեխանիզմներ («նայողը» ինչպես է որոշվում. ոչ թե իշխ, այլ ընտրյալ ներկայացուցիչ):

Ստեղծագործականության զարգացում, հարգանք դեպ դա:

«Պարապ» ժամանակը դարձնել ազատ ժամանակ, դրա օգտագործման քննարկում, ուսուցում, օգտագործում:

«Դժվարին» զբաղեցնել՝ պատասխանատվություն տալով (ոչ թե իշխ), պատվին հենվելով:

Ամեն պրոցեդուրա դարձնել հետաքրքիր – «ռուտինայից հանել». դրանք պարբերաբար վերականգնել, վերաքննարկել, փոխել, զարգացնել (Թոմ Սոյերի՝ ցանկապատը ներկելը):

Ստեղծել «ավագների» փոքր խումբ, զարգացնել նրանց միջև ու նրանց հետ կոմունիկացիան, վստահությունը նրանց միջև, նրանց և «ղեկավարի». մնացածները պիտի հարգանք տածեն նրանց հանդեպ նրանց արժանիքների, ոչ թե բիրտ ուժի կամ նման բանի համար:

Ավագների շտաբը. ամեն կարիքի, հրահանգի, հրամանի, պահանջի վերաբերյալ տալիս է սուբստանցիալ բացատրություն. սա վստահության առաջին շերտն է:

Սուբստանցիալը նշանակում է բացատրել այդ անելիքի օբյեկտիվ կարիքը, ոչ թե հրահանգողի վոլյունտարիզմը բերել որպես հիմք: Վոլյունտարիզմը պիտի դուրս մղվի որպես հրահանգների հիմք: Սա վստահության երկրորդ շերտն է:

Նրանց միջև կոմունիկացիան փորձարկվում է, հղկվում, հետո հրամցվում ուրիշներին:

Գաղտնիքները բացվում են, որքան հնարավոր է: Թափանցիկ, հիմնավորված մոտիվացիաներ:

Օրինակելի խմբին նշանակել մեկ այլ խմբի խնամակալ:

«Դժվար» անհատներին առանձին, ունիկալ ստեղծագործական առաջադրանքների հանձնարարում:

Անհատապես խորհելու համար նշանակալի և պարբերական ժամանակի տրամադրում, հանձնարարում՝ խորհել անհատապես (համացանցային միջոցների բացակայության պահանջով):

Գեղարվեստական գրականության ընթերցում և քննարկում տարբեր տեսանկյուններից, ներառյալ՝ արտահայտված արժեհամակարգերը, աշխարհընկալումները վերհանելով:

Անմիջական պատմության անմիջական քննարկումներ (անհատի, ընտանիքի պատմության, հետանկախային տարիների, քսաներորդ դարի՝ վերջից դեպ սկիզբ) – պատմությունը տեղայնացնելով՝ այցելություններ դեպքերի վայր, որքան էլ դեպքերն աննշան թվան (դպրոցի բակը և այլն):

Գևորգ Տեր-Գաբրիելյան

Գրքի բանալի բառեր

բռնություն, գողականություն, 20-րդ դար, Խորհրդային Հայաստան, Սովետական Հայաստան, Գուլագ, գենդեր, ընտանեկան բռնություն, զինված ուժեր, բանակ, դպրոց, դպրոցական բռնություն, հայհոյանք, բռնության մշակույթ, քրեական մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ, բլատնոյ

ՔՐԵԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻ, ԼԵԶՎԻ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Գայանե Հովակիմյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բռնության՝ հասարակության մեջ տարածված դրսևորումները մեր պետության գոյության, զարգացման և սոցիալական համերաշխության առաջնային սպառնալիքներից են: Դրանք երկար ժամանակով խաթարում են անվտանգության հիմնարար սյուները, ձևավորում են սոցիալական պաթոլոգիաներ և հասարակության բևեռացում, անվստահություն և բռնության շղթա, և ի վերջո կարող են վտանգել պետականությունը:

Բռնության հասարակական դրսևորումները միջանձնային, ներխմբային, ներպետական և միջպետական հարաբերություններում սոցիալական որոշակի խմբերի, այդ խմբերին պատկանող անձանց վարքագծի հետևանք են: Ընտանեկան բռնությունից մինչև ծայրահեղական տեռորիստական ակտերի հիմքում անձանց որոշակի վարքագիծն է՝ որպես կայուն, որոշակի համակարգի ներսում ամրապնդված վար-

քագծային նորմ, որը հաճախ ձևավորվել և գործում է որոշակի ենթամշակույթի ներսում:

Այդպիսի ենթամշակույթ է գողական/քրեական ենթամշակույթը: Սովորաբար (նաև մեզանում) այն ցուցադրվում և խրախուսվում է որոշակի ինստիտուտների գաղափարախոսության շրջանակում, բրուտալ արժեքների և վարքագծի օրինակով և խրախուսմամբ, զանգվածային լրատվամիջոցներով և այլն: Քրեական բարքերը էական ազդեցություն են ունենում հասարակական որոշակի խմբերի վրա՝ ներառելով նրանց այդ մշակույթի վերարտադրության մեջ:

Հանրային հարաբերություններում քրեական ենթամշակույթն ավելին է, քան հանցավոր փակ խմբավորման բարքերը: Սույն հետազոտությունն ուղղված է հանրային կյանքում բռնության տարածման վրա այդ բարքերի, լեզվի, վարքագծի ազդեցության ուսումնասիրությանը:

Հատկապես Խորհրդային Միության փլուզումից հետո այդ «հակամշակույթը» դուրս է եկել իր սահմաններից՝ վարակելով հանրային հարաբերությունները, ներթափանցել սոցիալական ինստիտուտներ՝ իր ազդեցությունը տարածելով սոցիալական տարբեր խմբերի վրա: Արդյունքում հանրային հրաշալի ռեսուրսը՝ հայաստանյան հասարակության ստեղծագործական պոտենցիալը, չի կարողանում առավելագույնս առաջ գնալ և ձևավորել առողջ ու զարգացող սոցիալական օրգանիզմ: Ժամանակակից հայաստանյան հասարակական կյանքի բազմաթիվ արատավոր պրակտիկաներ ձևավորվել են դեռևս խորհրդային ժամանակներում, բոլորովին այլ իրականության մեջ, սակայն հասել են մեր օրեր և ապակառուցողական (դեստրուկտիվ) ազդեցություն են թողնում նոր իրողության մեջ հանրային հարաբերությունների վրա: Դրանց մեջ առավել վտանգավոր են բռնության մղող և համապատասխան դերային սպասումներ ձևավորող չգրված օրենքները և սերնդեսերունդ փոխանցվող վարքագծերը: Չնայած խնդրի արդիականությանը՝ մինչ այժմ

չեն իրականացվել բազմակողմանի հետազոտություններ, որոնք կանդրադառնային դրան, կցուցադրեին խորհրդային հասարակարգում ձևավորված քրեական ենթամշակույթի ազդեցությունն այսօրվա ինստիտուտների և սոցիալական խմբերի վրա՝ բռնության հարաբերությունների վերացման և կանխարգելման նպատակով:

Ծառայելով այդ նպատակին՝ սույն հետազոտությունը ներառել է քրեական ենթամշակույթի ձևավորման և կայացման պատմական, մարդաբանական, սոցիոլոգիական և հոգեբանական մոտեցումները և ներկայացնում է բազմապլան վերլուծություն՝ փաստարկված մարդկային կյանքերի պատմություններով:

Հաշվի առնելով Հայաստանում 2018 թ. տեղի ունեցած թավշյա հեղափոխության հռչակած գաղափարախոսությունը, իրականացման ընթացքը և ձևավորվող գործընթացները՝ ուղղված բռնության և քրեական ենթամշակույթի ազդեցության նվազեցմանը, սույն հետազոտության հիման վրա մշակվել է ուղեցույց՝ նախատեսված քաղաքականություն մշակողների, այն իրականացնող պետական կառույցների և հանրային խմբերի համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության իրականացման համար համադրվել են միջգիտակարգային մոտեցումներ, և ձևավորվել է համալիր մեթոդաբանություն, որն արտացոլում է խնդրի պատմական, մշակութային, սոցիալական և հոգեբանական ասպեկտները: Այդ մոտեցման հիման վրա առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- կատարել պատմական կարճ էքսկուրս և նշել «բանալի» դրվագներ քրեական բարքերի, լեզվի և վարքագծի ձևավորման և ինստիտուցիոնալացման ընթացքից մինչ-խորհրդային, ապա՝ խորհրդային հասարակարգի պայմաններում.

- նկարագրել քրեագողական բարքերի տրասնֆորմացիան, հանրային հարաբերությունների դեֆորմացիան նորանկախ Հայաստանում.
- ուսումնասիրել այդ ոչ ֆորմալ համակարգի ինստիտուցիոնալ, մշակութաբանական արտահայտումները և դրանց ազդեցությունը սոցիալական խմբերի և ինստիտուտների վրա.
- ուսումնասիրել, թե ինչպես են քրեական հակամշակույթի դերային մոդելները հանգեցնում բռնության տարածման.
- ներկայացնել առաջարկությունների փաթեթ՝ ուղեցույց՝ ուղղված հանրային քաղաքականության ոլորտում քրեական ենթամշակույթի (մշակույթի, հակամշակույթի) ազդեցության նվազեցմանը և բռնության մշակույթի կանխարգելմանը:

Ելնելով հետազոտական նպատակից և խնդիրներից՝ հետազոտության ընթացքում կիրառվել են տեղեկատվության ստացման և վերլուծության հետևյալ մեթոդները.

1. Փաստաթղթերի ուսումնասիրություն
2. Գրականության վերլուծություն
3. Փորձագիտական հարցազրույց
4. Խորին հարցազրույցներ. կիրառվել է որակական հետազոտությունների նարատիվների մեթոդիկան
5. Հոգեբանական զրույց. իրականացվել է նախկին ազատազրկվածների հետ:

Հետազոտական և փաստագրական նյութերի հավաքման աղբյուր են ծառայել այն փորձագետները, որոնք անձնական, մասնագիտական փորձառություն, ակադեմիական գիտելիք ունեն ոլորտում:

Շատ կարևոր են հետազոտությանը մասնակցած բոլոր փորձագետների անձնական նվիրումը, նրանց գիտելիքը,

բացառիկ փորձառությունը, անձնական տեղեկությունները հաղորդելու պատրաստակամությունը, ինչի առթիվ խորին շնորհակալություն նրանցից յուրաքանչյուրին:

Պետք է նշել, որ ոլորտային մասնագիտական գիտելիքը Հայաստանում սահմանափակ է, և փորձագիտական շրջանակը մեծ չէ, ուստի փորձագետներն ընտրվել են ձնակույտի մեթոդով: Էական գործոն է եղել միջգիտակարգային կլաստերով փորձագիտական կազմի ընտրությունը, ինչն ապահովել է հնարավորինս ամբողջական, բազմաշերտ և համապարփակ տեղեկատվության ստացումը:

Իրականացվել են խորին հարցազրույցներ և հոգեբանական զրույցներ, և կիրառվել է նարատիվ պատմությունների մեթոդը դատապարտված, նախկին ազատազրկվածների հետ: Այս մեթոդի հիման վրա կազմվել է առաջնային աղբյուրի՝ պրակտիկաները կրողների պատմությունների հիման վրա գործելակերպերի ներկայացումը:

Հետազոտության մեթոդաբանությանը համապատասխան՝ մշակվել են երկու տիպային հարցաշարեր.

1. Փորձագիտական հարցաշար
2. Խորին հարցազրույցի ուղեցույց:

Սույն հետազոտությանն իրենց անձնական պատմությունները ներկայացնելու համար նաև խորին շնորհակալություն դրանց հեղինակներին, որոնց անվան և ազգանվան առաջին տառերը փոխված են՝ ելնելով նրանց անձնական կյանքի գաղտնիության և անձնական տվյալների չնույնականացման իրավունքի ապահովումից:

<u>Ծանոթություն.</u> հետազոտվող թեմայի էությունը պահանջեց սույն գրքի գլխավոր խմբագրի՝ Գ. Տեր-Գաբրիելյանի մասնակցությունը սույն հետազոտությանը՝ որպես ռեսպոնդենտ: Նրա հետ հարցազրույցն ամբողջությամբ հրապարակվում է որպես սույն գրքի վերջաբան:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1. Քրեական ենթամշակույթի ձևավորման և զարգացման ընթացքը մինչխորհրդային և խորհրդային համակարգում

Քրեական, հանցավոր խմբավորումները և նրանց ենթամշակույթը բոլոր ժամանակներին և հասարակարգերին բնորոշ երևույթներ են: Սոցիալական կարգին հակադրվող խմբավորումները հավաքագրում և մասսայականացնում են ընդհանուր մշակույթին դեմ գործելակերպեր, պաշտպանում և առաջ են տանում որոշակի սահմանների մեջ գործող և իրենց այդ հիմքով նույնացնող անձանց շահեր, որոնք այնուհետ մշակութաբանական և գործառնական ազդեցություններ և տարածում են ստանում[5]: Այնուամենայնիվ, փակ համակարգերի առանձնահատկությունը հենց այն է, որ դրանք մարգինալացված խմբեր են և դրանց ազդեցությունն էլ սահմանափակ է ընդհանուր մշակութաբանական և սոցիալական համատեքստում: Բազմաթիվ հետազոտություններ կան, որոնք հանցագործությունների և քրեական խմբավորումների ձևավորման պատճառներն են դիտարկում[6]: Ակադեմիական գիտելիքի շրջանակում դրանք հաճախ ներառված են հանցագործության և պատժի տեսությունների մեջ: Վերջին 50 տարում տարբեր գիտակարգերի մեջ առկա մոտեցումները ներառվել են դևիանտոլոգիա ուղղության մեջ, որն իրավաբանների, սոցիոլոգների, կրիմինոլոգների և հոգեբանների ուսումնասիրությունների միակցում է և ժամանակակից քրեական իրավունքի հիմնասյունն է հանրային քաղաքականության մեջ:

5. Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում գենգերի գոյությունը, Լատինական Ամերիկայում «Մ 13» խմբավորումը. այս շարժումները ևս ձևավորվել էին սոցիալական որոշ խմբի շահեր առաջ տանելու և պաշտպանելու համար (Գայանե Հովակիմյան, Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), Երևան, 2019, Սամվել Սաղաթելյան, 62 տարեկան):

6. Дышев, С. (2008), Воры в законе и авторитеты. Москва: Эксмо.

> *«Ցարական իշխանության վերջին տարիներին արդեն իսկ հստակ ձևավորված այդ ենթամշակույթը կար, (....) Օդեսայում հանցագործ կյանքին նվիրյալները շատ էին, և նրանք մի հետաքրքիր լեզու ունեին, և այդ լեզվով տարածվում էր այդ մշակույթը: Խորհրդային տարիներին իշխանությունները մի խնդիր ունեին՝ շատ լուրջ. ոչ միայն խրախուսել, այլ նաև օգտագործել իրենց նպատակների համար»[7]:*

Հայկական իրականության մեջ գործող քրեական բարքերի և չգրված օրենքների հիմքերը և ակունքները տանում են դեպի խորհրդային, ապա՝ մինչ այդ գործող ցարական Ռուսաստանի, Պարսկաստանի, Օսմանյան Թուրքիայի ժամանակ ձևավորված քրեական բարքեր, որոնք տարբեր բնակավայրերում գործող հանցավոր խմբավորումների գործելաոճեր էին, և նշվել են առնվազն դեռևս 19-րդ դարից սկսած[8]: 19-րդ դարի ռուսաստանյան տարածքից պահպանվել և փոխանցվել են առանձին գողերի պատմությունների և նրանց հիշողությունների վերաբերյալ գրառումներ, ինչպես նաև ուսումնասիրություններ, որոնք վկայում են, որ այդ ժամանակահատվածում արդեն իսկ ձևավորվում և փակ խմբերում տարածում էին գտնում քրեական ենթամշակույթի խոսքը, լեզուն, արտահայտչամիջոցները, տարածման և ազդեցության ձևերը: Հայկական էթնոմշակութային միջավայրի վերաբերյալ, բացի Ռաֆֆու ստեղծագործությունից, սույն հետազոտողներին այլ գործեր և տեղեկություններ հայտնի չեն և սույն հետազոտության համար չեն հավաքվել: Ռուսաստանյան միջավայրում աշխարհագրորեն առանձնացվել են այն քաղաքները, որոնք առավել քան կարևոր էին այս մշակույթի տեսանկյունից,

7. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Վարդան Հարությունյան, 59 տարեկան:

8. Տե՛ս, օրինակ, Ռաֆֆի (1989), Խաչագողի հիշատակարանը: Հասանելի է՝ http://armenianhouse.org/raffi/khachagogh-am/1.html [դիտվել է 18.07.2020]:

օրինակ՝ Օդեսան[9]: Ռուսաստանյան քրեագողական մշակույթում Օդեսայի առանձնահատուկ դերը պայմանավորված էր նաև նրանով, որ այս քաղաքը գտնվում էր հրեաների բնակեցման իրավունքի շրջանի ներսում: Լինելով ակտիվ և սովորաբար բարձր կրթությամբ էթնիկ փոքրամասնություն՝ հրեաները, զրկված լինելով շատ իրավունքներից, հատկապես այս ծովափնյա քաղաքում առանձնահատուկ ակտիվություն էին դրսևորում, ներառյալ դիմադրությունը ցարական Ռուսաստանին, և այդ էթնիկ-մշակութային դիմադրությունը, ինչպես նշվում է նաև սույն գրքի այլ մասերում՝ Ռուսաստանի կողմից գաղութացված այլ էթնոսների վերաբերյալ, միավորվում էր քրեական մշակույթին, որը նույնպես դիմադրության դրսևորում էր:

Օդեսայում տարբեր լեզուների ազդեցությամբ, այդ թվում՝ իդիշի, ռուսերենի, լեհերենի խառնուրդից ծնված՝ քրեագողական մշակույթի ժարգոն-(ենթա-) լեզվի և նրա համապատասխան ենթամշակույթի վերաբերյալ ուսումնասիրությունները, անշուշտ, առանձին վերլուծության կարիք ունեն և հետաքրքիր են այն առումով, որ մինչ մեր օրեր որոշակի բառապաշար, գործելակերպեր, վարքային դրսևորումներ բխում են հենց այդ ժամանակահատվածի և տվյալ տարածաշրջանի պատմաքաղաքական իրողությունից, ներառյալ հայաստանյան այսօրվա իրականությունում: Բազմաթիվ բառեր կան, որոնց ծագումնաբանությունը տանում է հենց այդ միջավայրից ծագմանը: Օրինակ՝ *շմոն*-ը, որը քրեակատարողական հիմնարկներում խուզարկության իրականացման համար օգտագործվող բառն է, իդիշից է ծագել, նշանակում է 8 և գալիս է այն պրակտիկայից, որ դեռևս ցարական

9. «Լինելով նավահանգստային և բազմամշակութային քաղաք՝ Օդեսան, ըստ երևույթին, հատուկ նշանակություն ձեռք բերեց որպես կրիմինալության կենտրոն՝ իր սրամտության հետ միաձուլված: Եվ այդ մշակույթում իդիշ լեզուն շատ մեծ դեր սկսեց կատարել, որովհետև գաղտնի լեզու էր պետք, և շատ հաճախ գաղտնի լեզուն վերցվում էր իդիշի բառերից: Գործածվում էր, ասենք, «խազա»՝ «տան» փոխարեն (хаза՝ house, տուն) և այլն»: Տե՛ս գրքի վերջին հարցազրույցը Գ. Տեր-Գաբրիելյանի հետ:

Ռուսաստանում ամեն առավոտ Օդեսայի բանտում ժամը 8-ին եղել է խուզարկություն[10]: Այս առումով շատ կարևոր է հասկանալ, որ դեռևս 100 տարուց առաջ ձևավորված գործելակերպերը տեղափոխվել են հայկական իրականություն ոչ միայն խոսքային, այլ նաև մի ամբողջ գաղափարական ու մշակութաբանական ազդեցությամբ և անփոփոխ պահպանվել մինչև այսօր, ինչը ցույց է տալիս քրեական ու քրեակատարողական համակարգերի չվերափոխված, չզարգացող, մեր հասարակությունում «ստաբիլ» դարձած բնույթը:

1920-ականներին, խորհրդային կարգերի հաստատմամբ, քրեական բարքերի և խմբավորումների հետ կապված երկու հակասական գործընթացներ տեղի ունեցան: Առաջինը բանդիտիզմի և բոլոր հնարավոր քրեական խմբավորումների դեմ պայքարն էր: Բանդիտական խմբավորումները խորհրդային հասարակարգի ձևավորման սկզբնական ժամանակահատվածում որևէ առնչություն չէին տեսնում այդ հասարակարգի հետ՝ չնայած նույն հեղափոխականների շարքերում քիչ չէին հանցավոր խմբերին առնչություն ունեցած անձինք: Այնուամենայնիվ, պաշտոնական քաղաքականության մեջ այս շրջանում այդ երկու խմբերի միջև տեղի ունեցան առճակատումներ: Խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո հռչակեց հանցավորության դեմ պայքարը: Դա կարևոր էր երկրում կայունություն հաստատելու համար: Հաշվի առնելով հատկապես աղքատությունը, սովը, անօթևան երեխաների մեծ թիվը՝ խնդիր էր դրվել երիտասարդ սերնդին և երեխաներին հանել քրեական խմբավորումների ազդեցությունից և նրանց դաստիարակել խորհրդային քաղաքացու ոգով:

Այդ պետական քաղաքականությունը, որ հռչակված էր, արտացոլված է ԽՍՀՄ ժամանակաշրջանի հայտնի գրքում և ֆիլմում՝ «Շկիդ հանրապետությունը», որը հենց ցուցադրում

10. Հարությունյան, Վ. (2014), Այլախոհությունը խորհրդային Հայաստանում: Երևան, Վան Արյան:

է իրավախախտ, քրեական ենթամշակույթի հակված տղաների փոխակերպումը և խորհրդային քաղաքացու կերպարի ձևավորումը[11]:

Այդ պայքարի շարժառիթը նաև քաղաքական թշնամու դեմ պայքարն էր և դրանում քրեական խմբավորումների հնարավոր դերը: Առանձին խմբեր, անհատներ, գաղտնի խմբավորումներ իրենց անհամաձայնությունն էին հայտնում խորհրդային կարգերին և նրանց գաղափարախոսությանը:

«Գաղափարական թշնամու» դեմ պայքարը սկսվեց խորհրդային կարգերի հաստատման հենց սկզբից («չեկա»-ն[12] ձևավորվեց 1917 թ.) և գնալով ավելի ու ավելի մեծ թափ ստացավ՝ ամենաանողորմ ձևերով շարունակվելով մինչև Ստալինի մահը (1953 թ.): Ինչու է կարևոր պատմական այս երևույթի դիտարկումը սույն ուսումնասիրության շրջանակում. պատմական աղբյուրները վկայում են, որ խորհրդային համակարգի ռեպրեսիաների հետևանքով շուրջ 10-15

11. Белых, Г. и Пантелеев, Л. (2017), Республика ШКИД. Москва, Энас-книга.

12. Հակահեղափոխության, սաբոտաժի և սպեկուլյացիայի դեմ պայքարելու արտակարգ հանձնաժողովը (ռուս.՝ Всероссийская чрезвычайная комиссия по борьбе с контрреволюцией и саботажем при Совете народных комиссаров РСФСР (ВЧК при СНК РСФСР)) կազմակերպվել է 1917 թ. դեկտեմբերի 7-ին և գոյություն է ունեցել մինչև 1922 թ.: Հանձնաժողովը ղեկավարում էր ռուս հեղափոխական, սովետական քաղաքական գործիչ Ֆելիքս Ձերժինսկին (1877 - 1926): «Չեկա»-ն պայքարում էր հակահեղափոխականության դեմ, սակայն իր գոյության ընթացքում մեծ դեր ունեցավ «Կարմիր ահաբեկչության» (որի գաղափարն առաջ է քաշել նույն Ֆելիքս Ձերժինսկին) իրականացման գործում, որը ահաբեկման միջոց էր հակահեղափոխականների, «դասակարգային թշնամիների» և այլ սոցիալական խմբերի դեմ՝ վերջիններիս բանտարկման, գնդակահարման և աքսորի միջոցների կիրառմամբ: «Կարմիր ահաբեկչության» հետևանքով զոհերի թիվը, տարբեր հետազոտողների գնահատմամբ, տատանվում է 50 հազարից 140 հազարի միջև:

մլն մարդ տարհանվեց, ազատազրկվեց և աքսորվեց[13]: Մասսայական բռնությունները, ազատազրկումները, ճամբարների Գուլագ համակարգը հանգեցրին նրան, որ պետությունն անկարող էր կառավարել մարդկանց այդ քանակությունը՝ առանց դիմելու նրանց ներսում գտնվող «օգնականների»: Քանի որ գլխավոր թշնամին համարվում էին «քաղաքականները», «օգնականները» նախ և առաջ հավաքագրվում էին «քրեականներից»: Դրան գումարած՝ քրեական ենթամշակույթը, ստանալով առավելություններ ճամբարում, շատ հարցերում իր վրա էր վերցնում վերահսկողությունը: Այստեղ պետք է հաշվի առնել, որ ճամբարի քաղտնտեսությունը հիմնված էր նախ և առաջ ստրկական աշխատանքն օգտագործելու վրա՝ կոռուպցիոն նպատակներով (այսինքն՝ ճամբարի ղեկավարության բարգավաճման, իսկ զեկերի[14]՝ գոյատևման ցանկացած գնով): Որպեսզի այդ կառուցվածքային «պայմանագիրը» քրեական ենթամշակույթի և պետական համակարգի միջև գործի, քրեական ենթամշակույթը շատ առավելություններ ստացավ:

«Մեծ քանակությամբ մասսաների տեղավորելու և

13. Ըստ այլ աղբյուրների՝ ԽՍՀՄ ընթացքում, հատկապես 1917-1960 թթ. ընկած ժամանակահատվածում, ռեպրեսիաներից տուժածների թիվը շատ ավելի մեծ է: Սոլժենիցինը միայն մահացածների թիվը նշում է մոտ 60 միլիոն՝ գուցեև ընդգրկելով նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերին, որոնք, նույնպես ըստ այլընտրանքային աղբյուրների, շատ ավելի էին, քան ընդունված 20 միլիոնը: Ըստ այդ մոտեցման համարվում է, որ պատերազմում այդքան զոհեր չէին լինի, եթե չգործեր ստալինյան բռնապետությունը և տոտալիտար ռեպրեսիվ համակարգը: Այդ մոտեցման տեսակետից զոհ են համարվում ոչ միայն ռազմի դաշտում մահացածները կամ նացիստների կողմից ոչնչացված խաղաղ բնակիչները, այլև բոլորը, որոնք մահացան ոչ բնական մահով՝ պատերազմի պատճառով: Դեմոգրաֆիական հետազոտությունները և բնակչության աճի դինամիկան (ցարական ժամանակների հետ համեմատած) ցույց են տալիս, որ, իրոք, միայն 50-60 միլիոն մարդկանց հավելյալ մահվամբ է հնարավոր բացատրել ԽՍՀՄ բնակչության աճի իրական դինամիկան, այսինքն՝ թերաճը:

14. «Զեկ»-ը ռուսերեն ЗК (заключенный каналоармеец) հապավումից է: Զեկ-երը Գուլագների դատապարտվածներն էին, որոնց 1931 թ. օգտագործում էին Բելամոր-բալթիական ջրանցքի շինարարության ժամանակ: Ընդհանուր առմամբ «զեկ» են անվանում բանտարկյալներին: «Զեկ» բառը լայն տարածում ստացավ գրողների, բանաստեղծների և անարդարացիորեն դատապարտված այլ անհատների շնորհիվ, որոնք սկսեցին գրել Գուլագների մասին:

պահելու հարց է եղել: Ստեղծվել են առաջին Գուլագները, քանի որ այդ մարդկանց պահելու համար ո՛չ այդքան մարդ ունեին, ո՛չ այդքան իրավապահ: Ներսում, դե, գիտեք, եթե կան շատ կուտակումներ, կարող է լինել քաոս: Այդ իրավիճակում տեղի ունեցան որոշակի կարգավորումներ»[15]:

«Պաշտոնապես» քրեական ենթամշակույթը սկզբնական շրջանում ուներ «չգրված» դեկլարացիա կամ հիմնական կանոններ՝ գողական աշխարհի կանոնագիրք: Դրա որոշ դրույթները/սկզբունքներն էին.

1. Պետք չէ համագործակցել իրավապահ համակարգի հետ.
2. Դուք իրավունք չունեք սովետական կարգերում որևէ աշխատանք կատարել, որովհետև սովետական կարգերը ստրկատիրական կարգեր են, իսկ դուք ստրուկ չեք.
3. Ոչ մեկը իրավունք չունի գողանալ (քրեական, ո՛չ քաղաքական) բանտարկյալից, «դրսում» խրախուսվում է պետությունից գողանալը, սակայն ներսում՝ արգելվում:

«Ըստ որոշ աղբյուրների՝ հեղինակություններին խառնվեցին տարբեր ինտելեկտով մարդիկ, որոնք դեմ էին սովետական կարգերին, և այդ խառնուրդը բերեց չգրված դեկլարացիայի»[16]:

Այսպիսով, այս (սկզբնական) փուլում քրեական ենթամշակույթն ինստիտուցիոնալացվում էր որպես գոյատևման համակարգ և, ինչ-որ առումով, դիմադրություն բռնի աքսորին և բռնի ազատազրկումներին: Սակայն հաջորդ փուլերում, վերը նշված պատճառներով, քանի որ քրեական խմբի և իշխանության շահերի համընկման նշանակալի գոտի կար, տեղի ունեցավ այդ «կառուցվածքային համագործակցության պայմանագրի» ձևավորումը:

15. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Գևորգ Սիմոնյան, 45 տարեկան:
16. Նույն տեղում:

Հենց այս հակասությունը լավագույն նկարագիրն է քրեական աշխարհի. ըստ սեփական «օրենքի»՝ այն պիտի հակադրվի իշխանությանը: Սակայն իրականում, քանի որ իշխանությանը բացարձակապես հակադրվելը ա) անհնարին է, բ) շահավետ չէ, քրեական ենթամշակույթը մերձենում է ցանկացած բռնատիրական, անարդար, շահագործողական իշխանությանը, և նրանց հարաբերությունները դառնում են բնութագրելի որպես «ամալգամա»՝ զոդախառնույթ:

Ինչպես ասացինք, քրեական ենթամշակույթը նոր ձև ստացավ Գուլագի ներսում: Վերջինս պետական կառույց էր՝ կալանավայրերի և ճամբարների գլխավոր վարչություն, որը, սակայն, հետագայում դարձավ անվանում ամբողջ համակարգի համար, ներառյալ բանտերն ու ճամբարներն իրենց բնակչությամբ, և ձևակերպվեց որպես խորհրդային կարգերը բնութագրող սոցիալական երևույթ՝ արտացոլելով տոտալ հաստատությունների բնույթը: Այն ճամբարների ներքին կյանքի և նրանցում գտնվող մարդկանց միջև հարաբերությունների մի կազմակերպում էր, որի հիմքում երկու գործառույթ էր ընկած՝ գոյատևման և պետական իշխանության հետ հարաբերության, դրա հանդեպ ինքնակազմակերպման: Երկրորդ գործառույթը շատ կարևոր է հասկանալ, քանի որ, դառնալով ինքնուրույն գործող, կազմակերպված կառուցվածք, այն արդյունավետ էր դառնում իրավապահ համակարգի համար, որը բավարար ռեսուրսներ չուներ հսկողություն իրականացնելու դատապարտված միլիոնավոր մարդկանց, այդ թվում՝ տարբեր մշակույթներով, լեզվով և սովորույթներով խմբերի նկատմամբ: Եվ աստիճանաբար անցում կատարվեց պայքարից դեպի համագործակցության. տարբեր աղբյուրներ և փորձագիտական վկայություններ նշում են, որ հստակ է եղել իրավապահ մարմինների՝ Գուլագները կառավարող խմբի, և քրեական խմբավորումների առաջնորդների միջև կապը: Դա մի կողմից ապահովում էր այդ հաստատությունների կայունությունը, մյուս կողմից՝ հնարավորություն տալիս ձևավորել սովետական

տնտեսությունը չվարձատրվող աշխատուժի հաշվին, որը փաստորեն «այդ համակարգի ատաղձն էր»: Ամբողջ Խորհրդային Միության արտադրության հիմքերը դրվեցին հենց գուլագային հարկադիր համակարգում, և աշխատանքը, որպես հարկադիր միջոց, դարձավ ատելի և ստրկատիրական:

Շատ կարևոր է հասկանալ այս կապը: Աշխատանքի և համընդհանուր (ինչպես նաև մասնավոր) սեփականության նկատմամբ արհամարհական վերաբերմունքը, հանրային սեփականությունից գողանալը, պետական աշխատանքը արդյունավետ չկատարելը գողական ենթամշակույթի անկյունաքարային գաղափարախոսությունն էին: Իսկ միլիոնավոր բռնադատվածների, հատկապես քաղաքական զեկերի՝ այդ աշխատանքի կատարումն ու Գուլագներում վերահսկողության ապահովումն իրագործվում էր հենց քրեական ենթամշակույթի և նրա լիդերների օգնությամբ:

> *«Ատաղձը գոյություն ուներ ստրկատիրական ուժի վրա հենված, իսկ ստրուկները Գուլագի բազում, միլիոնավոր զոհերն էին, որոնք այնտեղ ձրի աշխատանք էին կատարում, վատ որակի: Եվ այնպիսի հասկացություններ, ինչպես «խալտուրա», «գռդոն», «տուֆտա», որոնք նույն հասկացություններն են, Սովետական Միության, այսպես ասած, հիմնաքարային, գլխավոր հասկացություններից էին: Եվ երբ ես հասկացա, թե Սովետական Միության քաղտնտեսությունը իրականում ինչի վրա է հիմնված, բնականաբար, ես շատ բաներ սկսեցի հասկանալ նաև մշակութային և ենթամշակութային այդ վարքային երևույթների վերաբերյալ: Մարդը ոչնչություն է, զրո է, նա ո՛չ իրավունք ունի սեփականության, նա չունի ոչինչ... նրանը չէ՛ սեփականությունը. կա՛մ ուժեղինն է, կա՛մ հանրային է»[17]:*

17. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Գևորգ Տեր-Գաբրիելյան, 56 տարեկան:

Այս համագործակցությունը աստիճանաբար ձեռք բերեց նաև մեկ այլ՝ Խորհրդային Միության համար շատ կարևոր գործառութային հատկանիշ: Կարևոր է հասկանալ, թե, ի վերջո, ինչ գաղափարական ընդհանրություն կար, որ բացի գործառութային արդյունավետությունից՝ ապահովում էր նաև խորհրդային համակարգի վերարտադրությունը:

Դա տեղի էր ունենում հենց այն «զոդախառնույթի» շնորհիվ, որը ձևավորվել էր քրեական մշակույթի և պետության միջև: Այդ «զոդախառնույթի» երկու բաղադրիչները շատ լավ ձևակերպվել են մեր զրուցակիցների կողմից:

Նախ՝ համակարգի բացասման սկզբունքը. ով դեմ է խորհրդայինին, արդեն իսկ կողմնակից է նրան հակասող համակարգին և այլընտրանքային ճշմարտությանը:

> *«Սովետի ժամանակ քանի որ պետության մեջ ֆարսը շատ էր, և իրականում ինքը շատ հարցեր չէր լուծում, ինքը՝ գողերի ինստիտուտը, ալտերնատիվ իրականություն էր, որ ասում էր՝ ճիշտը ես եմ: Այսինքն՝ ինքը ուներ իր ուստավը, քանի որ պետության ուստավը կեղծ էր, և մարդիկ գիտեին, որ պետությունից գողանում էին, ապա այդ «ալտեր-մշակույթը» կարծես ճիշտ էր դառնում»[18]:*

Մյուս բաղադրիչն ընդհանուր գաղափարական հենքն էր, որը նոր հարթակ էր համատեղ պայքարի համար՝ ընդդեմ ցանկացած «շեղվող» կարծիքի, մոտեցման և ընդհանուր առմամբ՝ այլախոհության ցանկացած դրսևորման:

> *«Պրոլետարիատի և ինտելիգենցիայի միջև անդունդ կա, դա կրթության անդունդն է: Մտավորականության ու բուրժուազիայի (միջին խավ) միջև անդունդ կա. դա ունեցվածքի անդունդն է: Զուտ ծագման իմաստով այդ երկու խավերը շատ մոտ են եղել, և «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» կարգախոսը ցույց է տալիս*

18. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Լուսինե Խառատյան, 40 տարեկան:

այն, որ սովետական իշխանության համար մյուս խավերը գիտակցվում էին որպես խորթ։ Նկարագրվածից ելնելով՝ իրենց բնականորեն ամենամոտիկ խավը գողական աշխարհն էր ու քրեական հանցագործներն էին, որոնց ուղղահայաց հարաբերությունները շատ մոտիկ էին բոլշևիկյան պետության մեջ ձևավորված ուղղահայաց հարաբերություններին, որտեղ մի կուսակցություն էր որոշում ամեն ինչ, և առաջնորդը իր ենթակաների շղթայով նույն տրամաբանությամբ էին աշխատում»[19]*։*

Այս գաղափարական ընդհանրության և միասնության պարագայում անցում կատարվեց գողական ենթամշակույթի կանոնակարգված, ուղղորդված գործունեության, և քրեական ենթամշակույթը ամրապնդվեց ու ինստիտուցիոնալացվեց և՛ որպես մշակութային, և՛ որպես գործառնական համակարգ։ Իհարկե, խորհրդային համակարգը պաշտոնապես պայքարում էր այդ երևույթի դեմ, մյուս կողմից՝ այդ երկու համակարգերը, կարծես, մեկը մյուսին պատնեշ էին, քանի որ կիրառում էին ազդեցության նույն ձևերը։ Այսպիսով, գաղափարական թշնամուն ոչնչացնելու և խորհրդային քաղաքացու կերտման երազանքին և նպատակին զուգահեռ (դրանով փորձ էր արվում կրթել և դաստիարակել խորհրդային քաղաքացուն, որ, իբր, նրանք ապրում են ճիշտ և արդար հասարակությունում) ձևավորվող ֆարսային հարաբերությունները բյուրեղանում էին։ Երկուսի էլ՝ և՛ պետության, և՛ քրեական մշակույթի բռնի բնույթը միմյանց լրացնում էին և ուժգնացնում։

Քրեական մշակույթի մեջ այլ ազգային, էթնիկ մշակույթների դերը (բացի նախնական՝ հրեական-օդեսայական հիմքից) նույնպես շատ կարևոր է հասկանալ։ Սրանց ընդգրկումն այդ մշակույթի մեջ նույնպես հաճախ պայմանավորված էր

19. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Վահրամ Մարտիրոսյան, 61 տարեկան։

արհամարհանքով և դիմադրությամբ՝ խորհրդային կարգերի հանդեպ, ինչպես նաև գոյատևման ցանկությամբ:

> *«Պետք է հասկանալ, որ Գուլագի մշակույթը և գողականության մշակույթը կազմավորվել է արևելյան այդ հոսքի մեծ ազդեցությամբ, այդ կովկասյան՝ հյուսիսային նախևառաջ, բայց կովկասյան, ոչ միայն, նաև հարավային, նաև հայերի, վրացիների և միջինասիական ժողովուրդների բարքային հոսքից, նրանց ավանդույթների ազդեցությամբ: Եվ դա, օրինակ, կարող է շատ հետաքրքիր հետազոտություն լինել, որովհետև ռուսերենում, եթե ռուսական համացանցը նայենք, ապա և՛ իդիշի ու գողական լեզվի փոխհարաբերությունները, և՛ Օդեսայի դերը ռուսական կրիմինալ մշակույթի մեջ բավական հետազոտված է: Կան հսկայական բառարաններ բոլոր կրիմինալ տերմինների, նաև հայհոյանքների խորքային հետազոտություններ կան՝ սերելով դրանք, այսպես ասած, աստծո և աստծո շուրջ գտնվող այդ արժեքների նկատմամբ վերաբերմունքից: Բայց, ասենք, կովկասյան կամ, օրինակ, թաթար լինի թե ուդմուրտ, կամ միջինասիական, ասենք՝ ուզբեկ և այլն, այդ ցեղախմբերի և ազգերի ավանդույթների և մշակույթի ազդեցությունը գուլագային մշակույթի և ընդհանրապես Խորհրդային Միության մշակույթի ձևավորման վրա շատ քիչ է հետազոտված»[20]:*

Եթե համեմատենք մինչխորհրդային և արդեն իսկ խորհրդային ժամանակահատվածում քրեական ենթամշակույթի ազդեցության և զարգացման ընթացքը, ինչպես նաև վերլուծենք էթնիկ և աշխարհագրական առանձնահատկությունները, պետք է նշել, որ այն աստիճանաբար ընդլայնվեց և դարձավ պետության մեջ առանձին «պետության» հավակ-

20. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Գևորգ Տեր-Գաբրիելյան, 56 տարեկան:

նող համակարգ: Եվ շատ կարևոր է, որ այն արդեն ԽՍՀՄ տարբեր ժողովուրդների ադապտացիայի, հակազդեցության, բարքերի փոխակերպված արտացոլումն էր՝ ամբողջացված Գուլագում:

> *«Տարանջատումը մտավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Երկրորդ պատերազմի ժամանակ հետաքրքիր զարգացումներ են տեղի ունենում: Օրինակ, բոլոր նրանց, ովքեր եղել էին գերի 45-46 թթ., սկսում էին դատապարտել: Այնուհետև՝ «վլասովականները», որոնք պատերազմի տարիներին վերադարձել էին Գերմանիայի կողմը: Եվ այդ մարդիկ գնացին կալանավայրեր իրենց հիերարխիայով: Եվ նրանց թիվը 100 չէր, այլ հազարավոր: Քառասունութ թվականին Խորհրդային Միությունում օրենք ընդունվեց, որ հատուկ պետական վտանգավոր հանցագործներին առանձնացնեն: Եվ նրանց առանձնացնելու համար Գուլագի կազմում ստեղծում են առանձին ճամբարներ: Այսպիսով, ձևավորվեցին այն ճամբարները, որտեղ նստեցին քաղաքականները[21]»:[22]*

Խորհրդային իշխանության հետ քրեական մշակույթի համագործակցության ձևերը փոխակերպվեցին և հստակեցվեցին հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ չնայած այն պաշտոնական դիսկուրսին, որ Խորհրդային Միությունը պայքարում էր գողերի դեմ:

Այնուամենայնիվ, մինչ նշված ժամանակահատվածը, քրեական ենթամշակույթի՝ Գուլագից դուրս հանրային կյանքում ազդեցությունը դեռ շատ չէր նկատվում, այն դեռ չէր զգացվում որպես ամենօրյա կյանքի փաստ Գուլագի համակար-

21. Որոշ հետազոտողներ այս օրենքը կապում են համակարգի «հումանիզացիայի» և գուլագային բռնության «դեմ պայքարի» հետ. քաղաքականներին առանձնացնելը քրեականների ոտնձգություններից նրանց խնայելու գործառույթ էլ ուներ:

22. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Վարդան Հարությունյան, 59 տարեկան:

գից դուրս, քանի որ այդ ազդեցության ներթափանցումը ոչ կալանային կյանք տեղի էր ունենում աստիճանաբար: Պետք է դիտարկել, թե ինչպե՛ս և ե՛րբ սկսվեց այդ համակարգի տարրերի, պրակտիկաների, այդ թվում՝ բռնի՝ բռնությամբ, ուժի ազդեցությամբ հարաբերություններ կանոնակարգելու հարաբերությունների ներթափանցումը Գուլագից դուրս հանրային կյանք, և ինչպե՛ս դրանք հանրայնացվեցին՝ կալելով ԽՍՀՄ ամբողջ տարածքը:

1950-ականների վերջից արդեն, չնայած Գուլագի ստալինյան տարբերակ աստիճանական վերացմանը, գողական ենթամշակույթը ներթափանցեց նաև հասարակության լայն շերտեր, դարձավ սոցիալական հարաբերությունների մի տեսակ՝ բնորոշ հասարակության տարբեր խմբերին: Դրա հիմնապատճառն այն էր, որ միլիոնավոր մարդիկ, որոնք տարիներ շարունակ աքսորավայրերում ադապտացվել և ներառվել էին գողական մշակույթի մեջ, դուրս եկան և հանրային տարբեր սոցիալական խմբերի մեջ ազդեցության գոտիներ ձևավորեցին: Նույնիսկ նրանք, ովքեր այդ ենթամշակույթի մեջ եղել էին ամենացածր դիրքերում և ամենևին այդ արժեքների կրողը չէին, վերադարձից հետո կա՛մ ինքնահաստատվելու համար կրկնում էին Գուլագում սովորած բարքերն առօրյա կյանքում, կա՛մ պարզապես դրանք յուրացրել էին մինչև ուղնուծուծը (կամ էլ «շրջապատն էր խաղում արքա»), բախվելով շրջապատի ռոմանտիկացված պատկերացմանը գողական մշակույթին, ընտրում էին այդ վարվելակերպը՝ արտահայտելով դա այս կամ այն խորությամբ: Շատերն իրենց փորձը կամ կենսագրությունը փոխակերպելով՝ հերոսացվեցին իրենց համայնքներում: Շատ «գողեր» միֆականացվում էին՝ դրանով իսկ միֆականացնելով ու փառաբանելով այդ մշակույթը: Կար նաև այն հանգամանքը, որ քաղաքական բանտարկյալների (բոլոր տարատեսակների, ներառյալ՝ ազգային մարտիկների, նախկին գերիների և այլն) դիմադրության և հերոսացման պրոցեսը, նրանց մասին թաքուն բանավոր տեղեկությունների լայն

տարածումը բերում էին նրան, որ հերոսացվում էին բոլորը, ովքեր Գուլագում էին եղել: Մյուս կողմից, քրեական խմբավորումների տիրապետության ներքո գտնվող ռեսուրսը չէր կարող միանգամից թուլանալ: Հակառակը՝ այդ ռեսուրսը սկսեց կիրառվել նաև լայն հասարակական հարաբերություններում ամենատարբեր բարիքները ձեռք բերելու համար այն ճանապարհներով, որոնք արդեն իսկ արդյունավետ էին դարձել գողական ենթամշակույթի շրջանակում: Անգլերեն հրատարակված իր աշխատության մեջ Գ. Տեր-Գաբրիելյանը[23] նշում է, որ «խաղաղ» կյանքի կողմից գողական «կարգի» «ընդունումը» ցույց էր տալիս նաև պետության թուլությունը՝ հարցերը կարգավորել պաշտոնական ուղիներով և միջոցներով, ինչպես նաև դրան օգնում էր Ստալինի մահից հետո կոռուպցիայի է՛լ ավելի հեշտ տարածումը՝ այսպես կոչված «ցեխավիկների» շարժման արմատավորման միջոցով, քանի որ ոչ պաշտոնական մասնավոր բիզնես հարաբերությունները հսկայական քանակով հարցեր էին ստեղծում, որոնք հնարավոր չէր լուծել պաշտոնական մակարդակում:

Ազդեցության ամենաակնառու ձևերից է, օրինակ, հենց «հեղինակություն» հասկացության իմաստային փոփոխությունը, երբ այդ բառը սկսեց օգտագործվել հիմնականում քրեական աշխարհի ներկայացուցիչներին նշելու համար, այլ ոչ թե, ինչպես ավանդաբար ընդունված էր, հանրային հարգանք վայելող նշանավոր անձանց:

80-ականներին քրեական խմբավորումները նոր լծակներ ու գործառույթներ ստանձնեցին: Մեծ ազդեցություն ունեցավ Խորհրդային Միության վերջին շրջանում պերեստրոյկայի, կոոպերատիվների ձևավորումը. խմբավորումներն ավելի նմանվեցին մաֆիայի, փոխվեցին դասական գողական օրենքները, քանի որ առաջ եկավ արդեն ոչ թաքուն բիզնեսը: Հենց քրեական ենթամշակույթի ներսում տեղի

23. Ter-Gabrielyan, G. (2020). Armenia 3.0. Understanding 20th Century Armenia, Yerevan, EPF. Available at: https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia [Accessed 18.07.2020].

ունեցան փոփոխություններ, որոշակիորեն փոխվեց գողի կերպարը, խոսքը, լեզուն, դաջվածքների նշանակությունը: Խորհրդային Միության փլուզումը տեղի ունեցավ, կարելի է ասել, համեմատաբար «արագ»: Սակայն հասկանալի է, որ այդ փլուզման սերմերը գոյություն ունեին այդ պետության ստեղծման հենց սկզբից, քանի որ այն հենց սկզբից անսքող բռնության վրա էր հիմնվել: Եվ փլուզման այդ տենդենցները գնալով ավելի ու ավելի էին ուժգնանում, և հենց պետության անկարողությունը՝ հարցեր լուծել, որի պատճառով քրեական վարք ու բարքն ու օրենքները դառնում էին հարց լուծելու լավագույն տարբերակ, ցուցիչ էր, որ պետությունը գնալով ավելի է թուլանում: Պարզ է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ նրա փոխարեն առաջացան մի շարք պետություններ՝ նույնպես թույլ, քանի որ՝ նորածին, քրեական մշակույթը չէր անհետանալու: Այն ձևափոխվեց ու սկսեց նոր դրսևորում և ինքնություն ստանալ նոր իրականության մեջ՝ որպես նյութական բարիքների, իշխանության հասնելու այլընտրանքային ճանապարհ, որոշ քաղաքական համակարգերում դառնալով գրեթե գլխավոր և մայրուղային:

Գլուխ 2. Հայաստանյան համատեքստ. քրեական ենթամշակույթի հանրայնացումը հայաստանյան իրականության մեջ սովետական ժամանակաշրջանում

Հայաստանում քրեական ենթամշակույթը առավել քան զորեղ դարձավ, ինչպես Խորհրդային Միության տարիներին, այնպես էլ դրանից հետո, երբ հաճախ մարդիկ արդարադատությունը փնտրում էին ոչ թե դատարաններում, այլ հենց քրեական հեղինակությունների շրջանում և նրանց միջոցով:

Հայ մշակույթի և սոցիալական կյանքի մեջ գողականությունը պատմականորեն առկա և դոմինանտ չի եղել, այն եղել է հանրայնորեն պարսավելի երևույթ, և առանձին անհատները, որոնք համայնքային կյանքին որևէ կերպ վնաս էին հասցնում, որոնք խաթարում էին համայնքային նվիր-

յալ կապերը, ի սկզբանե համայնքի վտարանդի էին դառնում: 19-րդ դարի ընթացքում գողերը ամենաանընդունելի կերպարներն էին, և համայնքներից վտարում էին նրանց, և այդպիսի առանձին մարդիկ հաճախ տեղափոխվում էին մի բնակավայրից մեկ այլ բնակավայր: Սակայն նույնիսկ այս դեպքում նրանց նկատմամբ խարանը բավականին ուժեղ էր: Նրանք այլևս չէին կարողանում որևէ բնակելի համայնքում մնալ, քանի որ յուրաքանչյուր համայնք տեղեկություն էր ստանում հին համայնքներից, և, փաստորեն, այս մարդիկ զրկված էին սոցիալական կյանքի իրավունքից: Այսինքն՝ գող լինելը ոչ թե հեղինակություն, այլ ամոթ էր ու անպատվություն, և նման մարդիկ, ի վերջո, որևէ համայնքում տեղ չգտնելով, գնում էին ոչ բնակելի վայրեր, լեռներ ու ձորեր, ու, կարծես թե, դրանով համայնքները ինքնամաքրվում էին: Եթե դիտարկենք գրականության մեջ, ապա «Խաչագողի հիշատակարանը»[24] հենց արտացոլում է այն համայնքային վերաբերմունքը, որ կար համայնքից գողացողների հանդեպ:

Հայկական իրականության մեջ սոցիալական ամենակարևոր միավորը թաղն էր: Այսօր այն կարող ենք նույնացնել համայնքների հետ, որոնք որպես վարչական շրջաններ են հանդես գալիս, այնուամենայնիվ, թաղը համայնքի անդամների շատ ավելի ուժեղ համագործակցության միավոր էր, քան այսօրվա համայնքը, և թաղի կարգուկանոնի խնդիրը համայնքի կյանքի ամենակարևոր խնդիրներից էր: Թաղի հեղինակությունը և կարգավորումը ուժեղ, տարիքով, տնտեսապես մեծ մասամբ ապահով, հարգանքի արժանի տղամարդկանց ձեռքում էր, որոնք, կարծես, տեղական ինքնակառավարում էին ապահովում, մյուս կողմից՝ նաև սոցիալ-մշակութային և դաստիարակչական գործառույթ էին իրականացնում, հատկապես տղա երեխաների դաստիարակության, փոխադարձ հարգանքի, ընտանեկան և ավանդական արժեքների համատեքստում: Կանանց դերը հան-

24. Ռաֆֆի (1989), Խաչագողի հիշատակարանը: Հասանելի է՝ http://armenianhouse.org/raffi/khachagogh-am/1.html [դիտվել է 29.04.2020]:

ռային կյանքում շատ ավելի աննկատ էր, թեև, հասկանալի է, ոչ պակաս նշանակալի[25]:

19-րդ դարի երկրորդ կեսից մի շարք հանգամանքներ ազդեցին հայերի համայնքների ավանդական կյանքի խարխլման վրա: Նախ, ազգայնական գաղափարների հետ մեկտեղ, համայնքներ էին ներթափանցում նաև սոցիալիստական գաղափարները և մարքսիզմը: Իսկ մարքսիզմը իր գոյության հենց սկզբից, շահագործման վերաբերյալ իր ուսմունքի պատճառով, իմաստային խառնաշփոթ էր ստեղծում՝ հայտարարելով, որ ավելցուկային ունեցվածքն անիրավ է, ուրեմն՝ «հարուստից, շահագործողից գողանալը» մեղք չէ: Ազգայնականացման տենդենցներն էլ, իրենց հերթին, դիպչելով և՛ տեղի «իշխող» էթնիկ խմբին (Օսմանյան կայսրությունում՝ թուրքերին), և՛ մյուս ազգերին, խորացնում էին կոնֆլիկտները նրանց միջև, փոխադարձ անհանդուրժողականությունն ամրապնդում:

Պետք է հաշվի առնել, որ 19-րդ դարում հայերի բնակության արեալներում մարդու կյանքի արժեքը շատ ցածր էր, հետևաբար ցածր էր նաև արժանապատվությունը և այն տեղը, որ այդ արժեքին հատկացվում էր մարդկային հարաբերություններում[26]: Եթե մի կողմից, ասենք, եվրոպական, ռուս և հայ առաջադեմ գրականությունները սերմանում էին մարդու կյանքի արժեքի գիտակցումն ու ամրապնդումը, ապա հասարակական հարաբերություններում դա շատ դանդաղ էր դառնում հանրային կյանքի կազմակերպման սկզբունք:

25. Տե՛ս, օրինակ, Օտյան, Ե. (1921), Թաղականին կնիկը: Հասանելի է՝ https://hy.wikisource.org/wiki/Թաղականին_կնիկը [դիտվել է 18.07.2020]:

26. Տե՛ս Խ. Աբովյանի «Թուրքի աղջիկը» պատմվածքի վերլուծությունն այստեղ. Քումունց, Մ. և Ներսիսյան, Լ. (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները Խ. Աբովյանի բանահյուսական ակունք ունեցող ստեղծագործություններում: Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, Երևան, ԵՀՀ, էջեր 65-106: Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]:

Եվրոպայում մարդու կյանքի արժեքի, և դրա հետ կապված՝ մարդու իրավունքների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունն ուսումնասիրել են մի շարք հետազոտողներ, ինչպես, օրինակ, Մաքս Վեբերը[27], որն ամերիկյան կապիտալիզմի զարգացումը կապում է բողոքական էթիկայի հետ, կամ Ռոբերթ Փաթնամը[28], որը ցույց է տալիս՝ ինչպես իտալական քաղաք-պետություններում բիզնեսի շահերը (միմյանց վստահելու կարիքը) պահանջեցին մարդու արժեքի գիտակցում և դրան հենվելու մշակույթի զարգացում՝ ի տարբերություն Իտալիայի հարավի, որտեղ առևտրի վրա հենված քաղաք-պետություններ չզարգացան, և դա տեղի չունեցավ[29]:

Ինչ վերաբերում է այն պետություններին, որտեղ հայեր էին բնակվում, ապա նրանցից նույնիսկ ամենազարգացածում՝ Ռուսաստանում, մարդու կյանքի արժեքը, հետևաբար և՝ նրա նկատմամբ հարգանքը պատմականորեն շատ ավելի հետ էին, քան Արևմուտքում[30]: Բնական է, որ հայկական միջավայրերում նույնպես, չնայած հումանիզմի գաղափարների վերելքին, մարդու կյանքի արժեքը 19-րդ դարի ընթացքում շատ թերի էր ընկալվում և չէր դառնում հասարակական հարաբերությունների կարգավորման հիմք, ինչի վկայությունն է այդ ժամանակաշրջանի և հատկապես դրա վերջի հայ

27. Weber, M. (2001). The Protestant ethic and the spirit of capitalism. London, Routledge.

28. Putnam, R. D., Leonardi, R., & Nanetti, R. (1993). Making democracy work: civic traditions in modern Italy. Princeton, N.J., Princeton University Press.

29. Հետաքրքիր է, որ պետականության բացակայության ժամանակաշրջանում հայ էթնոսի առևտրական ցանցն ավելի ու ավելի է դառնում հետազոտողների կիզակետում գտնվող թեմա՝նաև արտացոլելով մարդու արժանապատվության վրա հիմնված վստահության դերը «ցանցային առևտրային իմպերիայի» ստեղծման գործում՝ Ջուղա կենտրոնով (տե՛ս, օրինակ, Ռուբեն Վարդանյանի և Նունե Ալեքյանի «Ճամփաբաժանին: Որոշումների ժամանակը» նախագիծը: Հասանելի է՝ https://armenia2041.org/am/ [դիտվել է 16.07.2020]):

30. Տե՛ս այս հանգամանքը որպես ռուսական հեղափոխությունների հանրագումարային պատճառ քննարկված այստեղ. Тер-Габриелян, Г. (2018), Уроки истории. URL: https://www.gtergab.com/ru/news/essay/the-lessons-of-history-russian/145/ [последний просмотр 16.07.2020]:

գրականությունը, ներառյալ Թումանյանի «Մարոն» (երեխաների և կանանց նկատմամբ թերարժեքային վերաբերմունքի արտացոլք) և «Գիքորը» (ցածր խավերի նկատմամբ թերարժեքային վերաբերմունքի արտացոլք) և այլն:

Այս պարարտ հողի վրա եկան մի կողմից՝ պետությունների հրահրած էթնիկ անհանդուրժողականության ահագնացող դրսևորումները, մյուս կողմից՝ սոցիալիզմը, որը նույնպես թերագնահատում էր մարդու (անհատի) կյանքի արժեքը՝ խմբավորման մի սկզբունքին (կրոն կամ ազգ, էթնոս, նացիոնալիզմ) հակադրելով մեկ այլ սկզբունք (դասակարգ, տնտեսական վիճակ, հասարակության հիերարխիայում գրաված դիրք):

19-րդ դարի վերջից ահագնացող ընդհարումները, պատերազմները, գաղափարական ներհոսը գումարվելով միմյանց՝ թուլացնում էին համակեցության կանոններին հետևելու ավանդական ձևերը: Այդ ամենն իր գագաթնակետին հասավ Առաջին համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության անցքերով:

Դրանց հետևանքով հայ ավանդական կյանքը համայնքներում վերջնականապես խարխլվեց: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ արժեքները պահպանող շատ տղամարդիկ կորան պատերազմի բովում, վերադարձածները հաճախ անուժ էին, մինչդեռ քրեականները, համաներումների շնորհիվ (քանի որ պատերազմի ժամանակ հաճախ են քրեականներին համաներում շնորհում, որպեսզի նրանք, որպես «բեսպրեդել» կատեգորիայի անձեր, մասնակցեն պատերազմին), բավական մեծ քանակություններով լցվեցին համայնքներ և հասարակություն: Իհարկե, ցեղասպանության և պատերազմի արհավիրքը, գոյատևման կարիքը նաև թուլացնում էր մարդկանց բարոյական հենքը, և շատերը սկսում էին իրենց թույլ տալ այն, ինչն այլապես թույլ չէին տա: Խորհրդային Հայաստանը ժառանգեց հարյուր հազարավոր որբեր, որոնք կրթության կարիք ունեին, քաղաքացիական պատե-

ռազմի վերքերը (խմբապետների ժամանակաշրջանից) և իսկույն էլ ընկղմվեց բոլշևիկյան բռնության հորձանուտի մեջ, որը շուտով ինստիտուցիոնալացվեց որպես ստալինյան շրջանի բռնապետություն:

Այդպես Հայաստանը 20-րդ դարի ընթացքում բռնության և քրեական մշակույթի իր հսկայական «դեղաբաժինը» ստացավ, սկզբում՝ Առաջին համաշխարհայինի և ցեղասպանության շնորհիվ, հետո՝ խորհրդային կարգերի ընթացքում:

Աստիճանաբար, 20-րդ դարի 50-ականներից ռեպրեսիաների դադարի արդյունքում, Գուլագից և աքսորից վերադառնում էին մարդիկ, որոնք տասնյակ տարիներ գուլագային մշակույթում ապրել ու գոյատևել էին այդ մշակույթի մեջ ներառման շնորհիվ: Նրանք արդեն իսկ մշակույթ կրող էին:

«Կոնդ թաղամասում 46-47 թվականներին թաղային կյանքը և թաղերի կարգուկանոնը վերահսկող երիտասարդ և միջին տարիքի տղամարդկանց թիվը պակասել էր պատերազմի մասնակցության արդյունքում, և այդ հանգամանքը նպաստավոր հող էր, որպեսզի խուժանները թաղերում հեղինակություն ստեղծեն:

60-70-ականներին արդեն համայնքում այն դարձավ պատվաբեր, եթե հիշենք՝ նախկինում այն անպատվաբեր էր: Հարց լուծողի ինստիտուտը քրեական հեղինակությունն էր, որը նախկինում հարգված տղամարդ էր, բայց ոչ հանցագործ անձը, այլ արժանավոր կամ տարիքային հեղինակության վրա հիմնված անձը, ովքեր ոչ միայն տարիքով մեծ էին, այլև համայնքում ձեռք էին բերել նաև հեղինակություն և անուն: Այդ մարդիկ իրականում հասկանում էին հանրային կյանքի լավ ու վատ կողմերը, որովհետև համայնքային կյանքը դա ավանդական խմբային կյանքն է:

Արդեն 70-ականներին դա դառնում է հարց լուծողների մենաշնորհը, որը ստեղծում է պետության դեմ գործ տվողի հասկացությունը: Իսկ հասարակական կյանքը կարգավորում են տղամարդիկ, և այդ տղամարդկանց հիերարխիայում գերակայեց գողականը: Գորբաչովյան գլասնոստի շրջանում առաջին անգամ «Մոսֆիլմը» ցուցադրեց «Վորի վ զակոնե» ֆիլմը, որտեղ էկրանիզացվում էր և հերոսականացվում էր թաղային մշակույթի հերոսը. դա 80-ականներին էր արդեն: Երևան քաղաքում՝ Դքի Նորո, Ժնջիլ Վաղո. անուններ էին, որոնք օրենքով գողեր էին. մենք երեխա էինք, և նրանց մասին այնպե՛ս էին պատմում մեծերը... Կիլիկիա թաղամասում, Կրիվոյի թաղամասում:

Ես շատ լավ հիշում եմ այդ գողական կռիվը, ընտանիքը, որոնք 6 երեխա էին, երեքը՝ նստած, հրապարակային ծեծեցին ոչ գողականի, և այդպես գողական ցանցը և՛ Կիլիկիայում վերահաստատեց գողական տղամարդկային կրիմինալ իշխանությունը, և՛ մի քանի շերտով աճող սերունդը ընկավ գողականության ազդեցության տակ»[31]:

Այսպիսով, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Երևանում, Գյումրիում, Հայաստանի մյուս բնակավայրերում աստիճանաբար ձևավորվեց այս մշակույթը, տարածվեց դրա ազդեցությունը, և այն դարձավ թաղային մշակույթ: Թաղն այն միկրոմիջավայրն էր, որտեղ լուծվում էին հանրային կյանքին վերաբերող շատ հարցեր: Ի վերջո, այդ ժամանակահատվածում կյանքը շատ կողմերով հանրային էր: Այնուամենայնիվ, քրեական ենթամշակույթը չէր սահմանափակվում միայն թաղային հարցերի կարգավորմամբ: Այն իր ազդեցության ձևերն ու միջոցներն ուներ նաև կրթական հաստատություններում, բանակում, գործարաններում, քաղաքական համակարգում:

31. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Աղասի Թադևոսյան, 54 տարեկան:

Կարևոր է նշել հենց կրթական համակարգ ներթափանցումը, որովհետև հենց այդտեղ է, որ այն աստիճանաբար տարածվում էր և դառնում գրավիչ: Կա նաև այն տեսակետը, որ միևնույն ժամանակահատվածում այս մշակույթը կրողները, հատկապես պարագլուխները՝ օրենքով գողերը, սերտորեն համագործակցում էին Խորհրդային Հայաստանի կուսակցական առաջին դեմքերի հետ: Կարևոր է հասկանալ, որ Հայաստանում այս համակարգը հաստատվելու հավելյալ անկանգ ազդակներ էր ստանում «Մոսկվայից», այնպես, ինչպես պաշտոնական իշխանությունն էր կապված «Մոսկվային»: Այսինքն, երկու համակարգերն էլ փոխկապված էին «կենտրոնի» հետ, և այդ փոխառնչությունը նաև դրսևորվում էր Հայաստանում: Նույնիսկ որոշ փորձագետներ նշել են, որ գողական ենթամշակույթի ներկայացուցիչ առանձին անձանց ազդեցությունը դրական է դրսևորվել որոշակի հարցերում, քանի որ դրա հաշվին երկրին արտոնություններ կամ տնտեսական միջոցներ են հատկացվել: Չնայած այն հանգամանքին, որ ոչ պաշտոնական դիսկուրսը խոսում էր այդ կապի մասին, խորհրդային ժամանակահատվածում քրեական ենթամշակույթը պաշտոնապես մուտք չուներ պետական իշխանության համակարգ: Այս ենթամշակույթի ներկայացուցիչները, ինչպեսև ցանկացած այլ ենթամշակույթի, խորհրդային իշխանության օրոք չէին կարող հավակնել քաղաքական իշխանության: Այս հստակ սահմանագիծը պահպանվում էր քաղաքական մրցակցության բացակայության շնորհիվ, քանի որ թույլ չէր տրվում հանրայնացնել փակ համակարգում իշխանության համար պայքարը: Բացարձակ կուսակցական իշխանությունը կարող էր պահել այդ մշակույթը, չպայքարել նրա դեմ (ավելի շուտ անկարողության և փոխշահավետության պատճառով) և որոշակի հարաբերություններ ունենալ նրա հետ, սակայն երկուստեք կար նաև հստակ սահմանագիծ՝ պահպանելու ամբողջի և դրան հակադրվող մասի առանձնացումը: 1980-ականներից՝ գորբաչովյան իշխանության ժամանակ,

գողական ենթամշակույթը հստակ դիրքավորվեց որպես տնտեսության վրա ազդեցություն ունեցող սոցիալական խումբ, որի կարևորությունն անհրաժեշտ էր երկրի տնտեսությունը կարգի բերելու համար: Գողական խմբավորումներն արդեն վերածվում էին նորարարական տնտեսության կազմավորումները բաշխող, վերաբաշխող, տիրող միավորների, ինչն իրականացվում էր կոռուպցիոն ձևերով: Հենց այս փոխակերպման արդյունքում է, որ այդ համակարգը ոչ թե վերացավ նորանկախ երկրներում, այլ ձևափոխված՝ լայնորեն տարածվեց հանրային հարաբերություններում:

Գլուխ 3. Քրեական բարքերի ինստիտուցիոնալ փոխակերպումը նորանկախ Հայաստանում

Նորանկախ Հայաստանում քրեական բարքերի ազդեցության մեծացումը տեղի ունեցավ ընդհանուր հետխորհրդային տիրույթում առկա սոցիալ-մշակութային, տնտեսական և քաղաքական, իրավական անեմիայի պայմաններում, երբ գործող համակարգերն արդեն իսկ փլուզված էին, իսկ նոր համակարգերը կա՛մ չէին ձևավորվել, կա՛մ դեռևս, գաղափարական առումով, բողբոջի նման նոր բացվելու փուլում էին: Բացի դրանից՝ առաջ եկան նաև որոշակի առանձնահատկություններ կամ էական ազդեցություններ, որոնք խորապես ազդեցին հասարակության հետագա զարգացման ընթացքի վրա: Այն երևույթները, որոնք բնորոշ էին ընդհանուր հետխորհրդային տարածքներին՝ ցեխավիզմ, ռեկետիզմ, ներթափանցեցին նաև անկախ Հայաստան, սակայն հաճախ նրանք դրսևորվում էին արդեն նաև այլ ձևերով: Այդ գործընթացին երկու հիմնական աջակցող գործոն կար՝ սեփականության բաշխման առաջին պրակտիկան Հայաստանում և պատերազմը: Պատերազմի մեջ քրեական տարրի ներթափանցման ընթացքը և ազդեցությունը հետաքրքիր փաստագրական, պատմական նյութ է, որը ցույց է տալիս նաև բանակում մինչ այժմ մնացած և շարունակվող քրեական որոշ բարքերի հիմքերը:

«Իշխողների առաջին սերունդը տոն տվեց, չարգելեց այդ բարքերը, իսկ 2-րդ, 3-րդ սերունդը քաղաքական իշխանության՝ ոչ միայն տոն տվեց, այլև դրա մասն էր կազմում, և բնականաբար է՛լ ավելի ամրապնդվեցին քրեական բարքերը հանրային կյանքում»[32]:

«Արդեն նոր-նոր էր սկսվել պատերազմը, երբ Երևան քաղաքի կրիմինալ շրջանում պատերազմին մասնակցելու շարժում սկսվեց: Շատ-շատերը գողականներից մտան «ֆիդայական շարժման» մեջ: Մի ծանոթ ունեի գողական, որը պատմեց, որ Կոնդում գողականների հավաք է տեղի ունեցել, և որոշում է կայացվել, որ գողականները պետք է մասնակցեն Ղարաբաղյան պատերազմին:

Անշուշտ հետաքրքիր է, որ երկու պատերազմների շրջանակում էլ՝ և՛ Երկրորդ համաշխարհային, և՛ Ղարաբաղյան պատերազմում, տեղի է ունեցել գողականների ակտիվ մասնակցություն պատերազմին: Եվ այն բացատրվում է երկու հանգամանքով. առաջին՝ հայրենասիրական մղումը, երկրորդ՝ ֆիդայիների ուժեղ ազդեցությունը: «Մորուքով ֆիդայիները» մեծ հեղինակություն էին և կարող էին նույնիսկ թաղի գողականին պատժել: Ես հիշում եմ, երբ ֆիդային իր քրոջը նեղացնելու համար ավտոմատով խփել էր գողականին: Այն ժամանակ քառտիկ վիճակ էր: Դրանից հետո գողականները սկսեցին վախենալ ֆիդայիներից, և որոշեցին դառնալ ֆիդայիների հագուստի, մորուքի-հագուստի կրողը: Երկրորդ պատճառը այն էր, որ ֆիդայիները անպատժելիորեն զենք կրելու իրավունք ունեին: Նրանք կարող էին ոստիկանական բաժանմունքների վրա հարձակվել և զենք վերցնել: Այսինքն՝ կրիմինալ աշխարհի համար

32. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Գևորգ Տեր-Գաբրիելյան, 56 տարեկան:

դա զենք ձեռք վերցնելու հնարավորություն էր: Մյուս կողմը թալանի հնարավորությունն էր, և այդ նպատակով ֆիդայիներին ինտեգրվելու որոշում կայացվեց: Այստեղից էլ ձևավորվեց «ասֆալտի ֆիդային». ժողովուրդը ֆիդայուն վստահում և թույլատրում էր ամեն ինչ անել: Իրական ֆիդային պիտի լիներ սարուձորում, բայց շատ արագ հայտնվեցին գողականի ներկայացուցիչները, որոնք ֆիդայու անվան տակ սկսեցին հենց մեքենաներ վերցնել, զենք օգտագործել, անօրինական այլ գործողություններ անել, որը նրանց ներվում էր, քանի որ օգտվում էին ֆիդայուն ժողովրդի կողմից տրված վստահությունից»[33]:

Պետք է հասկանալ, որ պատերազմի ժամանակահատվածում հանցավոր խմբերի ակտիվացումը բնորոշ է ոչ միայն այդ ժամանակահատվածին, այլև բոլոր պատերազմներին բոլոր երկրներում: Նույն ներթափանցումները եղան Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների շրջանակում: Սակայն առանձնահատուկ է այն հանգամանքը, որ 90-ականներին՝ արդեն իսկ պատերազմից հետո, բանակի կանոնակարգմանը զուգընթաց, այդ ենթամշակույթը կրող անձանց մի մասը ինտեգրվեց նաև զինվորական համակարգին որպես սպաներ և հետագայում նպաստեց բանակում կանոնակարգային հարաբերությունների փոխարեն հենց քրեական բարքերի միջոցով խնդիրների լուծման պրակտիկաների տարածմանը:

Ինչպես նշեցինք, ազդեցության երկրորդ դաշտը տնտեսական հարաբերությունների և տնտեսության վրա իշխանության խնդիրն էր: Այս առումով պետք է նշել, որ դեռևս նոր ձևավորվող ոստիկանության և այլ ուժային ծառայությունների պարագայում թաղային հեղինակությունների ազդեցության տակ անցան նաև տնտեսության կանոնակարգման գործառույթներին առնչվող հարցերը:

33. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Աղասի Թադևոսյան, 54 տարեկան:

Նախկին համակարգի սովետական միլիցիան այլևս չկար, իսկ նոր համակարգը դեռևս չէր ստեղծել իր վերահսկողության մեխանիզմը՝ ուժային պետական ծառայությունների միջոցով:

Եթե նորից գնանք դեպի դեպքերի փաստագրում, ապա 93-94 թթ. այդ խնդիրները սկսեցին մտահոգել նոր իշխանություններին, որոնք ձեռնամուխ եղան հանցավորության դեմ պայքարին, որպեսզի հասարակական կյանքում այդ ազդեցությունը նվազի, և պետական ինստիտուտները գործունակ լինեն կազմակերպելու հանրային անվտանգությանն առնչվող հարցերը: Բանավոր բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ տվյալ ժամանակահատվածում ՀՀ Ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանը կանչել էր բոլոր գողականներին և ասել՝ «միակ գողը ես եմ», և բոլոր հեղինակությունները այդուհետ պետք է իրեն ենթարկվեն: Չնայած դրան՝ հանցավոր խմբավորումների դերակատարությունը չնվազեց. հանցավոր խմբավորումները բանակային օրակարգից ներթափանցեցին տնտեսական համակարգ: Այդ ժամանակահատվածում սեփականաշնորհումը, կապիտալի ձևավորումը տեղի ունեցան ոչ թե ազատ շուկայական պայմանների, այլ խմբավորումների ազդեցության և շահերի համատեքստում: Տնտեսության մեջ քրեական բարքերի ներթափանցումը դրսևորվեց մոնոպոլ շուկայի ամենատարբեր գոտիների ձևավորմամբ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, որոնք 80-ականների վերջից սկսված տնտեսական վերակառուցման արդյունքում ցեխավիզմի նոր դրսևորումներն էին:

Այսպիսով, ոչ ֆորմալ իշխանություն կրող խմբավորումները փաստացի ձեռք բերեցին երկրի անվտանգության, այդ թվում՝ սննդի, արտադրության, բանակաշինության և անվտանգության հարցերում բավականին ուժեղ ազդեցություն, որի լեգիտիմության ապահովմանը այդուհետ անհրաժեշտ էր միայն մեկ բաղադրիչ՝ քաղաքական իշխանություն, որին հնարավոր էր հասնել ընտրությունների միջոցով:

«Եթե նայենք քրեական իշխանության ազդեցության ընդլայնման հարցին, ապա էական բացթողումը, որն ապահովեց նրանց հետագա մուտքը դեպի ֆորմալ իշխանություն, ընտրությունների գործընթացի նկատմամբ գողական խմբավորումների ազդեցությունն էր: Այսպիսով, քրեական իշխանությունը լեգիտիմացվեց և մտավ կառավարման համակարգ: Պատահական չէ, որ 1990-2018 թթ. քաղաքական իշխանության մեջ շատերը ունեին մականուններ, քանի որ այդ մականունները հենց կնքվել էին գողականության[34] միջավայրում»[35]:

Քաղաքական իշխանության թուլացման ֆոնին, նոր իրականության մեջ քրեական ենթամշակույթը բոլորովին փոխեց իր գործառույթները՝ արդեն ոչ թե հակադրվելով ֆորմալ իշխանությանը, այլ ձևավորելով ընդհանուր հենք հենց պաշտոնական դիսկուրսում: Հենց մշակույթը կրողների հետ զրույցներն ու վկայություններն են հիմք տալիս եզրակացնելու, որ խորհրդային ժամանակահատվածի քրեական համակարգը փոխեց իր կոդեքսը և դարձավ պետական իշխանության հետ համագործակցող կողմ:

Անկախացման տարիներին քրեական բարքերի հանրայնացմանը նպաստեց նաև անկախության մշակութային և սոցիալական անոմիան: Սա ևս առանձին ուսումնասիրության նյութ է, թե ինչպես ամբողջությամբ մերժելով հին մշակութային համակարգը՝ նորը դեռևս ոչինչ չէր ստեղծում: Շատ կարևոր է նաև տեղեկատվության ազատութ-

34. Պետք է հասկանալ, որ ոչ բոլոր «մականունավոր» քաղաքական գործիչներն են «օրենքով գողեր» և կամ նույնիսկ քրեական հիերարխիայում որևէ «հեղինակություն», սակայն նրանք բոլորը, փաստորեն, այդ ենթամշակույթի մաս են, ընդունում են այն և ենթարկվում նրա կանոններին, նույնիսկ եթե իրենց վարքում զուտ ձևականորեն ընդամենը «միմիկրիա» են անում: Դա նշանակում է, որ այդ ենթամշակույթը նրանց ավելի «ներկայացուցչական» է թվում, քան այլ ոճի դրսևորումները (որ նրանք կարող էին ընտրել դրա փոխարեն), նաև՝ պոպուլիզմի առումով:

35. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Սերոբ Խաչատրյան, 53 տարեկան:

յան և զանգվածային լրատվության միջոցների ազատականացման գործոններին անդրադառնալը: Եթե սովետական գրաքննությունը ընդհանրապես բացառում էր որևէ բռնության և գողական բարքերի ներկայացում ու խրախուսում պաշտոնական դիսկուրսում և պաշտոնական մեդիայում, որը, ըստ էության, միակ մեդիա միջոցն էր, ապա նորանկախ երկրները, ի թիվս Հայաստանի, ողողվեցին մեդիա դաշտի ամենատարբեր ազդեցություններով, և դրանց մեջ ներթափանցեց նաև բռնություն և գողականություն քարոզող ուղղությունը:

Այսպիսով, անոմիայի, իրավական և քաղաքական համակարգերի դեռևս չգծված սահմանների, մյուս կողմից՝ պետության կողմից հիմնական դաստիարակչական, գաղափարական գործառույթների վակուումի, կրթության մեջ բովանդակության և արժեքային քաոսի պայմաններում գողականությունը ներխուժեց հանրային բոլոր հարաբերություններ՝ պետության մեջ ձևավորելով ստվերային կառավարման համակարգ՝ իր մշակութային, այդ թվում՝ խոսքային, վարքային և ինստիտուցիոնալ արտահայտումներով:

Գլուխ 4. Քրեական բարքերի ինստիտուցիոնալ և մշակութաբանական արտահայտումները

Քրեական ենթամշակույթը ձևավորվել և տարածում է գտել սոցիալական և մշակութային ամենաբազմազան արտահայտչամիջոցներով, որոնց մեջ կարևոր նշանակություն ունեն խոսքը, միֆերը, գրական և երաժշտական ստեղծագործությունները, դաջվածքները, ինչպես նաև բացարձակ արժեք հանդիսացող երկու գաղափար՝ հեղինակության և արդարության գաղափարները: Անշուշտ, այս սիմվոլները կարևոր նշանակություն են ունեցել ենթամշակույթի նույնականացման, այն կրողների սահմանազատման և խմբային պատկանելության արժևորման համար: Քրեական ենթամշակույթի բոլոր բաղադրիչները ենթամշակույթի նույնա-

կանացման հատկանիշներ են և մի կողմից սահմանում են պատկանելությունը, մյուս կողմից հստակեցնում են դերակատարությունները:

Գործից՝ գործողությունից (օրինակից) հետո մշակութաբանական ամենամեծ ազդեցությունը և գործիքը խոսքն է: Խոսքը մշակութաբանորեն հսկայական նշանակություն ունի, օրինակ, *խոսք ասելը և չանելը պախարակելի է կամ պատժելի, արտաբերված խոսքը վերջնական է, այն պետք է հիմնավորես կամ պատասխան տաս և այլն:* Այս սկզբունքները, որոնք նույնն են անցյալի «ազնվազարմ» (արիստոկրատիկ) մշակույթում կամ մարդկանց ամենօրյա փոխգործողություններում, հատուկ նշանակություն են ձեռք բերել քրեական մշակույթում:

Խոսքի վերջնական, անբեկանելի արտահայտումը երդումն է: Քրեական համակարգն ունի երդումների տարբեր ձևեր ու աստիճաններ, և դրանք դրժելը հավասարազոր է անձի ոչնչացման:

Հետաքրքիր է, սակայն, որ այս մշակույթը հայտնի է հենց նրանով, որ կարող է ազատորեն դրժել իր իսկ վերը նշված սկզբունքները, քանի որ հիմնված է է՛լ ավելի խորքային սկզբունքների վրա՝ «մարդը մարդուն գայլ է» (homo homini lupus est), «մեռիր դու սկզբում, ես՝ հետո», «քեզ ձեռք չեն տալիս՝ մի թպրտա» և այլն[36]: Եթե «գողերի» միջավայրում գործում է «գողերի» «պատվի կոդեքսը», ապա բավական է, որ հնարավոր լինի այն խախտել՝ «ոչ գողի» հետ գործ ունենալիս կամ «թուլացած գողի», և խնդիր չկա. եթե կարող ես խախտել՝ օրենքն ու իրավունքը քոնն են, եթե դրանից տուժեցիր՝ դու ես մեղավոր:

> *«Հայաստանում քրեական գողական մշակույթի լեզուն և տերմինաբանությունը հիմնականում ռուսերենն է: Ստալինը ազատություն տվեց գողական*

36. Տե՛ս սրանք քննարկված՝ գրքի առաջաբանում և վերջին հարցազրույցում:

աշխարհին՝ կազմակերպվելու առաջին հերթին ԽՍՀՄ-ում, առաջին հերթին բանտերում, աքսորավայրերում ու ճամբարներում: Քանի որ դա ռուսալեզու միջավայր էր, այդտեղից էլ տարածվեց ծայրամասերը: Ենթադրում եմ, որ դա տարածված է եղել նաև ԽՍՀՄ մյուս հանրապետություններում: «Բլատնոյ» երգերը՝ նվիրված քրեական աշխարհին, շատ հաճախ ռուսերեն են, ասենք, կամ երկլեզու՝ շատ ծիծաղելի խառնուրդով, իրենց պրիմիտիվ բառապաշարով»[37]:

Խոսքը մի կողմից մարդու վարքը կառավարող միջոց է, որն օգտագործվում է ավելի վերև կանգնածի կողմից, մյուս կողմից՝ ազդեցության և նույնականացման դրսևորում է: Գողական լեզուն և բարքերը շաղախված են հայհոյանքով և տաբուացված թեմաներով: Դրա նպատակն է, որ խոսքը դառնա ուժեղ, ազդեցիկ, խոցող, որպեսզի քիչ հավանական լինի, որ կմնա անհետևանք:

«Ցածր»՝ ստորակարգված խմբերը բնութագրվում են հայհոյախառն նշանակության բառերով: Ենթամշակույթն իր մեջ ձևավորել է բառերի և հայհոյանքների մի համակարգ, որոնք թիրախավորում են կոնկրետ արժեքներ, իսկ այդ արժեքներին դիպչելը արդեն պատվի, արժանապատվության և հեղինակության հարց է: Այդ լեզուն՝ որպես մշակույթ, որպես մտածողություն, հարում է ժարգոններին, խոսակցականին, արգոներին, սակայն նրանց ծայրահեղ դրսևորում է. այն իրապես կռվի մեջ է պաշտոնական, ինչպես նաև մաքուր գրական լեզվի (հայերենի) հետ, և հենց սա է, թերևս, պատճառը, որ ենթամշակույթի հաղթահարման կամ դրա դեմ պայքարի հարցում փորձագետների զգալի մասը կարևորել է գրական մաքուր խոսքի մշակույթի տարածումը և դրա հանրայնացումը հատկապես իրավապահ ծառայողնե-

37. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Վահրամ Մարտիրոսյան, 61 տարեկան:

որի շրջանում: Կա նաև այն դիտարկումը, որ երբ ենթամշակույթի հետ փոխհարաբերությունը տեղի չի ունենում նույն լեզվով հաղորդակցմամբ, այսինքն՝ գողական լեզվի հետ չես հարաբերվում նույն լեզվով, ապա նրա ազդեցությունը թուլանում է: Եվ հակառակը՝ այդ լեզուն ունի մարդկանց իր տիրույթ ներքաշելու հատկություն, պարտադրում է իր հետ եկող արժեքները, երբ դառնում ես դրան մասնակից: Այդ մասնակցությունը կամ հարաբերվելը տեղի է ունենում հիմնականում տղամարդկանց միջավայրում: Հատկապես հայհոյանքների դեպքում այս լեզուն կիրառվում է ոչ պաշտոնական (ոչ օֆիցիալ) միջավայրում: Հետաքրքիր է, որ Ռուսաստանում, ԱՄՆ-ում և Արևմտյան այլ մշակույթներում այն խոշոր չափով հանրայնացվել է և ներթափանցել հանրային դիսկուրս, սոցիալական ցանցեր, իսկ Արևմուտքի դեպքում՝ նաև գրականություն և առօրեական խոսք՝ կորցնելով իր սադրիչ ուժը: Սա էլ լրացուցիչ ուսումնասիրության խնդիր է. ինչո՞վ է պայմանավորված որոշ մշակույթներում անպարկեշտ բառամթերքի խայթողական հատկանիշի վերացումը դրա հանրայնացման միջոցով, դա որքանո՞վ է կապված մշակույթի սոցիալ-տնտեսական զարգացման հետ, տաբուներից ազատագրման, գիտակից քաղաքականություն է թե՝ ոչ, և որքանո՞վ է այդ գործընթացը պայմանավորված տվյալ սոցիումի մշակութային-արժեքային համակարգով՝ սկսած կրոնից մինչև հայրիշխանական արժեքները և այլն:

Մեր իրականության մեջ հայհոյանքի լեզուն «փակ» (պաշտոնապես չճանաչված ու նաև չուսումնասիրված պաշտոնական գիտության կողմից), սակայն համատարած, տոտալ տարածում ունեցող լեզու է: Փոքրուց տղա երեխաներին սովորեցնում են հայհոյել, ներառյալ հենց ծնողները կամ ազգականները (սովորաբար արական սեռի ներկայացուցիչները), և երեխայի կողմից այդ արտահայտությունների արտաբերումը ուժի և առնականության նշան են համարում:

Գողական լեզվի տրանսֆորմացիան ժամանակակից լեզվի

մեջ դրսևորվել է նաև քյարթու բառապաշարով և այդ լեզվին սերտորեն կապված մշակույթով[38]:

> *«Կարևոր հարցադրում պիտի անել և անդրադառնալ. այն, որ սովորաբար քյառթուներին խառնում են գողականների հետ, որոշ մարդկանց մոտ այդ ճանապարհը տանում է դեպի այդ աշխարհը, բայց քյարթուն[39] ավելի շատ նմանակում է, մանավանդ՝ հասարակությունը սիրում է, ընդունում, դրա համար էլ հեշտ է ապրել քյարթուի կերպարով: Հասարակությունը նպաստու՞մ է արդյոք այդ բարքերի ընդլայնմանը. օրինակ, հաճախ անգամ ծնողները իրենց երեխաներին պաշտպանելու նպատակով նպաստում են, որ իջնեն փողոց, շփվեն, որ հետո բանակում հեշտ լինի»[40]:*

Շատ կարևոր է հասկանալ նաև քրեական մշակույթի ծիսականությունը և թատերայնությունը: Հենց քյարթուի և իրական «գողականի» միջև գոյություն ունեցող նրբին տարբերությունը այս երևույթի մեկնաբանության լավ հնարավորություն է տալիս: Ինչպես ասացինք, գողական մշակույթն օգտագործում է իր առերևույթ կանոնները՝ խոսքին հավատարիմ լինելը և այլն, որպես քող՝ իր իրական՝ գիշատիչ արժեքները թաքցնելու համար: Նույն կերպ էլ շատերը սկսում են իրենց պահել այդ մշակույթի արտաքին արտահայտումներին համապատասխան (նշվեց վերը) (լեզուն, հայհոյան-

38. Տե՛ս Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.) (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, Երևան, ԵՀՀ: Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]:

39. «Քյարթու» ենթամշակույթը՝ որպես «ցածր», ոչ պաշտոնական մշակույթ, ազդված լինելով «գողական» ենթամշակույթից, նաև սերում է խորհրդային շրջանի «ռաբիս» ենթամշակույթից և ունի նրա հետ հարազատ աղերսներ: Տե՛ս ռաբիսի երաժշտական (գլխավոր) տարբերակի ուսումնասիրությունն այստեղ. https://hetq.am/hy/article/116755 [դիտվել է 16.07.2020]: Տե՛ս նաև սույն գրքի վերջին զրույցը:

40. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Արքմենիկ Նիկողոսյան, 41 տարեկան:

քը, արտաքին տեսքը, շարժուձևը, վարքը)՝ իրականում (գոնե դեռևս) չպատկանելով այդ մշակույթին: Սա հատկապես հատուկ է տղա երեխաներին և պատանիներին, ինչպես նաև կալանավայրից վերադարձածներին կամ այնտեղ ադապտացիայի կարիք ունեցողներին. շրջապատը, շրջապատի ճնշումը ստիպում է այդպես «միմիկրիա» լինել՝ հարմարվելու համար: Քյարթուների ենթամշակույթը դրա վառ օրինակն է: Մյուս կողմից, ծիսականության և թատերայնության արտահայտումների դրսևորում է նաև «գողական» լեզվի ստեղծագործականությունը, հենց ռուսերենից (կամ այլ լեզվից) վերցված «գողական» եզրերի փոփոխումը, աղավաղումը, հարմարեցումը հայկական միջավայրին, հայերենին, հայհոյանքների «ծաղկումը», դրանց ստեղծագործական զարգացումը:

Այս «թատերայնության» արտահայտումն են նաև այդ մշակույթին հատուկ միմոսությունը, ծաղրանքը, նմանակումը, պարոդիան, անլրջության, կանոնների խախտման բազմապիսի դրսևորումներ, որոնց նպատակներից են՝ ցույց տալ «մեծ քաղաքակիրթ կյանքի» կանոնների հեղհեղուկությունն ու անկիրառելիությունն այդ միջավայրում՝ մի կողմից, նաև ներարկել «օբյեկտի» մեջ անվստահություն, սպառնալիքի, վտանգի զգացում (որ եթե «մեծ քաղաքակիրթ» կանոնները չեն գործում, ամենը հնարավոր է)՝ մյուս կողմից: Դա պարարտ հող է ստեղծում այդ մշակույթի տարրերի օգտագործման համար պատանիների միջավայրում, ասենք՝ դպրոցում, բուլլինգի մշակույթի՝ հոգեբանորեն չափազանց նրբին ու վարպետ ավանդույթները ներդնելու համար, երբ մեկին ծաղրում են, հետո ասում՝ «չէ, մենք դա նկատի չունեինք, դա խաղ էր», և այդպիսով, նրա արժանապատվությունը խոցելուց հետո, հնարավորություն չստեղծում պատասխանելու (բայց միշտ՝ «ուժի» դիրքից): Ի վերջո, հայհոյանքը՝ ֆիզիկական բռնության փոխարեն, նույնպես այդպիսի միջոց է՝ սուբստիտուտ անել՝ փոխարինել ալֆա-արուի ֆիզիկական բռնությունը զուտ սիմվոլիկով:

Քրեական ենթամշակույթի նույնականացման մյուս միջոցները դաջվածքներն են[41]: Դ. Թումասյանը նշում է, որ գողական ենթամշակույթում առկա են եղել երեք գործառույթի դաջվածքներ.

- Ստիգմատիկ դաջվածքներ
- Արտոնյալ դաջվածքներ
- Ուղղակի կարգավիճակային դաջվածքներ, օրինակ՝ թմրամիջոցների համար դատապարտվածի դեպքում՝ սարդ:

Դաջվածքաբանությունը հսկայական նշանակություն ունի այս համակարգում: Դաջվածքները հնարավորություն են ընձեռում սոցիալապես նույնականացնել մարդկանց, քանի որ հատկապես ԽՍՀՄ-ում տարածությունները մեծ էին, նման ձևով իրար ինֆորմացիա և կարգավիճակ էր փոխանցվում: Միևնույն ժամանակ դաջվածքը, ազատության սահմանափակման և նույնականացման նշան լինելով, միանգամից սահմանափակել է մարդու՝ համակարգից դուրս գալու հնարավորությունը: Այս առումով, հետաքրքիր ծրագիր է իրականացվել Վրաստանում, երբ երիտասարդ իրավախախտներին, որոնք եղել էին ազատազրկման վայրերում և ունեին տարբեր դաջվածքներ, աջակցություն էր տրամադրվում մաքրելու դրանք: Անձնական աշխատանքային փորձառությունից առկա է մեկ դեպք, երբ բանտից ազատված 18-ամյա երիտասարդը, խուսափելով ի ցույց դնել իր դաջվածքները, շարունակաբար կրում էր փակ հագուստ, երկար թևքով վերնաշապիկ: Այս էական ազդեցությունը՝ մշակույթի պատկանելիությունը որպես խարան, բռնի և գիտակցված միջոց էր՝ հավաքագրելու և պահպանելու խմբի անդամներին, քանի որ դեռևս կա նույնականացում և սահմանների հստակեցում:

41. Шалагин, А. и Хрусталева, О. (2017), Тюремный фольклор в контексте криминальной субкультуры, Вестник Казанского юридического института МВД России 4(30). URL: https://readera.org/tjuremnyj-folklor-v-kontekste-kriminalnoj-subkultury-142211819 [последний просмотр 19.02.2020].

Իհարկե, ներկա ժամանակներում դաջվածքների բովանդակության և կիրառման փոփոխություն է եղել, այն այլևս չունի այդօրինակ ուժեղ և բացարձակ նույնականացնող ազդեցությունը: Այլևս պարտադիր չէ, որ որոշակի դաջվածք կրելը մարդուն անպայման նույնականացնի այս կամ այն խմբի հետ: Սա նաև ցույց է տալիս, որ կա քրեական բարքերի ազդեցության թուլացման միտում:

Անշուշտ, դաջվածքները նույնպես այդ մշակույթի ծիսականության և թատերայնության վառ արտահայտում են և կարևոր դեր են կատարում քրեական մշակույթի նշանագիտությունը՝ սեմիոտիկան ուսումնասիրելու խնդրում: Հետաքրքիր է նաև համեմատել դաջվածքների՝ «գողական» մշակույթի հարաբերակցությունը դրանց տարածմանը էլի «Արևմուտքում» (և այնտեղից նախկին խորհրդային մշակույթներ գալու)՝ որպես արդեն «զարդարվելու» հերթական ձև: Սա, իհարկե, կապված է դաջվածքների նախնադարյան նշանակության հետ, ինչպես նաև այն նշանակության, որ դրանք ունեին աֆրիկյան, բնիկ ամերիկյան և ասիական մշակույթներում, որոնց Արևմուտքը ծանոթացավ գաղութացման ընթացքների շնորհիվ: Դաջվածքը հանելով զուտ քրեական նշանային լեզվից և դարձնելով այն երիտասարդական զարդարման ենթամշակույթի արտահայտություն (տատու)՝ Արևմուտքի մշակույթը կատարեց նույնը, ինչ արեց հայհոյանքների հետ, մեծ չափով զրկելով դրանք մարդու արժանապատվությունը խոցող, վարկաբեկիչ և սադրիչ գործառույթից:

Նշանային և սիմվոլիկ ծեսերը շատ կարևոր դեր են կատարում քրեական մշակույթում նաև իրենց գործողութենական, ոչ միայն խոսքային կամ պատկերային (դաջվածք) տարատեսակների օգտագործմամբ: Այս ամենը (և՛ հայհոյանքը, և՛ դաջվածքը, և՛ արարքային ծեսը), իհարկե, հստակ նշան է նրա՝ այս մշակույթի արխայիկ բնույթի՝ արխայիկ պրակտիկաներին հարազատ լինելու:

«Ստուգիչ պրակտիկա. նորեկը մտնում էր կամերա, գետնին գցում էին մաքուր սրբիչ: Տեսնում էին սրբիչի հանդեպ վերաբերմունքը. եթե ինչ-որ մեկը ընկնում և վերցնում է, ապա նրա վրայով պետք է անցնել: Եթե ինքը ուղղակի անցներ, ապա ուրեմն անտարբեր է. եթե վերցներ դներ այլ տեղ, ապա ծառայություններ մատուցող է: Առաջին անգամ մտածները կարգավիճակ էին ձեռք բերում չիմացության պատճառով»[42]:

Անդրադառնանք քրեական վարքագծին և դրանց նույնականացման պրակտիկաներին: Դրանք ևս հիմք են դրվել ազատազրկման վայրերում և նույնականացման միջոցներ են՝ ստուգելու անձի կարգավիճակը այդ հիերարխիայում:

Ստուգման և նույնականացման տարատեսակ պրակտիկաներ և վարքագծեր տարատեսակ տրանսֆորմացիաներով գործել և պահպանվել են ոչ միայն ազատազրկման վայրերում, այլ նաև փոխանցվել են բանակ ու դպրոց: Օրինակ՝ ավլել համաձայնելու պրակտիկան բանակում հստակ նույնականացվում է «ստորացվող» դասի հետ, չնայած որ քչերը գիտեն, որ ի սկզբանե այդ մեկնաբանությունը եկել է հենց այն գաղափարից, որ գողական կոդեքսի համաձայն՝ խորհրդային հասարակարգում գողի համար աշխատելը տաբու էր՝ «զապադլո»:

Ճիշտ ինչպես որ «քաղաքակիրթ կանոնների խախտում»-անլրջություն վարքային պրակտիկայում (որի պատճառը նաև այն է, որ «քաղաքակիրթ» կանոնները հիմնված են հստակ սոցիալական հիերարխիաների-դերերի պահպանման սկզբունքի վրա, մինչդեռ գողականությունը սոցիումից դուրս է՝ outcast, отверженный, կաստաներից դուրս մղված, «անդիպչելի»՝ «ընկած», «իջեցված»), նույն կերպ էլ և՛ հայհոյանքների, և՛ մարմնի ստորին մասին առնչվող պրակտիկաների հետ կապված ծեսերի ֆիքսվածությունը տաբուներին

42. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Դավիթ Թումասյան, 40 տարեկան:

արտահայտում է նույն մեխանիզմը. «մեծ, պաշտոնական քաղաքակիրթ հասարակության» մեջ թագավորող լրջությանը, կանոնների պահպանմանը հակադրվում է դրանց քանդումը, և «վերին, բարձր, «պաշտոնական» մարմնի մասերին» և դրանց նկատմամբ վարքային կանոններին հակադրվում են «ստորին, ցածր, ոչ պաշտոնական» մարմնի մասերի հետ կապված կանոնները[43]:

Սակայն պետք է նկատել, որ տաբուների՝ սեքսին կամ զուգարանային պրակտիկաներին, հատակին, գետնին (որը համարվում է կեղտոտ), կեղտին և այլնին առնչվող համակարգը զուտ արխայիկ մշակույթի (ուրեմն և՝ աղքատության) արտահայտում է և գոյություն ունի գողական մշակույթից շատ ավելի վաղ, նրանից շատ ավելի մեծ է: «Վերևը» «ներքևի» հետ չխառնելը նաև սակրալ արքետիպ է. երկինքը, աստված(ներ)ը «վերևում» են, դժոխքը՝ «ներքևում»: Եթե գողական թատերայնությունը, ծաղրը և այլն «մեծ պաշտոնական քաղաքակրթության» կանոնների խախտում են, կարելի է ասել՝ «ձախականություն» (ճիշտ ինչպես գողերի կողմից մարդու սեփականության իրավունքը չընդունելը), ապա «ներքևի» զուգակցումը տաբուին արխայիկ կանոնների ամուր վերահաստատում է, ծայրահեղ «աջականություն», գլխավոր հիերարխիայի «անձեռնմխելիություն», որը հատուկ է նաև պարզապես աղքատ ավանդական-ավանդապաշտ միջավայրերին:

Սրան հետաքրքիր հավելում է այն, որ ամենամեծ մարտահրավերը (և սադրանքը) այդպիսի արխայիկ ուղեղի համար «վերևն ու ներքևը»՝ «մաքուրն» ու «կեղտոտը», «վեհն» ու «ստորը» խառնելն է, ինչպես, օրինակ, օրալ սեքսը: Հայտնի է՝ ինչպես են հայրիշխանական միջավայրերում նշում, որ սիրուհի են պահում, որպեսզի իրենց զավակների մոր հետ օրալ սեքսով չզբաղվեն:

43. Տե՛ս Բախտինի Կառնավալի մասին այստեղ. http://boon.am/mikhail-bakhtin/ [դիտվել է 16.07.2020]:

Արևմուտքի քաղաքակրթության հերթական քայլերից էր «վերևի» ու «ներքևի» տարբերության վերացումը, օրինակ, գետինը կամ հատակը մաքուր պահելու միջոցով (արևմտյան համալսարաններում միջանցքում կամ լսարանում գետնին նստելը խնդիր չէ), կամ հենց կարծրատիպորեն արքետիպային «ամերիկյան» վարքով՝ ոտքերն ազատորեն դնել սեղանին (ըստ ռուսական ասացվածքի, դա անում է խոզը, իսկ մի շարք ավանդական մշակույթներում դա, նույնիսկ պարզապես ոտքերը բարձր տեղադրելը, ոչ պարտադիր՝ սեղանին, անարգանք է ներկաների հանդեպ):

Եթե ամփոփ ներկայացնենք քրեական բարքերի և չգրված օրենքների էությունը, ապա ենթամշակույթի հիմնական գաղափարն այն էր, որ իր մեջ ընդգրկվող մարդուն, «պաշտոնական» սոցիումի հիերարխիկ համակարգի համաձայն, այն զրկում է սոցիալական պատկանելությունից. օրենքով գողը պիտի ընտանիք չունենար, որպեսզի խոցելի չլիներ, պիտի լիներ ատոմական մեկ կտոր, ասենք՝ ծայրահեղ էգոիստ, ծայրահեղ անկախ բոլորից: Նա չի կարող իրեն թույլ տալ բարի զգացումներ, մեծահոգություն և այլն:

Առանձին ուսումնասիրության են արժանի նաև այդ թեմային առնչվող միֆերը, որոնք մինչ այսօր դեռևս կան մեր հանրության մեջ: Հետաքրքիր է, որ միֆերը և դրանց հիման վրա կառուցվող երգերը, գրական ստեղծագործությունները ոգեշնչել են մի քանի սերունդ, դարձել են երաժշտական որոշակի ոճ, օրինակ՝ շանսոն, և բավականին տարածված են նաև մեր օրերում: Միֆերի հիմնական բնութագրիչ հատկանիշն այն է, որ գողական կյանքով ապրող մարդիկ արդարության և իրենց կյանքը ընդհանուրին նվիրած գաղափարակիրներ են: Այս առումով շատ հետաքրքիր և հստակ է Վ. Հարությունյանի ձևակերպումը միֆականացված հերոսների իրական կերպարների վերաբերյալ:

> *«Կա թյուր պատկերացում, որ այդ օրենքները շատ ազնիվ են, շատ մաքուր են, բայց դա բոլորովին այդ-*

պես չի, այդ կռիվները բոլորը խորը հաշվարկված, հաշվենկատ ուսումնասիրությունների բաներ են... այսինքն՝ այն պատկերացումը, որ նրանք Ռոբին Հուդեր են ազնվագույն, որ հատկապես կա գրականության մեջ, խաբուսիկ է: Եվ մարդը, որը հայտնվում է այդ իրականության մեջ, եթե ոչ մի քանի օրից, ապա մի շաբաթից կհասկանա, որ այդ ամենը միֆ է. յուրաքանչյուրն իր սեփական խնդիրը ունի, իր կենցաղը, իր կյանքը լավացնելու՝ պարտադիր ուրիշների հաշվին»[44]:

Իսկ մարդը, որը դուրս է մնացել այդ մշակույթից, ապրիորի զրկվում է արժանապատվությունից, և «գողը» նրա հետ կարող է անել ինչ ուզի, ընդհուպ մինչև «բեսպրեդել»:

Ընդ որում՝ կարևոր է նաև առաջարկը, որ ժամանակակից մեդիային այդ միֆերից ազատելու գործում կօգնի հստակ և ճշգրիտ տեղեկատվության աղբյուրների, նյութերի փոխանցումը: Չնայած նման հանրային աղբյուրները բավականաչափ սահմանափակ են, այնուամենայնիվ այդպիսիք կան, մասնավորապես, հենց Վ. Հարությունյանի աշխատությունում[45]:

Հետաքրքիր է նաև ազատազրկման վայրերում ստեղծվող արվեստի մեջ թեմատիկ ստեղծագործությունների վերլուծությունը, որոնց մեջ կան կտավներ, քանդակներ, մոմեր, դեկորատիվ իրեր, հացից կամ փայտից պատրաստված վարդեր և այլն: Ընդ որում՝ մայրության, սիրո և կրոնական թեման բավականին գերիշխող է այս տեսակի արվեստի մեջ:

Հետաքրքիր է, որ մշակութաբանական տեսանկյունից՝ արվեստագետների զգալի մասը այս դրսևորումներին շատ հանգիստ է վերաբերվում, և կա այն մոտեցումը, որ արվեստային

44. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Վարդան Հարությունյան, 59 տարեկան:

45. Հարությունյան, Վ. (2020), Քաղբանտարկյալի պատմություն: Հասանելի է՝ http://bit.ly/33XFpl4 [դիտվել է 19.02.2020]:

դրսևորումները պետք է առավել մաքրված կենսակերպի տանեն, այլ ոչ թե ռոմանտիզմի, և որ դա բավականին իրատեսական է: Սույն հոդվածի հեղինակի անձնական աշխատանքային փորձառությունը ևս հիմք է պնդելու, որ նպատակային արվեստի ստեղծումը քրեակատարողական հիմնարկներում այլևս գողական ենթամշակույթի վերարտադրություն չէ, այլ դրանից ձերբազատում արվեստի միջոցով: Այդ գործերի մեջ կարևոր է դիտարկել մշակութային այն դրսևորումները, որոնք ձևավորվում են փակ հաստատություններում: Այստեղ ճիշտ կազմակերպման և առաջնորդության դեպքում առկա է երևույթի մյուս կողմը՝ վերականգնման բաղադրիչը, և դա հետաքրքիր կերպով մեկնաբանել է Ս. Սաղաթելյանը:

> *«Քրեական աշխարհի ընդհանուր մշակույթի դրսևորումը արվեստում բնական է, որ եղել է բանտարվեստում: Ինձ հետաքրքրում էր և՛ նյութը, և՛ հենց՝ ինչ նպատակով է դա ստեղծվում: Նկատել եմ, որ մարդ բանտ ընկնելով՝ սկսել է ինչ-որ բան անել, այսինքն՝ իր մոտ ինչ-որ ստեղծագործական ուժեր են եկել. այստեղ և՛ սահմանափակումն է (գործոն), և՛ պայքարը ժամանակի և տարածության սահմանափակման (դեմ): Ստեղծագործական ուժը առաջ է գալիս, երբ մարդը հայտնվում է լիմիտավորված իրականությունում: Եթե նման միջավայրին էլ բերում ես արվեստի դաշտ, ապա ինքը ինչ-որ մի ձևով ապաքրեականացվում է»*[46]:

Բոլորովին ուրիշ է այդ բովանդակության կեղծ վերարտադրությունը, նմանակումը հանրային արվեստում: Ինչպես որ քյարթու խոսքը քրեական գռեհիկ ժարգոնային խոսքի նմանակումն է, այնպես էլ ժամանակակից հանրային մշակույթի մեջ՝ երաժշտության և այլ ճյուղերի մեջ, առկա են քրեական ազդեցության տարբեր տարրեր և ժանրեր (էությամբ՝ պարոդիական):

46. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Սամվել Սաղաթելյան, 62 տարեկան:

> *«Արվեստում, այն բոլոր տեղերում, որտեղ արտացոլվում են դրանք լայն մասսայի համար, ցածրաճաշակ պրոդուկտներ են՝ ռաբիսը, «բլատնոյը» և այլն, կարծում եմ դրանք երկար մտածված բաներ չեն, շատ արագ ստեղծված, պահի, իրավիճակի ազդեցությամբ ստեղծված: Նույնը վերաբերում է սերիալներին: Կարծում եմ, որ դրանք ընկալելի են այն մասսաներին, ովքեր ժամանակ չեն ուզում տրամադրել մտածելուն, իրենց կրթությանը, իրենց արժեհամակարգին»*[47]*:*

Գողականության թեմատիկայի միֆականացված և չափազանցված ազդեցությունը համընդհանուր հանրային մշակույթի վրա վնասակար է: Այն ազդում է և՛ խոսքի, և՛ երաժշտության, և՛ արվեստի ու մշակույթի բոլոր ճյուղերից հանրությանը հրամցվող և ձևավորվող արժեքների վրա:

Հանրային մշակույթի մեջ առավել վնասակար, բռնության և քրեական բարքերի տարածմանն են նպաստում ժամանակակից ֆիլմերը, մեդիա նյութերը, հայկական իրականության մեջ առկա սերիալները: Հետաքրքիր է այն փաստը, որ առաջին անգամ պաշտոնական մեդիայում, դեռևս ԽՍՀՄ ժամանակահատվածում՝ 1988 թ., ցուցադրվեց «Օրենքով գողերը» ֆիլմը[48] ռուսական, սովետական հեռուստատեսությամբ: Այն կարծես մեդիայի մեջ քրեական թեմատիկայի ազատականացման առաջին փորձն էր, որը բերեց միլիոնավոր դիտողներ և հետագա ազդեցություն ֆիլմարտադրության մեջ՝ այդ թեմատիկայի ընդլայնման տեսանկյունից: Եթե առօրյա կյանքում որոշակի գողական ավանդույթներ, միֆեր և խոսույթներ ստվերված և արգելված են, ապա ֆիլմերը ոչ միայն վերակենդանացնում են, այլև շատ ավելի վտանգավոր և ուժեղ են դարձնում դրանց ազդեցությունը, դուրս բերելով

47. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Մարիամ Մարտիրոսյան, 43 տարեկան:

48. Kapa, Ю. (1988), Воры в законе. URL: http://bit.ly/2PtGrQC [последний просмотр: 19.02.2020].

դրանք «լուսավոր» հանրային դաշտ՝ պարարտ հող ստեղծում առօրյա կյանքում դրանցից քաղված կարծրատիպերով առաջնորդվելու, բռնության դրսևորումների «նորմալացման», ուրեմն և՝ ոչ պաշտոնական «օրինականացման»:

Ռոմանտիզացումը ներկայումս ավելի շատ ասոցացվում է ոչ թե բուն գողականի, այլ տնտեսապես հզոր, մաֆիոզ կերպարների հետ: Այն բավականին ազդեցիկ է և հանգում է կրկին այնպիսի հիմնարար արժեքների խեղաթյուրված ներկայացման, ինչպիսիք են «հեղինակության» և «արդարության» միֆականացված պատկերացումները հանրային ընկալման մեջ:

«Հեղինակությունը» և «արդարությունը» գողականության համակարգն իրենց շուրջը կառուցող հասկացություններ են:

> *«Քրեական ենթամշակույթը ստեղծվել է, քանի որ արդարադատության ֆորմալ մարմինը չի կարողանում հաստատել արդարություն, ու ստեղծվել է մի նոր ենթամշակույթ, որը, իբր, հաստատում է այդ արդարությունը, իր կանոններով, կանոնակարգերով, իր հիերարխիաներով: Հաճախ մարդիկ քրեական ենթամշակույթը ընկալում են միայն բանտի ներսում, բայց չեն հասկանում, որ կրողները և դրսևորումները բանտից դուրս են, հենց մեր առօրյա կենցաղում: Քրեական ենթամշակույթի դրսևորումները ամենուր են և ամեն ձևով»*[49]:

Կարևոր է սահմանել քրեական ենթամշակույթի գաղափարախոսության հիմք կազմող այս հասկացությունները և ուսումնասիրել դրանց նշանակությունը: Անհրաժեշտ է տեսնել «նորմալ» մշակույթի և գողականության հեղինակության մեջ դրված արժեքների, դրանց սահմանման և բովանդակության տարբերությունները: Եթե մշակույթի մեջ «հեղինակությունը» բարձրագույն համամարդկային արժեքների,

49. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Մարիամ Մարտիրոսյան, 43 տարեկան:

հումանիզմի, առանձին անհատների պատմական, նյութական և ոչ նյութական արժեքների, նման գործունեության հիման վրա ձեռք բերված սոցիալական արժևորումն է, ապա քրեական ենթամշակույթի սահմաններում «հեղինակությունը» բացարձակ կարևոր, բայց բոլորովին հակադիր բովանդակություն ունի: Այն վաստակվում է տվյալ խմբի կողմից բացարձակ իշխանության հիման վրա: Ավանդականորեն, գողական ենթամշակույթի շրջանակում «հեղինակություն» է եղել ճշմարիտ կյանքով ապրող գողը, որը չպիտի ունենար կին և անձնական կյանք, չպիտի ունենար անձնական տնտեսական միջոցներ, պիտի որոշումների կայացման մեջ անվերապահորեն հետևեր գողական կանոնակարգին, պիտի ազատազրկման մեջ եղած լիներ, պիտի կարողանար աչք չթարթել և ապահովել դաժան, սակայն համակարգի տեսանկյունից «արդարացի» որոշումների կայացումը կամ հավանություն տալ դրան: Նման հեղինակությունները հաճախ միֆականացվել են, և, եթե նայենք մշակութային արտահայտչամիջոցների տեսանկյունից, «բլատնոյ» երգերի թեմաների մեջ այս անձինք «սրբացվում» էին: Դրան միանում էր նաև ռոմանտիզացումը. այս մարդիկ պատկերվում են ազատազրկման վայրերում, ընտանիքից հեռու, նրանց բնավորությանը հատուկ է ընդգծված զգացականություն: Կարոտի, մոր սպասումի երգերը հեղինակություններին զոհացնելու և սրբացնելու միջոցով միֆականացման արդյունք էին: Այսինքն՝ նրանց հեղինակությունը նաև բարձրանում էր, քանի որ կար միֆը, թե նրանք պայքարում էին հանուն արդարության և դրա համար էին հայտնվել խորհրդային բանտերում: Սա շատ կարևոր է, քանի որ, նորից գալով այս ենթամշակույթի դեմ պայքարի հարցին, ցույց է տալիս, որ ուղիղ, կոշտ պայքարը պետք է լինի այնպիսին, որ չլինի մարդկանց զոհացում կամ նման ընկալման մասսայականացում, այլապես զոհի կերպարը կրկին կարող է դառնալ գրավիչ:

Ներկայումս բավականին փոխվել է «հեղինակության» կերպարը և բովանդակությունը: Մեր ժամանակաշրջանում այն

ավելի մոտ է տնտեսական օլիգարխին, մաֆիոզին, քան ասկետիկ կյանք վարող գողին: Նախկին պահանջներն այլևս պարտադիր չեն, և հակառակը՝ ներկա ենթամշակույթի մեջ հեղինակությունը միշտ ամրապնդված է տնտեսական և որոշ դեպքերում՝ քաղաքական իշխանությամբ: Այնուամենայնիվ, ի՞նչն է միավորում այս երկու տիպերին. գործունեության, վարքի մեջ՝ բացարձակ իշխանության պատրանքի ստեղծումը, բռնության դիմելը ըստ կամայական կերպով որոշված «անհրաժեշտության», որոշ իրադարձություններում արդարություն հաստատելու գործառույթը ստանձնելու իշխանությունը:

Քրեական ենթամշակույթի մեջ «արդարության» գաղափարը երևութորեն առանցքային է. «ճշտի» պատերազմները եղել են հենց այս խմբավորումների ներսում, նաև նրանց տրված դերակատարության մեջ: Ինչու՞ են «հեղինակությունը» և նրա կողմից տրվող «արդարությունը» այլընտրանք դասական դատարանին կամ առճակատումների լուծման համայնքային այլ տարբերակներին[50], ինչու՞ է նրա կայացրած վճիռը «անբեկանելի»: Ենթամշակույթի՝ արդարության կոնցեպտի սեփականացումը խորհրդային շրջանում տեղի է ունեցել պետական արդարադատության նկատմամբ եղած և աճող անվստահության պայմաններում. այդ անվս-

50. Կոնֆլիկտների լուծման ավանդական արտապաշտոնական տարբերակների մասին տե՛ս. Крикорова, Ж., Мельникова, Ж., Недолян, А. и Тер-Габриелян, Г. (ред.) (2003), Традиция разрешения конфликтов на Кавказе и методы институтов гражданского общества. URL: https://www.kavkaz-uzel.eu/system/uploads/article_attachment/attach/0000/3106/Traditsiya_razresheniya_konfliktov_na_Kavkaze_i_metody_institutov_grazhdanskogo_obschestva.pdf [последний просмотр: 18.07.2020].

տահությունը փոխանցվել է մեր օրեր[51]: Արդարությունն այն կոնցեպտն է, որի շուրջ քրեական համակարգը երևութա-կանորեն[52] կառուցել է իր հիերարխիաները, օրինակ՝ եթե դու «ընկած» ես, արդար է, որ քեզ հալածեն: Եթե դու չես հպատակվում թաղային «հեղինակությանը», «արդար» է, որ նա քեզ ֆիզիկական բռնության ենթարկի: Այսինքն՝ «արդարության» կոնցեպտն օգտագործվում է ենթամշակույթը պահպանելու և վերարտադրելու համար: Մյուս կողմից, եթե ինչ-որ շրջանում այդ արդարությունը պաշտպանական գործառույթ է ունեցել որոշակի խմբերի համար, ապա այդ խմբերից դուրս անձինք երբեմն կա՛մ ստիպված են եղել դի-

51. Armenia 3.0-ում (տե՛ս Ter-Gabrielyan, G. (2020). Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. Yerevan, EPF. Available at: https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia [Accessed 18.07.2020]). ԵՒ սույն գրքի վերջին հարցազրույցում քննարկվում է այն, որ պատմականորեն պաշտոնական համակարգը գաղութային բնույթի էր, և դրա նկատմամբ անվստահությունն ու դրա բռնությանը հակադրումն օգնել են այլընտրանքային մեթոդների ամրապնդմանը, սակայն քանի որ այլ համայնքային ավանդական այլընտրանքային մեթոդները սովորաբար ոչ բռնի էին, ի վերջո հաղթանակել է բռնիին բռնի կերպով հակադրվելու կարողություն ունեցող մեթոդը:

52. Նշում ենք՝ «երևութականորեն», քանի որ, ինչպես բացատրեցինք, այս համակարգի հատկանիշն է՝ սեփական և ո՛չ մի սկզբունքի չհետևել հարմարության կամ կարիքի դեպքում, խախտել ցանկացած սկզբունք (հենց դա է «բեսպրեդելի» էությունը. «բեսպրեդելը» ոչ թե միայն կոնկրետ դեպքերն են, երբ կոնֆլիկտն էսկալացվում է բացարձակ անկանոն բռնության մակարդակի, այլև դրա հնարավորությունը, սպառնալիքը՝ այդ ամբողջ մշակույթի յուրաքանչյուր դրսևորման մեջ ներկա. «բեսպրեդելը» կիրառելի է ինչպես բռնության նախնական դիմողի դեպքում, այնպես էլ ռեակտիվ բռնության՝ բռնությանը հակադրվողի: Հայտնի են շատ դեպքեր, երբ «բեսպրեդել» մոտեցումն օգնել է «թույլին»՝ ոչ քրեականին, պաշտպանվել քրեականներից, օրինակ՝ իսկույն դանակահարելով նրանց՝ ի պատասխան նախնական սպառնալիքի (Շալամովից): «Բեսպրեդելի» այդ վտանգն ու տագնապը, որ առկա է բռնության ցանկացած նախնական ակտի դիմելիս, բնութագրում է քրեականության ամբողջ մշակույթը և, ի վերջո, հենց այն արգելակն է, որ քչացնում է բռնության ծայրահեղ դրսևորումները: Ավաղ, շատ քրեականներ, կրթություն չունենալով և մտածելու սովոր չլինելով, արարք կատարելիս ապագան չկանխատեսելով, այդ վտանգը հաշվի չեն առնում. դա է պատճառը, որ քրեական մշակույթն անընդհատ լի է առճակատումների էսկալացման օրինակներով, և «խաղաղեցումը» հատուկ է միայն զարգացած «հեղինակությունների» վարքին: Նույն պատճառով «բեսպրեդելին» հակվածները համարվում են ինքնապաշտպանության բնազդ չունեցող, որ հավելյալ արգելակ է նրանց հետ գործ բռնողների համար, այսինքն՝ նրա սկզբունքայնությունը հիմնված է միֆի և թատերայնության վրա:

մել, կա՛մ իսկապես չեն գտել այդ արդարությունը ֆորմալ արդարադատական համակարգում և այսպիսով ևս դարձել են ոչ ֆորմալ քրեական «արդարության» համակարգի կիրառմանը նպաստող:

Այս տեսանկյունից շատ հետաքրքիր է Վ. Հարությունյանի մեկնաբանությունը արդարադատության հարցերում քրեական հեղինակություններին դիմելու պրակտիկաների վերաբերյալ: Հատկապես նյութական, ֆինանսական միջոցների հետբերման հարցով քաղաքացիները հաճախ դիմել են թաղային «հեղինակությանը», «օրենքով գողին», քանի որ պետության կողմից իրականացվող արդարադատության դեպքում, եթե նույնիսկ մեղավոր կողմը դատապարտվում է, տուժողը հիմնականում չի ստանում այն գումարը, որը նրանից վերցվել է: Իսկ քաղաքացու համար առավել կարևոր է, որ հետ ստանա կորցրածը, եթե ոչ ամբողջական, ապա գոնե մի մասը: Այսինքն՝ թաղային «հեղինակությունների» ազդեցությունը տարածվում է բռնի, սակայն քաղաքացու տեսանկյունից առավել արդյունավետ մեխանիզմով:

Այսպիսով, մշակութային, սոցիալական կիրառումների, պրակտիկաների, միֆերի և խոսքի միջոցով քրեական բարքերն ազդեցություն ունեն բնակչության ամենատարբեր խմբերի վրա, ոչ միայն նրանց, ովքեր գիտակցաբար կրում են այդ բարքերի ազդեցությունը, այլ նաև նրանց, ովքեր տուժողներ են, զոհեր: Եվ նրանց մեջ կան խոցելի խմբեր և խոցելի միջավայրեր:

Գլուխ 5. Քրեական բարքերը և բռնությունը որպես պարտադրվող դերային մոդելներ. խոցելի սոցիալական խմբեր և միջավայր

Քրեական ենթամշակույթի ամենաբացասական ազդեցությունը մարդու և հասարակության ստեղծագործականության, վարքագծի ընտրության ազատության սահմանափակումն է: Բռնության տարատեսակները և հետևանքները բազում են: Այն կարող է սկսվել խոսքային՝ վերբալ բռնությունից և

զարգանալ մինչև ծեծ, սեռական բռնություն, սպանություն և ինքնասպանության հասցնել: Սոցիալական տարբեր միջավայրերում բռնության ձևերը տարբեր են: Իհարկե, այն առավելապես խտացած է տղամարդկանց միջավայրում և հաստատություններում, որոնք փակ են, այդ թվում՝ ազատազրկման վայրերը, հատուկ դպրոցները և բանակը: Մյուս կողմից, այն ներթափանցել է նաև դպրոց, կրթական բարձրագույն հաստատություններ՝ այսպիսով տարածվելով հանրային բաց դաշտում:

Այս համատարած լայն ազդեցության տեսանկյունից առավել խոցելի են դեռահասները:

> *«Եթե նախկինում ենթամշակույթը ուներ օրենք, որ այդ ամենը փակ է և չպետք է հանրայնացվի, հիմա սահմանները կորել են: Այսինքն՝ այդ մշակույթը հանրայնացվել է: Օրինակ՝ նախկինում նույնիսկ որոշակի բառերի օգտագործումը խմբային պատկանելության մեջ էր, հիմա դա հանրային պատկանելություն ունի[53, 54]»:*

Դեռահասության տարիքին բնորոշ ճգնաժամի հիմնական խնդիրներից մեկը որևէ խմբի՝ սեփական պատկանելության հարցի լուծումն է, միայնակ՝ խմբերից դուրս չմնալը՝

53. Հետաքրքիր է, որ այդ բառերը, նույնպիսի հանրայնացում ապրելով, օրինակ, անգլոամերիկյան մշակույթում, զգալիորեն կորցրին իրենց խոցող, սադրիչ բնույթը: Հայաստանում, չնայած այդ գործընթացը դանդաղորեն, բայց նույնպես տեղի է ունենում, նրանց վիրավորական իմաստավորումը դեռևս կարծես նույնիսկ չի թուլանում: Դա բացատրելի է տարբեր հասարակություններում տարածված կառուցվածքային բռնության տարատեսակներով, մշակութային խորքային տարբերություններով. լիբերալ կապիտալիստական հասարակությունում, որտեղ համայնքն ուժեղ է, կոմպրոմիսը տենդենց ունի դառնալու գլխավոր արժեք, այսինքն՝ երկու հանդիպողի նպատակն է կոնֆլիկտի մեջ չմտնել: Սա կապված է կապիտալիզմի կարիքների (տե՛ս Putnam, R. D., Leonardi, R., & Nanetti, R. (1993). Making democracy work: civic traditions in modern Italy. Princeton, N.J., Princeton University Press), ինչպես նաև տվյալ հասարակությունում ձևավորված արժեքային համակարգի հետ՝ արգելող թե քաջալերող (տե՛ս Лефевр, В. А. (2003), Алгебра совести. Москва, Когито-Центр).

54. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Ռուբեն Աղուզումցյան, 75 տարեկան:

«չտարբերվելը» «մյուսներից»: Դեռահասը միայնության ուժեղ զգացում ունի և գիտի, որ իր շրջապատում միայնակ մնալը կմեկնաբանվի որպես թուլություն և կաստայից դուրս լինելու՝ «անդիպչելի» դառնալու հանգամանք, ուրեմն և՝ բուլլինգի թիրախ: Սոցիալականացման կարևոր հանգրվան է դառնում հանրային միջավայրերում՝ բակում, դպրոցում, պատկանելության խնդրի լուծումը: Պատկանելության մղումն ու կարիքը այնքան ուժեղ են, որ, նույնիսկ հասկանալով, որ կա ազդեցիկ ուժեղ, և նրա խմբին պատկանելությունը նրան հպատակվել կնշանակի, դեռահասներն ընտրում են այդպիսի խմբում դեր ստանձնելը, նույնիսկ ձգտում են այդպիսի խմբում դերի արժանանալուն: Որոշակի դեր է կատարում նաև իրական հեղինակության ձեռքբերման կարիքը՝ ընտանեկան հեղինակություններից դուրս, իսկ մեր միջավայրում հաճախ «մեծահասակի աշխարհի» ներկայացուցչի հեղինակությունը (ուսուցչի, ուստայի և այլն) բացակայում է, եթե ամրապնդված չէ քրեական մշակույթի թատրոնով:

> *«Ազդեցիկ ուժեղը ղեկավարում է բակը. նման կերպարը, նման խմբավորումները ձգում են դեռահասին, եթե, օրինակ, ընտանիքում չկա այդ ուժը: Պարտադիր չէ, որ ընտանիքում լինի նման օրինակով անձ, ընտանիքը կարող է լինել շատ դրական, սակայն ռեֆերենտային կերպարի անհրաժեշտությունը, ուժեղ լինելու անհրաժեշտությունը մղում է դեռահասին դառնալու խմբի անդամ, որտեղ կան չգրված, բայց ուժեղ օրենքներ»*[55]:

Առնականության, «տղայականության», «ուժեղ տղայի» կերպարն ամենա«մագնիսականն» է ոչ միայն դեռահասների, այլև ընդհանրապես հանրության պատկերացումներում: «Ուժը» հաճախ ասոցացվում է վերբալ և ոչ վերբալ բռնություն

55. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Նարինե Ստեփանյան, 40-45 տարեկան:

կիրառելու փորձի, դա անելու մեջ որևէ կաշկանդվածություն չունենալու, հարցերը բռնությամբ լուծելու կենսափորձի հետ:

«Ասոցիալ» մնալու անհանգստությունը, ինչպես ասացինք, սկսվում է դեռահասությունից: Հատկանշական է հոգեբան Ն. Ստեփանյանի նշելը, որ շարժառիթը կարող է լինել խումբը, որը դրդում է: Եթե ուզում ես մնալ խմբում, պետք է ենթարկվես (peer pressure): Խմբային օրենքները դառնում են պարտադիր: Սա կարևոր է այն տեսանկյունից, որ ենթամշակույթն իր ազդեցությունը տարածում է ցանցային կառավարման ձևով, և դա իրականացվում է հիմնականում դպրոցներում, նաև՝ թաղերում, ապա՝ բանակում: Հենց այս տարիքից տղաների շրջանում գրական խոսքը դառնում է պարսավելի, դաս պատասխանելը ևս չի խրախուսվում: Այդ տարիքում անհատական դիմադրությունը այս բարքերին շատ դժվար է, քանի որ առավել մեծ տարիքով, թաղի կամ դպրոցի հեղինակություն ունեցող տղաները ցանցային կամ ոհմակային ձևով են ճնշում և հրապարակային ցուցադրում են իրենց բռնության ուժը և սպառնում: Տղաների դաստիարակության մեջ ծնողները հաճախ առաջնորդվում են այն սկզբունքով, որ որպեսզի իրենց որդին կենսունակ լինի, դիմակայի և առաջ գնա սոցիալական հարաբերություններում, այդ ամենը պետք է փողոցում յուրացնի:

Իշխանություն, հեղինակություն կառուցելու այլ ձև հասարակությունը, ըստ էության, տղաներին հնարավորություն չի տալիս. այսինքն՝ խելացիության հիմքի վրա հեղինակություն ունենալ, ձեռքբերումների հիմքի վրա հեղինակություն ունենալ և այլն: Իհարկե, հասուն տարիքում այդ ազդեցությունը սկսում է նվազել, սակայն դեռահասների մի մասն արդեն իսկ կորցնում է կրթության համակարգում առաջխաղացման հնարավորությունը, և ստացվում է, որ երիտասարդ համայնքի ստեղծարար ուժը հասարակությունը ուղղակի ոչնչացնում է՝ դարձնելով նրան բռնի բարքերի զոհ:

Կարևոր է նաև քրեական ենթամշակույթի գենդերային աս-

պեկտի վերհանումը: Անշուշտ, այն առաջին հերթին ազդում է տղաների վրա և դոմինանտ է տղամարդկանց միջավայրում:

Քրեական ենթամշակույթն ընդգծված գենդերային առանձնահատկություններ ունի, այն տղամարդկանց դոմինանտության («հայրիշխանության») մշակույթ է, դրա մաս և առաջատար: Անդրադառնանք, ուրեմն, կանանց մասնակցության կամ հնարավոր ազդեցության հարցի ուսումնասիրությանը:

Շատ հակասական է կանանց դերակատարությունը, և՛ որպես ազդեցության կրողի, և՛ որպես այն փոխանցողի դերերի ուսումնասիրության ժամանակ բացահայտվող: Մայրականն առերեսորեն (երևութականորեն) սրբացված է և՛ քրեական մշակույթում, և՛ հայաստանյան պաշտոնական մշակույթում, սակայն կինն այս համակարգում զրոյացված է (հայտնի ասույթ է՝ «Աղջկա խոսքը հիմք չէ»): Մյուս կողմից, առկա է այն հակասությունը, որ հաճախ կանայք, որոնք ամուսնացած են քրեական հեղինակությունների հետ կամ նրանց քույրն են կամ դուստրը, կարող են լինել շատ բարեկիրթ: Նրանց դերակատարությունը շատ պասիվ է կամ հանդուրժող: Իհարկե, կա նաև ընտանեկան բռնության խնդիր. այդ պասիվ դերակատարությունը ձևավորվում է հենց դպրոցում, երբ աղջիկները (և ուսուցչուհիները) որպես դիտորդ են (bystander, «ավարա»[56]) տղաների կռիվներին և որևէ կերպ չեն միջամտում՝ այդպիսով ոչ միայն հանդուրժելով բռնությունը, այլև մշակութաբանորեն դրա ճառագայթողներն ու ամրապնդողները դառնալով իրենց պասիվությամբ: Օգնության չեն գալիս նրան, ով գուցե ընդվզեր կամ չհանդուրժեր. իրենց վարքով նշան են տալիս, որ այդ աշխարհից ելք չկա, քանի որ չկան իր պոտենցիալ համախոհները:

56. Տե՛ս bystander effect-ի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Bystander_effect [դիտվել է 18.07.2020], ինչպես նաև քննարկված՝ սույն ժողովածուի այլ գործերում (բանակի, դպրոցի մասին):

«Կանայք ֆորմալ տեսանկյունից քրեական ենթամշակույթով չեն հետաքրքրվում, բայց կանանց ներդրումը նպաստում է, որ այդ ենթամշակույթը ամրապնդվի և տարածվի: Մեր մշակույթում երեխաների դաստիարակության հարցում շատ մեծ դեր ունի կինը, սովորաբար կանայք են երեխային սովորեցնում ճիշտ ապրելը, բարին ու չարը, դպրոցում էլ ուսուցիչների շուրջ 90%-ը կանայք են: Քրեակատարողական հիմնարկում արդեն հայտնված կանանց դեպքում ընդհանրապես կանայք շատ հարմարվող են նոր իրավիճակներին, քան տղամարդիկ: Որքան ես քրեակատարողական հիմնարկներում հանդիպել եմ, կանայք շատ արագ վերցրել են, օգտագործել այդ ենթամշակույթին բնորոշ տարրեր, լեզու, առանց կաշկանդվելու՝ մեծ մասը դառնում են այդ ենթամշակույթի վառ կրողներից»[57]:

Ինչպես ասացինք, ընտանիքները, ուրեմն և մայրերը, ձգտում են, որ իրենց տղա զավակները լինեն ուժեղ, և դա հաճախ ասոցացվում է հենց գողական բարքերի իմաստով ուժեղ լինելու գաղափարի հետ:

Իհարկե, երիտասարդ կանանց՝ հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ գործունեության մեջ ավելի ու ավելի ներգրավվելը խրախուսելի է: Արդեն իսկ որոշակիորեն դրսևորվում է նրանց ազդեցությունը (քրեական բարքերին հակազդեցությունը) հանրային միջավայրերում: Այդ ազդեցության վառ օրինակ է թավշյա հեղափոխության և դրան նախորդած քաղաքացիական անհնազանդությունների մեջ երիտասարդ աղջիկների դերը: Այսինքն՝ ակնհայտ է, որ կանանց ներգրավվածության մեծացումը քրեական բարքերի ազդեցության թուլացում է նշանակում և նշանակելու է:

Քրեական բարքերի և բռնության խտացված ազդեցությունն

57. Գայանե Հովակիմյան, ԴԱՆ, Երևան, 2019, Մարիամ Մարտիրոսյան, 43 տարեկան:

առկա է փակ միջավայրերում, որտեղ և տեղի է ունենում դրանց անարգել վերարտադրությունը, որն ազդում է «դրսի» հասարակության վրա: Այս առումով առավել խոցելի են փակ հաստատությունները, մասնավորապես, ազատազրկման վայրերը. ենթամշակույթ կրողները, իշխանության կողմից խրախուսվող և հաստատված բարքերին հենվելով (այդ բարքերն արդեն նույնիսկ չի կարելի անվանել «ոչ ֆորմալ», քանի որ դրանք կազմում են այդ հաստատությունների ամենօրյա գործունեության հիմքը և նույնիսկ նշվում են պաշտոնական դիսկուրսում որպես քրեակատարողական հաստատությունների մշակույթ), իշխանության և տնտեսական միջոցների տիրապետման նպատակով տարածում են իրենց բարքերը յուրաքանչյուր նորեկի ընդգրկմամբ: Տնտեսական միջոցների ձեռքբերումն «արդարացվում էր» հանրօգուտ նպատակներով. «օբշյագ» հասկացությունը ներդրվել և կիրառվել է Գուլագում, եթե ոչ ավելի վաղ ժամանակներից, զեկերի կարիքները հոգալու համար: Բայց, ինչպես և ամեն ինչ քրեական աշխարհում, այդ կարիքների բացակայության խնդրի (կարիքներ, որ պիտի ապահովվեն, սակայն չեն ապահովվում պաշտոնական համակարգի կողմից) առերեսորեն «արդար» լուծումը, կանոնակարգվելով քրեական մշակույթի բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից, կիրառվում է նրանց վոլյունտարիստական հայեցողությամբ: Եթե նախկինում («պաշտոնական» գողական համակարգում) համարվում էր, որ հիերարխիայի վերին մասում գտնվող անձը՝ «բարձրագույն ճշմարտության» կրողը, որն ուներ անբեկանելի իշխանություն, պիտի չունենար սեփական տնտեսական միջոցներ, ուրեմն և հավանական էր, որ «օբշյագը» կբաշխի «արդարորեն», ըստ կարիքների, ապա ներկա համակարգում դա ամբողջությամբ շրջված գաղափարախոսություն է: Նախկինում էլ, իհարկե, հաշվի առնելով գողական աշխարհի անարդար աստիճանակարգը (երբ որոշ մարդիկ կաստայից դուրս են, և հիերարխիան կարծր է), «օբշյագի» բաշխումը միշտ եղել է հօգուտ ուժեղի

կարիքների և ցանկությունների: Հիերարխիայի բոլոր աստիճանակարգերում գործառույթները բաշխված են: Նույնասեռ մարդկանց կուտակման միջավայրում, որը քրեակատարողական հիմնարկն է, հիերարխիկ կառուցվածքը պահպանվում է, սակայն «գողի» «անշահախնդրության» արժեքն այլևս բացարձակապես վստահելի չէ և չի գործում որպես համակարգի պահպանման և «ազնվազարմացման» գործոն: Այդպիսով, բիրտ ուժի՝ բռնության գործոնը դառնում է գլխավորը, որ պահպանում է աստիճանակարգը (մյուսը, իհարկե, պաշտոնական համակարգի կողմից դրա քաջալերումն է[58]): Այստեղ հայտնվելուց հետո մարդը ստիպված է որևէ կերպ հարաբերվել գողականությանը՝ ընդունել և որևէ դեր ստանձնել, չընդունել և մերժել՝ մտնելով պայքարի մեջ, դիմագրավել կամ փոխհատուցել: Ընդ որում՝ մշակույթի պարտադրումը ևս ուսումնասիրության արժանի պրակտիկա է և, առաջին հայացքից, ոչ այնքան բռնի (դու ներս ես գալիս, ընկղմվում ես մի միջավայր, որտեղ բարքերն այդպիսին են ի սկզբանե), սակայն հենց բռնության ամբողջ շղթան սկսվում է անձին ներգրավումից:

Երբ քրեակատարողական հիմնարկում հայտնվում է նորեկ, որը կարող է լինել շատ անպաշտպան և խոցելի, «դրսում»

58. Պաշտոնական համակարգի կողմից այդ մշակույթի քաջալերումը քննարկվում է նաև սույն ժողովածուի այլ հոդվածներում, հատկապես՝ բանակին վերաբերող ուսումնասիրության մեջ: Քաջալերման պատճառներից են. ա) համակարգի աղքատությունը, այսինքն՝ նյութական ռեսուրսների օբյեկտիվ պակասը (և սա բերում է մեկ այլ հոդվածում ուսումնասիրված՝ աղքատության և բռնության կապին), բ) կոռուպցիան (երբ առանց այն էլ սահմանափակ ռեսուրսները բաշխվում են ոչ ըստ կարիքի), գ) որևէ բան փոխելու մոտիվացիայի բացակայությունը, մտքի ծուլությունը, որը գալիս է նաև նրանից, որ նույն պաշտոնական համակարգը նույնպես հիերարխիկ է. մտնելով այդ համակարգ՝ նոր աշխատակիցն ընդունում է այն բարքերը, որ հաստատվել էին իրենից առաջ՝ իր վերադասների և շրջապատի կողմից, և նրա մտքով իսկ չի անցնում, մեծ մասամբ, փորձել դրանք փոխել: Հատկանշական է, որ և՛ բանակային, և՛ դպրոցական հետազոտությունների ռեսպոնդենտները չեն բերել ոչ մի օրինակ՝ ինչպես կարելի է, առանց «վերից», օրենքների և ոլորտային քաղաքականությունների փոփոխության, զուտ հասարակական-համայնքային կազմակերպմամբ հաղթահարել բռնությամբ պայմանավորված և դրա վրա հիմնված բարքերն իրենց միջավայրերում, գոնե առանձին դեպքերում (ինչի հնարավորությունը քննարկվում է սույն գրքի նախաբանում):

չունի ուժեղ և հարուստ հարազատներ, որոնք կարող են կաշառքներով հատուկ պայմաններ ապահովել նրա համար, ներսում էլ չունի իր կողքին կանգնող փորձված կալանավորներ, «զոն նայողը» կարող է առերևույթ բարեհաճ լինել և այս նորեկին հնարավորինս աջակցել: Սա առաջին շրջանն է, երբ նորեկը, որն ունի պաշտպանության կարիք, անմիջապես գտնում է իր փրկչին և արդեն իսկ դառնում պատրաստակամ՝ նրան ծառայելու, նրա ճշմարտությունն ընդունելու: Երկրորդ շրջանում նորեկը ստանձնում է դեր, և դա «ճուտի» դերն է, այսինքն՝ պաշտպանության և հովանավորչության արժանի երիտասարդի դերը: Պաշտպանության համար նորեկը սկսում է տարբեր ծառայություններ մատուցել: Կախված նորեկի ռեսուրսից, կարողություններից, հատկանիշներից՝ դրանք կարող են լինել տարբեր ծառայություններ, ինչպես.

1. սոցիալ-կենցաղային. աջակցել և սպասարկել զոն նայողին.
2. ֆինանսական. աջակցել ֆինանսական հարցերի կազմակերպմանը.
3. միջնորդական. լինել միջնորդ ընթացիկ հարաբերություններում, օգնել «ուստավի» պահպանմանը.
4. սեռական ծառայություններ.
5. ուժի կիրառման ծառայություններ.
6. ներգրավել այլ անձանց, այլ ֆինանսական ռեսուրսներ և այլն:

Զոհացման և նորեկների հավաքագրման այս պրակտիկան ամբողջությամբ կառուցված է քրեական ենթամշակույթի բացարձակ բռնի իշխանության վրա (հավանություն ստացած լինելով պաշտոնական համակարգի կողմից), անձին, նրա կամքին հակառակ, դերային վարք փոխանցելու, այդ վարքը խրախուսելով տարբեր դերեր առաջադրելու մեջ: Ընդ որում՝ եթե «մաքուր» տիպը գործում է քրեակատարողական հիմնարկներում, ապա տրանսֆորմացված և

ադապտացված գործելաոճերն առկա են դպրոցներում և բանակում:

Հատկապես դպրոցական միջավայրում բռնության մյուս դրսևորումը վերահսկողությունն է: Վերահսկողությունը կարևոր է հենց ստեղծագործականությունը և անկախ մտածողությունը ոչնչացնելու համար: Նման վերահսկողության օրինակներից է «հաշիվ տալու» պահանջը, եթե տղաները դաս են պատասխանում, կատարում են տնային աշխատանքներ: Չնայած մասնավոր դպրոցներում այս պրակտիկան վերացել է, սակայն հանրակրթական դպրոցներում, հատուկ դպրոցներում, հատկապես մարզերում այն դեռևս տարածում ունի. դրա արդյունքում տղաների մի զգալի մաս չի ընդգրկվում բուն, իրական կրթական գործընթացի մեջ, ապա նաև՝ բուհական կրթության շրջանակում:

Այս վերլուծության համատեքստում կարևոր է նշել, որ զինվորական գործերով դատապարտված, այդ թվում՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց կատարած սպանությունների մեջ գերակշիռ են այն դեպքերը, երբ հանցագործությունը կատարվել է հայհոյանքի, դրան պատասխանելու, սեռական բռնության վախի, ապա այն հանրայնացնելու ամոթի, վախի և վերահսկողության պատճառով, երբ տուժողներն այլ ելք չեն գտել, քան սպանել՝ փրկելու համար իրենց արժանապատվությունը այդ բազմակողմանիորեն պարտադրվող և բոլորին բռնության տանող մշակույթում:

Անդրադառնալով ներսոցիալ-քաղաքական իրականությանը, երկրում տեղի ունեցած քաղաքական գործընթացներին և դրանցից բխող ազդեցություններին՝ ակնհայտ է, որ այժմ լավագույն ժամանակահատվածն է քրեական բարքերի ազդեցության նվազեցման ուղղությամբ ակտիվ նախաձեռնություններ իրականացնելու համար: Ազատազրկման վայրերում արդեն իսկ կան, տարածվում են անձին այդ մշակույթից հետ պահելու միջոցներ, կրթության և սոցիալակա-

նացման ծրագրեր: Դրանք կան, բայց կարիք ունեն ընդլայնման, պետական հատուկ համալիր քաղաքականության և հանրային դիսկուրսի ձևավորման: Քանի որ բռնությունը և քրեական ենթամշակույթը տարածվել են հանրայնացման ամենատարբեր միջոցներով և սպառնացել դառնալ հանրային գլխավոր մշակույթ, դրա հաղթահարման ուղիներից է երևույթի խայտառակումը՝ ապապոպուլյարացումը, «կաստայից դուրս» հայտարարելը, երևույթն «իջեցնելը»: Այս համալիր քայլերի վերաբերյալ առաջարկները գալիս են նաև երևույթը կրողներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Բայադյան, Հ. (2020), Հայացք խորհրդային անցյալին։ Հետք, մայիսի 5։ Հասանելի է՝ https://hetq.am/hy/article/116755 [դիտվել է 16.07.2020]։
2. Հարությունյան, Վ. (2014), Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում։ Երևան, Վան Արյան։
3. Հարությունյան, Վ. (2020), Քաղբանտարկյալի պատմություն։ Հասանելի է http://bit. ly/33XFpl4 [դիտվել է 19.02.2020]։
4. Վարդանյան, Ռ. և Ալեքյան, Ն. (2017), «Ճամփաբաժանին։ Որոշումների ժամանակը» նախագիծը։ Հասանելի է՝ https://armenia2041.org/am/ [դիտվել է 16.07.2020]։
5. Տեր-Գաբրիելյան, Գ. (2014), Միխայիլ Բախտին։ Բուն TV։ Հասանելի է՝ http://boon.am/mikhail-bakhtin/ [դիտվել է 18.08.2020]։
6. Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.) (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ։ Երևան, ԵՀՀ։ Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]։
7. Ռաֆֆի (1989), Խաչագողի հիշատակարանը։ Հասանելի է՝ https://bit.ly/35tCIuO [դիտվել է 18.07.2020]։
8. Քումունց, Մ. և Ներսիսյան, Լ. (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները Խ. Աբովյանի բանահյուսական ակունք ունեցող ստեղծագործություններում։ Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.) (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ։ Երևան, ԵՀՀ, էջեր 65-106։ Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]։

9. Օտյան, Ե. (1921), Թաղականին կնիկը։ Հասանելի է՝ https://bit.ly/2LFCxG1 [դիտվել է 18.07.2020]։

10. Putnam, R. D., Leonardi, R., & Nanetti, R. (1993). Making democracy work: civic traditions in modern Italy. Princeton, N.J.: Princeton University Press.

11. Ter-Gabrielyan, G. (2020). Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. Yerevan: EPF. Available at: https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia [Accessed 18.07.2020].

12. Weber, M. (2001). The Protestant ethic and the spirit of capitalism. London: Routledge.

13. Wikipedia (2020). Bystander effect. Available at: https://en.wikipedia.org/wiki/Bystander_effect [Accessed 18.07.2020].

14. Белых, Г. и Пантелеев, Л. (2017). Республика ШКИД. Москва, Энас-книга.

15. Дышев, С. (2008), Воры в законе и авторитеты. Москва: Эксмо.

16. Кара, Ю. (1988), Воры в законе, http://bit.ly/2PtGrQC [последний просмотр: 19.02.2020].

17. Крикорова, Ж., Мельникова, Ж., Недолян, А. и Тер-Габриелян, Г. (ред.) (2003), Традиция разрешения конфликтов на Кавказе и методы институтов гражданского общества. URL: https://bit.ly/2LmBhHN [последний просмотр: 18.07.2020].

18. Лефевр, В. А. (2003), Алгебра совести. Москва, Когито-Центр.

19. Тер-Габриелян, Г. (2018), Уроки истории. URL: https://www.gtergab.com/ru/news/essay/the-lessons-of-history-russian/145/ [последний просмотр 16.07.2020].

20. Шалагин, А. и Хрусталева, О. (2017), Тюремный фольклор в контексте криминальной субкультуры, Вестник Казанского юридического института МВД России 4(30). URL: https://readera.org/tjuremnyj-folklor-v-kontekste-kriminalnoj-subkultury-142211819 [последний просмотр 19.02.2020].

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայկ Սմբատյան

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Զեկույցն ամփոփում է 2019 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին իրականացված հետազոտության արդյունքները: Հետազոտությունը բացահայտում է Երևանի հանրակրթական դպրոցներում բռնության առաջացման պատճառները, դրսևորման ձևերը, սուբյեկտները, օբյեկտները և հետևանքներն ու կանխարգելման մեխանիզմները: Վերլուծության հիման վրա կազմվել է ուղեցույց՝ դպրոցական բռնության կանխարգելմանն ուղղված առաջարկների փաթեթի կիրառականությունն ապահովելու նպատակով:

Սույն հետազոտության արդյունքները չեն կարող ընդհանրացվել Հայաստանի բոլոր հանրակրթական դպրոցների համար և չեն կարող նկարագրել խնդրի դրսևորման օրինաչափությունները կամ տալ այլ քանակական բնութագրեր:

Հետազոտության արդյունքում արված հիմնական բացահայտումներն են.

1. դպրոցական բռնության հիմքերը գրեթե լիովին համընկ-

նում են քրեական ենթամշակույթի բարքերին[59].

2. դպրոցներում բռնությունն անվերջ ինքնավերարտադրվող սոցիալական գործընթաց է և ոչ պարզապես միջանձնային կոնֆլիկտների դրսևորումներ.
3. բռնության առավել սուր և աշակերտներին հուզող տեսակը հասակակից տղաների փոխհարաբերություններում տեղի ունեցող ֆիզիկական և հոգեբանական բռնությունն է.
4. բռնության դրսևորումների հիմքում ընկած է պիտակավորման մեխանիզմ, որը դրսևորվում է արժեզրկող և նվաստացնող բառային պիտակների տարողունակ ցանցի կիրառմամբ, և որը առանցքային է բռնության փուլային զարգացման և դրա շրջապտույտային վերարտադրման համար.
5. դպրոցական միջավայրում քրեական բարքերը կրկնող հասկացությունները և արժեհամակարգը հիմնականում ձևավորվում են տարբեր աշակերտների առօրեական՝ բակային և ընտանեկան կենսափորձերի միասնական ազդեցության հետևանքով.
6. դպրոցներում ֆիզիկական բռնության ամենասուր դրսևորումները հիմնականում տեղի են ունենում չտեսահսկվող հատվածներում՝ սանհանգույցներում, հանդերձարաններում և դպրոցներին հարակից տարածքներում.
7. հոգեբանի ինստիտուտը աշակերտների շրջանում չունի վստահություն և փաստացի չի կատարում իր գործառույթները.
8. դասղեկների անտարբերությունը և նրանց՝ աշակերտների հանդեպ «վեր վար նայողի» վերաբերմունքը խոչընդոտում են բռնության կանխարգելմանը նպաստելու նրանց հնարավորությունները.

59. Քրեական ենթամշակույթի սահմանումը՝ «Հետազոտության բացահայտումներ» բաժնում։

9. բռնության կանխարգելման հարցում աշակերտները չեն տեսնում ո՛չ ծնողների, ո՛չ ուսուցիչների, ո՛չ դասղեկների, ո՛չ էլ հոգեբանի ինստիտուտի դերը, ինչի հետևանքով բռնության ենթարկվող աշակերտները հայտնվում են տոտալ միայնակության և խոցելիության պայմաններում։

ՆՇՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սովորելով Երևանի երկու հանրակրթական դպրոցներում (միջնակարգ և ավագ)՝ միշտ զգում էի, որ դպրոցական շփումների մշակույթում ինչ-որ բան այն չէ։ Այն ժամանակ դեռ չէի հասկանում, թե ի՛նչը այն չէր, բայց հստակ գիտակցում էի, որ դպրոցում խստությունն ու դաժանությունը չափից շատ էին։ Բռնության իրավիճակներում ինքս փորձում էի հնարավորինս խուսափել բռնություն կիրառելուց կամ բռնության ենթարկվելուց։ Միշտ չէ, իհարկե, որ հաջողվում էր։ Թեպետ այն ժամանակ դեռ սոցիոլոգ չէի ու նպատակ էլ չունեի դառնալու, սակայն արդեն, ըստ երևույթին, հետազոտողի աչքով էի նայում նման իրավիճակներին։ Ինձ հետաքրքրում էր, թե ինչու՛ է բռնությունը ոմանց «կայֆ տալիս», իսկ ինձ՝ ոչ։ Ի՞նչ հարց են լուծում աշակերտները բռնությամբ, որ առանց դրա չեն կարող լուծել։ Եվ ուսման նկատմամբ սեր ունեցողների համար «դպրոցի ճամփան միշտ կա՞րճ է, սիրու՞ն», թե՞ պարզապես Թումանյանի դպրոցում հոգեբանի ինստիտուտը լավ էր աշխատել։

Երբ ավարտեցի դպրոցը, հարցերի պատասխանները դեռ չունեի, բայց գիտեի, որ եթե երբևէ փորձեմ նորից գնալ դրանց հետքերով, պիտի փնտրեմ դրանք դպրոցում՝ աշակերտների մեջ և աշակերտների հետ։ Գիտակցում էի, որ ներսից հայացքը միայն հնարավորություն կտար խնդիրն իսկապես հասկանալ, քանի որ դրա կրողները հենց աշակերտներն են, հետևաբար հենց նրանք ունեն խնդրի շուրջ հարցերի պատասխանները։

Այնպես ստացվեց, որ այս խնդրին վերադարձա արդեն

որպես մասնագետ՝ փորձելով նույն հարցերի պատասխանները գտնել մասնագիտորեն և օգտվելով իմ փորձից ու հետազոտական մեթոդների հնարավորություններից։ Ընտրեցի «հիմնավորված տեսություն» մեթոդաբանությունը, քանի որ այն ամենից շատ հնարավորություն կտար վեր հանել դպրոցականների հայացքը բռնության մասին և կառուցել դպրոցական բռնության տեսությունը հենց աշակերտների պատմությունների հիման վրա՝ միաժամանակ ապահովելով հետազոտության գիտական հիմնավորվածությունը։

Հետազոտության ընթացքում փորձել եմ առավելագույնս մի կողմ թողնել իմ անձնական հիշողություններն ու կենսափորձը և աշակերտների ուղղորդմամբ նոր հայացք ու նոր հարցեր ձևավորել։ Ջանացել եմ չաղավաղել տեղեկատվությունը թե՛ դրա հավաքման, թե՛ վերլուծության փուլերում և փոխարենը թույլ տալ, որ տվյալներն իրենք ինձ ուղղորդեն՝ հասկանալու հիմնախնդիրը։ Վերլուծության մեջ արված սոցիոլոգիական մեկնաբանումները, պնդումները, տեղային ընդհանրացումները, ինչպես նաև բերված օրինակները հիմնված են բացառապես աշակերտների հետ զրույցների վրա և հնարավորինս զտված են իմ պատկերացումներից և խնդիրների իմ սահմանումներից։

Ես Հայկ Սմբատյանն եմ։ Աշակերտ եղել եմ յոթ տարի առաջ։

ՆԱԽԱԲԱՆ

Կրթության ինստիտուտը հասարակության սոցիալականացման առաջնային իրագործողներից մեկն է։ Դպրոցներում աշակերտների, ինչպես նաև աշակերտների և ուսուցիչների միջև տեղի ունեցող սոցիալական հարաբերությունները կարևոր դեր են ունենում հասարակության դինամիկայի ձևավորման համար։

Դպրոցը նաև ինքնադրսևորման դաշտ է աշակերտների համար։ Այստեղ նրանք հիմնականում առաջին անգամ առնչ-

վում են միջանձնային հարաբերություններում իշխանության, հավասարության, խտրականության, սոցիալական ազդեցության երևույթներին, ներգրավվում են խմբային վարքի մեջ և փորձում հարազատական միջավայրից դուրս ինքնուրույն կապեր ձևավորել։ Այդ սոցիալական կապերի և հարաբերությունների մաս են կազմում նաև բռնության տարբեր դրսևորումները, որոնք մեծապես ազդում են աշակերտների ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման վրա։

Հայաստանում դպրոցական բռնության թեմայով նախկինում արված հետազոտությունները չեն անդրադառնում խնդրի խորքային էությանն ու պատճառներին և երևույթն առավելապես ուսումնասիրում են դրա դրսևորումների մակարդակում[60]։ Այս հետազոտությունը դպրոցական բռնության հիմնախնդիրը հասկանալու նոր մոտեցում է առաջարկում՝ հայացք «ներսից»։

Հետազոտությունն իրականացվել է «հիմնավորված տեսություն» մեթոդաբանության կիրառմամբ։ Այս մեթոդաբանությունը որակական հետազոտական ռազմավարություն է, որը թույլ է տալիս փոքրաթիվ, սակայն խորքային հարցազրույցների միջոցով ընդհանրական պատկերացում կազմել երևույթների (այս դեպքում՝ դպրոցական բռնության) դրսևորման գործընթացի, դրա տարրերի և հիմնական դերակատարների մասին։ Այս մեթոդաբանությունը հնարավորություն է ստեղծում կառուցելու հիմնախնդրի տեղային տեսություն, որը նպատակ չունի ներկայացուցչական լինելու։ Հետազոտության արդյունքները չեն կարող ընդհանրացվել Հայաստանի բոլոր հանրակրթական դպրոցների համար և նկարագրել խնդրի դրսևորման օրինաչափությունները կամ տալ այլ քանակական բնութագրեր։ Սա միաժամանակ և՛ մեթոդաբանության սահմանափակումներից է, և՛ առավելություններից, քանի որ,

60. Տե՛ս «Բռնությունը ՀՀ իրավական կարգավորումներում և նախորդ շրջանի որոշ հետազոտություններում» բաժնում։

չունենալով ընդհանրական լինելու հավակնություններ, մեթոդաբանությունը տալիս է խնդրի խորքային նկարագիրը հենց խնդիրը կրողների աչքերով։

Մեթոդաբանության մյուս առանձնահատկությունն այն է, որ իր ընթացակարգում այն լիովին «ենթարկվում» է խնդրի կրողներին։ Մասնակիցների հետ զրույցներն ու բացահայտված տեղեկատվությունն են որոշում, թե հետազոտությունը ո՛ր ուղղությամբ պիտի զարգանա։ Տվյալների հավաքումը դադարում է այն պահից, երբ առկա է տեսական հագեցվածություն, այսինքն՝ հիմնախնդրի շուրջ կուտակված նյութը սկսում է կրկնվել ամեն հաջորդ հարցվողի մոտ, իսկ նոր տվյալներ այլևս չեն բացահայտվում։

Այս հետազոտությամբ ի սկզբանե նախատեսվում էր, բացի դպրոցականների հետ զրույցներից, նաև հանդիպումներ ծնողների, ուսուցիչների և հոգեբանների, ինչպես նաև կրթության քաղաքականության մասնագետների հետ, սակայն հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ թվով յոթ դպրոցականի՝ երեք աղջկա և չորս տղայի հետ զրույցներից հետո տեղեկատվությունն արդեն ամբողջական էր և բավարար՝ հիմնավորված պնդումներ անելու համար, քանի որ հետազոտության խնդիրներն արդեն բացահայտված էին։ Պարզ դարձավ նաև, որ դպրոցական բռնության մասին հիմնական բացահայտումը՝ բռնության փուլային մոդելը (տե՛ս Պատկեր 1), ինքնակարգավորվող և ինքնապարփակ է և ունի մշակութային հիմքեր, իսկ ծնողները, դպրոցի անձնակազմը և կրթության քաղաքականություն մշակողները դրա վրա որևէ ազդեցություն չունեն և, ըստ դպրոցականների՝ չեն էլ կարող ունենալ։ Այդպիսով, հետևելով մեթոդաբանության սկզբունքներին՝ ուսումնասիրությունն այդ փուլում դադարեցվեց, և անցում կատարվեց տվյալների վերլուծությանը։

Սա համարվում է մեթոդաբանության մյուս սահմանափակումը, քանի որ այն, որքան էլ խորքային պատկերացում է

տալիս խնդրի վերաբերյալ, թույլ չի տալիս դիտարկել և համեմատել խնդրի շուրջ առկա բազմազան տեսանկյունները: Մյուս կողմից՝ մեթոդաբանությունը կարիք չի տեսնում արտաքին համեմատությունների, քանի որ ավելի արժեքավոր է համարում հիմնախնդրի կրողների մեկնաբանությունները՝ թույլ տալով խուսափել խնդրի վերաբերյալ ոչ նպատակային տեղեկատվությունից, որը վերլուծության փուլում ավելորդ տեղեկատվական «աղմուկ» կարող է ստեղծել: Այսպես հնարավոր է լինում նաև հաղթահարել «ասել ամեն ինչ՝ չասելով ոչինչ» ռիսկը՝ փոխարենը տրամադրելով խնդրի շուրջ խորքային և օգտակար մեկնաբանություններ:

Այս մեթոդով արված հետազոտությունը գիտական հիմք և գործողությունների դաշտ է ստեղծում թե՛ հետագա հետազոտությունների և թե՛ բռնության կանխարգելման մեխանիզմների ներդրման համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել հանրակրթության ոլորտի բարեփոխումներ իրականացնող պետական և ոչ պետական կառույցների, հանրակրթության քաղաքականություն մշակողների, ոլորտի հետազոտողների, դպրոցների մանկավարժական և ղեկավար անձնակազմի, ծնողների և աշակերտների համար:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՆԱԽՈՐԴ ՇՐՋԱՆԻ ՈՐՈՇ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բռնությունն առհասարակ և երեխաների նկատմամբ բռնությունը՝ մասնավորապես, Հայաստանում կարգավորվում է օրենսդրությամբ:

Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածն ամրագրում է. «Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվութ-

յունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի»[61]:

Ոլորտի մասնագետների համոզմամբ, սակայն, Հայաստանը դեռևս չունի երեխաների իրավունքների պաշտպանության համապարփակ և հանգամանալից իրավական կարգավորումներ, իսկ «առկա կարգավորումները դեռևս միայն ընդհանրական բնույթի են, հեռու կոնկրետացումներից, և ըստ այդմ՝ կարող են տարմեկնաբանությունների տեղիք տալ»[62]:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի ստեղծած ձեռնարկի[63]՝ Հայաստանում երեխաների նկատմամբ բռնության մասին՝ որպես ոլորտային քաղաքականության, առաջին անգամ պաշտոնապես խոսվել է 2003 թ., երբ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խումբը մշակել է «Երեխաների նկատմամբ բռնության և անտեսման կանխարգելման պետական հայեցակարգի» նախագիծը։

2014 թ. ընդունված «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի» հայեցակարգում պաշտոնական անդրադարձ է կատարվում Հայաստանում երեխաներին բռնությունից պաշտպանության և այդ գործընթացի խնդրահարույց ասպեկտների մասին։ Երեխաների նկատմամբ բռնության տարածվածության տեսանկյունից հայեցակարգում նշվում է, որ կանոնավոր և հստակ վիճակագրության բացակայությունը հնարավորություն չի տալիս համապարփակ և խոր-

61. «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքը» (1996)։ Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69115 [դիտվել է 29.08.2019]։

62. Անտոնյան, Մ., Կարապետյան, Տ. (2019), Երեխաների պաշտպանությունը բռնություններից, Ձեռնարկ վերապատրաստողների և երեխաների պաշտպանության մասնագետների համար։ Երևան, էջ 6։ Հասանելի է՝ https://uni.cf/2MnUeJ6 [դիտվել է 29.08.2019]։

63. Անտոնյան, Մ., Գմյուր-Կարապետյան, Ա., Դուրյան, Ն., Խաչատրյան, Ա., Հովհաննիսյան, Ա. և Սարգսյան, Ս. (2009), Երեխաների պաշտպանություն. ուսումնաօժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար։ Երևան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF) և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (COAF), էջ 212։ Հասանելի է՝ https://bit.ly/30KcNdY [դիտվել է 29.08.2019]։

քային վերլուծություններ անելու[64]:

«Փի-Էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության մշակած մոդուլում նշվում է, որ Հայաստանում պաշտոնապես գործում է երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ համայնքային, մարզային և ազգային մակարդակներում[65]: Առաջին՝ համայնքային մակարդակում հիմնական դերակատարը խնամակալության և հոգաբարձության մարմինն է: Մարզերում խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են, իսկ Երևանում՝ վարչական շրջանների ղեկավարները:

Երկրորդ՝ մարզային մակարդակում հիմնական դերակատարները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և տարածքային կառավարման նախարարների համատեղ հրամանով ստեղծված՝ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմերի՝ ընտանիքների, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններն են, որոնցից յուրաքանչյուրում դե յուրե աշխատում է անհրաժեշտ մասնագետներից կազմված խումբ՝ բժիշկ, մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող և իրավաբան:

Երրորդ՝ ազգային մակարդակում գործում է Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը, որի աշխատանքները համակարգում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, իսկ հանձնաժողովի նախագահը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն է: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են բոլոր այն պետական մարմիններն ու կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան լիազորություններ

64. «Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգ», ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշում: Հասանելի է՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/12/51-2_1ardz.pdf [դիտվել է 29.08.2019]:

65. Քրեական ենթամշակույթի սահմանումը՝ «Հետազոտության բացահայտումներ» բաժնում:

երեխայի պաշտպանության և աջակցության հարցում: Բացի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից՝ այդ ցանկում են նաև կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, առողջապահության, արդարադատության, տարածքային զարգացման և ենթակառուցվածքների, ֆինանսների նախարարությունները և ոստիկանությունը: Հանձնաժողովի նպատակն է՝ նպաստել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը, աջակցել ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանը[66]:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցում իրենց մասնակցությունն ունեն նաև դատախազությունը, դատարանները, ոստիկանության՝ անչափահասների գործերով բաժինները, սոցիալական ծառայության տարածքային կենտրոնները, առողջապահական հիմնարկները, կրթական հաստատությունները, օրենսդրությամբ լիազորված այլ մարմիններ, որոնք իրենց գործունեության մեջ առաջնորդվում են երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության սկզբունքներով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017 թ. ձեռնարկում[67] նշվում է, որ երեխայի իրավունքների պաշտպանությունը կազմում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքը: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թ. նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխանե-

66. Տե՛ս Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով: Հասանելի է. http://www.mlsa.am/?page_id=2845 [դիտվել է 29.08.2019]:

67. «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքը» (1996): Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69115 [դիտվել է 29.08.2019]:

րի իրավունքների պաշտպանություն և վերջիններիս խախտումների կանխարգելում:

«Երեխաների մարմնական պատիժը Հայաստանում»[68] զեկույցում նշվում է, որ դպրոցներում երեխաների մարմնական պատիժը համարվում է անօրինական՝ 1996 թ. «Երեխաների իրավունքների մասին» օրենքի համաձայն, սակայն, չկա դրա ակնհայտ արգելում: 1999 թ. Կրթության մասին օրենքի 49(2)-րդ հոդվածն արգելում է դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնք կիրառում են ֆիզիկական կամ մտավոր ճնշում:

Երեխաների իրավունքների խախտումները և նրանց նկատմամբ բռնության դրսևորումները բացահայտելու եղանակներից մեկը սոցիալական հետազոտություններն են: Այսպես, «Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում» քանակական հետազոտության արդյունքները ցույց են տալիս[69], որ որպես ֆիզիկական բռնության տարածվածության հիմնական տիրույթ հանդես են գալիս հենց ուսումնական հաստատությունները՝ դպրոցներն ու բուհերը: Ընդ որում՝ այստեղ ֆիզիկական բռնությունը կիրառվում է 2 առաջնային սուբյեկտների՝ համադասարանցիների և ուսուցիչների կողմից: Հետազոտության ցուցանիշները նաև փաստում են, որ հոգեբանական բռնությունը ուսումնական հաստատություններում գերազանցում է հոգեբանական բռնության տարածվածությանը ընտանիքում և փողոցում: Սեռական բռնության դեպքերը

68. Անտոնյան, Մ., Կարապետյան, Տ. (2019), Երեխաների պաշտպանությունը բռնություններից, Ձեռնարկ վերապատրաստողների և երեխաների պաշտպանության մասնագետների համար: Երևան, էջ 6: Հասանելի է՝ https://uni.cf/2MnUeJ6 [դիտվել է 29.08.2019]:

69. Անտոնյան, Մ., Գմյուր-Կարապետյան, Ա., Դուրյան, Ն., Խաչատրյան, Ա., Հովհաննիսյան, Ա. և Սարգսյան, Ս. (2009), Երեխաների պաշտպանություն. ուսումնաօժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար: Երևան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF) և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (COAF), էջ 212: Հասանելի է՝ https://bit.ly/30KcNdY [դիտվել է 29.08.2019]:

համեմատաբար քիչ են հանդիպում, սակայն առավել հաճախ տեղի են ունենում հասակակիցների կողմից։ Ուշագրավ է նաև, որ նույն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ թե՛ հասակակիցների միջև, թե՛ մանկավարժների կողմից ֆիզիկական բռնությունն ավելի տարածված է Երևանում, քան մարզերում, և առավելապես դիտվում է պետական դպրոցների աշակերտների շրջանում։

«Թվերի ետևում» զեկույցը[70], ներկայացնելով դպրոցում երեխաների նկատմամբ կատարվող բռնությունների համաշխարհային միտումները, հիշատակում է նաև առանձին երկրների ցուցանիշներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության։ Զեկույցում նշվում է, որ 2012-2014 թթ. դպրոցում երեխաների նկատմամբ բուլլինգի դեպքերի նվազում է նկատվել, իսկ ֆիզիկական բնույթի հարձակումներն ու ֆիզիկական բռնության կիրառմամբ վիճաբանությունների դեպքերի քանակը էականորեն չի փոխվել։ Ի լրումն՝ Հայաստանում աղջիկ դպրոցականների 6.7 տոկոսը և տղա դպրոցականների 11.1 տոկոսը տվյալների հավաքագրմանը նախորդող մեկ ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ բուլլինգի են ենթարկվել։

Հայաստանի երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի իրականացրած հետազոտությունն էլ ցույց է տալիս, որ «հարցված տղաների 19 տոկոսն ու աղջիկների 11 տոկոսը նախորդ ամսվա մեջ առնվազն մեկ անգամ չեն հաճախել դպրոց՝ խուսափելու համար հնարավոր հետապնդումից, սպառնալիքից դպրոցում կամ դպրոցի ճանապարհին»[71]։ Խնդիրն առկա է նաև փոքրամասնություն կազմող

70. UNESCO (2019). Behind the numbers: Ending school violence and bullying, Paris: UNESCO.

71. Սարգսյան, Ս., Մելքումովա, Մ., Մովսեսյան, Ե. և Բաբլոյան, Ա. (2016), Հայաստանի դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի 2013-2014 թթ. ազգային հետազոտության վերլուծություն։ Երևան, «Արաբկիր» բժշկական համալիրի Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ, էջ 36, 48։ Հասանելի է՝ http://arabkirjmc.am/wp-content/uploads/2016/05/Armenian-HBSC-2016.pdf [դիտվել է 16.07.2020]։

խմբերի երեխաների դեպքում, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող երեխաներն ու ծնողները նշում են, որ պիտակավորումն ու բուլլինգը խոչընդոտում են երեխաներին որակյալ ներառական կրթություն ստանալ[72]:

Հայաստանում[73] հիմնախնդրի շուրջ արված ուսումնասիրությունները թեպետ առկա են, սակայն խիստ սահմանափակ՝ իրենց քանակով և մեթոդաբանական բազմազանությամբ: Բացի դրանից՝ չեն բացահայտում բռնության խորքային պատճառները և մեխանիզմները, ինչը բարդացնում է բռնության հնարավոր կանխարգելումը: Այս իրադրությունն արդիական և արժեքավոր է դարձնում խնդրի շուրջ առավել մանրամասն և աշակերտների տեսանկյունը ներկայացնող տվյալներ հավաքելը՝ նորարար մեթոդների կիրառմամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության շրջանակները

Հետազոտության նպատակն է կառուցել դպրոցական բռնության հիմնավորված տեսություն՝ վերհանելով բռնության առաջացման պատճառները և դրա բացառման անհրաժեշտ մեխանիզմները:

Հետազոտության օբյեկտը Երևան քաղաքի հանրակրթական դպրոցներ հաճախող աշակերտներն են, իսկ հետազոտության առարկան դպրոցական բռնությունն է:

Հետազոտության խնդիրներն են՝ պարզել դպրոցական բռնության՝

72. Human Rights Watch (2017). Human Rights Watch Submission on Armenia to the Committee on the Rights of Persons with Disabilities. Available at: https://www.hrw.org/news/2017/03/01/human-rights-watch-submission-armenia-committee-rights-persons-disabilities [accessed 16.07.2020].

73. Հայաստանից դուրս հիմնախնդրի շուրջ հետազոտությունները շատ են: Տե՛ս, օրինակ, Rigby, K. (2007). Bullying in Schools: And what to Do about it. Camberwell: ACER Press կամ Rigby, K. (2003). Addressing Bullying in Schools: Theory and Practice. Canberra: Australian Institute of Criminology.

- առաջացման պատճառները.
- դրսևորման ձևերը.
- սուբյեկտներն ու օբյեկտները.
- հետևանքները.
- կանխարգելման մեխանիզմները։

Հետազոտության ռազմավարությունը

Ուսումնասիրության շրջանակներում կիրառվել է «հիմնավորված տեսություն» մեթոդաբանությունը, որի նպատակը տվյալների հավաքման և վերլուծության միջոցով տեսություն կառուցելն է ինդուկտիվ տրամաբանությամբ։ Մեթոդաբանության կիրառումը հնարավորություն է տվել կառուցել դպրոցական բռնության տեսություն՝ ընդգրկելով բռնության պատճառները, դրսևորումները, հետևանքները և կանխարգելման մեխանիզմները։

Մեթոդաբանության հիմնադիրներ են համարվում ամերիկացի սոցիոլոգներ Բարնի Գլասերը և Անսելմ Սթրոսը, որոնք կարծում են, որ սոցիոլոգիական «դասական» տեսությունները և դրանց հասկացութային գործիքակազմերը բավարար արդյունավետ չեն սոցիալական կյանքի բոլոր բնագավառներն ուսումնասիրելու և գործնական խնդիրները լուծելու համար[74], հետևաբար կարիք կա կոնկրետ իրավիճակներին համապատասխան տեսությունների ստեղծման։

Առհասարակ, մեթոդաբանության շրջանակներում կառուցվող տեսությունները լինում են երկու տեսակի՝ սուբստանտիվ (մասնավոր) և ֆորմալ (ձևայնացված, ընդհանրացված)։ Ի տարբերություն ֆորմալ տեսությունների, որոնք ընդգրկում են հասարակական առավել լայն բնագավառներ (օրինակ՝ շեղվող վարք, աղքատություն, անհավասարություն) և վերացարկման համեմատաբար ավելի բարձր մա-

74. Glaser, B. G. & Strauss, A. L. (1967). The Discovery of Grounded Theory. Strategies for Qualitative Research. Chicago: Aldine.

կարդակում են, սուբստանտիվ տեսությունների կիրառումը նպատակահարմար է առանձին ոլորտների ուսումնասիրման համար, հատկապես՝ դժվարամատչելի։

«Հիմնավորված տեսության» ստեղծումը ենթադրում է տվյալների համակարգված վերլուծության միջոցով կոդավորման գործընթաց, որը բաղկացած է երեք փուլից՝ բաց, առանցքային և ընտրովի, որտեղ յուրաքանչյուր հաջորդում վերլուծությունը տեղափոխվում է առավել վերացական մակարդակ։

«Հիմնավորված տեսություն» մեթոդաբանությունը որակական հետազոտության տեսակ է, հետևաբար այն, ինչպես մյուս որակական մեթոդաբանությունները, թույլ է տալիս տեղեկատվության փոքր թվով աղբյուրներից ստանալ մեծ ծավալի և խորքային տեղեկատվություն՝ առավելապես տեղ հատկացնելով երևույթների սուբյեկտիվ մեկնաբանումներին, քան դրանց ընդհանրական պատկերներին։ Այս հետազոտության շրջանակներում հիմնավորված տեսությունը կենտրոնանում է ոչ թե բռնության դրսևորումների օրինաչափությունների, այլ բռնության դրսևորման գործընթացի, դրա փուլերի, բաղադրիչների և դրանցում ներգրավված ակտորների վրա։

Հետազոտության մեթոդը

Ուսումնասիրության շրջանակներում կիրառվել է խորին հարցազրույցների մեթոդը հարցազրույցի ուղեցույցի կիրառմամբ (տե՛ս Հավելված 1)։

Խորին հարցազրույցներն իրականացվել են թեմայի վերաբերյալ տեղեկատվությամբ հարուստ դպրոցականների հետ, որոնք հաճախում են Երևան քաղաքի հանրակրթական դպրոցներ։ Հետազոտության շրջանակներում հարցված դպրոցականները հիմնականում եղել են միջին և ավագ դպրոցների աշակերտներ, քանի որ տարրական դասարաններում դեռևս այնպիսի հասկացություններ,

ինչպիսին բռնությունն է, լիովին ձևավորված չեն։ Տվյալների հավաքումն իրականացվել է տեսական ընտրանքի սկզբունքով, որի համաձայն՝ տվյալների հավաքման գործընթացում «հետազոտողը հավաքում, կոդավորում և վերլուծում է ստացված արդյունքները, որոշում, թե հաջորդ քայլում ի՞նչ տվյալներ պետք է հավաքի, որտեղի՞ց կարող է դրանք հավաքել, որպեսզի կարողանա կառուցել տվյալներից բխող տեսություն»[75]։

Հիմնավորված տեսության ստեղծման համար գոյություն չունի ընտրանքի հստակ սահմանված ծավալ[76]։

Տեղեկատվության աղբյուր միավորները հայտնաբերվել են ձնակույտի մեթոդով՝ հիմնականում ներառելով տեղեկատվությամբ հարուստ միավորների կարծիքները։ Հետազոտության բոլոր մասնակիցները եղել են տարբեր դպրոցներից։ Տասնութ տարին չլրացած դպրոցականների հետ հարցազրույցներն իրականացվել են ծնողների գրավոր համաձայնությամբ (տե՛ս Հավելված 2)։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս նկատել, որ դպրոցական բռնությունը դիտարկելի է գողական կամ քրեական ենթամշակույթի մոդելի համանմանությամբ, երբեմն՝ նույնիսկ դրա ամենանուրբ դրսևորումներով։

Գողական/քրեական ենթամշակույթ[77] ասելով նկատի ունենք հայկական իրականության մեջ գործող քրեական բարքերի և չգրված օրենքների վրա հիմնված սոցիալական պրակ-

75. Թադևոսյան Գ. (2006), Որակական սոցիալական հետազոտություններ։ Տեսություն, մեթոդաբանություն և մեթոդ. Ուսումնական ձեռնարկ։ Երևան, Երևանի համալս. հրատ., էջեր 141-142։

76. Տե՛ս նույն տեղում։

77. Այդ հասկացությանն անդրադարձ է արվում սույն ժողովածուի բոլոր հետազոտություններում։

տիկաները։ Դրանք հիմնականում սկիզբ են առնում խորհրդային շրջանում և ցարական Ռուսաստանի ժամանակ ձևավորված քրեական բարքերից, որոնք տարբեր բնակավայրերում գործող հանցավոր խմբավորումների գործելաոճեր էին՝ ձևավորված դեռևս 19-րդ դարում[78]։ Այս ենթամշակույթում բռնության կիրառումն արդարացվում է, որովհետև այն կոնկրետ հարցեր լուծելու մեխանիզմ է[79]։

Քանի որ հետազոտությունը նպատակ ուներ ներքին վերլուծության ենթարկել բռնության գործընթացը աշակերտների տեսանկյունից, տեքստում քննարկվում են հիմնախնդրի մի քանի կարևոր ասպեկտներ՝ բռնության մասին աշակերտների պատկերացումները, դրսևորումները, բռնության փուլային մոդելը, բռնության սուբյեկտների և օբյեկտների կերպարները, բռնության նախապայմաններն ու նպաստող գործոնները։

Բռնության դպրոցական պատկերը

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը բռնությունը սահմանում է[80] որպես սեփական անձի, այլ անձի, խմբի կամ համայնքի նկատմամբ ֆիզիկական ուժի մտադրված կիրառումը կամ դրանով սպառնալը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել վնասվածքների, մահվան, հոգեբանական վնասի, զարգացման խոչընդոտների կամ զրկանքների։

Աշակերտները դպրոցում ամենահաճախ հանդիպող բռնի երևույթների (դպրոցում տեղ գտնող սոցիալական բռնություն) հանրագումարը սահմանում են որպես գործողութ-

78. Տե՛ս սույն ժողովածուի «Քրեական բարքերի, լեզվի և վարքագծի ազդեցությունը սոցիալական հարաբերություններում բռնության դրսևորման վրա» հետազոտությունը։

79. Տե՛ս նույն հետազոտության մեջ։

80. Տե՛ս WHO (2002). World report on violence and health: summary. Geneva: World Health Organization. Available at: https://www.who.int/violence_injury_prevention/violence/world_report/en/summary_en.pdf [Accessed 29.04.2020].

յուն, որի ընթացքում բռնության օբյեկտին «խփում են»[81], «հրմշտում», «ծեծում», «ճնշում», «(անհիմն) նեղացնում», «վիրավորում», «վատ բաներ ասում», «անձը չեն ընդունում» և «ծաղրում են»՝ ոչ անպայմանորեն նույն հերթականությամբ և ոչ միշտ ներառելով բոլոր նշված բաղադրիչները։

> *«...մարդուն ուղղակի խփում են նրա համար, թե ոնց ա ինքը պատկերացնում աշխարհը[82]։*

Բռնության այս ընդհանրացված պատկերից երևում է, որ աշակերտներն այն ընկալում են որպես **առնվազն երկու անձի միջև տեղի ունեցող ինտերակցիա, որն ընդգրկում է դեպի ուրիշն ուղղված բռնի վարքագիծ կամ մղում**։ Այս ըմբռնումը շարունակում է Մաքս Վեբերի՝ սոցիալական գործողության սահմանումը։ Գործողությունը, ըստ նրա, սոցիալական է համարվում, եթե ակտորը դրանում ներդնում է դեպի մեկ ուրիշին ուղղված որոշակի սուբյեկտիվ իմաստ[83]։

Հետազոտության շրջանակներում հարցված մասնակիցները մեծ մասամբ քննարկում են **բռնության ֆիզիկական և հոգեբանական տեսակները**։ Սեռական բռնության վերաբերյալ տվյալներ չեն ստացվել, ինչի բացատրությունը կարող է լինել այն, որ այդ տեսակի խիստ անձնականությունն ու դրանից առաջացող խոցելիությունը հնարավորություն չեն տալիս այն քննարկելու այլ թեմայի շրջանակում։

Ուսումնասիրության ընթացքում հանդիպում է երկու տեսակի բռնի փոխհարաբերություն. ուսուցչի կողմից աշակերտի նկատմամբ և հասակակիցների միջև։

Ուսուցիչների կողմից բռնության կիրառման դեպքերը հարցված աշակերտներն այդքան էլ չեն կարևորում։ Ըստ հարցազրույցների՝ դրանք հիմնականում հոգեբանական

81. Չակերտներում առնված բոլոր հասկացությունները բառացիորեն մեջբերված են աշակերտների խոսքերից։

82. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 8-րդ դասարանի աշակերտ։

83. Weber, M. (1991). Max Weber: Selections in Translation (W. Runciman, Ed.; E. Matthews, Trans.). Cambridge: Cambridge University Press.

բռնության տիրույթում են և, չնայած տեղի են ունենում հիմնականում աղջիկ աշակերտների նկատմամբ, հաճախ թիրախավորում են նաև տղաներին։

> *«Մեր դասղեկը շատ ա սիրում տղաներին «ուռոդ» ասել... բայց էդ կատակով ա, էդ սովորական ա, ոչ մեկ լուրջ չի ընդունում»*[84]*։*

Ուսուցիչների կողմից ֆիզիկական բռնության դեպքերը համակարգային բնույթ չեն կրում, հատուկենտ են։ Աշակերտների ընկալմամբ ուսուցիչների կողմից կիրառվող բռնությունը հավելյալ նպաստավոր պայմաններ է ստեղծում հասակակիցների միջև բռնության համար, քանի որ այդ կերպ հավելյալ լեգիտիմացնում է բռնությամբ հարցեր լուծելու մշակույթը։

Հատկանշական է, որ բռնության օբյեկտներին և սուբյեկտներին նկարագրելիս աշակերտները երևույթը կոնտեքստավորում են արական սեռի աշակերտների միջև հարաբերությունների շրջանակներում, ինչը հուշում է, որ **բռնության ավելի սուր և աշակերտներին առավել հուզող տեսակը հասակակից տղաների փոխհարաբերություններում տեղի ունեցողն է**։ Արական սեռի աշակերտ-աշակերտ հարաբերություններում նկատելի են բռնության դրսևորման հստակ և ինչ-որ տեղ օրինաչափ մեխանիզմներ, որոնք քննարկվում են «Բռնության փուլային մոդելը» բաժնում։ Այստեղ առավել ցայտուն են արտահայտված գողական մշակույթի բնութագրիչ գծերը, որոնք հանգամանորեն ուղղորդում են բռնության փուլերի՝ մեկից մյուսին անցումները։

Բռնության փուլային մոդելը

Դիտարկելով բռնությունը որպես սոցիալական գործողությունների շարք՝ աշակերտների մեկնաբանմամբ հնարավոր եղավ բացահայտել, որ բռնությունն ունի փուլային բնույթ (տե՛ս Պատկեր 1)։ Հնարավոր է հանգել այն հետևությա-

84. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 8-րդ դասարանի աշակերտ։

նը, որ դպրոցական բռնությունը բաղկացած է չորս փուլից՝ **պիտակավորում, լեգիտիմացում, ֆիզիկական ակտ և արձագանք**, որոնցից յուրաքանչյուրը շրջապտույտային գործընթացի հստակ մաս է և ունի դրսևորման իր յուրահատկությունները։

Պատկեր 1. Դպրոցական բռնության շրջապտույտային մոդելը

Այս փուլային մոդելի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ այն **ինքնակրկնող** է, ինչը նշանակում է, որ այս պարույրի մեջ հայտնվելու դեպքում բռնության օբյեկտներն ընկնում են անվերջ շրջապտույտի մեջ, քանի որ բռնության

մշակույթն այս պատկերի տրամաբանությամբ շարունակաբար ինքնավերարտադրվում է։

Փուլ 1. Պիտակավորում

Պիտակավորումը սոցիոլոգիայում ամենալայնորեն ուսումնասիրվող ֆենոմեններից է։ Այն բառային կոդերի շրջանառման միջոցով մի կողմից պարզեցնում է իրականությունը կամ դրա կոնկրետ մասը՝ դարձնելով այն հեշտ ընկալելի անհատի համար (ինչպես, օրինակ, կարծրատիպը)։ Մյուս կողմից պիտակավորումն իրականացնում է սոցիալական վերահսկողության ֆունկցիա, քանի որ անհատներին խմբավորում և դասակարգում է ըստ որոշակի չափանիշների՝ ապահովելով հետագայում այդ խմբերի նկատմամբ հեշտ ձևակերպվող, ճիգ չպահանջող վերաբերմունք։

Պիտակավորման առանձնահատկություններից մեկը դրա հետադարձ ուժի էֆեկտն է. երբեմն պիտակի ամրագրումից հետո պիտակի կրողը սկսում է աստիճանաբար փոխել իր վարքը և ինքնությունը՝ դրանք համապատասխանեցնելով պիտակի ներքո ենթադրվող դերերին։ Օրինակ՝ «ագրեսիվ» պիտակի ամրապնդմանը սովորաբար հաջորդում է այն, որ անձն ինքնադիրքավորվում է «ագրեսիվ» կատեգորիայի շրջանակներում և իր վարքը համապատասխանեցնում դրան։

Պիտակավորումն առանցքային դերակատարում ունի դպրոցական բռնության դրսևորումներում։ Աշակերտների հետ զրույցները փաստում են, որ բռնության դրսևորումների հիմքում ընկած է պիտակների հսկայական ցանց, որից հեշտորեն կարելի է ստանալ «բռնության բառարան»՝ նկարագրելով բռնություն կիրառողների և բռնության ենթարկվողների տիպական կերպարները։

Ստորև բերված վիզուալացմամբ (պատկեր) ներկայացվում են աշակերտների մատնանշած այն հատկությունները, որոնք առավել հաճախ են հանդիպում բռնության օբյեկտ-

ների և սուբյեկտների շրջանում։ Ընդ որում՝ ըստ մասնակիցների, որքան շատ այդպիսի հատկություններ ունի տվյալ անձը, այնքան ավելի հավանական է, որ նա կարող է բռնության սուբյեկտի կամ օբյեկտի դերում հայտնվել։

Սուբյեկտ	**Օբյեկտ**
Բոյով	Մեծ քիթ
Ուժեղ	Չաղ
Չսովորող	Նիհար
Դասերին վատ պահող	Տգեղ
Թաղապետի տղա	Տարբերվող դեմք
Հարգված հեղինակություն	Տարբերվող խոսք
Սպորտսմեն	Ֆիզիկապես թույլ
Բառեց	Հոգեպես թույլ
Թզբեխ	Բարի
Կարմիր չարոխներ	Լոխ
Սև հագուստ	Տարբերվող անուն
Փողոցային ժարգոն	Ղզիկ
	Դոձիկ

Պատկեր 2. Բռնության սուբյեկտի և օբյեկտի պիտակները

Այսպես, թե՛ բռնության սուբյեկտների, թե՛ օբյեկտների տիպական կերպարներն առանձնանում են իրենց ֆիզիկական, կամային և վարքային հատկություններով, սոցիալական ստատուսով, սպորտային ունակություններով, հանդերձանքի պարագաներով և բառապաշարով։

Կարևոր է նկատել, որ կերպարի բնութագրիչները սուբյեկտների դեպքում մեծ մասամբ կախված են աշակերտի ընտրությունից. աշակերտն ընտրում է չսովորել, ընտրում է կար-

գապահ չլինել, ընտրում է՝ հանդերձանքի ինչ պարագա կրել, բառապաշար օգտագործել և ինչ սպորտաձևով զբաղվել։ Մինչդեռ բռնության օբյեկտների դեպքում մեծ մասամբ (հաճախ) բացակայում է ընտրության հնարավորությունը։ Նշվող բնութագրիչների մեծամասնությունը ֆիզիկական/արտաքին և վարքային առանձնահատկություններ են, որոնք կարող են մեկնաբանվել ինչպես դրական, այնպես էլ որպես բացասական, և պիտակավորումը հենց դրանց բացասական մեկնաբանությունն է, այն է՝ աշակերտին «պիտակավորված» և բռնության օբյեկտ դառնալու թեկնածու դարձնելը։ Որոշ պիտակներ ի սկզբանե աշակերտի ընտրության շրջանակներից դուրս են, իսկ այլ բնութագրիչները «ձեռքբերովի» պիտակներ են, որոնք սահմանվում և շրջանառվում են այլ աշակերտների կողմից։

Հարցված աշակերտներն իրենք իրենց դիրքավորում էին չեզոք գոտում՝ մատնանշելով, որ ներգրավված չեն բռնի փոխհարաբերություններում և չեն կրում ո՛չ սուբյեկտի, ո՛չ էլ օբյեկտի պիտակներ։ Այս երևույթը կարող է բացատրվել հոգեբանական պաշտպանական մեխանիզմներից մեկով՝ պրոյեկցիայի մեխանիզմով։ Այն առաջ է գալիս, երբ անձն իր համար անընդունելի երևույթները վերագրում է այլ՝ հաճախ անդեմ անձանց։ Աշակերտները, իրենց չդիրքավորելով օբյեկտի կամ սուբյեկտի դիրքում, իրենք իրենց դուրս են մղում բռնության երևույթն իրենց անձին վերագրելու շրջանակից, թեպետ չի բացառվում, որ իրականում նրանցից ոմանք որևէ կերպ ներգրավված են եղել կամ են բռնի գործընթացներում՝ այս կամ այն դերում։

Բռնության սուբյեկտները որոշում են «ճշտի»՝ իրենց համար ընդունելի սկզբունքից շեղման մակարդակը, սահմանում են, թե տրվող պիտակներից յուրաքանչյուրն ի՞նչ նշանակություն ունի, և, հետևապես բռնության թույլատրելիության կամ լեգիտիմության ի՞նչ աստիճան է ենթադրվում տվյալ պարագայում։

Պիտակավորման սոցիալական գործընթացից բացի՝ գոյություն ունի նաև պիտակավորման «դատական» գործընթաց. երբ պիտակավորումը և բռնության մթնոլորտը ձևավորվում են «սխալ» թույլ տված անձի շուրջ:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ դպրոցական միջավայրում բոլորը ապրիորի համարվում են «լավ տղերք», մինչև որ «սխալ» են անում: «Սխալ»-ը դպրոցական տղայական շփումների մշակույթում լայն հասկացություն է (հայտնի նաև գողական միջավայրից՝ «լավ տղա»-ն՝ «ճիշտ», «ճշտով», «սխալ»-ն էլ՝ որպես (մերձ)քրեական մշակույթի բանալի հասկացություններից): «Սխալ» պիտակին «արժանանալ» աշակերտը կարող է, եթե.

- «գործ տա» (այս դեպքում զուգահեռաբար կիրառվում են նաև «գործ տվող» կամ «ստուկաչ» պիտակները).
- «սրբություն վիրավորի» (օրինակ՝ ծնողներին, օջախը, հացը և այլն).
- «անշնորհքություն անի» (օրինակ՝ ուտելու ժամանակ ինչ-որ մեկին խանգարի կամ խփի).
- «փոփոխական լինի» (օրինակ՝ հաճախակի փոփոխի ընկերական շրջապատները):

Կախված «սխալ»-ների ինտենսիվությունից և լրջությունից՝ անձը կարող է ստանալ նաև «վատ տղա» պիտակը, որին որպես արձագանք՝ շրջապատը դադարում է նրա հետ շփվելուց կամ սկսում է շարունակաբար ֆիզիկական վնասներ հասցնել նրան: Վերջինիս չարձագանքելու կամ ոչ համապատասխան արձագանք տալու դեպքում անձը «կոտրվում» է կամ ընկնում «խլեշի տակ»: Սա երևույթի դրսևորման ամենածանր կարգավիճակն է, որից ազատվելու եղանակը ևս բավականին ծանր ֆիզիկական պատասխանատվություն է ենթադրում:

«Պետք ա արյուն թափի, որ խլեշը հելնի»[85]*:*

85. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 10-րդ դասարանի աշակերտուհի:

Գոյություն ունի պիտակավորման մեկ այլ աստիճանակարգ ևս, որը միավորում է աշակերտների շփումների շրջանակը և առաջադիմությունը: **«Ղզիկ»** պիտակը տրվում է այն տղաներին, ովքեր «թույլիկ» են և/կամ շփվում են հիմնականում աղջիկների հետ: **«Դոձիկ»** պիտակը «ղզիկի» առավել ծանր աստիճանն է, երբ անձը նաև «սովորող» կամ «կարդացող» է և հետևաբար թույլ է տալիս բռնության առավել ծանր աստիճան:

> *«Դոձիկը ղզիկ ա, բայց ղզիկը միշտ չի, որ դոձիկ ա»*[86]*:*

> *«... ինչ-որ երեխա կարող ա ավելի շատ գաղափար ունենա գողական աշխարհի մասին, քան իրա պապան»*[87]*:*

Այս կատեգորիաները կիրառելի չեն այն աշակերտների նկատմամբ, որոնք առողջական խնդիր ունեն. վերջիններս «պաշտպանված» են գողական պիտակավորումներից իրենց յուրահատուկ պիտակների շերտով, ներառյալ **«հիվանդ»**, **«ներառական»** կամ **«հաշմանդամ»**:

> *«Հիվանդություններ ունեցող մարդկանց չեն կըպնում»*[88]*:*

Պիտակավորման այս սխեմայից դուրս, ընդհանուր առմամբ, տղաները բաժանվում են երեք խմբի՝

1. «քյարթու տղաներ» – հիմնականում բռնության սուբյեկտներ են.
2. «ժամանակակից տղաներ» – նրանք «կամայուտըրներից-բանից են խոսում».
3. «թույլեր» – ոչ մի սխալ չեն արել, իրենց ցույց չեն տվել, բայց ժամանակ առ ժամանակ կարող են բռնության օբյեկտ դառնալ:

86. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 12-րդ դասարանի աշակերտուհի:
87. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 8-րդ դասարանի աշակերտ:
88. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 6-րդ դասարանի աշակերտ:

Ըստ աշակերտների՝ բռնությունից խուսափելու ամենապաստավոր ձևն այս խմբերին բնորոշ հատկությունների ճիշտ համադրումն է՝ «սխալներ» չանող ժամանակակից տղաները, որոնք նաև «լավ են քյարթուների հետ»։

Քննարկված կատեգորիաները կիրառելի չեն աղջիկների շրջապատում, քանի որ, ըստ վերջիններիս, հրապարակավ ծաղրողները և միմյանց ճնշողները հիմնականում տղաներն են, իսկ աղջիկները դասարանի հարցերը և միմյանց քննարկում են իրենց ընկերական փոքր խմբերում։

Աղջիկ աշակերտների շրջանում բռնությունը հոգեբանական է և թույլ դրսևորումներով, հիմնականում լեզվակռվի կամ խոսքային հեգնանքի տեսքով։ Տղաները ծաղրում են հիմնականում տգեղ համարվող աղջիկներին և «վատ շրջապատ» ունեցողներին՝ նրանց, ովքեր չեն սովորում և «տղաների հետևից են վազում»։ Վերջինս նաև «ծանր թեմա» է տղաների համար և լեգիտիմացնում է ծաղրը թե՛ տղաների, թե՛ աղջիկների շրջանում։

Քննարկված բոլոր հասկացությունները գրեթե նույն նշանակությամբ և գործառույթներով հանդիպում են նաև գողական տերմինաբանությունում։ Ինչպես տեսնում ենք, դպրոցական բռնությունը, առնվազն հասկացությունների մակարդակում, կրկնօրինակում է գողական ենթամշակույթը։ Բնականաբար, գողական տերմինաբանությունը չի առաջանում դպրոցի ներսում, այլ ձևավորվում է տարբեր աշակերտների կենսափորձերի համադրությունից՝ բակային ու, գուցեև, ընտանիքից եկող փորձառությունը տեղափոխելով դպրոց։

Փուլ 2. Լեգիտիմացում

Պիտակավորման փուլն ինքնին որևէ ազդեցություն չի ունենա, եթե կոնկրետ անձանց տրված պիտակները չլեգիտիմացվեն։ Բռնության գործընթացում լեգիտիմացումն առանցքային հասկացություն է, որն ընկած է բռնության ծագման հիմնային մակարդակում։ «Լեգիտիմացում» ասե-

լով պետք է հասկանալ պիտակների և դրանց նշանակություններ ու դրանց վերագրումից ենթադրվող հետևանքների (գործողությունների, սոցիալական հիերարխիայում փոփոխությունների) ընդունելիությունը խմբի մեծամասնության կամ ազդեցիկ անդամների շրջանում։ Չնայած պիտակների հետևանքները կարող են պայմանավորված լինել իրենց «հասարակական ուժգնությամբ» (ասենք՝ «ղզիկ»-ը գուցե ավելի թույլ պիտակ է, քան «դոնիկ»-ը, թեև կարող է նույնքան կամ ավելի ուժեղ էլ լինել, եթե ասոցացվեց «կանացի վարքի» հետ), սակայն (և հենց այդ պատճառով) կարևոր է, թե ով և ինչ պայմաններում է ամրագրում պիտակը։

Պիտակավորման գործընթացը հիմնականում համակարգվում է բռնության սուբյեկտների կողմից օբյեկտների նկատմամբ։ Քանի որ բռնություն կիրառողները հիմնականում համարվում են խմբի առանցքային և ազդեցիկ միավորներ, նրանց կողմից պիտակների լեգիտիմացումն արդեն իսկ ենթադրում է դրա ամրագրում ամբողջ խմբի կողմից։

Աշակերտների հետ զրույցների արդյունքում լեգիտիմացման երկու տեսակ ձևակերպվեց՝ **աֆեկտիվ** և **ռացիոնալ**։

Աֆեկտիվ բռնության դեպքում գործողությունն արդարացվում է այն հանգամանքով, որ «հաճույք է պատճառում» խմբի ազդեցիկ անդամներին։ Այս տեսակի լեգիտիմացումը տեղի է ունենում, միայն երբ տեղավորվում է սուբյեկտների սահմանած «ճշտի» շրջանակներում։

> *«Ինձ թվում ա՝ իրանք էլ չեն հասկանում՝ ինչի ա էդ լինում, հանկարծակի ա լինում, բայց իրանց էդ դուր ա գալիս»*[89]*։*

> *«...ասում են՝ դե հավես ա, ինչ ենք անում որ»*[90]*։*

Ի տարբերություն աֆեկտիվ լեգիտիմացման՝ ռացիոնալ լեգիտիմացման դեպքում գործ ունենք մոտիվացիայի առա-

89. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 8-րդ դասարանի աշակերտ։
90. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 12-րդ դասարանի աշակերտուհի։

վել բացատրելի ձևերի հետ, օրինակ՝ ինքնահաստատվելու ցանկություն կամ իշխանության և հեղինակության ցուցադրման կարիք, այսինքն՝ իրավիճակներ, երբ հնարավոր է «զգալ, որ իրենք ավելի ուժեղ են, քան ուրիշները»։

Լեգիտիմացման փուլն առավել սահուն է անցնում, երբ առկա են հավելյալ նպաստող հանգամանքներ։ Աշակերտներն առանձնացնում են մի շարք գործոններ, որոնց բացակայությունը չի ենթադրում բռնության կանխում, սակայն առկայությունն ահագնացնում է բռնության դրսևորման հնարավորությունները։

1. **Ընտանեկան առանձնահատկություններ**. երբ երեխան գալիս է ընտանիքից, որտեղ նրա ազատությունը ճնշված է, նա փորձում է իր ազատությունը զգալ այլ անձանց ազատությանը բռնանալով։
2. **Անձնային առանձնահատկություններ**. երբ երեխան ինքն ունի բարդույթներ, ծաղրում է ուրիշին սեփական բարդույթներն իրենից վանելու համար։
3. **Տարիքային առանձնահատկություններ**. միջին դպրոցը բռնության կիզակետն է, քանի որ դրանից առաջ ներխմբային հարաբերությունները չեն հասցրել բևեռացվել, իսկ դրանից հետո աշակերտների ուշադրությունը կենտրոնացված է հետդպրոցական կյանքի վրա։
4. **Սոցիալական առանձնահատկություններ**. սոցիալապես ապահով ընտանիքից եկած երեխայի նկատմամբ դպրոցում հաճախ հանդիպող նախապաշարմունքը, որ նրա ձեռքբերումները պայմանավորված են միայն իր ընտանիքի տնտեսական վիճակով, նրա մեջ ստեղծում է ինքնուրույն չլինելու բարդույթ, որն արտահայտվում է բռնի քայլերով։
5. **Կարգապահական առանձնահատկություններ**. դասամիջոցներին վազելու արգելքը ստիպում է ներքին էներգիայի արտահայտման այլ օբյեկտ գտնել։

Սրանք պատճառների՝ հավելյալ ստուգման և մանրամասնման ենթակա վարկածներ են, որ առաջ են քաշել հետազոտության մասնակիցները և փորձում են բացահայտել բռնության խորքային, նաև սոցիալ-հոգեբանական պատճառները և դիտարկել դրանք տարիքային դինամիկայի մեջ:

Այսուհանդերձ, եթե լեգիտիմացման գործընթացը հաջողվել է, և կան նպաստավոր պայմաններ բռնության կիրառման համար, սկսվում է դրսևորման փուլը:

Փուլ 3. Ֆիզիկական ակտ

Պիտակավորման և լեգիտիմացման փուլերը ձգան են բռնության հաջորդ փուլերի դրսևորման համար:

Բռնությունը կարող է դրսևորվել **ուղղակիորեն** և **անուղղակիորեն**:

Ուղղակի բռնությունն ընդգրկում է ֆիզիկական և հոգեբանական բռնի միջոցները՝ հրմշտոցից և «թեմա անելուց» մինչև «խփոցի»: Այս դեպքում սուբյեկտը անմիջական բռնի ինտերակցիայի մեջ է ներքաշում օբյեկտին: Ֆիզիկական բռնությունը, սակայն, ունի նաև մի տարատեսակ, որն աշակերտներն անվանում են «ընկերական բռնություն»՝ բնորոշելով այն բռնության օբյեկտի տեսանկյունից ընդունելի մակարդակի «թույլ խփելով»:

Ի տարբերություն ուղղակի բռնության՝ անուղղակի բռնության դեպքում «տուժող կողմ» կարող են դառնալ նաև անշունչ առարկաները: Այսպիսի դեպքերից են, օրինակ, աշակերտի իրերը պատուհանից դուրս նետելը կամ գրչատուփով «չլոցի» խաղալը: Բռնության անուղղակի դրսևորումը հնարավոր է դիտարկել նաև որպես ուղղակիորեն տեղի ունեցող հոգեբանական բռնություն:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ նաև, որ, կախված իրավիճակից, գոյություն ունեն բռնության «հասցեներ»:

«Թեմա անելու» վայրերի ընտրության առաջին և ամենակարևոր չափանիշը տարածքում **անվտանգության տեսախցիկի բացակայությունն է**. ի սկզբանե բացառվում են այն տարածքները, որոնք նկարահանվում են, և ընտրությունը տեղի է ունենում միայն մարդկանց «աչքից հեռու» տեղերի միջև։ Ընտրության հաջորդ չափանիշը խնդրի բարդությունն է։ Եթե «խոսալու կա», այսինքն՝ հարցը պարզելու համար վերբալ հաղորդակցությունը բավարար է, ապա, աշակերտների կարծիքով, ամենահարմար վայրը հաճախ **զուգարանն** է։ Եթե խնդիրը թեթև հրմշտոցի մակարդակում է, ապա **հանդերձարանն** ավելի նպատակահարմար ընտրություն է։ Հաճախ, սակայն, վեճի շարժընթացն ու ինտենսիվացումը ստիպում են «կիլդիմը[91]» տեղափոխել **շենքից դուրս**։

> *«Մեր դպրոցի բակում մի դաշտ կա, էդտեղ շատ հարմար տեղ ա»[92]։*

Բռնության բոլոր հասցեների ընտրությունը կարելի է բնութագրել ապահինստիտուցիոնալացման միտումով։ Այսինքն՝ որքան ավելի մեկուսի է բռնության «հասցեն» և որքան ավելի ապահովագրված է դպրոցի կարգապահական կանոնակարգի ազդեցությունից, այնքան բռնության ավելի լայն հնարավորություններ են բացվում բռնության սուբյեկտների համար։ Այս տեսանկյունից դպրոցների ֆիզիկական տարածության վերակազմակերպումն ու վերահսկումը կարևոր նշանակություն են ստանում այնտեղ բռնության դրսևորումների հնարավորին չափ կանխարգելման առումով։

91. Բանակի մասին հետազոտությունում տրված են մի շարք եզրեր, որոնք հատուկ են քրեական մշակույթին և դրա տարբերակներին՝ բանակում կամ նաև ուսումնական միջավայրում։ Նշված է, որ դրանցից շատերի ծագումն օտար է, ռուսերեն կամ թուրքերեն (ադրբեջաներեն)։ Տրված է նաև այս երևույթի բացատրության ուրվագիծ։ «Քիլդիմ»-ը հին թյուրքական արմատի բառախաղային վերածևակերպումն է. «քըլմաք» թուրքերեն նշանակում է «անել», «ստեղծել», «քիլ» անգլերեն՝ «սպանել»։ Բառացիորեն, ուրեմն, նշանակում է «սպանեցի» կամ «ստեղծեցի» կամ «սպանելով ստեղծեցի», այսինքն՝ համատարած կոնֆլիկտը (բոլորի պատերազմը բոլորի դեմ) նկարագրող (և նաև «գովերգող»), այն լեգիտիմացնող հասկացություն է [*ծանոթություն խմբագրի*]։

92. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 12-րդ դասարանի աշակերտ։

Ընդ որում՝ խոսքը աշակերտներին առավել մեկուսացնելու և սահմանափակելու մասին չէ, այլ դպրոցի ներսում վախի գոտիները հայտնաբերելու և ֆիզիկապես վերափոխվելու, վերաիմաստավորելու:

Այս դրսևորումները ևս մեկ անգամ հուշում են, թե որքանով է դպրոցական բռնությունը կրկնում քրեական ենթամշակույթի մոդելը: Մյուս տեսանկյունից, իրավիճակը հակառակ հերթականությամբ շրջելու դեպքում կարելի է ենթադրել, որ նույն քրեական ենթամշակույթը վերադառնում է «մեծ» հասարակություն և ամրապնդվում այնտեղ, փոխանակ վերանա՝ սնված և կազդուրված լինելով նաև դպրոցում առկա բռնության դրսևորումներից, որոնք խոշոր չափով ձևավորում են մարդու ողջ ապագա և ապադպրոցական սոցիալականացման արժեքավարքայնությունը:

Ավելացնենք, որ, իհարկե, անուղղակի բռնության ձևերից ոչ բոլորն են նշվել հարցազրույցների ժամանակ: Դրանցից է նաև մյուսին ստորացնող բամբասանքը: Նաև՝ պարզապես «ցածրացրած» (գողական) ժարգոնով խոսելը, որն անուղղակի բռնությունը մեկ անհատին ուղղված լինելուց դարձնում է «մթնոլորտային» հանգամանք՝ հասարակական մշակույթ (տվյալ հանրույթում) և այդպիսով ամրապնդում բռնության մշակույթի լեգիտիմացումը, և այլն:

Փուլ 4. Արձագանք

Բռնության դրսևորումները՝ նույնիսկ բռնության ենթարկվողի պասիվ մասնակցության դեպքում, երկկողմանի փոխազդեցություններ են, քանի որ պասիվ մասնակցությունը ևս մասնակցություն է:

Բռնության դրսևորմանն արձագանքելու ամենատարածված վարքերը երկուսն են՝ **հարմարում** և **դիմադրություն**:

Հարմարվելը և դիմադրություն 1-ը[93], թեպետ տարբեր կերպ, ի վերջո բռնության շրջապտույտի շարունակման շարժիչ են դառնում: Այսինքն՝ հենց **արձագանքի փուլն է ապահովում բռնության ինքնակրկնող մոդելի վերարտադրությունը** (կամ՝ դիմադրություն 2-ի ձև գտնելու դեպքում՝ կանգը):

Հարմարման պարագայում բռնության օբյեկտը չի դիմադրում իր նկատմամբ կիրառվող բռնի գործողություններին: Այսպիսով՝ բռնության ենթարկվողը հույս ունի խուսափելու բռնության խորացումից և դրա առավել ծանր դրսևորումներից: Միևնույն ժամանակ, բռնության դրսևորմանը հաջորդած հարմարումն անմիջապես «ապացուցում» է օբյեկտին ի սկզբանե տրված «զոհի» պիտակը (ինչպես էլ այն ձևակերպված լինի), և քանի որ նա արդեն «ապացուցված» պիտակով «կնքված» է, իրադրությունը վերադառնում է բռնության հաջորդ ցիկլին: Պիտակի ամրապնդման յուրաքանչյուր դեպքից հետո նոր բռնության իրադրությունը տեղի է ունենում նախորդից ավելի «սահուն» կերպով, քանի որ պիտակավորման և լեգիտիմացման փուլերն արդեն հաջողությամբ հաղթահարված են:

Դիմադրություն 1-ի պարագայում բռնության դրսևորումնե-

93. Կարելի է տարբերել դիմադրության երկու տեսակ. մեկը՝ դիմադրություն, որը բռնության պտույտի շարունակություն է դառնում: Անվանենք այն դիմադրություն 1: Մյուսը՝ դիմադրություն, որը բռնության տվյալ դրսևորման հիմքն արժեքայնորեն վերացնում է: Անվանենք այն դիմադրություն 2: Ռեսպոնդենտները (գրեթե) չեն անդրադարձել դիմադրության այս տեսակին, քանի որ այն (գրեթե) բացակայում է մեր հասարակության արժեքային համակարգից, մանավանդ կյանքի սկզբնական տարիներին: Սակայն հենց դրան է ուղղված բուլլինգը և սոցիալական բռնության ցանկացած այլ տեսակները հաղթահարելու՝ ժամանակակից սոցիալական հմտությունների գիտության փնտրտուքի սայրը: Ինչպե՞ս խուսափել բռնությունից կամ դադարեցնել այն այնպես, որ տվյալ արտահայտման, իսկ եթե հնարավոր է՝ նաև այլ հարակից արտահայտումների հիմքը վերանա: Սա, իհարկե, պահանջում է «մեծ» ակցիաներ՝ ոլորտային քաղաքականություններ, հասարակության արժեքային համակարգի փոփոխություն: Սակայն քանի որ մարդս միշտ ապրում է «այստեղ և հիմա», շատ կարևոր է, որ մարդիկ (ներառյալ՝ երեխաները և պատանիները) ձևեր ստանան, գտնեն, հայտնագործեն, փորձարկեն դիմադրություն 2 իրականացնելու համար: Այդպիսի ձևերի որոշ հնարավոր տարբերակներ ներկայացված են սույն գրքի նախաբանում *[ծանոթություն խմբագրի (տե՛ս նաև խմբագրի նոթերը սույն հոդվածի վերջում)]:*

րին արձագանքելու համար բռնության օբյեկտը կա՛մ **ինքն է բռնությամբ պատասխանում**, կա՛մ **դիմում է այլ ակտորների օգնությանը՝ բռնությունը փաստորեն բռնությամբ ճնշելու կամ դադարեցնելու նպատակով**։

Բռնությանն անձամբ արձագանքելու արդյունքում աշակերտը կա՛մ կարող է կանխել հետագայում իր նկատմամբ կիրառվելիք բռնությունը և ժամանակավորապես դուրս գալ բռնության շրջապտույտից, կա՛մ կարող է անցնել բռնության սուբյեկտների շարքերը և, ժամանակ առ ժամանակ բռնություն կիրառելով այլ աշակերտների նկատմամբ, ապահովագրել ինքն իրեն բռնությունից։ Ստացվում է, որ երկու դեպքում էլ բռնությունը չի կանխարգելվում կամ էլ կանխարգելվում է միայն տվյալ անձի համար։

Բռնությանն արձագանքելու՝ դիմադրություն 1-ի երկրորդ ձևը դիմադրության հարցում այլ ակտորների օգնությանը դիմելն է։ Հետազոտության մասնակիցների համոզմամբ ամբողջ դպրոցի մասշտաբով սոցիալական ամուր ցանց ունենալը կարող է դյուրացնել դիմադրության ընթացքը (նշենք, որ սա կարող էր դիմադրություն 2-ի հիմք դառնալ, սակայն հարցվածների մտքով չի անցնում. այդ ռազմավարությունը բացակայում է նրանց վարքային «զինապաշարում»)։ Դիմադրության գործում դեր են խաղում նաև հեղինակություն կամ ազդեցություն ունեցող «մեծ ախպերը», բակերի ծանոթներն ու տղայական այլ կապերը։

> *«Դու պիտի իմանաս բոլոր դասարանները, ամեն տեղից դու պիտի ծանոթ ունենաս, որ ամեն տեղ պաշտպանված լինես»*[94]*։*

Աշակերտի տղայական սոցիալական կապիտալի օգտագործմամբ դիմադրություն 1 տարբերակի առանձնահատկությունն այն է, որ այն իրականացվում է բռնությանը բռնությամբ պատասխանելու միջոցով։ Սա գուցեև լուծում

94. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 8-րդ դասարանի աշակերտ։

է խնդիրը բռնության ենթարկված աշակերտի համար, սակայն, փաստորեն, **սիստեմատիկորեն վերարտադրում է բռնությունը**: Աշակերտը, բռնության ենթարկվողի կարգավիճակից դուրս գալով, ուղղակիորեն կամ անուղղակիորեն անցնում է բռնություն կիրառողների շարքերը, քանի որ արտաքին օժանդակությամբ բռնություն է կիրառում իր նկատմամբ բռնացածների նկատմամբ կամ բռնության սպառնալիքով կանխարգելում իր նկատմամբ բռնությունը: Այլ կերպ ասած՝ բռնությանը դիմադրելն այս դեպքում ոչ թե կանխում է այն, այլ ընդամենը **փոխում է բռնության վեկտորի ուղղությունը**:

Բռնության սուբյեկտների շարքերում կան աշակերտներ, որոնք բռնություն կիրառում են որպես իրենց իսկ նկատմամբ բռնությունը կանխող մեխանիզմ: Այդ տեսանկյունից ևս մեկ անգամ ակտուալանում է բռնությունը որպես փուլային և ինքնակրկնող գործընթաց դիտարկելու կարիքը:

Այսինքն՝ որքան աշակերտի ցանցը մեծ է և ազդեցիկ, այնքան ավելի լայն են և որակապես տարբեր դիմադրության հնարավորությունները:

Դիմադրության մեկ այլ միջոց է խնդրի բարձրաձայնումը տղայական ցանցից դուրս՝ փորձելով օգնության այլ մեխանիզմներ ներգրավել, օրինակ՝ **ծնողներին**, դպրոցի **հոգեբանին, դասղեկին** կամ **համադասարանցի աղջիկներին**: Գործնականում, սակայն, այս բոլոր մեխանիզմները ֆունկցիոնալ չեն համարվում աշակերտների կողմից:

Բռնության ենթարկված աշակերտները **չեն կիսվում իրենց ծնողների հետ**, քանի որ չեն տեսնում նրանց դերը բռնության կանխարգելման հարցում՝ համարելով, որ նրանք ոչինչ չեն կարող անել:

> *«Ծնողները չեն հասկանում՝ ոնց են մտածում երեխեքը»*[95]:

95. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 8-րդ դասարանի աշակերտ:

Բռնության կանխարգելման հարցում ծնողներին ներգրավելիս աշակերտներին նաև սպառնում են «գործ տվող», «ստուկաչ», «մամայի բալա» պիտակները[96], որոնց ակտուալացումը աշակերտին կարող է վերադարձնել բռնության առաջին փուլին։

Դպրոցական **հոգեբանի ինստիտուտը ևս չի նպաստում դիմադրության ջանքերին**։ Մի կողմից աշակերտների շրջանում բացակայում է հոգեբանի հանդեպ վստահությունը և երաշխիքը, որ հնարավոր կլինի խուսափել «ստուկաչ» պիտակից, իսկ մյուս կողմից ինստիտուտը, աշակերտների համոզմամբ, փաստացի իր հանձնառությունների շրջանակում չի գործում կամ չի գործում առհասարակ։

> *«Որ 9-րդ դասարան էինք, մի հատ աղջիկ էր գալիս, մեզ ինչ-որ թեստեր էր տալիս, գնում էր։ Էդքանը»*[97]*։*
>
> *«Ինքը փորձում ա փիառ անի, մրցումների կանչի, կարատեի խմբակների...»*[98]*։*
>
> *«Ինքը տեխնոլոգիա ա տալիս, բայց սենյակի վրա գրած ա «հոգեբան»»*[99]*։*

Այս ամենին զուգահեռ, դասղեկների անտարբերությունը և նրանց՝ աշակերտներին **ստորադասող վերաբերմունքը՝ արտահայտված** «ինքը երեխա ա, ինքը ոչ մի բան չի հասկանում» սկզբունքով, չի նպաստում բռնության նկատմամբ դիմադրություն 2-ի ձևավորմանը։ Սա մեծացնում է դասղեկների և աշակերտների միջև հեռավորությունը՝ հանգեցնելով նրան, որ աշակերտները գոնե բռնության կանխման հարցում դասղեկներին չեն դիտարկում որպես «երկրորդ մայր»։

96. Տե՛ս «գործ տալու» երևույթը մանրամասնորեն քննարկված նաև սույն ժողովածուի այլ հետազոտություններում՝ քրեական ենթամշակույթի և բանակի վերաբերյալ։

97. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 12-րդ դասարանի աշակերտուհի։

98. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 10-րդ դասարանի աշակերտուհի։

99. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 8-րդ դասարանի աշակերտ։

«Մեր դասղեկը տենց մի քիչ անջատված ա»[100]*:*

Համադասարանցի աղջիկները ոչ մի կերպ չեն մասնակցում բռնության կանխման գործընթացին: Ոչ միայն տղաները չեն տեսնում նրանց դերը, այլև աղջիկներն իրենք չեն համարում, որ որևէ կերպ կարող են նպաստել բռնության կանխարգելմանը և **չեզոք դիրք են ընդունում՝** այդպիսով, փաստորեն, քաջալերելով բռնության մշակույթը՝ դրսևորելով «ավարայի երևույթը» (անգլ.՝ «the bystander effect»[101]).

«Չեմ խառնվում իրանց կռիվների մեջ»[102]*:*

Նշված ակտորներից ոչ մեկը, փաստորեն, ֆունկցիոնալ չէ բռնությանը դիմադրելու գործընթացում. իրենց ներկայությունը կամ տեղյակությունը բռնության փաստից կա՛մ որևէ գործողության չի մղում, կա՛մ ավելին՝ հավելյալ «պարարտ հող» է ստեղծում բռնության օբյեկտների հետագա պիտակավորման և թիրախավորման համար: Նման իրավիճակում հնարավոր է լինում եզրակացնել, որ դիմադրություն 2-ի տեսակներին չտիրապետող և բռնության ենթարկվող աշակերտը դիմադրություն 2-ի մշակույթի բացակայության պայմաններում գործող հանրության մեջ գտնվում է տոտալ միայնակության և խոցելիության պայմաններում:

Արձագանքի մեխանիզմներն ընդհանուր առմամբ թեպետ կարող են ֆունկցիոնալ լինել բռնության ենթարկվող աշակերտի համար և գոնե ժամանակավորապես կանխել նրա նկատմամբ կիրառվող բռնությունը, սակայն դրանք **անխուսափելիորեն վերարտադրում են դպրոցում բռնության մշակույթը և չեն լուծում խնդիրը համակարգային տեսանկյունից**:

Հետազոտության բացահայտումները բավարար չեն լիովին գնահատելու համար բռնության դրսևորումների հոգեբա-

100. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 10-րդ դասարանի աշակերտ:

101. Հասանելի է՝ https://en.wikipedia.org/wiki/Bystander_effect [դիտվել է 29.04.2020]:

102. Հայկ Սմբատյան, ԴԱՆ, Երևան, 2019, 7-րդ դասարանի աշակերտուհի:

նական և թաքնված պատճառները և կարևոր ու արդիական դաշտ են ստեղծում հետագա ուսումնասիրությունների և բռնության հիմնախնդրին համակարգային մոտեցում ցուցաբերելու համար: Դուրս բերված փուլային մոդելը բռնության գործընթացի խորքային վերլուծությամբ կոնկրետ աշխատանքային տարածություններ է ընդգծում և հուշում է հիմնախնդրի հետ աշխատելու որոշակի մեխանիզմների մասին:

ԱՄՓՈՓԻՉ ՄՏՔԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության բացահայտումները և դրանց վերլուծությունը հնարավորություն են տալիս գալ մի շարք եզրահանգումների: Դրանցից յուրաքանչյուրի հետագա հասցեագրման նպատակով ձևակերպվել են առաջարկներ և նշվել, թե դրանք հատկապես ո՛ր օղակների պատասխանատվության շրջանակներում են տեղավորվում: Առաջարկների փաթեթի կիրառականությունն ապահովելու նպատակով մշակվել է բռնության կանխարգելման ուղեցույց, որը ներկայացված է սույն հետազոտության վերջում:

Ստորև ներկայացվող աղյուսակն ամփոփում է հետազոտության եզրահանգումները և նախանշում է բռնության կանխարգելման շուրջ առաջարկություններն ու դրանց հասցեատերերին:

Եզրահանգում	Առաջարկներ	Պատասխանատու օղակներ
1. Դպրոցական բռնության հիմքերը գրեթե լիովին համընկնում են քրեական ենթամշակույթի բարքերին:	Պետական մակարդակում որդեգրել գողական մշակույթի քրեականացման քաղաքականություն՝ առաջարկելով հասարակությունում, այդ թվում՝ կրթական հաստատություններում հարցերի լուծման այլընտրանքային ռազմավարություններ[103]: Ընդունել և ներդնել դպրոցներում բոլոր տեսակի բռնությունների կանխարգելմանն ուղղված օրենսդրական նախագիծ և գործողությունների համապարփակ ծրագիր:	• ՀՀ Ազգային ժողով • ՀՀ կառավարություն • ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍ) • ՀՀ արդարադատության նախարարություն
2. Դպրոցներում բռնությունն անվերջ ինքնավերարտադրվող սոցիալական գործընթաց է և ոչ պարզապես միջանձնային կոնֆլիկտ:	Խնդրին ցուցաբերել համակարգային մոտեցում և աշխատանքներն ուղղել ոչ միայն բռնության դրսևորումների կանխմանը, այլև պատճառների և նպաստող հանգամանքների վերացմանը:	• ՀՀ ԿԳՄՍ նախարարություն • ՀՀ արդարադատության նախարարություն • Հանրակրթության քաղաքականություն մշակողներ • Քաղաքացիական հասարակություն

103. Հնարավոր այլընտրանքային ռազմավարություններից մեկն առաջարկվում է սույն հետազոտության արդյունքում ներկայացված «Դպրոցական բռնության կանխարգելման ուղեցույց»-ում, որը հավելյալ հրապարակման մաս է կազմում:

3. Բռնության առավել սուր և աշակերտներին հուզող տեսակը հասակակից տղաների փոխհարաբերություններում տեղի ունեցող ֆիզիկական և հոգեբանական բռնությունն է:	Շարունակական աշխատանքներ տանել հանրակրթական դպրոցների մշակույթի, այդ թվում՝ սոցիալական և ֆիզիկական միջավայրի բարեփոխման և մարդու իրավունքների ուսուցման հարցերում:	• ՀՀ ԿԳՄՍ նախարարություն • Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդներ • Դպրոցների տնօրեններ • Մանկավարժական անձնակազմ • Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
4. Բռնության դրսևորումների հիմքում ընկած է պիտակավորման հստակ մեխանիզմ, որը դրսևորվում է արժեզրկող և նվաստացնող բառային պիտակների հսկայական ցանցի կիրառմամբ, և որը ելակետային է բռնության փուլային զարգացման և դրա շրջապտույտային վերարտադրման համար:	Դպրոցներում լիովին բացառել հոգեբանական ճնշումը և վիրավորական պիտակների կիրառումը թե՛ մանկավարժական անձնակազմի, թե՛ աշակերտների կողմից: Դպրոցները դարձնել ապահով միջավայր, որտեղ աշակերտների փոխհարաբերությունների հիմքում փոխվստահության և փոխօգնության արժեքներն են. այս նպատակով հաճախ կազմակերպել արտադասարանային միջոցառումներ, շաբաթօրյակներ, սիմուլյացիոն խաղեր, էքսկուրսիաներ և աշակերտների միջև համերաշխությունը խթանող այլ նախաձեռնություններ:	• Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդներ • Դպրոցների տնօրեններ • Մանկավարժական անձնակազմ • Դասղեկներ • Աշակերտներ • ՔՀԿ-ներ

5. Դպրոցական միջավայրում քրեական բարքերը կրկնող հասկացությունները և արժեհամակարգը հիմնականում ձևավորվում են տարբեր աշակերտների առօրեական՝ բակային և ընտանեկան կենսափորձերի համադրության արդյունքում:	Հանրակրթության ինստիտուտի շրջանակներում զարգացնել առանցքային դերակատարների միջև բազմակողմանի փոխհամագործակցությունը: Խթանել շարունակական երկխոսությունը աշակերտների, ծնողների և դպրոցի անձնակազմի միջև՝ նրանց առավել ներգրավելով աշակերտական առողջ միջավայրի ձևավորմանն ուղղված համատեղ ջանքերում:	• Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդներ • Դպրոցների տնօրեններ • Մանկավարժական անձնակազմ • Ծնողներ • Աշակերտներ • ՔՀԿ-ներ
6. Դպրոցներում ֆիզիկական բռնության ամենասուր դրսևորումները հիմնականում տեղի են ունենում չտեսահսկվող տարածքներում՝ սանհանգույցներում, հանդերձարաններում և դպրոցներին հարակից տարածքներում:	Ֆիզիկական բռնության դրսևորումները մասամբ կանխելու նպատակով հրահանգավորել անվտանգության աշխատակիցներին՝ իրականացնելու պարբերական ստուգումներ սանհանգույցներում և հանդերձարաններում, հատկապես դասամիջոցների ընթացքում: Անվտանգության տեսախցիկներ տեղադրել նաև դպրոցի հարակից արտաշենքային բոլոր տարածքներում: Այս քաղաքականությունը, սակայն, չպիտի ընկալվի որպես «մեծ եղբոր աչքի» հետապնդում. պիտի լինի ժամանակավոր, կամ զուգահեռաբար հարաբերությունների մշակույթի փոփոխման գործողություններ պիտի արվեն: Ի վերջո, երեխաները պիտի ունենան նաև «մեծահասակների» համար անթափանց տարածքներ, սակայն ո՛չ բռնության վարք դրսևորելու համար:	• Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդներ • Դպրոցների տնօրեններ • Դպրոցների անվտանգության աշխատակիցներ

7. Հոգեբանի ինստիտուտը աշակերտների շրջանում չունի վստահություն և փաստացի չի կատարում իր գործառույթները:	Դպրոցներում լուծարել հոգեբանի միանձնյա ինստիտուտը: Փոխարենը ստեղծել բազմամասնագիտական խմբեր՝ կազմված սոցիալական աշխատողից, հոգեբանից, բուժքրոջից և աշակերտ մենթորներից: Դպրոցական մանկավարժներին և դպրոցի կառավարչական հիմնական անձնակազմին աշխատանքի ընդունելիս պարտադիր դարձնել հոգեբանական բարձրագույն կրթությունը կամ հոգեբանության գծով մասնագիտական վերապատրաստում անցած լինելու հանգամանքը: Աշխատանքից ազատել նշված չափանիշներին չհամապատասխանող մանկավարժներին:	• ՀՀ ԿԳՄՍ նախարարություն • Հանրակրթության և բարձրագույն կրթության քաղաքականություն մշակողներ • Հոգեբանի, սոցիալական աշխատողի և մանկավարժի որակավորումներ շնորհող բարձրագույն ուսումնական հաստատություններ • Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդներ/ծնողներ • Դպրոցների տնօրեններ • Աշակերտներ
8. Դասղեկների անտարբերությունը և նրանց՝ աշակերտներին ստորադասող վերաբերմունքը խոչընդոտում են դասղեկների կողմից բռնության կանխարգելմանը նպաստելու հնարավորությունները:	Դպրոցում մանկավարժներին դասղեկ նշանակելիս, հոգեբանական բարձրագույն կրթության կամ մասնագիտական վերապատրաստման պայմանից բացի, սահմանել մանկավարժի էմոցիոնալ ինտելեկտի մակարդակի նվազագույն շեմ[104]: Էմոցիոնալ ինտելեկտը չափող թեստերի արդյունքում սահմանված շեմը չհաղթահարած մանկավարժներին (այդ թվում՝ գործող դասղեկներին) զրկել դասղեկական դասարան ունենալու հնարավորությունից:	• ՀՀ ԿԳՄՍ նախարարություն • Հանրակրթության և բարձրագույն կրթության քաղաքականություն մշակողներ • Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդներ • Դպրոցների տնօրեններ • ՔՀԿ-ներ

104. Էմոցիոնալ ինտելեկտի չափման գաղափարն առաջացել է կրթության սոցիոլոգ Սոնա Բալասանյանի հետ անձնական հաղորդակցության արդյունքում. նոյեմբեր, 2019 թ.:

9. Բռնության կանխարգելման հարցում աշակերտները չեն տեսնում ո՛չ ծնողների, ո՛չ ուսուցիչների, ո՛չ դասղեկների, ո՛չ էլ հոգեբանի ինստիտուտի դերը, ինչի արդյունքում բռնության ենթարկվող աշակերտները հայտնվում են տոտալ միայնակության և խոցելիության պայմաններում:	Աշակերտներին և ծնողներին ներգրավել դպրոցի կառավարման գործընթացներում: Բարձր դասարանների աշակերտներին ներգրավել դասավանդման և մենթորության ծրագրերում՝ մերձեցնելով միջսերնդային շփումներն ու փորձի փոխանակումը: Իրականացնել աշակերտների կարիքների պարբերական գնահատումներ և շարունակական մոնիթորինգներ, իրազեկել նրանց իրենց իրավունքների մասին: Շարունակական ընկերական հանդիպումների միջոցով սերտացնել աշակերտների, դասղեկների և ծնողների միջև արտադպրոցական կապերը և «մարդկայնացնել» նրանց հարաբերությունների բնույթը: Խթանել դասարանների ներսում փոխաջակցության մթնոլորտը՝ կազմակերպելով խաղեր, միջոցառումներ, արշավներ, ուսուցողական-ճանաչողական այցեր, մասնակցություն մշակութային միջոցառումների՝ այդպիսով ուժեղացնելով դասարանների ներքին խմբային դինամիկան և համատեղ ջանքերով խնդիրներ հաղթահարելու հմտությունները:	• Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդներ • Դպրոցների տնօրեններ • Մանկավարժական անձնակազմ • Ծնողներ • Աշակերտներ • ՔՀԿ-ներ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Ի՞նչ ես հասկանում բռնություն ասելով:
2. Բռնության ի՞նչ ձևեր են հանդիպում դպրոցում:

*Քննարկել **ֆիզիկական, հոգեբանական** և **սեռական** բռնության դրսևորումները*

3. Ովքե՞ր են հիմնականում բռնություն կիրառում դպրոցում և ու՞մ նկատմամբ:

*Քննարկել տարբեր սոցիալական խմբերի՝ ըստ **սեռի, արտաքինի, վարքի, բարեկեցության** և այլնի դերը*

4. Քո կարծիքով ինչու՞ են բռնություն կիրառում:
5. Ի՞նչ հարց են լուծում բռնություն կիրառողները, որ չեն կարող լուծել առանց բռնության:
6. Բռնության ի՞նչ դեպքերի մասին ես լսել Ձեր դպրոցում: Ինչպե՞ս են դրանք դրսևորվում և ի՞նչ հետևանքների են բերում:
7. Ի՞նչ կոնկրետ քայլեր են պետք դպրոցներում բռնությունն առհասարակ կանխարգելելու համար: Ո՞վ (ովքեր) է (են) պատասխանատու դրա համար:

*Քննարկել **համադասարանցիների, ուսուցիչների և ծնողների** դերը*

8. Իսկ դու ի՞նչ կարող ես անել բռնությունը կանխարգելելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՆՄՈՒՇ

Ծնողների/խնամակալների համար երեխայի՝ հետազոտությանը մասնակցելու վերաբերյալ

Ստորագրելով ստորև՝ հաստատում եմ, որ՝

- տեղեկացել եմ «Բռնության առաջացման պատճառները և դրա բացառման անհրաժեշտ մեխանիզմները միջնակարգ կրթության ոլորտում» հետազոտությանը երեխայիս մասնակցությանն առնչվող բոլոր ընթացակարգերին.
- տեղյակ եմ, որ երեխայիս մասնակցությունը կամավոր է, և որ նա կարող է չպատասխանել ցանկացած հարցի կամ դադարեցնել հարցազրույցը առանց որևէ պատճառաբանության.
- համաձայն եմ, որ զրույցի ընթացքը ձայնագրվի՝ հետագայում սղագրելու և բարձրաձայնված մտքերը, կարծիքները և գաղափարները բաց չթողնելու նպատակով: Ձայնագրությանը հասանելիություն կունենա միայն հետազոտողը.
- տեղյակ եմ, որ երեխայիս մասնակցությունն անանուն է, և որ տվյալները վերլուծվելու են ընդհանրացված կերպով:

Ծնողի ստորագրությունը _____

ՀԱՎԵԼՅԱԼ ՆՈԹԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Պիտակավորման երկու տեսակները դիտարկելիս նկատելի է, որ առաջինը՝ «սոցիալական» պիտակավորումը, կարող է շատ հեռու լինել գողական բառալեզվից, իսկ երկրորդը՝ «դատականը», առանցքային հասկացություններում նույնանում է: Նույնիսկ երբ չի նույնանում, իմաստային կամ սոցիալական հիերարխիայի առումով դերերը նույնն են, ասենք՝ «դոծիկը» նման է ռուսերեն «տեռպիլա» հասկացությանը, «ղզիկը»՝ «լոխ»-ին, «ժամանակակից»-ը՝ «ֆրայեր»-ին: Պիտակավորման հենց երկրորդ տարբերակն է առաջացնում հաջորդ փուլերի անխուսափելի «կարուսելի» պտույտը, քանի որ հիմնված է «դատելու» վրա, այսինքն՝ այդ հասկացությունները ոչ թե միայն պարզապես բնութագրում են պիտակավորված օբյեկտին («մեծ քիթ ունեցող»), ասենք՝ մականուն տալիս, այլև նրա նկատմամբ վերաբերմունք և արարքներով հիմնավորված վերաբերմունք (շփվել-չշփվել, կիսվել-չկիսվել և այլն) թելադրում: Սա կարևոր է նշել, որովհետև նշանակում է, որ այդ երկու տեսակի պիտակավորումների դեմ քաղաքականությունը գուցե տարբեր միջոցներ և ծրագրեր է պահանջում: Հետաքրքիր է նաև «քյառթու» հասկացությունը[105], քանի որ սրանով հալածանքի սուբյեկտն ինքն իրեն չի նշում, այլ նշում են նրանք, ովքեր համարում են, որ իրենք այդ դասին չեն պատկանում, այսինքն՝ սա ինքնին վիրավորական պիտակ է: Այն կարող է կիրառվել նաև հալածանքի սուբյեկտ չհանդիսացողի նկատմամբ, իսկ երբ կիրառվում է սուբյեկտի նկատմամբ, «այլընտրանքային պիտակավորման» գործառույթ ունի: Այս մեխանիզմը նույնպես կարևոր է հասկանալ, քանի որ պիտակավորումից խուսափելու կամ

105. Գաբրիելյան, Ա. և Նիկողոսյան, Ա. (2017), Քյառթուի կերպարը որպես անհանդուրժողականության ներկայացման միջոց արդի հայ արձակում: Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոլյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.) (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ: Երևան, ԵՀՀ, էջեր 201-223: Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]:

«դուրս գալու» տակտիկաներից մեկը հենց «այլընտրանքային հասարակական կարծիք» ստեղծելն ու ամրապնդելը կարող է լինել: Հենց այդ՝ «այլընտրանքային հասարակական կարծիքի» արտահայտման ձևերի մասին է խոսվում սույն գրքի նախաբանում նույնպես:

Չմոռանանք, սակայն (և սա քննարկված է սույն ժողովածուի մեկ այլ հետազոտությունում՝ ընտանեկան բռնության վերաբերյալ), որ ընտանիքում ճնշման (ներառյալ բռնության) ենթարկվող երեխան կարող է և՛ բռնություն տարածող լինել, և՛, ընդհակառակը, դառնալ հավելյալ (դպրոցական և այլն) բռնության զոհ: Նաև դպրոցական բռնություն իրագործողները փորձ են հավաքում, և ոմանք գալիս են եզրակացության, որ նախկին վարքը սխալ էր, քանի որ իրենք էլ են տուժել դրանից, կամ խիղճն է խայթում (հասունանում են): Չէ՞ որ միջին դպրոցի բռնության մթնոլորտը թելադրված է պատրաստվածության իսպառ բացակայությամբ և կենսափորձ հավաքելու գործոնով: Ավագ դպրոցում այն փոխվում է հետևյալ տարբերակներով. ա) նշածս՝ հասունանում են. բ) ֆիզիկական բռնությունը և «էժան» ծաղրը փոխարինվում են կառուցվածքայինով՝ սոցիալ-տնտեսական տարբերությունների ընդգծմամբ այնպես, որ «հարուստներն» ու «աղքատները» պարզապես բևեռանում են և դադարում իրար հետ հաճախ ինտերակցիաների մեջ մտնել. գ) նույն կղզյակացման պրոցեսը մեկընդմիշտ փչացած հարաբերությունների պատճառով. եթե սուբյեկտի աչքին շատ չես երևում, հալածանք էլ քիչ է լինում. նաև խմբի ենթախմբերի միջև սոլիդարություն է լինում, և բոլորով մեկին հարաբերությունը դառնում է «մի խումբ մյուսի դեմ» հարաբերություն, ինչում ավելի դժվար է միանշանակ հաղթող լինել. դ) սոլիդարության արժեքը հասկանալու պատճառով, նաև ավելի հավաքական իմաստով. օրինակ՝ «մեր դասարանում որոշվեց, որ պիտի միասնական լինենք, որ մյուս դասարաններին տփենք, ու մեր մեջ ընդհարումները շատ քչացան»: Իհարկե, սա ուժեղ խմբի բարք է, թույլ խմբի դեպքում խմբի

թույլ անդամին, եթե նրան դրսից են նեղացրել, օգնության չեն գա, «կփռեն պարանին», որ չորանա:

Բռնության անցումն «ուղղակիից» «անուղղակիի» շոշափում է մի խորքային փիլիսոփայական հարց. որքանով է պատկանելությունն ինքնության մաս. եթե սա իմ ձեռքն է, իսկ սա իմ գրիչն է, որքանով է իմ գրիչն ավելի հեռու իմ ինքնությունից, քան իմ ձեռքը: Մարդուն պատկանող իրերի հետ հաշվեհարդարը (շա՜տ տարածված) փաստորեն էլի (Գուլագից սկսած՝ բլատնոյների և մալոլետկաների վարքից) գլխավոր ռեֆլեքսներից մեկի՝ պատկանելության, իսկ այդպիսով՝ ինքնության պաշտպանության դեմ ընդվզում է (ինչպես որ բոլշևիզմն էր): Բայց սա ռեֆլեքս է, ոչ թե բնազդ, սոցիալական ռեֆլեքս, այսինքն՝ մարդը, ի վերջո, կարող է յոլա գնալ առանց իրեն պատկանող իրերի՝ բացի սեփական մարմնից: Սա անվտանգության համար կուտակման ռեֆլեքս է (շոր, կոշիկ, տանիք, ուտելիք և այն պատրաստելու սարք և այլն): Այսպիսով՝ այս դեպքում անցում է կատարվում ուղղակի ֆիզիկական/հոգեբանական բռնությունից դեպի նաև սիմվոլիկ բռնություն, և այստեղ սոցիալական շրջապատի ներկայությունը՝ իմանալը, որ սիմվոլիկ բռնության հենց ա՛յս «օբյեկտի» իրերն են բռնության ենթարկվում, շատ կարևոր է: Իսկ եթե ոչ, եթե թաքուն է, ապա ավելի շուտ գողության նման է: Պետք է հաշվի առնել նաև, որ ընչազրկելը հաճախ պրոյեկտման դեպք է. ես զրկված եմ եղել (կամ ընտանիքս և այլն), հիմա էլ քեզ եմ զրկում, ինձ վնաս են հասցրել, հիմա էլ քեզ եմ վնաս հասցնում: Սա տարածված է ավելի շատ «հավասարների», քան «գերակշիռ» և «ստորակշիռ» հատկանիշներ ունեցողների միջև:

Բռնության ծիսական դրսևորումները, ինչպես «ռազբիրատը» կամ «կանցավիկությունը», «ստիպված վայրէջք» են, օֆիցիալ պաշտոնական մշակույթի՝ կոնֆլիկտները լուծելու անկարողության պայմաններում, նպատակը՝ ինչ-որ կերպ «կարգավորել» խնդիրը և, եթե հնարավոր է, կանխել կամ

թույլ չտալ միանգամից անցումը ֆիզիկական բռնության: Սերտորեն կապված լինելով պիտակավորման «դատական» շերտին և փուլին՝ «ճշտի վերսուս սխալի» հարցին, ինչպես նաև հարազատորեն կապված լինելով քրեական մշակույթի որդեգրած բարքերին՝ հարցեր լուծելու, դրանք, այնուամենայնիվ, հնարավորություն են տալիս խուսափելու ֆիզիկական բռնությունից, սակայն, մյուս կողմից, ամրապնդում են քրեական մշակույթը, բռնության մթնոլորտը, դրա արժեքային ընդունումը կամ անխուսափելիության գիտակցումը և հասարակության անդամների մեջ թևածող այն կարծիքը, որ «պաշտոնական» համակարգերն անկարող են կոնֆլիկտների լուծման նույնքան համարժեք և էֆեկտիվ միջոցներ առաջարկել (տե՛ս նաև սույն ժողովածուի առաջին հոդվածը):

Հենց «ռազբիրատի» ժանրի վերափոխումը կոնֆլիկտի քննության այլ տեսակների՝ նույնիսկ եթե ոչ պաշտոնական, ապա տվյալ համայնքի «լուսավոր» գոտում գտնվող, այն հավելյալ խնդիրներից է, որ պիտի լուծի դիմադրություն 2-ը (տե՛ս ստորև): Հակամշակույթը կամ երկրորդ՝ գաղտնի մշակույթը պիտի վերափոխվի առաջին և համապարփակ, անհակասական մշակույթի, և պիտի փոխվի «ճշտի ու սխալի» հարցերի էությունը, ինչպես նաև դրանք որոշելու ծեսերի ձևը: Սա նաև սերտորեն կապված է «գործ տալը» բացառելու մշակույթի վերափոխման հետ:

Դիմադրություն 1-ի ձևերից տարածված և հաջող մի տարբերակ հայտնի է և առաջնային շատ իրադրություններում՝ պատերազմից մինչև բանտ, մինչև բանակային հարաբերություններ կամ պարզապես հասարակական հարաբերություններ: Այն նաև հիմքն է քրեական մշակույթի բոլոր հնարավոր դրսևորումների, և կարելի է կարճ բնութագրել որպես «թայֆայականություն»: Դու ունես քո ոհմակը, և մյուս ոհմակը քեզ ձեռք չի տալիս, քանի որ դա կնշանակի ձեռք տալ ողջ քո ոհմակին (հնից եկող սրա տարբերա-

կը «արյան վրեժ»-ն է)[106]: Կոլեկտիվ պատասխանատվության և «անվտանգության դիլեմայի» կամ «ռեալպոլիտիկի» (Հոբսյան՝ բոլորի պատերազմը բոլորի դեմ այս անարխիկ աշխարհում) այս արտահայտումը նրբորեն տարբերվում է նույն սոցիալական ցանցին հենվելու իդեալական տարբերակից՝ դիմադրություն 2-ից: Եթե դիմադրություն 1-ի արժեքային հիմքը «եսասիրական է»՝ «թող ինձ ձեռք չտան (թե չէ ես ձեռք կտամ), իսկ մնացածը՝ գրողի ծոցը», ապա դիմադրություն 2-ի դեպքում արժեքային հիմքը «ալտրուիստական» է կամ հասարակության «առողջ ուժերի» վրա հենվելու միջոցով է իրացվում. «Ձեռք չեք տալու ո՛չ ինձ, ո՛չ որևէ մեկին, քանի որ ես ու իմ «շրջապատը» ստեղծում և պահպանում ենք այդ արժեքային համակարգը, որտեղ բռնությունը բացառված է, և հաճելի ու շահավետ է լինել մեր շրջապատի մաս, այլ ոչ թե դրան հակադրվել»:

Սա, իհարկե, հերիք չէ բռնությունը կանխարգելելու համար, և մեր հասարակության իրավիճակի համար բնութագրական է, որ ռեսպոնդենտներն այս տարբերակի իրացման ձևերի մասին (գրեթե) չեն խոսել: Սակայն այսպիսի արժեքային իդեալիստական դիրքորոշումը, գումարած սոցիալական

106. «Արմենիա 3.0» (տե՛ս Ter-Gabrielyan, G. (2020). Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. Yerevan: EPF. Available at: https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia [Accessed 18.07.2020]) և սույն ժողովածուի «Վերջաբանի փոխարեն» հոդվածում քննարկվում է մեր տարածաշրջանում արմատավորված քրեական հակամշակույթը որպես «վերից» պարտադրված մշակույթի դեմ դիմադրության արդյունք (միահյուսված տեղական «վերնակուլյար» մշակույթների կողմից իրագործվող դիմադրությանը), սնուցված երկու պատմական գործընթացներով՝ Ռուսական կայսրության կողմից այլ մշակույթների գրավումն ու իր պետական-ազգային մշակույթի պարտադրումը և հետո՝ խորհրդային կարգերն ու գուլագային մշակույթի արմատավորումը: Որքան էլ ավելի առաջադեմ կամ «արդար» լինեին «վերից» եկող օրենքները, պրոցեդուրաներն ու բարքերը, լինելով «վերից» պարտադրված՝ դրանք դիմադրություն էին առաջացնում, իսկ դիմադրողներն օգտվում են բոլոր հնարավոր համագործակցություններից, այդպիսով տեղական մշակույթները սնուցում էին գողականը և հակառակը: Դա նաև արտահայտվել է «բլատնոյ» երգային ֆոնդում, գիտության նկատմամբ վերաբերմունքում և այլն. տե՛ս նաև սույն ժողովածուի «Քրեական բարքերի, լեզվի և վարքագծի ազդեցությունը սոցիալական հարաբերություններում բռնության դրսևորման վրա» հետազոտությունը, հատկապես հղում 51 (էջ 77):

ցանցը, որը նույն արժեքն է պաշտպանում, գումարած մի քանի այլ հանգամանքներ, կիրառուկներ և հմտություններ, ազդեցություն կունենան բռնության համակարգային դրսևորումներն արմատախիլ անելու շանսերը մեծացնելու վրա (իհարկե, բռնության առանձին, ոչ համակարգային դեպքերը կմնան հնարավոր, բայց դա արդեն էական չի լինի ընդհանուր պատկերի համար): Նշենք նաև մեկ այլ տարբերություն «թայֆայի» կամ «մաֆիայի» և «սոլիդար» սոցիալական ցանցի միջև: «Թայֆայում» նույն «գայլային» օրենքները պահպանվում են, այսինքն՝ այսօր դու ունես քո շրջապատը, իսկ վաղը ներսում խժդժություն է լինում, և դու այն կորցրիր. քո թայֆայում, ինչպես նաև մեծ հասարակության մեջ դու միայնակ ես, և միայն քո անձնական հարգանքը, ուժը, բռնության պատրաստ լինելն է, որ քեզ ապահովում է քո թայֆայի (ժամանակավոր) աջակցությունը: Հիշենք «Մաուգլիից» Աքելայի ծերանալու դրվագը: Այստեղ էր, որ Մաուգլին՝ որպես մարդ, նոր «կտրվածք» մտցրեց իրադրության մեջ՝ հայտարարելով, որ անկախ նրանից՝ Աքելան ծերացել է և արդեն ուժ չունի, թե ոչ, նա կմնա անձեռնմխելի և հարգանքով շրջապատված: Այսպիսով, սեփական-եսասիրական և, ի վերջո՝ ֆիզիկական (կենդանական, անասնական) առավելությունից անցումը դեպ արժեքային-սկզբունքային-«աննյութ» արժեք (բարի համբավի հեղինակություն, հարգանք նախկին վաստակի հանդեպ)՝ ոհմակը դարձրեց «սոլիդար» հանրույթ՝ գայլերի «համայնք», և դա թույլ տվեց հետագայում նրանց հաջողության հասնել իրենց այլ նպատակներում, քանի որ որքան կարելի է երկար առանձին-առանձին գոյատևելուց (և միավորվելուց լոկ ժամանակավորապես՝ վտանգի առջև) արժեքային սանդղակը բարձրացավ մինչև «կոլեկտիվ նպատակներ դնել և դրանց հասնել», և Մաուգլին կարողացավ, ներգրավելով նաև Կաային, Բալուին, Բաղիրային և այլոց, ռազմավարորեն կազմակերպել «կարմիր շների» դեմ պատերազմը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Անտոնյան, Մ., Գմյուր-Կարապետյան, Ա., Դուրյան, Ն., Խաչատրյան, Ա., Հովհաննիսյան, Ա. և Սարգսյան, Ս. (2009), Երեխաների պաշտպանություն. ուսումնա-օժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար։ Երևան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF) և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (COAF)։ Հասանելի է՝ https://bit.ly/30KcNdY [դիտվել է 29.08.2019]։

2. Անտոնյան, Մ., Կարապետյան, Տ. (2019), Երեխանե-րի պաշտպանությունը բռնություններից. Ձեռնարկ վերապատրաստողների և երեխաների պաշտպանության մասնագետների համար։ Երևան, էջ 6։ Հասանելի է՝ https://uni.cf/2MnUeJ6 [դիտվել է 29.08.2019]։

3. Բաբլոյան, Ա., Հարությունյան, Բ., Հարությունյան, Տ. և Քեշիշյան, Հ. (2014), Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում. հետազոտության արդյունքների վերլուծության հաշվետվություն։ Երևան, Լուսաբաց, էջեր 30-41։ Հասանելի https://bit.ly/2xianKc [դիտվել է 29.04.2020]։

4. Գաբրիելյան, Ա. և Նիկողոսյան, Ա. (2017), Քյառթուի կերպարը որպես անհանդուրժողականության ներ-կայացման միջոց արդի հայ արձակում։ Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոլյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգար-յան, Ա. (խմբ.) (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ։ Երևան, ԵՀՀ, էջեր 201-223։ Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifes-tations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]։

5. Թադևոսյան Գ. (2006), Որակական սոցիալական հետազոտություններ։ Տեսություն, մեթոդաբանություն

և մեթոդ. Ուսումնական ձեռնարկ։ Երևան, Երևանի համալս. հրատ.։

6. ՀՀ Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգ (2014)։ Հասանելի է՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/12/51-2_1ardz.pdf [դիտվել է 29.08.2019]։

7. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան (2017), ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում. իրավական վերլուծություն։ Երևան։ Հասանելի է՝ https://uni.cf/2ZyMUjX [դիտվել է 29.04.2020]։

8. ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին (1996)։ Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69115 [դիտվել է 29.08.2019]։

9. Հովակիմյան, Գ. և Վիրապյան, Է. (2017), Անչափահասների մասնակցությամբ գործերով մասնագիտացված քննիչների պատրաստման մոդուլներ։ Մոդուլ 5։ Սոցիալական աջակցության ոլորտ։ Երևան։ Հասանելի է՝ http://investigative.am/news/view/modul_5.html [դիտվել է 29.08.2019]։

10. Սարգսյան, Ս., Մելքումովա, Մ., Մովսեսյան, Ե. և Բաբլոյան, Ա. (2016), Հայաստանի դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի 2013-2014 թթ. ազգային հետազոտության վերլուծություն։ Երևան, «Արաբկիր» բժշկական համալիրի Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ, էջ 36, 48։ Հասանելի է՝ http://arabkirjmc.am/wp-content/uploads/2016/05/Armenian-HBSC-2016.pdf [դիտվել է 16.07.2020]։

11. Glaser, B. G. & Strauss, A. L. (1967). The Discovery of Grounded Theory. Strategies for Qualitative Research. Chicago: Aldine.

12. Human Rights Watch (2017). Human Rights Watch Submission on Armenia to the Committee on the Rights of Persons with Disabilities. Available at: https://www.hrw.org/news/2017/03/01/human-rights-watch-submission-armenia-committee-rights-persons-disabilities [accessed 16.07.2020].

13. Rigby, K. (2003). Addressing Bullying in Schools: Theory and Practice. Canberra: Australian Institute of Criminology.

14. Rigby, K. (2007). Bullying in Schools: And what to Do about it. Camberwell: ACER Press.

15. Ter-Gabrielyan, G. (2020). Armenia 3.0. Understanding 20th Century Armenia, Yerevan, EPF. Available at: https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia [Accessed 18.07.2020].

16. UNESCO (2019). Behind the numbers: Ending school violence and bullying. Paris: UNESCO.

17. Weber, M. (1991). Max Weber: Selections in Translation (W. Runciman, Ed.; E. Matthews, Trans.). Cambridge: Cambridge University Press.

18. WHO (2002). World report on violence and health: summary. Geneva: World Health Organization. Available at: https://www.who.int/violence_injury_prevention/violence/world_report/en/summary_en.pdf [Accessed 29.04.2020].

19. Wikipedia (2020). Bystander effect. Available at: https://en.wikipedia.org/wiki/Bystander_effect [Accessed 18.07.2020].

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՔՐԵԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻ ԵՎ ՎԱՐՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Պետրոսյան, Յուրի Ավագյան

ԱՌԱՋԱԲԱՆ

«Կոնստանտին Սիմոնովը մի առիթով նշել է, որ եթե պատերազմից ոչ շատ առաջ վթարվեր ինքնաթիռ, որում լինեին Կարմիր բանակի 1937-1938 թթ. բռնաճնշված հրամանատարները, ապա թեև մենք պատերազմը կսկսեինք առանց Տուխաչևսկու, առանց Ուբորևիչի և այլոց, սակայն արդյունքներն ավելի քիչ ողբերգական կլինեին. ողջ մնացածները վարակված չէին լինի այն վախով, որը նրանց հնարավորություն չէր տալիս համարձակորեն ինքնուրույն որոշումներ կայացնել»[107]:

Բռնության դրսևորումների վերաբերյալ հետազոտությունների այս շարքում ներկայացվող սույն հետազոտությունն առանձնակի տեղ ունի: Այն քննարկում է ներանձնային հարաբերություններից ծագող բռնությունը բանակում: Սա դժվար թեմա է: Մի կողմից, տարիներ շարունակ այն արծարծվում է ամբողջ հասարակության կողմից: Մյուս կողմից, հաշվի առնելով բանակի առանձնահատուկ դերը Հայաստանի և Արցախի պաշտպանության և անվտանգության

107. Кобрин, В. Б. (1992), Кому ты опасен, историк? URL: http://vivovoco.astronet.ru/VV/BOOKS/DANGER/PART_3.HTM [последний просмотр: 16.07.2020].

գործում, այսպիսի դիսկուրսները տարիներ շարունակ պաշտոնապես չեն խրախուսվել ո՛չ բանակի ղեկավարության, ո՛չ էլ այն քաղաքացիների կողմից, որոնք համարում են, որ ներքին թուլությունն ի ցույց դնելը վտանգավոր է: Հասարակական և մարդու իրավունքների պաշտպան փոքրաթիվ կազմակերպություններն են տարիներ շարունակ անդրադարձել և շարունակում են անդրադառնալ այս թեմային, ինչպես, օրինակ, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» և այլն: Այս նվիրյալ կազմակերպությունների և անձանց հիմնական աշխատանքն ուղղված է այդպիսի դեպքերի բացահայտմանը և իրավակիրառ պրակտիկայում դրանց ճիշտ անդրադարձ կատարելուն:

2018 թ. ոչ բռնի, թավշյա հեղափոխությունը նախադրյալներ ստեղծեց ավելի համապարփակ և համակարգային մոտեցում ցուցաբերելու այս հարցերի նկատմամբ: Պետությունն ամենաբարձր մակարդակով որդեգրեց բռնության բացասման միջոլորտային քաղաքականությունը որպես իր կարևոր առաջնահերթություններից մեկը: Դրանով է պայմանավորված, որ սույն որակական վերլուծությունը հրապարակային քննարկման նյութ է դարձնում այս հարցերը (որոնք առանց այդ էլ լայնորեն հայտնի են, միայն թե պաշտոնապես հաճախ չեն արձանագրվում և դարձել են գրեթե «նորմալ» նաև պաշտոնական տեսակետից) ոչ միայն ռեակտիվ՝ եղած դեպքերին անդրադառնալու, այլև պրոակտիվ՝ ռազմավարորեն դրանց պատճառները վեր հանելու և հասցեագրելու, քաղաքականություն մշակելու նպատակով:

Վերլուծությունն իրականացրել են բանակում ծառայած երիտասարդներ, որոնք նաև առանցքային դեր են կատարել 2018 թ. ապրիլյան հեղափոխության ժամանակ երիտասարդների և ուսանողների համախմբման հարցում և շարունակում են մնալ Հայաստանում երիտասարդներին և կրթությանն առնչվող քաղաքականությունների փոփոխման առաջամարտիկ-

ներ: Այս հետազոտությունը, և ոչ թե բանակում կատարվողը կոծկելը և բացասելը, իրական հայրենասիրության և սեփական երկրի ճակատագրի ու ապագայի վերաբերյալ սրտացավ և գործնական վերաբերմունքի դրսևորում է: Ուրախ կլինեմ, եթե այն հիմք դառնա ոլորտային քաղաքականությունների մեջ խորքային փոփոխություններ անելու համար և, միավորվելով սույն գրքի այլ հետազոտությունների արդյունքներին՝ օգնի բռնության դեմ պայքարը հաջողությամբ առաջ տանելու պետական գործին:

Գլխավոր խմբագիր

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊՆ- ՀՀ պաշտպանության նախարարություն

ՌՈ – ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն

ՀՀ ԶՈՒ ՆԾԿ – ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք

ԱՀՏԱԳՏ – Անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը, ըստ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մասի, ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը: ՀՀ-ում այս ինստիտուտի դերը և նրան վերապահված պատասխանատվությունն էլ ավելի են արժևորվում տարածաշրջանային առկա կոնֆլիկտների համատեքստում: 1994-ից ի վեր արցախյան հիմնախնդիրը բանակցությունների փուլում է, իսկ բանակցություններին զուգահեռ գրանցվում են հրադադարի խախտման բազմաթիվ դեպքեր: Մշտապես լարված իրավիճակի հետևանքով լինում են մահեր և հրազենային վիրավորումներ: Այս իրավիճակի վերաբերյալ որոշակի պատկերացում կարող ենք կազմել մեզ հասանելի վիճակագրությունից[108]:

ՀՀ-ում զինվորական ժամկետային ծառայությունը պարտադիր է. արական սեռի բոլոր քաղաքացիները 18 տարին լրանալուց հետո ենթակա են զինվորական ծառայության[109]՝ բացառությամբ տարկետման ենթակա՝ առողջական վիճակի պատճառով և ընտանեկան պայմաններից ելնելով, օրենքով նախատեսված այլ եզակի դեպքերի: Հայկական հասարակությունում քիչ են այն ընտանիքները, որոնք չունեն ծառայության ենթակա կամ արդեն իսկ ծառայություն անցնող բարեկամներ և մտերիմներ: Նաև այս պատճառով է, որ ՀՀ-ում բանակի, բանակային կյանքի վերաբերյալ յուրաքանչյուր դեպք, իրադարձություն, անկախ նրանից՝ բացասական է թե դրական, հանրության շրջանում մեծ արձագանք է ստանում: «Բանակ-հասարակություն» փոխհարաբերություններում առկա է հուզական մեծ բաղադրիչ, իսկ դեռևս չլուծված

108. «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» նախաձեռնություն: Հասանելի է՝ https://bit.ly/2YuOG2G [դիտվել է 16.07.2020]:

109. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, (2017) հոդված 19, մաս 1: Հասանելի է. https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633 [դիտվել է 16.07.2020]:

արցախյան հակամարտությունը, հրադադարի խախտման հետևանքով մահացության դեպքերը, սահմանային լարված շփումները է՛լ ավելի են մեծացնում հասարակության զգայունությունը։ Տվյալ իրավիճակը «նպաստավոր» պայմաններ է ստեղծում, որպեսզի քաղաքական տարբեր ուժեր պոպուլիզմի և պրոպագանդայի միջոցով փորձեն որոշակի դիվիդենտներ կուտակել[110]։ Այս ամենի հետևանքով էլ բանակային կյանքի խնդիրներին անդրադարձող անհատներն ու կազմակերպությունները հաճախ թիրախավորվում են և արժանանում կոշտ քննադատությունների, ինչի հետևանքով էլ ավելի է դժվարանում բանակային բարեփոխումների թեմային անդրադառնալը և բանակային կյանքում առկա խնդիրները բարձրաձայնելը։ Անհրաժեշտ է օգտագործել հետհեղափոխական ներկայիս իրավիճակը՝ լեգիտիմ և համագործակցային իշխանության առկայությունը, և երկխոսության սկզբունքով մշակել և իրականացնել հետազոտահեն բարեփոխումներ։

Ինչպես ցանկացած փակ կամ կիսափակ համակարգում, բանակում ևս ներքին ինքնակարգավորման մեխանիզմների կարիք կա, մինչդեռ ինստիտուտների ոչ արդյունավետ աշխատանքի պատճառով շատ խնդիրներ հաճախ կարգավորվում են ոչ ֆորմալ հարաբերությունների կանոնների համաձայն։ Իսկ այս համատեքստում անհանգստացնողն այն հանգամանքն է, որ շատ դեպքերում առկա բացը լրացվում է քրեական ենթամշակույթի կանոններով։

Բանակում մահվան ելքով դեպքերը պայմանավորված են ոչ միայն հրադադարի ռեժիմի խախտումներով, այլև հիվանդություններով, ինքնասպանություններով և կանոնադրական կարգի խախտումներ փաստող այլ դրսևորումներով։ Նման դեպքերի պատճառ կարող են դառնալ միջանձնային հարաբերությունների վերաբերյալ ֆորմալ ընթացակարգերի

110. Պետրոսյան, Դ. (2017), Պոպուլիզմը և պրոպագանդան ՀՀԿ 2017 թ. խորհրդարանական և Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզարշավներում։ Երևան (չհրատարակված)։

բացերը, դրանց չհետևելը կամ հարաբերությունները քրեական բարքերի «օրենքներով» կարգավորելը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել առկա վիճակագրությանը[111]:

2019 թ. մահացության դեպքերի պաշտոնական վիճակագրությունը այսպիսին է.

1. Դժբախտ պատահար – 16
2. Ինքնասպանություն – 10
3. Առողջական խնդիրներ – 8
4. Սպանություն – 5
5. Հրադադարի ռեժիմի խախտում – 4
6. Անփութություն – 1

Համեմատության համար մեջբերենք 2020 թվականի 1,5 ամիսների ընթացքում գրանցված դեպքերի պաշտոնական վիճակագրությունը.

1. Ինքնասպանություն – 3
2. Անփութություն, անգործություն – 1
3. Առողջական խնդիրներ – 1
4. Դժբախտ պատահարներ – 5
5. Այլ – 1

2019-2020 թվականների պաշտոնական վիճակագրությունների համեմատությունից երևում է, որ 2020 թվականին սպանության ելքով դեպքերը նվազելու միտում չունեն: 1994 թվականից ի վեր խաղաղ պայմաններում մահվան ելքով դեպքերի միայն պաշտոնական վիճակագրությունից կարելի է եզրակացնել, որ ներանձնային հարաբերությունների կարգավորման մեխանիզմներում և ինստիտուտներում առկա են բացեր, որոնք ինքնաբերաբար լրացվում են ոչ ֆոր-

111. ՀՀ զինված ուժերում խաղաղ պայմաններում մահվան ելքով միջադեպերի վիճակագրություն: Հասանելի է՝ https://safesoldiers.am/ [դիտվել է 16.07.2020]:

մալ մեխանիզմներով և ինստիտուտներով: Այդպիսի ինստիտուտների և մեխանիզմների շարքին են դասվում քրեական ենթամշակույթից բխող ներանձնային հարաբերությունների կարգավորման մոդելները:

Քրեական ենթամշակույթն իր դրսևորումներն է ունենում հանրակրթության ոլորտից մինչև բանակային կյանք և յուրաքանչյուր միջավայրում փոխակերպվում է: Սույն ուսումնասիրության մեջ արտացոլված են բանակային կյանքում առկա ներանձնային հարաբերությունների ոչ ֆորմալ ձևերը, ինչպես նաև փորձ է արվել ներկայացնելու այդ ոչ ֆորմալ հարաբերությունների կառուցվածքը: Այս ուսումնասիրության շրջանակներում քննվելու են սպա-զինվոր, զինվոր-զինվոր փոխհարաբերություններում առկա արատավոր բարքերն ու ոչ նորմատիվային վարքային մոդելները:

Ուսումնասիրությունը նախատեսված է լայն լսարանի համար, այդ իսկ պատճառով նյութը ներկայացված է հնարավորինս պարզ և մատչելի: Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ՀՀ բանակի հետ կապված հետազոտություններ իրականացնող, օրենսդրական նախաձեռնություններ մշակող և ՀՀ բանակում բարեփոխումներով մտահոգված անձանց, որոշումներ կայացնող պաշտոնյաներին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն ուսումնասիրության նպատակն է նկարագրել բանակային կյանքում առկա քրեական բարքերից և ենթամշակույթից բխող դրսևորումները, ինչպես նաև, վեր հանելով բանակային կյանքում կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառները, բռնությանը նպաստող բարքերն ու կարծրատիպերը, առաջարկել ռազմավարական լուծումներ և ուղեցույց համապատասխան մարմիններին և զինծառայության ենթակա քաղաքացիներին:

Ուսումնասիրության իրականացման հիմքում դրված են

հետևյալ խնդիրները.

- Պարզել, թե ՀՀ ավագ դպրոցներում դասավանդվող «Ռազմագիտություն» առարկայի դասագրքերը, ռազմական ինստիտուտներում և զորամասերում առկա ուսումնական ձեռնարկները որքանով են ուսուցողական միջանձնային կոնֆլիկտների կանխման և կարգավորման համատեքստում:
- Պարզաբանել բանակային կյանքում առկա բռնության հիմնական որոշ դրսևորումների էությունը:
- Պարզաբանել բանակային կյանքում դե յուրե ամրագրված հարաբերությունների և փաստացի իրավիճակի բախումները:
- Հետազոտել ռազմական գնդերի կառուցվածքներում առկա պաշտոնյաների իրականացրած այն գործողությունները, որոնք ուղղված են բանակում իրավախախտումները և իրավախախտ վարքի դրսևորումները կանխելուն:
- Մշակել վարքային մոդելներ սպաների և ապագա նորակոչիկների համար:

Այս խնդիրները լուծելիս մենք հենվում ենք նախազորակոչային տարիքի արական սեռի ներկայացուցիչների և զորացրված երիտասարդների՝ զինվորական ծառայության մասին ունեցած պատկերացումների, կարծրատիպերի և տաբուների վերաբերյալ մեր հավաքած տվյալների վրա:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ուսումնասիրությունն իրականացվել է բանակում ծառայած հետազոտողների կողմից: Անցկացվել է ֆոկուսխմբային երկու քննարկում Սյունիքի, Տավուշի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի մարզերի և Արցախի Հանրապետության զորամասերում ժամկետային զինծառայություն անցած

արական սեռի ներկայացուցիչների հետ: Քննարկումներին մասնակցել է 23 նախկին զինծառայող: Ֆոկուսխմբային քննարկումներ են իրականացվել նաև Հայաստանի տարբեր մարզերում և Երևանում բնակվող՝ ժամկետային զինծառայություն չանցած 19 երիտասարդի և պատանու հետ: Անհատական հարցազրույցներ են անցկացվել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում կրթություն ստացած, ներկայումս զորացրված 9 սպայի հետ: Այս գործողություններին զուգահեռ իրականացվել են իրավական փաստաթղթերի ուսումնասիրություններ և վերլուծություններ, հաշվի են առնվել թեմային վերաբերող՝ նախկինում կատարված այլ հետազոտություններ: Ինչպես արդեն նշվել է, ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ-ում զինվորական ծառայություն անցած անհատների կողմից: Ուսումնասիրությունն իրականացնողների անձնական փորձառությունը թույլ է տվել և՛ ֆոկուսխմբային քննարկումների, և՛ անհատական հարցազրույցների ժամանակ առաջ քաշել հնարավորինս դիպուկ հարցադրումներ, ինչպես նաև հաստատել այնպիսի միջավայր, որտեղ ռեսպոնդենտները խոսել են անկաշկանդորեն՝ հավատացած լինելով, որ հարցազրուցավարներն ամբողջովին հասկանում և ըմբռնում են բանակային կյանքի միջավայրային առանձնահատկությունները: Սույն ուսումնասիրությունն իրականացնողներն իրենց ծառայության տարիներին ունեցել են սերժանտի կոչում, ուստի և զբաղվել են կազմակերպչական աշխատանքներով, ինչը հնարավորություն է տվել ստանալ բանակային կյանքի, կանոնադրային հարաբերությունների, զինվոր-զինվոր փոխհարաբերություններում կոնֆլիկտների հաղթահարման, և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ հարաբերությունների վերաբերյալ անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ: Արդյունքում առկա փորձը նպաստել է հնարավորինս ճիշտ վերլուծել սույն ուսումնասիրությամբ ստացվող արդյունքները:

Ուսումնասիրությունն իրականացողները, հաշվի առնելով առկա կենսափորձը և գրականությունը, առաջ են քաշել

ելակետային հետևյալ պնդումները՝

- բանակում քրեական վարքի և բռնության դրսևորումները կարող են մեծապես պայմանավորված լինել հասարակության որոշ հատվածների դավանած արժեքներով, մասնավորապես հասարակությունում առկա քրեական բնույթի կարծրատիպերով և տաբուներով.
- սպաների լեզվամտածողությունը և վարքագիծը որոշ դեպքերում կարող են պարունակել քրեական բարքերի տարրեր.
- նախազորակոչային կրթության ընթացքում պատանիներին բավարար չափով չեն ծանոթացնում նորմատիվ վարքային մոդելների օրինակներին.
- բանակում նորմատիվ վարքային մոդելներ կարող են ընկալվել բարձր հեղինակություն ունեցող և քրեական բարքեր կրող անհատների վարքաձևերը.
- կանոնադրային հարաբերություններում հնարավոր է լինեն այնպիսի բացեր, որոնք նպաստեն ներանձնային հարաբերությունները սահմանող և այդ հարաբերություններում կոնֆլիկտները լուծող և կանխարգելող ոչ ֆորմալ մեխանիզմների ամրապնդմանը և տարածմանը:

Բոլոր հարցազրույցները և ֆոկուսխմբային քննարկումները ձայնագրված են:

ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉ. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՆՉԲԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

Հանրակրթություն

Բանակ զորակոչվող տղաներին սպասում են միջավայրային կտրուկ փոփոխություններ: Հարկ է հասկանալ, թե ինչ գործիքակազմ է անհրաժեշտ այդ փոփոխություններն անցնցում և սահուն կերպով կազմակերպելու համար: Այս համատեքստում կարելի է ենթադրել, որ զինծառայության

մեկնելուց առաջ պիտի գործի որոշակի նախապատրաստական հատված, որը հնարավորություն կընձեռի նորակոչիկին հեշտությամբ ադապտացվել միջավայրին և ամբողջապես ընկալել ծառայության պայմաններն ու նպատակները։ Կարելի է ասել, որ գործնականորեն միակ ինստիտուցիոնալ հատվածը, որտեղ կարելի է այդ գործընթացը մասսայականորեն նախաձեռնել, դպրոցն է։ Ընտանեկան աջակցությունը (դաստիարակությունը, մեծահասակների օրինակները) չի կարելի հաշվի չառնել, սակայն հնարավոր չէ դրա վրա հենվել ամբողջ հասարակության մասին խոսելիս։ Նույնը կարելի է ասել միջավայրային այլ ազդեցությունների մասին՝ բակ, փողոց, «շրջապատ» և այլն։

Ամբողջ բանակային ծառայությունն ինքնին, ըստ էության, կրթություն է՝ մարտական պատրաստություն, կրակային պատրաստություն, ռազմական տեղագրություն, կյանքի և միջանձնային հարաբերությունների փորձ և այլն։ Անհրաժեշտ է հասկանալ, թե զինվորական ծառայության ընթացքում տրամադրվող կրթության բովանդակությունը որքանով է համապատասխանում բանակում գոյություն ունեցող մարտահրավերներին՝ քրեական մշակույթ, բռնություն, և որքանով է նպաստում բանակում բարեվարքության, անձնակազմի շրջանում մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքի և հանդուրժողականության ձևավորմանը և ամրապնդմանը։

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի 2008 թ. հրապարակած «Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» աշխատությունում նշված է.[112]

«Ուսուցումը կարևոր դեր է խաղում զինված ուժերում մար-

112. Լին, Յ., Բորն, Հ., Լազարինի, Ս. և Քլեմենթսի, Յ. (2008), Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ։ Երևան, «Ասողիկ», էջ 282։ Հասանելի է՝ https://www.osce.org/files/f/documents/6/7/88572.pdf [դիտվել է 16.07.2020]։

դու իրավունքների պահպանումն ու կիրառումն ապահովելու գործում ինչպես քաղաքացիական բնակչության նկատմամբ, այնպես էլ հենց զինված ուժերի ներսում»։

Համաձայն «Զինվորական ծառայության և զինվորի կարգավիճակի մասին[113]» օրենքի և կառավարության 1999 թ. օգոստոսի 25-ին ընդունված N 535 որոշման[114]՝ աշակերտները հանրակրթական դպրոցում 4 տարի անցնում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան։ Կարիք կա ուսումնասիրելու, թե 4 տարվա ընթացքում առարկան ինչպես է նախապատրաստում պատանիներին ծառայությանը, ինչ գիտելիքներ է հաղորդում ծառայության նպատակների մասին, ինչ է նախատեսում բռնության դրսևորումների նկատմամբ անհադուրժողականություն ձևավորելու և ծանր հետևանքների ներկայացման և կանխման առումով։ Տեսականորեն «Ռազմագիտություն» դասընթացը կարող է իրականացնել բանակը ապաիզոլացնելու կարևորագույն գործառույթը և սահմանել որակյալ ծառայության նշաձողը։

Հայաստանի Հանրապետության «Զինվորական ծառայության և զինվորի կարգավիճակի մասին» օրենքի[115] 4-րդ հոդվածով սահմանվում են զինվորական ծառայության կազմակերպման սկզբունքները և ձևերը, և մի շարք սկզբունքների շարքում նշված են նաև հետևյալները. «1. Զինվորական ծառայության կազմակերպման սկզբունքներն են՝ 5) զինծառայողների իրավունքների և ազատությունների առաջ-

113. «Զինվորական ծառայության և զինվորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (2017)։ Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117633 [դիտվել է 16.07.2020]։

114. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N532 Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կարգը հաստատելու մասին (1999)։ Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7486 [դիտվել է 16.07.2020]։

115. «Զինվորական ծառայության և զինվորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (2017)։ Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117633 [դիտվել է 16.07.2020]։

նահերթությունը. 6) զինծառայողների պատվի և արժանապատվության նկատմամբ հարգանքն ու խտրականության արգելումը»։

Օրենքի այս թելադրանքը կարելի է համարել բռնության դեմ պայքարի անհրաժեշտության գիտակցում։ Սակայն փաստացի պատկերը հասկանալու համար փորձենք համեմատել օրենքով ձևակերպումը, դասագրքերի բովանդակությունը և նախազորակոչային տարիքի երիտասարդների կարծիքները։

Քաղաքացիական կյանքի և բանակային կյանքի միջավայրային տարբերությունն ահռելի է. անհատը, անցնելով ծառայության, նոր միջավայրին հարմարվելու խնդիր ունի։ Այդ գործընթացն իրականացվում է բավականին կտրուկ, քանի որ փոխվում է անհատի միջավայրն արմատապես՝ կենցաղային պայմաններից մինչև միջանձնային հարաբերություններ։ Բանակային կյանքի համակեցության կանոնների վերաբերյալ միշտ չէ, որ պատանիները բավականին տեղեկացված են լինում: Այս համատեքստում կարիք կա այդ անցումը կազմակերպելու մինչզորակոչային փուլում՝ աշակերտներին տրամադրելով անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ նոր միջավայրում ինտեգրվելու համար։ Թվում է, թե հենց «Ռազմագիտություն» առարկան պիտի կատարի այդ գործառույթը:

Ստորև ներկայացնում ենք հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարաններում դասավանդվող «Ռազմագիտություն» առարկայի դասագրքերի բովանդակության ցանկը:

Գիրք 1[116], 8-րդ դասարան

ՀՀ ԶՈՒ և ռազմարվեստի պատմություն, ՀՀ ԶՈՒ համազորային կանոնագրքեր, Մարտավարության հիմունքներ,

116. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Առաքելյան, Վ. և ուրիշներ (2014), Նախնական զինվորական պատրաստություն, հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք (մաս 1)։ Երևան, «Աստղիկ» գրատուն։ Հասանելի է՝ https://fliphtml5.com/fumf/zdpv/basic [դիտվել է 16.07.2020]։

Կրակային պատրաստություն, Շարային պատրաստություն, Ռազմական տեղագրություն, Միջազգային մարդասիրական իրավունք, Անվտանգ կենսագործունեություն, Առաջին բուժօգնության հիմունքներ, ՀՀ ազգային հերոսներ, Արցախյան հերոսներ, Ռազմական տերմինների համառոտ բառացանկ։

Գիրք 2[117], 9-րդ դասարան

ՀՀ ԶՈՒ և ռազմարվեստի պատմություն, ՀՀ ԶՈՒ համազորային կանոնագրքեր, Մարտավարության հիմունքներ, Կրակային պատրաստություն, Շարային պատրաստություն, Ռազմական տեղագրություն, Միջազգային մարդասիրական իրավունք, Անվտանգ կենսագործունեություն, Առաջին բուժօգնության հիմունքներ։

Գիրք 3[118], 10-րդ դասարան

Էջեր հայ ռազմարվեստի պատմությունից, Մարտավարության հիմունքներ, Կրակային պատրաստություն, ՀՀ ԶՈՒ համազորային կանոնադրություններ, Շարային պատրաստություն, Ռազմական տեղագրություն, Միջազգային մարդասիրական իրավունք, Անվտանգ կենսագործունեություն, Առաջին բուժօգնության հիմունքներ։

Գիրք 4[119], 11-րդ դասարան

Էջեր հայ ռազմարվեստի պատմությունից, Մարտավարության հիմունքներ, Կրակային պատրաստություն, ՀՀ ԶՈՒ

117. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Առաքելյան, Վ. և ուրիշներ (2015), Նախնական զինվորական պատրաստություն, հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք։ Երևան, «Աստղիկ» գրատուն։ Հասանելի է՝ https://fliphtml5.com/fumf/khfv/basic [դիտվել է 16.07.2020]։

118. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Ղազարյան, Լ. և ուրիշներ (2010), Նախնական զինվորական պատրաստություն, հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք։ Երևան, «Աստղիկ» գրատուն։ Հասանելի է՝ http://online.fliphtml5.com/fumf/zqgc/#p=1 [դիտվել է 16.07.2020]։

119. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Ղազարյան, Լ. և ուրիշներ (2010), Նախնական զինվորական պատրաստություն, հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք։ Երևան, «Աստղիկ» գրատուն։ Հասանելի է՝ http://online.fliphtml5.com/fumf/ghjo/#p=1 [դիտվել է 16.07.2020]։

կանոնադրություններ, Շարային պատրաստություն, Ռազմական տեղագրություն, Միջազգային մարդասիրական իրավունք, Անվտանգ կենսագործունեություն, Առաջին բուժօգնության հիմունքներ։

- Մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին, մարդու արժանապատվությանը, հալածանքներից զերծ լինելուն և այս համատեքստի այլ հասկացություններին ՆՁՊ դասագրքերում անդրադարձ է կատարվում երկու անգամ.Նախ՝ «Միջազգային մարդասիրական իրավունք» ենթագլխում, որը նվիրված է զինվորական ընդհարումների ժամանակ զոհերի պաշտպանությանը։ Այս հատվածում անդրադարձ չի կատարվում բանակում զինվոր-զինվոր, զինվոր-սպա և սպա-սպա փոխհարաբերություններին։ Օրինակ՝ 8-րդ դասարանի դասագրքում[120] նշված է հետևյալը՝ **անհատի արժանապատվություն, ազատ և արժանապատիվ ապրելու** ձգտում։ Հատկանշական է, որ տվյալ բառապաշարն օգտագործվում է այլ պետական բանակների զինվորների նկատմամբ վերաբերմունքը ներկայացնելու համար, սահմանվում են գործունեության չափանիշներ միջպետական պատերազմների դեպքում, բայց նման արտահայտությունների չենք հանդիպում հայկական բանակին վերաբերող հատվածներում։ Իսկ ահա 10-րդ դասարանի դասագրքում ներկայացվում են ռազմագերիների իրավունքները և նրանց հետ վարվելակերպը, և այստեղից հատկապես կարևոր է անդրադառնալ հետևյալ նախադասությանը. **«Ռազմագերիների նկատմամբ չի կարող կիրառվել որևէ ֆիզիկական կամ բարոյական բռնություն»**: Ֆիզիկական և բարոյական բռնության տարբերակումը խոսում է նրա մասին, որ միջազգային լավագույն

120. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Առաքելյան, Վ. և ուրիշներ (2014), Նախնական զինվորական պատրաստություն, հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք։ Երևան, «Աստղիկ» գրատուն։ Հասանելի է՝ https://fliphtml5.com/fumf/zdpv/basic [դիտվել է 16.07.2020]։

փորձն իսկապես գիտակցում է բանակում բարոյական բռնության կանխարգելման նշանակությունը: **Ուսումնասիրելով «Միջազգային մարդասիրական իրավունք» հատվածը՝ կարելի է հավելել, որ վերջինիս ամրագրումը դասագրքերում պայմանավորված է նաև 1994 թ. ԵԱՀԿ ընդունած** «Անվտանգության և ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ» **վարքագծի կանոնների 30-րդ հոդվածով**[121]: **8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ դասարանի դասագրքերում տվյալ հատվածն ընդգրկված է** 74-79-րդ, 70-75-րդ, 58-62-րդ, 58-63-րդ էջերում:

- Երկրորդ անդրադարձը վերաբերում է օրենքների և օրենսդրական ակտերի մեջբերումներին ու ներկայացվածությանը: ՆԶՊ դասագրքերում ներառված չէ սեփական բանակային ներքին հարաբերություններին նվիրված բովանդակություն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, մարդու արժանապատվության, հալածանքներից զերծ լինելու և քրեական ենթամշակույթը մերժելու համատեքստում: Օրինակ՝ վերլուծենք 8-րդ դասարանի դասագրքում ներառված **«Զինվորական քաղաքավարության կանոնները» անվանումով ենթագլխի բովանդակությունը: Սույն բաժինը օրենքների հավաքածու է, և այս ենթագլխում առկա չեն կանոնադրային հարաբերություններից դուրս գործելու արդյունքում առաջացած նախադեպերի վերլուծություններ և/կամ օրինակելի վարքային մոդելներ կոնֆլիկտների կարգավորման համար:**

121. «Մասնակից պետություններից յուրաքանչյուրը զինված ուժերի սեփական անձնակազմին ուսուցանում է զինված բախումները կառավարող մարդասիրական միջազգային իրավունքի դրույթները, կանոնները, կոնվենցիաներն ու պարտավորությունները և ապահովում, որ այդ անձնակազմը գիտակցի իր բոլոր գործողությունների համար ազգային և միջազգային գործողություններով սահմանված պատասխանատվությունը»: ԵԱՀԿ (1994), Անվտանգության և ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններ, Մաս 30, էջ 5: Հասանելի է՝ https://www.osce.org/files/f/documents/1/6/74974.pdf [դիտվել է 16.07.2020]:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի «Ուսուցչի ձեռնարկի» մեթոդական հատվածի վրա լուրջ շեշտադրում է արված։ Մեթոդաբանության հատվածում խոսվում է աշակերտների քննադատական մտածողության, վերլուծական հմտությունների զարգացման մասին, սակայն միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, փակ և կիսափակ հաստատություններին հատուկ միջավայրային առանձնահատկությունների նկարագրմանը, ինչպես նաև քրեական բարքերից բխող վարքային մոդելների դեմ պայքարին լոկ մակերեսային անդրադարձ է կատարվել։

Այժմ դիտարկենք, թե հանրակրթությունն աշակերտների վրա ինչ ազդեցություն է թողնում բանակային կյանքն ըմբռնելու և դրան պատրաստվելու համատեքստում։ Ահա տիպական մեջբերումներ նախազորակոչային տարիքի պատանիների կարծիքներից.

«Ռազմագիտություն սաղս էլ անցել ենք։ Հիշում եմ ռազմագիտության դասերը, զենք քանդել-հավաքել էին սովորացնում։ Շատ բան չեմ կարա էս պահին հիշեմ, մի 3 տարի արդեն անցել ա, բայց առանձնապես լուրջ չէինք վերաբերվում, ով զենքի հետ սեր ուներ, իրան էր հետաքրքիր։ Տենց բռնության ու մյուս բաների վրով առանձնապես չեն ասել»[122]*։*

«Ես սիրում էի առարկան, միշտ հաճախում էի, զենքի հետ էինք ծանոթանում, ասում էին, թե արյունահոսության դեպքում ինչ պետք է անել, փակ կոտրվածք, բաց կոտրվածք և այլն, բայց ձեր ասած քրեական մշակույթի վերաբերյալ բան-ման չեն ասել»[123]*։*

«Մենք ամեն անգամ գնում էինք էն հույսով, որ զենք կտան, քանդել կսովորացնեն։ Ուղղակի ասին, որ

122. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

123. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

զենք էս պահին չկա, բայց ես միշտ սպասում էի, որ զենք տան ու սովորացնեն։ Մեզ հիմնականում շարում էին, մեր դասատուն դիսցիպլինայից էր խոսում, ու սենց բաներ։ Հարցն էլ չեմ հասկանում, թե խի պետք ա իրանք քրեական բարքերից խոսան»[124]։

«Մեզ միշտ ասում էին, որ անկախ ամեն ինչից՝ պետք ա հրամանին ենթարկվել, հիմնական թեման էդ էր։ Որ հրամանները չեն քննարկվում, մեկ էլ, դե, ռազմահայրենասիրական թեմաներից։ Զենք քանդել ես դպրոցում եմ սովորել, ուչեբնի զենքեր էին տալիս, ժամանակով քանդում էինք»[125]։

Նախազորակոչային տարիքի պատանիների երկու խմբերի քննարկումից պարզեցինք, որ ՆԶՊ դասերից ամենից տպավորիչ հատվածը զենքին ծանոթացումն է։ Օբյեկտիվ հանգամանքներից ելնելով՝ չի կարելի քննադատության ենթարկել դասավանդման բովանդակությունը ֆոկուսխմբային քննարկումների արդյունքում. այն առարկաները, որոնք առաջնային չեն համարվում և անհրաժեշտ չեն բուհ ընդունվելու համար, բարձր դասարանների աշակերտների կողմից հաճախ անտեսվում են։ Պետք է, սակայն, փաստենք, որ մեր ռեսպոնդենտների ասածից միակ հետևությունն այն է, որ հանրակրթության ոլորտում «Ռազմագիտություն» առարկան չի հոգում աշակերտին նոր որակի միջանձնային հարաբերություններին պատրաստելու մասին։ Թեև մեր հետազոտության ռեսպոնդենտների թիվը մեծ չէ, սակայն այս հետևությունն ամրապնդվում է նաև ընդհանուր գիտելիքով մեր հասարակության մեջ, որը համատարած է։

Հաջորդ ենթագլխում կներկայացնենք բանակային կյանքը «զորակոչման պատրաստվող երիտասարդների աչքերով»։

124. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

125. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

Դա մեզ թույլ կտա գնահատել նաև «Ռազմագիտություն» առարկայի ազդեցությունը բանակի վերաբերյալ երիտասարդների պատկերացումների ձևավորման վրա։

Նախազորակոչային տարիքի երիտասարդների պատկերացումները բանակային կյանքի և բանակի մասին

ՀՀ-ում արական սեռի քաղաքացիները, սկսած պատանեկության տարիներից, ձեռք են բերում տարատեսակ պատկերացումներ բանակի, բանակային կյանքի մասին։ Չափահասության տարիքին մոտենալուն զուգահեռ պատանիները սկսում են պատրաստվել բանակային կյանքին։ Սոցիալականացման այս փուլում բանակային կյանքի մասին տեղեկություններ ստանում են տարբեր աղբյուրներից։ Սկսում են հետաքրքրվել բանակային կյանքով՝ հասկանալու, թե ինչ է իրենց սպասում ծառայության ընթացքում։ Բանակի վերաբերյալ տեղեկությունները պատանիների համար հասանելի են տարբեր աղբյուրներից՝ ընտանիքի անդամներ, համացանց, հեռուստատեսություն, ընկերական շրջապատ և այլն։

Բանակ զորակոչվող քաղաքացիները նոր միջավայր են մտնում արդեն որոշակի բարքեր և կարծրատիպեր կրելով։ Նախազորակոչային տարիքի պատանիների պատկերացումները և արժեքները բանակում արդեն նպաստում են բռնության տարրեր ունեցող վարքագծի ձևավորմանը։ Հարկ է նշել, որ այդ վարքագծի վրա ազդում են նաև այլ գործոններ՝ բանակային կյանքի միջավայրային առանձնահատկությունները, սպաների վարքագիծը և լեզվամտածողությունը, ԶՈՒ ստորաբաժանումների կողմից վարվող քաղաքականությունները բռնության դրսևորումների դեմ, իրավական կարգավորումները և այլն։

Բանակային կյանքի մասին ապագա զինծառայողի տեղեկացվածության վերաբերյալ քննարկման արդյունքում պարզվեց հետևյալը.

Նախ՝ զորակոչիկներն առավել վստահելի են համարում ավագ, արդեն զինծառայություն անցած ընկերներից և մտերիմներից փոխանցված տեղեկությունները։ Տեղեկության ստացման աղբյուրները կարելի է դասակարգել հետևյալ կերպ. ա) զորացրված զինծառայողներ, բ) արական սեռի ներկայացուցիչներ՝ հայր, քեռի, հորեղբայր, ավագ եղբայր, գ) համացանց, դ) հեռուստատեսություն, ե) իգական սեռի ներկայացուցիչներ. հարկ է նշել, որ այս աղբյուրից ստացված տեղեկությունները լուրջ վերաբերմունքի չեն արժանանում, և նրանց կողմից արական սեռի ներկայացուցչին բանակի մասին որևէ տեղեկություն (ստուգված թե չստուգված) կամ նույնիսկ կարծիք հայտնելու դեպքերը սակավ են։

Զինծառայություն անցած երիտասարդները՝ որպես ամենավստահելի աղբյուր, նաև խորհուրդներ են տալիս ապագա զինծառայողներին ծառայության մասին՝ փորձելով պատանիներին նախապատրաստել զինվորական կյանքին։ Ըստ մեր ռեսպոնդենտների՝ քննարկվում են դերային մոդելները և հակամոդելները.

1. Բանակային կյանքի դրվածքի ներկայացում։
2. Ներանձնային հարաբերությունների համեմատականներ քաղաքացիական և բանակային կյանքի միջև։
3. Սպաների հետ շփումների մեթոդներ։
4. Ի՞նչ է կարելի և ի՞նչ չի կարելի անել բանակում։
5. Ծառայության ճշգրիտ մոդելի ներկայացման փորձ։

1. Ահա մի տիպական օրինակ.

   «Ընկերներս հաճախ են պատմում բանակից։ Դե, խորհուրդներ միշտ էլ տալիս են։ Ես, համենայն դեպս, փորձում եմ տարբեր պատմություններից հետևություններ անել։ Ինձ ասել են, որ ամեն տեղ դրվածքը կարա թեթև տարբերվի, բայց հիմնակա-

նում նույն պրինցիպներն են։ Ասում են, որ ամենակարևորը պետք ա ծիգ ըլնես, չթողես, որ ինչ-որ մեկը քեզ ասի։ Աֆիցեռի ասածն անելը հիմա թեմա չի, մեկ ա, առաջվա պես զուգարան մաքրել կամ տենց բաներ չկա, որ զապադլո լինի։ Ես մի բան գիտեմ, որ ինձ տղավարի պահեմ, ամեն ինչ էլ լավ կանցնի»[126]*։*

Բանակային կյանքը տարեցտարի փոփոխությունների է ենթարկվում, և շատ խնդիրներ, որոնք ծառանում էին զինծառայողների առաջ նախկինում, այլևս համատարած բնույթ չեն կրում։ Սա վերաբերում է, օրինակ, զուգարան մաքրելուն, զինվորին տրվող ամսական գումարը շորթելուն և այլն։ Շատ տաբուներ, որոնք առկա էին տարիներ առաջ, կոտրվում են։ Օրինակ՝ մաքրությանը մասնակցելու անպատվաբերությունը։ Սա ցայտուն օրինակ է, երբ ինստիտուցիոնալ մակարդակում ինչ-որ բան կայանում է, իսկ զուգահեռ կարգավորիչի անհրաժեշտությունն ուշադրությունից դուրս է մնում։ Թե՛ պատանիների խոսքերով, թե՛ զինծառայություն անցած երիտասարդների խոսքերով՝ մաքրություն անելն այժմ ամոթալի չի համարվում, բայց դեռևս զինվոր-զինվոր հարաբերություններում ակտուալ է այդ ամենից խուսափելը։ Ստացվում է, որ ամոթալի և անպատվաբեր չէ, բայց արտոնյալ կարգավիճակում լինելը դեռևս ակտուալ է, և թե՛ պատանիները, թե՛ զինծառայություն անցածները արտոնյալ կարգավիճակում հայտնվելը և այդպիսի աշխատանքներից խուսափելն ընկալում են որպես «լավ» ծառայության մոդել։

«Բանակում եթե կարում ես տեղավորցնես, պետք ա չանես։ Իմ ախպերը ծառայել ա, ոնց ուզել ա, տենց ա եղել։ Ես նենց եմ ծառայելու, որ ինձ բացի աֆիցեռներից բան չկարանան ասել»[127]*։*

126. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

127. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

Պատանիների պատկերացմամբ՝ բանակային կյանքի առաջին ամիսները համարվում են հարմարման փուլ, որտեղ նրանք ծանոթանում են միջավայրին և «խաղի կանոններին»: Այդ շրջանում նրանք պիտի կարողանան իրենց «դրվածքը» հաստատել:

2. Զինծառայություն անցած երիտասարդները նաև ներկայացնում են քաղաքացիական կյանքի և բանակային կյանքի տարբերությունները:

Սա հիմնականում առնչվում է կոլեկտիվ մտածողության և կեցության վերաբերյալ թեմաներին: Շեշտվում են այսպիսի արտահայտություններ՝ «այնտեղ դու մենակ չես, և քո փոխարեն կարող են պատասխանատվություն կրել շատերը», «քո փայով դու թամամ արա, մնացածի հետ գործ չունես», «տանեցիներին աշխատի նեղություն չտաս, ըստեղի եղածով յոլա գնա» և այլն:

3. Սպաների հետ շփումների «կանոնների» ներկայացմանն առանձնակի ուշադրություն է դարձվում:

Պատանիների խոսքով՝ ավագ ընկերներից շատերն իրենց պարտքն են համարում ցուցումներ տալ սպաների հետ հարաբերությունների կառուցման վերաբերյալ: Սպաների՝ որպես «սիստեմի» ներկայացուցչի դերի ընկալումը, ավաղ, զուգահեռներ է առաջացնում ՔԿՀ աշխատակիցների դերի ընկալման հետ:

> *«Ես միշտ ասում եմ, որ աֆիցեռ կա ավելի լավ տղայ ա, քան 1000 հատ լավ տղա: Ինքը կյանքում դայաղ չի անում, հա, կարող ա մի հատ էլ խփի, բայց գոնե գիտես, որ փուռը չի տա: Տենց տղեքի հետ պետք ա լավ ըլնել: Ես քանի տարի ա ուվալնյատ եմ եղե, բայց մինչև հիմա տալի-առնում ենք»[128]:*

> *«Ճիշտ ա ասում, բայց դե չի նշանակում, որ պետք*

128. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ:

ա գնաս պատմես՝ վաշտում ինչ ա կատարվում, ուղղակի կարաս հետը լավ ըլնես, դաժը հացի էլ նստես հետը: Տենց սպաներ կան, որ իրանք ծառայողականից դուրս են մտածում, ավելի մարդկային են»[129]:

«Ափիցեռը ափիցեռ ա: Հա, պետքի համար կարաս նստես-հելնես, բայց էդ ընկերություն չի: Ես էլ եմ շատ ափիցեռների հետ նստե-հելե, բայց ընկեր պրիզնատ չեմ եկել: Իրանց հետ պետք ա դիստանցիայով ըլնես»[130]:

Փաստորեն, սպաների հետ ընկերական հարաբերությունների հաստատումը շատ դեպքերում ընդունելի է, բայց առանձնացվում են սպաների կատեգորիաներ՝ ըստ ծառայության ոճի: Կան սպաներ, որոնք խախտումներ կատարած զինվորներին պատժում են ֆիզիկական բռնությամբ կամ բռնության այլ ձևերով: Նման պատիժն ընդունելի է համարվում զինվորների կողմից, քանի որ «ծեծող» սպան չի զեկուցում:

Ուսումնասիրության շրջանակում փորձել ենք պարզել, թե որոնք են այն հիմնական մարտահրավերները, որոնք սպասում են տղաներին բանակում: Ստացել ենք հետևյալ պատկերը՝ ըստ հաճախականության. դասակարգումն իրականացվել է ռեսպոնդենտների կարծիքների հիման վրա, թե ինչպես են նրանք կարևորել մարտահրավերների հաղթահարումը: Այսինքն՝ 1-ին համարի ներքո գրված մարտահրավերը առավել կարևոր է, քան 2-րդը, և այդպես շարունակ.

1. Դրվածքին հարմարվելը:
2. Կարոտի զգացումը հաղթահարելը:
3. Առաջնագծի դժվարություններին հարմարվելը:
4. Փորձանքի մեջ չհայտնվելը:

---

129. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ:

130. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ:

5. Կենցաղային պայմաններին հարմարվելը:

6. Սպաների հետ «լեզու գտնելը»:

Տարածված է հետևյալ միտքը. «Կարևորը բարով-խերով տուն վերադառնալն է»: Չափազանցություն չի լինի ասելը, որ ծառայությունն ընկալվում է որպես կորսված ժամանակահատված: Այս պնդումը հիմնավորվում է ռեսպոնդենտների՝ զինծառայության ընթացքի վերաբերյալ պատկերացումներով: Ինչպես վերևում նշեցինք, «բարով-խերով տուն վերադառնալու» և նման կարծիքներ բավականին հաճախ են շեշտում մասնակիցները: Նրանք փաստում են, որ այդպիսի խոսակցություններ բավականին հաճախ են լսում առօրյա կյանքում, մասնավորապես զինծառայություն անցած անձանց հետ շփումներում:

Հարցազրույցներից պարզ է դառնում, որ ապագա զինծառայողների համար առաջնային մտորումների առիթ չեն դառնում բուն ծառայողական դժվարությունները: Սրա հիմնական պատճառը բանակային կյանքի վերաբերյալ ստացվող լուրերն են: Զինծառայություն անցած ավագ սերնդի ներկայացուցիչներն առօրյա խոսակցություններում խոսում են նաև բուն ծառայողական կյանքից և դրանից բխող դժվարություններից, բայց այս մարտահրավերների շուրջ մտորումներն առաջնային դերում չեն: Բացառություն է կազմում սահմանային ծառայությունը: Սա օբյեկտիվ հանգամանք է, քանի որ հրադադարի խախտման դեպքերը բազմաթիվ են, և վերջիններիս վերաբերյալ լուրերը հասանելի են համացանցում: Սակայն բուն փաստը, որ ծառայողական պարտականությունները հիմնականում որպես մարտահրավեր չեն ընկալվում, կրկին վկայում է, որ բանակում կա մեկ հիմնական խնդիր (իր բոլոր տարատեսակներով), դա «դրվածքին» հարմարվելու երևույթն է, դրվածք, որտեղ հաճախ կարող է լինել բռնություն, կամ դրա հավանականությունը մեծ է:

Փորձեցինք նաև հասկանալ կարծրատիպերի և տաբուների

արմատավորվածության աստիճանը։ Ամենատարածված տաբուն վերաբերում է զեկուցելու խնդրին։ Հարցազրույցներից պարզ դարձավ, որ բացի պատերազմական իրավիճակի հետ կապված դեպքերից՝ մնացած որևէ դեպքում ապագա զինծառայողները պատրաստ չեն որևէ կերպ սպաներին զեկուցելու ծառայությունում առաջացած ներքին խնդիրների մասին։ Ըստ ռեսպոնդենտների՝ զեկուցելը խիստ ամոթալի երևույթ է և ընդունված չէ մեր հասարակությունում, իսկ բանակային կյանքում՝ առավել ևս։ Նրանց պնդմամբ՝ զեկուցելու փորձերը կբարդացնեն իրենց կյանքը, և «զեկուցողը» կունենա ամենավատ ծառայությունը՝ արժանանալով բացասական գնահատականների և պիտակավորումների։ Հասկանալու համար այս տաբուի արմատավորվածությունը՝ հարցազրուցավարներն իրականացրին դերային խաղ՝ պարզելու համար՝ արդյոք ծանրագույն իրավիճակում ապագա զինծառայող երիտասարդները պատրա՞ստ են հնարավոր վտանգի մասին (ներքին հարաբերություններին վերաբերող) տեղյակ պահելու հրամանատարությանը։ Նկարագրվեց իրավիճակ, որտեղ ռեսպոնդենտները նորակոչիկ են, և ծառայության ընթացքում ծառայակիցներից մեկը դրսևորում է ինքնախեղման հակվածություն։ Ծառայակիցը ոչ ոքի հետ չի շփվում, մեկուսացած է և խոսելու դեպքում հասկացնում է իր կյանքն ընդհատելու վտանգի մասին։ Իրավիճակի նկարագրությունից հետո հարցազրուցավարները խնդրեցին մասնակիցներին ներկայացնել իրենց հավանական գործողությունները.

> *«Ես կգնամ կխոսամ հետը, կփորձեմ ինչով հնարավոր ա օգնեմ»*[131]*։*

> *«Էդ իմ գործը չի, ես տենց բաներից հաստատ հեռու կմնամ, 1000 բան կարա լինի, ես էլ էդ վախտ մալա-*

131. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

դո կլինեմ, գնամ ի՞նչ անեմ»[132]։

«Դե պետք ա ջոկեմ՝ էդ զորամասում հներից ով կա, գնամ ներկայացնեմ, ոնց էլ լինի, մի հատ նենց տղա կըլնի, որ էդ հարցը կլուծի։ Կկանչեն, հետը կխոսան, կդզվի»[133]։

«Հետը երկար կխոսամ, պետք լինի միշտ մոտը կլինեմ, հո չեմ թողի գնա փռթի իրան»[134]։

«Մինչև էդ իրավիճակում չլինեմ, բան չեմ կարա ասեմ»[135]։

«Ավելի հին ծառայողներից կհարցնեմ՝ ինչ պետք ա անել էդ դեպքերում»[136]։

Խաղի մյուս մասնակիցները (իրականացվել է երկու այդպիսի խաղ, հանրագումարով մասնակցել է 19 երիտասարդ) պատասխան չունեին, կամ պատասխանները կրկնվում էին։

Հարցազրուցավարները, ամփոփելով դերային խաղը, հարցադրում արեցին՝ արդյոք պետք չէ՞ այդպիսի դեպքերում ահազանգել և դեպքը կանխելու նպատակով տեղյակ պահել ղեկավար կազմին։ Բոլոր մասնակիցները մերժեցին զեկուցելու գաղափարը։ Այնուհետև փորձեցինք հասկանալ մերժելու հիմքերը և դրդապատճառները։ Մասնակիցների խոսքերով՝ զեկուցելը հարիր չէ իրենց, հետևաբար իրենք նման գործողության չեն դիմի։ Նրանց կարծիքով՝ որևէ հարցով ղեկավարությանը զեկուցելը պատվաբեր չէ, իսկ այդ քայլին դիմողներն ունեն խիստ բացասական հեղինակություն։

132. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

133. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

134. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

135. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

136. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ։

Սա թույլ է տալիս ենթադրել, որ սպա-զինվոր հարաբերություններում առկա է խոր անջրպետ, քանի որ մասնակիցները նշում են, որ մարդու կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող դեպքերում նույնպես չեն զեկուցի ղեկավարությանը:

Մեր հաջորդ դիտարկումն այն է, որ զինծառայություն անցած տղաների պատմություններից պատանիներին ավելի շատ գրավում է «յախշու» կերպարը: Թե՛ զինծառայություն անցած և թե՛ ապագա զինծառայողների համար ամենից գրավիչ ծառայության ձևը արտոնյալ կարգավիճակում լինելն է և բանակային միջավայրում «ասողի» դերը ստանձնելը: Հենց այդ կերպարը ամենից ավելի է համապատասխանում վերջնական նպատակին. (ոչ մարտական պատճառներով) փորձանքների մեջ չընկնել և ապահով տուն վերադառնալ: Սակայն որքան էլ արտոնյալ կարգավիճակում եղողի դերը ստանձնելը ցանկալի լինի, այն համարվում է երկրորդային նպատակ և դիտարկվում է միայն որոշակի հնարավորությունների առկայության դեպքում, որովհետև տուն հնարավոր է «անփորձանք» վերադառնալ նաև առանց «յախշի» դառնալու:

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Բռնությունը խաթարում է անհատի ինքնությունը և հասարակական կայունությունը, իսկ առանձին անհատների դեպքում բռնությունից բխող հետևանքները լինում են անդառնալի: Բռնության տեսակները և առաջացման պատճառները պայմանավորված են բազմաթիվ գործոններով: Երբ քննության ենք առնում բանակում առկա բռնության դրսևորումները, պետք է հաշվի առնել հետևյալը.

- Այսօրվա հայկական բանակը մեծ մասամբ միասեռ համակարգ է:

- Քրեական բարքերը և ենթամշակույթը չեն առաջացել և առաջանում բանակում, այլ տեղափոխվում են հասարակությունից, նույնիսկ եթե բանակում ուրույն դրսևորումներ են ստանում:
- ՀՀ-ում պարտադիր զինվորական ծառայություն են անցնում 18 տարին լրացած արական սեռի ներկայացուցիչները: Այսինքն՝ զինծառայողների մեծամասնությունը չունի բարձրագույն կրթություն:
- Բանակը ոչ բաց համակարգ է, որտեղ առկա է հստակ հիերարխիա:
- Բանակում բռնության առաջացման պատճառների չեզոքացման և բացառման գործիքակազմը արդյունավետ և ամբողջովին կայացած չէ:

Հայաստանյան հասարակությունը խորհրդային ժամանակաշրջանից ստացել է քրեական ենթամշակույթի բացասական ժառանգություն, որն ուրույն ձևով է զարգացել անկախության տարիներին[137]: Միևնույն ժամանակ հայաստանյան բանակը նաև ժառանգել է խորհրդային բանակի որոշակի հատկանիշներ, որոնք նույնպես ձևափոխված կերպով պարարտ հող են ստեղծում բռնության դրսևորումների համար: Խորհրդային բանակին հատուկ բռնությունը լավ հետազոտված է ռուսաստանյան հեղինակների կողմից: Հետազոտված է նաև նրա կապը քրեական բարքերին հատուկ բռնության դրսևորումների հետ[138]: Դրական պետք է գնահատել այն փաստը, որ հայաստանյան բանակն այլևս խորհրդային բանակ չէ, և ուրեմն կան նախադրյալներ, որ ժառանգած բացերը վերացվեն: Բացասական է, սակայն, որ բռնությունը կանխարգելող փոփոխությունները բանակում շատ դանդաղ են կատարվել վերջին երեսուն տարվա

137. Այդ մասին տե՛ս նաև սույն ժողովածուի առաջին հետազոտությունը:

138. Белановский, С. (2019), Исследования Армии. Москва. URL: https://bit.ly/3bOHnYG [последний просмотр: 16.07.2020].

ընթացքում: Բացասական է նաև այն, որ դեռևս պահպանվում է խորհրդային բանակի հետ հայաստանյան բանակի կապը, օրինակ՝ ռուսերենից փոխառված աղավաղված տերմինների տարածվածությունը: Այդ կապը բացատրվում է նրանով, որ հայոց բանակի ստեղծման օրերին, երբ շտապ պետք էր ինքնապաշտպանական խմբերի փոխարեն ձևավորել կադրային բանակ, որպես մոդել վերցվեց, բնականաբար, հենց խորհրդային բանակը: Դրանից հետո Հայաստանի և Ռուսաստանի ռազմավարական և ռազմական կապը շարունակեց դրսևորվել բանակների կառուցվածքների մերձավորությամբ, ինչպես նաև ռուսական բանակի ստորաբաժանումների՝ Հայաստանի տարածքում գտնվելով: Միաժամանակ պետք է նկատել, որ ռուսական բանակային ռեֆորմի մի շարք դրսևորումներ օբյեկտիվ պատճառներով տեղ չեն գտել հայաստանյան բանակում, օրինակ՝ մեկամյա ծառայության անցնելը, որը նույնպես նպաստում է ոչ ֆորմալ և բռնության տարրեր պարունակող հարաբերությունների նվազմանը բանակում:

Ելնելով բանակին հատուկ միջավայրային գործոններից՝ քրեական բարքերը և բռնության դրսևորումները որոշակի տրանսֆորմացիա են կրում:

Բռնությունն ամենաընդհանուր կերպով կարելի է ձևակերպել որպես ինչ-որ մեկի հանդեպ հարկադրական ներգործություն, որն ազդում է անձի ֆիզիկական լիարժեքության և/կամ արժանապատվության (հոգե-բարոյական լիարժեքության) վրա: Բռնության հայտնի տեսակներից են ֆիզիկականը (ներառյալ՝ սեռականը), հոգեբանականը և տնտեսա-

կանը[139] կամ կառուցվածքայինը[140]: Կարևոր է հաշվի առնել, որ հոգեբանական բռնությունը չի կարելի համարել բռնության ավելի թեթև տեսակ, քան ֆիզիկականը: Եթե նույնիսկ առաջինը կարող է արտաքին տեսանելի հետևանքներ չթողնել, այն ազդում է բռնության ենթարկվածի հոգե-բարոյական նկարագրի վրա՝ աղավաղելով այն: Դա կարող է հանգեցնել անհատի կարողությունների «ոչ լիարժեք» դրսևորմանը ինչպես մարտի դաշտում և ծառայության ընթացքում, այնպես էլ ոչ զինվորական կյանքում՝ հանգեցնելով «հասարակության ոչ լիարժեք անդամի» երևույթին:

Սույն ուսումնասիրության մեջ դիտարկվել են բռնության դրսևորումները երեք տեսակի հարաբերություններում. սպա-զինվոր, սպա-սպա և զինվոր-զինվոր:

Սպա-զինվոր հարաբերությունների շուրջ հարցազրույցների ընթացքում ստացված տվյալները վերլուծելու արդյունքում ստանում ենք բռնության դրսևորման երեք հիմնական (ըստ երևույթին՝ ամենատարածված) դեպքեր՝ վերբալ բռնություն, ֆիզիկական բռնություն և հալածանք:

Սպա-զինվոր հարաբերություններ

Վերբալ բռնություն

Վերբալ բռնության ծանրագույն դրսևորումն են սեռական բնույթի հայհոյանքները: Մասնակիցների պնդմամբ՝ դա այն

139. Միքայելյան, Մ. (2016), Բռնության և զոհի հոգեբանություն: Երևան, «Ճարտարագետ», էջ 83:

140. Որոշ հետազոտողներ նույնացնում են տնտեսական և կառուցվածքային բռնությունը, ուրիշներն ընդգրկում են առաջինը վերջինիս մեջ: Սույն ժողովածուի՝ ընտանեկան բռնության վերաբերյալ հետազոտության մեջ կառուցվածքային բռնությունը ձևակերպվում է որպես բռնության սոցիալական տեսակների դրսևորում (հասարակության մեջ ընդունված վարքային մոդելների արտահայտում, երբ այդ մոդելները կարող են ընկալվել կամ չընկալվել որպես բռնություն բռնացողի, բռնության ենթարկվողի և երրորդ անձի կողմից), որից ելնելով՝ տնտեսականն ընկալելի է որպես դրա տարատեսակ: Այս տեսակետից ընտանեկան բռնությունը, անկախ նրանից՝ հասնո՞ւմ է այն քրեականորեն պատժելի աստիճանի, թե՞ ոչ, նույնպես կառուցվածքային բռնության տեսակ է:

երևույթներից է, որը ո՛չ իրենք, ո՛չ իրենց ծառայակիցները մեծ մասամբ չեն հանդուրժում: Ամենից ծանր ազդեցությունը թողնում է ծնողի նկատմամբ հայհոյանքը: Սա պայմանավորված է հայկական հասարակության որոշակի առանձնահատկություններով[141]:

Ի՞նչն է ստիպում սպաներին դիմել վերբալ բռնության:

1. Վերբալ բռնությունը կիրառվում է որպես ենթարկելու միջոց: Բռնությունը գրեթե բոլոր դեպքերում միջոց է, գործիք, և հազվադեպ է, որ նպատակ է: Երբ ընտրվում է բռնության մեթոդը որևէ նպատակի հասնելու համար, պարզ է դառնում, որ ձախողվել են այլընտրանքային, բանակի դեպքում՝ ներառյալ նորմատիվ մեթոդները: Սպաները հաճախ հայհոյանքներ և հայհոյախառն արտահայտություններ կիրառում են չենթարկվող և նորմերին չհետևող զինվորներին հպատակեցնելու համար: Մեր հետազոտության ընթացքում վեր հանվեցին մի շարք օրինակներ, որոնցից բերենք հետևյալը. ա) վերակարգում գտնվող զինվորը քնում է հերթապահության ընթացքում՝ խախտելով օրենքը, բ) սպան սկսում է կիրառել հայհոյանքների միջոցով զինվորին կարգի բերելու մեթոդը, գ) զինվորը հրամանը չի կատարում և/կամ թերի է կատարում, դ) հաջորդում են հայհոյանքները:

2. Վերբալ բռնությունը որպես պատիժ: Սպաների կողմից այս դեպքն ունի ուրույն արդարացում: Այսպիսի մեկնաբանություն է հնչել սույն հետազոտության խորին հարցազրույցների փուլում. «Եթե չքֆրտեի սամավոլկա գնացողին, պետք ա զեկուցեի, իսկ որ զեկուցեի, կգնարկկորեր էդ զինվորը»[142]:

Այս օրինակը շատ հետևությունների հիմք է տալիս: Պետք է

141. Ծնողներին հայհոյելու և դրա ազդեցության հիմքերը մասամբ ներկայացված են սույն ժողովածուի «Վերջաբանի փոխարեն» բաժնում:

142. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

հաշվի առնել, իհարկե, թե ինչպիսին է զինվորի զանցանքը (ընդունենք, որ այն օբյեկտիվորեն առկա է), պաշտոնական պատիժը կարող է շատ խիստ լինել: «Սամովոլկայի» համար, օրինակ, նախատեսվում է քրեական պատասխանատվություն[143]... Սակայն «կգնար-կկորեր» բառերը ցույց են տալիս, որ սպան այդ պատիժը համարում է չափազանցված: Եվ/կամ կարծում է, որ պատժի իրագործումը կուղեկցվեր զինվորի հանդեպ հավելյալ բռնությամբ, այսինքն՝ զինվորը շատ ավելի կտուժեր: Սա ցույց է տալիս կա՛մ պատժի չափազանցված խստությունը, կա՛մ բանակային համակարգում առկա խնդիրները՝ վերից վար: Պետք է նաև հաշվի առնել, որ գուցե սպան ինքն էլ, զեկուցելու դեպքում, կընկներ պատասխանատվության տակ, այսինքն՝ գուցե իր բացատրությունը լրիվ անկեղծ չէ: Ամեն դեպքում, այս փոքրիկ օրինակը (որը շատ տարածված է) ցույց է տալիս ողջ համակարգի խորքային խնդիրներից մեկը. իբր զինվորին հպատակեցնելու կամ պատժելու նպատակով կամ փոխարեն՝ ազդում են նրա արժանապատվության վրա: Այդպիսով դեպքը բանակի սահմաններում լուծվում է, սակայն զինվորի (և սպայի) ողջ արտաբանակային կյանքում ազդելու է նրանց ինքնագնահատականի և, ուրեմն, վարքի վրա:

Այդպիսով մենք ստանում ենք փակ և արատավոր շրջան. եթե բռնության բարքը բանակը ժառանգել է հասարակությունից, ապա դրա դրսևորումը բանակում հանգեցնում է հասարակության անդամի արժանապատիվ կերպարի հետագա մեկընդմիշտ խեղաթյուրմանը, ինչն ուղղակիորեն ազդում է հասարակության զարգացման վրա՝ զրկելով նրան արժանապատիվ, լիարժեքորեն (ֆիզիկապես և հոգեպես) առողջ և գործունյա անդամից:

Զինծառայողները, ըստ սույն հետազոտության ռեսպոնդենտների կարծիքների, սահմանվածից ավելի գերադասելի

143. ՀՀ քրեական օրենսգիրք (2003), բաժին 12: Հասանելի է՝ http://www.mil.am/files/LIBRARY/Orenqner_karavarutyan_vorosum_1554/qr_or_zin_hancagorc.pdf [դիտվել է 17.08.2020]:

են համարում այս պատժատեսակը (իրենց արժանապատվությունը կոխկրտելը)։

3. Վերբալ բռնություն ինքնահաստատվելու համար։ Սպաները հաճախ կիրառում են վերբալ բռնությունը նաև վերը նշված համատեքստերից դուրս։ Ռեսպոնդենտների խոսքով՝ որոշ սպաներ վերբալ բռնությունը կիրառում են ուժեղ սպայի հեղինակություն ձեռք բերելու համար, բանակային լեզվով՝ «ձիգ» երևալու համար։ Առկա են նաև եզակի դեպքեր, երբ սպան սովոր է վերբալ բռնություն օգտագործելուն և դա համարում է իր ծառայության ուղենիշը։

4. Վերբալ բռնությունը նաև նպատակին հասնելու կարճ և ժամանակ խնայող մեթոդ է։ Նորմատիվ ընթացակարգերի փոխարեն հայհոյանքը կամ հայհոյախառն սպառնալիքներին դիմելը դառնում է նպատակին հասնելու արագ ու «հարմար» մեթոդ։ Սա նշանակում է, որ կա՛մ իրոք օբյեկտիվորեն գոյություն ունի ժամանակի սղություն, կա՛մ սպան գերադասում է այս մեթոդը նորմատիվ մեթոդի համեմատ պարզապես ժամանակ խնայելու համար, կամ էլ նա չի ցանկանում ժամանակ ծախսել զանցանքի հիմքերի մեջ խորանալու և ոչ նորմատիվ, սակայն և ոչ վերբալ բռնության միջոցով այլընտրանքային մեթոդ գտնել հարցը լուծելու համար։

Ինչպես երևում է վերը նշվածից, վերբալ բռնությանը դիմելու հիմքերը տարբեր են, և վերբալ բռնությունը հաճախ դրսևորվում է նորմատիվ կառավարչամիջոցների բացակայության, անբավարարության կամ անօգտագործելիության պատճառով։ Մյուս կողմից, նորմատիվից դուրս՝ այլընտրանքային միջոցները, որոնք հնարավորություն կտային վերբալ բռնությունից խուսափել, նույնպես տարածված չեն, համենայն դեպս, մեր ռեսպոնդենտները դրանք չեն նշել։ Օրինակ՝ զինվորների նկատմամբ անհատական մոտեցումներն այդքան էլ հաճախ չեն կիրառվում բանակային կյանքում։ Մշտապես բանակ են զորակոչվում

տարբեր հայացքների, համոզմունքների և սովորությունների տեր մարդիկ, հետևաբար երբեմն առողջ և բռնությունից զերծ հաղորդակցություն կառուցելու համար անհրաժեշտ է անհատապես աշխատել շարքային զինծառայողների հետ։

Ֆիզիկական բռնության դրսևորումները և դրանց դրդապատճառները

Ֆիզիկական բռնության դրդապատճառների դասակարգումը համընկնում է վերբալ բռնության պատճառների վերը նշված դասակարգմանը՝ բացառությամբ 3-րդ կետի։ Ֆիզիկական բռնությունը սպաների կողմից առավել հաճախ կիրառվում է պատժելու նպատակով և միևնույն խախտումը հաճախ կրկնող զինծառայողների նկատմամբ։

> *«Մեր կամբատը հիմնականում չէր տփում, բայց եթե իրա ասածը մի քանի անգամ չանեիր, կամ, ասենք, ջոկեր, որ նարյադներին հիմնականում քնում ես, կխփեր»*[144]*։*

Ֆիզիկական բռնությունը հիմնականում կիրառվում է որպես ծայրահեղ մեթոդ, երբ ցուցումներն ու հայհոյանքները արդյունք չեն տալիս։ Այն նաև կիրառվում է առանձնակի ծանր խախտումներ կատարած զինծառայողների նկատմամբ։ Այդպիսիք են զորամասում ալկոհոլի կիրառումը, զինծառայության վայրն ինքնակամ լքելը և այլն։ Ֆիզիկական բռնության կիրառումը նորմատիվ պատժի փոխարեն և՛ սպաների, և՛ զինծառայողների կողմից ընդունելի է համարվում այն դեպքում, երբ նորմատիվ ճանապարհով պատիժը զինծառայողի համար կունենար ծանր հետևանքներ։

> *«Մի օր տղեքով խմում էինք, վաշտի հրամանատարը բռնցրեց ու սաղիս քցեց քացու տակ, ես տենց ծեծ կյանքում չէի կերել, բայց դե եթե չծեծեր, զեկուցելու*

144. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

էր, դատեին, ընդհանուր լավ պրծանք»[145]*:*

Սպաները, ըստ հարցազրույցների և քննարկումների մասնակիցների, ինքնահաստատման նպատակով չեն դիմում ֆիզիկական բռնության։

«Եթե աֆիցեռը խփում ա, հիմնականում պատճառ կա, շատ դեպքերում համը հանում են, բայց որ խփեն ուժեղ երևալու համար՝ չէի ասի»[146]*:*

Սպա-զինվոր հարաբերությունների համատեքստում հաճախ հալածանքները կիրառության մեջ են դրվում տեղեկություն ստանալու կամ տարատեսակ դեպքերը բացահայտելու համար։

Մենք քննության չենք առել այն դեպքերը, երբ զինծառայողներն են դիմում բռնության սպաների նկատմամբ։ Այդ դեպքերը սակավ են, ուստի կարելի է դրանք դասել հատուկ պատահարների շարքին։ Նույն շարքից են սեռական բռնության դրսևորումները։ Սրանք եզակի դեպքեր են, որոնց ուսումնասիրությունը սույն աշխատանքի գլխավոր նպատակներից չէ, քանի որ մենք փորձում ենք նկարագրել ամենից տարածված և հաճախ կրկնվող բանակային «մշակույթի» երևույթները, որոնք որոշիչ գործոն են, մասսայական են և կանխորոշում են նաև բանակի ազդեցությունը քաղաքացիական կյանքի և ամբողջ հասարակության վրա։ Բռնության վերը նշված տարածված տեսակները, նաև հասարակության մշակույթով պայմանավորված, ներթափանցում են բանակային կյանք, այստեղ ուժգնանալով՝ որպես «ժառանգություն» անցնում հասարակական կյանք՝ այդպիսով պայմանավորելով մի շարք հանգամանքներ. ա) բանակի պակաս արդյունավետությունը՝ համեմատած այն իրավիճակի հետ, եթե բռնության այս տեսակները «մշակույթ» չհանդիսանային,

145. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

146. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

բ) հասարակական կյանքի հավելյալ հակվածությունը դեպի բռնության տարրեր պարունակող հարաբերություններ և այդպիսով՝ հասարակության լիարժեք և լիիրավ, ազատ ու չճնշված անդամների փոխհարաբերություններն ու երկրի զարգացման տեմպերի դանդաղումը:

Բռնության դրսևորումները զինվոր-զինվոր հարաբերություններում

Զինվոր-զինվոր հարաբերություններում հանդիպող բռնության հիմնական տեսակները նույնն են, ինչ զինվոր-սպա հարաբերություններում՝ վերբալ, ֆիզիկական բռնություն և հալածանք: Այս դեպքում, սակայն, տարբեր են դրդապատճառները:

Վերբալ և ֆիզիկական բռնություն

Բանակային կյանքի համակեցության ընթացքում վերբալ և ֆիզիկական բռնության հիմնական դրդապատճառը ինքնահաստատվելու ձգտումն է: Այս կերպ զինծառայողները փորձում են բանակային հարաբերությունների համակարգում զբաղեցնել առավել արտոնյալ կարգավիճակ: Արտոնյալ կարգավիճակում գտնվող զինծառայողներին անվանում են «յախշի», «լռվող», «ձիգ», «ռոտավիկ» և այլն: Ոչ նորմատիվ դերային համակարգն ավելի մանրամասն կներկայացվի ստորև:

Բռնության դրսևորումների մեկ այլ պատճառ է ինքնապաշտպանությունը: Երբ անձի իրավունքները պաշտպանող ֆորմալ ինստիտուտներն ու մեխանիզմները չեն աշխատում, սեփական միջոցներով պաշտպանությունն իրականացնելու անհրաժեշտություն է առաջանում:

> *«Եթե ինչ-որ մեկը ինքնասիրությանդ կպնում ա, պարզ ա՝ պետք ա ստանաս, եթե ներողություն չխնդրի՝ պետք ա խփես»*[147]*:*

147. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

Ֆիզիկական բռնության դրդապատճառ կարող է դառնալ վերբալ բռնությունը: Օրինակ՝ ի պատասխան հայհոյանքի՝ գործածվում է ֆիզիկական բռնությունը: «Սենց մենք խոսում ենք, կամ ընդունված ա, որ բռնություն չի կարելի, բայց մի պահ պատկերացրու՝ քեզ քֆուր են տալիս: Ինձ թվում ա՝ բոլոր տղաներն էլ քֆուրի համար կդիմեն ծեծի մեթոդին»[148]:

Հալածանքներ

Հալածանքները զինվոր-զինվոր հարաբերություններում դրսևորվում են տարբեր պատճառներով և պատմական խոր հիմքեր ունեն (առնվազն Ռուսական կայսրության, հետո՝ խորհրդային բանակի ժամանակներից, իսկ միջազգայնորեն հատուկ են եղել շատ ու շատ, եթե ոչ բոլոր մշակույթներին):[149] Սույն խնդիրը ամբողջապես վերլուծելու համար անհրաժեշտ են բազմադիսցիպլինար հետազոտություններ: Ելնելով այս ուսումնասիրության արդյունքներից՝ ունենք հետևյալ պատկերը.

- Զինվոր-զինվոր հարաբերություններում հալածանքի են

148. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

149. Նման հարցերին են անդրադառնում, օրինակ, հետևյալ հետազոտությունները.

Wither, J. (2004). Battling Bullying in the British Army 1987 – 2004. The Journal of power institutions in post-soviet societies, (Issue 1). Available at: https://journals.openedition.org/pipss/46 [Accessed 17.08.2020].

Braithwaite, R. (2010). Dedovshchina: Bullying In The Russian Army. [online] openDemocracy. Available at: https://www.opendemocracy.net/en/odr/dedovshchina-bullying-in-russian-army/ [Accessed 18 August 2020].

Obraztsov, Igor. (2006). The Reasons for Dedovshchina and Ways to Prevent it: A Retrospective Analysis. in Dauce, F., & Sieca-Kozlowski, E. (2006). Dedovshchina in the post-soviet military: hazing of Russian army conscripts in a comparative perspective. Stuttgart, Ibidem-Verlag, pp. 105-120. Available at: https://www.researchgate.net/publication/321289614_The_Reasons_for_Dedovshchina_and_Ways_to_Prevent_it_A_Retrospective_Analysis [Accessed 18 August 2020].

Kamarck, Kristy N. (2019). Hazing in the Armed Forces. CRS In Focus, IF10948. Library of Congress. Congressional Research Service. Available at: https://fas.org/sgp/crs/natsec/IF10948.pdf [Accessed 18 August 2020].

ենթարկվում առավել թույլ (ֆիզիկապես կամ հոգեպես) զինվորները:

- Սույն հետազոտության հարցազրույցներին և քննարկումներին մասնակցած սպաների և նախկին զինծառայողների պնդմամբ՝ հալածանքների դեպքերը կնվազեն զինվոր-զինվոր հարաբերություններում, եթե զինվորները չունենան շատ պարապ ժամանակ:
- Հալածանքի թիրախ դարձած զինծառայողները սովորաբար մինչև ծառայության վերջ շարունակաբար ենթարկվում են հալածանքների:
- Զինծառայողները կարող են սկսել ենթարկվել շարունակական հալածանքների որևէ վարկաբեկող քայլ կատարելուց հետո:

«Մեր մոտ կային տենց երեխեք, որ սիմոն էին, ինչ ասում էիր, անում էին: Դրանց ես հետևում էի, որ շատ չնեղեին, թե չէ կարողա իրանց վնաս-մնաս տային, մնային վրեքս»[150]:

«Ամեն զորամասում էլ նենց զինվոր կա, որ խեղճ ա, կամ ինչ-որ բազարներով խեղճացրել են: Իրանք մինչև ծառայության վերջ գլուխները կախ աշխատում են ապրեն, որ գնան հասնեն տուն: Սենց դեպքերում լավ ա, որ չաստում լավ տղայ ա լինում ու չի թողում, որ շատ հելնեն իրա մեջքին, թե չէ կարող ա վատ հետևանքներ ունենա»[151]:

Այսպիսով՝ զինվոր-զինվոր հարաբերություններում բռնությունը տարբեր դրդապատճառներ ունի: Զինծառայողն իր ծառայության ընթացքում կարող է կատարել այնպիսի արարք, որը ընդունելի չէ տվյալ միջավայրի կողմից, և այդ

150. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

151. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

արարքից հետո դառնալ հալածանքի թիրախ։ Նման դեպքերից են գողությունը, թաքուն ուտելը, հիգիենայի կանոններին չհետևելը և այլն։

Շատ ազատ (պարապ) ժամանակը, սպաների և նախկին զինծառայողների կարծիքով, վտանգներ է պարունակում։ Ըստ նրանց՝ շատ խախտումներ և պատահարներ հենց հանգստի ժամերին են տեղի ունենում։ Այս համատեքստում տեղին է մեջբերել բանակային կյանքում հայտնի դարձած մի «թևավոր» խոսք. *«Պարապ զինվորը պոտենցիալ հանցագործ է, զինվորին չի կարելի պարապ թողնել»։*

ԲՌՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Բռնության դրսևորման հիմնական պատճառներից է կանոնադրային հարաբերությունների անբավարարությունը։ Կանոնադրային հարաբերությունների պահպանումն է այն գործիքը, որը հնարավորություն կտա կանխելու բռնությունը և կարգուկանոն պահպանելու բանակային կյանքում։ Կանոնադրային հարաբերությունների պահպանման համար պատասխանատու են բանակում ղեկավար պաշտոն ունեցող գրեթե բոլոր անձինք։ Կանոնադրային հարաբերությունները սահմանում են և՛ զինվոր-զինվոր, և՛ սպա-զինվոր հարաբերությունները։ Այս ինստիտուտի միջոցով պիտի կարգավորվի բանակում ներանձնային հարաբերությունների խոշոր մասը։ Նրանով սահմանվում են յուրաքանչյուրի պարտականությունները, փոխհարաբերությունների ընդունելի, օրինակելի ձևերը և այլն։ Այդ հարաբերությունների պահպանման գործառույթը մեծ մասամբ դրված է սպայակազմի ուսերին և վերահսկվում է վերջիններիս կողմից, իսկ վերը նշված օրինակները բացատրում են, թե ինչու շարքայինները հակված չեն հետևելու օրենքով սահմանված կանոնադրային փոխհարաբերություններին։

Միևնույն ժամանակ հասկանալի է, որ նույնիսկ ամենալավ կանոնադրային փոխհարաբերությունները՝ ո՛չ միայն ձևա-

կերպված, այլև պահպանվող, բավական չեն լինի, որ բանակում չառաջանան ոչ ֆորմալ իրադրություններ, որոնք կարող են կրել նաև բռնության ռիսկեր: Սրանից խուսափելու համար անհրաժեշտ են խոշորածավալ բարեփոխումներին ուղղված հետևյալ քայլերը.

ա) Հասարակության համակեցության մշակույթում և վարքագծում պետք է իրականացնել լուրջ փոփոխություններ. ընտանիքները, դպրոցները պիտի դաստիարակեն քաղաքացիներ՝ բռնությունից զերծ հոգեբանությամբ: Կարևոր են հարգանքի սերմանումը և բարձրացումը պետական ինստիտուտների և օրենքի նկատմամբ:

բ) Նորակոչիկները կարիք ունեն ստանալու նախնական պատրաստություն՝ կապված կանոնադրական և ոչ ֆորմալ հարաբերությունները ճիշտ գնահատելու և համատեղելու հետ:

գ) Սպաները պիտի սովորեն՝ ինչպես կարգավորել կանոնադրական փոխհարաբերությունների համատեղումը ոչ ֆորմալ հարաբերությունների հետ՝ առանց բռնության դիմելու:

Թվում է, թե սրանք բարդ խնդիրներ են, սակայն ոչ այնքան. արդեն տասնյակ տարիներ է, ինչ ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ ֆիզիկական բռնությունը բացառիկ և անհանդուրժելի է համարվում (թեև երբեմն տեղի է ունենում): Նույն կերպ էլ բանակի բռնությունը պիտի հայտարարվի անհանդուրժելի ոչ միայն օրենքով (ինչը մասամբ կա), այլև հասարակության անդամների կողմից ներսեփականացված արժեքային համակարգով:

Բռնության առկայությունը պայմանավորված է նաև ցածր կրթական մակարդակով: ՀՀ-ում բանակ զորակոչվելու համար նախատեսված տարիքային շեմը 18-ն է[152], հետևաբար,

152. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (2017), հոդ. 19, մաս 2: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117633 [դիտվել է 16.07.2020]:

զինծառայողների գերակշռող հատվածը չունի բարձրագույն կրթություն կամ ունի թերի բարձրագույն կրթություն: Իսկ կրթական առավել ցածր ցենզ ունեցողների շրջանում և՛ օրինախախտ վարքի դրսևորումը, և՛ ոչ ֆորմալ հարաբերությունները ոչ բռնի կերպով կարգավորելու հմտություններ չունենալն ավելի հավանական են, քան բարձրագույն կրթություն ստացածների շրջանում: Հետաքրքիր են «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների»[153] հասարակական կազմակերպության՝ 2012 թ. հրապարակած զեկույցում տեղ գտած տվյալները: Զեկույցում մոնիթորինգի են ենթարկվել 2010 թ. ՀՀ դատարանների քննած՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները: 2010 թ. զինվորական գործերով անցնող ամբաստանյալների միայն 19 տոկոսն ունի բարձրագույն, իսկ 4 տոկոսը՝ թերի բարձրագույն կրթություն[154]: Հավելենք, որ այս խմբում ներառված են նաև սպաներ: Այնպիսի հոդվածով, ինչպիսին է զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելը (ՀՀ ՔՕ 361), 2010 թվականի ընթացքում ոչ մի բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն ստացած և ժամկետային զինծառայող չի պատժվել: Զեկույցում նշված է, որ բարձրագույն կրթություն ստացած անձինք ավելի բարձր պատասխանատվության զգացում և հնարավոր արարքի հետևանքների գիտակցում ունեն: Մինչդեռ բարձրագույն կրթություն ստացածներն առավել հաճախ պատժի են ենթարկվում ՀՀ ՔՕ 363-րդ հոդվածով (անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայության կատարումը դադարեցնելը): Այսպիսով՝ բարձր կրթական ցենզը, մի կողմից, դրական է անդրադառնում կանոնադրային փոխհարաբերությունների ընկալման որակի վրա, իսկ մյուս կողմից՝ հասկանալով,

153. Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների (2012), Զինվորական հանցագործությունների վերաբերյալ դատական գործերի դիտարկման արդյունք-ներ. զեկույց: Երևան:

154. Տե՛ս նշված զեկույցի էջ 19:

որ միայնակ չեն կարողանա դիմակայել բանակում տիրող բռնության մթնոլորտին, բարձր կրթական ցենզ ունեցող անձինք, հավանական է, դիմում են ապօրինի միջոցների՝ այդ ճակատագրից ազատվելու համար: Սա ցավալի դիտարկում է, քանի որ նշանակում է, որ բանակում ծառայող բարձր կրթական ցենզով որոշ անձինք ավելի բարձր պատասխանատվություն և հպարտություն չեն զգում, որ ծառայում են զինված ուժերում: Նրանք փորձում են «ապստամբել» իրենց ճակատագրի դեմ՝ դիմելով նաև անօրինական միջոցների: Կարելի է ենթադրել, որ ավելի պակաս կրթված որոշ անձինք նույնպես ծառայում են «ստիպված» և չեն արժևորում ծառայության պատիվը:

Սպաների կարծիքը բռնության դրսևորումների պատճառների մասին

Սույն ուսումնասիրության ընթացքում հարցազրույցներին և քննարկումներին մասնակցել են նաև ոչ վաղ անցյալում զորացրված՝ լեյտենանտի և ավագ լեյտենանտի կոչում ունեցող սպաներ: Պարտադիր զինվորական ծառայություն անցած շարքային և սերժանտի կոչումներ ունեցող զինծառայողների հետ հարցազրույցներից և քննարկումներից մենք պատկերացում կազմեցինք սպաների ծառայողական մեթոդների և նրանց լեզվամտածողության մասին: Դժվար է պատկերացնել, որ քրեական ենթամշակույթի մեջ ընկղմված և այդ լեզվամտածողությամբ առաջնորդվող սուբյեկտները կարողանան պայքարել քրեական բարքերի դեմ: Տեղին է հարցադրումը՝ արդյոք բանակային կյանքում իրականացվո՞ւմ են հատուկ միջոցառումներ քրեական բարքերի դեմ:

Լեյտենանտի և ավագ լեյտենանտի կոչում ունեցող սպաները ժամանակն ամենից շատ անցկացնում են պարտադիր զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների հետ, ուստի և ակնկալվում է, որ հենց այս սպայական խումբը պետք է լինի այդ պայքարի առաջնագծում:

Հարցազրույցներից պարզ դարձավ, որ սույն հետազոտության ռեսպոնդենտ սպաները ծառայության ընթացքում հատուկ ուշադրություն չեն դարձրել քրեական ենթամշակույթի դեմ պայքարին: Նրանց խոսքով՝ դա ընդհանուր առմամբ իրենց ստորաբաժանումների հիմնական խնդիրների մեջ չէր մտնում: Յուրաքանչյուր սպա ինքն էր որոշում սույն հարցի հետ կապված իր գործողությունները, այդ խնդրի վերաբերյալ չկար հատուկ օրակարգ: Սպաների ներկա վարքագծի և լեզվամտածողության վերաբերյալ հնչեցին հետևյալ կարծիքները (մեջբերվում են խմբագրված տեսքով).

- Զինծառայության անցնող սպաները չունեն բավարար կրթություն գրագետ կեցվածք և խոսք դրսևորելու համար:
- Նորակոչ սպաները կրկնօրինակում են ավելի փորձառուներին:
- Զորամասերում առանձին ուշադրություն չի դարձվում քրեական ենթամշակույթի դրսևորումների դեմ պայքարի անհրաժեշտությանը, չկան հատուկ հանձնարարականներ այս հարցին վերաբերող խնդիրների լուծման առնչությամբ:
- Սպաներն իրենց հիմնական խնդիրն են համարում կարգուկանոնի պահպանումը և առանձնապես ուշադրություն չեն դարձնում կարգուկանոնի պահպանման մեթոդների վրա:
- Սպաները նույն հասարակության անդամներն են և ունեն այն մտածելակերպը, ինչ շարքայինները. այս համատեքստում սպաները տարբերություններ չեն տեսնում:

Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում ուսանելու տարիների մասին խոսելիս սպաները հաստատությունում տիրող մոտեցումներից ընդգծում էին առանձնակի խստությունը (դրական իմաստով), ուսուցման բովանդակային հարստությունը, բայց նաև այն, որ փոր-

ձաշրջանների ժամանակ խիստ հակադրություն է առաջացել «լսածի և տեսածի» միջև։

> *«Ստաժիրովկի ժամանակ գնում էինք մի հատ գունդ։ Մի անգամ կամբատը ասեց՝ այ կ... ծայրեր, շարվեք, ժ... տամ ձեր վրա, քայլով մարշ։ Հետո, որ հասանք պուշկեքի մոտ, ասեց՝ ամեն մեկդ գնացեք մի հատ պուշկի մոտ լռվեք ձեր համար։ Հետո էլ ասեց՝ Պոդոսիկ, արի հլը տես՝ կարաս էս հեռախոսը ծախես։ Հիմա ես էս սաղ տենամ, գնամ զորամաս ի՞նչ անեմ, պիտի նույն բանն էլ ես անեմ։ Մարդիկ ստաժիրովկի են գնում, տենում են՝ ոնց ա աֆիցեռը զինվորների հետ բիզնես անում կամ պլան ծխում»[155]։*

Սպաների խոսքով՝ փորձաշրջանները բավականին ապամոտիվացնող ազդեցություն են թողել կանոնադրային փոխհարաբերությունների պահպանման համար։ Կրկին հաստատվում է վերոնշյալ պնդումը, որ հայհոյանքով և սպառնալիքներով գործողությունների դրդելը սովորույթ է, և որոշ սպաներ դա կարգուկանոնի հաստատման ավելի արագ ու արդյունավետ միջոց են համարում։

Սպաների պարտականությունների պատշաճ կատարման մեկ այլ խոչընդոտ է պատժի և խրախուսանքի առկա մեխանիզմը։ Երբ սպան միջինից ցածր կարգի որևէ նորմ է խախտում, հասանելիք պատիժը ձևական բնույթ է կրում.

> *«Օրինակ, եթե ես խախտում եմ անում, ինձ ի՞նչ պետք ա անեն, մի հատ նկատողություն կտան, հետո խիստ նկատողություն, հետո ինչ-որ մի բան չասող արտոնությունից իբր կզրկեն, բայց հո գործից չե՞ն հանելու։ Ասենք, հա, բարձր կոչում ունեցողին կարան ռազժալովատ անեն, բայց լեյտենանտին հո գործից չե՞ն հանելու։ Հլը մի բան էլ լիքը աֆիցեռ սպասում ա իրա ժամկետը լրանա՝ զորացրվի գնա։*

155. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, 25-30 տարեկան սպա։

Օրինակ՝ ինչ պետք ա լինի, որ ես ահավոր զգաստանամ, սաղ չոտկի անեմ. պարզ ա, պետք ա աշխատավարձիցս պահեն, բայց տենց բան ես չեմ տեսե։ Հետո էլ սպայի համար հիմիկվա աշխատավարձը շատ քիչ ա համեմատ էն աշխատանքին, որ ինքն անում ա։ Մարդը չի վախենում իրա գործը կորցնելուց, էս ա հիմնական խնդիրը»[156]*։*

Այս կարծիքը վեր է հանում մի շարք խնդիրներ։ Նախ՝ ոչ միայն շարքայինները, այլև սպաներն արժեքային մոտեցում չունեն ծառայության հանդեպ, մտածում են՝ մի կերպ անցկացնել ծառայության տարիները՝ անբավարար վարձատրվելով, և զորացրվել։ Երկրորդ՝ կա սպաների պակաս, ինչն առնչվում է պաշտպանական խնդիրներին։ Երրորդ՝ աշխատանքի որակին համապատասխան խրախուսանքների և պատիժների համակարգը լավ չի գործում։

Սպաների մոտեցումը բանակում ներանձնային հարաբերություններին առանձնապես չի տարբերվում շարքային կազմի մոտեցումներից. նրանց պնդմամբ՝ նույն մտածելակերպով են առաջնորդվում թե՛ սպաները, թե՛ շարքայինները.

«Էսօր ի՞նչ տարբերություն ձեր ասած զինվոր-զինվոր թե սպա-սպա հարաբերությունների մեջ։ Կարող ա՞ սպայի պատկերացմամբ բանակում բոզեր չկան։ Մի հատ լավ խոսք կա՝ բանակում սաղն էլ բոզ են»[157]*։*

Տեսնում ենք նաև բանակի հանդեպ անարգալից վերաբերմունքի խորքային և մասսայական դրսևորման արտահայտում։

Լուրջ հիմնախնդիր է աշխատավարձերի հարցը։ Վարձավճարի համեմատ աշխատանքի ծանրաբեռնվածության գնահատումը պիտի իրականացվի մասնագիտական ու-

156. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, 25-30 տարեկան սպա։

157. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, 25-30 տարեկան սպա։

սումնասիրությունների միջոցով: 2018 թ. հեղափոխությունը լավ հիմքեր է ստեղծել դրա համար:

Սպաների խոսքով՝ սպայական կոչում ունեցող բազմաթիվ զինծառայողներ դիմում են բռնության՝ շարքայինների մասին մտածելով: Ըստ նրանց՝ շարքայինին ավելի «ձեռք է տալիս» ենթարկվել ֆիզիկական բռնության, քան դատապարտվել քրեական պատասխանատվության՝ ենթարկվելու նորմը խախտելու համար: Իսկ եթե սպան չզեկուցի, բայց նաև չպատժի, խախտումների քանակի անկանգ աճ կգրանցվի: Սպաների խոսքով՝ զինծառայողների մեծ մասը բռնությունը գերադասում է քրեական պատասխանատվության ենթարկվելուց նաև այն պատճառով, որ քրեական պատասխանատվություն կրելը ենթադրում է պատիժը կրել և հետո վերադառնալ ու ավարտել զինծառայության չավարտված մասը: Այս վերաբերմունքը, իհարկե, առաջադրում է նաև քրեական օրենսգրքի և անազատության մշակույթի փոփոխման կարիք, քանի որ սրանից բխում է, որ քրեական պատիժը շատ ավելի անհամաչափ է մի շարք զանցանքների համար պատժի այն չափի համեմատ, որը կհամարվեր համապատասխան: Դա գուցե պայմանավորված է ոչ թե կամ ոչ միայն օրենքի խստությամբ, այլև անազատության մեջ գտնվելիս քրեական մշակույթի բռնության մթնոլորտի մեջ ընկղմվելու տագնապով: Սա նաև, իհարկե, ցուցիչ է, որ պաշտոնապես պատժի կրումը չի ընկալվում որպես ուղղվելու միջոց, այլ զուտ որպես տուժելու սպառնալիք:

Ամփոփելով այս ենթաբաժինը՝ կարելի է պնդել, որ, ըստ ռեսպոնդենտների, սպաներն իրենց չեն համարում առկա բարքերից և կարծրատիպերից վեր կանգնած և այդ բարքերի դեմ պայքարող առաքելությամբ օժտված ծառայողներ: Այս հանգամանքը դժվարացնում է քրեական ենթամշակույթի դրսևորումների նվազեցումը: Միևնույն ժամանակ պատժի և խրախուսանքի մեխանիզմներն արդյունավետ չեն, և սպաներն առանձնապես անհանգստացած չեն տարատեսակ

տույժերից և նկատողություններից (խոսքը ցածր սպայական կոչում ունեցողների մասին է)։ Իսկ ռազմական համալսարանի և զինվորական ստորաբաժանումների առօրյաների բևեռացվածությունը հանգեցնում է հիասթափության, կասկածի տակ է դրվում ռազմական համալսարանում ներկայացված ծառայության մոդելը։

ԿԱՆՈՆԱԴՐԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԴԵ ՅՈՒՐԵ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀՅՈՒՍՎԱԾՔԸ ԲԱՆԱԿՈՒՄ

ՀՀ զինված ուժերում կանոնադրային փոխհարաբերությունների խիստ պահպանումը, դրանց պատշաճորեն հետևելն այն հիմնական մեթոդն է, որ նախատեսված է արատավոր բարքերը՝ բռնություն, անհավասարություն և այլն, և դրանցից բխող պատահարները բացառելու նպատակով։ Իրոք, եթե պահպանվեն կանոնադրային փոխհարաբերությունները, և լինեն հավելյալ անհրաժեշտ միջոցներ, որոնք թույլ կտան, որ չոտնահարվի զինծառայողների արժանապատվությունը, կստեղծվի արդարության և համերաշխության մթնոլորտ։

Ինչպես արդեն տեսանք, կանոնադրային փոխհարաբերությունների ոչ պատշաճ պահպանումը մեծ չափով պայմանավորված է ցածր աշխատավարձով, անձնակազմի կրթական ցածր ցենզով, հասարակության մի մասին հատուկ արատավոր բարքերով, գերիշխող կարծրատիպերով, որոնք սողոսկում են բանակ քաղաքացիական կյանքից։

Օրինակելի դեպք

Դիտարկենք, սակայն, հետազոտության ընթացքում բացահայտված մի օրինակելի դեպք. նույնիսկ ՀՀ-ում ներկայիս կրթական մակարդակի և ֆինանսական դժվարությունների պայմաններում հնարավոր է ունենալ կանոնադրային փոխհարաբերությունների պահպանման տեսանկյունից օրինա-

կելի զորամիավորում։ Կան զորամասեր, որտեղ հայհոյանքը բացառված է[158]։ Հարցազրույցների և ֆոկուսխմբային քննարկումների մասնակիցներից ոմանք ծառայել են տվյալ զորամասում կամ առնչվել դրան։

> *«Անձամբ ես այդ զորամասում եմ ծառայել։ Վեց ամիսների ընթացքում ես չեմ նկատել, որ զինվորին հայհոյեն, առավել ևս՝ ֆիզիկական ինչ-որ բան։ Դրանք բացառված բաներ էին։ Ես անգամ հիշում եմ, որ կային սպաներ, որոնք «դուք»-ով էին խոսում զինվորների հետ։ Կխաբեմ ասելով, որ երբևէ ոչ մի բռնության տեսակ չի եղել, բայց դրանք հազվադեպ երևույթներ են»[159]։*

Մեկ այլ մասնակից նշեց. *«Հիշում եմ՝ մեզ հետ էր ծառայում բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի որդին, և նա որևիցե արտոնություն չուներ։ Դաժը հիշում եմ, որ ուվալնենուց զրկել էին իրան վատ պահելու համար»[160]։*

Մեկ այլ մասնակից հավելեց. *«Ինձ շատ հարազատ մարդիկ ծառայել են X զորամասում։ Սաղն էլ ասել են, որ ուստավ ա, ու բոլորս հավասար ենք։ Երբևէ չեմ լսել, որ խնդիրներ ունենան որևէ սպայի կամ զինվորի հետ։ Միակ բանը, որ բողոքել են, խստությունն ա»[161]։*

Տվյալ զորամասն ունի խիստ զորամասի համբավ, և այնտեղ «դժվարություն» եզրույթը ասոցացվում է ծառայողական դժվարությունների հետ, մինչդեռ հարցման մասնակից նախազորակոչային տարիքի երիտասարդները բանակային դժվարություն ասելով նկատի են ունենում տեղական

158. Զորամասի անունը նպատակահարմար չի համարվել հրապարակել, քանի որ դա կարող է որոշակի ռիսկեր պարունակել։

159. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

160. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

161. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

բարքերին հարմարվելը: *«Ես որ գնամ բանակ, հիմնական դժվարությունը, երևի, այնտեղ հարմարվելն ա, կյանքի ձևը հասկանալը: Ծառայողական դժվարությունների մասով՝ հա, առավոտ էդքան շուտ զարթնելը բարդ կլինի»*[162]:

X-ը ուսումնական զորամաս է, որտեղ վերապատրաստում են սերժանտական կազմին: Սա ենթադրում է, որ զորամասի զինվորական կազմը մեծ մասամբ թերի բարձրագույն կրթություն (բակալավրի աստիճան) ունեցող և ավելի բարձր տարիքային խմբի զինծառայողներ են: Ավելին հասկանալու համար անհրաժեշտ է հավելյալ համեմատական ուսումնասիրություն:

Անվստահության մթնոլորտ

Անվստահության հարաբերություններն անվանվում են «բանակային» մի շարք արտահայտություններով. փուռը տալ, դայաղ անել, դեմ տալ, բոզնալ: Սույն արտահայտությունները, հասարակությունից տեղափոխվելով բանակ, որոշակի փոփոխություններ են կրել: Հասարակության ներսում նման արտահայտությունների հոմանիշ կարելի է համարել «գործ տալը»: «Փուռը տալու» գաղափարը բանակային կյանքում շրջանառվում է ոչ միայն շարքային զինծառայողների հարաբերություններում, այլև ուղեկցում է բոլոր զինվորականներին: Երբ շարքայինը զեկուցում է լեյտենանտին, նա «փուռն է տալիս» զինվորին, իսկ երբ լեյտենանտը զեկուցում է փոխգնդապետին, նա «փուռն է տալիս» կապիտանին: Այս անվստահության հաջորդականությունը հասնում է մինչև ռազմական ոստիկանություն և նախարարություն:

Ֆորմալ հիերարխիայով տեղեկություն հաղորդելը «փուռը տալ» է, քանի որ հակասում է ոչ ֆորմալ հիերարխիայով հաստատված կանոններին: Բանակային կյանքում առկա աստիճանակարգային հարաբերությունների անկատա-

162. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

ության համատեքստում դրանք վերափոխվում են անվստահության մթնոլորտի փուլերի: Երբ այս իրավիճակը վերածում ենք պատկերի՝ ներկայացնելով անվստահության հիերարխիան, այն ստանում է հետևյալ տեսքը.



Պատկեր 1

Բաժանումն իրականացված է զինվորական գնդի համամասնությամբ: Յուրաքանչյուր մակարդակի անձնակազմի հարաբերություններն առավել ամուր են, առկա է վստահության որոշակի մթնոլորտ: Անվստահության ռիսկերն ավելանում են միջմակարդակային հարաբերություններում: Այսինքն՝ զինվոր-զինվոր հարաբերություններում առկա է բարձր վստահության մակարդակ, իսկ զինվոր-սպա հարաբերություններում առկա է ցածր վստահության մակարդակ: Այս սկզբունքով անվստահությունը «ճառագում է» ներքևից

«վերև» (չնայած ռազմական ոստիկանության՝ ոչ ուղղակիորեն աստիճանակարգի մաս լինելուն՝ նրան «դարձնելով» ամենավերին օղակ ռիսկի տեսակետից):

Շարքային-սպա հարաբերությունների անվստահության մեխանիզմը նման է հասարակության մեջ արմատացած անվստահության մեխանիզմին քաղաքացի-պետություն հարաբերություններում: Շատերիս է ծանոթ անվստահությունը, անհաջողության սպասումը և՛ ոստիկանի հետ շփվելիս, և՛ պետական որևէ մարմնի հետ ինչ-որ գործընթացի մասնակից լինելիս: Այսպես, տարիներ առաջ փորձ արվեց բարեփոխելու անձնագրերի դուրսգրման համակարգը, ինչը վերացրեց կաշառքների մեծ մասը և ամրապնդեց վստահությունն այդ ծառայության նկատմամբ: Նույնպիսի վերափոխման փորձեր են արվել նոտարական համակարգում: Հայտնի է, որ երեխային ծնողների հետ օդային ճամփորդության հավաստագիր տալու համար նոտարներն անօրեն կերպով պահանջում էին տեսնել օդանավի տոմսը, ժամանման երկրի վիզան, նույնիսկ հյուրանոցի մուծման ապացույց և դրամական միջոցների ապահովությունը փաստող վկայություն: Բնական է, որ այդպիսի անօրեն մոտեցումը (շատ այլ օրինակներով էլ ամրապնդված) հատուկ անվստահություն էր սերմանում այդ ծառայության նկատմամբ: Նույն կերպ վերջերս, արդեն 2018 թ. հեղափոխությունից հետո, սկսեց բարեփոխման ենթարկվել կադաստրի ծառայությունը, և վստահությունը նրա նկատմամբ կտրուկ աճ արձանագրեց: Լավ գիտենք նաև բազում դեպքեր, երբ նույնիսկ ոճրագործությունը չեն հայտնում ոստիկանությանը, քանի որ չկա վստահություն, որ պարզապես հայտնելը խնդիրներ չի առաջացնի հենց հայտնողի համար:

Ճիշտ այնպես, ինչպես քաղաքացիական հարաբերություններում անվստահությունը դեպի պետական օրգանը ստեղծում է մոտիվացիա՝ դիմելու անձնական կապերին՝ հարցը լուծելու «ոչ ֆորմալ մեթոդներով», նույն կերպ էլ բանակում

ոչ ֆորմալ մեթոդները հաճախ գերադասելի են ֆորմալ մեթոդներից:

Ահա օրինակներ ռեսպոնդենտների կարծիքներից:

1. Զինծառայություն չանցած տղաներ.

   «Ես որ տենամ մեկին անընդհատ նեղում են, կաշխատեմ իմ հնարավորությունների չափով պաշտպանել, բայց հաստատ չեմ զեկուցի»[163]:

   «Մեր ազգում տենց բան չկա՝ զեկուցել: Էտի չի ընդունվում, ու ես էլ չեմ ընդունում: Եթե հրատապ դեպքեր լինեն, կփորձեմ ես էդ հարցը լուծեմ, կամ էն մարդուն ասեմ, ով կարա, բայց չեմ զեկուցի, ինչ վիճակ ուզում ա լինի»[164]:

   «Եթե մտածելակերպը մինչև իմ ծառայության գնալը փոխվի, տենամ, որ սաղ զեկուցում են, ու դա նորմալ ա, ես էլ համապատասխան դեպքերում կդիմեմ վերևներին, բայց եթե էն ա, ինչ ես լսել եմ, չեմ անի: Դա ավելի շատ կբարդացնի իմ ծառայությունը»[165]:

2. Զինծառայություն անցած տղաներ.

   «Դե, զեկուցելու պահը դուք էլ եք ջոգում, դուք էլ եք ծառայել, կարող ա՞ զեկուցել եք: Ես կուզեի, որ ձեր պատկերացրած բանակը լիներ, բայց ոչ մեկ էլ ձեր ասած բարքերին դեմ չէր գնում, սաղս էլ էդ սիստեմի մաս ենք, հաստատ դուք էլ չեք զեկուցել ծառայելու ժամանակ»[166]:

   «Օրինակ՝ ես զեկուցեմ, մեկը գնա դատվի, դրանից

163. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ:

164. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ:

165. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն չանցած 17-20 տարեկան երիտասարդ:

166. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

հետո ինձ ո՞նց կվերաբերվեն: Պարզ ա՝ կասեն՝ բոզ ա. տենց չի՞, ախպեր»[167]*:*

«Եթե էնքան կաս, որ հարցերը քեզնով լուծում ես, էլ ինչի՞ պետք ա զեկուցես»[168]*:*

«Գործ տալ» արտահայտությունը վառ արտացոլումն է քրեական մշակույթի արժեքների առկայության. չէ՞ որ հենց Գուլագում էր, որ քրեականները հետևում էին նրան, որ «գործ տվողները» հստակորեն բաժանված լինեն «արժանապատիվ» զեկերից: Այդ մասին կան շատ ուսումնասիրություններ, նշվում է նաև սույն ժողովածուի վերջին՝ Գ. Տեր-Գաբրիելյանի հարցազրույցում: Իր «Արմենիա 3.0»[169] անգլալեզու գրքում Գևորգ Տեր-Գաբրիելյանն ավելի խորն է հետազոտում այս երևույթը՝ ձևակերպելով հետևյալ պարադոքսը. մի կողմից, խորհրդային (բոլշևիկյան և հատկապես ստալինյան, բայց նաև հետո) ժամանակաշրջանում առանձնահատուկ ճնշում էր ստեղծվում՝ զեկուցել միմյանց վերաբերյալ, որի արդյունքում էլ մատնելը (ներառյալ նախ և առաջ սուտ մատնությունը) դարձավ պետության կողմից խրախուսվող արժեք, մյուս կողմից, դրան ի պատասխան, ստեղծվեց դիմադրությունը՝ ոչ մի ձևով չհամագործակցել պետության հետ. սկզբում՝ Գուլագում, հետո այնտեղից նախկին զեկերի վերադարձին զուգահեռ և խորհրդային կարգերի ճգնաժամի խորացմանը զուգընթաց՝ խաղաղ կյանքում:

Իհարկե, այս երևույթը, ինչպես և բռնությունը հանդուրժելը և այն զեկուցելու «փոխարինիչ» դիտարկելը նշանակում են նաև բացարձակ անվստահություն դեպի վերադասները և ընդհանրացնելով՝ դեպի պետությունը, ֆորմալ և պաշտո-

167. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

168. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

169. Ter-Gabrielyan, G. (2020). Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. Yerevan: EPF. Available at: https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia [Accessed 18.07.2020].

նական գործընթացները: Այսինքն՝ հետևությունն այն է, որ ինչ էլ լինի, ավելի լավ է «հեռու մնալ» ցանկացած համագործակցությունից «վերադասների» և «պետության» հետ, ենթարկվել միայն նվազագույն չափով, իսկ եթե պահանջեն, ավելի շատ ջանք թափել խուսափելու համար:

Սա նշանակում է, որ չկա վստահություն մի քանի մակարդակում: Նախ՝ որ պաշտոնական մարմինը, անձը համապատասխան կերպով կարձագանքի զեկույցին: Երկրորդ՝ որ նրա արձագանքը կլինի համաչափ («մարդը կգնա-կկորի...»): Սա էլ երկու իմաստով. կա՛մ որ օրենքը չափազանց խիստ է (անհամաչափ է), կա՛մ այն, որ համաչափությունը չի պահպանվի քննության և պատիժ նշանակելու ընթացքում: Երրորդ՝ որ հաշվի առնելով «գործ տվողների» հանդեպ շրջապատի վերաբերմունքը՝ «պաշտոնական համակարգը» կկարողանա պաշտպանել զեկուցողին այդ վերաբերմունքի առաջացրած բռնությունից՝ ֆիզիկական, վերաբերմունքային կամ տևական հալածանքից: Չորրորդ՝ որ զեկուցողը չի կարող վստահել ո՛չ սեփական ուժերին, ո՛չ էլ շրջապատում նրանց, ովքեր ճիշտ են հասկանում իր արարքը՝ հետևաբար նաև իրեն անպաշտպան չզգալով զեկուցելուց հետո: Այսինքն՝ շատ քիչ հավանական է, որ «համակիրներն» իրեն պաշտպան կանգնեն: Սա վստահության ընդհանրական արժեքի բազմակողմանի բացակայության երևույթի արտահայտում է:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻՑ ՄԵԿԸ (ԳԼԽԱՎՈ՞ՐԸ)

Ուսումնասիրության սույն հատվածում քննվում են բանակում առկա այն մեխանիզմները, որոնք ուղղված են քրեական բարքերը կանխելուն: Ուսումնասիրվել են պաշտոնյաների այն գործառույթները, որոնք ուղղված են նշված խնդիրները հասցեագրելուն:

ՀՀ ՁՈՒ ներքին ծառայության կանոնագրքում սահմանված

են բոլոր սպաների պարտականությունները։ Ուսումնասիրելով դրանք՝ պարզ է դառնում, որ կարգուկանոնի պահպանման համար պատասխանատու են բոլոր սպաները՝ լեյտենանտից մինչև գնդապետ։ Նշենք, որ այստեղ ուսումնասիրված են միայն զինվորական գնդերի սպաների պարտականությունները, հետևաբար վերլուծությունն իրականացված է՝ ելնելով գնդի հրամկազմից։ Ներքին ծառայության կանոնագրքում առանձնացված է անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալի պարտականությունները սահմանող հոդվածը[170] (ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի հոդված 98), որում նշված է.

> *«Անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով գնդի հրամանատարի տեղակալը պարտավոր է կոնկրետ միջոցառումներ անցկացնել զինվորական կարգապահության և իրավակարգի ամրապնդման, անձնակազմի շրջանում իրավախախտումների կանխարգելման, զինվորական կոլեկտիվների համախմբման, զինվորական ծառայության անվտանգության պայմանների ստեղծման ուղղությամբ»։*

Անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալներ ունեն նաև գումարտակների և դիվիզիաների հրամանատարները։ Օրենքի մեջբերումից երևում է, որ իրավախախտումների կանխարգելման գործառույթն իրականացնում է ԱՀՏԱԳՏ-ն[171]։

Պետք է նշել, որ սպայական կազմի համար նախատեսված գործառույթները և պարտականությունները խորհրդային ժառանգություն են, այսինքն՝ ձևավորվել են սկզբունքորեն այլ միջավայրում։ Նրանց հիմնական պաշտոնական գործառույթն էր ապահովել խորհրդային գաղափարախոսության

170. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք։ Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=364 [դիտվել է 16.07.2020]։

171. Անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ։

պահպանումն ու ամրապնդումը բանակում: Նրանք ունեին նաև մի շարք երկրորդական գործառույթներ, որոնք առնչվում էին զինվորների բարոյական նկարագրին հետևելուն, դրա դաստիարակմանը, նրանցից տեղեկություններ ստանալուն, վերջապես, անվտանգության օրգաններին տեղեկություններ հայտնելուն և այլն: Ենթադրելի է այդ պաշտոնի՝ անկախ Հայաստանի ժամանակակից պահանջներին անհամապատասխանությունը:

Նշենք նաև այդ հապավման հայերեն անբարեհունչությունը, ինչին ստորև կրկին կանդրադառնանք:

Այնուամենայնիվ, պետք է հասկանալ սահմանվածի և իրականության միջև առկա տարբերությունը: Ահա զինծառայություն անցած մեր ռեսպոնդենտների որոշ կարծիքներ ԱՀՏԱԳՏ-ի գործունեության վերաբերյալ.

> *«Զամպալիտը ամեն կիրակի գալիս էր, զորքին շարում, ելույթներ էր ունենում: Հիմնական միտքն էն էր, որ կռիվ անել չի կարելի»[172]:*

> *«Հա, մեզ էլ էին շարած դասախոսություններ անում, ես լսում էի, բայց շարված լսելը մի քիչ անհարմար էր, չնայած չաստի ակումբում էլ էին հավաքում ու էլի խոսում»[173]:*

> *«Որ ինչ-որ մեկը կռիվ էր անում, միանգամից ուղարկում էին զամպալիտի մոտ, մի օր էլ ընկերոջս տարան: Երբ հետ եկավ, պատմում էր, որ, եթե էլի տենց բան անի, կեթա կկորի»[174]:*

Այսպիսով՝ մեր հետազոտությունը նույնականացրեց ԱՀՏԱԳՏ-ի գործունեության երեք տեսակ.

---

172. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

173. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

174. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

- Առանձնազրույցներ իրավախախտ վարք դրսևորող զինծառայողների հետ:
- Կիրակի օրերին բարոյախրատական ելույթներ:
- Արձագանք որևէ պատահարի (կռիվ, դժբախտ պատահար և այլն) բարոյախրատական ելույթների տեսքով:

Նույնիսկ եթե ԱՀՏԱԳՏ-ի գործունեությունն ընդգրկում է մի շարք այլ աշխատանքներ, մեր ռեսպոնդենտ նախկին զինծառայողները չկարողացան որևէ այդպիսի դեպք մտաբերել: Սա ինքնին մտահոգիչ է:

ԿԱՆՈՆԱԴՐԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՈՐԾՈՂ ԵՎ ԴՐԱՆՔ ԼՐԱՑՆՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանակային կյանքում փոխհարաբերությունները սահմանվում են ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքով: Սույն կանոնագրքից բխում են նաև այլ կարգավորումներ և ենթաօրենսդրական ակտեր: Բանակում որոշումների կայացման համակարգը սահմանում է սույն օրենքը, բայց առկա հարաբերությունների համակարգը չի բխում միայն օրենքի թելադրանքից: Զինվոր-զինվոր, սպա-զինվոր հարաբերությունները, տարբեր գործոններից ելնելով, այլ կերպ են դրսևորվում:

Բանակային կյանքում՝ պարտադիր ժամկետային զինծառայողների շրջանում առկա են ոչ ֆորմալ «հաստիքներ», որոնք զբաղեցնող անձինք՝ ա) ունեն արտոնյալ կարգավիճակ, բ) իրականացնում են օրենքներով իրենց չվերապահված գործառույթներ:

Սույն անձինք բանակային կյանքում ճանաչվում են որպես «յախշի», «լռված», «չանող», «դզված» անվանումները կրող կարգավիճակ ունեցող: Հասկանալու համար վերը նշված կարգավիճակի էությունը՝ պետք է պատասխանել հետևյալ հարցերին. ի՞նչ եղանակով են զինծառայողները ստանում

այդ կարգավիճակը, և ո՞վ է նրանց տալիս այդ կարգավիճակը։

Ըստ ռեսպոնդենտների՝ այդ կարգավիճակին զինծառայողները հասնում են երկու հիմնական մեխանիզմների միջոցով՝ 1) համաձայնության գալով անմիջական հրամանատարների հետ, 2) վերջիններիս թողտվությամբ՝ դրսևորելով առաջնորդին (լիդերին) հատուկ հատկանիշներ։ Անմիջական հրամանատարներին (վաշտի, դասակի հրամանատարներ) հաճախ ձեռնտու է արտոնյալ կարգավիճակով զինծառայողի առկայությունը, քանի որ վերջինս, ստանձնելով այդ կարգավիճակը, իրականացնում է հետևյալ գործառույթները.

- Հետևում է ստորաբաժանման ծառայությանը։
- Սեփական մեթոդներով կանխարգելում և/կամ հարթում է կոնֆլիկտները։
- Տեղյակ է լինում ստորաբաժանման ներքին անցուդարձից։
- Կազմակերպում է ծառայողական գործընթացները։

Իրականացնելով այս գործառույթները՝ արտոնյալ կարգավիճակով շարքային զինծառայողները թեթևացնում են սպաների աշխատանքը։ Սպաները հնարավորություն են ունենում անցկացնելու առավել հանգիստ և ազատ ժամանակով հագեցած ծառայություն, իսկ այս ամենի դիմաց տվյալ զինծառայողին շնորհում են հավելյալ լիազորություններ։ Այս գործընթացն իրականացվում է երկու կողմի փոխադարձ համաձայնությամբ։

Արտոնյալ կարգավիճակի հասնելու երկրորդ մեխանիզմը տարածված է եղել ավելի վաղ ժամանակներում։ Մասնակիցների խոսքերով՝ մինչ 2010-ականները բանակային կյանքում քրեական բարքերն ավելի արմատացած են եղել։ Առաջին մեխանիզմով կարգավիճակ ստանալու մեթոդները շարքային զինծառայողների կողմից կտրուկ քննադատվել են և քննադատվում են։

Երկրորդ մեխանիզմը նույնպես դրսևորվում է նաև այժմ, թեև ավելի քիչ: Երկրորդ մեխանիզմով արտոնյալ կարգավիճակ են ձեռք բերում ամուր բնավորությամբ և լիդերի հատկանիշներով օժտված զինծառայողները: Իրենց կարգավիճակին հասնելու ճանապարհին նրանք բազմաթիվ խնդիրներ են ունենում, հիմնականում սպայակազմի հետ, իսկ շարքայինների շրջանում հարգանք են վայելում: Ծառայության նման մեթոդն ընտրածներին անվանում են «չոր» կամ «չորով ծառայողներ», այսինքն՝ «հաջողության» հասնելու և «լավ ծառայելու» համար նրանք հրաժարվում են սպաների հետ համագործակցելուց կամ ընկերական հարաբերություններ ունենալուց:

«Չոր ծառայող տենց համարյա չկա, սաղն էլ աֆիցեռների հետ ընկերություն են անում ու լավ հարաբերությունների մեջ են»[175]*:*

«Էտ վախտին էր թեմա, որ աֆիցեռի ասածով անես կամ աֆիցեռի համար վիզ դնես, հիմա տենց մոմենտ չկա: Իմ պահով կարամ ասեմ, որ ես վաշտում թամամցնում[176] *էի, էտ սաղիս էր ձեռ տալիս, համ սաղ նորմալ էր ընում, խոսակցություն չկար, համ էլ մենք էինք մեզ լավ զգում»*[177]*:*

«Ախպեր, մեր զորամասում տենց բան չկար: Ես չգիտեմ դրան «չոր» են ասում, ինչ են ասում, բայց աֆիցեռի համար վիզ դնելը թեմա էր, ես կյանքում ծառայողական հարցով ոչ մեկին բան ասած չկամ,

175. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

176. Հարցեր լուծել, «քյաստըմ» տալ՝ ի բավարարում բոլոր կարևոր գործող անձանց, թուրքերեն «թամամ»՝ «ամբողջ», «վերջ» բառից:

177. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ:

դաժը էն ամենաչմոյին[178, 179]*»։*

Հարկ է անդրադառնալ նաև «պիսռ» հասկացությանը։ Սա նույնպես ռուսերեն բառ է (писарь). ուշադրություն դարձնենք նրա նմանությանը (հատկապես հայերեն արտասանության ժամանակ) մեկ այլ՝ շատ ավելի կոպիտ, հայհոյական նշանակություն ունեցող ժարգոնային բառի, ինչը, սակայն, չի խանգարում «պիսռ» բառի լայն տարածմանն ու օգտագործմանը, թեև անհնարին է կարծել, թե նրա ասոցացումը հայհոյական բառի հետ չի զգացվում օգտագործողների կողմից։

Այսպես անվանում են սպաների փոխարեն գրագրություն իրականացնողներին։ Սպաները ամեն շաբաթ պետք է կազմեն պլան-կոնսպեկտներ (ուսումնական պլանի համառոտագիր), որոնք մինչև այժմ գրվում են ձեռքով։ Այս աշխատանքը հաճախ տրվում է շարքայիններին, և վերջիններս այն կատարելու դիմաց ստանում են որոշակի արտոնություններ (շարքից բացակայելու հնարավորություն, վերակարգում չներառվելու հնարավորություն և այլն)։ Սակայն այս արտոնությունները վայելող զինծառայողները զինվորների կողմից հարգանքի չեն արժանանում, և սույն մեթոդով արտոնություններ ստանալը հարգանք չի վայելում։

«Պիսռ սաղ տեղերն էլ կա, բայց դե դրանք կաբինետներից աշխատում էին չհելնեին»[180]*։*

Կանոնադրային հարաբերությունները տուժում են նաև պատժի և խրախուսանքների կիրարկման ժամանակ։ Սույն հետազոտության՝ բռնության դրսևորումներին նվիրված հատվածում նկարագրված են պատժի այն մեխանիզմները, որոնք կրում են բռնության տարրեր, հետևաբար նաև

178. Տհաճ, «ոչ պիտանի», սակայն ոչ հալածվող անձ։ Բառը վերցված է ռուսերենից։ Տե՛ս մեկնաբանված այստեղ. https://russian7.ru/post/chmo-chto-oznachaet-yeto-slovo-na-samom-d/ [դիտվել է 16.07.2020]։

179. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

180. Դավիթ Պետրոսյան և Յուրի Ավագյան, ԴԱՆ, Երևան, 2019, անանուն, զինծառայություն անցած 20-25 տարեկան երիտասարդ։

խախտվում են կանոնադրային փոխհարաբերությունները: Իսկ կանոնադրային փոխհարաբերություններից դուրս խրախուսանքները դրսևորվում են տարբեր կերպ, օրինակ՝ թույլատրել զինծառայողներին բջջային հեռախոս օգտագործել և այլն:

«Պալկավիկ»

Հարցազրույցների և քննարկման մասնակիցների պնդմամբ՝ «պալկավիկ[181]» հասկացությունը գրեթե վերացել է, և ներկայիս բանակային կյանքում «պալկավիկներ» չկան: «Պալկավիկ» ասելով՝ նկատի էին ունենում այն զինծառայողներին, որոնց հեղինակությունը տարածվում է ողջ զինվորական գնդի տարածքում, և նրանց խոսքը տարածվում է գնդի բոլոր զինծառայողների վրա: Բոլորը ճանաչում և ընդունում են նրանց հեղինակությունն ու խոսքը: «Վաշտավիկ» ասելով նկատի ունեն նույն երևույթը վաշտի մակարդակում և տարածքում, «բատալիոնշիկ»՝ գումարտակի տարածքում: Պարզ է, որ այս արտահայտությունները խորհրդային ժառանգություն են՝ հաշվի առնելով բառարմատները. պալկավիկ-полк, «ռոտավիկ»-рота և այլն: Սակայն այս և նման դերերը կամաց-կամաց դուրս են մղվում բանակային կյանքի առօրյայից, հասկացություններն էլ՝ խոսակցական բառապաշարից: Վերջիններիս փոխարինելու են գալիս «լռվող», «դզված», «յախշի»[182] և նման այլ հասկացությունները: «Պալկավիկ» եզրույթի գործածման դուրսմղումը վկայում է այն մասին, որ զորամասերում վերացել են խիստ բարձր հեղինակություն ունեցող, սովորաբար քրեական վարք դրսևորող անհատները, և ներկայիս զորամասերում արտոնյալ կարգավիճակով

181. Առաջացել է ռուսերեն «полк» բառից, հայերեն համարժեքը՝ «զորամաս»:

182. Տե՛ս այդ կատեգորիայի զինծառայողի մասին Կարեն Անտաշյանի «Փիղը» պատմվածքը (Հասանելի է՝ https://granish.org/elephant/ [դիտվել է 16.07.2020]) և նրա վերլուծությունն այստեղ՝ Անտաշյան, Կ. (2011), Բանակային թեման իբրև խոսքի ազատության ակտ հայ նորագույն շրջանի արձակում: Երևան, ԵՀՀ: Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Antashyan-Army-Theme-Act-Freedom-of-Expression [դիտվել է 10.08.2020]:

զինծառայողների հեղինակությունը դուրս չի գալիս սեփական ստորաբաժանման սահմաններից: Հարաբերությունների նման փոփոխությունը ցույց է տալիս արտոնյալ կարգավիճակում գտնվողների դերի նվազման փաստը բանակային համակեցության կազմակերպման մեջ, ինչը, անկասկած, դրական երևույթ է: Մյուս կողմից, հասկացության իմաստի առումով «պալկավիկը» հավաքական իմաստի կրող է՝ կոլեկտիվի մասշտաբով իր դերն ընդգծող, իսկ «լռվողը» կամ «դզվածը»՝ «եսասիրական»:

Շարունակելով լեզվական դիտարկումները՝ նշենք նաև, որ խորհրդային-ռուսական բանակային հասկացությունները (որոնք նաև պահպանվում են պաշտոնական բանակային հարաբերություններում այս կամ այն չափով) միախառնվում են ժարգոնային այլ բառերի, որոնք հաճախ նույնպես ունեն օտար ծագում, ավելին՝ արևելյան ծագում՝ հաճախ գալիս են թուրքերենից կամ թուրքերեն բարբառներից, նույնիսկ եթե հիմքում արաբական կամ պարսկական ծագում ունեն: Սա հատուկ է նաև «քաղաքացիական գողական ժարգոնին»: Սակայն կարևոր է նշել, որ բռնությունը և քրեական ենթամշակույթը բանակում և հասարակության մեջ արտահայտվում են օտարածին և մեր մշակույթին խորթ հասկացություններով, որոնք, սակայն, խոր են մտած հասարակության լեզվամտածողության և հոգեբանության մեջ: Պետք է հասկանալ, որ սա նույնպես արտահայտում է բռնության մշակույթի՝ «հակամշակույթ» լինելու փաստը, այսինքն՝ պաշտոնական և հրապարակային մշակույթին հակադիր լինելը, կոպիտ ասած՝ այդ մշակույթի հակապետական էությունը: Սա ցույց է տալիս, որ ցանկացած ռեֆորմ՝ ուղղված բռնության մշակույթի վերացմանը, պիտի ունենա նաև լեզվի և հաղորդակցության բարեփոխման մաս: Հայտնի երևույթ է, երբ լեզվի «ռեգիստրը» փոխելիս փոխվում է նաև հարաբերությունների գռեհկության աստիճանը: Եթե հասարակության անդամները՝ երիտասարդ և հասուն, զինվորները, սպաները բանակում խոսեն գրական լեզվով և բոլոր հասկացություն-

ների համար ունենան բարեհունչ և արտահայտիչ հայալեզու արտահայտչամիջոցներ, նրանց հարաբերությունների որակը նույնպես որոշակիորեն կփոխվի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ բանակային կյանքում առկա բռնության և քրեական ենթամշակույթից բխող դրսևորումները որոշ մասով հասարակությունից են տեղափոխվում բանակ՝ ստանալով տեղական միջավայրին հատուկ ձև: Հասկանալի է, որ բանակային կյանք քրեական մշակույթը ներթափանցում է ոչ թե բանտից, այլ հասարակությունից, որտեղ քրեականը ռոմանտիզացված է, բայց պարզ է նաև, որ մի շարք պատճառներով բանակում այդ մշակույթն արմատավորվելու հարմար նախադրյալներ է ունեցել և շարունակում է ունենալ ֆորմալ և ոչ ֆորմալ հիերարխիաները, փակ համակարգը և այլն: Որոշ դեպքերում զուգահեռներ կարող են տարվել սպա-զինվոր և բանտարկյալ-բանտապան, ծառայության ժամկետ-«սռոկ» հասկացությունների միջև: Այս ամենին պետք է հավելել մինչ բանակ զորակոչվելը պատանիների և նախազորակոչային տարիքի քաղաքացիների շրջանում նախապես ձևավորված և մինչ բանակ գնալն արդեն առկա որոշակի կարծրատիպեր, տաբուներ, թյուրըմբռնումներ և բացասական արժեքներ:

Սպաները, իրենց հերթին, որոշ դեպքերում նույնպես այդ մշակույթի կրողներն են, հետևաբար նման բարքերի և կարծրատիպերի առկայությունը համարում են սովորական երևույթ, չեն նկատում և/կամ չեն պայքարում դրանց դեմ, երբեմն էլ քաջալերում են և դառնում այդ դրսևորումների մշակույթն ամրապնդող հերթական օղակ:

Միևնույն ժամանակ ՊՆ կողմից իրականացվող քաղաքականությունների պաշտոնական և հրապարակայնորեն հայտնի մասերում առաջնային տեղ չեն գրավում սույն հետազոտության մեջ քննարկվող արատավոր բարքերի դեմ

պայքարի որոշակի մեխանիզմները, թեև կառավարության ղեկավարության մակարդակով հայտարարվել է պայքար դրանց դեմ:

Հնարավոր է, որ նման ռազմավարություններ առկա են փակ փաստաթղթային ձևով, բայց փաստացի իրավիճակի երևացող մասից կարելի է եզրակացնել, որ խնդիրներն առայժմ մնում են չհասցեագրված: Այս առումով անհապաղ անհրաժեշտ են համալիր միջոցառումներ թե՛ սպայական կազմի, թե՛ ժամկետային զինծառայողների, թե՛ նախազորակոչային տարիքային խմբի համար:

Հանրակրթության ոլորտում նույնպես բավարար չափով պայքար չի իրականացվում քրեական ենթամշակույթից բխող և բռնության մշակույթ սերմանող դրսևորումների դեմ: Այստեղ առաջնային պլանում են կիրառական հմտությունների տրամադրումը և օրենսդրական ակտերին աշակերտների ծանոթացումը:

Բանակային կյանքում բռնության հիմնական դրսևորումներն են վերբալ բռնությունը, ֆիզիկական բռնությունը և հալածանքը: Սպաների կողմից իրականացվող բռնությունները թե՛ շարքայինների և թե՛ հենց սպաների կողմից երբեմն ընկալվում են որպես լեգիտիմ՝ ի հակադրություն նորմատիվ պատժամիջոցների: Սպաները որոշ դեպքերում բռնությունը մեկնաբանում են որպես տարատեսակ հարցեր կարգավորելու արագ և արդյունավետ եղանակ:

Զինվորական գնդերում իրավախախտ վարքի դեմ պայքարի հիմնական դերակատարների աշխատանքի մեթոդաբանական հիմքերը բավականին աղքատ են: Զինծառայողների հետ խորքային աշխատանքներ չեն իրականացվում արատավոր բարքերի չեզոքացման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ բանակային կյանքում առկա հարաբերությունների առողջացման, կանոնադրային փոխհարաբերությունների ամրապնդման և արատավոր բար-

քերի չեզոքացման համար անհրաժեշտ են համալիր միջոցառումներ: Սույն խնդիրներին վերաբերող հետազոտական աշխատանքների խթանման համար անհրաժեշտ է պետական մակարդակով աջակցություն: Պաշտպանության քաղաքականություն իրականացնողներն ու մշակողները օրակարգային խնդիր պիտի հռչակեն բանակային կյանքին վերաբերող այն խնդիրները, որոնք շոշափված են սույն աշխատությունում: Այստեղ շոշափված խնդիրներին առնչվում են գրեթե բոլոր զինծառայողները: Ոչ հրադադարի խախտման դեպքերով գրանցված մահացության և այլ պատահարների վիճակագրությունը փաստում է, որ կանոնադրային փոխհարաբերություններին, բանակային կյանքում առկա բարքերին վերաբերող խնդիրները հրատապ լուծման կարիք ունեն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Անտաշյան, Կ. (2011), Բանակային թեման իբրև խոսքի ազատության ակտ հայ նորագույն շրջանի արձակում, Երևան, ԵՀՀ: Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Antashyan-Army-Theme-Act-Freedom-of-Expression [դիտվել է 10.08.2020]:
2. Անտաշյան, Կ. (2010), Փիղը: Երևան, Գրանիշ: Հասանելի է՝ https://granish.org/elephant/ [դիտվել է 10.08.2020]:
3. ԵԱՀԿ (1994), Անվտանգության և ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններ, Մաս 30: Հասանելի է՝ https://www.osce.org/files/f/documents/1/6/74974.pdf [դիտվել է 16.07.2020]:
4. «Զինվորական ծառայության և զինվորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (2017): Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117633 [դիտվել է 16.07.2020]:
5. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք (1996): Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=364 [դիտվել է 16.07.2020]:
6. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N532 Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կարգը հաստատելու մասին (1999): Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7486 [դիտվել է 16.07.2020]:
7. «ՀՀ զինված ուժերում խաղաղ պայմաններում մահվան ելքով միջադեպերի վիճակագրություն»: Հասանելի է՝ https://safesoldiers.am/ [դիտվել է 16.07.2020]:

8. ՀՀ քրեական օրենսգիրք (2003), բաժին 12: Հասանելի է՝ http://www.mil.am/files/LIBRARY/Orenqner_karavar-utyan_vorosum_1554/qr_or_zin_hancagorc.pdf [դիտվել է 17.08.2020]:

9. Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների (2012), Զինվորական հանցագործությունների վերաբերյալ դատական գործերի դիտարկման արդյունքներ. զեկույց: Երևան:

10. Լին, Յ., Բորն, Հ., Լազարինի, Ս. և Քլեմենթսի, Յ. (2008), Զեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ: Երևան, Ասողիկ: Հասանելի է՝ https://www.osce.org/files/f/documents/6/7/88572.pdf [դիտվել է 16.07.2020]:

11. Միքայելյան, Մ. (2016), Բռնության և զոհի հոգեբանություն: Երևան, Ճարտարագետ:

12. Պետրոսյան, Դ. (2017), Պոպուլիզմը և պրոպագանդան ՀՀԿ 2017 թ. խորհրդարանական և Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզարշավներում: Երևան (չհրատարակված):

13. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Առաքելյան, Վ. և ուրիշներ (2014), Նախնական զինվորական պատրաստություն, հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք: (մաս 1) Երևան, Աստղիկ գրատուն: Հասանելի է՝ https://fliphtml5.com/fumf/zdpv/basic [դիտվել է 16.07.2020]:

14. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Առաքելյան, Վ. և ուրիշներ (2019), Նախնական զինվորական պատրաստություն, հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք (մաս 2): Երևան, Աստղիկ գրատուն: Հասանելի է՝ https://fliphtml5.com/fumf/tpsg [դիտվել է 16.07.2020]:

15. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Առաքելյան, Վ. և ուրիշներ (2015), Նախնական զինվորական պատրաստություն,

հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք: Երևան, Աստղիկ գրատուն: Հասանելի է՝ https://flipht-ml5.com/fumf/khfv/basic [դիտվել է 16.07.2020]:

16. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Ղազարյան, Լ. և ուրիշներ (2010), Նախնական զինվորական պատրաստություն, հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք: Երևան, Աստղիկ գրատուն: Հասանելի է՝ http://online.fliphtml5.com/fumf/zqgc/#p=1 [դիտվել է 16.07.2020]:

17. Օհանյան, Վ., Մարգարյան, Ս., Ղազարյան, Լ. և ուրիշներ (2010), Նախնական զինվորական պատրաստություն, հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք: Երևան, Աստղիկ գրատուն: Հասանելի է՝ http://online.fliphtml5.com/fumf/ghjo/#p=1 [դիտվել է 16.07.2020]:

18. Braithwaite, R. (2010). Dedovshchina: Bullying In The Russian Army. [online] openDemocracy. Available at: https://www.opendemocracy.net/en/odr/dedovshchina-bullying-in-russian-army/ [Accessed 18 August 2020].

19. Kamarck, Kristy N. (2019). Hazing in the Armed Forces. CRS In Focus, IF10948. Library of Congress. Congressional Research Service. Available at: https://fas.org/sgp/crs/natsec/IF10948.pdf [Accessed 18 August 2020].

20. Obraztsov, Igor. (2006). The Reasons for Dedovshchina and Ways to Prevent it: A Retrospective Analysis in Dauce, F., & Sieca-Kozlowski, E. (2006). Dedovshchina in the post-soviet military: hazing of Russian army conscripts in a comparative perspective. Stuttgart, Ibidem-Verlag, pp. 105-120. Available at: https://www.researchgate.net/publication/321289614_The_Reasons_for_Dedovshchina_and_Ways_to_Prevent_it_A_Retrospective_Analysis [Accessed 18 August 2020].

21. Ter-Gabrielyan, G. (2020). Armenia 3.0. Understanding 20th Century Armenia, Yerevan, EPF. Available at: https://

epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia [Accessed 18.07.2020].

22. Wither, J. (2004). Battling Bullying in the British Army 1987 – 2004. The Journal of power institutions in post-soviet societies, (Issue 1). Available at: https://journals.openedition.org/pipss/46 [Accessed 17.08.2020].

23. Белановский, С. (2019), Исследования Армии. Москва. URL: https://bit.ly/3bOHnYG [последний просмотр: 16.07.2020].

24. Кобрин, В. Б. (1992), Кому ты опасен, историк? URL: http://vivovoco.astronet.ru/VV/BOOKS/DANGER/PART_3.HTM [последний просмотр: 16.07.2020].

25. Сыромятников, Н. (2017), “Чмо”: что означает это слово на самом деле. URL: https://russian7.ru/post/chmo-chto-oznachaet-yeto-slovo-na-samom-d/ [последний просмотр: 16.07.2020].

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ. ԻՆՉՊԵՍ Է ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԴՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Շուշանիկ Խուրշուդյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բռնության երևույթը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտման ու սահմանափակման դրսևորում է: Այս երևույթը տարածված է ամբողջ աշխարհում, ունի տարբեր դրսևորումներ և տարածվածության մակարդակ: Այն նաև Հայաստանում տարածում ունեցող երևույթ է: Սրա մասին բարձրաձայնում են թե՛ հասարակական կազմակերպությունները, թե՛ պետական մարմինների վիճակագրական տվյալները:

Ընտանիքը հասարակության լիարժեք անդամների միություն է:

Պետության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում եղել և պետք է մնան ընտանիքի բոլոր անդամների իրավունքների և ազատությունների իրականացումը և դրանց պաշտպանությունը: Սակայն ոչ միշտ և ոչ բոլոր դեպքերում է ապահովվում բոլորի՝ բռնությունից զերծ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքը:

Ընտանեկան բռնության երևույթը բացասաբար է ազդում բռնության ենթարկված անձի ֆիզիկական և հոգեկան առողջության վրա, այն ոչ միայն անձի հիմնական իրավունքների խախտում է, այլև խոչընդոտ է անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացման համար: Բռնությունը շղթայական ռեակցիայի ձևով բացասական հետևանքներ է առաջացնում բռնության ենթարկվողի, բռնության միջավայրում ապրողի և, ընդհանուր առմամբ, հասարակության խաղաղ զարգացման վրա: Բռնությունը միայն ֆիզիկական դրսևորում չի ունենում, այն տարբեր հետևանքներ է ունենում անձի ձևավորման, հասարակությունում ինտեգրման և գործելու ու ազատ ինքնադրսևորվելու վրա: Ընտանեկան բռնությունն ունի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն: Բռնության այս տեսակն անուղղակի կերպով բացասական ազդեցություն է ունենում բռնությանն ականատես եղած երեխաների, ընտանիքի այլ անդամների վրա: Այս երևույթը, ունենալով ամենատարբեր դրսևորումներ, իր հետևանքն է ունենում անձի կյանքի բոլոր փուլերում: Դրսևորումների տարաբնույթ լինելու, ինչպես նաև տարածվածության հետևանքով այն ազդեցություն է ունենում թե՛ բռնություն գործադրողի և բռնության ենթարկվողի, թե՛ ընտանիքի անդամների, տվյալ համայնքի և թե՛ հասարակության վրա ընդհանրապես:

Այս երևույթը տարբեր դրսևորումներ և տարածվածության մակարդակ ունի Հայաստանում, ինչի մասին են վկայում իրավասու մարմինների տվյալները: Ընտանեկան բռնությունը հայտնի է որպես լատենտային (գաղտնի, թաքուն) բնույթ ունեցող բռնության տեսակ, ինչը նշանակում է, որ բռնության այս տեսակի վերաբերյալ տեղեկությունները և վիճակագրական ցուցանիշներն ամբողջությամբ չեն արտացոլում բռնության իրավիճակի իրական պատկերը: Վիճակագրական ճշգրտության վրա ազդում են նաև այլ գործոններ, որոնցից են, օրինակ, հասարակության կողմից այս երևույթի սխալ ընկալումը, այն մասնավոր դեպք համարելը,

դրա մասին բարձրաձայնելն ամոթալի կամ բռնության գործադրումը նորմալ երևույթ համարելը: Շատ հաճախ բռնության ենթարկվածը ինքն անձամբ չի կարծում, որ բռնության է ենթարկվել, կամ հաճախ որպես բռնության դրսևորում դիտարկվում է միայն ֆիզիկական բռնությունը, բռնության այլ տեսակները բռնություն չեն համարվում, և բռնության գործադրման խնդրի մասին բարձրաձայնվում է միայն ֆիզիկական, այն էլ՝ ծանր վնասվածքներ ստանալու դեպքում: Ուստի հասարակության շատ անդամներ խուսափում են բռնության վերաբերյալ հաղորդում ներկայացնելուց:

Խնդրի մասին են բարձրաձայնում նաև տեղի հասարակական և միջազգային կազմակերպությունները և այլ կառույցներ: Ավելին՝ 2020 թվականի ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման 3-րդ շրջանի ժամանակ մի շարք երկրներ (Իտալիա, Դանիա, Բելգիա, Կանադա, Նորվեգիա, Իսպանիա, Շվեդիա և այլ երկրներ) Հայաստանին առաջարկել են քայլեր ձեռնարկել այս ոլորտում խնդիրների լուծման ուղղությամբ՝ վավերացնելով «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան[183, 184]: Ընտանեկան բռնության խնդրի մասին է վկայել նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը 2018 թվականին Հայաստան կատարած այցի հիման վրա կազմված զեկույցում[185]:

Առհասարակ բռնության կանխարգելումը հասարակության համերաշխության, անվտանգության ապահովման միջոց է: Բռնության բացառումն ապահովում է հասարակության

183. Տե՛ս Human Rights Council (2020). Report of the Working Group on the Universal Periodic Review: Armenia. Available at: https://undocs.org/A/HRC/44/10 [Accessed 22.07.2020].

184. Սույն հոդվածում այսուհետ՝ Կոնվենցիա:

185. Տե՛ս Mijatović, D. (2019). Report of the Commissioner for Human Rights of the Council of Europe, pp. 3-13. Available at: https://rm.coe.int/report-on-the-visit-to-armenia-from-16-to-20-september-2018-by-dunja-m/168091f9d5 [Accessed 22.07.2020].

բնականոն զարգացումը և ընտանիքի անդամների իրավունքների լիարժեք իրացման հիմնաքարերից է, ուստի դրա դեմ պայքարը և հնարավոր դեպքերի կանխարգելումը առաջնային խնդիր են պետության համար:

Ընտանեկան բռնության երևույթի դրսևորման բազմազանության վրա ազդեցություն կարող են ունենալ տարբեր գործոններ: Ֆինանսական, սոցիալական, առողջական կամ այլ պատճառներ կարող են կատալիզատորի դեր ունենալ, նպաստող գործոն լինել, այսինքն՝ կարող են ազդել բռնության դրսևորման ձևերի վրա: Սակայն նման գործոնները չեն կարող համարվել բռնություն արդարացնող առիթ կամ պատճառ: Ցանկացած գործոնի առկայությունը (սոցիալական խնդիրներ, տարբեր երևույթներից կախվածություն, բռնության ենթարկվողի վարքագծի տարբեր դրսևորումներ և այլն) բռնության գործադրման մեղմացուցիչ հանգամանք կամ արդարացում չէ:

Այս հետազոտության նպատակն է պարզել ընտանեկան բռնության և աղքատության կապը, այդ երկու խնդիրների փոխկապակցված լինելու հարցը, ինչպես է փոխկապակցման շղթան գործում, այսինքն՝ ինչպես է աղքատությունն ազդում ընտանեկան բռնության առաջացման և դրսևորման վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացվել է ընտանեկան բռնության և աղքատության խնդիրների շղթայական ազդեցության, խնդիրների փոխադարձ առաջացման հարցերի բացահայտման, ընտանեկան բռնության դեմ պայքարի և այն կանխելու ներկա և հետագա նախաձեռնությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Ինչպես նաև նպատակ է եղել ներկայացնելու համապատասխան առաջարկներ:

Նշված նպատակի իրագործման համար հետազոտության շրջանակում սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- վեր հանել ընտանեկան բռնության դրսևորման վրա ազդող գործոններից աղքատության գործոնի առկայությունը կամ դրա բացակայությունը փաստող դեպքերը.

- վեր հանել ընտանեկան բռնության և աղքատության երևույթների շուրջ հասարակության անդամների ընկալումները, այս երկու երևույթների և դրանց փոխազդեցության վերաբերյալ պատկերացումները.

- պարզել բռնության և սոցիալ-տնտեսական խնդիրների միջև շղթայական կապի հնարավոր առկայությունը, խնդիրների առաջացման ելակետը և դրա հավանական հետևանքները, որոնց այս երևույթներից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել։

Հետազոտության խնդիրների ուսումնասիրության և բացահայտման նպատակով աղքատության և ընտանեկան բռնության երևույթի կապը դիտարկվել է տարբեր մակարդակներում՝

- աղքատությունն ազդում է բռնության գործադրման վրա, թե ոչ.
- եթե ուղղակի կապ չկա այս երկու երևույթների միջև, արդյոք աղքատությունն ազդու՞մ է ընտանիքի անդամի նկատմամբ բռնության ցիկլի (տե՛ս ստորև) տարբեր փուլերի վրա կամ արդյոք մեկ փուլից մյուսին անցմանը նպաստող գործո՞ն է.
- եթե ուղղակի կապ չկա այս երկու երևույթների միջև, արդյոք աղքատությունն ազդու՞մ է ընտանիքի անդամի նկատմամբ բռնության գործադրման էսկալացման վրա, այսինքն՝ խթանող գործո՞ն է բռնության դրսևորման համար, ինչը կարելի է հասկանալ, որ եթե աղքատությունն ուղղակիորեն չի նպաստում բռնության գործադրմանը, ապա այլ գործոնների, միջավայրի և

երևույթների համադրմամբ հանգեցնում է կամ նպաստում է բռնության գործադրմանը:

Բռնության ցիկլը[186] սոցիալական տեսություն է, որը մշակվել է 1979 թվականին Լենոր Ուոլքերի կողմից բռնության համար տեղ ունեցող հարաբերություններում վարքագծի օրինաչափությունները բացատրելու համար: Այն միջոց է, որն օգնում է հասկանալ բռնության դինամիկան ընտանեկան բռնության դեպքերի ուսումնասիրության համար: Այս ցիկլը ներառում է 3 փուլ՝

1. լարվածության կառուցման կամ առաջացման փուլ.
2. այսպես կոչված՝ պայթյունի, այսինքն՝ բռնության գործադրման փուլ.
3. զղջման կամ «մեղրամիսի» փուլ:

Բռնության ցիկլի յուրաքանչյուր փուլի տևողությունը և զարգացումը տարբեր է բռնության ենթարկվող տարբեր անձերի դեպքում՝ կախված, օրինակ, հարաբերությունների բնույթից և տևականությունից, բռնություն գործադրողի և բռնության ենթարկվողի սոցիալ-տնտեսական նախադրյալներից, երեխաների կամ այլ անձանց ներգրավումից կամ բացակայությունից, բռնության գործադրման տեսակից ու քանակից, բռնության ենթարկվածին ցուցաբերվող օգնությունից ու աջակցությունից և նրանից, թե բռնության ենթարկվող անձը որքան մեկուսացված է:

Որակական հետազոտությունների մեթոդաբանության գործիքակազմից հետազոտության մեթոդաբանական գործիքներ են ընտրվել՝

- ֆոկուսխմբային քննարկումների և փորձագիտական հարցազրույցների իրականացումը.
- հետազոտությունների, մասնագիտական գրականութ-

186. Fisher, B., & Lab, S. (2010). Encyclopedia of victimology and crime prevention. Thousand Oaks, Calif.: SAGE Publications, pp. 256-257.

յան վերլուծությունը.

- օրենսդրական կարգավորումների և փաստաթղթերի ուսումնասիրությունը.
- խնդրո առարկա միջազգային սկզբունքների, չափանիշների և կարգավորումների ուսումնասիրությունը.
- միջազգային և Հայաստանի փորձի և ընտանեկան բռնության ու աղքատության փոխազդեցության հնարավոր փոխկապակցության տեղեկությունների, այս երկու երևույթների վիճակագրական տվյալների վերաբերյալ համեմատական ուսումնասիրությունը:

Հաշվի առնելով, որ ֆոկուսխմբային քննարկումները համարվում են առավել արդյունավետ միջոց տարբեր երևույթների, տվյալ պարագայում՝ ընտանեկան բռնության երևույթի վերաբերյալ ընդհանուր համոզմունքների, ընկալումների, սովորույթների և ընդունված նորմերի ուսումնասիրության, բացահայտման և ընդհանուր պատկերի վերհանման[187] համար, հետազոտության շրջանակներում կազմակերպվել են ֆոկուսխմբային քննարկումներ: Քննարկումներին ներգրավվել են 23-57 տարիքային խմբերի՝ միջնակարգ և բարձրագույն կրթությամբ մասնակիցներ: Քննարկումների մասնակիցների շրջանում եղել են նաև ընտանեկան բռնության ենթարկված կանայք: Ֆուկուսխմբային քննարկումներ կազմակերպվել են Երևանում, Գեղարքունիքի, Սյունիքի և Կոտայքի մարզերում:

Հետազոտության ընթացքում փորձագիտական հարցազրույց է իրականացվել ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում լիազորություններ ունեցող և ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչների հետ: Խոր մասնագիտական հարցազրույցների նպատակն էր վեր հանել

187. Ellsberg, M., & Heise, L. (2005). Researching violence against women. Geneva, Switzerland: World Health Organization. Available at: https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/42966/9241546476_eng.pdf;jsessionid=95D1695920941CC29F4D94780DD3865E?sequence=1 [Accessed 22.07.2020].

փորձագիտական մոտեցումը, մասնագիտական կարծիքը ընտանեկան բռնության և աղքատության կապի առկայության կամ բացակայության, դրանց փոխազդեցության հնարավոր չափերի վերաբերյալ, մասնագիտական քննարկման ծավալման և դրանց վերլուծության արդյունքում բացահայտել, թե արդյոք աղքատությունը կապվա՞ծ է բռնության երևույթի հետ, կամ հակառակը, և եթե կա նման կապ, ապա ի՞նչ չափով և ո՛ր փուլերում է կապը գործում:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՍՈՒՅՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Ընտանեկան բռնության հիմնախնդրի շուրջ իրականացված հետազոտական և գործնական տարբեր աշխատանքներում, ինչպես նաև իրավական ակտերում նույն երևույթի նկարագրության համար տարբեր եզրույթներ են կիրառում և շրջանառում: Մինչև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումը՝ 2017 թվականի դեկտեմբերը, կիրառվում էր «ընտանեկան բռնություն» եզրը, իսկ դրա ընդունումից հետո ներդրվեց «ընտանիքում բռնություն» եզրը: Դրա պատճառը, իբր, մեղմելն էր հասարակության «ավանդապաշտ» խմբերի հակադրությունն օրենքի ընդունմանը[188]: Հասարակական կազմակերպությունները շարունակում են կիրառել «ընտանեկան բռնություն» եզրույթը, իսկ պետական մարմինների ներկայացուցիչները 2017 թվականից կիրառում են «ընտանիքում բռնություն» եզրույթը: «Ընտանեկան բռնություն» եզրը նշանակում է, որ դա

188. Լազարյան, S. (2017). Ընտանեկան բռնությանը վերաբերող օրինագծի հանրային քննարկումն անցավ թեժ մթնոլորտում: Ազատություն ռադիոկայան, հոկտեմբերի 9: Հասանելի է՝ https://www.azatutyun.am/a/28782881.html [դիտվել է 22.07.2020] կամ Matosian, M. (2017), Russia’s Dirty Play. Asbarez, February 24. Available at https://anca.org/russias-dirty-play/ [Accessed 22.07.2020]:

բռնության հատուկ տեսակ է. այդ իմաստն «ընտանիքում բռնություն» ձևակերպման դեպքում «սվաղվում է»:

Օրենքի նախագծի քննարկումներն ուղեկցվել են նախագծին դեմ և կողմ խմբերի բաժանմամբ, և քննադատության ենթարկվեց նաև «ընտանեկան բռնություն» եզրույթը: Օրենքի նախագծի քննարկումների ընթացքում այլ քննադատությունների և առարկությունների շարքում բարձրացվել էր նաև տերմինների օգտագործման հարցը, և վերջիվերջո նախապատվություն տրվեց «ընտանիքում բռնություն» եզրույթին՝ ընդառաջելով նախագծին, այսպես կոչված, դեմ արտահայտվող հասարակության մի հատվածի պահանջներին:

«Ընտանիքում բռնություն» եզրույթն ինքնին խնդրահարույց է նաև այն տեսակետից, որ շփոթեցնող է. «ընտանիքում» բառը ենթադրում է, որ բռնությունը դրսևորվում է ընտանիքում, այնինչ այս երևույթը դիտարկում է թե՛ ներկա, թե՛ նախկին ամուսինների, թե՛ ընտանիքի այլ անդամների միջև խնդիրները[189]:

Սույն հետազոտության շրջանակներում կիրառվել է «ընտանեկան բռնություն» եզրույթը՝ ի տարբերություն գործող իրավական ակտերով ամրագրված եզրույթի՝ այն դիտարկմամբ, որ «ընտանեկան բռնություն» եզրույթը առավել ընդունելի և տարածված է, և տեղին է օգտագործել խնդրին անդրադառնալիս: «Ընտանիքում բռնություն» եզրույթն օգտագործվում է միայն գործող իրավական ակտերով ամրագրված կարգավորումները վկայակոչելիս:

Միևնույն ժամանակ հարկ կա նշելու, որ միջազգային-անգլերեն domestic violence եզրը (հմմտ.՝ ռուսերեն домашнее насилие) նույնիսկ «ընտանեկան բռնություն» թարգմանելու դեպքում ամբողջությամբ չի արտահայտում իմաստի և հնարավոր երևույթների նույն երանգները: Հայերենում ամեն դեպքում խոսքը «ընտանիքի» մասին է, անգլերենում (նաև

189. Մանրամասն տե՛ս «Ընտանեկան բռնության սուբյեկտները» բաժնում, էջեր 8-9:

միջազգային տերմինաբանության մեջ)՝ «տան»: Իհարկե, «ընտանիք» բառի արմատը «տունն» է: Սակայն կա որոշակի տարբերություն «ընտանիք» և «տուն» հասկացությունների միջև: Ավելին՝ «ընտանիք» հասկացությունը՝ որպես սոցիալական գործընթացները և մարդկության ճանապարհը բնութագրող եզր, պատմության ընթացքում փոփոխությունների է ենթարկվել, մինչդեռ «տուն» հասկացությունն ինքնըստինքյան ավելի հեշտըմբռնելի է: «Ընտանիք» հասկացության և երևույթի՝ ժամանակի ընթացքում փոփոխությունների վերաբերյալ նույնպես կան տարաձայնություններ: Ռետրոգրադ դիսկուրսը («ռետրոգրադ» այստեղ նշանակում է հետահայաց-պահպանողական, հետամնացությանը հակված և անցյալը միֆականացնող, և դրա տարբերակներից է նաև ազգայնականությունը) հաշվի չի առնում «ընտանիք» երևույթի՝ պատմության ընթացքում փոփոխությունները ողջ մարդկության, ինչպես նաև առանձին մշակույթների մասշտաբով:

Ինչպես էլ լինի, սույն հետազոտության մեջ մենք ընդունում ենք «ընտանեկան բռնություն», «ընտանիքի մեջ բռնություն» և domestic violence հասկացությունների մոտավոր նույնությունը:

Հետազոտության շրջանակներում ընտանեկան բռնության ձևերին անդրադառնալիս մեջբերված տեսակները սահմանափակվել են օրենսդրական գործող կարգավորումների շրջանակով: Միևնույն ժամանակ, միջազգային կարգավորումներին համապատասխան բռնություն որակվող տարբեր արարքներ մատնանշվում են միջազգային լավագույն փորձի վկայակոչման և դրանց բացակայության դեպքում առաջացող խնդիրների մասին խոսելիս:

Իրականացվել են թե՛ առանձին անհատական հարցազրույցներ, թե՛ խմբային քննարկումներ: Հետազոտության խնդիրների բացահայտման նպատակով այս երկուսի իրականացումը չափազանց կարևոր էր, քանի որ անհատական

հարցաթերթիկների լրացումը և առանձին հարցազրույցների իրականացումն օգնում են բացահայտելու տվյալ կոնկրետ դեպքը և դեպքին առնչվող մանրամասները, այսինքն՝ բռնության դրսևորման վրա ազդող գործոնները, գործոնների բացակայությունը և հնարավոր հետևանքները, որ բռնությունը կամ աղքատությունն ունենում է անձի վրա: Ի տարբերություն անհատական հարցազրույցների՝ քննարկումներն արդյունավետ են այն տեսանկյունից, որ հնարավորություն են ընձեռում անմիջականորեն դիտարկելու կարծիքների տարբերությունները, մասնակիցների արձագանքն այդ տարբերություններին, և տարբեր դեպքերի համադրումն օգնում է բացահայտելու ընդհանուր ավելի լայն պատկեր:

Փորձագիտական հարցազրույցներ իրականացվել են հոգեբանի, սոցիալական աշխատողի և ոլորտի մասնագետների հետ՝ առավել համակարգային հարցերի բացահայտման, ռազմավարական քայլերի ձեռնարկման համար՝ նպաստելով հետազոտության խնդիրների առավել ընդհանուր պատկերի ձևավորմանը:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը, պարենային անվտանգությունը և այլն: Աղքատությունը բացառապես տնտեսական խնդիր չէ, այլ բազմաչափ երևույթ, որը ենթադրում է եկամտի և արժանապատվորեն ապրելու հիմնական հնարավորությունների բացակայություն կամ պակասություն: Աղքատությունը մարդու իրավունքների առջև ծառացած խնդիր է. այն մարդու իրավունքների խախտման

և՛ պատճառ է, և՛ այդ խախտումների հետևանք, ինչպես նաև նպաստավոր պայման այլ խախտումների համար[190]:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի՝ 2019 թվականին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցի համաձայն՝ 2018 թվականին Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 23.5 տոկոս, չափավոր աղքատների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ կազմել է 9.6 տոկոս, ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1.0 տոկոս[191]: Ըստ նույն զեկույցի՝ 2018 թվականին աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է մոտ 700 հազար մարդ (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով), նրանցից չափավոր աղքատների թվաքանակը (ներառյալ ծայրահեղ աղքատները)՝ 315 հազար, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ 30 հազար մարդ:

2018 թվականին աղքատության մակարդակի տարբերությունն ըստ քաղաքային (24.9 տոկոս) և գյուղական բնակավայրերի (21.3 տոկոս) կազմել է 3.6 տոկոսային կետ: Սակայն Երևանում (19.9 տոկոս) և Հայաստանի այլ քաղաքներում (30.3 տոկոս) աղքատության մակարդակի տարբերությունը մեծ է և կազմել է 10.4 տոկոսային կետ: 2018 թվականին աղքատության մակարդակները տարբերվում են ըստ մարզերի և Երևանի: Միջին հանրապետականից բարձր են Շիրակի, Լոռու, Տավուշի և Արմավիրի մարզերի ցուցանիշները, ընդ որում՝ Շիրակի մարզում բնակչության 42 տոկոսն ապրում է աղքատության շեմից ցածր: 2018 թ. աղքատության մակարդակի ցուցանիշները գերազանցել են 2008 թ. ցուցանիշները Արմավիրի և Տավուշի մարզերում: Նույն ժամանակաշրջա-

190. Տե՛ս UN OHCHR (2012). Guiding Principles on Extreme Poverty and Human Rights. Available at: https://www.ohchr.org/Documents/Publications/OHCHR_ExtremePovertyandHumanRights_EN.pdf [Accessed 22.07.2020].

191. ՀՀ վիճակագրական կոմիտե (2020), «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույց: Հասանելի է՝ https://www.armstat.am/am/?nid=82&id=2217 [դիտվել է 22.07.2020]:

նում աղքատության մակարդակի ցուցանիշները նվազել են 2008 թ. ցուցանիշների համեմատ ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ բոլոր այլ մարզերում և Երևանում[192]:

Նույն զեկույցի համաձայն՝ 2018 թվականին բազմաչափ աղքատության ցուցանիշը[193] կազմել է 22.1 տոկոս՝ այլ քաղաքային բնակավայրերում, 18.4 տոկոս՝ Երևանում, և 29.2 տոկոս՝ գյուղական բնակավայրերում:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանում յուրաքանչյուր չորս երեխայից մեկը և յուրաքանչյուր չորս կնոջից մեկն ապրում են բազմաչափ աղքատության մեջ: Հայաստանի բնակչության 55 տոկոսը ներկայացնող կանայք բազմաչափ աղքատների մեջ գերակշիռ՝ 58.3 տոկոս մաս են կազմում: Ընդհանուր առմամբ, բազմաչափ աղքատության մեջ ապրող կանայք և աղջիկները կազմում են երկրի բնակչության 13.7 տոկոսը: Տղամարդկանց շրջանում աղքատության համեմատաբար ցածր մակարդակը (21.9 տոկոսը) վկայում է բազմաչափ աղքատության մեջ ըստ սեռի անհամաչափությունների կայուն բնույթի մասին[194]: Բազմաչափ աղքատության մեջ ապրող տղամարդիկ կազմում են աղքատ բնակչության 41.7 տոկոսը կամ ընդհանուր բնակչության 9.8 տոկոսը: Բազմաչափ աղքատների 24.9 տոկոսը երեխաներ են:

Չնայած ներպետական և միջազգային երաշխիքներին՝ Հայաստանում դեռևս կան բազմաթիվ երեխաներ, որոնք բնակվում են աղքատության մեջ: ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019 թվականին հրապարակած «Հայաստանի

192. Նույն տեղում:

193. Բազմաչափ աղքատության ցուցանիշն ամփոփում է մի շարք զրկանքների մասով առկա տեղեկատվությունը և նկարագրում աղքատության բազմակողմությունը, խորությունն ու տևականությունը: Այն ոչ միայն բացահայտում է որոշակի զրկանքներ կրող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը, այլև հաշվի է առնում նույն անհատին միաժամանակ բաժին ընկած զրկանքների քանակն ու փոխհամընկնումը:

194. ՀՀ վիճակագրական կոմիտե (2020), «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույց: Հասանելի է՝ https://www.armstat.am/am/?nid=82&id=2217 [դիտվել է 22.07.2020]:

սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցում նշվում է, որ 2018 թվականին 0-5 և 6-9 տարեկան երեխաների շրջանում աղքատության մակարդակն ավելի բարձր է այլ տարիքային խմբերի համեմատ: Բազմանդամ և երեխաներ ունեցող տնային տնտեսությունների շրջանում աղքատ լինելու հավանականությունն ավելի մեծ է: Հայաստանում մինչև 6 տարեկան երեք և ավելի երեխա ունեցող տնային տնտեսություններն (ըստ բնակչության) ունեն աղքատության 3 անգամ ավելի բարձր ռիսկ (71.2 տոկոս) հանրապետական միջին մակարդակի համեմատ (23.5 տոկոս):

Վիճակագրական տվյալները վկայում են, որ աղքատության ռիսկը նվազում է, երբ երեխան ապրում է այնպիսի տնային տնտեսությունում, որտեղ ընտանիքի գլխավոր վաստակողի կրթական մակարդակը բարձր է: Աղքատ լինելու հավանականությունն էապես ավելի բարձր է այն երեխաների շրջանում, որոնք ապրում են այնպիսի տնային տնտեսություններում, որոնց գլխավորը կրթություն չունի կամ ունի տարրական կրթություն (43.5 տոկոս), ունի ոչ լրիվ միջնակարգ կրթություն (46.2 տոկոս), ունի միջնակարգ ընդհանուր կրթություն (33.1 տոկոս), միջին մասնագիտական կրթություն (25.4 տոկոս)՝ համեմատած այն երեխաների հետ, որոնք բնակվում են այնպիսի տնային տնտեսություններում, որտեղ գլխավորն ունի բարձրագույն կրթություն (15.3 տոկոս): Ծայրահեղ աղքատության ռիսկն ամենաբարձրն է այն երեխաների շրջանում, որոնք բնակվում են ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցողի գլխավորությամբ տնային տնտեսություններում: Տնային տնտեսության գլխավորի զբաղվածության կարգավիճակը նույնպես մանկական աղքատությունը կանխորոշող կարևոր գործոն է[195]:

195. ՀՀ վիճակագրական կոմիտե (2019), «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույց, էջ 101: Հասանելի է՝ https://www.armstat.am/am/?nid=82&id=2217 [դիտվել է 22.07.2020]:

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԵՆՔ

1993 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան՝ ստանձնելով կանանց նկատմամբ խտրականության ցանկացած դրսևորման բացառման, ազգային օրենսդրությամբ տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքի ամրագրման և երաշխավորման պարտավորությունները[196]:

Հայաստանը կանանց իրավունքների պաշտպանության բնագավառում վավերացրել է նաև ՄԱԿ-ի «Կանանց քաղաքական իրավունքների մասին», Եվրոպայի խորհրդի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին», «Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրության մասին», «Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին», «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին» կոնվենցիաները:

Առանձին խումբ անձանց կոնկրետ կարգավորման առարկա ունեցող միջազգային փաստաթղթերից զատ, վավերացնելով մարդու իրավունքներին առնչվող միջազգային համընդհանուր փաստաթղթեր, Հայաստանի Հանրապետությունը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և պահպանության պարտավորություն է ստանձնել: Դրանցից է, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որի մի շարք հոդվածներ՝ կյանքի իրավունք, խոշտանգման արգելք, խտրականության արգելք և այլն, ամրագրում են հենց խնդրի դեմ պայքարը և պետության

196. Տե՛ս այստեղ. https://www.ombuds.am/am/site/Activity/31 [դիտվել է 22.07.2020]:

պոզիտիվ պարտականությունը՝ պաշտպանել իր բնակչության կյանքի և այլ իրավունքները։

2018 թվականին ստորագրվել է Կոնվենցիան և այժմ վավերացման գործընթացների փուլում է։ 2010 թվականին ընդունված Եվրոպայի խորհրդի այս կոնվենցիան միջազգային փաստաթուղթ է, որի կարգավորման առարկան ամբողջությամբ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարը և դրանց կանխարգելումն է՝ ի տարբերություն այլ փաստաթղթերի, որոնք այլ խնդիրների կամ այլ իրավունքների շրջանակներում են անդրադառնում բռնությանը։ Փաստաթուղթը համաեվրոպական մակարդակում օրենսդրական հենքի ապահովման միջոց է՝ պաշտպանելու կանանց բռնության ցանկացած ձևից և դրսևորումից, կանխելու և վերացնելու կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը։ Կոնվենցիան վավերացնելով՝ պետությունները պարտավորվում են հետևել և ապահովել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հետապնդման օրենսդրական հենքը, դրանցից պաշտպանության երաշխավորումը՝ նման դեպքերի կանխարգելման և վերացման ուղղությամբ քայլերի ձեռնարկմամբ[197]։ Ուստի օրենսդրական հենքի ամրապնդման և դրանով իսկ խնդիրների և դեպքերի դեմ արդյունավետ պայքարի նպատակով կարևոր է համապարփակ, համակարգային և ամբողջական կարգավորումներ պարունակող այս կոնվենցիայի վավերացումը պետության կողմից։

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է կանանց և տղամարդկանց հավասարությունը, ինչպես նաև խտրականության բոլոր ձևերի արգելքը։ Խտրականությունն արգելող դրույթներ առկա են նաև կարգավորման տարբեր առարկաներ ունեցող օրենքներում։ Օրենքի առջև հավասարությունն ու խտրականության արգելքն ամրագրված են ՀՀ Սահմա-

197. McQuigg, R. (2017). The Istanbul Convention, Domestic Violence and Human Rights. Florence: Taylor and Francis, pp. 138-142.

նադրության 29-րդ հոդվածում: ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածում հստակ ամրագրված է կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը, ինչը ենթադրում է, որ կանայք պիտի ունենան հավասար պայմաններ, հնարավորություններ և երաշխիքներ իրենց հիմնական իրավունքների և ազատությունների իրացման համար: Ըստ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Ավելին, համաձայն Սահմանադրության 86-րդ հոդվածի՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներից է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը: 2017 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի ՀՀ օրենքում, որը, սակայն, գործուն մեխանիզմների բացակայության պատճառով արդյունավետորեն չի կիրարկվում:

Իրավահավասարության ամրապնդումը և կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից մեկն է[198], համաձայն որի՝ ՄԱԿ-ի 193 անդամ պետությունները պայմանավորվել են մինչև 2030 թվականը իրականացնել «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» խորագրով փաստաթղթով ամրագրված 17 նպատակների (169 թիրախ) ուղղությամբ ձեռնարկումներ: Հինգերորդ նպատակը սահմանում է գենդերային հավասարություն: Մասնավորապես, 5.1 նպատակը սահմանում է վերացնել կանանց և աղջիկների նկատմամբ

198. Sustainable Development Goals (SDG).

խտրականության դրսևորման բոլոր ձևերը, իսկ ըստ 5.2 նպատակի՝ պետք է «վերացնել բոլոր կանանց և աղջիկների հանդեպ գործադրվող բռնության բոլոր ձևերը պետական և մասնավոր ոլորտներում, այդ թվում՝ թրաֆիքինգը և սեռական ու շահագործման այլ տեսակները»։ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից առաջինը աղքատության հաղթահարումն է։

Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորության վերաբերյալ հարկ է ընդգծել, որ ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման 3-րդ շրջանի[199] ժամանակ մի շարք երկրներ, գնահատելով ընտանեկան բռնության դեմ պայքարի ուղղությամբ Հայաստանում իրականացված որոշ քայլեր, Հայաստանին առաջարկել են քայլեր ձեռնարկել Կոնվենցիայի վավերացման ուղղությամբ ընտանեկան բռնության խնդիրների լուծման նպատակով։ Ընտանեկան բռնությանն է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը 2018 թվականին Հայաստան կատարած այցի հիման վրա մշակված զեկույցում[200]։

Չնայած առկա օրենսդրական կարգավորումներին՝ երկրում շարունակում են տեղի ունենալ ընտանեկան բռնության դեպքեր, խտրականության այլ դեպքերի դրսևորումներ։ Նման դեպքերի առկայությունը վկայում է անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված շարունակական և համակարգված գործունեության իրականացման անհրաժեշտությունը՝ հասարակությունում ընտանեկան բռնության երևույթի վերաբերյալ առկա ընկալումները և կարծրատիպային մտածելակերպը փոխելու, բռնության ենթարկված անձանց իրավունքներն արդյունավետ կերպով

199. Տե՛ս UN UPR, 2nd cycle (2012-2016), UN UPR Database. Available at: https://bit.ly/3s4pdeU [Accessed 16.07.2020].

200. Տե՛ս Միյատովիչ, Դ. (2019), Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի զեկույցը 2018 թ. սեպտեմբերի 16-20 Հայաստան կատարած այցին հաջորդիվ։ Հասանելի է՝ https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149 [դիտվել է 10.08.2020]։

պաշտպանելու նպատակով:

Ուստի անհրաժեշտ է վարել համապատասխան միասնական պետական քաղաքականություն, մշակել ազգային ռազմավարություն և համապատասխան գործողությունների ծրագիր, որոնք նշված խնդիրների դեմ կազմակերպված պայքար կմղեն և կգտնեն համակարգային լուծումներ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընտանեկան բռնության հասկացությունը և դրա դրսևորման տեսակները

Ընտանեկան բռնությունը համաշխարհային խնդիր է, որն իր ազդեցությունն է ունենում բոլոր հասարակությունների վրա: Ունենալով տարբեր դրսևորումներ՝ այս երևույթը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտում է: Այն բացասական ազդեցություն ունի թե՛ ընտանիքի՝ որպես սոցիալական միավորի, թե՛ անհատի, թե՛ հասարակության վրա: Բացասական այս երևույթը բնորոշ է բոլոր հասարակություններին՝ անկախ սոցիալական, մշակութային, էթնիկ կամ կրոնական տարբերություններից:

Ընտանիքի անդամների միջև բռնի արարքների և այլ գործողությունների կամ անգործության դրսևորումներն ունեն թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի ազդեցություն ընտանիքի անդամների վրա, ինչի մասին են վկայում միջազգային կազմակերպությունների՝ ոլորտի խնդիրների վերաբերյալ դիտարկումները[201]: Ուշադրության է արժանի այն, որ ընտանիքի անդամները, մասնավորապես երեխաները, բռնության միջավայրում ականատես լինելով ևս բռնության են ենթարկվում անուղղակի կերպով, առանց բռնության ուղղակի օբյեկտ լինելու: Ընտանեկան բռնության երևույթը բացասա-

201. Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետ 132:

բար է ազդում բռնության ենթարկված անձի ֆիզիկական և հոգեկան առողջության վրա, այն ոչ միայն անձի հիմնական իրավունքների խախտում է, այլև խոչընդոտ է անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացման համար: Բռնությունը միայն ֆիզիկական դրսևորում չի ունենում, այն տարբեր հետևանքներ է ունենում անձի ձևավորման, հասարակությունում ինտեգրման և գործելու ու ազատ ինքնադրսևորվելու վրա:

Ընտանեկան բռնության տեսակներ

Ընտանեկան բռնությունը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտում է[202], որը տեղի է ունենում ընտանեկան միջավայրում: Այն ունի դրսևորման տարբեր ձևեր՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական, ինչպես նաև տարբեր ուժգնություններ: Տարբեր ուժգնությունների մասին խոսելիս պետք է հատուկ ընդգծել, որ արարքի որակավորման, դրան որպես խնդիր անդրադառնալու կամ դա ուշադրության ներքո պահելու համար բացառապես կարևոր չեն ուժգնության չափը, ինտենսիվությունը: Ընտանեկան բռնության մասին տարածված հանրային ընկալումներից մեկն այն է, որ հաճախ ընտանեկան բռնության մասին խոսվում է միայն, երբ այն ֆիզիկական բռնության դրսևորում է ունենում, և որոշ դեպքերում անգամ միայն այն դեպքերն են բռնության դրսևորում և խնդրահարույց համարում, երբ ֆիզիկական բռնության դրսևորումը ծանր հետևանքներ է ունենում: Ընդհանրացնելով պետք է նշել, որ բռնության ցանկացած տեսակի (ֆիզիկական, սեռական և ոչ ֆիզիկական՝ հոգեբանական, տնտեսական) դրսևորում բռնության գործադրում է, և դրա ուժգնությունը, ինտենսիվությունը նույնպես որոշիչ չեն արարքը բռնություն որակե-

202. Տե՛ս օրինակ՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի թիվ 19 Ընդհանուր հանձնարարական: Հասանելի է՝ http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm [դիտվել է՝ 10.08.2020]:

լու համար: Այսինքն՝ կապ չունի, թե ի՞նչ գործողություն կամ անգործություն է դրսևորվել կամ քանակական ի՞նչ հատկանիշներով, ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների անընդունելի, արդարացում չունեցող խախտում է, ինչին պետք է տրվի պատշաճ իրավական արձագանք, իսկ նման դեպքերի կանխարգելիչ աշխատանքները պետք է շարունակական լինեն:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ բռնության տեսակներն են՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական բռնություն և անտեսում[203]:

Բռնության շատ տեսակներ, որոնք միջազգային փաստաթղթերում ամրագրված են, դեռևս տեղ չեն գտել ներպետական օրենսդրական կարգավորումների շրջանակում: Նման օրինակներից մեկն է հետամտումը: Հետամտումը մեկ այլ անձի դեմ դիտավորյալ շարունակաբար կատարվող սպառնալից գործողություններն են, որոնք այդ անձի մեջ վախ են հարուցում սեփական անվտանգության համար[204]: «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի[205] 34-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պիտի ձեռնարկեն օրենսդրական և այլ անհրաժեշտ բոլոր միջոցներն այս արարքի քրեականացման համար: Սակայն այս և շատ այլ հանցակազմեր Հայաստանում դեռևս օրենսդրական

203. Տե՛ս «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված: Հասանելի է՝ https://www.arlis.am/documentView.aspx?docID=118672 [դիտվել է 10.08.2020]:

204. Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 34: Հասանելի է՝ https://rm.coe.int/168046246d [դիտվել է 10.08.2020]:

205. Այսուհետ՝ Կոնվենցիա:

ամրագրում չեն ստացել՝ գործնականում շարունակելով խնդիրներ առաջացնել:

Ընտանեկան բռնության սուբյեկտների շրջանակ

Ընտանեկան բռնությունը հիմնականում կարելի է բաժանել երկու տեսակի. զուգընկերների միջև՝ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև բռնություն և, այսպես կոչված, սերունդների միջև՝ ծնողների և երեխաների, այլ անդամների միջև բռնություն[206]: «Ընտանեկան» բառն ընտանեկան բռնության երևույթի դրսևորման շրջանակի ընկալման համար արհեստականորեն կարող է որոշակի սահմանափակում առաջացնել կամ տեղիք տալ ենթադրությունների, որ նման երևույթը կարող է տեղի ունենալ միայն անձանց հարաբերությունների ընթացքում: Սակայն բռնությունը հաճախ շարունակվում է նաև հարաբերությունների ավարտից հետո, ինչպես նաև անհրաժեշտ պայման չէ բռնություն գործադրողի և բռնության ենթարկվողի համատեղ բնակությունը[207]:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով ամրագրված կարգավորումները սահմանել են ընտանեկան բռնության սուբյեկտների շրջանակը, համաձայն որի՝ այն ներառում է ներկա կամ նախկին ամուսիններին, զուգընկերներին կամ ընտանիքի այլ անդամներին[208]:

Այսպես կոչված սերունդների միջև ընտանեկան բռնությունը (ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսա-

206. Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, 41-րդ պարբերություն:

207. Տե՛ս նույն տեղում, 42-րդ պարբերություն:

208. Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3 (բ): Հասանելի է՝ https://rm.coe.int/168046246d [դիտվել է 10.08.2020]:

կան բռնություն) անձի կողմից իր երեխայի կամ ծնողի դեմ բռնության գործադրումն է կամ նման արարքը, որ դրսևորվում է ընտանիքի այլ անդամների միջև, որտեղ կրկին բռնարարի և տուժողի համատեղ բնակությունն անհրաժեշտ չէ[209]:

Ընտանեկան բռնության ներպետական օրենսդրական կարգավորումների համաձայն՝ ընտանիքի անդամներ են «անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները կամ համատեղ բնակվող տատը, պապը, քույրը և եղբայրը (նաև համամայրը կամ համահայրը[210]), ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը»[211]:

Փաստորեն, Հայաստանի ներպետական օրենսդրական կարգավորումները չեն ընդգրկում զուգընկերոջը՝ ի տարբերություն միջազգային կարգավորումների, ինչը խնդիրների առաջացման պատճառ է դառնում, քանի որ գործող ակտերով ամրագրված դրույթները չեն տարածվում այն անձանց վրա, ովքեր զուգընկերային հարաբերություններ ունեն, բայց ամուսնացած կամ փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ չեն:

Ներպետական ձևակերպումից դուրս է մնացել միջազ-

---

209. Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, 42-րդ պարբերություն:

210. Համահայր քույր կամ եղբայր՝ նույն հորից ծնված, նույն հոր զավակ, համամայր՝ նույն մորից ծնված, նույն մոր զավակ:

211. Տե՛ս «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետեր: ՀՀ օրենքի 3-րդ հոդված: Հասանելի է՝ https://www.arlis.am/documentView.aspx?docID=118672 [դիտվել է 10.08.2020]:

գային մի շարք փաստաթղթերում տեղ գտած և մի շարք երկրներում ամրագրված այն մոտեցումը, համաձայն որի՝ զուգընկերների միջև բռնությունը ևս համարվում է ընտանեկան բռնություն: Մասնավորապես, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «ընտանեկան բռնություն» են համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են այդ թվում նաև զուգընկերների միջև: Ավելին՝ Կոնվենցիայի բացատրական զեկույցի[212] 42-րդ պարբերության համաձայն՝ ընտանեկան բռնությունը ներառում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնություններ ներկա կամ նախկին ամուսինների, ինչպես նաև ներկա կամ նախկին զուգընկերների միջև: «Կանանց նկատմամբ բռնության վերացման վերաբերյալ օրենսդրության» ՄԱԿ-ի 2012 թվականի ձեռնարկում[213] նշվում է, որ ընտանեկան բռնությունից օրենքով պաշտպանված անձանց շրջանակը պետք է ընդգրկի առնվազն անհատների, որոնք զուգընկերային հարաբերություններ ունեն կամ ունեցել են՝ ներառելով ամուսնական և ոչ ամուսնական հարաբերությունները: Նշված ձեռնարկը մեկնաբանում է նաև, որ ընտանեկան բռնության վերաբերյալ օրենքները հաճախ ներառել են միայն այն անձանց, որոնք տիպական զուգընկերային հարաբերություններ ունեն, մասնավորապես՝ ամուսնացած զույգերի: Սակայն ժամանակի ընթացքում օրենսդրական շրջանակն ընդլայնվել է՝ ընդգրկելով այլ հայցվորների կամ ընտանեկան բռնության տուժողների, ինչպիսիք են

212. Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց: Հասանելի է՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800d383a [դիտվել է 10.08.2020]:

213. United Nations (2009). Handbook for legislation on violence against women [electronic resource]. New York. Available at: http://www2.unwomen.org/-/media/headquarters/attachments/sections/library/publications/2012/12/unw_legislation-handbook%20pdf.pdf?v=1&d=20141013T121502 [Accessed 10.08.2020].

զուգընկերները, որոնք ամուսնացած չեն կամ համատեղ չեն բնակվում:

Որպես օրինակ կարելի է առանձնացնել Իսպանիայի «Գենդերային բռնության դեմ ինտեգրված պաշտպանության միջոցների մասին» 2004 թվականի օրենքը[214], որը սահմանում է ընտանեկան հարաբերություններն ընդլայնված կերպով՝ որպես ռոմանտիկ և սեռական հարաբերություններ: «Ընտանեկան բռնությունից պաշտպանության մասին» Լիտվայի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի օրենքի[215] 2-րդ հոդվածը սահմանում է, որ ընտանեկան միջավայրը կազմված է ներկա կամ նախկին ամուսիններից, զուգընկերներից, մերձավոր կամ այլ սերտ հարաբերություններ ունեցող անձանցից, ինչպես նաև այն անձանցից, ովքեր բնակվում են միասին կամ կիսում են ընդհանուր կենցաղը:

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից ընտանեկան բռնության կանխարգելման դեմ պայքարի մասին մի շարք երկրների օրենքների նախագծերի վերաբերյալ տրված կարծիքներում բազմիցս հստակորեն նշվել է, որ ընտանեկան բռնության բնորոշումը օրենքում ամրագրելիս անձանց միջև հարաբերությունների սահմանումը պիտի ընդգրկի դրանց ամենալայն շրջանակը: Մասնավորապես, «Ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ իրավական դաշտում փոփոխություններ կատարելու մասին» Մոլդովայի Հանրապետության նախագծի վերաբերյալ 2015 թվականի հուլիսի 9-ին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ներկայացրած կարծիքի[216] 2.1-րդ մասի 22-րդ պարբերությունում նշվում է, որ կարգավորումների

214. Organic Act 1/2004 of 28 December on Integrated Protection Measures against Gender Violence.

215. Republic of Lithuania Law on Protection against Domestic Violence 26 May 2011 No XI-1425 Vilnius.

216. Opinion on Draft Amendments to theLlegal Framework on Preventing and Combating Domestic Violence in Moldova, Warsaw, 9 July 2015, Opinion N: AGEND-MDA/271/2015 [AlC].

ձևակերպումները չեն ներառում որոշ հարաբերություններ, ինչպիսիք են, օրինակ, զուգընկերների հարաբերությունները, ռոմանտիկ և սեռական հարաբերությունները այն անձանց միջև, ովքեր չեն բնակվում կամ երբևէ չեն բնակվել միասին:

Ստացվում է, որ միջազգային փաստաթղթերի իմաստով ընտանեկան բռնություն է համարվում նաև զուգընկերային հարաբերությունների մեջ եղող անձի կողմից իր զուգընկերոջ նկատմամբ կիրառված՝ ընտանեկան բռնության մասին օրենքով սահմանված գործողությունները, իսկ ներպետական կարգավորումների համաձայն՝ այն դուրս է ընտանեկան բռնության սուբյեկտների շրջանակից:

Օրենսդրական այս բացի շտկման նպատակով 2019 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ձեռնամուխ էր եղել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի մշակմանը[217]: Հասկացությունն ավելի ամբողջական սահմանելու և որոշակիացնելու խնդիր կա, այնպես, որ հստակ լինի և հետագայում գործնական կիրառության ժամանակ խնդիրներ չառաջացնի, այդուհանդերձ, այն դեռևս չի ընդունվել և շարունակում է մնալ նախագիծ:

217. Տե՛ս «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը հետևյալ հղումով. https://www.e-draft.am/projects/2008 [դիտվել է 10.08.2020]:

Ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրություն

Այս երևույթը տարբեր դրսևորումներ և տարածվածության մակարդակ ունի Հայաստանում: Այդ մասին են վկայում իրավասու մարմինների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կառույցների տվյալները: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուսումնասիրությունների՝ աշխարհում կանանց 30 տոկոսը կյանքի ընթացքում իր զուգընկերոջ կողմից ենթարկվել է ֆիզիկական կամ սեռական բռնության[218]: Հարկ է ընդգծել, որ բռնության այս տեսակը թաքնված (լատենտային[219]) բնույթ ունի, ուստի վիճակագրական տվյալները, հավանական է, չեն արտահայտում բռնության իրական պատկերը: Վիճակագրական ճշգրտության վրա ազդում են հասարակության կողմից այս երևույթի սխալ ընկալումը, այն մասնավոր դեպք համարելը: Այդ մասին բարձրաձայնելը դեռևս հաճախ ամոթալի է համարվում տեղյակների կամ զոհի կողմից, ուստի հասարակության շատ անդամներ խուսափում են բռնության վերաբերյալ հաղորդում ներկայացնելուց:

Այսպիսով՝ ընտանեկան բռնության վերաբերյալ առկա վիճակագրական տվյալները չեն արտացոլում բռնության այս

218. World Health Organization (2013), Global and regional estimates of violence against women: prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence. Geneva: WHO Press, pp. 2 and 16. Avaliable at: https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/85239/9789241564625_eng.pdf?sequence=1 [Accessed 10.08.2020].

219. Լատենտային հանցավորությունը հանցավորության այն մասն է, որը չի արտացոլվում պաշտոնական վիճակագրության մեջ: Տե՛ս Ինշակով, Ս. Մ. (2007), Լատենտային հանցավորությունը ՌԴ-ում: Ընտանեկան բռնության պարագայում, և ոչ միայն, լատենտայնությունը (թաքնվածությունը) ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Դրանք կարող են լինել, օրինակ, իրավապահ մարմինների թերի աշխատանքի, հանցագործության այս կամ այն տեսակի ինֆորմատիվության ցածր աստիճանի հետ կապված հարցերը (օբյեկտիվ պատճառներ), իսկ սուբյեկտիվ պատճառներից են, օրինակ, բռնության ենթարկված կամ այլ անձի կողմից հանցագործության մասին չհայտնելն այն քողարկելու, այն հանցագործություն չհամարելու, ենթադրյալ մեղադրյալին պատժի ենթարկելու ցանկության բացակայության, հասարակության վատ արձագանքի, ամոթի պատճառներով: Տե՛ս նաև հետևյալ հղումով. http://endic.ru/legal/Latentnost-9476.html [դիտվել է 10.08.2020]:։

տեսակի ամբողջական և իրական պատկերը: Դրանից բացի՝ Հայաստանում դեռևս չի վարվում ընտանեկան բռնության նույնիսկ հայտնի դեպքերի միասնական վիճակագրություն: Խնդիրն արձանագրվել է հասարակական կազմակերպությունների և ոլորտի շահագրգիռ մարմինների կողմից, ինչպես նաև դրա մասին բարձրաձայնվել է միջազգային կազմակերպությունների կողմից[220]:

Մինչև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումը վիճակագրական տվյալների ճշգրտության ու միասնականության վրա բացասաբար էր անդրադառնում այն, որ չկար «ընտանեկան բռնություն» հասկացություն, և վիճակագրական տվյալներ մշակող յուրաքանչյուր մարմին տեղեկությունները հավաքում էր՝ հենվելով իր «ներքին» սահմանումների վրա, այսինքն՝ ստացվում էր մի իրավիճակ, որ մի մարմնի համար նույն արարքը կարող էր համարվել ընտանեկան բռնություն, մյուս մարմնի համար՝ ոչ:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ որպես լիազոր մարմին, իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում կառավարության որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում: Անհրաժեշտ է ընդգծել, սակայն,

220. Սրա մասին նշվել է նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեի կողմից, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներում (CEDAW/C/ARM/CO/5-6), կետ 37:

որ օրենքի ընդունումից հետո՝ 2017 թվականից ի վեր, միասնական վիճակագրություն ևս չի իրականացվել, քանի որ այդ ընթացքում կառավարության համապատասխան որոշումը չէր ընդունվել: 2019 թվականի հոկտեմբերին ընդունվեց ՀՀ կառավարության «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշումը, սակայն դեռևս գործնական կիրառություն չի ստացել, այսինքն՝ լիազոր մարմնի կողմից դեռ չեն ամփոփվել և ներկայացվել միասնական վիճակագրական տվյալները: Այսպես՝ ՀՀ կառավարության «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, յուրաքանչյուր կիսամյակ ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ հավաքված տեղեկությունները ստանալուց և ամփոփելուց հետո պաշտոնական կայքում հրապարակելու է սահմանված ժամանակահատվածի (տեղեկատվությունը հրապարակվում է առնվազն յուրաքանչյուր կիսամյակ) վիճակագրական հաշվետվությունը: Սակայն առաջին համապարփակ վիճակագրությունը դեռ չի հրապարակվել:



Պատկեր 1



Պատկեր 2

Նշված 707 դեպքից քրեական գործ է հարուցվել 159 դեպքով, և նյութեր են նախապատրաստվել 548-ով: Հարուցված քրեական գործերից կարճվել է 130-ը, իսկ 29-ն ուղարկվել է դատարան: Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2018 թվականին բռնության դեպքերով կայացվել է 435 նախազգուշացման և 132 անհետաձգելի միջամտության որոշում:

2018 թվականին ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանիքում բռնության վերաբերյալ 519 քրեական գործ (2017 թվականին ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների վարույթում եղել է ընտանիքում բռնությունների վերաբերյալ 458 քրեական գործ): Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տվյալների՝ 2018 թվականին ավարտվել է ընտանիքում բռնության վերաբերյալ 393 քրեական գործ, 297 քրեական գործի վարույթ կարճվել է, որոնցից 91-ը՝ արդարացման հիմքով, 206-ը՝ ոչ արդարացման հիմքով: Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 82 քրեական գործ 85 անձի վերաբերյալ: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ դատարան է ներկայացվել 14 միջնորդություն: Կասեցվել է 23 քրեական գործով վարույթ, որից 18-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 5-ը՝ այլ հիմքով[221]:

Ըստ ՀՀ դատախազության տվյալների՝ 2018 թվականին ընտանիքում բռնության 406 դեպքի առթիվ հարուցվել է նույնքան քրեական գործ:

221. Տե՛ս ՀՀ Քննչական կոմիտե (2019), Տեղեկատվություն ՀՀ ՔԿ վարույթում 2018 թվականի ընթացքում ընտանիքում բռնության վերաբերյալ քննված գործերի վերաբերյալ: Հասանելի է՝ http://investigative.am/news/view/yntaniqum-brnutyun_2018.html [դիտվել է 18.08.2020]:

Այդ քրեական գործերը հարուցվել են ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածներով



բռնաբարությունը (ՔՕ138-րդ հոդված)
3
սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի հետ (ՔՕ141-րդ հոդված)
11
անառակաբարո գործողությունները (ՔՕ142-րդ հոդված)
3
բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը (ՔՕ147-րդ հոդված)
1
ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելը (ՔՕ167.1-րդ հոդված)
3
ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը (ՔՕ173-րդ հոդված)
7
կողոպուտը (ՔՕ176-րդ հոդված)
1
գողությունը (ՔՕ177-րդ հոդված)
1
գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (ՔՕ185-րդ հոդված)
2
ինքնիրավչությունը (ՔՕ322-րդ հոդված)
1
դատական ակտը դիտավորությամբ չկատարելը (ՔՕ353-րդ հոդված)
1
անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը (ՔՕ 353.1-րդ հոդված)
2
այլ հոդվածներով
31
0
50
100
150
200
250

Պատկեր 3

Վերոնշյալ դեպքերի առթիվ հարուցված 67 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 224-ով վարույթը կարճվել է (արդարացնող հիմքով՝ 65-ը, ոչ արդարացնող հիմքով՝ 167-ը, այդ թվում՝ հաշտության հիմքով՝ 131-ը), և քրեական հետապնդումը դադարեցվել է, 9-ով վարույթը կասեցվել է (ՀՀ ՔԴՕ 31-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետ)[222]:

Միայն 2018 թվականի 2-րդ կիսամյակում ոստիկանությունում գրանցվել է ընտանիքում բռնության վերաբերյալ 990 դեպք[223]:

2018 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում ՀՀ ոստիկանությունում գրանցվել է ընտանիքում բռնության վերաբերյալ 990 դեպք, որից բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացվել է.



Պատկեր 4

222. Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում։

223. Տե՛ս ՀՀ ոստիկանություն (2019), Ամփոփ տեղեկատվություն ՀՀ ոստիկանության ծառայությունների և տարածքային մարմինների 2018 թ. օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքների մասին։ Հասանելի է՝ http://www.police.am/news/view/%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83300119.html [դիտվել է 18.08.2020]։

Պաշտոնական տվյալները տարբերվում են ոչ պաշտոնական տվյալներից: 2019 թվականին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի տվյալներով կոալիցիայի անդամ կազմակերպությունները ընտանեկան և սեռական բռնության թեժ գծերին ստացել են 4592 զանգ[224]:

Ընտանեկան բռնության երևույթի առանձնահատկությունները

Ընտանեկան բռնության խնդիրն ունի բազմաթիվ ասպեկտներ, ազդեցության մակարդակներ ու ծավալներ: Ընտանեկան բռնությունը պայմանավորված է հասարակությունում արմատավորված բռնության կամ նման արարքների մշակույթի վերաբերյալ ընկալումներով, խնդիրների լուծման վերաբերյալ սխալ պատկերացումներով, անձնային փոխհարաբերությունների ձևավորման, պահպանման և փոխադարձ հարաբերման շուրջ սխալ ընկալումներով, անհավասար հնարավորություններով, հասարակությունում արմատավորված գենդերային դերերով, ինչպես նաև սոցիալական, հոգեբանական և տնտեսական ստորադասության, «աստիճանակարգման» (հիերարխացման) արդյունքն է:

Ընտանեկան բռնության երևույթն ունի այլ հանցագործություններից կամ հանցագործածին իրադրություններից իրեն տարբերող առանձնահատկություններ: Այսպես՝

- ընտանեկան բռնությունը դրսևորվում է հենց ընտանեկան՝ այն միջավայրում, որտեղ ենթադրվում է, որ անձը պիտի ամենապաշտպանվածը լինի.
- բռնությունը գործադրվում է ընտանեկան, բարեկամական կապեր ունեցող անձանց կողմից, այլ ոչ՝ օտարների, որոնց դեպքում, բնականաբար, պատասխանատվութ-

224. Տե՛ս Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա (2020), Տարեկան լրաթերթ 2019: Հասանելի է՝ https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2020/03/CSVW-anrep-2019.pdf [դիտվել է 18.08.2020]:

յան ենթարկելու ցանկությունը շատ մեծ է լինում: Սա է այն հիմնական պատճառը, որ բռնության ենթարկվածները շատ հաճախ չեն հայտնում, չեն բարձրաձայնում այս բացասական երևույթի մասին՝ չցանկանալով «վնասել» թեև բռնություն գործադրած, սակայն «հարազատ» մարդուն.

- այն ունի դրսևորման տարբեր ձևեր, ինչի պատճառով հաճախ անգամ բռնության ենթարկվողն ինքնին չի գիտակցում, որ ենթարկվում է բռնության: Ֆիզիկական բռնությունից զատ, երբ բռնության հետևանքներն ու բռնությունից մնացած հետքերն ակնառու են, այլ դեպքերում թե՛ բռնության ենթարկվածը, թե՛ նրա շրջապատը երբեմն չեն գիտակցում բռնության ենթարկվելու մասին:

Նշված առանձնահատկություններով է պայմանավորված այս հանցագործության լատենտային բնույթը, այսինքն՝ այն, որ շատ դեպքերում բռնություն գործադրողի և բռնության ենթարկվողի միջև հարազատական կապի պատճառով այն չի բարձրաձայնվում՝ խոչընդոտելով ընտանիքում բռնության դեմ արդյունավետ պայքարը և դրա կանխարգելումը: Դրան ավելանում է նաև բռնության երևույթի բազմաբնույթ հանգամանքներից, օրինակ, բռնության հոգեբանական ասպեկտը կամ հասարակության մեջ ընդունված մտածելակերպը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տղամարդ հարցվածների մեկ երրորդից կամ նույնիսկ կեսից ավելին գենդերային հիմնախնդրի առնչությամբ սուբյեկտիվ են: Նրանք արդարացնում են զուգընկերոջ դեմ ֆիզիկական բռնության գործադրումը: Հարցվածների 35.7 տոկոսը, որից 44.6 տոկոսը տղամարդ են և 27.8 տոկոսը՝ կին, համաձայն է, որ «կինը պետք է հանդուրժի բռնությունը հանուն ընտանիքի միասնության»: Որոշ դեպքերում «կինը ծեծի է արժանի» պնդմանը համաձայն է հարցվածների 27.7 տոկոսը, որից 35.2 տոկոսը տղամարդ, և 21 տոկոսը կին է: Հարցվածների 55.4 տոկոսը (տղամարդ՝ 60.9 տոկոս, կին՝ 50.5

տոկոս) համաձայն է, որ «եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա վերջինս կարող է նրան խփել»: «Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեռական հարաբերություն ունենալուց» պնդմանը համաձայն է հարցվածների 5.1 տոկոսը (տղամարդ՝ 5.8 տոկոս, կին՝ 4.5 տոկոս), սակայն «եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է» պնդմանը համաձայն է հարցվածների 59.8 տոկոսը: «Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել» պնդմանը համաձայն է հարցվածների 62.7 տոկոսը[225]: Հաճախ ընտանեկան բռնությունը հասարակության մեջ ներկայացվում և ընկալվում է որպես ուժի և իշխանության հաստատման դրսևորում, իսկ բռնություն գործադրողի և բռնության ենթարկվողի իրավագիտակցության ցածր մակարդակը նպաստավոր պայման է նման կարծրատիպային մտածելակերպի ամրապնդման համար:

Ընտանեկան բռնության հետևանքները, այլ խնդիրների առաջացման և բռնության փոխակերպման հնարավորությունը

Հետազոտության խնդիրներից էր ուսումնասիրել բռնության հնարավոր փոխանցման, փոխակերպման, տիպաբանության հարցերը[226]: Այս հարցերի՝ հասարակության տարբեր

225. Օսիպով, Վ. և Սարգիզովա, Ջ. (2016), Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում. սոցիոլոգիական հետազոտության արդյունքների զեկույց: Երևան, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ: Հասանելի է՝ https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_ARM_July_2017_finalized_0.pdf [դիտվել է 18.08.2020]:

226. Ուսումնասիրությունն իրականացվել է ՄԱԿ-ի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի մշակած սոցիալ-էկոլոգիական մոդելի օգնությամբ: Տե՛ս Dahlberg, L.& Krug, E. (2002). Violence-a global public health problem. In: Krug, E., Dahlberg, L., Mercy, J., Zwi, A., Lozano, R. (eds) (2002). World Report on Violence and Health. Geneva: World Health Organization, pp. 1–56. Available at https://www.cdc.gov/violenceprevention/publichealthissue/social-ecologicalmodel.html [Accessed 18.08.2020].

շերտերում ունեցող հնարավոր հետևանքների վերաբերյալ արդյունքները փորձ է արվել պարզել քննարկումների և հարցազրույցների միջոցով՝ դիտարկելով դրանք անձնական, փոխհարաբերությունների, համայնքային և հասարակական տիրույթներում:

Հետազոտության ժամանակ հետևյալ հարցադրումներն են դրվել. արդյոք անձնական մակարդակում բռնության կամ ագրեսիայի հետևանք դիտարկվու՞մ է հետագայում բռնություն գործադրող կամ բռնության ենթարկվող դառնալու հավանականությունը: Փոխհարաբերությունների մակարդակում դիտարկվել է այն հարցը, թե նման վարքագիծը խնդիրներ ունեցող ընտանիքի անդամների, բռնության ականատեսների, բռնության ենթարկվողի կամ բռնություն գործադրողի համար արդյոք ընդունելի՞ է դառնում և փոխանցվում սերունդներին: Համայնքային մակարդակում հարցի ուսումնասիրության շրջանակ է՝ արդյոք ընտանեկան բռնության, ագրեսիայի կամ այլ արարքի դրսևորումների ականատես եղած անձանց, տուժողի, բռնարարի, բռնության անմիջական զոհ կամ սոսկ ականատես եղած անձի կողմից բռնությունը հետագայում հայելային կերպով չի՞ արտացոլվում կամ շղթայական ռեակցիա չի՞ առաջացնում համայնքային այլ մակարդակներում կամ իր այլ զբաղվածությունների իրականացման ընթացքում: Խնդիրները դիտարկվել են նաև հասարակության առավել լայն շրջանակում բռնության ընկալման տեսանկյունից, այն է՝ ինչպես է ընդհանուր հասարակությունը վերաբերվում նման հարցերին:

Թվարկված հարցերի պարզաբանման համար քննարկումների ընթացքում կարծիքները տարբերվում էին: Խմբային քննարկումների ընթացքում հիմնականում դիտարկվում էր այն տարբերակը, որ բռնության ենթարկված կամ ականատես եղած երեխաները սովորում են նման փոխհարաբերությունների, նրանց համար վիճաբանությունները, բարձր գոռոցները կամ ագրեսիվ այլ պահվածքը դառնում են ըն-

դունելի և սովորական երևույթ: Ձևավորվում է այն ընկալումը, որ անձանց փոխհարաբերությունները հենց այդպիսին էլ պիտի լինեն: Այս դիտարկումը հակադարձվում էր այն մոտեցման ու տարբեր օրինակների ներկայացմամբ, թե ինչպես բռնության ականատես եղած կամ բռնության ենթարկված երեխան հետագայում չափազանց ուշադիր ծնող է դառնում իր երեխաների հանդեպ, կամ մեկ այլ օրինակում, թե ինչ հոգատարությամբ է վերաբերվում իր կրտսեր եղբայրներին կամ քույրերին:

Խմբային քննարկումների առարկա է դարձել նաև բռնության կամ ագրեսիայի ենթարկված երեխաների վարքագիծը դպրոցում կամ համայնքային այլ միջավայրում: Արդյունքների ամփոփումից վերստին ստացվում է, որ դիտարկումները միանշանակ չեն: Բռնության, անտեսման մատնված երեխաները հաճախ չեն գնում դպրոց, չեն հետևում դասապրոցեսին կամ գնալիս խնդիրներ են ունենում դասընկերների հետ: Խնդրի վերաբերյալ քննարկումները բացահայտում են, որ այս երեխաները խնդիրներ են ունենում դասընկերների հետ, քանի որ մի կողմից՝ նրանք ագրեսիվ են լինում և այդ վարքագիծը փոխանցում են այլ միջավայրերում՝ դպրոցում, բակում և այլն, մյուս կողմից՝ դասարանում խնդիրներ են առաջանում, քանի որ նրանք են դասընկերների կողմից ենթարկվում բուլլինգի՝ պայմանավորված իրենց սոցիալական, ընտանեկան և այլ դիրքով: Վերջին դեպքի ուսումնասիրությունը քննարկման ընթացքում ցույց է տալիս, որ բռնության ենթարկված անձի՝ հասարակությունում դրսևորումը կարող է տարբեր լինել: Վերջին օրինակը ցույց է տալիս, որ նրանք ավելի ճնշված, մեկուսացված են լինում ու շփման, հարաբերվելու ցանկություն ու այլ անձանց նկատմամբ վստահություն չեն ունենում:

«Բռնության ենթարկման կամ դրան ականատես լինելու հետևանքների հարցը բազմակողմանի է: Հոգեբանական գրականության համաձայն՝ բռնության

հետևանքները կարող են տարբեր լինել. միանշանակ չի կարելի ասել, որ բռնության ենթարկված անձը այն այլ հարաբերությունների մեջ է կիրառելու: Կարող է այդ միջավայրում մեծացող երեխան տեսնի, որ դա է հարաբերվելու ձևը, և կրկնի: Նույն կերպ, գնալով դպրոց, երեխան, օրինակ, ծեծում է այլ երեխաների կամ ագրեսիվ է շրջապատի նկատմամբ, որովհետև այդպես է տեսնում հարցերի լուծումը: Մեկ այլ դրսևորում է, որ բռնության ականատես լինելով՝ անձինք նաև տոլերանտ են դառնում բռնության նկատմամբ:

Սակայն այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ անմիջական կապ չկա այս արարքների միջև: Շատ երեխաներ, ականատես լինելով, հեռու են բռնությունից և դեմ: Գործնականում դեպքեր են լինում, երբ ագրեսիան՝ բռնությունը, տարածվում է ընտանիքի մի անդամի նկատմամբ, բայց մյուս անդամի նկատմամբ չի տարածվում: Օրինակ՝ կնոջը ամուսինը ենթարկում է բռնության, բայց երեխաներին՝ ոչ, կամ հակառակը:

Այսինքն՝ այս բոլոր հարցերը պետք է դիտարկել անհատական մակարդակում, թե՛ վարքի, թե՛ տարբեր գործոնների անմիջական դիտարկմամբ: Ագրեսիան տրանսֆորմացվող երևույթ է, պարտադիր չէ, որ այն ագրեսիայով դրսևորվի, այն կարող է հակառակին հանգեցնել, և այդ անձինք բացառապես դեմ են բռնությանը»:

Հոգեբան[227]

Բռնարարի վարքը խմբային քննարկումների ընթացքում քննարկման մեծ առարկա չի դարձել, կոնկրետ կարծիքներ չեն հնչել տարբեր դեպքերի քննարկման ընթացքում բռնա-

227. Շուշանիկ Խուրշուդյան, ԴԱՆ, Երևան, 2019, Ս.Դ., 30-35 տարեկան:

րարի վարքագծի, բռնությունից առաջ կամ հետո նրա վիճակի վերաբերյալ: Բռնություն գործադրողի վարքագիծը խմբային քննարկումների ժամանակ հիմնականում ներկայացվել է տարբեր դեպքերի մասին խոսելիս, դրանց տարբեր ասպեկտները քննարկելիս: Բռնարարի վարքագծի վերաբերյալ քննարկումները մեկնարկել են այն վերացական հայտարարությամբ, թե ընտանեկան բռնության մասին խոսելիս ինչու չի խոսվում տղամարդու մասին, նրանք ևս ենթարկվում են բռնության ու դրա տարբեր դրսևորումների: Նման հայտարարությունների ժամանակ հիմնականում բերվում են հոգեբանական ճնշումների այն օրինակները, որոնք գործադրվում են տղամարդկանց նկատմամբ: Տարբեր լսարաններում քննարկումների նման կերպ ազդարարումը դիտարկվում է երկու տեսանկյունից: Նախ՝ սա հոգեբանական երևույթ է, մարդիկ հաճախ նախընտրում են մերժել, անտեսել խնդիրը, քան մոտենալ դրան և փորձել լուծումներ գտնել: Երկրորդ՝ նման հայտարարությունները մակերեսային տեղեկացվածության հետևանք են. լսարանը սկզբում թյուր կարծիք է ունենում, որ ընտանեկան բռնության մասին խոսելը, բարձրաձայնելը ֆեմինիստական ինչ-որ դրսևորում է, կամ ընտանեկան բռնությունը միայն կանանց նկատմամբ է դրսևորվում: Նման կարծրատիպային մոտեցումները, իհարկե, վերանում են քննարկման ընթացքում, երբ սկսում է ներկայացվել խնդրի բուն էությունը, այսինքն՝ որ այն տարածվում է ընտանիքի բոլոր անդամների վրա, և միայն կանանց վրա տարածվող երևույթ չէ, և որ տղամարդիկ ևս կարող են ենթարկվել բռնության:

Սա առաջնային արձագանքն էր, իսկ արդեն խմբային քննարկումների ժամանակ բռնություն գործադրողի վարքագիծը, տարբեր կոնկրետ դեպքերը, դրանց տարբեր ասպեկտները քննարկելիս մասնակիցները բռնությունը ներկայացնում են որպես տվյալ անձի ինքնադրսևորման խնդիր, այսինքն՝ ընդունում են, որ ընտանեկան բռնությունը խնդիր է, այն կոնկրետ դեպքի շուրջ ծագած անձերի մասնավոր հարց չէ:

Ընտանեկան բռնության դեպքի քննարկումը սկզբում քննադատական մոտեցում էր առաջացնում մասնակիցների շրջանում: Նրանք բարձրացնում էին տուժողի, բռնության ենթարկված անձի անձնային հատկանիշների, վարքագծի, պահվածքի և գործողությունների շուրջ հարցեր, հաճախ նույնիսկ դատապարտողական հայտարարություններ անում: Սակայն կոնկրետ դեպքերի քննարկումը աստիճանաբար դուրս է մղում այս քննադատական կամ նախապաշարմունքային և կրկնակի զոհականացման մոտեցումը:

Քննարկումների ընթացքում բացահայտված հաջորդ սկզբնական մոտեցումը բռնություն գործադրող անձի անցյալի հետ կապվող հարցադրումների առաջքաշումն էր: Խմբի մասնակիցները բռնության կամ խնդրահարույց հարաբերություններ ունեցող ընտանիքների շուրջ կոնկրետ դեպքերի վերաբերյալ քննարկումների ժամանակ առաջ էին քաշում բռնություն գործադրողի անցյալի (background) հարցը, թե ինչ ընտանիքից է կամ ինչ ծնողներ է ունեցել: Ընդ որում՝ այս հարցը դիտարկվում էր երկու հավասար օրինակների մեջբերումով: Խմբի մասնակիցների մի մասը բռնություն գործադրողի մասին խոսելիս անդրադառնում էր նրա ընտանիքին, ծնողներին կամ այլ հանգամանքներ «մեղավոր համարում». «Նա ի՞նչ ընտանիքից է, ի՞նչ դաստիարակություն է ստացել, այդպես էլ պետք է լիներ...»: Մյուս մասը չհամաձայնելով՝ այլ դեպքերի մասին էր խոսում. «Նա մեր գյուղի լավ ընտանիքից էր, մայրը, հայրը շատ ընտիր մարդիկ էին, ո՞վ կմտածեր, բոլորը աղջկան նախանձում էին: Ռուսաստան գնալն էր սաղ...»: Մեկ այլ դեպքում կինը պատմում էր, որ վաղուց բաժանվել է ամուսնուց, ամուսինը երկրորդ անգամ է ամուսնացել: Իրենք մի բակում են ապրում, և բռնությունը շարունակվում է առ այսօր: «Մենք բաժանվել ենք, որովհետև ես չդիմացա, երեխա ունեի, տղաս հիվանդ էր, բայց բաժանվեցի: Ինձ բոլորը մինչև հիմա մեղադրում են, ինքը կին ունի, բայց իրա մայրը ինձ ասում է՝ ինչու գնացիր: Իրա կնոջ հետ էլ խնդիրներ չունենք, խնդիրը իրա մեջ է»:

Բռնություն գործադրող անձի վարքագիծը սույն հետազոտության ընթացքում դիտարկվել է միայն առանձին դեպքերի կամ հարցերի քննարկման շրջանակում, և քննարկումների արդյունքներն ամփոփելով՝ պետք է նշել, որ ընդհանուր առմամբ հասարակության շրջանում տարածում ունի բռնություն գործադրող անձի արարքների պայմանավորումը այլ փաստերով (ընտանիքով, ծնողներով, դաստիարակությամբ, ընտանիքի սոցիալական դրությամբ, կրթությամբ, մշակութային առանձնահատկություններով կամ բռնության ենթարկված անձի արարքներով, պահվածքով և այլն), սակայն խմբի անդամների խոսքից նախորդ պարբերության վերջին մեջբերումը բռնություն գործող անձի մեջ է տեսնում բոլոր խնդիրների պատասխանը, որին քննարկումների ժամանակ ի վերջո համաձայնեցին նաև խմբի այլ տեսակետներ ներկայացնող անդամները։

Աղքատության գործոնի ազդեցությունն ընտանեկան բռնության վրա

Նախ հարկ է ընդգծել, որ գործոնները, որոնց թվում է աղքատությունը, կարող են շատ տարբեր լինել։ Գրականության մեջ դրանց շարքում հաճախ նշվում են հոգեկան առողջության խնդիրները, թմրամոլությունը կամ թունավոր այլ նյութերից կախվածությունը, ալկոհոլամոլությունը, խաղամոլությունը, ներընտանեկան ճգնաժամային խնդիրները և այլն[228]։

Հետազոտությունում աղքատության և ընտանեկան բռնության կապը դիտարկվել է տարբեր մակարդակներում. աղքատությունն ազդու՞մ է արդյոք բռնության գործադրման վրա, թե՞ ոչ. եթե ուղղակի կապ չկա այս երկու երևույթների միջև, աղքատությունն ազդու՞մ է արդյոք ընտանիքի անդամի նկատմամբ բռնության ցիկլի շարժման վրա, այն մեկ փուլից

228. Տե՛ս World Health Organization (2010). Preventing intimate partner and sexual violence against women: Taking action and generating evidence. Geneva: World Health Organization, pp. 21-22. Available at https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/44350/9789241564007_eng.pdf?sequence=1 [Accessed 18.08.2020].

մյուսին անցման նպաստող գործո՞ն է արդյոք: Եվ վերջում՝ հարցը դիտարկել այնպես, որ եթե ուղղակի կապ չկա այս երկու երևույթների միջև, աղքատությունն ազդու՞մ է արդյոք ընտանիքի անդամի նկատմամբ բռնության գործադրման (հնարավորության) էսկալացման վրա, այսինքն՝ խթանող գործոն է բռնության դրսևորման համար, ինչը կարելի է հասկանալ, որ եթե աղքատությունը ուղղակի չի նպաստում բռնության գործադրմանը, ապա այլ գործոնների, միջավայրի և երևույթների համադրմամբ հանգեցնում է կամ նպաստում է բռնության գործադրմանը:

Ընտանեկան բռնության վերաբերյալ այլ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակը կապված է զուգընկերոջ կողմից բռնության աճի հետ[229]:

Բռնությունը միայն դրա ֆիզիկական դրսևորումը չէ. այլ տեսակները ևս ազդեցություն են ունենում տնտեսական կայունության վրա: Օրինակ՝ որոշակի աշխատանքներում ներգրավումն արգելելը, հարազատների, ընկերների և գործընկերների հետ շփման սահմանափակումը եթե չեն վերացնում, ապա նեղացնում են մասնագիտական աշխատանքային ցանցը, որը մերօրյա հասարակություններում չափազանց կարևոր է մասնագիտական զարգացման, կարիերայի աճի և առհասարակ ծավալած գործունեության առաջընթացն ապահովելու համար[230]:

Ընտանեկան բռնության հետազոտությունները ցույց են տալիս, որ աղքատ միջավայրում, ցածր սոցիալ-տնտեսական կայունություն ունեցող, կրթության հասանելիության և աշխատանքի հնարավորությունների

229. Abramsky, T., Watts, C. H., Garcia-Moreno, C., Devries, K., Kiss, L., Ellsberg, M., Jansen, H. A., & Heise, L. (2011). What factors are associated with recent intimate partner violence? Findings from the WHO multi-country study on women's health and domestic violence. BMC public health, 11, 109. https://doi.org/10.1186/1471-2458-11-109

230. Duvvury, N., Carney, P. & Nguyen, H. M. (2012). Estimating the costs of domestic violence against women in Viet Nam. Available at: http://www.endvawnow.org/uploads/browser/files/costing_dv_vietnam_unwomen_2012en.pdf [Accessed 10.08.2020].

խնդիրներ ունեցող անապահով պայմաններում բնակվող մարդկանց՝ բռնության ենթարկվելու ռիսկն ավելի մեծ է՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական անկայունությամբ և անպաշտպանվածությամբ[231]։

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալ-տնտեսական երևույթները հարցվածների կողմից չեն ներկայացվում որպես բռնության դրսևորման բուն պատճառ, բայց երբեմն ընդգծվում են որպես դրա խթանիչ կամ սրացման կատալիզատոր։ Բացի դրանից՝ սոցիալ-տնտեսական խնդիրները հաճախ ներկայացվում են որպես ցանկացած խնդրի առանցքային բնույթ ունեցող հարց։

Հատկանշական է, որ խմբային կամ անհատական քննարկումների առաջին փուլում, ընդհանուր հարցերին ի պատասխան, մասնակիցների մեծամասնությունը միանշանակ նշում է աղքատության գործոնը՝ որպես ընտանեկան բռնության պատճառ։ Նրանք դա ձևակերպում են սոսկ որպես սոցիալական վատ վիճակում գտնվող մարդկանց շրջանակի խնդիր։ Սակայն առաջնային հարցերից ավելի խոր կոնկրետ հարցերի և դեպքերի քննարկման ընթացքում միանշանակ հնչած այս կարծիքը հենց այդ մասնակիցների կողմից մերժվում է։ Նրանք սկսում են հիշել դեպքեր կամ անձանց և հանգում են այն մտքին, որ ընտանեկան բռնության երևույթը սոցիալական մակարդակ կամ այլ գործոններ չճանաչող ֆենոմեն է։

> *«Դե, աղքատ ընտանիքներում խնդիրները շատ են, տարրական կենցաղային հարցերը խնդիրներ են դառնում, և բացի այդ՝ անկիրթ մարդը կարող է իրեն այդպիսի բան թույլ տալ»։*
>
> *Մասնակից*[232]

231. World Health Organization (2013). Global and regional estimates of violence against women: prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence. Geneva: WHO Press, pp. 30-36. Avaliable at: https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/85239/9789241564625_eng.pdf?sequence=1 [Accessed 10.08.2020].

232. Շուշանիկ Խուրշուդյան, ԴԱՆ, Երևան, 2019, Ա. Մ., 24 տարեկան։

«Ամեն ինչ տղամարդկանց ուսերին է. կանայք մնում են տանը, չեն աշխատում, իրենց ամուսիններին ուղարկում են փող հայթայթելու, ու երբ նա վերադառնում է առանց անհրաժեշտ չափի գումարի, սղոցում են նրա նյարդերը: Ընտանիքի սոցիալական, տնտեսական վիճակը դրված է ամուսնու վրա, և պահանջում են նրանից ամեն ինչ ու մեղադրում, եթե մի բան չկա: Սա էլ բերում է լարվածության ու բռնության»:

Մասնակից[233]

«Որոշ այցելուներ նշում են տարբեր պատճառներ, ասում են, եթե բնակության ավելի լայն տարածք ունենային, ավելի լավ ապրեին, միգուցե ամեն ինչ ավելի լավ կլիներ»:

Հոգեբան[234]

Հարցազրույցների այս պատասխանները թույլ են տալիս եզրակացնել, որ փաստորեն դեռևս բացահայտված չէ այն հարցը, թե ինչպես է աղքատությունն ազդում ներընտանեկան հարաբերությունների վրա, քանի որ հարց է՝ աղքատությունն ինքնին արդյոք ազդակ կամ դրդի՞չ է ընտանեկան խնդիրների առաջացման համար, թե՞ ընտանիքում բռնության դրսևորումը աղքատության հետ փոխկապակցված, դրա արդյունքում ի հայտ եկած հետևանքների արդյունք է: Աղքատ ընտանեկան միավորներում հաճախ տղամարդիկ ավելի շատ են ենթարկվում լարվածության, սթրեսի՝ մեղադրվելով ընտանիքի պատշաճ կեցությունը չապահովելու մեջ: Տղամարդկանց՝ որպես ընտանիքի վաստակողի պատմականորեն արմատավորված դերը կրելն ավելի է մեծացնում խնդիրը:

«Աղքատության գործոնը կարող է ազդել բռնության ցիկլի վրա, բայց ոչ ինքնին բռնության գործադրման կամ չգործադրման վրա: Այցելուների մեծամասնությունը, ովքեր բռնության տուժողներ են, սկզբնական

233. Շուշանիկ Խուրշուդյան, ԴԱՆ, Գավառ, 2019, Ա. Մ., 44 տարեկան:

234. Շուշանիկ Խուրշուդյան, ԴԱՆ, Երևան, 2019, Ս.Դ., 30-35 տարեկան:

խոսակցության և խնդրի ներկայացման ընթացքում մեղադրում են բոլորին և ամեն ինչ՝ իրեն, սկեսրոջը, եղանակը, աշխատանքը և այլ հանգամանքներ, բայց ոչ երբեք բռնություն գործադրողին»:

Հոգեբան[235]

Բռնությունից տուժած անձը ցանկացած կերպ փորձում է արդարացնել բռնություն գործադրողին, այն պայմանավորված է բռնության այս տեսակի արդեն նշված առանձնահատկությամբ. հանցագործության այլ տեսակների դեպքում հանցագործը օտար է, և հոգեբանորեն առաջանում է նրան պատժելու ցանկություն, իսկ այն դեպքերում, երբ բռնարարը հարազատ մարդ է, նման ցանկությունը ցայտուն չի լինում:

Բռնության այս տեսակի հոգեբանական ասպեկտի քննարկումը հոգեբանի հետ, մասնավորապես այն հարցը, թե աղքատությունն արդյոք ազդու՞մ է բռնության գործադրման վրա, վերահաստատում է տարբեր ուսումնասիրությունների արդյունքում վեր հանված այն մոտեցումը, որ ցանկացած գործոն, այս դեպքում՝ աղքատությունը, չի ազդում բռնության գործադրման վրա, այն կարող է ազդել բռնության էսկալացման, դրա վերափոխումների վրա կամ նպաստել բռնության ցիկլի մի շրջանից մյուսին փոփոխվելու գործընթացին: Բռնության բուն գործադրման վրա ոչ մի գործոն չի ազդում, դրա մասին են վկայում բազմաթիվ տեսություններ, որ այն հոգեբանական, անձի ինքնադրսևորման, իր սեփական ուժի և վերահսկողության դրսևորում է, ոչ թե աղքատության կամ այլ գործոններով պայմանավորված է բռնություն գործադրվում կամ ոչ: Ասվածը փաստվում է նրանով, որ նույն իրավիճակում, նույն գործոնների ազդեցությամբ մի մարդ գործադրում է բռնություն, մյուսը՝ ոչ: Սա է այն բանաձևը, որ բռնության գործադրման վրա ուղղակիորեն չի ազդում աղքատությունը: Իհարկե, այստեղ պետք է նշել բռնության այլ ազդեցության մասին, որ բռնության դրսևորման դեպքում

235. Շուշանիկ Խուրշուդյան, ԴԱՆ, Երևան, 2019, Ս.Դ., 30-35 տարեկան:

այս գործոնն ազդակ է իրավիճակի սրման, խնդիրների առաջացման և ոչ նպաստավոր միջավայրի ստեղծման համար: Բռնության դրսևորումը չպետք է արդարացնել՝ պայմանավորել այլ գործոններով, այդ թվում՝ աղքատությամբ, սակայն այն, իհարկե, հնարավորինս ազդում է՝ նաև համադրվելով այլ գործոնների հետ, կամ՝ ինքնուրույն, և առաջացնում լարվածություն, բռնություն:

> *«Այցելուների հետ տարբեր հարցեր են քննարկվում, և սոցիալ-տնտեսական հարցերի քննարկումը այսպես է դիտարկվում նրանց կողմից. սկզբում բոլորն էլ պատճառներ են թվարկում, տարբեր հանգամանքներ մեջբերում, որոնք ազդում են իրենց հարաբերությունների վրա: Օրինակ՝ ուտելիքի առկայությունը կամ բացակայությունը նշվում է որպես դրդապատճառ, խնդիր կամ վեճ առաջացնող հանգամանք: Սակայն զրույցի ընթացքում հենց նրանք են փաստում, որ ուտելիքի բացակայությունը կամ այլ կենցաղային հարցերը բռնության գործադրման պատճառ չեն, այլ ցանկացել՝ բռնություն է գործադրել»:*

Հոգեբան[236]

Հոգեբանական ծառայության համար դիմող անձանց սոցիալական դրության պարզաբանման համար հոգեբանի հետ հարցազրույցի ընթացքում հնչեցրած հարցերի պատասխաններից պարզվեց, որ գործնականում այցելուները միջին վիճակագրական սոցիալ-տնտեսական դրություն ունեցող անձինք են: Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել նախ որոշ սուբյեկտիվ պայմաններով, օրինակ՝ տվյալ հոգեբանի մոտ են այցելել այդ անձինք, կամ պատահականության հարց է: Մեկ այլ պայման կարող է լինել ծառայության վճարելիության հարցը: Սակայն այս դեպքում այս հանգամանքները կարելի է բացառել, քանի որ հարցազրույցն իրականացվել է անվճար հոգեբանական ծառայութ-

236. Շուշանիկ Խուրշուդյան, ԴԱՆ, Երևան, 2019, Ս.Դ., 30-35 տարեկան:

յուններ մատուցող հոգեբանի հետ:

Բռնության և սոցիալ-տնտեսական վիճակի փոխկապակցվածության հարցը, ի թիվս արդեն թվարկվածների, ունի նաև մեկ այլ ասպեկտ՝ բռնությունը հանդուրժելու հարց: Հոգեբանական այս հարցը տարբեր կերպ է մեկնաբանվում: Այս խնդրի շուրջ հենց հետազոտության քննարկումների մասնակիցների շրջանում տարակարծությունը պայմանավորված է տարբեր երևույթների, ընտանեկան բռնության վրա ազդող գործոնների կամ այլ պատճառների վերաբերյալ հասարակության անդամների (տվյալ դեպքում՝ հարցման մասնակիցների)՝ այդ խնդրի մասին ունեցած ընկալումների տարբերությամբ: Այսպես, մասնակիցների մի մասը, որը կարծում էր, որ բռնությունը չպետք է հանդուրժել, ներկայացնում էր այն փաստարկները, որ պետք է մտածել ապագայի մասին, երեխայի և կնոջ անվտանգության ու ազատ ինքնադրսևորվելու մասին, իսկ եթե կինն ունի սոցիալական կամ տնտեսական անկախություն, ապա չպետք է հանդուրժել բռնության որևէ արարք: Կարծիքները տարբերվում էին այն օրինակների շուրջ, որտեղ կինը ներկայացվում էր որպես տնտեսապես կախյալ, սեփական միջոցներից զուրկ: Այստեղ կարծիքները տարբերվում էին, և ավելի շատ նշվում էր, որ պետք է հանդուրժել, քանի որ այդ պարագայում կինը տնտեսական անկախություն չունի: Կարծիքները տարբերվում են նաև՝ պայմանավորված երեխայի առկայությամբ կամ բացակայությամբ, երեխայի նկատմամբ բռնության գործադրման կամ նման արարքների բացակայությամբ, բռնության դեպքերի շարունակականությամբ կամ ոչ: Փաստորեն ստացվում է, որ տնտեսական անկախությունը և սոցիալ-տնտեսական հարցերի բացակայությունը որոշ առումով վճռորոշ են՝ հիմնականում պատճառաբանվելով երեխայի համար պատշաճ ապրելու միջոցներ ապահովելու կարիքով:

Իհարկե, երեխաների վրա բռնության դրսևորումը կամ դրա

բացակայությունը չի կարող որոշիչ լինել բռնությունը հանդուրժելու կամ չհանդուրժելու համար, քանի որ, ինչպես արդեն նշվել էր, ընտանեկան բռնության ուղղակի ազդեցությունից զատ այդ երևույթն ունի նաև անուղղակի ազդեցություն երեխաների վրա։ Այսինքն՝ բռնության միջավայրում մեծանալով՝ երեխաները ևս անուղղակիորեն ենթարկվում են բռնության, եթե անգամ նրանք ուղղակի բռնության չեն ենթարկվում։ Ավելին՝ ցանկացած հարաբերությունում բռնության առկայությունը որևէ կերպ չի կարող արդարացվել այս կամ այն հանգամանքով։ Այսինքն՝ բռնությունը չի կարող որևէ կերպ արդարացվել կամ հանդուրժելի դառնալ, այսպես կոչված, «հանուն երեխայի»։ «Հանուն երեխաների», նրանց՝ ընտանիքում ապրելու իրավունքի, լիարժեք երկու ծնողների մասնակցությամբ ապահով ապրելու և մեծանալու, ինչպես նաև նրանց կարիքները հոգալու հանգամանքը չի կարող բռնության արդարացում լինել։

Աղքատությունը կամ ֆինանսական խնդիրները կարող են ընտանիքում համերաշխության խաթարման պատճառ լինել։ Ընտանիքի առաջ ծառացած՝ հատկապես ֆինանսական խնդիրները կարող են նաև դժվարացնել բռնության ենթարկվողի (հաճախ կնոջ)՝ տնից կամ անհաշտ հարաբերություններից հեռանալը, ոչ միայն իր հնարավորությունների սղության պատճառով։ Հատկապես կանայք դա համարում են, այսպես կոչված, յուրօրինակ «դավաճանություն»՝ «տուժողին»՝ ընտանիքից դուրս՝ արտաքին աշխարհում խնդիրներ ունեցողին, լքելը։ Բռնության ենթարկվողն ինքը, տուժող լինելով, տվյալ դեպքում «տուժող», «տուժված» է համարում բռնություն գործադրողին և համարում է, որ այդ պարագայում «տուժողը», «տուժվածը» վատ վիճակում է, չի կարելի նրան այս վիճակում «դավաճանել», մենակ թողնել խնդիրներին դեմ հանդիման։ Դրան ավելանում է մեկ այլ հարց. բռնության ենթարկվողի այն, այսպես կոչված, հույսը, որ բռնություն կիրառողը կարող է փոխվել։ Արտաքին այդ խնդիրների, մարտահրավերների ազդեցությամբ նա կարող

է ավելի հանդուրժող դառնալ, կորցնել իր վերահսկող բնավորությունը և փոխվել, դառնալ ավելի բարի ու մեղմ։

«Մենք նախկին ամուսնուս հետ բնակվում ենք նույն բակում: Նա իր ընտանիքն ունի, իսկ ես հաշմանդամություն ունեցող իմ երեխայի (30 տարեկան տղա) հետ բնակվում եմ կից «դոմիկում»: Խնդիրներ առաջանում են ամեն տեսակ հարցերից: Ցանկացած խնդրով, կենցաղային կարիքների համար անհրաժեշտ հարցով դիմելը բռնության նոր առիթ կարող է լինել: Ինձ ծեծելուց զատ կարող է վնասել երեխային, ինչի համար ավելի եմ վախենում: Այլ բնակարան տեղափոխվելու, բնակության վայրը փոխելու հնարավորություն չունեմ, բացի այդ՝ նաև չեմ ցանկանում: Այդ բակում կան նաև այլ հարազատներ, որոնք օգնում են, օգնում են տղային հարցերում, իսկ մեկ այլ բնակավայր տեղափոխվել տղային հետ պարզապես չեմ կարող և միանշանակ չեմ ցանկանում: Չեմ ցանկանում, որ նա նոր միջավայրում վատ վերաբերմունքի հանդիպի: Այստեղ արդեն հարմարվել եմ այդպես ապրելուն: Վերջին անգամ կռիվը տղային դեմ էր արդեն, ինձ ծեծելուց բացի՝ արդեն նաև տղային է վտանգ սպառնում: Հիմա, օրինակ, բաց էլեկտրական հոսանքի խնդիր ունեմ, որ իրական վտանգ է իմ և տղային համար, քանի որ բաց լարն անցնում է տան մեջտեղով: Ոչ մեկը չկա, որ ինձ օգնի, իսկ նախկին ամուսնուս դիմելը գիտեմ, որ կրկին կռվի առիթ է դառնալու»:

Բռնության ենթարկված կին[237]

Բռնության դրսևորման դեպքերը հայտնաբերվում են սոցիալ-տնտեսական տարբեր մակարդակներ ունեցող բոլոր խմբերի շրջանում։ Աղքատության մեջ բնակվող կամ տնտեսական ոչ կայուն պայմաններ ունեցող անձինք ուղղակի

237. Շուշանիկ Խուրշուդյան, ԴԱՆ, Զովունի, 2019, անանուն, 50-55 տարեկան։

առավել խոցելի են դառնում և տուժում են անհամամասնորեն[238]: Ինչ էլ լինի, հաստատված է, որ ռիսկի գործոնները մեծացնում են զուգընկերների միջև բռնության տուժող կամ բռնարար դառնալու հավանականությունը, ուստի դրանց նվազեցումը պետք է կազմի կանխարգելիչ միջոցառումների կարևոր մասը[239]:

Ամփոփելով հարկ է ընդգծել, որ ընտանեկան բռնությունն ունի դրսևորման շրջանների առանձնահատկություն՝ սրացումներ և նահանջներ: Ինչպես արդեն նշվեց, այն իշխանության հաստատման և բռնություն գործադրողի կողմից բռնության օբյեկտի նկատմամբ առավելության ընդգծման եղանակ է, որը տարբեր գործոնների, օրինակ՝ աղքատության արդյունքում կարող է բացասական փոփոխությունների ենթարկվել կամ խստանալ: Մինչդեռ միայն այդ գործոնները ընտանեկան բռնության դրսևորման կամ առաջացման պատճառ կամ շարժառիթ ինքնին չեն կարող լինել:

Այս համատեքստում հարկ է մտապահել, որ նշվածները սոսկ գործոններ են, որոնք ուղղակի բացասականորեն են ազդում արդեն իսկ գոյություն ունեցող ընտանեկան բռնության երևույթի, խնդրի վրա:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ. ԳՈՐԾՈՆԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

«Աղքատությունը» բազմաչափ և բազմաշերտ հասկացություն է: Այն ներառում է տարբեր, բազմակի համընկնող զրկանքներ, որոնց անձն առնչվում է: Մարդիկ, ապրելով աղ-

238. Krug, E. (2002). World report on violence and health. Geneva: World Health Organization, pp. 149–181. Available at: https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/42495/9241545615_eng.pdf?sequence=1 [Accessed 17.07.2020]

239. World Health Organization (2013). Global and regional estimates of violence against women: prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence. Geneva: WHO Press, pp. 2 and 16. Avaliable at: https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/85239/9789241564625_eng.pdf?sequence=1 [Accessed 10.08.2020].

քատության մեջ, ունենում են տարբեր խնդիրներ, օրինակ՝ սոցիալականացումը, առողջական խնդիրները, կրթության սահմանափակ հնարավորությունները, ձեռքբերումների նվազ հավանականությունը և այլն[240]: Այս բաժնի նպատակն է բացահայտել աղքատության և դրանից առաջացող տարբեր հետևանքների՝ որպես ընտանեկան բռնության դրսևորման վրա ազդող գործոնների, այսպես կոչված, փոխազդեցության շրջանը:

Սույն հետազոտության շրջանակներում դիտարկելով, մասնավորապես, աղքատության գործոնի հարցը՝ պետք է նշել, որ աղքատության մեջ ապրելը մեծացնում է բռնության ռիսկը, իսկ ընտանիքում բռնությունը խոչընդոտ է աղքատության վերացման համար: Լինելով մարդու իրավունքների մեծագույն խախտում՝ բռնությունը նաև մեծ խոչընդոտ է աղքատության վերացման համար: Աղքատության մեջ ապրող անձինք ավելի ռիսկային խումբ են բռնության ենթարկվելու հավանականության տեսակետից, իսկ բռնության ենթարկվելը անձին դուրս է թողնում կրթությունից, աշխատելուց, այլ գործունեություն ծավալելուց և անկախ լինելուց, ինչը մեծացնում է ֆինանսապես անկայուն լինելու հարցը՝ հանգեցնելով գուցե նաև աղքատության: Բռնությունը մարդկանց դատապարտում է աղքատության և դրա բազում հետևանքների՝ տնտեսական դժվարությունների, սոցիալական մեկուսացման, հիմնական իրավունքների ժխտման[241] և այլնի՝ խորացնելով թե՛ առանձին անձանց շրջանակում (օրինակ՝կանանց և տղամարդկանց միջև), թե՛ առհասարակ հասարակության շրջանակներում գոյություն ունեցող տնտեսական անհավասարությունը: Առանձին խմբեր, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձինք, ավելի ռիսկային են բռնության ենթարկման

240. Անգլերեն՝ Multidimensional poverty, տե՛ս https://ophi.org.uk/policy/multidimensional-poverty-index/ [Accessed 10.08.2020].

241. Macy, R. & Goodbourn, M. (2012). Promoting Successful Collaborations Between Domestic Violence and Substance Abuse Treatment Service Sectors: A Review of the Literature. Trauma, violence & abuse. 13. pp. 234-51.

տեսանկյունից, ինչն էլ ավելացնում է աղքատության մեջ ապրելու հավանականությունը:

Ընտանեկան բռնության երևույթի վրա ազդեցություն ունեցող գործոններից աղքատությունը խնդիրների, երևույթների փոխհարաբերակցության, փոխկապակցվածության յուրօրինակ շրջապտույտ է ստեղծում (տե՛ս Պատկեր 5): Սույն ուսումնասիրության շրջանակներում պատկերվել է բռնության և աղքատության, այսպես կոչված, փոխազդեցության շրջանը: Նման պատկերը ավելի տեսանելի է ներկայացնում սույն բաժնում ներկայացվող փոխադարձ կապվածության հարցերը:

Պատկեր 5

Աղքատության և բռնության կապի ուսումնասիրության այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ ստորև նշված խնդիրներին: Դրանք դիտարկվել են հետևյալ տրամաբանությամբ. ինչպե՛ս են աղքատությունը և բռնությունն ազդում ներքոհիշյալ խնդիրների վրա, դրանցից ո՛ր մեկն է այդ խնդիրների առաջացման պատճառ հանդիսանում: Այսինքն՝ աղքատությու՞նն է առաջացնում այդ խնդիրները

որպես հետևանք, թե՞ բռնությունն է դրանց պատճառ հանդիսանում՝ հանգեցնելով աղքատության:



Պատկեր 6

Պատկեր 6-ը ներկայացնում է ընտանեկան բռնության երևույթի վրա ազդեցություն ունեցող գործոնների և աղքատության փոխհարաբերությունը: Բացահայտվում է բռնության և աղքատության փոխկապակցվածության, փոխազդեցության յուրօրինակ շրջապտույտ: Նախ պատկերը դիտարկենք ձախից աջ. այն ցույց է տալիս, թե աղքատությունն ի՞նչ ազդեցություն, ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ:

Այսպես՝ աղքատությունը հանգեցնում է անձի ցածր սոցիալական կարգավիճակի: Հաճախ աղքատությունը և այդ միջավայրում բնակվելը հանգեցնում են մի շարք խնդիրների, որոնցից էլ առաջանում է այդ միջավայրում բնակվող անձանց համար լարվածությունը: Աղքատության, ֆինանսական ռեսուրսների, այլ հնարավորությունների բացակայութ-

յան հետևանքով հաճախ մարդիկ կանգնում են խնդիրների առջև և, հնարավորությունների բացակայության պատճառով, չեն կարողանում դրանց համար լուծումներ գտնել, և այս անելանելի վիճակը աղքատ և այդ միջավայրում բնակվող անձանց համար հանգեցնում է բարձր լարվածության, նյարդային, ընկճված կամ գրգռված հոգեվիճակի։

Աղքատությունից բխող խնդիրներից են առողջական խնդիրները։ Աղքատությունից բխող խնդիրները կարող են հանգեցնել առողջական վիճակի վատթարացման, առողջության քայքայման։ Աղքատությունից բխող գործոններն ազդում են անձի առողջության վրա, և այստեղ մեկ այլ խնդիր է ավելանում՝ բժշկական ծառայությունների մատչելիությունը։ Սոցիալ-տնտեսական խնդիրները ոչ միայն առողջության քայքայմանը նպաստող գործոն կարող են լինել. ֆինանսական միջոցների բացակայությունը նաև աղքատության մեջ ապրող մարդկանց համար բժշկական ծառայություններից օգտվելու խոչընդոտ է։ Վերջիններս հաճախ առողջական խնդիրների առկայության դեպքում չեն դիմում բժշկական օգնության դրա ծախսերը հոգալ չկարողանալու պատճառով։

Մեկ այլ խնդիր, որին հանգեցնում է աղքատությունը, կրթության ցածր մակարդակն է։ Տարբեր պատճառներով (ֆինանսական ռեսուրսներ, գիտակցության ցածր մակարդակ, գոյության խնդիրները հոգալու կարիքի առկայության պարագայում կրթություն ստանալը ստորադասելը այլ աշխատանք կատարելուց և վաստակելուց) այդ միջավայրում ապրող անձինք դուրս են մնում կրթությունից, ինչը նաև ազդում է նրանց գիտակցության, իրավագիտակցության մակարդակի վրա։

Այսպես՝ աղքատության բերած այդ բոլոր գործոնները (ցածր սոցիալական կարգավիճակը, բարձր լարվածությունը, առողջական խնդիրների վտանգը, ցածր սոցիալական մակարդակը) ընտանիքի անդամ աղքատ մարդու վրա ազդում են՝ դարձնելով նրան այլ անձից, ընտանիքում հիմնական

վաստակողից բարձր կախվածություն ունեցող և ընտանիքում ցածր ուժի, դիրքի կրող։

Այս բոլոր գործոններն իրենց ազդեցությունն են ունենում անձի՝ բռնության ենթարկվելու հավանականությունը մեծացնելով։ Բռնությունն ուժի, իշխանության և բռնություն գործադրողի կողմից բռնության ենթարկվողի նկատմամբ վերահսկման հաստատման երևույթ է, և այս բոլոր հետևանքները, խնդիրները, որ աղքատությունը բերում է, նպաստում են բռնություն գործադրելուն և հեշտացնում են բռնություն գործադրելն աղքատության մեջ բնակվող անձի նկատմամբ։

Նույն կերպ բռնությունը, բռնության ենթարկվելը ազդում է բռնության ենթարկվող մարդու վրա։ Բռնության ենթարկողը բռնության գործադրման հետևանքով ունենում է նվազ արդյունավետություն։ Ճնշված հոգեվիճակի, բռնությունից առաջացած առողջական խնդիրների, վախի, լարվածության և այլ պատճառներով անձը չի կարողանում ազատ գործել, ինքնադրսևորվել, տան գործերով զբաղվել կամ անել այն, ինչ նրանից պահանջում է բռնություն գործադրողը։ Բռնության ենթարկող անձը ընտանեկան հարցերում ևս ներգրավվածություն չունի, քանի որ հենց նշված պատճառներով չի կարողանում ինքնադրսևորվել, կամ նրա կարծիքը հաշվի չի առնվում։

Հաջորդ խնդիրն այն է, որ բռնության գործադրումը հանգեցնում է ընտանեկան բյուջեում չպլանավորված ծախսերի։ Բռնությունն ունենում է երկարատև և կարճատև հետևանքներ առողջության վրա, իսկ բժշկական ծառայությունների համար պետք է վճարել։ Բռնության հետևանքով տնային պարագաները և առհասարակ գույքը կարող են վնասվել. վերականգնումը ևս ծախսերի ավելացում է ենթադրում։

Բռնությունը բացասական հետևանք է ունենում անձի ինքնադրսևորման, հասարակությունում ինտեգրման վրա։ Բռնության ենթարկվող անձինք ունենում են ցածր սոցիա-

լականացում, հնարավորություններ ու կարողություններ, քանի որ հենց բռնության հետևանքով նրանք չեն կարողանում (կամ նրանց բռնարարն արգելում է) աշխատել, սովորել, կրթական կամ այլ զարգացման ծրագրերի մասնակցել, շփվել, ունենալ աշխատանքային կամ այլ շփման շրջանակ, ծանոթություններ, ինչից էլ տուժում է նրանց կարողությունների զարգացումը, հնարավորությունների ստեղծումը և հասարակությունում ինքնադրսևորումը՝ հանգեցնելով նաև ֆինանսական ռեսուրսների բացակայության։

Բռնությունը բացասաբար է ազդում անձի ֆիզիկական և հոգեկան առողջության վրա, ինչը ոչ միայն լրացուցիչ ծախսեր է ավելացնում, ինչպես արդեն վերևում նշվեց, այլև խնդիրներ է առաջացնում անձի՝ աշխատելու, կրթությամբ զբաղվելու, գործունեություն ծավալելու կամ այլ կերպ գումար վաստակելու հնարավորության վրա։ Առողջական խնդիրները խոչընդոտում են ազատ գործունեություն իրականացնել և ապրուստի միջոց վաստակել աղքատությունից զերծ մնալու կամ դրանից ազատվելու համար։

Ամփոփելով՝ պետք է նշել, որ բոլոր այս գործոնները, որոնց հանգեցնում է բռնությունը, նպաստում են աղքատության խորացմանը։ Բռնության ենթարկվելու հետևանքով անձը, չունենալով ինքնադրսևորվելու հնարավորություն, չաշխատելով, շփումներ չունենալով, նվազ հնարավորություններով, ֆիզիկական ու հոգեկան առողջության խոչընդոտների պատճառով ֆինանսական կամ այլ ռեսուրսներ ու հնարավորություններ չի ունենում՝ դատապարտվելով աղքատության։

Ընտանեկան բռնության կամ աղքատության երևույթների վրա որպես գործոն մեծապես ազդում է կրթության մակարդակը։ Հաճախ աղքատության պատճառ է դառնում կրթության, հմտությունների պակասը։ Կրթության կամ անհրաժեշտ տեղեկացվածության բացակայության հետևանքով անձինք հաճախ ենթարկվում են բռնության անգամ առանց այդ մասին գիտակցելու։ Կրթության բացակայությունը, ան-

տեղյակությունը ավելի կախյալ են դարձնում անձին և խնդիրների դեպքում դժվարացնում դրանցից ազատվելու կամ դրանք լուծելու հնարավորությունները: Այդ նպատակով կարևոր է անդրադառնալ կրթությունից դուրս մնալու կամ զբաղվածության հարցերին:

Երեխաների և ոչ միայն նրանց՝ կրթությունից դուրս մնալու պատճառները տարբեր են, ինչպես, օրինակ՝ ոչ բավարար սոցիալական պայմանները, հաշմանդամությունը, ուսումնական հաստատությունների՝ բացակայություններին ոչ պատշաճ արձագանքելը, երեխաներին գյուղատնտեսական կամ այլ աշխատանքներում ներգրավելը, իսկ առանձին էթնիկ խմբերի դեպքում՝ նաև վաղ ամուսնությունը:

Աշակերտների՝ ուսումն անավարտ թողնելու պատճառները տարբեր են, սակայն ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2018 թվականի զեկույցի՝ սոցիալ-տնտեսական վատ պայմանների պատճառով ամենաշատ թվաքանակով աշակերտներն են դուրս մնում կրթությունից: Սոցիալ-տնտեսական վատ պայմանները կրթության իրավունքի իրականացումը խոչընդոտելու հիմնական պատճառն են, քանի որ կրթությունից դուրս մնացած 274 երեխայից 179-ը դուրս է մնացել հենց այդ պատճառով[242]:

Կրթության իրավունքի իրականացումը չափազանց կարևոր է անձի զարգացման, կայունացման տեսանկյունից, այն նաև հետագա կյանքի ձևավորման հիմնաքարային երաշխիք է: Այլ կերպ ասած՝ կրթության, կրթական աստիճանների բարձր մակարդակի ձեռքբերումները հետագայում երաշխավորում են անձի աշխատանքի ազատ իրավունքի իրականացմամբ սեփական անձի զբաղվածության ապահովումը, ինչը նպաստում է հետագայում տնտեսական կամ

242. Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե (2019), «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույց: Երևան, ՀՀ ՎԿ, էջեր 140-195: Հասանելի է՝ https://www.armstat.am/am/?nid=81&id=2095 [դիտվել է 16.07.2020]:

այլ կախվածության մեջ չհայտնվելուն: Բացի դրանից՝ սույն համատեքստում գիտակցության, ընդհանուր զարգացվածության բարձրացմանն ուղղված քայլերը նշանակալից են թե՛ բռնությունից զերծ ապրելու, դրա կանխարգելման, թե՛ բռնության և դրա հետևանքով առաջացած խնդիրների ճիշտ հաղթահարման համար:

Աղքատության մեջ ապրող բռնության զոհը «փախուստի», բռնությունից զերծ, ազատ ապրելու ավելի քիչ հնարավորություն ունի: Այս խնդիրն աղքատության և բռնության միջև թերևս ամենաակնհայտ կապն է: Նախ և առաջ նման իրավիճակում գտնվող՝ բռնության ենթարկված անձը հաճախ մեծ, մասնավորապես՝ ֆինանսական կախվածություն է ունենում բռնություն կիրառողից, կամ նրանց վաստակած գումարը կամ այլ միջոցները կառավարվում են կամ բռնություն գործադրողի տիրապետման ներքո են լինում: Հաճախ դրամական միջոցների, կացության վայրի, սննդի բացակայությունը, երեխաների համար ապրուստի միջոցի հայթայթման խնդիրներն են դառնում այն հիմնական պատճառները, որ բռնության ենթարկված անձը շարունակում է մնալ այդ նույն միջավայրում: Այս խնդիրն ավելի էսկալացվում է, երբ բռնության ենթարկված անձը՝ հիմնականում կինը, աջակցություն չի ունենում իր ընտանիքի անդամների կամ հարազատների կողմից: Ստեղծվում է մի իրավիճակ, երբ բռնության ենթարկված անձը, չունենալով ֆինանսական միջոցներ, մնում է բռնության և անառողջ հարաբերություններում միայն իր երեխաների համար կեցության անհրաժեշտ պայմանների ապահովման համար:

Մեկ այլ պատճառ է ամոթանքի և խարանի ենթարկվելուց խուսափելու համար այդ հարաբերություններում մնալը, քանի որ հասարակությունում արմատավորված կարծրատիպերի հետևանքով դեռևս շարունակում են ամոթ և անընդունելի համարվել կնոջ ամուսնալուծությունը և հայրական ընտանիք վերադառնալը: Շատ հաճախ կնոջ ընտանիքը չի

ընդունում նման վերադարձը, ուստի չունենալով սեփական բնակության վայր կամ անկախ ապրելու համար ֆինանսական միջոցներ՝ բռնության ենթարկված կինը շարունակում է մնալ այդ հարաբերություններում՝ բռնություն կիրառողի կողքին։

Աղքատության մեջ ապրող անձինք ավելի ռիսկային են բռնության և շահագործման (թրաֆիքինգ և շահագործման այլ տեսակներ) ենթարկվելու տեսանկյունից։ Դրանք ծնող պատճառները կարող են լինել շատ տարբեր, սակայն տնտեսական կայունության բացակայությունը կամ սոցիալ-տնտեսական այլ խնդիրներ բռնության այս տեսակի խթանման ազդեցիկ գործոններ են։ Կանայք, և ոչ միայն նրանք, ապրուստի միջոց փնտրելիս կարող են ենթարկվել սեռական շահագործման, հարկադիր աշխատանքների կատարման կամ թրաֆիքինգի այլ տեսակների։

Բռնությունն ունի սոցիալական և տնտեսական մեծ «գին»։ Այս երևույթը բացասաբար է ազդում բռնության ենթարկված անձի ֆիզիկական և հոգեկան առողջության վրա՝ առաջացնելով երկարատև բուժման կարիք։ Բռնության ենթարկված անձինք բուժական ծառայությունների նպատակով դիմում են բժշկական հաստատություններ, ինչը ֆինանսական ծախսեր է առաջացնում այդ անձանց համար։

Մեկ այլ խնդիր է առողջապահական ծառայությունների անմատչելիությունը։ Դա ակներև է հատկապես գյուղական բնակավայրերում և փոքր քաղաքներում, որտեղ մի շարք առողջապահական ծառայություններ մատչելի չեն, ինչի հետևանքով բռնության ենթարկված անձինք առողջության պահպանման իրենց իրավունքը լիարժեք իրացնելու նպատակով ստիպված են մեկնել այլ բնակավայրեր, մասնավորապես՝ մարզկենտրոններ կամ Երևան։ Նշվածը լրացուցիչ ֆինանսական բեռ է ավելացնում։ Այս խնդիրներին ավելանում է նաև մասնագետների պակասը, նրանց մասնագիտական ոչ լիարժեք պատրաստվածությունը կամ բժշկական

էթիկայի խախտմամբ դրսևորված խտրական վերաբերմունքը:

Բռնության հետևանքները, անգամ ոչ ակնհայտ դրսևորմամբ, անկասկած հետք են թողնում անձի առողջության վրա, և տևական ժամանակ ու համալիր մասնագիտական ծառայություններ են անհրաժեշտ դրանց վերացման համար: Այդ նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով բռնության ենթարկված անձանց առավել խոցելիությունը, պետությունը պետք է ապահովի համալիր ու լիարժեք աջակցության տրամադրումը՝ թեթևացնելով բռնության ենթարկված անձի առջև ծառացող ֆինանսական բեռը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հետազոտության իրականացման ընթացքում վեր հանված հարցերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բռնության ենթարկված անձանց պաշտպանության համակարգը դեռևս թույլ է Հայաստանում, և շարունակում են խնդրահարույց մնալ շատ հարցեր: Դեպքերի ուսումնասիրության արդյունքում կարող ենք ներկայացնել մի շարք համակարգային խնդիրներ: Այդ խնդիրներից են.

- ընտանեկան բռնության դեպքերի դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական թերի կարգավորումները, օրենսդրական բացերը, կարգավորումների կիրարկման բացակայությունը կամ դրույթների խնդրահարույց սխալ կիրառումը.
- տուժողներին պետության կողմից տրամադրվող ծառայությունների բացակայությունը.
- իրավագիտակցության անհամարժեք մակարդակի և կրթական անհրաժեշտ մակարդակի պակասը.
- ընտանեկան հարցերին պետության միջամտության

հանդեպ անվստահությունը.

- պետական իրավասու մարմինների ոչ բավարար մասնագիտական պատրաստվածության աստիճանը, մասնագետների կարողությունների զարգացման անհրաժեշտությունը.
- հասարակությունում առկա կարծրատիպերը և արմատավորված գենդերային դերաբաժանումը.
- ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայությունը:

Այս բոլոր խնդիրները, ըստ էության, ազդում են նաև անձանց՝ արդարադատության մատչելիության իրավունքի իրացման վրա, որն էլ իր հերթին բերում է մի շարք իրավունքների խախտման և այդ խախտված իրավունքների վերականգնման դժվարությունների:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՆԽՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈԶԻՏԻՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանիքն անձանց միություն է, որոնք իրար հետ կապված են ամուսնական կապով, ազգակցական (արյունակցական) կապերի կամ օրենքի ուժով (որդեգրում, դաստիարակության նպատակով երեխային ընտանիք ընդունելը) ընտանեկան հարաբերությունների մեջ են: ՀՀ Սահմանադրությունը մի շարք այլ երաշխիքների ամրագրմամբ, 16-րդ հոդվածի համաձայն, սահմանել է, որ մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Սահմանադրությամբ նման նորմի ամրագրումը մեծապես ընդգծում է պետության՝ ընտանիքի պաշտպանության և հովանավորության պարտավորությունը:

Սահմանադրական նման նորմի սահմանմամբ ամրագրվել են չափորոշիչներ, որոնք պետությունն իր քաղաքականության միջոցով պետք է իրականացնի: Այն է՝ ապահովի

տնտեսական, սոցիալական ու մշակութային ոլորտներում կենսական պահանջմունքները բավարարելու նպատակով անձի ազատությունների դրսևորման համար հնարավորությունների ստեղծում: Իհարկե, թվարկված տնտեսական, սոցիալական ու մշակութային ոլորտներում իրավունքների իրականացումն ուղղակիորեն կապված է պետության տնտեսական ու նյութական հնարավորություններին, և այդ իրավունքների պաշտպանության հարցում պետությունը լայն հայեցողություն ունի:

Սա, իհարկե, չի նշանակում յուրաքանչյուր անձի կամ քաղաքացու համար նյութական կարիքների բավարարում, այլ պետությունը պարտավորություն է կրում ապահովել անձանց ազատությունների և իրավունքների իրականացման նպաստավոր պայմաններ:

Այս դրույթի մեկնաբանությունը նշանակում է, որ ամրագրված «սոցիալական պետությանը» կամ վերոհիշյալ արժեքների պաշտպանությանը վերաբերող դրույթները միջազգային, ինչպես նաև ներպետական օրենսդրական շրջանակներում սահմանում են, որ պետությունը պարտավորություն է կրում ապահովելու ընտանիքի լիակատար կեցության, ամբողջական ներուժի ազատ իրականացման համար պայմաններ:

Պետությունը, փաստորեն, այս դրույթների ուժով կրում է պարտականություն՝ նպաստելու ընտանիքի կեցության ապահովմանը, հավասարության սահմանմանը, խտրականության արգելմանը՝ սկսելով ընտանիքից, անցնելով համայնք և հասարակություն: Այն նաև յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հիմնական իրավունքների ու ազատությունների իրականացման երաշխավոր է, ինչը բխում է Սահմանադրության մի շարք դրույթներից, ինչպես նաև միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություններից:

Ընտանիքները կարող են տարբեր մարտահրավերների և խնդիրների առնչվել, երբ առաջ է գալիս ընտանիքի առան-

ձին անդամների իրավունքների պաշտպանության և պահպանության՝ պետության պոզիտիվ պարտականությունը, որն ամրագրված է մասնավորապես, ՀՀ Սահմանադրության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները սահմանող 2-րդ գլխում՝ մի շարք իրավունքներ և ազատություններ սահմանող հոդվածներում:

Պետության պաշտպանության գործառույթի, պոզիտիվ պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ է խնդիրների լուծմանն ուղղված մի շարք ձեռնարկումների իրականացում:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Առաջարկները գործողությունների, քայլերի մի ամբողջ համակարգ են ներառում քաղաքականություն մշակողների, ոլորտի պատասխանատուների և ընդհանուր իրավասու մարմինների համար: Այն կօգնի համակարգված կերպով իրականացնել քայլերի քարտեզագրում, պլանավորում, մշտադիտարկում, ծրագրային քայլերում միջամտություն և դրանց արդյունավետության գնահատում՝ ուղղված ընտանեկան բռնության դեմ պայքարին և դրա կանխարգելմանը:

Օրենսդրական դաշտի կատարելագործում.

1. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացում: ՀՀ կողմից այն ստորագրվել է 2018 թվականին, սակայն դեռ չի վավերացվել:
2. Ընտանիքում բռնության արարքի քրեականացում:
3. Բռնության բոլոր տեսակների քրեականացում:

Ընտանիքում բռնությունը դեռևս քրեականացված չէ ներպետական օրենսդրությամբ: Միջազգային փաստաթղթերում մի շարք այլ արարքներ (ընտանեկան բռնություն (հոգեբա-

նական, ֆիզիկական, սեռական բռնություն), հետամտում, հարկադիր ամուսնություն և այլն) քրեականացված են, ինչպես նաև դրանց քրեականացման պահանջ է ամրագրված այդ նույն փաստաթղթերում: Թե՛ ընտանեկան բռնության, թե՛ այլ արարքների քրեականացումը միջազգային փաստաթղթերից բխող սկզբունքների և չափանիշների պահանջ է: Այն ամրագրված է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, որը ՀՀ կողմից ստորագրվել է 2018 թվականին, սակայն դեռ չի վավերացվել:

Արարքների քրեականացման երկու եղանակ կա, որոնք են՝ ա) ընտանեկան բռնությունը՝ որպես առանձին հանցակազմ Քրեական օրենսգրքում սահմանելը կամ բ) տարբեր՝ արդեն իսկ գործող հանցակազմերը առանձին մասով լրացնելը, որը, որպես ծանրացնող հանգամանք, կամրագրի ընտանեկան կապը:

Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արարքի քրեականացման գոյություն ունեցող երկու եղանակներն արդյունավետ են, և դրանց ընտրությունը միայն ներպետական օրենսդրական կարգավորումներին, մասնավորապես, ազգային քրեական օրենսգրքի տրամաբանությանը համապատասխանության ընտրության հարց է:

4. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կատարելագործում:

Վերանայել և մշակել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, որը կընդլայնի «ընտանիքի անդամներ» հասկացությունը և կվերացնի պաշտ-

պանության տարբեր միջոցների կիրառման գործնականում առաջացող խնդիրները:

5. Ընտանեկան բռնության դեմ պայքարի և դրա կանխարգելման ազգային ռազմավարության և դրան կից գործողությունների ծրագիրը հաստատող իրավական ակտի ընդունում:

Ընտանեկան բռնությունը տարբեր ասպեկտներ ներառող խնդիր է, ուստի այս արատավոր պրակտիկայի դեմ պայքարը պետք է իրականացվի համապարփակ ձևով: Անհրաժեշտ է մշակել և ընդունել ընտանիքում բռնության կանխարգելման, դրա դեմ պայքարի և բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար առանձին ռազմավարություն և համապարփակ գործողությունների ծրագիր:

6. Իրականացնել իրավասու մարմինների մասնագիտական գիտելիքների, կարողությունների զարգացմանն ուղղված պարբերական և շարունակական իրազեկման աշխատանքներ:

Ընտանեկան բռնության դեմ պայքարում և կանխարգելման նպատակով անհրաժեշտ է բազմակողմանի մոտեցում, քանի որ օրենսդրական դաշտի կատարելագործմամբ հստակ կարգավորումների սահմանումը համակարգային պայքարի մի մասնիկ է, միայն դա խնդրի լուծում չի կարող լինել: Օրենսդրական լիարժեք կարգավորումների ամրապնդումը մի խնդիր է, իսկ դրանց համընդհանուր սկզբունքներին ու չափանիշներին համապատասխան ճիշտ կիրառումը՝ մեկ այլ:

Իրավասու մարմինների ներկայացուցիչները հասարակությունում արմատավորված կարծրատիպերի կրողներ են, ինչը գործնականում խոչընդոտ է տուժողներին պաշտպանություն տրամադրելու իրենց պարտականությունների կատարման համար: Կարծրատիպային մոտեցումներ են դրսևորվում նաև դատական համակարգում, ինչի մասին բարձրաձայնում են հասարակական կազմակերպությունները: Հաճախ

նրանք ևս թերահավատությամբ են մոտենում ընտանիքում առաջացած խնդիրներին։ Նրանցից շատերը ևս հասարակությունում ընդունված այն կարծրատիպի կրողներն են, որ նման հարցերը ներընտանեկան խնդիրներ են և պետք է լուծվեն հենց ընտանեկան միջավայրում։

Դեպքերի ոչ պատշաճ արձագանքման հետևանք են դառնում նաև տուժողի կողմից քրեական հետաքննություն իրականացնելու համար դիմում ներկայացնելը և դրանցից հրաժարվելը։ Լինում են դեպքեր, որ տուժողները հետ են վերցնում իրենց հայտարարությունը, ինչը կարող է կրկնվել մի քանի անգամ՝ հանգեցնելով իրավապահ մարմինների ներկայացուցիչների, այսպես կոչված, զգոնության նվազեցման, երբ իրավապահ մարմնի ներկայացուցիչը մի քանի անգամ դիմում ներկայացնելու և հետ վերցնելու հետևանքով կասկածում է տվյալ ընտանիքում խնդրի առկայությանը։ Նման քայլի պատճառներ են երեխաները, վախը, ապագայի նկատմամբ անվստահությունը և, իհարկե, հասարակության կողմից խարանավորվելը։ Սակայն ընտանեկան բռնության դեպքերի մասին հայտնելը, դիմում ներկայացնելը և հետո դրանից հրաժարվելու, հետ վերցնելու անընդհատ կրկնվող գործողությունը չի կարող իրավապահ մարմինների՝ իրենց լիազորությունների ոչ լիարժեք կատարման արդարացում լինել։

Իրավասու մարմինների թերի մասնագիտական կարողությունները և ոլորտի գիտելիքները չափազանց վտանգավոր են, նախ, հենց բռնությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից։ Դրանց բացակայությունը կրկնակի բացասական ազդեցություն է ունենում տուժողի վրա, քանի որ, մի կողմից, խախտվել են նրանց իրավունքներն ու ազատությունները, մյուս կողմից՝ դրանք առաջ են բերում արդարադատության մատչելիության իրավունքի իրացման խոչընդոտներ՝ հանգեցնելով խախտված իրավունքների վերականգնման դժվարությունների։

7. Պետական իրավասու մարմինների, ստորաբաժանումների միջև համագործակցության ամրապնդում և դրա արդյունավետության բարձրացում:

Համագործակցություն չկա թե՛ տարբեր մարմինների, թե՛ տվյալ մարմնի տարբեր մասնագիտացում ունեցող ստորաբաժանումների միջև: Օրինակ՝ նման համագործակցության իրականացումը ՀՀ ոստիկանությունում կարգավորվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով, սակայն գործնականում առաջանում են բազմաթիվ խնդիրներ: Զոհակենտրոն և տուժողների կարիքներին համապատասխան մասնագիտական օգնության տրամադրման, անձին ճիշտ ուղղորդման և ենթադրյալ տուժողին աջակցության տրամադրման, ինչպես նաև բռնարարի համար սոցիալական ծրագրերի իրականացման համար չափազանց կարևոր է համագործակցության անխափան իրականացումը:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարվող բռնության այն արարքները կանխելու, դրանց նկատմամբ քննություն իրականացնելու, պատասխանատվության ենթարկելու և հատուցում ապահովելու ուղղությամբ, որոնք մտնում են կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ: Ավելին՝ նշյալ կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ «մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի բռնության ենթարկված անձի իրավունքները դիտարկվեն որպես բոլոր միջոցների կենտրոնում գտնվող և իրականացվեն բոլոր շահագրգիռ գերատեսչությունների, ինստիտուտների և կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության միջոցով: Սույն հոդվածի ներքո ձեռնարկված բոլոր միջոցառումները

պետք է ընդգրկեն բոլոր շահագրգիռ դերակատարներին, ինչպիսիք են՝ պետական, համապետական, տարածքային և տեղական մարմինները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները»։

Պետության կողմից նախաձեռնվող (pro-active) ծառայությունների ապահովումը սահմանված է նաև «Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարականի 3-րդ կետում, 58-րդ կետի «դ» ենթակետում: Բացի դրանից՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով ամրագրվում են ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառույթների շրջանակներում իրականացնող իրավասու պետական մարմինները, որոնց թվում է նաև ՀՀ ոստիկանությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում աջակցում են ընտանեկան բռնության դեմ պայքարին և այդ բնագավառում համագործակցում են լիազոր մարմնի հետ: Ստացվում է, որ նշյալ օրենքը ևս նախատեսում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրվող բազմամասնագիտական աջակցություն:

8. Վիճակագրության վարում:

Ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրություն վարելն առանցքային բնույթ ունի խնդրի դեմ պայքարում: Պետք է տիրապետել խնդրի հստակ պատկերին և ծավալին, որպեսզի պատշաճ պայքար և կանխարգելման աշխատանքներ իրականացվեն:

Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի միասնական վիճակագրության վարման բացակայության մասին շա-

րունակաբար բարձրաձայնվել է ազգային ինստիտուտների, ինչպես նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից[243]: Հետազոտությունը նույնպես ցույց է տալիս, որ պետական իրավասու մարմինների և հասարակական կազմակերպությունների տվյալները տարբերվում են:

Խնդրի լուծման նպատակով և ի կատարումն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ համաձայն որի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ որպես լիազոր մարմին, իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով, 2019 թվականի հոկտեմբերին ընդունվեց ՀՀ կառավարության «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշումը: Սակայն այն դեռ գործնական կիրառում չի ստացել, որպեսզի բացահայտվի դրա արդյունավետությունը:

Ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգի ընդունումը առաջին կարևոր քայլն է, սակայն կարգի վարման ճշգրտության և հստակության արդյունավետության մաքսիմալացման ուղղությամբ ձեռնարկումներ պետք է իրականացվեն:

9. Հաշվառման պատշաճ իրականացում: Իրավասու մարմնի կողմից պետք է դրսևորվի պատշաճ ջանասիրություն ընտանեկան բռնության կանխարգելիչ հաշվառման իրականացման համար:

Ըստ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին»

243. Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետ 37:

ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ այն անձը, ով ընտանիքում բռնություն է գործադրել, և ում նկատմամբ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ՀՀ ոստիկանության կողմից վերցվում է կանխարգելիչ հաշվառման: Նույն կարգավորումը գործում է նաև ընտանիքում բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող չափահաս անձի պարագայում: Կանխարգելիչ հաշվառման շրջանակում չափահաս անձի կողմից ընտանիքում բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկումն իրականացնում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի սոցիալական աշխատողը, իսկ անչափահաս անձի պարագայում՝ ՀՀ ոստիկանությունը՝ համապատասխանաբար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կամ ՀՀ ոստիկանության պետի սահմանած կարգով:

Հաշվառումն ինքնին բավականին կարևոր գործիք է անձի վարքագծի դրսևորումների նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու տեսանկյունից: Այն կանխարգելիչ ու պաշտպանական նշանակություն ունի: Այնուամենայնիվ, գործնականում հաճախ պատշաճ հաշվառում չի իրականացվում: Վերջին պնդումը հաստատում են ոստիկանության տրամադրած տվյալներն այն մասին, որ ընտանիքի անդամների կողմից ստացվում են պաշտպանության միջոցների խախտումների վերաբերյալ ահազանգեր[244]:

10. Աղքատության վերացման նպատակով քայլերի իրականացում տնտեսական կարողությունների, զբաղվածության ապահովման, ձեռնարկատիրությամբ զբաղվելու և տնտեսությունների զարգացման համար, որոնք կարող

244. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (2019), ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդում, էջեր 556-559: Հասանելի է՝ https://www.ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf [դիտվել է 18.08.2020]:

են ներառել նաև՝

- զբաղվածության ապահովման ծրագրերի իրականացում գործազրկության կրճատման նպատակով.
- ընթացիկ ծրագրերի ծավալի ընդլայնում շահառուների առավել լայն շրջանակի ներառման նպատակով.
- բռնության ենթարկված անձանց, տուժողների համար աջակցության տրամադրման թիրախային ծրագրերի մշակում.
- բռնություն գործադրողների համար թիրախային սոցիալական ծրագրերի, վերականգնողական ռազմավարությունների ու դրանց գործողությունների ծրագրերի մշակում.
- տնային տնտեսությունների հնարավորությունների զարգացմանն ուղղված թիրախային ծրագրերի մշակում և իրականացում, ինչպես նաև ընթացիկ ծրագրերի արդյունավետության բարձրացում.
- աջակցություն աշխատանքի շուկայում նվազ մասնակցություն ունեցողներին, մասնավորապես, աշխատաշուկայում կանանց լիարժեք մասնակցությանը նպաստելու ուղղությամբ քայլերի ձեռնարկում:

Աղքատության վերացումը կարևոր է ընտանեկան բռնության, առհասարակ բռնության դեմ պայքարում: Սա ենթադրում է ընտանիքներին, խոցելի խումբ հանդիսացող անձանց, ինչպես նաև տնային տնտեսությունների կարողությունների և սոցիալ-տնտեսական հարցերի լուծմանն ուղղված ռազմավարությունների մշակում և կիրառում, որոնց հիմնական նպատակը աղքատության հաղթահարումն է:

11. Ընտանիքի բոլոր անդամների համար ծառայությունների մատչելիության ապահովում.
    - ապաստարանների հիմնադրում, դրանց թվի ավելացում. ապահովել ապաստարանների առկայությունը

հանրապետության ամբողջ տարածքում.

- աջակցության կենտրոնների հիմնադրում, դրանց կարողությունների զարգացում. ապահովել աջակցության կենտրոնների առկայությունը հանրապետության ամբողջ տարածքում։

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ նախատեսվել է բռնությունից տուժած անձանց համար բազմաթիվ ծառայությունների մատուցման անհրաժեշտություն։ Օրենքը նախատեսել է աջակցության կենտրոնների և ապաստարանների ստեղծում[245]։ Սակայն այս գործընթացը դեռ կայացման փուլում է, և օրենքով ամրագրված աջակցության կենտրոնների կամ ապաստարանների առկայությունը ապահովված չէ ամբողջ հանրապետության տարածքում։

Այդ ծառայությունները շարունակվում են տրամադրվել հասարակական կազմակերպությունների կողմից։ Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ հանրապետությունում գործում է երկու ապաստարան, ինչը, սակայն, չի համապատասխանում միջազգային ստանդարտներին, քանի որ քանակական խնդրից զատ՝ չկան նաև ապաստարաններ բոլոր մարզերում։ Միջազգային չափանիշների[246] համաձայն՝ յուրաքանչյուր տասը հազար բնակչությանը անհրաժեշտ է մեկ ընտանիքի հնարավորությամբ կացարան, այսինքն՝ Հայաստանում բնակչության թվին համապատասխան անհրաժեշտ են մոտավորապես 290 տեղով ապաստարաններ։

- ապաստարանների և աջակցության կենտրոնների համար ֆինանսական, մասնագիտական և այլ անհ-

245. Տե՛ս հոդված 19 և 20։

246. Եվրոպայի խորհրդի՝ կանանց նկատմամբ բռնության և դրա դեմ պայքարի (GREVIO) աշխատանքային խումբն առաջարկում է ունենալ մեկ ապաստարան յուրաքանչյուր տարածաշրջանում։

ռաժեշտ ռեսուրսների ապահովում.

- ռեաբիլիտացիոն ծրագրի մշակում և իրականացում: Համալիր միջոցառումների այս ծրագիրն ուղղված է բռնություն գործադրած անձին հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրման, առողջության վերականգնման, վնասակար սովորույթներից (ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն, խաղամոլություն) ձերբազատման միջոցով նրա կողմից կրկին բռնություն գործադրելու կանխմանը247.
- ապահովել «Թեժ գիծ» ծառայության հասանելիությունը: «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապ հաստատել աջակցության կենտրոնների աշխատակցի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում նաև նրանց համար մատչելի օգնություն: Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքի «Ընտանիքում բռնության

247. Տե՛ս Հոդված 4 և 14:

ենթարկված անձանց ծառայություններ տրամադրող մյուս կառույցները՝ ըստ մարզերի» տեղեկատվությունը պարունակում է «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարներ, որոնք սկսել են գործել միայն 2020 թվականից, և անհրաժեշտ է հասարակությանն իրազեկել այդ ծառայության մասին: Բացի դրանից՝ 2020 թվականի մայիսին սկսել է գործել նախարարության միասնական «Թեժ գիծ» հեռախոսահամարը, սակայն այն ընդհանուր հարցերի համար է, և կրկին հանրության շրջանում իրազեկման կարիք կա:

12. Առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովում:

Առողջապահական ծառայությունների անմատչելիությունն առողջության պահպանման իրավունքի իրացման սահմանափակում է, ինչը հատկապես ակներև է համայնքային բնակավայրերում և փոքր քաղաքներում: Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրներ են առաջանում նաև, երբ անձինք բախվում են բժշկական անձնակազմի կողմից խտրական վերաբերմունքի կամ մասնագիտական ծառայությունների ոչ լիարժեք իրականացման:

Բժշկական անձնակազմի կարծրատիպային մոտեցումների և մասնագիտական ոչ լիարժեք պատրաստվածության պատճառով խտրական վերաբերմունքի հանդիպելը բժշկական ծառայությունները ոչ մատչելի դարձնելու մեկ այլ պատճառ է:

Բացի դրանից՝ բժշկական էթիկայի և բժշկական գաղտնիքի դեպքեր ևս արձանագրվում են: Հաճախ, օրինակ, առողջության հետ կապված հարցեր փոխանցվում են ընտանիքի այլ անդամներին (ամուսին, ամուսնու ծնողների և այլն), ինչը ծառայությունների համար դիմած անձի համար ցանկալի չէ:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ «Ընտանիքում

բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված է, որ «ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը ապահովում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար անհատույց առաջնային բժշկական օգնություն, սահմանում է ընտանիքում բռնության հետևանքով բժշկական օգնության դիմած անձանց վերաբերյալ տեղեկության գրանցման կարգը և ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ոստիկանությանը, ՀՀ քննչական կոմիտեին կամ դատախազությանը հայտնելու պայմանները։ Նշված կարգը սահմանված է ՀՀ առողջապահության նախարարի «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար անհատույց առաջնային բժշկական օգնության կազմակերպման, բռնության հետևանքով բժշկական օգնության դիմած անձանց վերաբերյալ տեղեկության գրանցման և հաղորդման կարգը, ընտանեկան բռնության դեպքում բժշկական պատմագրի ներդիրը և ընտանեկան բռնության ենթարկված և դրա հետևանքով մարմնական, հոգեկան ու վերարտադրողական խանգարումներ/վնասվածքներ ստացած անձանց վերաբերյալ գրանցամատյանը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 3177–Ա հրամանով, որի 64-րդ կետը սահմանում է՝ «ընտանեկան բռնության ենթարկված և դրա հետևանքով մարմնական, հոգեկան և վերարտադրողական խանգարումներ/վնասվածքներ ստացած անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը, ԸԲ անձանց առաջնային բուժօգնությունը կազմակերպվում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակ-

ներում»[248]:

Այսինքն՝ գործող կարգավորումներն ամրագրում են ընտանեկան բռնության ենթարկված անձանց անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունը, սակայն այս առաջարկի նպատակը, ընդհանուր առմամբ, բժշկական ծառայությունների մատչելիությանն է ուղղված:

13. Իրազեկման աշխատանքների իրականացում հասարակության լայն շրջանակներում:

Կարծրատիպային մտածելակերպն իրազեկվածության, խնդիրների մասին գիտելիքների պակասի հետևանք է: Հաճախ անձինք չունեն վստահություն իրավապահ մարմինների նկատմամբ, բռնության ենթարկվածները երբեմն անգամ չեն գիտակցում, որ բռնության են ենթարկվում կամ խնդրահարույց հարաբերությունների մեջ են: Ավելին՝ ընտանեկան բռնության մասնակիցները՝ թե՛ բռնության ենթարկվող, թե բռնություն գործադրող անձինք և նրանց շրջապատը, նաև իրազեկված չեն խախտված իրավունքների վերականգնման մեխանիզմների ու առկա ծառայությունների մասին:

Պետության առաջնահերթություններից պետք է լինի կարծրատիպերի դեմ պայքարը և իրազեկման աշխատանքների իրականացումը: Այդ նպատակով տեղեկացվածության, իրավագիտակցության բարձրացման համար պետք է լայնածավալ իրազեկման աշխատանքներ իրականացվեն հասարակության տարբեր շերտերի շրջանում, որը պետք է ներառի.

- օրենսդրական դաշտի իրազեկում, օրենքով սահմանված պաշտպանության միջոցների, իրավունքների վերականգնման մեխանիզմների վերաբերյալ դասընթացների կազմակերպում հասարակության տարբեր շերտերի համար.

248. Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 3177–Ա հրամանը: Հասանելի է՝ http://www.moh.am/storage/legal-acts/November2019/PK9mKcV91XT4aW8VbjyO.pdf [դիտվել է 18.08.2020]:

- բռնության երևույթի վերաբերյալ քննարկումների կազմակերպում՝ գիտակցության բարձրացման, արմատավորված արատավոր և խտրական երևույթների վերաբերյալ սխալ պատկերացումների, բռնության վերացման նպատակով.
- ընտանեկան բռնության ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացում։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա (2020), Տարեկան լրաթերթ, 2019: Հասանելի է՝ https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2020/03/CSVW-anrep-2019.pdf [դիտվել է 18.08.2020]:
2. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք (2017): Հասանելի է՝ https://www.arlis.am/documentView.aspx?docID=118672 [դիտվել է 10.08.2020]:
3. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ (2019): Հասանելի է՝ https://www.e-draft.am/projects/2008 [դիտվել է 10.08.2020]:
4. Լազարյան, Տ. (2017), Ընտանեկան բռնությանը վերաբերող օրինագծի հանրային քննարկումն անցավ թեժ մթնոլորտում: Ազատություն ռադիոկայան, հոկտեմբերի 9: Հասանելի է՝ https://www.azatutyun.am/a/28782881.html [դիտվել է 22.07.2020]:
5. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2011): Հասանելի է՝ https://rm.coe.int/168046246d [դիտվել է 10.08.2020]:
6. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց (2011): Հասանելի է՝ https://bit.

ly/3bvgKvh [դիտվել է 10.08.2020]:

7. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6):

8. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (2019), ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդում: Հասանելի է՝ https://www.ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf [դիտվել է 18.08.2020]:

9. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում:

10. ՀՀ ոստիկանություն (2019), Ամփոփ տեղեկատվություն ՀՀ ոստիկանության ծառայությունների և տարածքային մարմինների 2018 թ. օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքների մասին: Հասանելի է՝ https://bit.ly/3i6J48S [դիտվել է 18.08.2020]:

11. ՀՀ վիճակագրական կոմիտե (2019), «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույց: Երևան, ՀՀ ՎԿ: Հասանելի է՝ https://www.armstat.am/am/?nid=81&id=2095 [դիտվել է 16.07.2020]:

12. ՀՀ վիճակագրական կոմիտե (2020), «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույց: Հասանելի է՝ https://www.armstat.am/am/?nid=82&id=2217 [դիտվել է 22.07.2020]:

13. ՀՀ քննչական կոմիտե (2019), Տեղեկատվություն ՀՀ ՔԿ վարույթում 2018 թվականի ընթացքում ընտանիքում բռնության վերաբերյալ քննված գործերի վերաբերյալ:

Հասանելի է՝ http://investigative.am/news/view/yntan-iqum-brnutyun_2018.html [դիտվել է 18.08.2020]:

14. Միյատովիչ, Դ. (2019), Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի զեկույցը 2018 թ. սեպտեմբերի 16-20 Հայաստան կատարած այցին հաջորդիվ: Հասանելի է՝ https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149 [դիտվել է 10.08.2020]:

15. Օսիպով, Վ. և Սարգիզովա, Ջ. (2016), Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում. սոցիոլոգիական հետազոտության արդյունքների զեկույց: Երևան, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ: Հասանելի է՝ https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_ARM_July_2017_finalized_0.pdf [դիտվել է 18.08.2020]:

16. Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետ 132:

17. Abramsky, T., Watts, C. H., Garcia-Moreno, C., Devries, K., Kiss, L., Ellsberg, M., Jansen, H. A., & Heise, L. (2011). What factors are associated with recent intimate partner violence? Findings from the WHO multi-country study on women’s health and domestic violence. BMC public health, 11, 109.

18. Dahlberg, L.& Krug, E. (2002). Violence-a global public health problem. In: Krug, E., Dahlberg, L., Mercy, J., Zwi, A., Lozano, R. (eds) (2002). World Report on Violence and Health. Geneva: World Health Organization, pp. 1–56. Available at https://www.cdc.gov/violenceprevention/publichealthissue/social-ecologicalmodel.html [Accessed 18.08.2020].

19. Duvvury, N., Carney, P. & Nguyen, H. M. (2012). Estimating the costs of domestic violence against women in Viet Nam.

Available at: http://www.endvawnow.org/uploads/browser/files/costing_dv_vietnam_unwomen_2012en.pdf [Accessed 10.08.2020].

20. Ellsberg, M., & Heise, L. (2005). Researching violence against women. Geneva, Switzerland: World Health Organization. Available at: https://bit.ly/3ghvy0Y [Accessed 22.07.2020].

21. Fisher, B., & Lab, S. (2010). Encyclopedia of victimology and crime prevention. Thousand Oaks, Calif.: SAGE Publications.

22. Human Rights Council (2020). Report of the Working Group on the Universal Periodic Review: Armenia. Available at: https://undocs.org/A/HRC/44/10 [Accessed 22.07.2020].

23. Krug, E. (2002). World report on violence and health. Geneva: World Health Organization, pp. 149–181. Available at: https://bit.ly/3mS5nQW [Accessed 17.07.2020].

24. Macy, R. & Goodbourn, M. (2012). Promoting Successful Collaborations Between Domestic Violence and Substance Abuse Treatment Service Sectors: A Review of the Literature. Trauma, violence & abuse. 13. pp. 234–251.

25. Matosian, M. (2017). Russia's Dirty Play. Asbarez, February 24. Available at: https://anca.org/russias-dirty-play/ [Accessed 22.07.2020].

26. McQuigg, R. (2017). The Istanbul Convention, Domestic Violence and Human Rights. Florence: Taylor and Francis, pp. 138-142.

27. Mijatović, D. (2019). Report of the Commissioner for Human Rights of the Council of Europe. Available at: https://rm.coe.int/report-on-the-visit-to-armenia-from-16-to-20-september-2018-by-dunja-m/168091f9d5 [Accessed 22.07.2020].

28. Opinion on Draft Amendments to the Legal Framework on Preventing and Combating Domestic Violence in Moldova, Warsaw, 9 July 2015, Opinion N: AGEND-MDA/271/2015 [AlC].

29. Organic Act 1/2004 of 28 December on Integrated Protection Measures against Gender Violence.

30. Republic of Lithuania Law on Protection against Domestic Violence 26 May 2011 No XI-1425 Vilnius.

31. United Nations (2009). Handbook for legislation on violence against women [electronic resource]. New York. Available at: http://www2.unwomen.org/-/media/headquarters/attachments/sections/library/publications/2012/12/unw_legislation-handbook%20pdf.pdf [Accessed 10.08.2020].

32. UN OHCHR (2012). Guiding Principles on Extreme Poverty and Human Rights. Available at: https://www.ohchr.org/Documents/Publications/OHCHR_ExtremePovertyandHumanRights_EN.pdf [Accessed 22.07.2020].

33. UN UPR, 2nd cycle (2012-2016), UN UPR Database. Available at: https://bit.ly/3s4pdeU [Accessed 16.07.2020].

34. World Health Organization (2013). Global and regional estimates of violence against women: prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence. Geneva: WHO Press. Avaliable at: https://bit.ly/2VPc7De [Accessed 16.07.2020].

35. World Health Organization (2010). Preventing intimate partner and sexual violence against women: Taking action and generating evidence. Geneva: WHO. Available at https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/44350/9789241564007_eng.pdf?sequence=1 [Accessed 18.08.2020].

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Գևորգ Տեր-Գաբրիելյան - Գայանե Հովակիմյան

ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ. ԳՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՎԱՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԶՐՈՒՅՑ

Մաս առաջին

Գայանե Հովակիմյան (ԳՀ).- Խնդրեմ՝ ներկայանաք. մի փոքր ձեր մասին, առնչությունը խնդրին, մասնագիտական գործունեություն...

Գևորգ Տեր-Գաբրիելյան (ԳՏԳ).- Իմ հիմնական ինքնությունն արձակագիր լինելն է: Ծնված լինելով 1964 թվականին Երևանի կենտրոնում՝ արդեն հասուն տարիքում եմ անցել Անկախություն և լավ տեղյակ եմ այդ ամբողջ պատմությունից: Տասնչորս տարի՝ 1993-ից մինչև 2007 թիվը, ես ապրել եմ ոչ Հայաստանում: Վեց երկրում, որից ամենախոշոր մասը՝ յոթ տարի, Բրիտանիայում, և ուսումնասիրել եմ սոցիալ-քաղաքական և իրավական փիլիսոփայության մոտեցումները: Առաջին մասնագիտությամբ լեզվաբան եմ՝ թուրքագետ: 2007 թվականից վերադարձա Հայաստան՝ աշխատելու Եվրասիա համագործակցություն հիմնադրամում (ԵՀՀ), և աշխատանքիս այս տասը տարվա ընթացքը մեր թիմն ուղղորդում էի դեպի մակերևութայինից խորքային վերլուծություններ անելուն: Մակերևութայինը՝ սեմինար, թրեյնինգ և այլն, այդ ամենը, ինչով որ, ինչպես արհամարհելով ասում

են, այսպես կոչված, «գրանտակերներն» են զբաղվում, մենք կամաց-կամաց իրոք լրջացրինք. բանակցելով մեր դրամաշնորհատուների հետ և ընդգրկելով դրամաշնորհառուներին՝ գնացինք այն ուղղությամբ, որ լրջորեն շոշափենք այն հարցերը, որոնք այս հասարակության հիմնահարցերից են:

Դա դժվար է, որովհետև դրան սովորաբար պատրաստ չեն: Բայց շատ կարևոր իրադարձություն էր Ապրիլյան՝ 2018 թվի հեղափոխությունը, որը շատ բան փոխեց, նոր հնարավորություններ ստեղծեց, և այն, ինչը մենք հաճախ ասում էինք որպես «մարգինալ», լուսանցքային ինչ-որ դիսկուրս, մի շարք դեպքերում դարձավ հանրային դիսկուրս: Եթե ոչ մեյնսթրիմ, եթե ոչ, այսպես ասեմ, դոմինանտ դիսկուրս, ապա մեյնսթրիմի մեջ է արդեն, համահավասար դիսկուրս է՝ այլ դիսկուրսների կողքին:

Դրա դրսևորումներից մեկը Նիկոլ Փաշինյանի ելույթն էր Ստեփանակերտում, երբ նա իր այդ իդեալական տեսլականն ասելուց հետո՝ 5 միլիոն մարդ և այլն, անցավ մեթոդաբանական և արժեքային խնդիրներին: Կետ համար 1-ը բռնության բացասումն էր, որն ամբողջությամբ համապատասխանում է և՛ իմ, և՛ մեր կազմակերպության գործունեությանը և նպատակադրումներին, և որի մեջ մտնում է նաև այս թեման: Այսքանով, երևի, նախաբանս ավարտեմ:

ԳՀ.- Շատ լավ: Եթե մենք թեմայի մեջ չլինեինք, ես շատ ուրիշ հարցեր կտայի, բայց հիմա չեմ տա…

ԳՏԳ.- Խնդրեմ, երբ ուզեք…

ԳՀ.- …քանի որ շատ հետաքրքիր է նաև այդ վերադարձը, և մյուսը՝ գրողի ինքնության հարցը:

Բռնության և քրեական մշակույթի այդ կապը շատ հաճախ այդպես չի ներկայացվում,- համենայն դեպս մենք դա՝ այդ կապը, չենք տեսնում,- բայց, բնականաբար, դա կա, և դա շատ խորքային է, և որպեսզի հասկանանք, իհարկե, պետք է գանք ավելի պատմական այդ մոտեցմամբ, թե, ի վերջո,

քրեական ենթամշակույթը ինչպե՞ս է ձևավորվել: Մանավանդ որ դուք ապրել եք այդ հասարակարգում, և փաստե՞ր կամ գրքե՞ր կամ ապրումներ կամ վերապրումնե՞ր. այդ «տարողությունը» կրող եք...

Ըստ ձեզ՝ ընդհանրապես, ինչպե՞ս ձևավորվեց, ԽՍՀՄ-ը ինչպե՞ս ստեղծեց այդ համակարգը, ինչի՞ համար ստեղծեց, ի՞նչ նպատակով ստեղծեց և ի՞նչ արդյունք ունեցավ:

ԳՏԳ.- Ես ձեզ նախ ասեմ իմ անձնական ապրումները, վերաբերմունքը: Երբ երեք տարեկանում գնացի մանկապարտեզ, առաջին անգամ հանդիպեցի կոպիտ, բռնի դրսի աշխարհին ու շատ զարմացած մնացի այդ օրվանից: Եվ հետո ամբողջ այդ ընթացքում՝ և՛ դպրոցում, և՛, գուցե, մի քիչ փոխված ձևով՝ համալսարանում, ես անընդհատ այդ բռնի աշխարհի ավելորդ դաժանությունից, այդ ավելորդ բռնությունից զարմացած էի:

Պիտի ասեմ, որ այլ հասարակարգերում, երբ ես շփվում էի այլազգիների հետ, այն ժամանակ՝ ռուսների (օրինակ, նախևառաջ) կամ այլ հյուսիսային ազգերի՝ մերձբալթների, չեխերի, սլովակների, բուլղարացիների, բռնության մշակույթի արտաքին՝ մակերևութային, գուցե, այնպիսի՛ դրսևորման, ինչպիսին տեսնում էի Երևանի կենտրոնի մանկապարտեզում՝ երեխաների միջև, բակում՝ երեխաների միջև, դպրոցում՝ երեխաների միջև, և հետո պատանիների միջև համալսարանում՝ չէի հանդիպել:

Եվ ես պատահաբար չեմ ասում, որ դրսի ժողովուրդների հետ շփվելիս տպավորությունս, գուցե, մակերևութային էր, որովհետև շատ հավանական է, որ մարդը շատ ավելի դաժան է ներքնապես, բայց այդքան հախուռն կերպով չի արտահայտում իր այդ կոպտությունը, անդաստիարակությունը, անգրագիտությունը և, ընդհակառակը, վեր դասելը որոշակի բարքեր, որոշակի լեզու և որոշակի արժեքներ, որոնք բացարձակապես կապ չունեն նորմալ, բնական, մարդկային հարաբերությունների հետ:

Եվ ինձ համար դա, իհարկե, մեծ անակնկալ էր այդ ժամանակ: Ես այդ մասին նույնիսկ որոշ պատմվածքներ ունեմ գրած[249], իհարկե, շատ հետո:

Եվ հետո ես սկսեցի ուսումնասիրել, չեմ ասի, որ պրոֆեսիոնալ կերպով՝ հենց այս թեման, բայց՝ ընդհանրապե՛ս սոցիալական և քաղաքագիտական տեսությունները, փիլիսոփայությունը ամենատարբեր ասպարեզներում: Եվ արդեն ձեռք բերեցի նաև հայացք դեպի այն, ինչի մասին դուք հարց տվեցիք՝ ԽՍՀՄ-ի պատմության կապը բռնության խնդրին:

Եվ իմ տպավորությամբ (շատ պրիմիտիվ և, իհարկե, սիրողական մակարդակով) այսպե՛ս է եղել պատմությունը:

Հետքը գողական կամ «բլատնոյ» մշակույթի՝ որպես այդպիսին, ես անձամբ հետազոտել եմ մինչև 19-րդ դարի սկիզբը: Ցարական Ռուսաստանում մի հայտնի գող իր հիշողությունները գրեց, որից հետո նա մահացավ (սպանվեց, իհարկե): Կարևոր չէ հիմա ո՛չ անունը, ո՛չ գործի վերնագիրը, բայց այդ հիշողություններից արդեն պարզ էր, նախ՝ որ դա ձևավորված մշակույթ է, իր լեզվով (դե, երևի, դա նաև բոլոր մյուս մշակույթներում էլ է այդպես եղել. փակ մշակույթ է հանցագործների, քրեականների), երկրորդ՝ որ դա խորապես սերտաճած էր արդեն ոստիկանության և գաղտնի գործակալների հետ:

Այդ կապը՝ քրեականի և օրինապահների միջև, շա՜տ խորքային է, էլի պատմական: Շատ պատճառներով այն պիտի լինի: Իրար հետևից ընկածներն իրար նմանվում են: «Նու պագաձիի» գայլն ի վերջո նապաստակին նմանվում է, և հակառակը: Մարդ ու կին, երբ երկար են ապրում միմյանց հետ, որքան էլ տարբեր լինեին նախկինում, միմյանց նմանվում են կամաց-կամաց: Երբ մարդ շատ է ապրում այլ ցեղերի հետ,

249. Օրինակ՝ «Աշխարհը մեծ», «Հրապարակ նկուղ» գրքից. https://www.gtergab.com/hy/news/books/square-cellar/182/ [դիտվել է 18.08.2020], կամ «Մարգարիտան ու Քրիզանտենևան», «Անաստված կինո թատրոն» գրքից. https://www.gtergab.com/hy/news/prose/margarita-and-chrizantenna/30/ [դիտվել է 18.08.2020]:

նմանվում է նրանց, ասենք՝ սևերի հետ ապրող սպիտակամորթի մաշկի գույնն է թխանում, չինացիների հետ ապրողի աչքերը մի քիչ չինականի նման են դառնում. մարդս ադապտացվող երևույթ է:

Եվ այդ կոնտեքստում նաև շատ ուժեղ ընդգծվում է միմյանց «քցելու» հակաարժեքը, որն էլ հենց հիմքն է «սադրանքի»՝ պրովոկատորի, որն այդքան խորքային դեր է կատարել ռուսական մշակութային տիրույթում: Եվ պատմականորեն՝ դավաճանի հակաարժեքը մեր քաղաքակրթության հիմքում է, չէ՞. Հուդան:

«Սադրիչ» լինելը կամ մարդուն սադրելը հետո դարձավ խորհրդային մշակույթի հիմքերից մեկը. գուլագային «քաղաքակրթությունը» պիտի «իջեցներ» (опустить) որքան կարելի է շատ մարդ, և դրա լավագույն ձևերից էր՝ մարդկանց գրանցել որպես չեկա-էնկավեդե-կագեբեի գործակալ, որից հետո նրանք կարող էին սադրիչի դեր կատարել իրենց շրջանակներում, «վառողի», մյուս կողմից՝ իրենք կարճ սանձից էին կախված արդեն, քանի որ կագեբեն կարող էր իրենց սպառնալ, որ կբացահայտի, որ կապված են: Նույնն էլ՝ Գուլագի ներսում՝ գործ տվողները: Դա՝ մի կապ:

«Իջեցնելը», «կզցնելը» հենց «բարի համբավի» արժեքին է առնչվում, խաբելու և գողանալու հակաարժեքներին. չէ՞ որ խաբելը ճշմարտություն գողանալ է:

Սրան միացավ «գործ տալու» ողջ համակարգը: Այստեղ կարևոր է հասկանալ հետևյալը. օրինակ՝ Հրանուշ Խառատյանը հետազոտել է և պնդում է, որ Հայաստանում 20–30–ականներին քիչ մարդ է իրականում «գործ տվել», այսինքն՝ «դոնոս»՝ մատնաթուղթ գրել իրենց ծանոթների և մերձավորների մասին: Մյուս կողմից՝ մենք գիտենք, որ, ասենք, էնկավեդեի սպաներն իրենց կանանց էին նստեցնում, որպեսզի սրանք տրաֆարետով կազմված մատնաթղթեր գրեին «դաստեքով». ի՞նչ տարբերություն: Սա նույն «իջեցման» քաղաքականությունն է: Նույն կերպ էլ՝ եթե գյուղապետը,

ասենք, որոշում էր, որ այսինչին Գուլագ ուղարկի, իսկ այսինչին խնայի, բուն հենց այդպիսի «ընտրություն» կատարելու կարիքը, իշխի այդպիսի գործածումը՝ «Սոֆիի ընտրության» պես, այլասերող էր, «իջեցնող»: Մարդուն այս կամ այն կերպ ընդգրկում էին «օմերտայի» մեջ, ինչպես մաֆիայում՝ երբ պիտի սպանության մասնակցես, որ արյամբ ներկվես, և այլևս չվախենան, որ կմատնես: Ինչպես Դոստոևսկին շատ էլ լավ նկարագրել էր «Չարքեր»-ում:

Այս ամենն ուղղված էր նրան, որ ողջ ժողովուրդը «իջեցվի»: Դրա մեխանիզմները՝ հենց «օխրանկային» գործ տվողների վերաբերյալ, ես տեսել եմ լավ նկարագրված Ռոման Բալայանի «Ֆիլյոր» ֆիլմում՝ դեռ 1980-ականների երկրորդ կեսում նկարահանված, ինչպես նաև վերջերս հրապարակված՝ Միխայիլ Զիգարի գործում («Կայսրությունը պիտի մահանա»)[250]՝ Գապոնի, Մալինովսկու և այլ պրովոկատորների մասին պատմող մասերում:

Այս ամենը կարելի է և ավելի հեռուն տանել՝ պատմության խորքերը՝ միջնադարյան պատմություն, մինչև իսկ մեր քաղաքակրթության սկիզբը՝ արժեքների հիմնադրման իմաստով:

Հաջորդ հանգրվանը, իմ կարծիքով, 19–րդ դարի Օդեսայի և հրեաների մշակույթն է: Օդեսան միջազգային նավահանգիստ էր և, միևնույն ժամանակ, այն քչաքանակ մայրաքաղաքային սիրտ ունեցող քաղաքներից, որտեղ հրեաների ներկայությունը թույլատրված էր. չէ՞ որ նրանք ապրում էին այդ «բնակեցման գոտում». «բնակեցման գոտի» կար, այսինքն՝ նրանք իրավունք չունեին ապրելու Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, դեպի արևելք գնալ: Լինելով նավահանգստային և բազմամշակութային քաղաք՝ Օդեսան հատուկ նշանակություն ձեռք բերեց նաև որպես կրիմինալության կենտրոն: Իր սրամտության հետ միաձուլված:

250. Տե՛ս նույն գործի գրախոսականը. https://www.gtergab.com/ru/news/essay/the-lessons-of-history-russian/145/ [դիտվել է 18.08.2020]:

Եվ այդ մշակույթում իդիշ լեզուն մեծ դեր սկսեց կատարել, որովհետև գաղտնի լեզու էր պետք, և հաճախ գաղտնի լեզուն վերցվում էր իդիշի բառերից: Գործածվում էր, ասենք, խազա՝ տան փոխարեն (хаза՝ house) և այլն: Хозяйство, хозяин-ն էլ է այդ արմատից, նույն կերպ, ինչպես որ, ասենք, eco-ն նույնպես տուն է նշանակում, ուրեմն՝ economica – տնտեսություն, ecologia – տնաբանություն:

Ուրեմն իդիշը՝ որպես գաղտնի լեզվի մատակարար: Եվ հրեական գործոնը. շատ ու շատ հարգելի մարդկանց կողմից այդ շարժումը, որն ասում է. «Եթե, Ռուսական կայսրություն, դու ինձ մարդ չես համարում, չես հարգում, թույլ չես տալիս ապրել՝ ուր ուզեմ, սովորել՝ ուր ուզեմ, ես ի՞նչ պարտք ունեմ քո նկատմամբ. կդառնամ քրեական կամ հեղափոխական»: Եվ ոչ հրեաները՝ նույն կերպ. «Եթե դուք մարդկանց չեք հարգում, ճորտացնում էիք ու մինչև հիմա էլ ճորտացնում եք, թույլ չեք տալիս սովորել, ապրել՝ ուր ուզեն, մենք ի՞նչ պարտք ունենք ձեր նկատմամբ»:

Հետո արդեն՝ 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին, **եթե նայում ենք հեղափոխական շարժումները և նախևառաջ՝ տեռորիստական, էսէռական, սոցիալիստական խմբերի շարժումները՝ նրանց գլխավոր թեզերից մեկն այն էր, որ մարդը կարևոր չէ, կարելի է մարդուն զոհաբերել հանուն արդարության համար պայքարի, մարդու իրավունքները կարևոր չեն, մարդու սեփականությունը կարևոր չէ:** Նույն կերպ՝ ինչպես որ իշխի վերաբերմունքն էր՝ բացարձակ իշխի, որն, իբր, աստված տվել էր ինքնակալին, սա էլ՝ իրենից էմանացրել էր «ներքև»՝ տալով իր պամեշչիկներին, արիստոկրատիային, ազնվականությանը և այլն:

Գիտենք, որ բոլշևիկները «էքսերով» էին զբաղվում, հա՞, էսէռները տեռորիզմով էին զբաղվում: Բնական էր դա նույնիսկ մինչև հեղափոխությունը:

Դրա պատճառն էլ կա, գրել եմ Ձիգարի գրքի մասին գրախոսությանս մեջ, որ, իհարկե, **Ռուսական կայսրությունում**

մարդու արժեքը թերագնահատելը խորապես կապված էր ճորտատիրական կարգերի տևականության հետ:

Հեղափոխականները նախ այդ մշակույթի մեջ թաթախված էին. որ մարդն արժեք չունի: Այն էլ ինչպես էին թաթախված. որ այսօր մարդն արժեք չունի, իսկ վաղը՝ մարդու բարօրություն պիտի վրա հասնի, և այդ վաղվա բարօրության համար այսօր կարելի է այդ (չեղած) արժեքը զոհաբերել: Գրել եմ այդ մասին դեռ շա՜տ վաղուց[251]՝ «արժանապատվություն» արժեքի հաճախ բացակայության մասին՝ ռուսական մշակույթի իշխի տիրույթում:

Դա, իհարկե, հակասություն է, կոգնիտիվ դիսոնանս՝ մարդուն շատ հատուկ. կոնկրետ այսօրը չգնահատել՝ հանուն աբստրակտ վաղվա: Այսօրը համարել սևագիր, ոչ թե քո կոնկրետ կյանքի կարևորագույն և միակ մաս: Թե ինչու՜ դա այդպես ուժգնացավ 19-րդ դարում, և թե ինչպե՜ս է դա հաղթահարվում՝ այլ խոսակցություն է: Իհարկե, դա կապված է ապաիշխանավորված լինելու հետ:

Երկրորդ՝ նրանք նաև համարում էին, որ այն մարդիկ, որոնց կարելի է զոհաբերել և չհարգել, արդեն իրենց արժանապատվությունը գցել են, ոչնչացրել, արդեն բարի համբավ չունեն: Իսկ եթե կողքից մի երկու անմեղն էլ զոհաբերվեն հանուն «լուսավոր ապագայի», խնդիր չկա:

Բարի համբավ հասկացությունն այնքան էր արդեն վարկաբեկվել՝ երբ խոսքը «պամեշչիկների», տիրող իշխի մասին էր, որ հեղափոխականները նրանց մարդու տեղ չէին դնում, չէին կարող դնել:

Եվ միևնույն ժամանակ, քանի որ դա տիրող իշխն էր, իսկ տիրող իշխն իր մշակույթն էլ է պարտադրում, հեղափոխական երիտասարդները նաև «բարի համբավ» հասկացության արժեքն իրենց իսկ նկատմամբ կասկածի տակ էին առնում:

251. Տե՛ս Тер-Габриелян, Г. (1993), Эскиз истории идей. URL: https://www.gter-gab.com/ru/news/media/a-sketch-of-the-history-of-ideas-1993-1994/20/ [последний просмотр: 18.08.2020].

Այսինքն՝ մոդայիկ չէր այլևս այդ հասկացությունը, ինչպես որ մոդայիկ չէր եկեղեցին, որը, այդ տիրող իշխին սատարելով, կորցրել էր ուղենիշի, ուղղություն տվողի իր համբավը, իր կարողությունը (եթե անգամ երբևէ ունեցել էր)։ Նիցշեն էր մոդայիկ։

Այդ տվայտանքների մասին լավ է գրել Դոստոևսկին՝ նախ և առաջ «Չարքերը» վեպում, բայց նաև՝ այլ գործերում. «Եթե Աստված չկա, ամեն ինչ թույլատրելի է»։ Նա կողմ էր, որ Աստված մնա որպես ուղենիշ, ուղեցույց։ Սակայն Աստծո գաղափարի թուլացման հետ մեկտեղ թուլացել էր նաև ավելի աշխարհիկ արժեքի գոյությունը՝ բարի համբավի։

Այսինքն՝ նախորդ բարոյական արժեքների համակարգը, հարացույցը՝ պարադիգմը, թուլանում էր։ Մի մասի համար դրա տեղը գիտությունն էր վերցնում՝ ճանաչողությունը, լուսավորությունը, պրոգրեսը՝ առաջընթացը։ Բայց գիտությունն էլ խնդիր ուներ. հետամնաց կղերականությունը թե ժողովուրդը գիտությունը չէին կարող ընդունել իր հետազոտական լիցքով՝ ամբողջությամբ. չէ՞ որ դա նշանակում էր լինել, էլի, «հին բարոյականությունից» դուրս. մարդու սեքսուալ կյանքը հետազոտել, մարդկանց վրա էքսպերիմենտներ անել։ Եվ որոշ գիտնականներ, աշխարհը ճանաչելու իրենց պոլեմիկ եռանդով տարված, հենց դրան էին կողմ։

Զուր չէ, որ գիտության զարգացման հետ ծնվեց «Ֆրանկենշտեյնի» ժանրը՝ «վախենալի» ֆանտաստիկայի, որից հետո էլ՝ «սարսափի»։

Իսկ նացիզմի ժամանակ արդեն նաև նացիստական բժիշկների էքսպերիմենտները ցույց տվեցին այդ ուղղության սարսափելիությունը, հետո՝ միջուկային զենքի ստեղծումը...

Հետո մարդկությունը կամ նրա առաջատար մասը փորձեց վերահսկիչ համակարգ ստեղծել, գիտության այդ «անբարոյական» զարգացման դեմն առնել, այն կառավարել...

Բայց վերադառնանք 19-րդ դարի երկրորդ կեսին. **նախորդ**

բարոյականության այդ հարացույցի կոլապսն ինչ-որ չափով արդեն հեղափոխականներին և, այսպես ասած, «անարգելակ» գիտնականներին մերձեցնում էր քրեական աշխարհի հետ: Շերլոկ Հոլմսի հակառակորդի՝ Մորիարտիի կերպարը պատահական չէ:

Որովհետև քրեական աշխարհն իր «փիլիսոփայությունն» ուներ: Նույնիսկ կարող ենք տեսնել, ասենք, Դիքենսի մոտ արտացոլված՝ Օլիվեր Թվիսթի մասին վեպում. գրպանահատների արժեքները:

Քրեական աշխարհն ասում էր, որ, նախ՝ «Մենք ունենք մեր սեփական կոդեքսը՝ էթիկայի և արժանապատվության, որն այլ է, քան, այսպես կոչված, «ֆրայերներինը» («ֆրայեր» բառն էլ է, հա՞, նույն իդիշից՝ ազատ, free. նաև ասում են հիմա лох. այսինքն՝ մարդ, որին «քցելը» ոչինչ չարժի, քանի որ նա բլատնոյ չէ): Մենք ունենք մեր օրենքը»:

Երկրորդ՝ որ «Մենք մարդուն նույն կերպ չենք հարգում, ինչպես և կառավարությունը. մարդը ոչնչություն է, զրո է, նա ո՛չ իրավունք ունի սեփականության, ո՛չ արժեք, որ իրեն հարգենք: Նրա՞նը չէ սեփականությունը. կա՛մ ուժեղինն է, կա՛մ հանրային է»:

Այսինքն. «Քանի որ հասարակությունն արդար չէ, իսկ արդարության բոլոր կոչերը գալիս են անարդարներից և այդպիսով երեսպաշտ են ու ձև են, որպեսզի նրանք շարունակեն հասարակությանը քամել, ուրեմն, մենք էլ՝ քրեականներս, ոչ մի կարիք չունենք ենթարկվելու արդարության այդ քարոզին, ո՛չ էլ հարգելու այդ խղճուկներին, որոնք ենթարկվում են ու թույլ են տալիս, որ իրենց անխնա շահագործեն»:

Քրեականներն իրե՛նց օրենքն էին ստեղծում, իրե՛նց բարոյական կոդեքսը պարտադրում՝ իրենց շրջանակում: Եվ քանի որ նրանք օրենքից դուրս էին, չէ՞ որ մարդը պիտի ինչ-որ կերպ կոմպենսացնի իր արժանապատվության ոտնահարվելը. եթե հասարակությունն իրենց դուրս է մղել իր ներսից,

նրանք է՛լ ավելի ուժգնորեն կստեղծեն «ներքին օրենք»:

Նույնիսկ բանտի, էսպես կոչված, «գյոթնոցում» կան այդպիսի ներքին օրենքներ: Հենց որ մարդկանց հայտարարում են, որ նրանք դուրս են մղված «նորմալից, ընդունվածից», նրանք է՛լ ավելի փութաջանորեն իրենց «նորմալն» են ստեղծում՝ «սովորական», իբր «մեծ» «նորմալի» սահմաններից դուրս, նրան այլ, տարօրինակ կերպերով առնչվող:

Այդպես հիմք դրվեց նրան, ինչը հետո դարձավ նույնիսկ գաղափարական առումով խորհրդային ժամանակ ընդհանուր մոտեցում, և դա, այսպես կոչված, социально близкие - «սոցիալապես մոտիկների» նկատմամբ քաղաքականությունն էր:

Ըստ դրա՝ քրեական հանցագործները շատ ավելի մեղմ պատիժներ էին ստանում և շատ ավելի մեծ արտոնություններ ունեին Գուլագում, քան քաղաքականները:

Մարդու հանդեպ հարգանքի և արժանապատվության այդ խոր բացակայությունը, որի խորքային արտահայտումը գուլագային համակարգն էր, կարծում եմ, սերում է նաև Ռուսաստանի ճորտատիրական կարգերից, ինչպես ասացի. որովհետև կարելի է նաև տեսնել, որ մարդու արժանապատվության հանդեպ համեմատաբար ավելի մեծ հարգանք կա այն շրջաններում, որտեղ չեն եղել ճորտատիրական կարգեր. Ուկրաինայի արևմտյան շրջաններում կամ կազակների շրջաններում, որոնք փախել էին ճորտատիրական կարգերից շատ հաճախ, և ինչքան էլ դաժան լինեին, դա այլ կարգի դաժանություն էր:

Մարդու հանդեպ այդ վերաբերմունքը ժառանգվեց բոլշևիկյան կուսակցության պարագլուխների կողմից և արտահայտվեց նրանց վերաբերմունքում՝ ամեն ինչի հանդեպ:

Այդպես սկսեց զարգանալ խորհրդային համակարգը, որտեղ, նախ, քրեական հանցագործը՝ գողականը, համարվում էր համեմատաբար լավ բան, ավելի լավ, քան, այսպես կոչված,

«դասակարգային թշնամին», երկրորդ՝ տնտեսությունն ամբողջությամբ դրված էր գուլագային ռելսերի վրա, իսկ քանի որ մշակույթը կապված է տնտեսությանը՝ արժեքային, վարքային մշակույթը կապված է տնտեսության տարբերակին, ուրեմն մշակույթը մեծ մասամբ հիմնվեց գուլագային հոգեբանության, արժեքների, վարքի կանոնների վրա: Եթե ոչ ամբողջությամբ, ապա մշակույթի մի խոշոր մասը:

Այսպիսով՝ քրեականությունը և խորհրդային մշակույթի մեյնսթրիմը սկսեցին նույնանալ: Քրեականությունը ոչ թե շեղում էր կամ բացառություն, ոչ թե ենթամշակույթ, այլ՝ մեյնսթրիմի յուրահատուկ մաս, երբեմն՝ քողարկված, իսկ երբեմն մարդիկ պարզապես չէին էլ նկատում, որ իրենց վարքը նույն քրեականությունն է, քանի որ չէին ուզի, որ այդպես եղած լիներ, և քանի որ մարդս, ինչպես ասացի, շա՜տ ադապտացվող կենդանի է: Նրանք չտեսնելու էին տալիս, իրենց ավելի հիմարի տեղ էին դնում, քան կային, որպեսզի չնկատեն, որ Գուլագում ենք ապրում՝ մեկ, և որ իրենք բոլորը, փաստորեն, քրեական մշակույթի կրող են՝ երկու:

Պետք է լավ հասկանալ, թե ո՛րն է որևէ համակարգի իրական ատաղձը:

Ինձ համար խորհրդային համակարգը հասկանալի դարձավ շատ վաղ տարիքում. Սոլժենիցինի «Արխիպելագ Գուլագ»-ը կարդացի, երբ մոտավորապես 14-15 տարեկան էի: Մերի Քոչարից՝ Հրաչյա Քոչարի դուստրից, որը մայրիկիս ընկերուհին էր, մայրիկս երկու օրով վերցրել էր երկու հաստ հատոր՝ արտասահմանում հրատարակված, ԽՍՀՄ-ում՝ արգելված, իհարկե: Ցերեկները մայրս էր կարդում, գիշերը՝ ես, նրանից գրեթե թաքուն (նա, իհարկե, գիտեր, որ ես թաքուն կարդում եմ, բայց արդեն ոչինչ անել չէր կարող):

Եվ դա եղավ իմ կյանքի առաջին արժեքային հեղափոխությունը: Ես վերջապես հասկացա, թե ինչն ինչոց է:

Մինչ այդ ես գիտեի, որ այո, մեր ընտանիքն էլ է տառապել,

եղել են ստալինյան բռնաճնշումներ, 37 թիվ և այլն, սակայն մենք ապրում ենք քիչ թե շատ արդար հասարակությունում, որը շատ լավ արժեքներ ունի, որտեղ պետք չէ, որ լինի մասնավոր սեփականություն, որտեղ մենք բոլորս լավին, նորին և լուսավոր ապագային ենք միտված, և կան լիքը սխալներ, բայց, ընդհանուր առմամբ, մենք բարի, լավ, ճիշտ հասարակությունում ենք ապրում, որն այդքան բան է կառուցել Հայաստանում, և մենք պիտի շարունակենք կառուցել:

Այսինքն՝ այն անարդարությունը, անմարդկայնությունը, որին ես էի հանդիպում իմ կարճլիկ կյանքում, թվում էր՝ մասնավոր էր, սխալ, իսկ հասարակության մեծ քրեականությունը, իշխի քրեականությունը՝ անցած-գնացած բան կամ, եթե հիմա պատահեր, առանձին դեպք ընդհանուր արդար և ճիշտ մարդկային համակարգում: Իմ մասնավոր անբախտ ճակատագիրն էր՝ բռիների և բռիների մշակույթի հանդիպելս ամեն քայլափոխին: Կողքի դպրոցում դա, գուցեև, չկար, միայն իմ դպրոցում էր. բախտս չէր բերել: Այդպես էր ինձ թվում մինչ Սոլժենիցին կարդալը:

Սոլժենիցինի գործը կարդալով ես հասկացա, թե իրականու՛մ այդ իմ այնօրվա հասարակության ատաղձն ինչն էր:

Այն գոյություն ուներ ստրկատիրական ուժի վրա հենված լինելու շնորհիվ: Ստրուկները Գուլագի բազում, միլիոնավոր զոհերն էին, մահով զոհվածները թե պարզապես այդ համակարգով անցածները և բոլոր-բոլորը, որոնք ինչ-որ կերպ առնչվել էին այդ համակարգին, իսկ դա նշանակում էր՝ ողջ խորհրդային ժողովուրդը:

«Մարգարիտան և Քրիզանտենան» պատմվածքս շարունակություն ունի, որը դուրս է մնացել գրվածքից:

Երբ Բրունգիլդյանն ասում է, որ «Պետությունն ուժ է շահագործողների ձեռքին՝ շահագործվողներին հնազանդ պահելու համար, ուժ է իշխողների ձեռքին՝ իշխվողներին հնազանդ պահելու համար», ես՝ միամիտ գերազանցիկս, ձեռք եմ բարձրացնում:

Նա ասում է. «Գիտեմ, դու ուզում ես հարցնել՝ եթե մեր հասարակությունում շահագործվողներ չկան, եթե մեզ մոտ ժողովուրդն է իշխանությունը, ապա ու՞մ է շահագործում մեր պետությունը, ու՞մ վրա է իշխում: Միամիտ հարց. չէ՞ որ մեզ մոտ կան հանցագործներ, որոնք բանտերում են նստած. հենց նրա՞նց է իշխում և շահագործում մեր պետությունը»:

Ես մտքումս ասացի. «Բայց չէ՞ որ նրանք քիչ են՝ բանտերում նստածները. գլուխը, ստացվում է, շա՜տ ավելի մեծ է, քան մարմի՞նը»: Բայց որոշեցի լռել, չվիճել:

Այն ժամանակ ես չէի կարող տիկին («ընկեր») «Մարգարիտա Բրունգիլդյանի» ասածի տարտարոսը հասկանալ. նա եղել էր Գուլագում և լավ գիտեր, որ շահագործվողներն ու իշխվողները մեր հասարակությունում բնավ էլ քիչ չեն: Իր «գյորա»՝ նա իր իմացածն էր բացատրում խորհրդային գաղափարախոսության սահմանած «պետություն» հասկացության էության մասին:

Ստրուկները Գուլագում ձրի աշխատանք էին կատարում՝ վատ որակի:

Մեկ օրինակ ստրկատիրության ոչ էֆեկտիվության վերաբերյալ, որը մայրիկս էր պատմում խորհրդային ժամանակի մի մինիստրի օգնականի մասին: Սա ատելով ատում էր իր մինիստրին: Երբ մինիստրն ասում էր՝ «Գնա մի բաժակ ջուր բեր», նա գնում էր զուգարան, ջուրը լցնում էր, հետո թքում էր մեջը, մատով լա՜վ խառնում էր, հետո բերում էր, բաժակը տալիս էր այդ մինիստրին:

Սա դասական օրինակ է:

Ստրկատիրական աշխատանքն այդպիսին է. այն խաբկանք է, արհամարհանք և անպատվություն՝ նաև ստրկատիրոջ հանդեպ:

Ես մի տեղ արել եմ «տուֆտա» բառի վերլուծությունը, որը հենց այդ վատ որակի հիմքի մասին է: Եվ **այնպիսի հասկացություններ, ինչպես «խալտուրա», «գռդոն», «տուֆ-**

տա»[252], որոնք նույն թեզաուրուսի հասկացություններ են, Խորհրդային Միության, այսպես ասած, հիմնաքարային, գլխավոր հասկացություններից էին:

Եվ երբ ես հասկացա, թե Խորհրդային Միության քաղտնտեսությունն իրականում ինչի՛ վրա է հիմնված, բնականաբար, շատ բաներ սկսեցի հասկանալ նաև մշակութային և ենթամշակութային այդ վարքային երևույթների վերաբերյալ:

Եթե ուզեք՝ «տուֆտա»-ի մասին կարող եմ պատմել:

ԳՀ.- Հա, հետաքրքիր կլինի:

ԳՏԳ.- Ուրեմն՝ «տուֆտա»-ն նույն արմատից է, ինչ «տուֆ»-ը: Նշանակում է ծակոտկեն և համեմատաբար փափուկ մի բան: «Տաֆտա» բառը գուցե լսած լինեք, նույն բառն է, կտորին է վերաբերում. գործվածքի որոշակի տեսակի, որը հաստ է, փափուկ և ծակոտկեն: Օդեսայի դերձակներն ասում էին «տուֆտա անել» կամ «տաֆտա անել». խոսքն այն մասին էր, որ երբ դու կարում ես «Զինգեր» կարի մեքենայով շոր, եթե շորը չկա, դու տուֆտա՝ (տաֆտա) ես դնում այդ մեքենայի չոր, մետաղյա ներքևի մասին, որպեսզի ասեղը չդիպչի դրան, և չվնասվի:

Այսինքն՝ երբ «տաֆտա ես անում», դու холостой, idle, այսինքն՝ անիմաստ գործ ես անում: Երբ նրանց աքսորեցին, իսկ նրանց աքսորեցին առաջին էտապներում, դեռ Սոլովկի կղզին, որն աքսորի առաջին վայրերից էր, Գուլագ, որպես այդպիսին, չկար լրիվ ձևավորված այդ ժամանակ՝ 21-22 թվականներին[253], նրանք հասկացան, որ գուլագային համակարգում ապրելու միակ ձևը «տուֆտա անելն» է, այսինքն՝ ձև թափել, թե գործ ես անում, իրականում չանել:

252. Ես «տուֆտայի» թեզաուրուսի մեջ եմ ընդգրկում նաև հետևյալը. ֆուֆլո, «ֆառշ» («ֆալշ» բառից), ֆընդըխ, իմիտացիա, կամուֆլաժ, ադապտացիա, սիմուլակր, ֆեյք, կեղծ, ֆասադ, «Պոտյոմկինի գյուղ»:

253. Թեև Ալեքսանդր Յակովլևն ասում է, որ եթե 1918-ին բոլշևիկյան տեռորի քաղաքականության հրահանգով կար ընդամենը մի քսան հատ համակենտրոնացման ճամբար ստեղծած, ապա 1919-ին արդեն ութսունից ավելի էին:

Եվ այդպես այդ բառը մտավ այդ ամբողջ մեր մշակույթի մեջ:

Հայտնի բան է, թե որքան ոչ էֆեկտիվ էր գուլագային ստրկատիրական աշխատանքը: Ասենք՝ հենց այդ Սոլովկիի ժողովուրդը, և հետո՝ հավելյալ զեկեր[254] փորեցին, այսպես կոչված՝ Բելոմոր-կանալ ջրանցքը: Հետո Գորկին դրվատանքով դա ներկայացրեց որպես փոխվող, վերադաստիարակվող բանտարկյալների աշխատանք:

Բայց այդ ջրանցքը նավարկելի չէր: Քիչ էին փորել, նավ չէր կարող անցնել: Դա տուֆտա արված գործ էր՝ վերադասներին զեկուցելու համար:

Եվ նույն «նախշը» մենք տեսնում ենք այսօր կամ երեկ, երբ Հյուսիս-հարավ մայրուղու կամուրջները՝ մի քանի կամուրջ, կառուցվում են այնպես, որ տակով «ֆուռա» չի կարող անցնել: Ցածր է, և հետո պիտի քանդվեն ու նորից կառուցվեն: Համ արել ես, փող ստացել, զեկուցել, համ փողը միջից գողացել, համ էլ նորից պիտի քանդես, փող ստանաս, մի մասը գողանաս, հետո նորը սարքես, փող ստանաս, էլի մի մասը գողանաս: Եվ այլն: Անսպառ աղբյուր:

Ճիշտ ինչպես Բելոմոր կանալը հետո պիտի նորից փորվեր, որ գոնե մասամբ դառնար նավարկելի:

Որովհետև ստրկատիրական աշխատանքը, ի տարբերություն բուրգերի, փարավոնի ժամանակների մասին լեգենդների, սարսափելի ոչ էֆեկտիվ է:

Գուցե առաջ մի քիչ ավելի էֆեկտիվ է եղել, բայց ինչքան մարդկության կրթության ցենզն ավելացել է, ավելի ու ավելի ոչ էֆեկտիվ է դարձել:

Ամբողջ Խորհրդային Միությունը տուֆտայի վրա էր հիմնված: Կամաց-կամաց՝ ավելի ու ավելի: Տուֆտա էր պլանային էկոնոմիկան: Նույնիսկ ոչ գուլագային, ոչ ստրկատիրական աշխատանքի դեպքում տուֆտան պահպանվեց, դարձավ

254. «Զեկ»-ի մասին տե՛ս հղում 14, (էջ 37):

մշակույթ։ Որովհետև մարդն ապահիշխանավորված էր, իրեն պետության տերը չէր զգում

Տուֆտա էին գրագողության հիման վրա այդ բոլոր դոկտորական դիսերտացիաները, որոնք պաշտպանվում էին հատկապես արևելյան ժողովուրդների ներկայացուցիչների կողմից՝ Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս, Ուզբեկստան, ընդհանրապես Միջին Ասիա։ Այնտեղ, բնականաբար, դա պարզապես բեյի ինչ-որ մի հավելյալ, առանձնահատուկ նշան ունենալու ձև էր՝ գնել, թխել դիսերտացիան և ստանալ դոկտորի կոչում։

Խորհրդային ժամանակվա վերջում դա շատ ընդլայնվեց։ Ես Մոսկվայում ասպիրանտուրայում էի 1985-1988-ին, այնպես որ լավ տեսնում էի այդ ամենը, ընդ որում՝ հենց արևելագիտության գծով էի, այնպես որ շատերին տեսա այդ երկրներից։ Հայաստանում և Վրաստանում այդ քանակը՝ գրագողության և սուտ գիտության, երկրորդ տեղում էր ԽՍՀՄ «արևելյան» մասի համեմատ։ Ռուսաստանում շա՜տ ավելի քիչ էր այն ժամանակ, իսկ հիմա եթե տեսնենք, վերջին 30 տարվա ընթացքում Ռուսաստանն այդ առումով չեմպիոն է դարձել և բացարձակապես հետ չի ընկնում ամենավերջին աֆրիկյան երկրից, որտեղ յուրաքանչյուր սպա ուզում է նաև ակադեմիկոսի կոչում ունենալ, ճիշտ ինչպես որ ուզում է ապակու մի կտոր, որպես շքանշան, դոշին կպցնել։ Այդ «կարգո հոգեբանությունը», որի մասին շատ է ասվել՝ «կարգո կուլտը»[255] և՛ շքանշանների հանդեպ, և՛ կոչումների, և՛ սոցիալական հաջողության այլ ատրիբուտների, շատ տարածված է ամենահետամնաց հասարակություններում. որքան ավելի հետամնաց, այնքան ավելի տարածված։

Դա արխայիկ մտածողության[256] վառ դրսևորում է, ինչը քրեական մշակույթին շատ հատուկ է. սերը դեպի պարա-

255. Կարգո կուլտ. https://en.wikipedia.org/wiki/Cargo_cult [Accessed 18.08.2020].

256. Տե՛ս հետևյալ հաղորդումը. https://epfarmenia.am/hy/video/Archaic-thinking-part2 [դիտվել է 18.08.2020]։

ֆերնալիաներ: Ինչպես որ «աբորիգեններն» էին վաճառում իրենց հողը ապակու փայլփլուն կտորների դիմաց: Քրեական հոգեբանություն ունեցողները, քանի որ իրենց կրթական ցենզը սովորաբար շատ ցածր է, աշխարհի մասին պատկերացումները՝ «մոգականացած», ունեն նույն հակումը:

Մարդիկ հնուց հակված են, որպես իրենց արժանիքների գնահատում, ստանալ бирюльки՝ «ցպիկներ», և դրանով հպարտանալ: Դա էլ է «քցելու», «ընդգրկելու» ձև՝ երբ հանցավոր իշխը մեդալներ է բաժանում: Մենք տեսանք, թե ինչպես էր դա տեղի ունենում Հայաստանում. արժանի մարդիկ այդ «ցպիկները» ստանալիս պիտի որոշեին. եթե դրանք հանձնվում են անարժանի, բարի համբավ չունեցողի կողմից, և այդ հանձնելը նույնպես նրա և նրա թիմի կողմից է որոշվել, դրանց «վերանձնային» նշանակությունը՝ այն, որ այդ մարդը պիտի, իբր, քեզ պարգևատրի «ազգի», «պետության», «հասարակության» անունից, պահպանվու՞մ է, թե՞ վերանում: Մեծ մասը վերցնում էր այդ «ցպիկները», թեկուզև տվայտանքներից հետո, համարելով, որ տվողն անձը չէ, այլ՝ հանրությունը՝ անձի ձեռամբ, թեկուզև՝ անարժան անձի: Սակայն, իհարկե, դրա մեջ կա խո՛րը հակասություն. որտեղո՞վ է անցնում չընտրված, անարժան, իշխին ուզուրպացրածի մարմնի ո՞ր մասով է անցնում այն, որ նա ներկայացնում է երկիրդ, և ո՞ր մասով՝ այն, որ նա ստահակ է և հանցագործ: Ցպիկն անարժանից վերցնելով և դոշիդ կախելով՝ արդյոք դու օմերտայի մաս չե՞ս դառնում, չե՞ս կոոպտացվում համակարգի մեջ: Բա հետո նրան ինչպե՞ս քննադատես, դատես... Հարցեր, հարցեր...

Ամերիկայում, օրինակ, դա բիզնեսի տեսակներից մեկն է: Մեզ էլ է հասնում երբեմն. միամիտ մարդը հանկարծ նամակ է ստանում, որն ասում է. «Դուք ընտրվել եք Նյու Յորքի Ակադեմիայի անդամ. ուղարկեք քսան (հիսուն, հարյուր) դոլար և կստանաք անդամության Ձեր հավաստագիրը»: Եվ իրոք,

եթե ուղարկեն՝ կստանան, թեև Նյու Յորքի ակադեմիա չկա, բայց դե միամիտն ուրախանում է: Նույն կերպ՝ կան «աշխարհի քաղաքացու անձնագրեր», գինը՝ երկու հարյուր դոլար, որոնց մեջ գրված է. «Դուք արժանացաք աշխարհի քաղաքացու կարգավիճակի Ձեր անխոնջ գործունեության համար»: Եվ փոքր տառերով. «Սույն անձնագիրը գործում է բոլոր այն երկրներում, որոնք ընդունում են իր իսկությունը»: Խաբկանք էլ չկա, իրականում: Ուզում ես ցպիկներով խաբվել, պարապ հոգիդ խնդացնել՝ խնդրեմ:

Սակայն գիտությունը դրանով զոհվում է, եթե իրական համալսարանն ու ԲՈԿ-ն են այդպիսի կոչումներ շնորհում: Այդ բարքը վերջնականապես կլանեց ռուսաստանյան (և հայաստանյան էլ) հասարակությունն արդեն անկախությունից հետո, Սովետի փլվելուց հետո:

Բայց խնդիրն ավելի բարդ է. գիտական կոմունիզմի գաղափարախոսությունը կոչումներ էր շնորհում աջ և ձախ, այսինքն՝ հիմքը՝ սուտ գիտության դիմաց ցպիկ ստանալու, արդեն դրված էր Սովետի սկզբից:

Երբ քաղաքակրթությունը հասարակությանդ գեներից ջնջել են՝ ապակու փայլփլուն կտորը գերադասում ես ադամանդից, մենակ թե դոշիդ լինի, քեզ չխաբես էլ՝ ուրիշներին կխաբես գուցե մի քիչ: «Ստից», «սուտի» ճանաչումը հասարակության կողմից գերադասում ես իրական սոցիալական հաջողությունից: Երբ քաղաքակրթությունը հասարակությանդ գեներից ջնջել են, «իսկ արքան մերկ է» գոռացող քիչ կլինի, լինի էլ՝ կջնջխենք:

ԳՀ.- Կա՞ն ինչ-որ էթնիկ առանձնահատկություններ այդ առումով: Այսինքն՝ սա «խորհրդայինն» էր, բայց չենք համեմատի, չէ՞, Էստոնիան և Հայաստանը:

ԳՏԳ.- Շատ պարզ պատճառով. Էստոնիան, Լատվիան, Լիտվան, ինչպես նաև Արևմտյան Ուկրաինան 20 տարվա անկախություն ունեցան ամենակարևոր ժամանակաշրջանում՝

1918-ից մինչև 1939-1940 թթ.: Դա այնպիսի լիցք տվեց, որ նրանք, բնականաբար, այդքան չէին կարող վարակվել, ինչքան այդ նույն ժամանակաշրջանում Խորհրդային Միության այն մասերը, որոնք ամբողջությամբ այդ տարածքի մեջ էին:

Բայց պիտի ճիշտ հասկանանք. այդ համատարած գրագողության և տուֆտայի մի կարևոր պահը պիտի հաշվի առնենք: Ես չեմ ուզի, որ արևելյան ժողովուրդների մասին իմ ասածն ընկալվի որպես իմ կողմից նրանց, այսպես ասած, թաքուն «տեղը դնելու» ինչ-որ ձև:

Որովհետև **իրականում դա ստրուկի նույն ընդվզումն է տիրոջ, տիրակալի դեմ:** Այսինքն՝ արևելյան ժողովուրդները չէին ընդունել այդ բարքը, այդ հասարակական կարգը՝ լիներ դա ցարական Ռուսաստան թե սոցիալիզմ: Նրանք հպատակվել էին բռնի ուժով, անկախ նրանից՝ ավելի զարգացած էին թե ավելի պակաս, մինչ այդ պետություն ունեին թե ոչ:

Դա շատ լավ երևում է Հյուսիսային Կովկասի ժողովուրդների դեպքում, օրինակ՝ չեչենների: Նրանք ստիպված հպատակվել էին, մեծ մասամբ՝ սարսափելի պատերազմներից հետո:

Անկախ նրանից, որ այդ mission civilisatrice-ը՝ «քաղաքակրթման առաքելությունը», Ռուսաստանը, ռուսական մշակույթը, իշխանական «կենտրոնն» իր վրա էր վերցրել այդ երկրների հանդեպ, անկախ նրանից, թե դա իրոք դրակա՞ն դեր էր կատարում, թե՞ բացասական, որովհետև շատ դեպքերում դրական կարող է դիտարկվել, այբուբեն տվեց շատերին, գրել-կարդալ սովորեցրեց և այլն, բայց դա գալիս էր թշնամուց: Թշնամին հպատակեցրել էր ժողովուրդներին:

Այդ պատճառով այդ տարածքներում խորապես պահպանվեց, այսպես կոչված, «ընդհանուր օրենքը»[257], որը տարբեր-

257. Крикорова, Ж., Мельникова, Ж., Недолян, А. и Тер-Габриелян, Г. (ред.) (2003), Традиция разрешения конфликтов на Кавказе и методы институтов гражданского общества. URL: https://bit.ly/2LmBhHN [последний просмотр: 18.07.2020].

վում է գրավոր օրենքից: «Ընդհանուր օրենքը», ասենք, արյան վրեժի գոյությունն է:

ԳՀ.- Այսինքն՝ պահպանեցին այն, ինչ որ իրենց հարազատ էր...

ԳՏԳ.- Նրանք ստիպված պիտի հպատակվեին օֆիցիալ, վերևից եկող «գրավոր» օրենքին, բայց որքան կարողանում էին, պահպանում էին իրենց ավանդական պրակտիկանեը, հարցերը լուծելու ձևերը, հին հավատալիքները և այլն:

Պետք է հասկանալ, որ Գուլագի մշակույթը և գողականության մշակույթը կազմավորվել են արևելյան այդ հոսքի մեծ ազդեցությամբ, այդ կովկասյան՝ հյուսիսային նախևառաջ, բայց կովկասյան, նաև հարավային, նաև հայերի, վրացիների և միջինասիական ժողովուրդների բարքային հոսքից, նրանց ավանդույթների ազդեցությամբ: Ավանդույթ, որի էությունն էր չհպատակվել այդ՝ «վերևից» եկող և քանդող ուժին:

Ինչը որ այն համարում է ճշմարիտ, եթե նա՛ է այդպես համարողը, ուրեմն մենք համաձայն չենք, անկախ նրանից՝ ճշմարիտ է թե ոչ:

Եվ դա, օրինակ, կարող է շատ հետաքրքիր հետազոտություն լինել, որովհետև ռուսերենում, եթե ռուսական համացանցը նայենք, ապա և՛ իդիշի ու գողական լեզվի փոխհարաբերությունները, և՛ Օդեսայի դերը ռուսական կրիմինալ մշակույթի մեջ, և՛ մնացած շատ ու շատ հարցեր բավական հետազոտված են: Կան հսկայական բառարաններ բոլոր կրիմինալ տերմինների, նաև հայհոյանքների խորքային հետազոտություններ: Իսկ արևելյան մշակութային հոսքի վերաբերյալ քիչ են կամ պարզապես չկան:

Գուցե դա ավելի դժվար է ֆիքսելը, հետազոտելը: Բայց գուցեև, էլի, կա մշակութային պատճառ: Որովհետև արևմտյան մասի՝ հրեաների, մերձբալթների, ուկրաինացիների մշակութային ազդեցությունը նկատելը, նույնիսկ հայերի

կամ վրացիների, այսպես ասած, «ցածրացնող» հանգամանք չէ: Այնքան «ցածրացնող» հանգամանք չէ ենթագիտակցորեն վելիկոռուսորեն մտածողի համար (անկախ իր էթնիկ պատկանելությունից), որքան իբր «թերզարգացած» արևելյան ազդեցությունը գիտակցելը: Հռետորաբանորեն՝ ասում են «մոնղոլ-թաթարական» ազդեցություն, բաց կոնկրետ առանձին չեչենների կամ ուզբեկների նշանակությունը 20–րդ դարի գողական մշակույթում, Գուլագում և այլն գրեթե չեն հետազոտում:

«Բամբակի» գործը՝ ամբողջ Կենտրոնական Ասիայի հսկայական կոռուպցիոն սուտի համակարգը, որ բացահայտվեց (ռուսացած հայ Գդյան անունով քննիչի միջոցով) Խորհրդային Միության կործանումից հինգ րոպե պակաս, չի գիտակցվում որպես Կենտրոնական Ասիայի բեյերի և ողջ ժողովրդի համաձայնություն՝ խեղելու իմպերիալիստական Մոսկվայի կողմից թելադրված-թելադրվող կանոնները և հարմարեցնելու «մեր» ուզածին, արժեքներին, համակարգին, ավանդույթին: Բամբակ հավաքողների ստրկությունը չի համարվում Գուլագի համակարգի ինդուլգենցիա ստացած, իսկ վերջինս՝ արևելյան ստրկատիրությունից ազդված, այն ընդօրինակած: «Մաղարիչը» «չմոդեռնիզացված» հասարակություններում որպես բնական երևույթ չի գիտակցվում:

Թուղթ եք ուզում՝ կտանք, ձևակերպում եք ուզում՝ կձևակերպենք, բայց այս համակարգը մերը չէ, այնպե՛ս ենք խաբելու ձեզ, այնպե՛ս «տնգցնենք», որ հախներիցդ գանք՝ մեզ գրավելու համար, անկախ նրանից՝ լա՛վ բան էիք ուզում բերած լինել, գրավելով, թե՝ վատ բան:

Ուզում էիք, որ մենք դառնանք դուք, սակայն դուք կդառնաք մենք: Ձեր բոլոր «լավ» գաղափարները կսնանկացնենք՝ իմաստազրկելով, կվերադարձնենք, կվերակենդանացնենք մեր հին ձևերը՝ ձեր նոր շորերի մեջ փաթաթած:

Այսօրվա պուտինյան համակարգի և այլ ավտորիտար հա-

սարակարգերի «լեգիզմը»[258], ինչպես նաև մեր նախորդ՝ ռոբասերժականի, այս նույն երևույթի արտահայտությունն են: Без бумажки ты букашка, а с бумажкой - человек:

Կովկասյան կամ, օրինակ, թաթար լինի թե ուդմուրտ թե միջինասիական՝ ուզբեկ և այլն, այդ ցեղախմբերի և ազգերի ավանդույթների և մշակույթի ազդեցությունը գուլագային մշակույթի և ընդհանրապես Խորհրդային Միության մշակույթի ձևավորման վրա շատ քիչ է հետազոտված:

Մինչդեռ հիմա Ռուսաստանում դա լրիվ հաղթանակող բարքեր են: Ասենք՝ գրագողության հարցում լրիվ այդ գծի վրա է իրադրությունը: Պատահաբար չէ դա այդպես:

Երբ դու չես ընդունում քեզ պարտադրված խաղի կանոնները, դու ստեղծում ես խաղի այլ կանոններ: Օրինակ բերեմ: Ընկերուհիս է պատմում:

Դպրոցը կազմակերպել է երեխաների նկարների ցուցահանդես, ծնողներն իրենց ընկերներին հրավիրել են, որ նայեն երեխաների նկարները, գնահատեն, և պիտի տրվի մրցանակ: Անուններ չկան, ամեն հյուր պիտի գնահատի, թե ինքը ո՛ր նկարն է հավանում: Ո՛ր նկարները որ շատ հավանություն ստացան, մրցույթում առաջին, երկրորդ, երրորդ տեղերը կստանան:

Մտնում է մի կին, որը շատ ճարպիկ է: Իր ծանոթի երեխային մոտ է կանչում և ասում է. «Ո՞րն է քո նկարը»: Երեխան ցույց է տալիս:

Այդ կինն իր բոլոր ծանոթներին հորդորում է, որ այս նկարին տան ձայնը, և տալիս են նրան: Հաղթում է այդ երեխան:

258. Լեգիզմը (լեգալիզմը) ժամանակակից քաղաքագիտության մեջ նկարագրում է այն գործընթացը, երբ ավտորիտար իշխն իր ցանկացած կամայական որոշում և օրենքի խախտում փաթեթավորում է իբր անխոցելի գրված օրենքների և կանոնների կոկոնի մեջ, որպեսզի այդ ոչ լեգիտիմ որոշումներին տա արտաքուստ լեգիտիմություն: Այդպես են նկարագրվում այսօրվա պուտինյան Ռուսաստանը և շատ այլ ավտորիտար համակարգեր: Այդպիսին էր նաև Հայաստանը մինչև 2018 թ. ապրիլյան հեղափոխությունը, երբ, օրինակ, իշխի պահպանումը որոշվեց իրագործել Սահմանադրության փոփոխման միջոցով:

Նրա ծնողն ասում է. «Տե՛ս, է՛, իմ մտքով էլ չէր անցնի այդպես կազմակերպել, խարդախել մրցույթը»:

Այդ ծնողը (սլավոն) չի յուրացրել ռուսաստանյան կայսրության այլասերող մշակույթի դարավոր խաղի կանոնները կամ շատ նայիվ է: Իսկ ճարպիկ կինը յուրացրել է: Եվ նա սլավոնական ազգի ներկայացուցիչ չէ:

Դա տիպական օրինակ է այն մոտեցման, թե ինչպես է գործում, այսպես ասած, ոչ արդար գործող համակարգը, և ինչպես միամիտ է այսպես կոչված արդար կանոններ ազդարարած համակարգը՝ չհասկանալով, թե ի՞նչ հեշտությամբ կարելի է կանոնները խախտել և ծռմռել:

Եթե ուղեղդ արդեն փչացած է, ապա մրցույթները և արդարության բոլոր հնարավոր տարբերակներն արվում են այդ ցուցահանդեսի տարբերակով:

Ինքս ներկա եղա այդպիսի դեպքի հակադիր իրադրությանը 2008 թվականի ամռանը: Նոր էի վերադարձել Հայաստան: Լուսանկարների ցուցահանդես-մրցույթ արեցինք: Երկրորդ տեղը ստացավ 21-22 տարեկան մի աղջիկ: Եվ երբ եկավ բեմ՝ իր խոսքն ասելու, ասաց.

-Ես կյանքումս առաջին անգամ մասնակցեցի մի մրցույթի, որտեղ անսպասելիորեն ես ստանում եմ մրցանակ. մինչ այս ես պատկերացնում էի, որ բոլոր մրցույթների արդյունքներն անխտիր նախապես որոշված են, կեղծ, ԽԾԲ գործոնով պայմանավորված: Շատ զարմացած եմ, որ եկա և առանց որևէ նախապատրաստման՝ հանկարծ ինձ հաղթող են հայտարարում: Շնորհակալություն արդարության մասին պատկերացումս վերականգնելու համար:

Այսինքն՝ «նորմալության», «արդարության», «անաչառության» մշակույթը շատ ուժեղ շեղվել էր արդեն և մարդկանց հոգեբանությունում այլևս չկար որպես տարբերակ[259]:

259. Այս հարցերին անդրադառնում է նաև Լևոն Աբրահամյանն այս զրույցում. https://www.youtube.com/watch?v=kHYubXC351E [դիտվել է 18.02.2020]:

Ես Սոլժենիցինից քաղեցի գուլագային էթիկայի, գուլագային կանոնակարգի մի քանի ասույթ: Մեկը՝ Умри ты сегодня, я - завтра՝ «Մեռի՛ր դու այսօր, ես՝ վաղը»: Սկզբունքային ասույթ, որը ցույց է տալիս այդ «բլատնոյ»՝ գողական աշխարհի մեջ հարաբերությունների հիերարխիան: Եվ երկրորդը, օրինակ՝ Тебя не гребут - не подмахивай (այստեղ իրականում ուրիշ բառ է օգտագործված, ուղղակի չեմ ուզում դա ասել). ասում է՝ եթե քեզ ձեռք չեն տալիս, մի՛ խառնվիր ոչ մի բանի:

Ի՞նչ է անում Գուլագը և ընդհանրապես այդ ամբողջ հասարակարգը մարդու հետ: Նա մարդուն զրկում է համայնքի պատկանելությունից՝ լինի դա ցեղ, լինի դա գյուղ և այլն: Նրան դարձնում է ատոմական մեկ կտոր, որի միակ շանսը վերապրելու, այսպես ասենք՝ ծայրահեղ էգոիզմն է, ծայրահեղ անկախությունը մյուս բոլորից: Նա չի կարող իրեն թույլ տալ բարի զգացումներ, մեծահոգություն և այլն: Ծայրահեղ էգոիզմը և ծայրահեղ նաղդային հոգեբանությունը: «Մեռի՛ր դու այսօր, ես՝ վաղը». եթե կես կտոր հացը կարող է քեզ փրկել, ես դա չեմ տա: «Քեզ ձեռք չեն տալիս՝ մի՛ խառնվիր». դու ո՛չ մի ընդհանուր շահ ո՛չ մեկի հետ չես կարող ունենալ, միայն դու ես, միայնակ, և ամբոխը:

Երբ երեխան անիրավ կերպով մրցանակ ստացավ, նրա ծնողը չբացահայտեց, որ դա անթույլատրելի է: Երեխան էլ տեսավ, որ այդպես պիտի արվեն մրցույթները: Ընդհակառակը. ծնողը սովորեց, որ դա՛ է ճիշտ եղանակը: Ի՛նքն էր «թույլիկ», ո՛չ թե ճարպիկ կինը՝ անիրավ և այլասերող: Եվ ով էլ հասկացավ էությունը, ոչ ոք չմիջամտեց, մրցույթը չչեղարկվեց:

Սոլժենիցինի ամենաուժեղ գլուխներից են, այսպես կոչված, «մալոլետկաներին»՝ Գուլագի մանկահասակ բնակիչներին նվիրված գլուխները: Ամենադաժանը նրանք էին, և դա շատ հետաքրքիր է, և հետո Շալամովը նույնպես դրա մասին գրել է:

Այն ճարպիկ կինը, որի մասին վերը նշեցի, և որին ես ճանաչում եմ, բավականաչափ չի ստացել այդպիսի վարքին հա-

կադիր արժեքներ իր ծնողների, իր դպրոցի կողմից. այդպիսին է ձևավորվել. ինչ տեսել է կյանքում, ինչ դասեր քաղել է, այդպես էլ վարվում է:

Չնայած խնդիրների, թվում է, տարբերությանը՝ նույնն էլ *մալոլետկաները*. զրկված լինելով «նորմալ» հասարակության մեջ մեծանալուց՝ նրանք ընդհանրապես չունեին արգելակներ դաժանությանը դիմելիս: Հասուն «բլատնոյը»՝ «ուռկան», ասենք, մարդու՝ «ֆրայերի», «լոխի», «ծեռպիլայի» աչքը գուցե չհաներ գդալով, եթե այդ մարդը կամավոր իր գդալն իրեն չտար, պարզապես ուժով ձեռքից առներ: Իսկ մալոլետկան արգելակ չունի՝ գդալը կկոխի մարդու աչքը: Եվ այլն:

Դա է պատճառը, որ *բեսպրեդելը* հաճախ ասոցացվում էր *մալոլետկաների* հետ: Եվ դա շատ կարևոր հասկացություններից է, ինչպես գիտենք՝ այսօր էլ շատ տարածված, մեծ մասամբ՝ մետաֆորիկ իմաստով օգտագործվող: Սակայն դրա իմաստը հենց այն է, որ անեզր բռնություն է սանձազերծվում, անեզր այն աստիճան, որ նույնիսկ սանձարձակողն ինքն իրեն էլ չի խնայում: Այսինքն՝ *բեսպրեդելի* դեպքում արգելակ չկա: Ինչը ցույց է տալիս, որ շատ այլ դեպքերում կա, և ուրեմն կան կանոններ, վարքային և խոսքային միջոցներ, որոնք կառավարում են բռնության չափը և կանգ առնելու պահը: Մյուս կողմից, ես դեռ կխոսեմ դրա մասին, նա, ով չի ուզում հարմարվել, կարող է *բեսպրեդելի* դիմել կամ դրա սպառնալիքը ներկայացնել, որպեսզի իրադրությունը շտկի: Դա, իհարկե, վտանգավոր է, քանի որ հետագայում կարող են նրա հախից գալ: Սակայն դրա մեջ կա հիմք, որն արժանապատիվ մարդու համար շատ հասկանալի է. առաջին իսկ զառիթափը դեպ սեփական արժանապատվության կոխկռճում արդեն նշան է, որ այդ պրոցեսը կանգ չի առնելու: Դրա համար էլ երբեմն նպատակահարմար է «ոչ սիմետրիկ» պատասխան ռեակցիա տալ, չհպատակվել և *բեսպրեդելով* սպառնալ կամ նույնիսկ դրան գնալ, թեկուզ մեռնելու վտան-

գի տակ, որպեսզի նշան ու դաս տալ, որ (տվյալ, բայց նաև՝ ընդհանրապես) մարդու արժանապատվությունն անտրոհելի է (պիտի լինի): Դոստոևսկին ասում էր. «Երեխայի մի արցունք թե եղավ՝ չի արդարանա աշխարհի ողջ երջանկությունը»: Նույն կերպ էլ, թվում է, «փուչ» պատճառով *բեսպրեդելի* գնացողն ասում է. «Ինձ, թվում է, մի՜ թեթև նեղելով՝ ողջ իմ ամբողջականությունն ու արժանապատվությունն ես զոհում, ուրեմն *բեսպրեդել* եմ անում ի պատասխան»: Երկուսն էլ սինկրետիկ, հոլիստիկ՝ չտարազատված հոգեբանության ու փիլիսոփայության, արժեքների արտահայտում են: Դա հատուկ է և՛ մեր աշխարհամասի մշակույթներին, և՛ արխայիկ, նաև կրոնական մտածողությանը (ի տարբերություն Արևմուտքի, որտեղ անալիտիզմը շատ ավելի խորն է), և՛ մեր նախկին հասարակարգին:

Ավելի զարգացած հասարակությունում մարդը հաճախ «իր վրա չի վերցնում» իր արժանապատվության «հպանցիկ» ոտնահարումը, քանի որ համոզված է, որ սա բացառություն է, ոչ թե օրենք, և հասարակական կարծիքն իր կողմն է: Իսկ ավելի քիչ զարգացած հասարակությունում կամ անքաղաքակիրթ իրադրության մեջ այդ համոզմունքը չկա, դրա համար, թվում է, հենց որ քեզ *կպան*, եթե իսկույն «չապացուցես», որ քեզ *կպնելը* սխալ էր, հասարակությունն ընդմիշտ կհամոզվի, որ *տակ ես*, և ըստ այդմ կշարունակի քեզ հետ վարվել: Դրանից ծնվում է *ատվետի* կարիքը, *աբառոկտի գելությունը* և այլն: Դրանից բախումներն էսկալացվում են և տանում դեպ *բեսպրեդել*:

«Երեխայի արցունքը» Լենինն իսպառ արհամարհեց՝ հասնելով ծայրահեղ «ձախականությանը»՝ երբ մարդն արժանապատվություն իսպառ չունի և կարող է միլիոններով զոհաբերվել, քանի որ պարզապես բախում չէ, «հնի» և «նորի» անտոգոնիստական առճակատում է:

Դրան իրենց ձևով կարողացան հակադրվել միայն արխայիկ մտածողություն ունեցողները: Մի կողմից՝ այդ քաղաքակա-

նությունը, որպես իրեն դիմադրելու ձև, ավելի ուժգին բուծեց արդեն ժառանգված արխայիկ մտածողությունը: Մյուս կողմից՝ այդ մոտեցումը նաև կուլտիվացնու՛մ էր արխայիկ մտածողությունը, որպեսզի ավելի հեշտ իշխի, քանի որ քիչ իմացող մարդու ընտրության հնարավորությունները սահմանափակ են: Արդյունքում քրեական վարքուբարքը՝ *հոմո հոմինի լուպուս էստ* (նկատե՛ք *աբառոտկի գայլի* ու *լուպուսի* նույնությունը), դարձավ, մի կողմից, անարդար հասարակությանը դիմադրելու գրեթե միակ ձևը, մյուս կողմից՝ քաղաքակիրթ հասարակություն ստեղծելու փորձերի գլխավոր գերեզմանափորը:

Մաս երկրորդ

Գայանե Հովակիմյան (ԳՀ).- Գիտեք՝ հայհոյանքի՝ հանրային դիսկուրս դուրս գալու առումով. այն դուրս չի գալիս օֆիցիալ դիսկուրս, բայց եթե մենք լսենք տղամարդկանց խոսակցություն, որը հանրային չէ, փակ է, այդ բառապաշարը կա: Այսինքն՝ գալիս է ներսից: Այսինքն՝ այդ մարդիկ կրում են այդ բառապաշարը: Չեն խոսում, օրինակ, կանանց ներկայությամբ, չեն խոսում պաշտոնական խոսակցության ընթացքում:

Գևորգ Տեր-Գաբրիելյան (ԳՏԳ).- Այսինքն՝ նրանք որոշակի տաբուի տիրապետության տակ են, որն ազդում է նրանց խոսքի և՛ համուհոտի, և՛ խորության ու անկեղծության վրա: Դա շատ տարօրինակ ու հետաքրքիր ֆենոմեն է՝ տաբուների հարցը. աշխարհով մեկ շատ կարևոր: Ու շատ հետաքրքիր է դիտարկել այն հասարակությունները, որտեղ այդ քֆուրները, այսպես ասած, կա՛մ չեզոքացել են՝ լրիվ մտնելով հանրային դիսկուրս, կա՛մ երբևէ չեն էլ ստեղծվել այդ կատեգորիայի: Հայտնի է, որ Ֆրանսիայում եթե մեկը մյուսին ասում է՝ «Ես կկենակցեմ քո մայրիկի հետ», պատասխանն է՝ «Դա քո և իմ մայրիկի անձնական գործն է»:

Մյուս դեպքը՝ անգլոամերիկյան աշխարհը, որտեղ հայհո-

յանքը դուրս է եկել արդեն հանրային դիսկուրս առանց որևէ սահմանափակման, ինչպես անգլերենում fuck բառը:

Ռուսերենում հիմա դա տեղի է ունենում սոցիալական ցանցերում՝ ի տարբերություն մեր սոցիալական ցանցերի, որտեղ էլի բլթբլթում է, բայց դեռ դուրս չի գալիս: Ընդ որում՝ մենք՝ հայերս, կարող ենք ռուսերեն ամենաթունդ քֆուրները թույլ տալ սոցիալական ցանցում, սակայն հայերեն չենք անի:

Ռուսալեզու սոցիալական ցանցերում ոչ մեկի մտքով չի անցնում, որ, ասենք, երեխա կարող է կարդալ, անհարմար է... Կին, տղամարդ, տղա, աղջիկ սկսել են հավասար օգտագործել, չնայած օֆիցիալ բանավոր դիսկուրսում դեռևս սահմանափակված է: Եվ շատ հետաքրքիր է դա: Այսինքն՝ սոցիալական ցանցը հիմա, փաստորեն, այդ, այսպես ասած, ցանկապատն է կամ հանրային զուգարանի պատը, որի վրա ինչ ասես կարելի է գրել: Ընդ որում՝ հեղինակը հաճախ հայտնի է, անոնիմ չէ:

Մինչդեռ և՛ գրական լեզվում, և՛ կինոյի լեզվում, և՛ գեղարվեստական գրականության լեզվում, եթե նայենք ռուսերեն գրականության զարգացումը, անկախության առաջին տարիներին այդ բառերը համեմատական ազատություն ստացան: Հետո ցենզուրան եկավ՝ արդեն նոր, պուտինյան, կարելի է ասել, նոր՝ «եկեղեցական» երեսպաշտությունը, հանրային լեզուն այդ ասպարեզներում մասամբ սահմանափակեց:

Այդ նոր երեսպաշտությունը մեզանում էլ կա. կրթական ասպարեզում, օրինակ: Հիմա նույնիսկ, ամենաաբսուրդ ձևով, դասական տեքստերն են փոխում, ասենք, Թումանյանի «ա»-ն «է» են դարձնում. սարսափելի է: Պուշկինի «Բալդան» Ռուսաստանում որոշեցին փոխել, որ «տերտերներին» վիրավորանք չլինի:

Բայց ինֆորմացիոն տարափի դեմն առնելու, ցենզուրայի այդ փորձերը սին են: Սոցիալական ցանցերում ռուսերենում

արդեն լրիվ ազատ է, և հայերենում, ես արդեն զգում եմ, այդ միտումները նույնպես դեպի դա են գնում:

Կարևոր է հասկանալ գողական բարքերի, բառապաշարի և հայհոյական բառապաշարի կապը: Այս խնդրին սերտորեն առնչվում է հայհոյանքների մշակույթը: Սերում է այն հնուց, ըստ մի բացատրության՝ աստծո և աստծո շուրջ եղող արժեքների նկատմամբ հասարակական վերաբերմունքից:

Սովետի ժամանակը և ընդհանրապես 20-րդ դարը հասկանալու համար կարևոր խնդիրներից մեկն է դա: Ռուսական աշխարհում մի քիչ հետազոտված, մեզանում՝ չհետազոտված:

Դրա մասին արագ ինչ-որ բան ասելու ձև եմ համարում Միխայիլ Բախտինի մոտեցումն օգտագործելը: Բախտինը[260] միջնադարյան կառնավալի մասին իր գրքում մեթոդ է առաջարկում:

20-րդ դարի ստեղծագործություն է դա՝ 20-րդ դարի միջին մասում գրված: Բախտինը մխրճված է եղել հեղափոխության, Գուլագի, սովետիզմի պատմության մեջ, բոլշևիկների հետապնդումների մեջ: Իր աչքի առաջ ունեցել է բոլշևիկների ամբողջ վարքը:

Եվ իր այդ շատ կարևոր բեսթսելերը թաքուն զուգահեռ է անցկացնում իր ժամանակի հետ: Այստեղ նա, ի թիվս այլ բաների, ասենք՝ ծիծաղի[261] էության, ցույց տվեց մշակութային այն դերը, որն ունի մարդկային ստորին մասը, և այն դերը, որն ունի կառնավալը:

Այն, ինչ չէր կարելի, կառնավալի ժամանակ դառնում է կարելի: Խաղային իմաստով, իհարկե: Հիերարխիաները կոտրվում են. նա, ով «վերև» է, դառնում է «ներքև», և հակառակը. Кто был никем, тот станет всем, նա, ով «ներքև» էր,

260. Տեր-Գաբրիելյան, Գ. (2014), Միխայիլ Բախտին: Բուն TV: Հասանելի է՝ http://boon.am/mikhail-bakhtin/ [դիտվել է 18.08.2020]:

261. Տեր-Գաբրիելյան, Գ. (2013), Մեծ ծիծաղից առաջ: Հասանելի է՝ https://gtergab.com/hy/news/blog/before-the-big-laughter/72/ [դիտվել է 18.08.2020]:

ցարի, թագավորի կամ աստծո տարբերանշաններ է հագնում: Իսկ թագավորը դիմակով է դուրս գալիս: Դա, այսպես ասած, օրինաչափորեն և լեգիտիմ կերպով որոշված, ավանդույթով հաստատված՝ հիերարխիաների՝ գլխիվայր շրջելու օր է: Մեր Վարդավառը տիպական կառնավալ է: Լևոն Աբրահամյանը ժամանակին գրեց 88-ի շարժման մասին, որ կառնավալային տարրեր ուներ, ես մի քիչ դրան անդրադարձա «Էլեկտրիկ Երևանի» մասին մի էսսեում[262]. կառնավալության էլեմենտներ ունեն մեր բոլոր շարժումները:

Այնպես որ՝ դա շատ հայտնի թեմա է. ինչպես են հիերարխիաները շրջվում կառնավալի ժամանակ, սովորաբար, իհարկե, ժամանակավորապես, պայմանականորեն: Որ «գազը» դուրս գա: Այսինքն՝ կառնավալը հեղափոխության մետաֆոր է և շանթարգել:

Նույն կերպ էլ՝ հայհոյանքն է երկիմաստ: Նրա ծագման մի շատ կարևոր աղբյուրը մարդու կենսաբանությանը, մարմնի մասերին վերաբերող հայհոյանքն է, մյուսը՝ սրբապղծությունը (blasphemy), այսինքն՝ երբ մայրիկին են հայհոյում, նախևառաջ, պատմականորեն, աստծո մայրիկին նկատի ունեին: Մարդու կրոնն էին հայհոյում, նրա հավաքական ինքնության հիմքը:

Մարդու էության երկու կարևորագույն մաս քաղաքակրթության սկզբում բնականորեն միավորվել էին. մեկը՝ «անգիտակից» կենսաբանության հիմքը. մարմնի՝ բազմանալու և սնվելու հետ կապված գործառույթները, մյուսը՝ գիտակից ինքնության հիմքը. հավատը, որ իր ինքնությունը գերբնական ուժերից է սնվում, հրաշք է:

Շատ հայհոյանքներ ծագել են քրմերի «սուրբ» արտահայտություններից: Քրմերն այդպես հայհոյում էին աստվածներին՝ «չար աչքը» խափանելու համար: Եվ միայն եթե «ոչ

262. Տեր-Գաբրիելյան, Գ. (2015), Դատողություններ «Էլեկտրական Երևանի» ետևից: Հասանելի է՝ https://www.gtergab.com/hy/news/media/thinking-aloud-about-electric-yerevan/100/ [դիտվել է 18.08.2020]:

քուրմն» է սկսում դրանք գործածել, դառնում է հայհոյանք, քանի որ՝ սրբապղծություն: Քանի որ նա դրա իրավունքը չուներ: Սովորական մահկանացուն նույնիսկ աստծո անունը տալու իրավունք չուներ, այդ պատճառով կուռք-աստվածը՝ արջը (медведь), ռուսերենում անուն չունի, այլ սոսկ որպես «մեղրն իմացող» կարող է նշվել: Նույն կերպ էլ որոշ մշակույթներում չեն գրում бог (աստված), այլ գրում են б-г (աստ-ծ), որպեսզի ավելորդ տեղը՝ ունայնորեն, այդ բառն օգտագործած չլինեն:

Այսպիսով՝ հայհոյանքը սկզբում, երբ առաջացել է, եղել է ոչ թե կոնկրետ քեզ վերաբերող (դու ո՛վ էիր, որ. մի բշտիկ աստծո աշխարհիս երեսին, որի կյանքի թելը նա կարող է մի ակնթարթում կտրել, դու այնքան փոքր ես, որ քեզ հայհոյել էլ չէր լինի, ի՞նչդ հայհոյվի), այլ՝ քո աստծոն: Եվ դա՛ է հիմքը եղել այն արգելելու, իսկ եթե հնչեց՝ վրեժ առնելու, ասողին պատժելու կարիքի. քանի որ քո աստծո՛ն հայհոյեց, այսինքն՝ քո կոլեկտիվ, ընդհանրական ինքնության հիմքը, այն, ինչը քեզ՝ բշտիկիս աշխարհի երեսին, թույլ է տալիս կառչել, որ այս տրագիկ կյանքի իմաստը հասկանաս կամ գոնե, եթե չհասկանաս էլ, ընդունես, որ քեզնից մեծ է, քեզ հասանելի չէ, և հպատակվես:

Հայհոյանքը երկիմաստ է. կառնավալի ժամանակ, ճիշտ ինչպես համով անեկդոտ պատմելու ժամանակ, նույնիսկ թույլատրելի է: Այլ երանգներ է ձեռք բերում, համովություն, հումոր: Կանոնը խախտելը, եթե այսօր այդպիսի բացառիկ օր է, չէ՞ որ հաճելի է, շանթարգել է, որ թույլ է տալիս չապստամբել, սակայն պարպվել կառնավալի շնորհիվ:

Հայհոյանքը շատ ստեղծագործ է, ինչպես և գողական եզրաբանությունը. երկուսն էլ լի են ժողովրդական ստեղծագործությամբ: Դա է պատճառը, որ շատ կարևոր եմ համարում այդ երկու դիսկուրսների բառարաններ հավաքելը հայերեն: Ավաղ, դրանով ոչ ոք չի զբաղվում: Ասում են, թե իրականում և խորապես տաբուացված հայհոյական բառերի քանակը

քիչ է: Այո, սակայն դրանց միջոցով ձևավորվող հայհոյանքների տարատեսակներն անսպառ են, և հենց այդ տարատեսակների բառարանը պիտի ունենա ամեն իրեն հարգող մշակույթ՝ հետագա գիտական ուսումնասիրության համար:

Հայհոյանքն ուղղակիորեն առնչվում է տաբուին: Սրբությունը հայհոյելը, սուրբը պղծելը, հարամելը նաև տաբուի խախտում է, եթե ոչ քանդում: Իսկ տաբուն նույնպիսի ճնշում է մարդու վրա, ինչպես ստրկատիրությունը: Այսինքն՝ մարդու ազատությունն է բռնի կերպով սահմանափակում: Եվ այդ իմաստով բնական է, որ ամբողջ գողական լեզուն և գողական բարքերը պիտի միահյուսված լինեին, ամալգամայի մեջ լինեին այդ տաբուացված թեմաների և բառերի ու հասկացությունների հետ:

Մա՞րդ, թե՞ աստված: Ես չգիտեմ՝ ինչպե՛ս է աստծոն երկրպագելը դարձել մարդ հայհոյել: Բայց կարելի է պատկերացնել: Երևի կան հետազոտություններ, ծանոթ չեմ: Գուցե դա եղել է մարդու անհատական ինքնության, արժանապատվության, հպարտության ամրապնդման շնորհիվ: Չէ՞ որ, ինչպես իտալական կատակն է ասում, կան ազգեր, որոնք կարծում են, որ իրենց որդին աստված է, իսկ մայրը՝ կույս: Բոլոր ավանդական հակում ունեցող մշակույթներն ունեն այդ կապը՝ ուժեղ լինի, թե թույլ: Մարդն արժանապատիվ էակ է, այսինքն՝ աստվածակերպ: Քրիստոնեությունը, ստեղծելով Մարդ-Աստծո գաղափարն ու արժեքը, արդեն հիմք դրեց նրան, որ մարդը որպես աստվածային էակ մեկնաբանվի: Ողջ Անտիկ ու Վերածնունդի արվեստը դրա մասին են. մարդուն որպես բնորդ օգտագործելով՝ ներկայացնել աստծուն կամ աստվածայինը:

Կա ամոթ, և կա խիղճ: Ամոթը հասարակությունից է («շառամ» հասկացությունն իսլամում, срам՝ ռուսերեն), խիղճը ներքին, սեփական հոգուց կամ աստծուց ամոթն է: Սակայն երկուսն էլ, եթե չկա պետության (կամ այլ հիմք-համակարգի) լեգալիստական, օրենքի ուժը թեկուզ բռնի կերպով հաստա-

տող մեքենան, հիմք չեն, որպեսզի անօրենը չկատարվի: Հասարակական (համայնքային) կարծիքը և սեփական խիղճը բավական չեն «նորմալ», արդար հասարակություն ունենալու համար, այն կարգավորելու, կառավարելու համար. դա՛ է պատճառը, որ զարգացել են պետական համակարգերը:

Հավանական է՝ մայր հայհոյելու պատճառն այն է, որ մարդ նաև իր աստծոն է անարգված զգում, երբ իր մայրն է անարգվել: Քանի որ ինքն աստծո էակ է իրեն զգում, և իր արժանապատվությունն անպատվելը նաև իր աստծո գործն անպատվել է նշանակում:

Հետաքրքիր է, որ ամոթը, տաբուն նախ և առաջ վերաբերում են սեռականությանը, և հայհոյանքների ամենաազդեցիկ, ամենատաբուացած մասը սեռականությանն է առնչվում: Ինչ-որ պահի՝ ֆալլոսների կուլտի, վեստալկաների ժամանակներում, դա այդպես չի եղել: Դա այդպես է դարձել Ադամի ու Եվայի պատմության հետ միասին, ըստ երևույթին, երբ մարդկային հասարակության գոյատևման և զարգացման քաղտնտեսությունը՝ այն ռացիոնալ կերպը, որով կյանքն էր կազմակերպվում, պահանջել է սեռական հարցը կառավարել՝ ընտանիքների հենց այսպիսի՝ մոնոգամ կերպով, օրենքների, կանոնների, ավանդույթների հենց այսպիսի՛ կերպով, մշակույթի, բարքերի և դրանց վերահսկման հենց այսպիսի՛ կերպերով այդ ամենը կազմակերպելով:

Այդպիսի հետազոտություններ արվել են թե ոչ՝ չգիտեմ, սակայն հետաքրքիր կլիներ դիտարկել, թե ո՛ր մշակույթում ի՞նչն է ավելի խոր վիրավորանք. մարդու դեմքին թքե՞լը, թե՞ նրա մայրիկին հայհոյելը, այսինքն՝ նրա արժանապատվության հպարտ ու բաց մա՞սը, աստվածակերպ դե՞մքը կոխկռճելը, թե՞ իր ինքնության տաբուացած մասը: Թե՞ դրանք նույնն են:

Ամեն դեպքում մարդուն ուղղված հայհոյանքը վիրավորանք է և իր արժանապատվության հանդեպ ոտնձգություն, նույնիսկ եթե որոշ հասարակություններում այլևս սեռականը

տաբուացված չէ, և սեռական հայհոյանքը չի ընկալվում որպես առավել ստորացուցիչ:

Ռուսերենում, օրինակ, մայրիկ հայհոյելը հաճախ չի ընկալվում հենց հասցեատիրո՛ջ մայրիկին հայհոյել, այլ՝ ընդհանրապես, անորոշ մի մայր... Նույնիսկ քերականական ձևերն օգնում են, որպեսզի այդ ընկալումը հստակվի. և՛ հայերենում, և՛ ռուսերենում քերականական միջոցներ կան, որ մայրիկ հայհոյելը դարձվի ավելի վիրավորական՝ հասցեատիրոջ համար, կամ՝ ավելի քիչ վիրավորական:

Մեր խորհրդային և հետխորհրդային աշխարհներում, հատկապես արևելյան և հարավային հատվածում, եթե ինչ-որ մեկի մայրիկին հայհոյեցին, եթե նա «լավ տղա» է, պիտի վրիժառու լինի: Եվ դա, ինչպես և մայրիկի կուռքը՝ տոտեմը, մայրիկին սրբացնելը, ֆետիշացնելը, գողական բարքերի էթիկական կոդեքսի կարևոր մաս է: Մայրիկը՝ որպես կարգո կուլտի արտահայտություն: Սեփական մայրիկն ու աստվածամայրը միավորված են հանդես գալիս:

Այդ դեպքում արդեն սկզբունքային խնդիրներ էին առաջանում, նույն կերպ, ինչպես եթե հայհոյվում է՝ ասելով, որ տղամարդը պասիվ կերպով կենակցում է մեկ այլ տղամարդու հետ: Դա ասելն արդեն սպառնալի էր, որովհետև դու պիտի պատասխան տայիր դրա համար, և նա, ով կուլ տվեց, էլի սպառնալի վիճակում էր, որովհետև եթե կուլ տվեց, կուլ տվեց «ընկած», «կզցված» լինելու կոնցեպտը: Նրա արժանապատվությունը խորապես խոցվեց:

Զուգարան մաքրելը նույն շարքից է. էլի ամոթույքին առնչվող բան է զուգարանը և այդ առումով՝ սեռականին նույնպես: Աստված այնպես է ստեղծել, որ սեռականությունը և սննդական ցիկլը, ուրեմն և՝ արտաթորանքը, մարմնականորեն միմյանց մերձ են, իսկ արտաթորանքը մեր քաղաքակրթության մեջ պիտի առնչվեր կեղտին, տաբուին, քանի որ այդպես չանելը կարող էր բերել անցանկալի սանիտարահիգիենիկ հետևանքների: Այդպիսով ամոթույքը, արտաթորանքը

և սեռականությունը, որին, սակայն, առնչվում է և ամենապատվաբերը, ամենահպարտանալունը՝ սերը, սերունդ տալը, երեխա ունենալը, «վերն» ու «վարը» պիտի միասնաբար և խառը հանդես գային, և թե ո՛ր դեպքում է «վարը» «վեր»՝ պիտի շա՜տ խստորեն կանոնակարգված դառնար որոշակի քաղտնտեսական հասարակարգում: Եվ դրա խախտումը կարող էր լինել միայն որպես հանցանք-զանցանք կամ՝ կառնավալային ժեստ ընկալվող:

Ճիշտ ինչպես որ աստծոն վերսուս անձին հայհոյելու դեպքում «վերն» ու «վարը» խառնվում են՝ նույնն էլ այստեղ:

Նաև հասկանանք, որ տաբուն խախտելը մի բան է, մեկանգամյա գործողություն, իսկ տաբուն ջարդելը՝ հանրային, հասարակական: Արժեքները հնանում են, կամ՝ նրանց մեզ տրամադրված ձևը՝ հագուստը, պիտի նորացվի կամ փոխվի: Արժեքը պիտի զարգանա, հարմար գա նոր իրադրություններին: Եթե արժեքը մնում է նույնը, իսկ կյանքն առաջ է գնում, դառնում է կարծրատիպ: Դա է պատճառը, որ արժեքները պիտի քննադատական զննման ենթարկվեն, նրանց հնացած մասը դեն նետվի, վերափոխվի, իսկ այն, ինչը նրանց ռացիոնալ կորիզն է՝ կարևոր, մեր կյանքը կազմակերպող, նորացվի և պահպանվի:

Ասենք, առաջներում՝ գոյատևման պայքարի, հին հասարակարգերի ժամանակ, նախաամուսնական սեքսը խոչընդոտ էր, որպեսզի կինն առողջ լինի, կամ որպեսզի ընտանիքը համոզված լինի, որ ժառանգն իր արյան սերունդն է: Հազար ու մի պատճառ կար:

Այժմ դա որպես աներկբայելի արժեք դիտարկելը հետադիմություն է: Սակայն դա չի բացառում այլասերված չլինելու արժեքը: Պարզապես այդ արժեքն այլ կերպերով է արտահայտվում: Եվ երբ մարդ նախաամուսնական սեքսին «դեմ» է, իսկ ինքը, ասենք, կաշառակեր է, դա նրա բարոյական մերկությունն է ցույց տալիս:

Զուգարան մաքրելը բանակում և բանտում լավ գիտենք, թե ինչ է: Մեր բանակում դա խնդրառու է եղել մինչև վերջերս, երբ, կարծեմ, ստեղծեցին հավաքարարների բրիգադներ, որ այդ ծուղակից դուրս գային: Դա, իմ կարծիքով, «ստիպված վայրէջք» է, ոչ թե հարցի լուծում. մարդիկ պիտի համաձայնեն փոխնիփոխ զուգարան մաքրել՝ առանց համարելու, որ իրենք, ուրեմն, «ստորացվեցին», «ընկան», եթե դա իրենց թույլ տվեցին: Իսկ դրան զուգահեռ պիտի նաև զուգարանում մաքրություն պահպանել սովորեն:

Օրերս այսպիսի տեքստ գրեցի ֆեյսբուքում՝ կապված այն դեպքի հետ, որ գեղեցիկ նախշազարդ աղբամաններ են տեղադրել Գյումրիում, իսկ ոմանք ասում են, որ դա «սրբապղծություն» է՝ հին հայկական նախշազարդերն աղբամանի վրա տեղադրելը:

«Կեղտից» «զզվելը»

Արդեն, երևի, մի տեղ ասած-պատմած-գրած կլինեմ, կամ՝ բազում տեղեր, որ, երբ Ամերիկա գնացի՝ 1994-ին, զարմանքից քար կտրեցի, որ համալսարանի միջանցքի հատակին, չնայելով, որ զուգարանի մուտքի մոտ են նստում, նստում էին ուսանողները ժամերով, աղջիկ-տղա, խառը, անկախ նրանից՝ ինչ (ում) զուգարան(ն) էր:

Ոտք սեղանին բարձրացնելն էլ, որ կինոյից գիտեինք, դե, պարզ է, մինչև հիմա շատերին զարմացնում է: Կա մշակույթ, որտեղ անպատվություն, վիրավորանք է համարվում (Посади свинью за стол, она и ноги на стол):

Խնդիրն ինչն է. հետամնաց հասարակություններում «ներքևը» համարվում է «կեղտոտ», իսկ «վերևը»՝ մաքուր: Եվ էդպես էլ կա. հստակ տարբերակում կա «քըխ», «գառլախ» և այլնի միջև, և՝ «մաքուր», «դիմային»: Նույնն էլ հարեմն է՝ հարամը՝ ի տարբերություն շքատան՝ հալալի:

Ուզում եմ նաև «հետամնաց» եզրույթն այստեղ ձևակերպել, որ երկիմաստություն չլինի. «հետամնացը» հասարակութ-

յան կամ նրա մի մասի քաղտնտեսության այնպիսի ձևերն են, այնպիսի կացութաձևերը, որոնք ժամանակակից հասարակության անդամի երջանկությանը, բարօրությանը, հասարակության բարգավաճմանն այլևս չեն ծառայում ամենաարդյունավետ կերպով:

«Ноги», գրված էր բանակի մեր «աձյալների» վրա, որ սնկավարակ կեղտոտ ոտքերիդ դիպած մասը հանկարծ երեսիդ չդիպցնես:

Մայրս միշտ երկու սրբիչ էր կախում. մեկը՝ երեսիս համար, մյուսը՝ մարմնիս: Որովհետև լողանալուց հետո էլ մարմինն ավելի «կեղտոտ» էր, քան երեսը:

Գետնին որ բան է ընկնում, երեխան վերցնում է, մայրիկն ասում է «յա՛խկ, դե՛ն նետիր»՝ դա է:

Որովհետև հետամնաց աշխարհում գետինը կեղտոտ է:

Միկրոբները մեջդ կմտնեն:

Երեխան կմրսի, պետք է բարուրել, որ ոտներն ուղիղ աճեն:

Չի կարելի սառույցով ջուր խմել, թե հիվանդ ես:

Նույն կերպ էլ՝ եթե «ներքև» է, եթե աղբ է, ուրեմն կեղտոտ է և «քըխ», ուրեմն շուրջն էլ պիտի աղբ լինի, իսկ մաքուր՝ մենակ «իմ տունիկ-իմ ամրոցիկը»՝ կեղտի աշխարհով շրջապատված:

Իսկ զարգացած աշխարհում ոչ միայն տանն ես առանց կոշիկ ման գալիս, այլև դրսում:

Որովհետև փոշի, հող թե ցեխ՝ ինքը մաքուր է, ինքը քո աշխարհի սիրելի մաս է: Աղբը՝ վերամշակվելիք և այնքա՛ն սիրով ու գորովանքով տարբերակված, փաթեթավորված ու տարաբաժանված, որ աղբամանդ իհա՛րկե պիտի սիրուն լինի, պիտի արվեստի գործ լինի:

Որովհետև չկան վերև-ներքև, չկան «իշխ» և «հպատակ», չկան «մաքուր» ու կեղտոտ», չկան «խառոշի» ու «անդիպչե-

լի», չկան «սուրբ» ու հորինովի քյարթուական «սրբապիղծ». կա մի մե՛ծ մաքուր մարդկային, բնական և կենդանական աշխարհ, որտեղ եթե սովորենք շնորհքով ապրել, կեղտ չի լինի, պարզապես չի՛ լինի:

* * *

Բանտում գոյություն ունեցող անձեռնմխելիների կաստայի մասին հենց վերջերս մեր գրողներից մեկը՝ Համբարձումը Համբարձումյան, մի պատմվածք հրապարակեց, որը կոչվում է հենց այդպես՝ «Գյոթնոցի բիձեն»:

Փակ միասեռ տարածքներ՝ Գուլագ, բանտ, բանակ. դրանք բուծում են արխայիզմ[263]:

Մեզանում, ի տարբերություն, ասենք, որոշ այլ մշակույթների, հայհոյական այդ բառապաշարը մինչև հիմա կռվի մեջ է օֆիցիալ հանրային լեզվի կանոնների, ոճերի հետ, և դժվար է հասկանալ՝ այդտեղ արդյոք գռեհկությունն է ուզում հաղթել, երբ այդ բառապաշարն ուզում է դուրս գալ հանրային դիսկուրս, թե՞ երեսպաշտությունն է ուզում պարտվել:

Սա էլ է Բախտինի առաջարկած դիխոտոմիան. օֆիցիալ (պաշտոնական) վերսուս «ինտիմ» (գաղտնամտերմիկ) և «ֆամիլյար» («անպատշաճ» մտերմավար) ոճեր: Ինտիմն ու ֆամիլյարը երկուսն էլ հակաերեսպաշտ են և այդ իմաստով՝ «ճշմարտության», բացության, թափանցիկության կողմը, թեև ֆամիլյարը կարող է լինել նաև տրոլլական, այսինքն՝ սուտ բացության համար օգտագործվող:

Պետք է հասկանալ, որ ֆամիլյարն ընդգրկում է նաև հանրայնորեն գռեհիկը, իսկ ինտիմի դեպքում, ասենք, այն, ինչ, եթե հանրային է, գռեհիկ կհնչեր (ամոթ), կարող է շատ տեղին հնչել:

Գռեհիկ է այն ինտիմը, որն անսպասելի է, որի վերաբերյալ

263. Տեր-Գաբրիելյան, Գ. (2018), Արխայիկ մտածողություն. մաս 2: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=jeXR1PWIp8g [դիտվել է 18.08.2020]:

խոսակիցը համաձայնություն չի հայտնել: Եթե հայտնել է, ապա այն գռեհիկ չէ արդեն, նույնիսկ եթե շա՜տ անձնական է: Նաև այդ համաձայնությունը կարող է լինել ոչ էքսպլիցիտ: Ասենք՝ ամուր ամուսնական զույգի ամուսնական (ներառյալ՝ սեռական) կյանքի մասին երբ զույգից մեկը դրական ակնարկ է անում հանրայնորեն, կարող է «նորմալ» հնչել, իսկ երբ անսպասելի է, ֆամիլյար է, գռեհիկ և խախտում, արժանապատվության ոտնահարում:

Կան է՛լ ավելի «նրբին» դեպքեր: Ասենք, ամուսնացած զույգից մեկն ասում է.

- Լայն մահճակալ գնեցինք մեզ համար:

Դա բացարձակապես գռեհիկ չի հնչում: Այդտեղ մարդու ուղեղը (եթե հիվանդագին չէ) չի ֆիքսվում այն բանի վրա, թե «ինչ են անելու նրանք այդ մահճակալին գիշերները»:

Իսկ եթե չամուսնացած, առավել ևս նաև ոչ օֆիցիալ իմաստով իրեն մշտական զույգ չհայտարարած զույգի ներկայացուցիչն ասի, կարող է տարօրինակ հնչել կամ հենց իրենց կապն ազդարարելու անուղղակի ձև լինել:

Արժեքներին վերադառնանք. քֆուրը, գիտենք, երբ որ օգտագործվում է՝ բացի հումորից և ինչ-որ այլ իրադրություններից, ասենք՝ անսպասելիությունն արտահայտելուց (այդտեղ ավելի շուտ գուցե «ինտիմի» կամ «ինտիմ» վերաբերմունք ակնկալելու դեպք է), ցածրացման, ստորացման իմաստ ունի: Նույնիսկ եթե լսողին ուղղակիորեն չի վերաբերում: Նրան «ցածր» դիսկուրսի մեջ ընդգրկելու հայտ է: Ես, օրինակ, փողոցով քայլելիս երբ նկատում եմ, որ կողքովս անցնող տղաները թքում են ասֆալտին, թեև դա ինձ անձնապես ուղղված արարք չէ, սակայն վիրավորված եմ զգում:

Քֆուրը, բացի հատուկ դեպքերից, մարդուն մի մշակութային միջավայրից (քաղաքակիրթ) տանում է մեկ այլ մշակութային միջավայր (ցածրացված, գռեհիկ):

Ճիշտ ինչպես որ Բախտինն ասում էր՝ «վեր»-ի ու «վար»-ի,

«բարձր»-ի ու «ցածր»-ի՝ «ամբարձ»-ի ու «ստորինի» հարաբերակցության հարց է:

Այսինքն՝ մարդու արժանապատվությունը ցածրացնելու: Ում որ ուղղված է՝ նրա, ով որ լսում է, ասում է՝ նրա, ով որ, իբր նեյտրալ, ներկա է՝ նրա:

Այսինքն՝ դա բռնություն է մարդու հոգեբանության նկատմամբ:

Մյուս կողմից՝ դրա մեջ կա ավելի բարդ այդ կոմպոնենտը. ինտիմ և ֆամիլյար կոմունիկացիայի՝ հաղորդակցության կարևոր հանգամանք, ինչպես ասացի: Օֆիցիալ հաղորդակցությունը միշտ ավելի երեսպաշտ է, ավելի ուժային ինչոր ճառագում ունի դեպի նա, ում որ ուղղված է, ինտիմ և ֆամիլյար իրադրությունների մեջ ավելի ազատ ես ցածր լեքսիկա ընտրելու:

Եվ դա վերաբերում է և՛ հայհոյանքին, և՛ ժարգոնին, արգոյին, և՛ խոսակցական լեզվի բոլոր հնարավոր տարատեսակներին: Ավաղ, մեր՝ հայ լեզվաբանության մեջ դա էլ գրեթե ուսումնասիրված չէ, և նույնիսկ պարզապես խոսակցական լեզվի կանոններն ուսումնասիրված չեն, այդ պատճառով էլ խառնաշփոթ է ստեղծվում, երբ որոշ լեզվաբաններ կարծում են, որ հեռուստացույցով հնչող մեր խոսքը՝ ֆիլմերի, սերիալների, «անգրագետ» է: Հաճախ այն «անգրագետ» չէ, այլ պարզապես կառուցված է խոսակցական լեզվի շտամպների հիման վրա: Խոսակցական լեզուն լիիրավ լեզվաոճական հարացույց է, և դա չի կարելի անգրագիտություն համարել: Իհարկե, երբեմն կարող է և անգրագետ լինել. դա՝ ուրիշ բան:

Սակայն չի կարելի գրագիտություն համարել միայն օֆիցիալը, պաշտոնականը, միայն գրական լեզուն, քանի որ այն միշտ ագուցված է երեսպաշտ լինելու հնարավորության հետ, մի բան ասելու՝ մեկ այլ բան հասկանալու, ճշմարտությունից հեռու գնալու կամ անհասկանալի բաներ ասելու, որ «սովորական մահկանացուն» չհասկանա կամ հասկանա էլ՝

«դեմը խաղ չունենա», ինչպես, օրինակ, բյուրոկրատական լեզուն կամ «սուտ իրավաբանական» (լեգիստական) լեզուն:

Գիտական լեզուն էլ ունի, չէ՞, այդ հատկանիշը: Դրա համար էլ հաճախ սուտ գիտությունը թաքնվում է ճոռոմ ու չհասկացված տերմինների շղարշի ետևում, բարդ լեզվի՝ իբր, տեսական դատողություններ պարունակող, որոնք պարզապես քողարկում են մտքի և արգումենտի սնանկությունը:

Եվ, մի խոսքով, հսկայական քանակով այդպիսի թեմաներ կան, որոնք մեզանում՝ Հայաստանում, հայ, հայերեն դիսկուրսի կողմից չեն ուսումնասիրվել մինչև վերջ:

ԳՀ.- Խորհրդային տարիների վերջին գողականության ռոմանտիզմ ձևավորվեց, չէ՞, երաժշտության մեջ կամ արվեստի մեջ: Այսինքն՝ այդ արվեստի, գողական մշակույթի մի տեսակ կուլտացում կամ միֆականացում եղավ: Չի՞ եղել նման բան, ասենք՝ Վիսոցկու երգերը:

ԳՏԳ.- Նկատի ունեք «բլատնոյ» մշակույթի ռոմանտիզմը: Իհարկե:

Դա գալիս է բուն «բլատնոյ» մշակույթի էությունից, և Սոլժենիցինը շատ լավ դա նկարագրել է: Ես էլ նշեցի «սուրբ» մայրիկի և արխայիկ մտածողության միջև եղած կապի մասին խոսելիս:

Բլատնոյները, բնականաբար, անգրագետ, վատ գրագիտություն ունեցող մասսա էին: Դրան գումարած՝ անընդհատ ապրում էին իրենց կամ ուրիշների կյանքը վտանգելու սպառնալիքի տակ. կա՛մ ուրիշին էին մորթում, կա՛մ իրենց էին մորթում:

Բնական է, որ նրանց բնավորությունները շատ հախուռն էին դառնում մեծ մասամբ, և հախուռնը պիտի նաև օգտագործվեր, որ ցույց տաս, որ դու կատաղի ես: Ուրեմն պետք է նաև դերասանորեն հախուռնություն ցույց տաս:

Եվ այդ բոլոր բնորոշ գծերին, հատկանիշներին գումարած՝

շա՜տ միամիտ, նաև՝ միշտ պատրաստ «ուռելու». կա՛մ չի-ֆիրով, կա՛մ իրոք թմրանյութով կամ գոնե ծխելով: Այս կամ այն ձևով, մենակ թե «կայֆ ստանալ», կյանքից «փախչել», «ազատվել» դարդերից, «տխուր» երգի ռեֆլեքսիայի միջոցով «մարսել» դարդերը:

Եվ ուրեմն՝ այդ «մայրիկի աստվածացումը», պատրաստակամությունը՝ լաց լինել որևէ պատմությունից, շատ բնորոշ գիծ էր այդ մշակույթի մեջ: Դա ռոմանտիզացման մեխանիզմի պահերից մեկն է. «իմ կյանքը միշտ վտանգի մեջ է», «իմ մայրիկը միշտ ինձ է սպասում» և այլն:

Չէ՞ որ էմոցիան իռացիոնալ է: Անարդար իշխը՝ նույնպես: Էմոցիան դրդելը, նրան ապավինելը միշտ կապված է նաև անարդար իշխին: Դրանից է գալիս, ասենք, հայրենասիրության կոչն անարդար իշխի կողմից, նույն՝ մայրիկին, ընտանիքը, ավանդական արժեքներն «աստվածացնելու» կոչերը:

Էմոցիան նաև թատերական առումով շահեկան է: Դե արի ու այսպիսի տեքստով, ինչպիսին մենք ենք հյուսում, հետաքրքրիր բլատնոյին կամ քաղքենուն: Իսկ, ասենք, «Հարուստները նույնպես լալիս են» կամ «Մայրս ինձ էլի չտեսավ»՝ շատ լավ թեմաներ են, որ և՛ բլատնոյին հետաքրքրես, և՛ քաղքենուն:

Ինչպես գիտենք, խեղճուկրակ «լոխ»-երը՝ ոչ բլատնոյ ինտելիգենտները, Գուլագում ապրելու հարցը լուծելու համար հաճախ դառնում էին վիպասան կամ երգասան՝ բլատնոյի համար: Հայտնի բան է. պիտի նստեիր նրա ոտքերի մոտ, ներբանները խուտուտ տայիր (դա հատուկ բլատնոյական հաճույքներից մեկն է) և «վեպ բստրեիր» (ро́маны точить, շեշտը՝ о-ի վրա): Հայտնի է, որ, ասենք, «Կալկաթայի ժառանգորդը» գրվել է հենց որպես այդպիսի մի վեպ՝ մի բլատնոյի համար, իբր նրա անունից. նա հույս ուներ, որ դա կուղարկի Ստալինին և կազատվի Գուլագից: Դեն Բրաունը լավ կգնար Գուլագում, Կոելյոն... «Փոքրիկ իշխանն» էլ վատ չէր գնա... Հարրի Փոթերն էլ... Նույնիսկ «Աննա Կարենինա»-ն:

Գլխավորը՝ որ հուզիչ լինի, էմոցիոնալ, հրաշքներով լեցուն ու՝ մե՛ծ բաների մասին:

Նոստալգիան, որ կար Գուլագի հանդեպ լրիվ չէր վերացել. իսկ նոստալգիա լինում է անցյալիդ հանդեպ, նույնիսկ եթե այդ անցյալդ շատ վատն է: 60–ականների սերունդն օգտագործեց այդ էմոցիոնալությունն իր ստեղծագործության մեջ. Վիսոցկին, հետո՝ Ռոզենբաումը և այլն, նաև մեր ռաբիսը («Վախ, մամա ջան...»): «Տագանկա» և այլն: Մի քանի նպատակով. նախ՝ որովհետև այդ էմոցիան հասարակության մեջ կար, լողում էր: Ի վերջո, այդքան մարդ էր նստել-դուրս եկել: Այդքան բլատնոյ կամ «նստած-հելած» կար: Երկրորդ՝ նրանք նաև ձև էին փնտրում, արվեստի միջոցով՝ կյանքի կամ անցյալի այդ մասն արտահայտելու, փոխակերպելու: Ասենք՝ «Товарищ Сталин, вы большой учёный» Յուզ Ալեշկովսկու երգը լրիվ լուրջ ստեղծագործություն է, ինչպես և Վիսոցկու շատ երգեր. տնազային կամ պարոդիական տարրն այդտեղ երկրորդական է լուրջ արվեստի համեմատ: Եթե դա երկխոսում էլ է բլատնոյ մշակույթի հետ, ապա՝ որպես «բարձր պարոդիա»: Իսկ Ռոզենբաումի, «Վախ մամա ջան»-ի կամ «Տագանկա»-ի մեջ արդեն կա «ցածրաճաշակ» «ֆոլք», «ռաբիս» արվեստին հատուկ պարոդիականի տարրը նաև: Ինչպես և, ասենք, այն «փողոցային» մշակույթի մեջ, որը մեզ բաժին հասավ Գուլագից, և որը հասավ մինչև մեր օրեր:

Եզրափակելով այս մասը՝ հասկանանք նաև հետևյալը. ծնողներիդ սեքսուալ կյանքի մեջ մտնելը գլխավոր տաբուներից մեկը կոտրելն է, քանի որ հենց այն է, ինչ փոքրուցդ հենց ծնողներդ են արգելել քեզ խորանալ, ողջ հասարակությունն է արգելում: Հատկանշական է, որ այն մշակույթներում, որտեղ դա առանձնապես խնդիր չէ, ընտանեկան հարաբերություններն այնպես են զարգացել, որ այդ տաբուն ամրապնդելու կա՛մ հնարը չի եղել, կա՛մ կարիքը: Օրինակ՝ ռուսասովետական մշակույթի ոչ արևելյան մասում գյուղա-

կան խրճիթներում նեղվածության պատճառով երեխաները շատ շուտ են տեղեկացել ծնողների սեքսուալ կյանքից, և հետո, Գուլագում, բնական է, ոչ մի տաբու չի մնացել և՛ իրենց նկատմամբ վերաբերմունքում, և՛ միմյանց հետ փոխանակվող դիսկուրսում:

Իսկ «զարգացած» Արևմուտքում՝ հակառակը, դա դադարել է որևէ քաղտնտեսական նշանակություն ունենալ, ընտանեկան միավորն արդեն վերջին դարում կարող էր ապրել ազատորեն, առանց կախված լինելու ընտանիքի որոշակի «կարծր» կառուցվածքից:

Դա նաև կապված է «մեծ» և «փոքր» հասկացությունների հետ՝ «մեծահասակ» և «երեխա»: Ինչպես գիտենք, միջնադարյան Եվրոպայում «երեխա» հասկացությունը շատ կարճ էր, մոտ երեք տարեկանում երեխան դադարում էր երեխա լինել: Հետագայում պրոգրեսի և բարգավաճման կարիքը թելադրեց, որ «երեխա» հասկացությունն ընդլայնվի, ընդգրկի փոքրիկ մարդուն մինչև, ասենք, տասնութ տարեկանը, ընդ որում՝ դա քայլ առ քայլ էր տեղի ունենում, սկզբում՝ մինչև տասներկու, հետո՝ տասնչորս, տասնվեց, տասնութ, քսանմեկ... Մինչև հիմա այն խնդիրը, թե ո՛ր տարիքում իրավունք ունեն աղջիկներն ամուսնանալու, հենց այդ հարցին է առնչվում. ո՛ր տարիքից է մարդը հասուն և ինքնուրույն համարվում: Նույն կերպ էլ՝ բանակի խնդիրը. մեզանում ամրապնդվում է այն կարծիքը, որ տասնութ տարեկան երեխային երկու տարով անընդմեջ բանակ տանելը չափից դուրս շուտ է, քանի որ մարդու ձևավորման գործընթացը քաղաքակրթության զարգացման ընթացքում երկարաձգվել է, և նա, ով մեկ դար առաջ հասուն երիտասարդ էր, սակայն եթե մահանար քառասունհինգ-հիսունհինգ տարեկանում, կհամարվեր, որ նորմալ կյանք է ապրել, այսօր դեռևս երեխա է, և դեռ ապրելու է մինչև ութսունհինգ-ինսուն տարեկան: Տասնութ տարեկանին բանակ տանելը լավ է հրամաններին նրան ենթարկելու տեսակետից, սակայն պարտադիր չէ, որ

ճիշտ լինի ինքնուրույն որոշումներ ընդունելու տեսակետից: Իսկ ինքնուրույն որոշումներ ընդունելը, այլ ոչ թե հրամաններին կուրորեն ենթարկվելն առանց հասկանալու, ժամանակակից բանակի հիմնական մեթոդն է դառնում: Եվ տեսնում ենք, որ այդ «ճնշմանը» չդիմանալով՝ երիտասարդները բանակում սարսափելի հոգեբանական, ֆիզիկական դժվարություններ են ապրում, երբեմն էլ՝ մահվան ելքով:

Աստիճանաբար «երեխա» հասկացությունը դարձավ փուլային: Քաղտնտեսության համար կարևոր էր տևականորեն ձևավորել մարդուն հենց այնպես, որ հետո նա ամենաշահավետ կերպով իր ձևավորման արդյունքն իր աշխատանքի, ստեղծագործության, մասնակցության ձևով վերադարձնի հասարակությանը:

Մարդու «մեծն» ու «փոքրը» էլի «վերի» ու «վարի» հետ է առնչվում. քանի որ երեխան «փոքր» է ու «վարին» մոտիկ, պետք է նրան «վարից» որքան կարելի է հեռու պահել, որպեսզի «վերը»՝ «գեղեցիկը», «մաքուրը», «սուրբը», արագ ընկալի: Այդպես էր համարվում հասարակության զարգացման սկզբնական փուլում:

Սակայն այդտեղ կանգ չառան: Դա հերիք չէր: Ճիշտ ինչպես որ «երեխա» լինելու ժամկետն էր զարգանում, նույն կերպ էլ Արևմուտքում զարգանում էր մարդու ձևավորման նպատակահարմարությունների, արժեքների մյուս մասը՝ «մասնավոր կյանքի» հասկացության հարաբերակցությունը «թափանցիկության» հետ: Հետամնաց հասարակությունում մասնավոր կյանքը տաբուացվում է առանց քննարկման, և քանի որ չկան հասարակական նորմեր՝ այդ առումով ընդունված, դրա մասին պատկերացումները դուրս են մղվում «ոչ օֆիցիալ» ասպարեզ, այսինքն՝ դիսկուրսի և հարաբերությունների «ոչ լուսավոր» մասը, ծնելով քֆուրների և խոսակցական ու «գողական» հարաբերությունների այն «մութ» դաշտը, որի գոյությունն իսկ հաճախ հետամնաց և երեսպաշտ «օֆիցիալի» կողմից հերքվում է կամ առնվազն

անտեսվում:

Զարգացած հասարակությունում, մինչդեռ, լավ հասկացվել է, որ թափանցիկությունը, ներառյալ ինտիմ աշխարհի վերաբերյալ, օգնում է մարդկանց՝ ձևավորելու ճիշտ և հասարակության համար շահավետ արժեքային համակարգ: Նախ՝ տեղյակ լինելով սեքսուալ կյանքից, երիտասարդ մարդն ավելի քիչ է հակված դրա միֆականացված տարբերակներին տրվելու, ավելի պաշտպանված է իր վարքում և՛ բուն սեքսուալ կյանքում, և՛ դրան առնչվող հակամշակութային դրսևորումների ու ոտնձգությունների դեպքում: Եվ նա դրան տիրապետել է հասարակության կողմից գիտականորեն հիմնավորված ձևերով, այլ ոչ թե լսել այստեղից-այնտեղից, այսինքն՝ հասարակությունը կենտրոնաձիգ կերպով այդ վտանգը՝ խեղաթյուրել մարդու արժեքները սեքսուալ կյանքի վերաբերյալ, չեզոքացնում է: Հետո, դուրս բերելով այդ հարցերը գիտակցության լուսավոր տարածք, հասարակությունն օգնում է մարդուն ճշգրտորեն ձևավորել «մասնավոր կյանք» վերսուս «թափանցիկություն» արժեքները, հասկանալ՝ ո՛ր դեպքերում է թափանցիկությունը թույլատրելի, ընդունելի, ո՛ր դեպքերում մասնավոր կյանքն է սրբազան:

Թափանցիկությունը տեղեկություն է՝ որքան կարելի է ճշգրիտ, ստացողին ամենահասանելի, հարմար ձևակերպված: Իսկ տեղեկությունը՝ գիտելիքը, ուժ է, ազատ գործելու, ճշգրիտ գործելու գրավական: Տեղեկացվածը հակված չէ կուրորեն ենթարկվելու, տեղեկացվածը ճիշտ և ստեղծագործ որոշումներ կընդունի: Այդպիսով՝ շատ և ճիշտ տեղեկացված անձն է, որ պետք է ժամանակակից հասարակությանը, ամենից օգտակարն է հասարակության համար, ամենաառողջն է հոգեպես և ֆիզիկապես:

Այն ամենը, ինչ տաբուացված է, ծնում է հիերարխիկ և միֆականացված արժեքներ, հիվանդագին անձեր՝ իշխով վարակված, արխայիկ մտածողություն, ինչպես նաև վստահության պակաս դեպ հասարակությունը: Քանի որ տաբուն ասում է՝

մենք սա չենք քննարկում, սակայն սա կա, ուրեմն մեր հասարակությունը սուտ է կամ կույր է: Իսկ այդ դեպքում ստեղծվում է «երկրորդ հասարակությունը»՝ «երկրորդ դիսկուրսը», «ոչ օֆիցիալ», և մարդու ինքնությունը երկատվում է, արժեքները՝ նույնպես. նրանք, ուրեմն, թուլանում են որպես գործելու շարժառիթ, մարդու արարքները կանոնավորող գործոն: Ճիշտ ինչպես որ խորհրդային ժամանակներում կար սև շուկան, որի արժեքների համաձայն՝ սպեկուլյացիան կամ պետությունից գողանալը լրիվ թույլատրելի էր, և դա քայքայեց հասարակության հիմքը, և մինչև այժմ էլ մենք տառապում ենք այդ հետևանքից, նույն կերպ էլ սթափ բանականության մակարդակի թափանցիկության բացակայությունը հասարակության մեջ քայքայում է նրա «լուսավոր» մասի արժեքները: Եվ չի կանգնեցնում այդ «մութ» (իսկ իրականում՝ պարզապես արգելված, չգիտակցված) արժեքների մուտքը հասարակություն, դրանք «սողոսկում են» ետնամուտքից՝ կոտրելով, պատռելով հասարակության ընդունված արժեքների հյուսվածքը, խեղաթյուրելով հասարակությունը:

Մաս երրորդ

ԳՀ.- Իսկ ինչպե՞ս կարելի է հակադարձել բռնության դրսևորումներին:

ԳՏԳ.- Կարևոր է մի քիչ համակարգել բռնության տեսակները: Ես տարբերակում եմ (1) խոսքով բռնություն, (2) խոսքով անուղղակի՝ ծաղր, (3) ֆիզիկական և (4) կառուցվածքային, որն էլ իր հերթին երկու տեսակ է՝ կոնտեքստային և ուղղակի: Ուղղակի կառուցվածքային բռնության ձևերից է պետության բռնությունը, ներառյալ լեգիտիմ բռնությունը՝ արդար պատճառով բանտարկելը, դատելը, պատժելը: Սակայն կա նաև, իհարկե, պետության ոչ լեգիտիմ բռնություն, հենց դրա մասին ենք մենք խոսում, երբ խոսում ենք Գուլագի մասին:

Եվ կա կառուցվածքային ուղղակի բռնություն, որը պետութ-

յունը, համենայն դեպս «գիտակցաբար», չի անում, հասարակությունն է անում, դա սոցիալական բռնությունն է, օրինակ՝ անարդար հաշվեհարդարը, եթե, ասենք, կինը, իբր, «դավաճանել» է ամուսնուն: Եվ դա կարող է լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ այլ կերպերով՝ օստրակիզմի, ծաղրի, հանրային պարսավանքի: Կարող է լինել նաև կառուցվածքային ուղղակի, ոչ պետական, սոցիալական, սակայն արդար բռնություն. ասենք՝ տրոլլին աղբարկղը նետելը կամ պարզապես նրա ձեռքը սեղմելուց հրաժարվելը համատարած կերպով: Հանրային պարսավանքը, եթե արդար է: Ավաղ, դա մեզանում գրեթե չի պատահում և ընդունված միջոց չէ: «Հանրային կարծիք» հասկացությունը մեզանում գրեթե անհետացել է, և դա էլ իր պատճառներն ունի: Այսինքն՝ կառուցվածքային, սոցիալական բռնության արդար տեսակը մեզանում թույլ է:

Այսպիսի պատիժը, ավելի շուտ, մարդկանց կողմից իդեալականացված անցյալում կար, երբ իբր կար «առաջադեմ» հանրային կարծիք: Այժմ դա կարող է լինել ոչ համատարած. կարող է դրսևորվել մի խմբի կողմից, սակայն համատարած արդար հանրային կարծիք այսօր գոյություն չունի: Ասենք, որոշ մարդիկ ստալինիզմի դարաշրջանից հետո, այն ժամանակ դավաճանի, «գործ տվողի» դեր կատարելուց հետո, կամ կագեբեում աշխատելուց հետո, չենթարկվելով, այսպես ասած, վեթինգի կամ լյուստրացիայի, զգում էին իրենց հանդեպ բացասական վերաբերմունքը հանրային որոշ շրջանակների կողմից: Սակայն սա համատարած ձև չէր՝ մարդուն այդպես հասկացնելը, որ նա խոշոր սխալ է գործել: Եվ սա իմաստ ունի միայն այն դեպքում, եթե կա նրա համար արդարանալու, պաշտպանվելու միջոց: Որովհետև եթե չկա, ապա այդ մարդը հեշտությամբ վերածվում է նույն կերպ հալածվողի, ինչ որ անմեղ զոհը: Եվ անմեղին էլ կարող են սկսել նույն կերպ հալածել՝ բամբասանքի հիման վրա:

Այստեղ մենք մտնում ենք մեղավորության և անմեղության

դաշտը, որը դեռ Դոստոևսկին էր քննարկում. արդյոք մարդասպանը, որ սպանում էր, և որը դատվում է երկու տարի հետո (կամ վեց, երբ նրա բոլոր բջիջներն այլ են), նու՞յն մարդն է: Արդյոք մարդը, որ անարդար բռնություն է կիրառել ուրիշների նկատմամբ, իսկ հետո ինքն է բռնության ենթարկվել, բայց այլ, էլի մտացածին պատճառով, քավե՞լ է իր մեղքը: Իհարկե, պետության ճիշտ օրենքների ճիշտ կիրառման և արդար դատական համակարգի գոյության դեպքում կան սրա քիչ թե շատ հստակ պատասխանները:

Սակայն այստեղ բազում չհաշվարկված իրադրություններ են մնում. ասենք՝ մարդասպանը բանտում ենթարկվում է հալածանքի կամ ոստիկանությունում՝ կտտանքի: Արդյոք դա ազդու՞մ է իր ոճիրի գնահատականի վրա: Կան իրավաբանական պատասխաններ, և հաճախ դրանք քիչ են հարցը սպառելու համար: Դա է պատճառը, որ լավ դատական համակարգը երբ բացակայում է, երբ դատավորները չունեն հեղինակություն, մենք անընդհատ լողում ենք կիսաիրավական և ուրեմն՝ սուտացված իրավական կոնտեքստում:

«Հանրային կարծիք»՝ լավ իմաստով, այսօր ինչու՛ չկա: Երբեմն կա: Կարելի է, օրինակ, համարել, որ 2018 թ. ապրիլյան հեղափոխությունը միահամուռ հանրային կարծիքի արտահայտում էր. որ ռոբասերժական համակարգը պիտի թողնի-գնա: Սակայն այդպիսի դեպքերը, մանավանդ եթե ոչ բռնի վախճան են ունենում, պատմական բացառություն են: «Հանրային կարծիք» ասելով՝ մենք հասկանում ենք, որ հանրության մեծամասնությունը, իսկ ավելի լավ է՝ գերագույն մեծամասնությունը համարում է այսպես: Հին ժամանակներում դա վերաբերում էր «էլիտային», այժմ՝ ողջ հանրությանը: Ուրեմն արդար ընտրությունները, եթե հստակ մեծամասնական դիրքորոշում է արտահայտվել, հանրային կարծիքի դրսևորում են: Իսկ ամենօրյա վարքով հստակ հանրային կարծիք արտահայտելն այսօր շատ դժվարացած է, քանի որ ամեն ոք ունի խոսքի հնարավորություն, մանավանդ՝ հա-

մացանցում: Եվ շատերն այդ հնարավորությունն օգտագործում են, որպեսզի ճշմարիտ հանրային կարծիք չձևավորվի, որպեսզի այն խաթարվի: Մանավանդ մեր հասարակությունում, որը խորհրդային կարգերի արատները, ինչպես ասացինք, կրում է իր մեջ՝ արժեքների մասնատվածությունը, բռնության հակամշակույթի մեջ ընկղմված լինելը:

Կառուցվածքային ոչ ուղղակի բռնություն է անարդար հասարակությունը. երբ մարդուն հնար չեն տալիս լավ և ճիշտ զարգանալու, արդյունքում նա ապերջանիկ է, վատառողջ, կամ հավանականությունը մեծ է, որ քրեական ուղին կընտրի: Կամ՝ ինչպես ամերիկյան սևերի դեպքում՝ նրա նկատմամբ կա կանխենթադրույթ, որ նա ավելի հակված է ապօրինի արարքի, քան սպիտակը:

Ինչ վերաբերում է ֆիզիկականին, դա էլ է դասակարգված մարդկային օրենքների կողմից:

Ամենաքիչը, որքան հասկանում եմ, դասակարգված և հասկացված է խոսքային բռնությունը: Բացի սոցիալական անուղղակի կառուցվածքայինից, որը բոլորին է վերաբերում և կապված է սոցիումի խորքային կառուցվածքի հետ, ամենաշատ տարածվածը՝ անհատին ուղղված դեպքերից, խոսքայինն է, քանի որ թվում է «ամենաանհետևանքը», օդում տարրալուծվողը, ամենադժվարը՝ պոչից բռնել, համակարգել: Հենց դա է պատճառը, որ ատելության խոսքի վերաբերյալ աշխարհը նոր-նոր է սկսում միջոցներ փնտրել:

Մարդն ինտեգրալ, հոլիստիկ, ամբողջական երևույթ է: Աստվածային, աստծո կերպով: Խոսքային բռնությունը (ասենք՝ մայր հայհոյելը) ձգտում է քանդել նրա ամբողջականությունը: Ամբողջականությունն ագուցված է արժանապատվության: Արժանապատվությունը քանդվում է, երբ քեզ անպատվում են, հասարակությունը պաշտպան չէ (մենակ ես, դեմ առ դեմ անպատվողի հետ) և դու ունես ընտրություն. կա՛մ կուլ տալ, ինչի արդյունքում ինքնագնահատականդ և սոցիալական գնահատականդ կտուժեն, քո կարծիքով, այ-

սինքն՝ ամբողջականությունդ կվնասվի, քանի որ արժանապատվությունդ կխոցվի, կա՛մ պատասխանել:

Այս դեպքում հարց է առաջանում, թե ո՛րն է համազոր պատասխանը:

Հաճախ պարզապես քո մայրիկին հայհոյածի մայրիկին հայհոյելը քիչ է թվում: Ինչու՞: Որովհետև կա նաև հարձակման հանգամանքը, ագրեսիայի էներգիան. անսպասելիորեն մայրիկիդ հայհոյելն ավելին է, քան եթե դու ի պատասխան պարզապես նրա մայրիկին հայհոյես: Դու այդպիսով, շատերին թվում է, չես հավասարակշռի իրադրությունը:

Բալանսավորելու համար պետք է ավելին. նախ՝ բալանսավորել բուն արարքը, ապա՝ պատժել ագրեսիայի փորձը: Քանի որ հենց այդ հանդգնությունը, ագրեսիայի հակված լինելն է, որ թույլ է տվել նրան քեզ անպատվել: Եվ ահա այդ ավելի՞ն է խնդիրը, ինչը բերում է նրան, որ հաճախ մայրիկին անպատվելու դիմաց փորձում են անցնել ֆիզիկական հաշվեհարդարի:

Իրադրությունը նույնիսկ ավելի բարդ է. ինչպես ասացինք՝ խոսքային (իրականում՝ ցանկացած) բռնության թեկուզ մեկ դեպքը հանրային նշանակություն է ձեռք բերում, ողջ հասարակությունը մի կաթիլ ավելի «ցածրացնում», դարձնում բռնի և բռի: Այդ պատճառով էլ ներքին մղում է առաջանում՝ դրան ի պատասխան այնպե՛ս վարվել, որ այդ հասարակական ազդեցությունն էլ հակակշռվի: Սակայն հաճախ այդ հակակշռելը, ընդհակառակը, է՛լ ավելի է խորացնում բռնության մշակույթը:

Ի միջի այլոց, պարադոքսալ կերպով՝ խոսքային բռնությունը կարող է նաև լռությամբ՝ վարքով արտահայտվել, հենց նույն, վերևում նշածս՝ օստրակիզմը, երբ մարդ վարքով մյուսի գոյությունը չնկատելու է տալիս, ինչ էլ վերջինս ասի: Բայց շարունակական խոսքային բռնության դեպքում, երբ հասարակությունը բավական միահամուռ կերպով դրա դեմ դուրս

չի գալիս, սա կարող է չաշխատել:

Անդրադառնանք նաև անուղղակի խոսքայինին՝ ծաղրին: Սա մարդու աստվածային ամբողջականությունը քանդելու շատ տարածված ձև է: Նրա սահմաններն անմեղ կատակի և խոսքային վիրավորանքի միջև շատ ծորուն են: Ծաղրողները հաճախ նպատակ ունեն մարդու արժանապատվությունն իջեցնել ուրիշների՝ շրջապատի կարծիքում, սակայն բուն մարդուն այնպես են մատուցում, ասես սա անմեղ կատակ է: Դպրոցական հալածանքի հիմքերից մեկն է սա, նաև՝ «կիսագողական» շրջապատների՝ պարոդիական, ֆարսային «գողական» շրջապատների, ասենք՝ թաղի «խառոշինների», «քյառթերի» և այլ խմբերում տարածված:

Եթե մայրիկ հայհոյողը կարող է և դեմառդեմ դա անել, քանի որ իր նպատակն է ստուգել դիմացինի ամբողջական արժանապատվության անխոցելիությունը, ապա ծաղրողին դեպքերի մեծ մասում անհրաժեշտ է շրջապատ՝ գնահատող, այլապես ծաղրը կարող է չաշխատել:

Դա ցույց է տալիս, որ ծաղրողը մեծ մասամբ հակված չէ անցնել ֆիզիկական բռնության, ֆիզիկական մարտի: Այդ իմաստով ծաղրը մարդկային քաղաքակրթության զարգացման փուլ է նշանակում. ֆիզիկականից հնարավորինս հրաժարվել: Դա նաև ցույց է տալիս ծաղրողի իշխի՝ իր տեսակետից «քանակը»: Եթե բանտում քեզ ծաղրում է ուրկան՝ բլատնոյը, դու դժվարանում ես պատասխանել, քանի որ նա, ըստ համբավի, կանգ չի առնի ֆիզիկականի անցնելու առջև, իսկ դրանում դու, գուցեև, ավելի թույլ ես, կամ նա ավելի հակված կլինի բեսպրեդելի, կամ նրան օգնության կգան: Ահա մի պարբերություն՝ ռուսերեն, չեմ էլ հիշում՝ որտեղից եմ այն քաղել, ու՛մ ասածն է, սակայն կապված է Մոսկվայի՝ 2019 թ. ամռան իրադարձություններին, «հանուն արդար ընտրությունների» շարժումին, երբ թղթյա բաժակը ոստիկանի վրա շպրտելու համար մարդուն դատապարտեցին տարիների բանտարկության: Հեղինակն այստեղ ռուսական այսօրվա

պետության բարքն ու վարքը համեմատում է բլատնոյների վարքուբարքին՝ Գուլագում: Շատ խոսուն է.

Вот урка, он всегда накручивает сам себя, когда общается с терпилой. Он всегда говорит: «Да как ты смел? Да как ты себя ведешь? Да почему ты не спросил о здоровье моей мамы?» При этом сам урка считает возможным всё: бить, издеваться, убивать, грабить. Но он честно страдает, когда в него бросили стаканчиком.

Իսկ սովորաբար ծաղրողը բոլորովին հակված չի լինում անցնելու ֆիզիկականի: Այդ առումով հետաքրքիր է, որ, երևի, ծաղրողների գերագույն մեծամասնությունն ինքնավստահ չէ՝ հակառակ թվացյալի: Նրան պետք է «խոռը»՝ «ձայնակցող» շրջապատը, նա իր իշխը քաղում է այդ շրջապատից:

Դա է պատճառը, որ խելոք և զարգացած անձնավորությունը ծաղրին կարող է հակադրվել, «աբառոտկա ֆռռալ», և կան բազում մարտավարություններ ծաղրին հակադրվելու համար:

Նաև նկարագրածս իրադրությունն է պատճառը, թե ինչու՛ է մարդը, որի վրա հարձակվում են, երբեմն ընտրում «անհավասարակշիռ», «ոչ սիմետրիկ» պատասխանը՝ գնում է դեպ «բեսպրեդել», կամ, ասենք, խոսքին միանգամից պատասխանում է հարվածով՝ էսկալացնելով իրադրությունը. քանի որ աներևույթ բալանսը խախտողներից, «գժերից» վախենում են, և նրանց հարգում են:

Ինձ անձամբ և՛ այսպիսի «գժական» մարտավարությունը, և՛ խոսքով բացատրվելը երբեմն օգնել են հարցը լուծել: Խոսքով բացատրվելը (սակայն ոչ «ռազբիրատի» իմաստով) բարձրագույն ձևերից է. դա նշանակում է հենց այն, ինչ ես այստեղ եմ պատմում. իրադրության ռեֆլեքսիան նկարագրել հավաքվածներին և նախ և առաջ՝ ագրեսորին: Սկսելով նրանից, որ մարդս աստվածային հոլիստիկ արժանապատիվ երևույթ է: Երբ ագրեսորին և մյուսներին պարզ է դառ-

նում, որ դու հասկանում ես ագրեսորի մոտիվացիաները, իրադրությունը հաճախ «փսկում» է: Ագրեսորը եթե քեզ չի էլ սկսում «հարգել», հասկանում է, որ իր մարտավարությունը պարտվեց:

«Դու այժմ այդպես փորձում ես ինձ ծաղրել, որպեսզի քո սեփական խոցելի տեղերը և կոմպլեքսները թաքցնես: Դու սխալ ես ընտրել ինձ՝ որպես քո «զոհ». իրականում դու վախենում ես, որ քո թուլությունը կնկատի Իքսը, և այդ նպատակով փորձում ես ուշադրություն շեղել և նրա աչքում «խառոշի» երևալ, իբր դու էլ ես ուժեղների, բռիների, «խառոշիների» էլիտայից, որ նա քեզ «չկպնի»: Մինչդեռ եթե դու ինձ ծաղրելու փոխարեն նրանից պաշտպանվելու օգնություն խնդրեիր, այդ խնդիրը չէիր ունենա»:

Իհարկե, այսպիսի մարտավարությունը հնարավոր է միայն, եթե կա պարարտ հող, այսինքն՝ ծաղրողը և «խոռը», ինչպես նաև իբր «չեզոք» «դիտողները»՝ «ավարա անբանները», ընդունակ են այս մարտավարությունն ընկալելու: Հաճախ դա հնարավոր է ավելի շատ դեպքերում, քան կարող է թվալ: Իհարկե, այս դեպքի համար պետք է արագ մտածողություն ունենալ՝ վերլուծելու համար՝ արդյոք հնարավո՞ր է այժմ այս մարտավարությունը կիրառել, և կոնկրետ ո՛ր տարբերակն ընտրել: Պետք է նաև նախապես դիտողականություն և վերլուծության ու ռեֆլեքսիայի կարողություն ունենալ: Հաճախ հալածանքի տանող իրադրությունները շատ արագ են զարգանում, և դա է պատճառը, որ այսպիսի մարտավարությունների փոխարեն տագքլխությունն է գերակշռում:

Չնկատելու տալը նույնպես հնարավոր մարտավարություն է, հատկապես եթե դա թուլություն չի ընկալվում շրջապատի կողմից: Ագրեսորին լռեցնելը չնկատելու տալով, եթե դա արտահայտվում է փոքր արժեքին մեծը գերադասելու ձևով, ասենք՝ «հանուն մեր կոլեկտիվի միասնության ես այդ փոքրիկ հարձակումը զանց եմ առնում», կարող է, իրոք, պտտեցնել մակընթացությունը և ագրեսորին լռեցնել ու

դնել, ընդհակառակը, անհաջողակի դիրքում, որից նա, գուցե, դաս քաղի: Դա հատկապես ճիշտ մարտավարություն է այն դեպքերի համար, ինչպես, օրինակ, տրոլլիզմը համացանցում (եթե, իհարկե, մուծված չէ), այսինքն՝ այն դեպքերի, երբ նախանշված «զոհի»՝ իրադրության մեջ ընդգրկվելը շատ կարևոր է հարձակման «ջերմաստիճանը» պահպանելու համար: Լռի՛ր, և հարցը վերացավ: Սրա է՛լ ավելի ուժեղ տարբերակն է արհամարհանք դրսևորելը, քանի որ նախորդ դեպքում ագրեսորը, արժեքայնորեն, շարունակում է դասվել կոլեկտիվի մաս, իսկ արհամարհանքի դեպքում նա դուրս է մղվում այն կոլեկտիվից, որը դու կերտեցիր քեզնից և շրջապատից՝ արդեն առանց նրա:

Իհարկե, վրեժը՝ հատուցումը, շատ տարածված մարտավարություն է, սակայն ամենաարխայիկն է և այդ իմաստով՝ ամենաանգերադասելին. վրեժի լավ տեսակն այն է, երբ ագրեսորը դաս է քաղում, այսինքն՝ վրեժը ագրեսորի աստվածային ամբողջականությունը խոցելու վնասից դառնում է այդ ամբողջականության վերականգնման ձև, նրան առաջարկ՝ դառնալ աստվածակերպ, ապաշխարել և միանալ աստվածակերպերին: Դա արդեն վրեժ չէ, դաս է, թեև երբեմն «դաս» ասելով հենց վրեժը նկատի ունեն:

Վերջապես, կատակի տալը նույնպես նշենք. ագրեսորը շատ անվստահ է, քանի որ իր ագրեսիան ձեռնարկելու համար հսկայական եռանդ է ներդրել, նա չգիտի՝ հաջողության կհասնի թե ոչ, նա ռիսկի է դիմել, և սովորաբար առաջին հարձակվողն ավելի թույլ է իրեն զգում, քան իր նախանշած զոհը, դրա համար էլ առաջինն է հարձակվում, որ իր թուլությունը կոմպենսացնի անսպասելիությամբ: Եվ շատ հաճախ նրանք պատրաստ են ընկրկել, եթե արժանի ձևով ոչ թե հակահարված, այլ իրադրությունը «ջրելու» հնար եղավ:

Ընդհանրապես, ագրեսիայի էությունն է՝ կենտրոնացնել իրադրությունը հենց տվյալ դեպքի շուրջը, տանել դեպ զրոյական գումարի իրադրություն, երկու հանդիպադրվող վեկ-

տորների: Մինչդեռ կա 359 աստիճան տարատեսակների հնարավորություն՝ սադրանքի չենթարկվել, չնեղացնել կոնտեքստը[264], չընդունել ագրեսորի առաջարկած վեկտորայնությունը:

Կարևոր եմ համարում բռնության տարատեսակների և նրանցից որոշ դեպքերին հակադրվելու մարտավարությունների այս փոքրիկ ու նախնական վերլուծությունը, քանի որ այս իրադրություններին մարդ սկսում է բախվել շատ վաղ տարիքից: Եվ հետագայում ցանկացած պրոտոհալածանքային կամ պրոտոանարդար իրադրություն կարող է վերլուծվել էլի այս տերմիններով, քանի որ մարդու արժանապատվությունը ցածրացնելու կամ ամբողջականությունը խախտելու տակտիկաները գրեթե չեն փոխվում մարդու ողջ կյանքի ընթացքում: Մարդն աստվածային է, նրան տրված է խոսք, նա կարող է օգտագործել խոսքը: Նրան տրված է դատողություն, ուրեմն՝ ռեֆլեքսիայի կարողություն նույնպես, եթե զարգացրեց: Նրան տրված է դիտողականություն. դիտել, թե ի՞նչ է լինում, և իմաստային կապեր ստեղծել դիտած երևույթների միջև: Հենց այդ հատկանիշները, ի թիվս այլոց, պիտի դաստիարակվեն ու ձևավորվեն, կրթվեն, զտվեն մարդու մեջ: Իհարկե, նաև հենց այն արժեքը, որ մարդս աստվածային և ամբողջական, արժանապատիվ երևույթ է: Նաև որպեսզի ի՞նքդ անարդար ագրեսորի դերում չլինես:

ԳՀ.– Իսկ ինչպե՞ս բռնության մշակույթը ներմուծվեց մեր հասարակություն:

ԳՏԳ.- Ինչու՛ մենք մանկապարտեզում, դպրոցում և բակում հանդիպում ենք երեխաների, որոնց վարքը՝ և՛ հայհոյանքը, և՛ դիմացինի նկատմամբ վերաբերմունքը, հիմնական մի ուղղվածություն ունի՝ դիմացինին արժանապատվությունից զրկել կամ գոնե այն խոցել: Ֆիզիկապես թե բառերով, նույնիսկ սո-

264. Տե՛ս կոնտեքստի ընդլայնման կիրառուկի մասին այստեղ. Տեր-Գաբրիելյան, Գ. (2018), Կոնտեքստի ընդլայնում: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=gTPHWINgIH0 [դիտվել է 18.08.2020]:

ցիալ-տնտեսական ստատուսն օգտագործելով և այլն:

Հալածանքի, բռնությունների, սադրանքների ամենատարբեր տեսակների այդ միտումը մեր հասարակության գլխավոր միտումներից էր, որ, մինչև հիմա տեսնում ենք, երբեմն-երբեմն արտահայտվում է:

Ավաղ, ով որ վերապրել է Գուլագում, մեծ մասը կա՛մ վերապրել է, որովհետև շատ խորամանկ է եղել, կա՛մ ծառայել է ամենաստորին կերպով: Արժանապատիվ վերապրածները քիչ են, թեև մարդ ի՞նքն է որոշում՝ արդյոք արժանապատիվ էր թե ոչ: Այստեղ՝ անարգանքի ենթարկված մարդու դեպքում, արդար դատավոր չի կարող լինել հաճախ:

Ճիշտ ինչպես որ մենք ունենք մի զանգված, որը պնդում է, որ ինքը Ղարաբաղյան պատերազմի ժամանակ հերոսություններ է արել, նույն կերպ էլ Գուլագից վերադարձածները, թեկուզև «ընկածները», ամենատուժածները, իրենց վերադարձից հետո, չունենալով հնարավորություն՝ փաստորեն զրկված լինելով մասնագիտությունից, փող սարքելու միջոցից և այլն, պիտի մի կերպ ինքնահաստատվեին արդեն իրենց խաղաղ շրջապատում՝ թաղում և այլն: Եվ մի կողմից՝ ինքնահաստատվեին, մյուս կողմից՝ ամբողջությամբ ներշնչված էին գուլագային արժեքներով՝ «Մեռի՛ր դու այսօր, վաղը՝ ես» և այլն: Սա ստոկհոլմյան սինդրոմի պես բան է. մարդը, նույնիսկ տուժած լինելով բռնությունից, ընկալում է բռնության արժեքները որպես իրենը, միակ «աշխատող» արժեքներ:

Այդ պատճառով էլ մարդիկ, որոնք գող չէին, չէին պատկանում այդ «օրենքով գողերի» կաստային, այդ գողականության մշակույթն իրենց հետ բերեցին: Տրավեստի արված ձևով, այսինքն՝ ավելի շատ ֆարսային ձևով, հաճախ՝ պարոդիայի ձևով: Այսինքն՝ այդ մշակույթը «ներքևից» է գալիս: «Օրենքով գողերը» երբեք այդքան որակական ազդեցություն չէին ունենա, եթե տասնամյակների ընթացքում այդ գործելակերպը սոցիումի կողմից կառուցվածքայնորեն չմարսվեր և վեր-

ԵՒից՝ իշխի կողմից չթիմարվեր ու քաջալերվեր:

Դա շատ ուժեղ արտահայտվում էր ամենօրյա բարքերի վրա: Այսինքն՝ դու ատոմացված էակ ես. հասարակություն չկա, վստահելի հենարան չկա. ոչ մեկի հետ կապի մեջ չես՝ բացի քո ամենամոտիկ մարդկանցից՝ մայրիկից և հայրիկից, որից էլ վախենում ես, որովհետև նա քեզ ծեծելու է. բանտից նոր է եկել և «էդպես գիտի», կամ՝ անընդհատ հարբած է, մայրիկին է ծեծում և այլն: Եվ նրանցից բացի (այն էլ՝ լավագույն դեպքում միայն նրանց հարգելով)՝ ոչ մեկին բանի տեղ չես դնում, մարդկանց հարգել չես սովորել: Ընդհակառակն ես սովորել:

Այդ հաղորդագրությունը՝ «Մեռի՛ր դու այսօր, ես՝ վաղը», դառնում է, տրավեստի իմաստով՝ «ես քեզ հիմա խփեմ, թող վաղը հայրդ գա, ինձ ծեծի, ոչինչ, եթե կարող է»:

Մյուսը՝ «քեզ ձեռք չեն տալիս՝ մի՛ խառնվիր», նույնպես շատ գործածական է. ուրեմն դու խաբար տվող ես, «գործ տվող» ես, եթե ինչ-որ արդարության հարցի դեպքում խառնվես դրան. ո՛չ մի դեպքում, իբր, չի կարելի խառնվել:

Այդ կոդեքսը գործում էր, քանի որ մեր հասարակությունն էլ դրան լավ «նախապատրաստված» էր: Նույնիսկ եթե մարդը Գուլագ չէր արտաքսվել շնորհիվ մի շարք հանգամանքների, ավանդական ընտանիքը նախ այլասերվել էր Ցեղասպանության պատճառով: Ինչքան հասկանում եմ՝ մենք 15 թվից հետո Հայաստանի այսօրվա տարածքում ունեինք 300 հազար փախստական և որբ և ընդամենը 700 հազար բնակիչ, այսինքն՝ բնակչության մի հսկա մասը փախստական և որբ էր, և այդ բոլորի սերունդն ենք մենք: Այսինքն՝ հասարակության բնական դրվածքի այլասերվածացում էր եղել արդեն Ցեղասպանության պատճառով: Հետո դրան ավելացել էր նաև բոլշևիկյան այլասերվածացումը:

Դրա համար էլ եթե այդ թաղում կային քիչ թե շատ նորմալ մարդիկ, մեկ է, հաճախ դիմադրողականություն այդ գողա-

կան բարքերի նկատմամբ չկար:

Առավել ևս, որ դա նաև խորհրդայինը չընդունելու դրական լիցքն ուներ: Ճիշտ ինչպես որ ես պատմում էի կովկասցիների և այլնի մասին: Այսինքն՝ դու Սովետի այդ խաղի կանոնները չես ընդունում:

Որպեսզի մի քիչ շատ փող ստանաս, դու պիտի լինես գիտությունների սուտի դոկտոր, շատ լավ, ես գիտական աստիճան կգնեմ, կաշառք կտամ, որպեսզի փող ստանամ, ինձ չեն հետաքրքրում նրանց խաղի կանոնները, որ կա ինչ-որ գիտություն, կա գիտության էթիկա և այլն, ինձ պետք է սոցիալական զարգացումը:

Նույն կերպ էլ այստեղ. ավելի լավ է գողական բարքերին հետևել, քան կոմերիտական կամ սովետական այլ՝ կոմունիստական, և այլն: Այսինքն՝ դրա մեջ կա նաև համակարգի բացասման հեղափոխական լիցք: Հենց դրա համար էլ նրանք սկզբնական շրջանում կոչվում էին «սոցիալապես մերձավոր» բոլշևիկներին, որովհետև երկուսն էլ չէին ընդունում առաջարկված հիերարխիաները, մինչև որ ստալինիզմը չզմռսեց հակամարդկային հիերարխիան:

Այնպես որ՝ դա ֆարսային տարբերակն էր, բայց շատ հետաքրքիր. շատ բաներ ես հետագայում եմ հասկացել, հայտնաբերել: Օրինակ՝ փոքրուց, հենց որ սկսեցինք ծխել (14-15 տարեկան էի, դպրոցում), մի հատ Փուրթուլ կար, ոտք չուներ թե ձեռք՝ չեմ էլ հիշում, և «Սալյուտ» էր ծախում, այսպես ասած՝ «տակից»: Երբ որոշում էինք գնալ, սիգարետ առնել, մեր տղաներից մեկն ասում էր՝ գնանք *բառիկից* առնենք: Շա՜տ երկար երբևէ մտքովս չէր անցնում հասկանալ, թե այդ բառը որտեղից է գալիս, մտածում էի՝ «բառիկ»-ը «բառմեն»-ի տարբերա՞կ է, ի՞նչ է: Հետո հասկացա, որ դա գողական լեզվի՝ ռուսերեն «բառիգա» հասկացությունն է, այսինքն՝ գողոն ստացող և վաճառող:

Եվ այդպես՝ շատ հասկացություններ, նաև՝ ոչ այդ ասպարե-

զի: Ռուսերենի ձևափոխման անմեղ դեպքերից մեկը, օրինակ, ֆուտբոլի խաղի ժամանակ, որ ասում են՝ *պռապըշկա*. ամբողջ կյանքում ուզում էի հասկանալ՝ դա ինչ է, պարզվեց՝ пробежка բառի աղավաղված տարբերակն է:

Ստեղծվեց, զարգացավ աղավաղված ռուսերենից եկած մի ամբողջ լեզու, որի հետքերը տեսնում ենք «վուլկանիզացիա» բառում, որը հաճախ է հանդիպում ցուցանակների վրա, կամ «ստերլեձ»-ում: Եվ գողական լեզուն դրա մի խոշոր ու շատ ստեղծագործ մասն է: Ընդ որում՝ բառերն աղավաղվում էին և արդեն առանձին էին կամ կապ չունեին իրենց ծագումնաբանության հետ: Սկսած հենց «ռազբիրատ» բառից, որը ռուսերենի երրորդ դեմքի թեքումից է, ռուսերենում որպես այդպիսին չի օգտագործվում այդ իմաստով՝ որպես գոյական, իսկ ռուսերենի разборка-ն շատ ավելի անմեղ է հնչում, քան հայերեն «ռազբիրատ»-ը: Եվ ռուսերենի ինֆինիտիվի ձևը՝ անորոշ դերբայի ձևը, որպես այդ լեզվի հասկացությունների անսպառ աղբյուր. *լիվիրիտ, վինիվիտ* և այլն:

Ահա մի կեսկատակ-կեսլուրջ հատված ֆեյսբուքյան մի քննարկմանն իմ խոսքից՝ փոքր-ինչ ձևափոխված [265].

> *«Տինտիրիտը լիվիրիտի թեթև ու մեծահոգի դեպքն է, լիվիրիտը՝ վազնիկատի նիսյա տարբերակը, այսինքն՝ խլրտալ, թպրտալ՝ ուշադրություն գրավելով, առանց դրա իրավունքն ունենալու (երկրորդ «պատվիրանի» խախտում): Եթե վազնիկատը հայտ է ու հավակնություն, ապա լիվիրիտ անում են ստորին կաստաները կամ ստոր(ին)ացվածը/ստոր(ին)ացվողը, ու դրա համար, եթե առանց թույլտվության ես արել, սովորաբար պատասխան կպահանջվի: Իսկ տինտիրիտն այն դեպքն է, երբ այնքան սրամիտ ես, կամ բարի միջավայր է, որ լիվիրիտ ես անում, բայց քո լիվիրիտին տեր կանգնել երևի չեն պահան-*

265. Տե՛ս https://www.facebook.com/photo.php?fbid=1861045387357774&set=a.233422300120099&type=3&theater [դիտվել է 18.08.2020]:

ջի քեզնից, թեև միշտ էլ կա շանս, որ տինտիրիտը կվերածվի լիվիրիտի որևէ մեկի աչքում, ու պըտի ատվեչայ պահես, որ դա արեցիր, չնայած քո՝ ստորին կաստային պատկանելուն կամ այլ պատճառով իրավունք չունենալուն տվյալ հանգամանքներում ուշադրություն գրավելու, այսինքն՝ սխալ վազնիկատ ես ըլնում:

Ես դեռ չանդրադարձա այդ շղթայի ևս երկու օղակին՝ վինիվիծ ու շեբուռշիծ: Դե, վերջինը պարզ է, իսկ վինիվիծը (երևի, ռուսերեն винить, виноватить – «մեղադրել, մեղսագրել» բառից) նույնպես շատ կարևոր է՝ այն վազնիկածի ու լիվիրիծի միջև է ու նշանակում է «սխալ» ռազբիրատ սկսել (մեղավորին փնտրել ուրիշների մեջ), գուցե անտեղի տեղը, ինչի համար, կրկին, պիտի ատվետ պահես, թե սկսել ես: Այդպիսով լիվիրիտ-ը վինիվիծ-ի հաջորդ փուլն է, երբ վինիվիծ էլ անել չէիր կարող (կամ ռիսկ չարիր), բայց փոխանակ սսկվես, լիվիրիտ սկսեցիր անել, ու՝ դե հիմա... »:

Այդ մշակույթի և բառապաշարի մի հոյակապ, թեև սահմանափակ օրինակ է տալիս «Մեր բակը» առաջին ֆիլմի այն երաժշտական դրվագը՝ ռազբիրատ-ին նվիրված[266]: Կարող ենք նկատել, որ -իտ վերջավորությամբ հայերեն լեզվաստեղծագործությունն իրականում անսպառ է: Իհարկե, այդ դրվագի նպատակն է «մերել» այդ մշակույթը մեր քաղաքային կյանքի բարքերին, «անմեղացնել» այն, և այդ պատճառով էլ անտրամաբանական թռիչք է տեղի ունենում «ռազբիրատ»-ից՝ հաշտության, հակառակ այն մյուզիքլի, որին ընդօրինակում են այդ դրվագում («Վեսթսայդյան պատմություն»): Նախաօրինակում, ինչպես և «Ռոմեո և Ջուլիետում», միայն մահն է դադարեցնում պառակտումը:

266. Դովլաթյան, Մ. (1997), Մեր բակը: Շարմ հոլդինգ: Տե՛ս 35.31-45.37 րոպեները: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=WI42op04vvY [դիտվել է 18.08.2020]:

«Մեր բակի» դրվագը շատ տաղանդավոր է, նպատակն էլ, կարելի է ասել՝ ազնիվ, սակայն այդ գաղափարախոսությունը՝ որ «սա էլ քաղաքային տղայական մշակույթի նորմալ մաս է», անընդունելի է, քանի որ այդպիսի պատանեկան բարքերով անցած մեր ժողովուրդն է, որ հետո, այդ ֆրուստրացիան, տրավման մեջը կրելով, ճգնում է և չի զորում ձերբազատվել բռնության մշակույթից: Դա, ընդհակառակը, եթե այդպես, անցողիկ տղայական պահ է համարվում, արդյունքում դրա առաջացրած ազդեցությունը ճզմվում, հետին պլան է մղվում և դառնում մեր ժողովրդի համատարած սթրեսի աղբյուրը:

Այդպես, այդ հսկայական լեզվական և այլ ստեղծագործությունն այսբերգի կատարն էր՝ մի ամբողջ բլատնոյ, գողականացված, գողականացվող մշակույթի, որն ավելին էր, քան ենթամշակույթ, իրոք որ հակամշակույթի պես՝ «նորմալ» մշակույթին հսկայական հակակշիռ էր: Դա վարքային մշակույթ էր և է, և այդ իմաստով հսկայական ու շատ լավ մտածված ճիգեր են պետք, որ այն վերանա:

ԳՀ.- Իսկ 90-ականներից հետո՞. ի վերջո, եթե մշակույթն այդ համակարգի դեմ էր, և եթե այդ համակարգը վերացավ, այդ մշակույթը պիտի մարեր: Բայց այն չմարեց, այլ ուրիշ զարգացում ստացավ:

ԳՏԳ.- Մենք միֆականացված ենք վերաբերվում մեր պատմությանը: Հիմա համարվում է, որ հայ ժողովուրդն իր գիտակցական կամքով որոշեց անկախանալ և Անկախության հռչակագիր ընդունեց և մի տարի հետո էլ գնաց և քվեարկեց և այլն: Չէ՞ որ այդպես չէր իրականում: Կային հոսքեր, հոսանքներ, տարբեր մոտեցումներ, տարբեր վերաբերմունքներ, և այդ կարևորագույն հոսքերից ու հոսանքներից մեկը ազգայնականությունն էր, որը լռեցվել էր ստալինիզմի օրոք, 20–30–ականներին ջարդուխուրդ արվել, սակայն կրկին ամրապնդվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմից սկսած, կոմունիստական վարչակարգի կողմից, որոշակի

նպատակներով:

Հայաստանի դեպքում՝ որպեսզի Հայաստանին սանձած պահեն, սակայն ազգայնականության ուժն օգտագործեն, եթե պետք է, ռազմի դաշտում կամ Թուրքիայի դեմ: Որպեսզի, նաև, կառավարելի «փական» ունենան՝ սովետական սոցիալիզմի գաղափարական սնանկությունը գոնե ինչ-որ կերպ հակակշռելու համար: Որպեսզի իմանան՝ ով ինչ է մտածում: Որպեսզի եկեղեցու և ավանդական կուսակցությունների ցանցն ու Սփյուռքը օգտագործեն աշխարհով մեկ, ինչպես կարող են:

«Ես ինքս զարգացնեմ ազգայնականությունը, տեղ տամ դրան, բայց իմանամ՝ ինչքա՛նը կարելի է, ինչքա՛նը՝ չէ». դա էր մոտեցումը:

Մի կողմից ամրապնդվում էր ազգայնականությունը, մյուս կողմից իրականությունը բերում էր այդ գուլագային հոգեբանությունը և բարքերը և, ասենք, ցեխավիզմի մշակույթը, որը էլի նույն այդ բռնի գործելաոճի կոռուպցիոն տարբերակն էր, նույն գուլագային տուֆտայի շարունակությունը: Այսինքն՝ իմաստ չուներ և հարգանք չէր հարուցի պետության համար աշխատելը: Պետք էր ցեխը վերցնել, պետությանը տալ կաշառք և զուգագուլպա արտադրել, կրծկալ կամ այլ բան և վաճառել «ձախ» (налево): Սպեկուլյացիան՝ շահակորզումը, արտասահմանից ջինս բերելն ու թանկ ծախելը, արգելված է, սակայն պատվավոր ձև՝ փող վաստակելու: Քանի որ փող վաստակելը, մասնավոր սեփականությունը մարդկության և հայի համար բնական բան է, և դրա արգելքը, մանավանդ հայրենադարձների գալուց ի վեր, չի կարող բնական համարվել: Ուրեմն պետությանը խաբելը դառնում է «ճիշտ»: Իսկ դա այլասերում է ողջ հասարակությունը: Որովհետև չէ՞ որ եթե զուգագուլպա արտադրելու համար դու, ասենք, թել ես գողանում, ապա սեփական կամ որևէ ցեխավիկի դաչան կառուցելու համար ցեմենտ ես գողանում: Իսկ հետո գալիս է երկրաշարժը և սպանում 25 հազար մարդու՝ քո գողացած

ցեմենտի բացակայությամբ կառուցված և երկրաշարժից փլուզված շենքերի փլատակների տակ:

Եվ այդ գրեթե տոտալ կերպով, գրեթե խորքովին այլասերված համակարգը հետո դառնում է անկախություն: Այն, որ փողոցում կանգնած վանկարկում էին մի պահ, բոլորը՝ տոգորված, առանձնապես բան չի նշանակում դեռևս այդ պահին: Եվ գուցե հիշեք, որ գողերն ասում էին՝ «ժողովուրդ ջան, հանգիստ կանգնեք, այսօր մենք որոշել ենք, որ ոչ մեկիդ տունը չենք մտնելու»: Այսինքն՝ գողականությունը հենց սկզբից հաճույքով մերվում էր ազգայնականությանը, իբր՝ հայրենասիրությանը, լեգիտիմացնում իրեն ազգայնական պարադիգմում:

Ինչո՞վ է դա պայմանավորված: Նախ՝ ազգայնականությունը նույնպես «նախնական բնազդների» հետ կապ ունի, ինչպես և, ասենք, «մայրիկի կուլտը»: Հեշտ գաղափարախոսություն է: Ավելի հեշտ է աշխարհը բացատրել որպես «օջախ» կամ «ընտանիք», քան թե որպես իրար հետ ազգակցական կապեր չունեցող մարդկանց փոխհամագործակցություն, որոնք թեև ազգական չեն, սակայն պիտի հարգես նույնպես, ինչպես որ ազգականներիդ ես հարգում: Մեր ողջ հանրային դաստիարակությունը, Գուլագից ներշնչված, տասնամյակներով հակառակն է ասել. մարդը (եթե ազգականդ չէ կամ նույնիսկ եթե է), մարդուն գայլ է, ոչ թե բարեկամ: Դու մենակ ես: Ազգականիդ դեռ կարելի է հասկանալ՝ ինչու չհոշոտել: Բայց՝ ոչ ազգականի՞դ: Ի՞նչ պատճառ կարող է խանգարել:

Չէ՞ որ ազգայնականությունը տոհմացեղային միասնականության տրավեստի արտահայտումն է: Այն հակադիր է հասարակայնությանը, այն հակադրում է սեփական ազգը, իսկ մեջը՝ սեփական կլանը՝ մնացածներին: Այդ առումով՝ իր էմոցիոնալ հեշտությամբ, այն հարազատ է դառնում քրեականությանը, հեշտ ընկալվում նրա կողմից: Չէ՞ որ քրեականությունը գաղափարական դատարկությունը պիտի ինչ-որ բաներով լրացնի: Բայց կա է՛լ ավելի խորքային պատճառ:

Քրեականությունը սերտաճած էր խորհրդային պետությանը: Իսկ անարդար պետության՝ իշխի տեսակետից, ինչպես ասացի, շահավետ էր ազգայնականության բորբոքումը, քանի որ դա հնար էր տալիս, «բնազդային» ստեղնին խփելով, կառավարել, այսինքն՝ իշխել և շահագործել հանրությանը:

«Ես-ընտանիք-տոհմ-կլան-ցեղ-ազգ» շարքը հեշտ է երևակայել. այն բան հասկանալու, վերլուծելու, ճիգ գործադրելու պահանջ չի դնում: Մանավանդ՝ մի ազգի համար, որին սկզբում կոտորել են, հետո փորձել բոլոր ընտանեկան և տոհմական կապերը քայքայել, քանդել, ինչպես և Խորհրդային Միության ողջ բնակչության, բռնի կերպով: Մանավանդ՝ երբ քրիստոնեական ավանդույթը՝ «չկա հույն և հրեա», այլասերվել էր և՛ ներքին եկեղեցական պատճառներով, և՛ դարերի ընթացքում շրջապատի պատճառով, որը քեզ թշնամի էր համարում՝ անկախ քո քարոզից, և հետո էլ բռնի կերպով ոչնչացվել 20-րդ դարի խորհրդային տասնամյակների ընթացքում: Մանավանդ՝ երբ ցանկացած տիեզերական՝ կաթողիկե գաղափարախոսություն սնանկ է հնչում, քանի որ մեկ այլ տիեզերական գաղափարախոսություն՝ կոմունիզմը, օգտագործվեց բռնության համար և սնանկացավ: Մանավանդ՝ երբ «Մի՛ սպանիր» քարոզին հակադրվում է հարձակումը սեփական կացութաձևի վրա՝ «թշնամի» ազգերի կողմից, և հասկանում ես, որ տանուլ ես տալու, վերանալու ես կրկին, թե պացիֆիստական դիրք բռնեցիր: Մանավանդ որ՝ տիեզերական այդ գաղափարախոսությունը, համարում ես, օգտագործվել է հենց քո՛ ազգը ճնշելու և մեկ այլ ազգին քո հաշվին ուժգնացնելու նպատակով: Մանավանդ որ ազգայնականությունը «վերից» պարտադրվում է Սովետի հենց այդպիսի՛ կոլապսի տարբերակով և ամենամեծ ազգի՝ ռուսների հետկայսերական ինքնության փնտրտուքի՝ քեզ հասնող հենց այդպիսի՛ ճառագայթների ազդեցությամբ... Եվ այլն...

Շատ ավելի դժվար է, այդպիսի պայմաններում, երևակա-

յել, հասկանալ «աննյութ» և վարկաբեկված «հասարակությունը» որպես գլխավոր արժեք, ծառայել քեզ փոքր, թույլ և այլասերված թվացող «պետությանը», այլ ոչ թե «ազգին»: Դարեր շարունակ չգիտեիր՝ պետությունն ինչ է, և կարծում ես՝ քոնը հաջող չի ստացվելու, մեկ է, թաքնված կերպով՝ անկախ չի լինելու. քանի որ չգիտես՝ անկախությունն ինչ է, կարող ես միայն երևակայել «գայլային» անկախություն՝ ֆիզիկական ուժի, բռնության, հսկա տարածքի անկախություն: Բարդ թեմա է...

Պիտի ասեմ, որ կարևոր հանգամանք էր նաև այն, որ պատերազմին, ասենք, գեներալ Մանվելի ֆենոմենը կար: Դա ինչի՞ մասին է: Որ պատերազմին մասնակցողների «ամենաուժեղ» և «հաջողակ» խմբերից մեկը գուլագային բարքերը կրողներն էին, և շատ մասնակիցների կողմից համարվում է, որ առանց նրանց դերի պատերազմը նույնպիսի հաջողություն չէր ունենա: Որովհետև համարվում է, որ դու պիտի մի քիչ խելառ լինես, ուղեղդ՝ գուցեև մթագնած, որպեսզի համաձայն լինես արշավել դեպի մահը և համաձայն լինես դաժանորեն հաշվեհարդար տեսնել մարդ արարածի հետ, նույնիսկ եթե այդ մարդ արարածը քեզ թշնամի է դեկլարացված տվյալ պահին: Սա հայտնի մոտեցում է, ավաղ:

Համարվում է, որ այդ բարքը, այդ մոտեցումը մեծ դեր կատարեց պատերազմի ժամանակ, և արդյունքում քրեական մշակույթն է՛լ ավելի ամրապնդեց իր պատվանդանը, իր հարգանքը պատերազմած հասարակությունում: Մենք ունենք օրինակներ, որոնց մասին շատ չի խոսվում, բայց նշվում են նրանք բանավոր խոսակցություններում, նաև Մոնթե Մելքոնյանի պայքարի մասին հուշերում են նշված և այլուր. «մարադյորության»՝ ավարառության օրինակները, ներառյալ երբ ինքներս մեր ժողովրդի գյուղերն էինք թալանում: Պատմվում են նաև երկրաշարժից հետո այդպիսի դեպքեր:

Իրականում տարբերություն չկա՝ քո՛ ժողովրդին ես թալանում, թե ո՛չ քո ժողովրդին. երկուսն էլ անիրավություն է: Հենց

տարբերակում դնելն արդեն հիվանդագին ազգայնականություն է, մինչդեռ հին ժամանակներից համարվում է, որ գրավված տարածքը թալանի հանձնելը պատերազմի սովորական բարք է: Այսինքն՝ սա հենց այն արժեքներից է, որ պիտի նորացվի, վերաիմաստավորվի, այլապես այդ երկատվածությունը՝ հերոսության և ստորության՝ միասնաբար հանդես գալը երբեմն մարդկանց ուղեղներում, երբևէ չի լուծվի և հասարակությունն արժեքային աքցանից դուրս չի բերի:

Այդտեղ կա պատմական զուգահեռ ֆիդայիների շարժման հետ, խմբապետ Շավարշի պես մարդկանց անօրինությունների: Բռնության բարքը դեպի դիմացինը որոշակի խմբերում և հատկապես դժվար վիճակներում՝ պատերազմի ժամանակ, և կոնտեքստային անիշխանության ու սոցիալ-քաղաքական համակարգի կոլապսի իրադրության մեջ: Այդ ատոմացված միայնությունդ ու գայլային հոգեբանությունդ. խմբեր կան հասարակության մեջ, որոնցում դրանք գերադրական դեր են ստացել:

Եվ մեզ մոտ դրա շարունակությունը ճաշակեցինք. իշխողների սերունդներն այդ բարքին պատկանող մարդկանց բերեցին իշխանության: Եվ դրանով է բացատրվում մեր անկախության ժամանակ գողականության բարքերի, համատարած ապաբարոյականության այդ մշակույթի ամրապնդումը:

Մենք մի հետազոտություն էինք պատվիրել՝ «Քյառթուի կերպարը որպես անհանդուրժողականության ներկայացման միջոց արդի հայ արձակում»[267], որ արել են Արքմենիկ Նիկողոսյանը և Աշոտ Գաբրիելյանը, և որը տպագրվել է

267. Գաբրիելյան, Ա. և Նիկողոսյան, Ա. (2017), Քյառթուի կերպարը որպես անհանդուրժողականության ներկայացման միջոց արդի հայ արձակում: Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոլյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.) (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ: Երևան, ԵՀՀ, էջեր 201-223: Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]:

«Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ» գրքում[268]: Այնտեղ խոսակցությունը սկսվում է «ռաբիս»[269] երաժշտությունից, «ռաբիս» մշակույթի գոյացումից, որի հետագա զարգացումը «քյառթուի» սովետական տարատեսակը դարձավ՝ «ռաբիզ»: Եվ այնտեղ էլ նույն այդ պահպանողականությունը, տաբուականությունը, որոշակի իմաստով (իհարկե, դրանք նաև տարբեր էին), կար...

ԳՀ.- *Քյարթուն* որպես արդեն այդ գուլագային մշակույթի տրանսֆորմացված դրսևորում...

ԳՏԳ.- Արդեն շատ տրավեստիացված և ոչ պարտադիր գուլագային, ավելի շուտ այն իմաստով, որ այն նույնպես ասում է՝ ես «լավ տղայի» կոդեքս ունեմ, նույնը, ասենք, «գողն» է ասում, բայց եթե նույնիսկ դա միայն Գուլագից անմիջականորեն չէր ժառանգված, այստեղ տեղին է այն բառը, որ Սովետի ժամանակից է գալիս՝ деклассированный - ապադասակարգայնացված մարդիկ՝ «լյումպեն-գողականություն», այսինքն՝ էլի միավոր դարձած, նույնիսկ ոչ միավոր, տարր՝ ատոմ դարձած, ատոմացված մարդիկ: Համայնքից դուրս: Իրական համայնք չկա:

Իրենց համայնքից իրականում, արժեքային իմաստով զրկված այդ մարդիկ պիտի ստիպված ավելի՛ տաբուացված, ավելի՛ կոշտ կարծիքներ ունենան և վարք առաջարկեն, որպեսզի գոնե ինչ-որ չափով ինքնություն ձեռք բերեն: Եվ միավորվում են «հակահամայնքի» մեջ:

Որովհետև մշակութային ինքնությունը, հիշողության ինք-

268. Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոլյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.) (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ: Երևան, ԵՀՀ: Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance--and–Intolerance–in–Armenian–Literature [դիտվել է 16.07.2020]:

269. «Ռաբիս» բառն առաջացել է ռուսերեն работник искусства բառերի միացումից, և սկզբում նշանակում էր կազմակերպություններից դուրս մնացած ժողովրդական երաժիշտ:Նրանք միավորված էին АДРИ (Армянский дом работников искусства) կազմակերպությունում:

նությունը, հեղինակությունների (լավ իմաստով, ոչ թե գողական), օրինակի՛ ինքնությունը նրանք չունեն: Եվ պատահական չէ նաև, որ հենց *հեղինակություն* բառն է հափշտակվել, գողականների հասկացություններից դարձել, մինչդեռ դա կարևորագույն բառն է մարդկային քաղաքակրթության մեջ. մարդն իր ձևավորման ընթացքում անընդհատ հենվում է հեղինակությունների վրա: Իսկ մեզ մոտ, ամբողջ հետխորհրդային շրջանում, «ավտորիտետ» նախևառաջ «գողական հեղինակություն» իմաստով է սկսել ընկալվել: Այդպես շատ բաներ այլասերվել են: Նույն՝ «հասկացություն» բառը, որ փիլիսոփաները դարերով փորձում են բացատրել, դարձել է գողական արժեքների կարևորագույն հասկացություններից (sic!). понятие («պանյատները»). Объясниться по понятиям, այսինքն՝ օրենքի բացակայության կամ անզորության պայմաններում, երբ *բեսպրեդելից* ուզում ես խուսափել, գողական աշխարհի արժեքային համակարգին հենվել, «արդար» «ռազբիրատ» անել...

Արդյունքում մենք ստացանք, փաստորեն, պետականության առևանգում այլասերված գողական մշակույթի կողմից, որն ուներ մի նպատակ՝ «իջեցրած», «քցված», «կըզըցրած» պահել ժողովրդին, ապադասակարգայնացնել նրան՝ գաստարբայթըրների վերածելով, այնպես անելով, որ այս երկրում գրեթե ոչ ոք չկարողանա ապրել արժանապատիվ՝ առանց կրիմինալ արարքներ կատարելու: Եվ մեկ այլ նպատակ. օգտագործել սուտ ազգայնականությունը (նաև օբյեկտիվ տենդենցները՝ այն, որ ազգայնականությունը բնականորեն ուժգնացել էր Ղարաբաղյան պատերազմի և դրա չլուծված լինելու պատճառով), ամեն կերպ տարփողել այն՝ շահագործման, ժողովրդին քամելու այդ սխեման ամուր պահելու նպատակով: Պարզ է, որ կոնֆլիկտը լուծելու ոչ մի կարիք իրենք չէին զգալու, էլ չասած՝ այդ մշակույթը փոխելու ոչ մի կարիք չունեին, ընդհակառակը՝ պիտի այն ամրապնդել շարունակեին, որքան կարող էին:

ԳՀ.- Դա ինչպե՞ս կարող ենք փոխել: Պատմությունը հնարավոր չէ, այսինքն՝ ի սկզբանե անցումը, որ տեղի ունեցավ Խորհրդային Միությունից անկախ Հայաստան, կամ ձևավորվեց այն, ինչ որ ձևավորվեց. հետ գնալ դեպի պատմություն՝ փակուղի է, չէ՞, եթե մենք ասենք՝ ի սկզբանե սխալ հիմքերով ենք եկել:

ԳՏԳ.- Նախ պիտի ուսումնասիրենք պատմությունը: Միֆականացումից դուրս բերենք: Այդ գուլագային մշակույթն ուսումնասիրենք լրջորեն:

Այսօրվա խոսակցությունները՝ գենդեր, ԼԳԲՏ համայնք, Ստամբուլյան կոնվենցիա և այլն, կրկնություն են այն խոսակցությունների, որ եղել են և՛ Ռուսաստանում, Մոլդովայում և Վրաստանում մի քանի տարի առաջ, և՛ Իտալիայում, Բրիտանիայում, Շվեդիայում, Նիդերլանդներում՝ սկսած 1960-ականներից մինչև 90-ականները: Ամենուր նույն կերպ է ընթանում տոլերանտության այդ ձգտումը, այդ բռնությունը հաղթելու փորձը դեպի մարդու այլ տեսակը, «իջեցված, կըզըցված (опущенный) մարդ» հասկացությունից դուրս գալը՝ այդ կաստայական իմաստով, *գառլախացած*՝ ինչպես մեր բանակում են ասում: Մինչև հիմա բոլորը փորձում են գուշակել, թե այդ «գառլախ» բառը որտեղից է գալիս, և չեն կարողանում: Մի վարկածն այն է, որ girl բառից է, այսինքն՝ *աղջկացրած*, բայց հաստատ չէ, կան տարբեր վարկածներ:

Նույն կերպ տեղի ունեցող այդ բոլոր պրոցեսներն ինչի՞ մասին են. բռնության մասին են: Եթե դու բռնությանդ պատմությունը լավ չես ուսումնասիրել, եթե դու կարծում ես, որ դուք միայն հերոս էիք Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, պապդ պատմություններ չէր պատմում, որովհետև չէր ուզում գլուխ գովել, իսկ հետո պարզվում է, որ բանակը բռնաբարելով գնացել է Լեհաստանից մինչև Բեռլին ու Ռայխստագի պատերի տակ շարունակել է կանանց ու աղջիկների բռնաբարել... Եթե դու չես ուզում դա իմանալ ու հասկանալ, թե ինչու՛ էր պապդ լուռ... Ինչու՛ էր Գուլագում

նստածը լուռ, և ինչու՞ էր հաղթական պատերազմից վերադարձածը լուռ:

Եթե չես ուզում հասկանալ՝ ինչու՞ տատդ չէր ուզում խոսել իր երկրորդ մայրենի լեզվով, որը թուրքերենն էր, որովհետև վախենում էր, որ քո պապիկին կարտաքսեն՝ ասելով, որ «շպիոն» է թուրքական, եթե այս հարցերի մեջ չի ուզում մտնի մեր հասարակությունը և հատկապես նոր սերունդը, նրանք չեն հասկանա, թե ի՞նչ անեն հաջորդ քայլը:

20–րդ դարի պատմության այսբերգի հսկայական ստորին մասը, որն այժմ կամաց-կամաց վեր է հանվում աշխարհում և նույնիսկ Ռուսաստանում՝ չնայած կատաղի դիմադրությանը, Հայաստանում և հայկական դիսկուրսում շա՞տ քիչ է քննարկվում և հաճախ էլ քննարկվում է սխալ մեթոդաբանական դիրքերից ելնելով, ասենք՝ մեթոդապես առանձնացնելով Հայաստանում կատարվածը ԽՍՀՄ-ում կատարվածից: Դա մեր «ազգայնական» կանխենթադրույթի սխալներից մեկն է, ասենք՝ կարծել, որ բոլշևիկները դաշնակներին հետապնդում էին, որովհետև «դավաճան էին ազգային գործին», այլ ոչ թե որովհետև բոլշևիզմը մի համընդհանուր ընթացք էր՝ սոցիալիզմի գաղափարախոսության ուրույն մաս՝ բռնությանը սերտաճած, ողջ նախկին Ռուսական կայսրության տարածքով մեկ... Շատ կան այդպիսի խնդիրներ:

Պատմական հայացքի այդպիսի փոփոխությունը՝ իշխի՝ պարտադրվող դիսկուրսից դեպ այդ դիսկուրսի «հերոսականությունը» քանդելը, օգնում է նաև սկզբունքորեն հասկանալ և՛ իշխի կողմից գրված, պատվիրված կամ գրաքննված պատմության սահմանափակությունը (և ուրեմն չի կարելի այդպես գրել պատմությունն այսուհետ), և՛ այն, թե ինչպես վարվել իշխի հետ, ինչպես այն սանձել՝ թափանցիկության, քննադատության միջոցով, ապագայում այդպիսի թակարդային պատմական իրադրություններից խուսափելու համար: Պատմության մեթոդաբանության, ճիշտ հայացքի, խնդիրների ճիշտ ձևակերպման այդ աշխատանքը, երբ

խոսքը հայոց պատմության մասին է, գրեթե չի արվում: Ես մի քիչ անդրադարձել եմ[270] այդ խնդիրներին, բայց դեռ շա՜տ գործ կա անելու: Ընդհանուր առմամբ, առաջարկում եմ հետազոտել արժեքների վերափոխումը մեր մշակույթի մեջ. ա՛յդ տեսակետից դիտարկել պատմությունը: Դա փորձել ենք անել ժողովրդավարության[271], հանդուրժողականության[272] վերաբերյալ մեր հետազոտություններում, հիմա էլ բռնության վերաբերյալ ենք անում:

Անընդհատ ես հանդիպում եմ Երկրորդ հանրապետության վերաբերյալ աղավաղումների: Հենց նույն այդ հոդվածում, որ ես հիշատակեցի, սևագրում ասվում էր՝ «քյառթու մշակույթը ստեղծվեց 50-ականներին Խորհրդային Հայաստանում»: Այդպիսի բան չկա: Քյառթու բառն օգտագործվում էր 70-80-ականներին, շա՜տ քիչ, բայց որպես ենթամշակույթի բնորոշում՝ զուտ անկախության պատմությանն է վերաբերում: Մինչ այդ «ռաբիզն» էր:

Նույնը՝ այն օրը հայտնաբերում եմ մի՝ էլի շատ պատվավոր, հետաքրքիր, հարգարժան երիտասարդ փիլիսոփայի, մտածողի տեքստում. ասում է՝ սովետական ժամանակ մարդիկ իրար դիմում էին «պարոն», «տիկին», իսկ անկախության ժամանակ, այդ գռեհկացման հետ, սկսեցին ասել՝ «ձյաձ», «ծյոծ», «քուր», «ախպեր»: Ա՛յ մարդ, սովետական ժամանակ չէին կարող դիմել «պարոն», «տիկին», կարող է՝ հատուկենտ դեպքեր կային, Ռուբեն Զարյանն էր այդպես դիմում, բայց ընդհանուր առմամբ՝ «ընկեր» էին դիմում, և՛ արգելված էր,

270. Տե՛ս Տեր-Գաբրիելյան, Գ. (2019), «Հայացք անցյալից՝ ապագային» գրքի գրախոսությունը: Հասանելի է՝ https://www.gtergab.com/hy/news/essay/a-glance-from-the-past-into-the-future/165/ [դիտվել է 18.08.2020]:

271. Տե՛ս այստեղ. https://epfarmenia.am/hy/program-portfolio/media-programs/freedom-of-expression-and-democracy-in-armenian-literature [դիտվել է 18.08.2020]:

272. Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոլյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, Երևան, ԵՀՀ: Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]:

և՛ հոգեբանորեն անհարիր կլիներ, վտանգավոր կհնչեր այդպես դիմելը՝ «պարոն», «տիկին», «օրիորդ»:

Ա՛յ, այդպիսի անընդհատ աղավաղումներ են լինում: Դե, ռուսաստանյան այսօրվա դիսկուրսը՝ է՛լ ավելի, բնականաբար. Ստալինը մեծություն է դարձել... Երբ համեմատում ես գուլագային բարքերն այսօրվա ռուսաստանյան որոշ ճամբարների բարքերին, բան չի փոխվել[273]... Մերը գոնե մի քիչ ավելի առողջ է, բայց շատերը քիչ գիտեն մեր անցած ուղու մասին:

ԳՀ.- Այսինքն՝ շատ կարևոր է այդ ուղին հասկանալ, ուսումնասիրել, եթե մենք ուզում ենք այս կետից փոխել:

ԳՏԳ.- Եվ ճշմարտությունները վերարտադրել անընդհատ, պարբերաբար: Որովհետև, ինչպես ասացի՝ աղավաղվում և մոռացվում է, նոր սերունդը գալիս է և տեղյակ չէ:

2006 թվականին բացվեց Բռնադատվածների հուշարձանը: Հայաստանի խորհրդայնացման 50-ամյակի հուշասյան կողքին՝ Կասկադի վերևում, էլի նույն ճարտարապետ Ջիմ Թորոսյանի ջանքերով, որի հայրը նույնպես բռնադատված էր: Բայց այդ հուշարձանը բաց է ընդամենը տարին մեկ օր՝ հունիսի 14-ին:

ԳՀ.- Եվ ոչ մեկը դրա մասին չգիտի...

ԳՏԳ.- Դա Բռնադատվածների հիշատակի օրն է: Մնացած ժամանակ այն փակ է, որովհետև չկա պահակ, և վախենում են, որ այնտեղ կաղտոտեն, եթե ներսը հասանելի լինի. այդպիսի կառույց է:

Եվ հենց դա է. ոչ ոք չի լսել, ոչ ոք չգիտի, ոչ ոք տեղյակ չէ, և այդ օրը գալիս է մի 30 մարդ՝ բռնադատվածների ընտանիքներից, և հանրությունը գրեթե տեղյակ չէ այդ ամենին: Չկա թանգարան:

---

273. Հմմտ. այս դեպքը՝ https://www.bbc.com/russian/features-50872837 [դիտվել է 18.08.2020] Զաբոլոցկու այս տպավորությունների հետ. https://philologist.livejournal.com/10672627.html [դիտվել է 18.08.2020]:

Դա զուտ միայն պատմության վերաբերյալ՝ մեր դպրոցներում դասավանդվելիք, հետազոտությունների և այլն, և մշակույթի փոփոխումը դեպի սեփական անցյալը հարգելը: Շատ կարևոր էր ԱԱԾ-ի նամակը, որ «մենք մեզ չենք համարում սովետական ՉԵԿԱ-ի և ԿԳԲ-ի իրավահաջորդը»: Թեև ձևական բան է դա, բայց հազար ու մի հարց է առաջանում: Լավ, իսկ արտաքին հետախուզությամբ զբաղվողների՞ն էլ հիմա չպիտի գովերգեք այլևս, թե՞ ինչպես... Հազար ու մի հարց է առաջանում, բայց ասաց՝ «Մենք իրավահաջորդ չենք: Մենք 18 թվին երկու տարի գոյություն ունեցած վարչության շարունակություն ենք, դրա համար 100-ամյակ ենք նշում, բայց խորհրդային ժամանակաշրջանի ԿԳԲ-ն, այսպես ասած, չենք վերցնում որպես մեր նախորդ»:

ԳՀ.- Հնարավո՞ր է դա:

ԳՏԳ.- Դե, գոնե արժեքային առումով պիտի հնարավոր լինի:

ԳՀ.- Այսինքն՝ պատմական փաստը իմանալ, բայց արժեքային համակարգում չվերցնել:

ԳՏԳ.- Հակառակը՝ իմանալ և հենց արժեքային առումով ճիշտ տեսակետի՛ց դիտարկել դեպքերը:

ԳՀ.- Այսինքն՝ այդ դիտակետից նայել և ըստ այդմ որոշել հետագա քայլերը: Հանրային քաղաքականության մեջ ինչպե՞ս է լինելու:

ԳՏԳ.- Բարեփոխել ԱԱԾ-ն: Գողականության լեզվի բառարան կազմել: Հետազոտել այդ մշակույթի հոգեբանությունը, որ այդ ճյուղավոր համակարգի՝ գողական «օրենքի» համակարգի մեջ այդպես լավ արտացոլված է: Դրան հակադեղեր գտնել:

Այն տակտիկաները, որ ես նշեցի վերևում՝ կենցաղային մակարդակում բռնությանը հակազդելու, մշակել, դասագրքեր ստեղծել դրա վերաբերյալ՝ միջազգային փորձն ուսումնասիրելով, սկսել դասավանդել՝ դպրոցից մինչև ծնողներին ներառյալ... Նույնը՝ ընտանեկան բռնության վերաբերյալ...

Արժեքները դասավանդել, որ մարդս հոլիստիկ երևույթ է, և ինչու՛ չի կարելի նրա արժանապատվությանը ձեռք տալ՝ ծնված օրից սկսած:

ԳՀ.- Այսինքն՝ դրված է այդ խնդիրը, դուք ասացիք, որ Նիկոլ Փաշինյանի ելույթում, ընդհանրապես, տարբեր ռազմավարություններում այդ խնդիրը՝ բռնության խնդիրը, ինչ-որ ձևով արտացոլվում է: Հանրային քաղաքականության մեջ ինչպե՞ս է լինելու, ի՞նչ քայլեր են պահանջվում պատկան մարմիններից:

ԳՏԳ.- Ես չունեմ հստակ պատասխան, բայց իմ մոտեցումն այն է, որ **բռնության մշակույթը վերածնվում է այն ժամանակ, երբ մարդն իրեն զգում է անպաշտպան, մեկուսացած տարր:**

Ես դա շատ լավ նկատել եմ անձնական փորձով: Ես ապրում եմ մի տեղ, որտեղ երկու դպրոցի ետնաբակ է: Եվ այն պահին, երբ հանրային տրամադրությունները բարձր էին, գեղեցիկ հագնված տղաները և աղջիկները դուրս էին գալիս թևանցուկ, սիրահետում էին, սեթևեթում, հանգիստ իրար հետ խոսում, խաղում միասնական խաղեր և այլն: Այն պահերին, երբ հանրային տրամադրությունները անկում էին ապրում, սև հագնված տղայական ոհմակիկները դուրս էին գալիս և սկսում էին «ռազբիրատներ» անել, իրար վրա հարձակվել, գոռալ և հայհոյել[274]: Շատ հստակ. եղավ Ցեղասպանության 100-րդ տարելիցը, որը դրական լիցք պարգևեց մեր երիտասարդությանը, և Թանկյանի այդ համերգը. գունավոր հագնվեցին, ասենք, «Էլեկտրական Երևան»՝ գունավոր, հետո Ապրիլյան պատերազմ՝ սև հագնվածները եկան, «Սասնա Ծռեր»՝ սև հագնված, Սահմանադրության սուտի քվեարկություն՝ սև հագնված, և հետո՝ հեղափոխություն՝ գունավոր (գույնով, ոչ թե բնույթով:))...

274. Տե՛ս նաև «Էլեկտրական Երևան»-ի մասին այս էսսեն. Տեր-Գաբրիելյան, Գ. (2015), Դատողություններ «Էլեկտրական Երևանի» ետևից: Հասանելի է՝ https://www.gtergab.com/hy/news/media/thinking-aloud-about-electric-yerevan/100/ [դիտվել է 18.08.2020]:

ԳՀ.- Այո, ուրիշ էներգիա էր:

ԳՏԳ.- Մութ ուժի հաղթանակի ժամանակ, որպես դերային մոդել, մութ ուժին են սկսում հետևել պատանիները: Երբ որ մութ ուժը տեղի է տալիս, իսկույն, որպես դերային մոդել, սկսում են հետևել գունավորին, ազատին, գեղեցիկին:

Եվ այստեղ աղջիկների դերն է շատ մեծ, չէ՞, կանանց ընդհանրապես: Իսկ կանանց հարցը, իհարկե, էլի սարսափելի կարևոր է, որովհետև նրանք սովորաբար ընտրել են՝ շատերը, որպես ռազմավարություն, անվանենք դա ադապտացիոն ռազմավարություն, թողնելով տղամարդկանց հիմնականում պրոտագոնիստի՝ գլխավոր գործող անձի դեր: Այդ ադապտացիոն ռազմավարության շրջանակներում մենք կարող ենք տեսնել տակտիկական ամենատարբեր տարբերակները: Չհնազանդվել այդ բարքին: «Իմ ամուսինը գողական է, բայց ես շատ բարի, կրթված եմ», «Իմ ամուսինը ցեխավիկ է, բայց ես գիտությունների ակադեմիայում եմ աշխատում», «Իմ ամուսինը գող ու ավազակ է, ժամանակակից օլիգարխ, ես՝ բարի, բարեգործ, կիրթ, երգեր սիրող տիկին եմ» և այլն: Այդպիսի տակտիկական տարբերակներ են ընտրում վարքային: Չնկատել կամ հնազանդվել ամբողջությամբ, կուլ գնալ կամ մեկուսացված լինել այդ ամենից: Եվ ընդհանուր առմամբ ընդունել հասարակությունում տարածված կարծրատիպերը, ընդունել այդ խաղի կանոնները:

Վերջերս աղջնակների մի խումբ էր դպրոցից դուրս եկել՝ մոտ տասներկու տարեկան, քայլում էին, հինգ-վեց աղջիկ: Հանկարծ լսեցի.

- Ա՛յ տղա, հերի՛ք բրդես:

- Արա, դե, ո՞վ ա բրդում...

Նայեցի՝ մեջները տղա չկար: Այսինքն՝ այդ տղայական, մասկուլինային մշակույթն այնքան դոմինանտ է, որ աղջիկները նույնիսկ միմյանց հետ խոսելիս օգտագործում են այդ մշակույթի կարծրացած արտահայտությունները:

Մեր ժամանակակից երիտասարդ կանանց և աղջիկների ուժը նրանում է, որ նրանք գոնե այդ խաղի կանոնները հաճախ չեն ընդունում: Եվ դա երևաց նաև հեղափոխության ժամանակ: Ուրեմն՝ ավելի ըմբոստ լինել:

Ընդհանրապես, ինձ թվում է, շատ մեծ դեր ունի գենդերային կոմպոնենտը, կանայք ինչպե՛ս են հարմարվում: Որովհետև ես ասում եմ, իմ պատմվածքներում էլ եմ գրել, երբ տղաները իրար հետ կռվում էին ամենաբռնի ձևով, ասենք, իմ դպրոցական ժամանակներում, աղջիկները հետևից խունջիկ-մունջիկ նայում էին կամ ձև թափում, թե չեն տեսնում. ռեակցիա չէին տալիս կատարվածին: Ա՛յ, ճիշտ ինչպես ձեր օրինակը, որ տղաները, երբ թվում է, թե մեկուսացված շրջանակում են և հայհոյանքներով են խոսում, և կանայք, որոնք կողքով անցնում են, ձև են թափում, թե չեն լսում և չեն էլ խառնվում: Նույն կերպ աղջիկներն էին վարվում մեր դեպքում և ուսուցչուհիները (իսկ նրանք մեծ մասամբ ուսուցչուհի էին, ուսուցիչ՝ հազարից մեկ): Եվ բարքը դա էր: Նույն գուլագային վարքը: Քեզ չեն վնասել՝ մի՛ խառնվիր: Այսինքն՝ նույն «օրկեստրովկայի» մեջ: Տղամարդու վարքն էլ է գուլագային, կնոջ վարքն էլ է գուլագային, այնպես որ կանանց դերը շատ մեծ է:

ԳՀ.- Շատ լավ: Եթե ամփոփենք... Համենայն դեպս քաղաքական փոփոխությունները հնարավորություն են տալիս այդ մշակույթը ի վերջո կա՛մ մի կողմ դնելու, կա՛մ ավելի քիչ լինելու դրա կրողը: Չնայած՝ ինքս 10 օր առաջ Գյումրիում էի, և մարզերում դա շատ ավելի ակնհայտ է: Այսինքն՝ նույն բռնությունը՝ սկսած ծնողից, որն ասում է՝ «ինչը՞ղ, չե՞ս խփէ էրեխուդ, օրինակ, եթե վադ կըսորվի»... Դա ասում է պաշտոնատար անձ:

ԳՏԳ.- Մենակ այնտեղ չէ, այստեղ էլ: Ես այն օրը ռեստորանում նստած էի, տեսնեմ՝ մաման իր պուճուր երեխուն սիլլում է: Դա համատարած է, մեր մշակույթի մասն է: Ուզում եմ ասել, որ փոքրամասնությունը, որն այդպիսին չէ, մեծացել,

ուժգնացել, ամրապնդվել է: Ես չունեմ էլի համատարած քաղաքական պատասխաններ տվյալ պահին ինչ-որ ոլորտային, բայց, օրինակ, մի բան ասեմ. եթե հայ ոստիկանը, հայաստանցի ոստիկանը սովորի խոսել այն լեզվով, որով այս ընթացքում ես եմ փորձում խոսել, հսկայական քանակության հարցեր մեջտեղից դուրս կգան: Պարզապես՝ գրական հայերենի և գեղեցիկ խոսքի դասընթացներ ոստիկանների համար: Այսինքն՝ դա հենց այն կոնտինգենտն է, այն պատանիները, որոնք շատ ուժեղ ենթակա են այդ ճնշումներին, այդ գործընթացներին, հետո նրանք ընդամենը երկու տարով գնում են ոստիկանական դպրոց և դառնում պետության առաջնային ներկայացուցիչը քաղաքացու համար: Եվ նրանք չեն ուսումնասիրում այդպիսի բաներ: Եթե նա բնականից նորմալ լեզվով խոսող էր՝ մի բան է, իսկ եթե նա բռի լեզվով խոսող էր, իր ընտանիքում, շրջապատում այդպես էր սովորել, նա շարունակում է:

Եվ գիտե՞ք՝ ես, մեկ է, դրականը նկատում եմ, որովհետև ինչ Օսիպյանը փորձում էր նորմալ լեզվով խոսել, նրա օրինակին հետևում էին շարքային ոստիկանները: Բայց նրանք հաճախ չունեն այդ հմտությունները, նրանց պետք է սովորեցնել: Եվ եթե դու սկսում ես խոսել այլ լեզվով, հոգեբանությունդ էլ է փոխվում:

Եվ գիտե՞ք՝ ինչն է կայֆը: Մի անձնական բան էլ ասեմ: Շատերն ապրիլյան հեղափոխությունից հետո իրենց խոսք էին տալիս ինչ-որ բան, չէ՞. ոգևորված, տոգորված: Շատերը ծխելն էին թողնում, օրինակ: Ես այդքան կամքի ուժ չունեի, բայց ես էլ մի ուրիշ բան արեցի. որոշեցի, որ սրանից հետո աշխատելու եմ գրական հայերեն խոսել: Որովհետև մինչ այդ գրականով խոսելն իմ կարծիքով երեսպաշտությանն էր հաճախ առնչվում, ինչպես և խորհրդային ժամանակ: Որ եթե դու չես օգտագործում ժարգոնային խոսքեր և խոսակցական լեզվով չես խոսում, ուրեմն դու երեսպաշտություն ես անում, ուզում ես օֆիցիալ երևալ և այլն:

Հեղափոխությունը և Նիկոլ Փաշինյանի դիսկուրսը (ոչ միայն նրա, բայց նաև նրա) ինձ համար ազդարարեցին մի լուր. որ **այդ հետսովետականության սինդրոմը մեր հասարակությունն արդեն եզրափակեց. մենք դադարում ենք լինել հետսովետական ժողովուրդ և առաջին անգամ դառնում ենք անկախ Հայաստանի քաղաքացիներ:**

Սովետական ժամանակ գրական հայերենն ասոցացվում էր երեսպաշտության հետ, «Սովետական Հայաստան» թերթի թերթային լեզվի հետ, «սոցիալիզմ», «կոմունիզմ» բառերի և այդ գաղափարախոսության հետ, որովհետև իրական կյանքը Գուլագն էր, ժարգոնը, խոսակցականը, չգրված օրենքները և այլն: Այդ անջրպետը վերացավ: Հիմա դու կարող ես լինել անկեղծ և ոչ երեսպաշտ և ոչ օֆիցիալ, բայց չխոսել գռեհիկ լեզվով:

ԳՀ.- Ինձ թվում է՝ շատ կարևոր գաղափար է՝ այդ հետսովետականության սինդրոմի վերացումը, որովհետև մենք 90-ականներից հետո անընդհատ ասում էինք՝ անցում, անցում, հետխորհրդային... Հիմա մի պահ է, որ պիտի դադարենք, համարենք՝ այդ փուլը վերջացավ:

ԳՏԳ.- Վերջացավ: Պատմականորեն վերջացավ: Մի քանի տարի առաջ մի քանի բան գրեցի և ասացի այն մասին, որ Հայաստանն ընկղմված է երեք տեսակի ճգնաժամերի մեջ՝ գլոբալ, հետխորհրդային և ազգային[275]: Հիմա հետխորհրդայինը փաստորեն արդեն դադարում է գործոն լինել: Փաստացի դեռ կա, բայց մենք այն որսացել ենք, կարծես մանրադիտակի տակ դիտելիս լինենք, ռեֆլեքսիա ենք անում... Վերանալու վրա է:

ԳՀ.- Իսկ ինչպիսի՞ն եք տեսնում ապագան:

ԳՏԳ.- Ուրիշ խոսակցություն է: Կարճ ասեմ. Հրանտ Մաթևոս-

275. Тер-Габриелян, Г. (2017), Три кризиса и три составных части Большого Проекта, часть 1. URL: https://gtergab.com/ru/news/unpublished/the-three-crises-and-the-three-constituting-parts-of-the-big-project/134/ [последний просмотр: 18.08.2020].

յանն 83-ին հրապարակեց իր «Չեզոք գոտի» պիեսը: Այնտեղ նրա հերոսն ասում էր. «Խղճի անդրին պիտի դրվի ա՛յս հողին, և խղճի անդրին պիտի ունենա ձե՛ր կերպարանքը»: Առանձնահատուկ հերոս էր՝ Անիի վերջին վանահայրը՝ տեր Միքայելը: Այն ժամանակ՝ 1983-ին, գեղեցիկ էր հնչում, սակայն հետո եղավ պատերազմ, քրեապետությունը կազմավորվեց ու ժամանակավորապես հաղթեց, և ես հույսս կորցրի: Աշխարհի մի քանի ընտրյալ հասարակություններ կարծես լուծում են աշխարհի գլխավոր հակասություններից մեկը՝ էթիկայի և քաղաքականության միահյուսման գրեթե անհնարինությունը: Կառուցում են պետություն՝ Կանտի կատեգորիկ իմպերատիվի վրա հիմնված, որ նույն այն հին ասույթն է՝ «Մի՛ արա ուրիշին այն, ինչ չես ուզի, որ քեզ անեն»: Մեկ այլ ձևակերպմամբ՝ «Մշտապես գործի՛ր այնպես, ասես կուզեիր, որ քո այս արարքը լիներ համընդհանուր օրենք, և բոլորի արարքները լինեին այդ օրենքի վրա հիմնված»: Եվ այլ ձևակերպումներ էլ ունի: Մաքիավելիի ժամանակներից ի վեր և նրա «թեթև ձեռքից»՝ համարվում է, որ քաղաքականության մեջ դա լիովին անել հնարավոր չէ:

Փորձենք դա հերքել:

Սեպտեմբեր, 2019 թ.

Առաջին անգամ հրապարակվել է «Հետք»-ում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Գաբրիելյան, Ա. և Նիկողոսյան, Ա. (2017), Քյառթուի կերպարը որպես անհանդուրժողականության ներկայացման միջոց արդի հայ արձակում: Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոլյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.) (2017), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ: Երևան, ԵՀՀ, էջեր 201-223: Հասանելի է՝ https://epfarmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]:
2. Դովլաթյան, Մ. (1997), Մեր բակը: Շարմ հոլդինգ: Տե՛ս 35.31-45.37 րոպեները: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=WI42op04vvY [դիտվել է 18.08.2020]:
3. Տեր-Գաբրիելյան, Գ. (2013), Աշխարհը մեծ: Տեր-Գաբրիելյան, Գ. (2013), Հրապարակ նկուղ: Երևան, Յավրուհրատ: Հասանելի է՝ https://www.gtergab.com/hy/news/books/square-cellar/182/ [դիտվել է 18.08.2020]:
4. Տեր-Գաբրիելյան, Գ. (2018), Արխայիկ մտածողություն. մաս 2: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=jeXR1P-WIp8g [դիտվել է 18.08.2020]:
5. Տեր-Գաբրիելյան, Գ. (2015), Դատողություններ «Էլեկտրական Երևանի» ետևից: Հասանելի է՝ https://www.gtergab.com/hy/news/media/thinking-aloud-about-electric-yerevan/100/ [դիտվել է 18.08.2020]:
6. Տեր-Գաբրիելյան, Գ. (2018), Կոնտեքստի ընդլայնում: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=gT-PHWINgIH0 [դիտվել է 18.08.2020]:

7. Տեր-Գաբրիելյան, Գ. (2019), «Հայացք անցյալից՝ ապագային» գրքի գրախոսությունը: Հասանելի է՝ https://www.gtergab.com/hy/news/essay/a-glance-from-the-past-into-the-future/165/ [դիտվել է 18.08.2020]:

8. Տեր-Գաբրիելյան, Գ. (2018) (2017), Մարգարիտան ու Քրիզանտեննան: Տեր-Գաբրիելյան, Գ. (2018), Անաստված կինո թատրոն: Երևան, Յավրուհրատ: Հասանելի է՝ https://www.gtergab.com/hy/news/prose/the-godless-movie-theater-collection/172/ [դիտվել է 18.08.2020]:

9. Տեր-Գաբրիելյան, Գ. (2013), Մեծ ծիծաղից առաջ: Հասանելի է՝ https://gtergab.com/hy/news/blog/before-the-big-laughter/72/ [դիտվել է 18.08.2020]:

10. Տեր-Գաբրիելյան, Գ. (2014), Միխայիլ Բախտին: Բուն TV: Հասանելի է՝ http://boon.am/mikhail-bakhtin/ [դիտվել է 18.08.2020]:

11. Տեր-Գաբրիելյան, Գ., Նեդոյան, Ա., Ջալոյան, Վ., Սարգսյան, Ի. և Մարգարյան, Ա. (խմբ.), Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ: Երևան, ԵՀՀ: Հասանելի է՝ https://ep-farmenia.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature [դիտվել է 16.07.2020]:

12. Wikipedia (2020). Cargo cult. Available at: https://en.wikipedia.org/wiki/Cargo_cult [Accessed 18.08.2020].

13. Болдырев, О. (2019), Смерть на “приемке”. Арестант прожил в брянской колонии 1 час 40 минут. Би-би-си. URL: https://www.bbc.com/russian/features-50872837 [последний просмотр: 18.07.2020].

14. Крикорова, Ж., Мельникова, Ж., Недолян, А. и Тер-Габриелян, Г. (ред.) (2003), Традиция разрешения конфликтов на Кавказе и методы институтов гражданского общества. URL: https://bit.ly/2LmBhHN [последний просмотр: 18.07.2020].

15. Подосокорский, Н. (2019), «Я был потрясен и доведен до невменяемости». Николай Заболоцкий - о своём заключении. URL: https://philologist.livejournal.com/10672627.html [последний просмотр: 18.07.2020].

16. Тер-Габриелян, Г. (2017), Три кризиса и три составных части Большого Проекта, часть 1. URL: https://gtergab.com/ru/news/unpublished/the-three-crises-and-the-three-constituting-parts-of-the-big-project/134/ [последний просмотр: 18.08.2020].

17. Тер-Габриелян, Г. (2018), Уроки истории. URL: https://www.gtergab.com/ru/news/essay/the-lessons-of-history-russian/145/ [последний просмотр: 18.08.2020].

18. Тер-Габриелян, Г. (1993), Эскиз истории идей. URL: https://www.gtergab.com/ru/news/media/a-sketch-of-the-history-of-ideas-1993-1994/20/ [последний просмотр: 18.08.2020].

ՍԵՂՄԱԳՐԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻ, ԼԵԶՎԻ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Գայանե Հովակիմյան

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հայ հասարակության մեջ քրեական ենթամշակույթի տարբեր տարրերի, ազդեցության միջոցների կապը և ներգործությունը բռնության ձևավորման, դրսևորման և տարածման վրա սոցիալական հարաբերություններում, սոցիալական ինստիտուտների և խմբերի շրջանակում։

Հետազոտության մեջ ներառվել են պատմափաստագրական, գեղարվեստական, արխիվային, գրավոր նյութերի վերլուծություններ, այդ թվում՝ նախկինում չուսումնասիրված փորձառությունների ուսումնասիրություններ, ինչպես նաև փորձագիտական աղբյուրների, բանավոր շրջանառվող պատմությունների, դրանց կրող անձանց հետ հարցազրույցների ամփոփումները։

Հետազոտության վերջնարդյունքում ձևավորվել է ուղեցույց՝ հանրային քաղաքականության ինստիտուցիոնալ և երկարաժամկետ լուծումների առաջարկներով, որն ուղղված է բռնությունից զերծ սոցիալական հարաբերությունների ձևավորմանը, սոցիալական ինստիտուտների առավել արդյունավետ գործառնության ապահովմանը։

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայկ Սմբատյան

Հետազոտությամբ փորձ է արվում բացահայտել միջնակարգ կրթության ոլորտում բռնության առաջացման պատճառները, դրսևորման ձևերը, բռնության սուբյեկտներն ու օբյեկտները, ինչպես նաև հետևանքներն ու կանխարգելման մեխանիզմները: Հետազոտությունն իրականացվել է «հիմնավորված տեսություն» մեթոդաբանության կիրառմամբ: Մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս փոքրաթիվ, սակայն խորքային հարցազրույցների միջոցով լայն պատկերացում կազմել դպրոցական բռնության դրսևորման գործընթացի, դրա տարրերի և հիմնական դերակատարների մասին: Երևանի միջնակարգ դպրոցների յոթ աշակերտի հետ անցկացված խորին հարցազրույցների արդյունքում հետազոտությունը վերլուծում է դպրոցական բռնության առանձնահատկությունները հենց աշակերտների աչքերով:

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՔՐԵԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻ ԵՎ ՎԱՐՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Պետրոսյան, Յուրի Ավագյան

Հետազոտությամբ փորձ է արվում վեր հանել ՀՀ զինված ուժերում առկա միջանձնային բռնության դրսևորումները, բռնության առաջացման հիմնական պատճառները, ինչպես նաև հետևանքներն ու կանխարգելման հնարավորությունները:

Հետազոտությունն իրականացվել է ֆոկուսխմբային քննարկումների և անհատական հարցազրույցների միջոցով, որոնց

մասնակցել են զորակոչի պատրաստվող պատանիներ և երիտասարդներ, զորացրված երիտասարդներ և նախկին սպաներ: Նշված 3 խմբերի հետ քննարկումները հնարավորություն են տվել պատկերացում կազմել բանակային կյանքում առկա ոչ ֆորմալ հարաբերությունների ձևի, զինվոր-զինվոր, զինվոր-սպա հարաբերություններում բռնության առաջացման պատճառների մասին:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ. ԻՆՉՊԵՍ Է ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԴՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Շուշանիկ Խուրշուդյան

Ի՞նչ է ընտանեկան բռնությունը. խնդիրների ու գործոնների, օրինակ՝ աղքատության խթանմամբ առաջացող երևո՞ւյթ, թե՞ ընտանիքի անդամների ազատ գոյատևմանը և գործունեության ծավալմանը սպառնացող վտանգ, որը, գլուխ բարձրացնելով ընտանեկան միջավայրում, բռնության ենթարկվողներին դատապարտում է աղքատության:

Հետազոտությամբ դիտարկվել է ընտանեկան բռնության և աղքատության կապը, վերջիններիս փոխկապակցված լինել կամ չլինելը, ինչպես նաև քննարկման առարկա է դարձել աղքատության և բռնության փոխկապակցման շղթան: Բռնությունը ընտանիքում բռնություն գործադրողի կողմից ուժի, իշխանության և վերահսկման հաստատման երևույթ է: Ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների և ազատությունների խախտում լինելու հետ մեկտեղ նաև խոչընդոտ է այլ հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման համար:

Ընտանեկան բռնության առանձնահատկությունների ուսումնասիրությամբ վեր է հանվել, որ աղքատության գոր-

ծոնի ազդեցությունը կարող է որոշակիորեն արտացոլվել արդեն իսկ բռնության խնդիրների բախված ընտանեկան միջավայրում՝ ազդելով բռնության դրսևորման ձևի կամ էսկալացման, սակայն ոչ բուն բռնության գործադրման վրա: Աղքատ և հնարավորություններից զերծ մարդիկ ավելի խոցելի են բռնության դրսևորումների նկատմամբ: Չկա հստակ պատճառահետևանքային կապ այն իմաստով, որ աղքատությունը պարտադիր կերպով դառնա բռնության պատճառ: Սակայն կան բազում իրադրություններ, երբ աղքատության գործոնն ավելացնում է բռնության հավանականությունը: Ավելին՝ բռնության միջավայրում, որպես կանոն, առկա է լինում աղքատության խնդիր: Բռնության՝ աղքատության վրա ազդեցությունն աղքատությունը խորացնելու ուղղությամբ ստեղծում է բռնության մշակույթը և աղքատությունը համակարգված ռազմավարությամբ միաժամանակ հասցեագրելու կարիք:

SUMMARIES

Keywords

violence, thief culture, 20th century, Soviet Armenia, Gulag, gender, domestic violence, armed forces, army, school, school violence, swearing, culture of violence, criminal culture, subculture, anticulture, blatnoy

THE INFLUENCE OF CRIMINAL HABITS, LANGUAGE AND BEHAVIOR ON THE MANIFESTATION OF VIOLENCE IN SOCIAL RELATIONS

Gayane Hovakimyan

The aim of the research is to study the connection and impact of various elements and means of influence of criminal subculture on the formation, manifestation and spread of violence in social relations, within the framework of social institutions and groups.

The study includes an analysis of historiographical, fictional, archival and written materials, including studies of previously unexplored experiences, as well as summaries of expert sources, oral histories and summaries of interviews with those who bore them.

As a final result of the research, a guide was developed with

proposals for institutional and long-term public policy solutions, which is aimed at establishing non-violent social relations and ensuring more effective operation of social institutions.

CAUSES OF VIOLENCE AND PREVENTION MECHANISMS IN THE FIELD OF SECONDARY EDUCATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Hayk Smbatyan

The research attempts to identify the causes of violence in the field of secondary education, the forms of its manifestation, the subjects and objects of violence, as well as the consequences and mechanisms of prevention. The research was conducted using the "grounded theory" methodology. The methodology, through a small number of in-depth interviews, gives an opportunity to get a broad picture of the process of manifestation of school violence, its elements and key actors. Using in-depth interviews with seven pupils in Yerevan secondary schools, the study analyzes the specifics of the school violence through the eyes of pupils.

ANALYSIS OF EXISTING CRIMINAL MORALS AND BEHAVIORAL MODELS IN THE RA ARMED FORCES

Davit Petrosyan, Yuri Avagyan

The study attempts to reveal the manifestations of interpersonal violent relations in the RA Armed Forces, the main causes of violence, as well as its consequences and opportunities for prevention.

The research was carried out through focus group discussions and individual interviews with teenagers and youths who were about to be conscripted, as well as demobilized youths and

former officers. The discussions with these 3 groups gave an opportunity to form a picture of the type of informal relations in the army life and the causes of violence in soldier-soldier and soldier-officer relations.

THE LINK BETWEEN POVERTY AND DOMESTIC VIOLENCE: HOW DOES POVERTY AFFECT THE OCCURRENCE AND MANIFESTATION OF DOMESTIC VIOLENCE?

Shushanik Khurshudyan

The study looks at the link between domestic violence and poverty, whether or not they are interrelated, and discusses the poverty-violence linkage chain. Violence in the family is the manifestation of power and assertion of control by the perpetrator of violence. Domestic violence, being a violation of human rights and freedoms, is also an obstacle to the exercise of other fundamental rights and freedoms.

Through studying the specifics of domestic violence it is revealed that the impact of the poverty factor may to some extent be reflected in a family already experiencing violence, affecting the type of manifestation or escalation of violence, but not the actual use of violence. Those who are poverty-stricken and lack opportunities are more vulnerable to violence. There is no clear causal link in the sense that poverty is automatically the cause of violence. However, there are many situations where the poverty factor increases the likelihood of violence. Moreover, in an environment of violence, as a rule, the problem of poverty exists. The impact of violence on poverty in deepening poverty creates a culture of violence and a simultaneous need to address poverty through a systematic strategy.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գևորգ Տեր-Գաբրիելյան

Գևորգ Տեր-Գաբրիելյանը միջազգային զարգացման հանրագետ և արձակագիր է: Ունի ավելի քան երեսնամյա աշխատանքային փորձ Բալկաններից մինչև Կենտրոնական Ասիա աշխարհագրական ընդգրկմամբ անցումային երկրներում, սակայն գործունեության կենտրոնում միշտ եղել է Հայաստանը: 2007 թվականից, որպես Հայաստանում Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) տնօրեն, պարոն Տեր-Գաբրիելյանը կառավարում և իրագործում է լայնամասշտաբ զարգացման և ոչ ֆորմալ կրթական ծրագրեր: Նախկինում աշխատել է որպես Եվրասիա ծրագրի ղեկավար, ապա՝ քաղաքականության մշակման հարցերով ավագ խորհրդատու International Alert՝ լոնդոնյան ոչ կառավարական կազմակերպությունում: Հեղինակ է արձակի երեք գրքի, հեղինակ, համահեղինակ և/կամ խմբագիր է մի շարք գիտական կամ գիտահանրամատչելի ժողովածուների և հրապարակումների հայերեն, անգլերեն և այլ լեզուներով: Անձնական կայք՝ gtergab.com

Գայանե Հովակիմյան

Գայանե Հովակիմյանը մասնագիտությամբ սոցիոլոգ է: Ծնվել է 1979 թվականին Վանաձոր քաղաքում: 2002 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիոլոգիայի բաժինը, ստացել մագիստրոսի որակավորում, ապա շարունակել ուսումնառությունը որպես հայցորդ:

2000 թվականից աշխատում է ՀՀ արդարադատության նախարարությունում, նույն թվականից համատեղությամբ զբաղվում է կրթական և գիտահետազոտական գործու-

նեությամբ։ Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալն է, նաև դասավանդում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում։

Որպես հետազոտող համագործակցել է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանում և արտերկրում իրականացվող հետազոտությունների և ուսումնասիրությունների շրջանակում։

Շուրջ քսան հոդվածի, ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների հեղինակ և համահեղինակ է։

ԵՊՀ Սոցիոլոգների շրջանավարտների ցանցի համահիմնադիր է, Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիայի վարչության անդամ, անդամակցում է նաև մի շարք միջազգային մասնագիտական ցանցերի։

Ունի երկու դուստր։

Հայկ Սմբատյան

Հայկ Սմբատյանն անկախ հետազոտող է։ Ավարտել է Երևանի պետական համալսարանը՝ ստանալով բակալավրի և մագիստրոսի կոչումներ «Սոցիոլոգիա» մասնագիտությամբ։ Ներկայումս ուսումնառությունը շարունակում է Ուփսալայի համալսարանի (Շվեդիա) «Խաղաղության և կոնֆլիկտների ուսումնասիրություններ» մագիստրոսական ծրագրում։ Մասնագիտական հետաքրքրությունները ներառում են կոնֆլիկտների և խաղաղության ուսումնասիրությունը, մարդու իրավունքները, կրթությունը և մեդիան։ Համագործակցում է տեղական և միջազգային հետազոտական մի շարք կազմակերպությունների հետ և ակտիվորեն ներգրավված է ՔՀԿ ոլորտում՝ խաղաղարարության, կոնֆլիկտների տրանսֆորմացիայի և հետազոտահեն քաղաքականության ուղղություններով։

Դավիթ Պետրոսյան

Դավիթ Պետրոսյանը «Ռեստարտ ուսանողական-քաղաքացիական նախաձեռնություն»-ում աշխատում է որպես ծրագրերի համակարգող։ Ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժինը։ 2013-2015 թթ. ծառայել է Արցախի Հանրապետության զինված ուժերում։

2017-2019 թթ. մասնակցել է մի շարք ուսանողական շարժումների կազմակերպմանը («Մեր զեղչն ենք ուզում», «ՏարկետումլինելուԱ»)։ 2018 թ. նախահեղափոխական շրջանում եղել է «Մերժիր Սերժին» քաղաքացիական նախաձեռնության անդամ։

Սովորելուն զուգահեռ մասնակցել է տեղական և միջազգային մի շարք ծրագրերի, կոնֆերանսների, 2016-ից նախ որպես դիտորդ, ապա՝ համակարգող, դիտորդական առաքելության համահիմնադիր՝ մասնակցել է տեղական և արտասահմանյան ընտրությունների դիտարկմանը։ Ունի մի քանի հրապարակված հոդվածներ և հետազոտություններ, որոնք հիմնականում վերաբերում են կրթական և հասարակական-քաղաքական ոլորտներին։

Յուրի Ավագյան

Յուրի Ավագյանը «Ռեստարտ» գիտակրթական-բարեգործական հիմնադրամի տնօրենն է։ 2013-2015 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում որպես սերժանտ։ Զորացրվելուց հետո ընդունվել է ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիալական աշխատանք» բաժինը, որն ավարտել է 2020 թվականին։ Ուսանողական տարիներին մշտապես ներգրավված է եղել տարբեր քաղաքացիական նախաձեռնություններում։ «Հանուն գիտության զարգացման» և «Ռեստարտ» ուսանողական շարժումների հիմնադիրներից է։

Շուշանիկ Խուրշուդյան

Շուշանիկ Խուրշուդյանը իրավաբան է, մասնագիտական կրթությունը ստացել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում, այնուհետև՝ Լոնդոնի Քուին Մերի համալսարանի իրավագիտության ֆակուլտետում, որտեղ ստացել է մագիստրոսի աստիճան՝ «Միջազգային հանրային իրավունք» մասնագիտացմամբ, ապա սովորել է Մեծ Բրիտանիայի Բի-Փի-Փի համալսարանում: Մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցերի թեմաներով մասնակցել է մի շարք վերապատրաստման ծրագրերի: Աշխատանքային գործունեություն է ծավալել Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, ներկայումս՝ Հայաստանում:

Որպես ոլորտի փորձագետ՝ իրականացրել է կանանց իրավունքների պաշտպանության, ընտանեկան բռնության դեմ պայքարի և դրա կանխարգելման, գենդերային հավասարության և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության և պահպանության հիմնահարցերի վերաբերյալ մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ ոլորտի մասնագետների վերապատրաստումներ, կարողությունների զարգացման սեմինար-քննարկումներ, նաև հանրային տեղեկացվածության բարձրացմանն ուղղված դասընթացներ է իրականացրել Երևանում և ՀՀ մարզերում՝ հանրության շրջանում իրավագիտակցության և տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ:

ABOUT THE AUTHORS

Gevorg Ter-Gabrielyan

Gevorg Ter-Gabrielyan is an international development leader and a writer with 30+ years of experience working in transitional countries from the Balkans to Central Asia, with a focus on Armenia. As the Executive Director of Eurasia Partnership Foundation (EPF) in Armenia since 2007, Dr. Ter-Gabrielyan leads and implements large-scale developmental and/or informal educational projects. Dr. Ter-Gabrielyan has also worked as Eurasia Programme Manager and Senior Policy Advisor at International Alert from London. He has published three books of fiction in Armenian, and has authored, co-authored and/or edited several academic or popular science collections and other publications in Armenian, English and other languages. Personal website: gtergab.com

Gayane Hovakimyan

Gayane Hovakimyan is a sociologist. She was born in 1979 in Vanadzor.

Gayane graduated from the Department of Sociology of the Faculty of Philosophy, Psychology and Sociology of Yerevan State University with excellence in 2002, where she continued her post graduate studies.

Since 2000 she has been working at the Ministry of Justice of the Republic of Armenia, holding various positions. Now she is a Deputy Director at Center for Legal Education and Rehabilitation Programs of the Ministry of Justice. She is a University Lecturer at Armenian State Pedagogical University. She has been actively engaged in education and research activities. As a researcher she has worked with various national and internation-

al organizations, including studies and researches in Armenia and in other countries.

Gayane is a Founding Member of Yerevan State University Sociological Alumni Network, Committee Member for Social Work Association, member of various international professional associations. She is an author and co-author of about 20 manuals and handbooks.

Gayane has 2 daughters.

Hayk Smbatyan

Hayk Smbatyan is an independent researcher, holding Master's and Bachelor's degrees in Sociology from Yerevan State University. He is currently studying at the Uppsala University (Sweden) in the Master Program in Peace and Conflict Studies. His main research interests include the studies of conflict and peace, human rights, education, and media. Hayk collaborates with several local and international research organizations and is also actively engaged in peace education, conflict transformation and research-driven policymaking within the CSO sphere.

Davit Petrosyan

Davit Petrosyan works at the Restart student-civic initiative as a project coordinator. Successfully graduated from the Yerevan State University's Political Science Department. Conducted military service at the Republic of Artsakh's *Askeran* and *Martuni 2* military bases from 2013 to 2015.

Initiated and took part in several student protests from 2017-2019 publicly known as *We want our discounts* and *The right of deferment will be*. In 2018, during the prerevolutionary period was the member of the *Refuse Serj* civic initiative.

Davit has taken part in various local and international projects

and seminars participated as an observer, coordinator and co-founder in Election observation missions. Is an author of a number of articles and studies on educational and social-political topics.

Yuri Avagyan

Yuri Avagyan is the director of the Restart Scientific-Educational Charitable Foundation. He served in the Armed Forces of the Republic of Armenia as a sergeant from 2013 to 2015. After the end of military service he entered Yerevan State University, the Social Work section of the Department of Sociology, which he graduated in 2020. During his student years has been actively involved in various civic initiatives. Yuri is a founding member of “Restart” and “For the Advancement of Science” student movements.

Shushanik Khurshudyan

Shushanik gained her professional degree at Yerevan State University Faculty of Law, later at Queen Mary University of London, studying LLM, as well as at BPP University. She also has taken part in a number of professional trainings on human rights protection and promotion issues. Since graduation, she worked in the UK, France and Armenia in a number of legal institutions.

Shushanik has implemented a number of projects on the protection of women rights, preventing and combating domestic violence, gender equality, protection and promotion of human rights and freedoms. She has conducted trainings for field specialists, capacity building seminars and discussions, as well as has completed awareness-raising seminars for public in Yerevan and in the regions of Armenia aimed at developing legal and general awareness.

Այս հետազոտությունը «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող գրքերի շարքի մաս է կազմում:

«ԵՀՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԽՈՐԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

- Հետազոտություն ՀՀ-ում վեճերի այլընտրանքային լուծման ոլորտի վերաբերյալ, 2020, https://epfarmenia.am/hy/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia
- Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության վերաբերյալ հետազոտություն, 2020, https://epfarmenia.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities
- Պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում. Մաս 1, 2020, https://epfarmenia.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA
- Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, 2020, https://epfarmenia.am/hy/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia
- Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը (անգլերեն), 2020, https://epfarmenia.am/hy/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia
- Կրոնի կամ հավատքի ազատության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանում, Վրաստանում և դրանից դուրս: Համաժողովի հաշվետվություն (անգլերեն), 2019, https://epfarmenia.am/document/EPF-FoRB-2019-Report
- Հայաստանը և տարածաշրջանը, 2019, https://epfarme-

nia.am/hy/document/Armenia_and_the_Region

- Հրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019, https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm
- Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար. ձեռնարկ, 2019, https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs
- Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ, 2019, https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking
- Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, https://epfarmenia.am/hy/document/MSTA-Creative-Game
- Հասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, https://epfarmenia.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018
- ԵՀՀ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art
- Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature

This publication is a part of the series of manuals published under the 'EPF University' heading.

PUBLICATIONS UNDER THE 'EPF UNIVERSITY' HEADLINE

- Research on Alternative Dispute Resolution in Armenia (in Armenian). (2020) https://epfarmenia.am/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia
- Research On Custody and Guardianship Authorities in Armenia (in Armenian). (2020) https://epfarmenia.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities
- The Probation Service in the Republic of Armenia. Part 1 (in Armenian). (2020) https://epfarmenia.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA
- Issues Related to the Rights of and Opportunities for Yezidi Girls Residing in Armenia. (2020) https://epfarmenia.am/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia
- Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2020) https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia
- Contemporary Issues of Freedom of Religion or Belief in Armenia, Georgia and Beyond. Conference Report. (2019) https://epfarmenia.am/document/EPF-FoRB-2019-Report
- Armenia and The Region (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region
- Publishing Guide (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm
- Present-day knowledge for effective advocacy (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Manu-

al-for-CSOs-Bridge4CSOs

- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking
- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018) https://epfarmenia.am/document/MSTA-Creative-Game
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018) https://epfarmenia.am/document/OAS-Highlights-CELoG-2018
- Culture, Literature and Art. (2018) https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art
- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian). (2018) https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature

ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էջադրումը և գրքի ձևավորումը՝ Տաթև Եսայանի

Խմբագրական խորհուրդ

Գևորգ Տեր-Գաբրիելյան (գլխավոր խմբագիր), Ազնիվ Նասլյան, Անժելա Ավագյան, Ջուլյա Սահակյան, Լիլիթ Մարտիրոսյան, Արմեն Գրիգորյան, Միքայել Հովհաննիսյան, Տաթևիկ Փափազյան, Նիկոլայ Հովհաննիսյան, Տաթևիկ Ղարիբյան, Իզաբելլա Սարգսյան

Չափսը՝ 16.2X24

Թուղթը՝ 70X100 1/16

Տառատեսակը՝ DejaVu Sans

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

Ազատության պող. 1/21, բն. 23, 0037, Երևան

www.epfarmenia.am

Ուրախ կլինենք ստանալ ձեր կարծիքը
ձեռնարկի վերաբերյալ հետևյալ էլ. հասցեով՝
info-epf@epfound.am

CULTURE OF VIOLENCE IN ARMENIA

Layout and design by Tatev Yesayan

Editorial board

Gevorg Ter-Gabrielyan (Editor-in-Chief), Azniv Naslyan, Anzhela Avagyan, Julya Sahakyan, Lilit Martirosyan, Armen Grigoryan, Mikayel Hovhannisyan, Tatevik Papazyan, Nikolay Hovhannisyan, Tatevik Gharibyan, Isabella Sargsyan

Size: 16.2X24

Paper: 70X100 1/16

Typeface: DejaVu Sans

Eurasia Partnership Foundation

Yerevan, 0037, 1/21 Azatutyan ave., Ste 23

www.epfarmenia.am

Please send your comments/ feedback to
info-epf@epfound.am

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՍԱԿԱՐԳԱՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հետազոտությունների սույն ժողովածուում դիտարկվում են բռնության հիմքերը հայաստանյան իրականության մեջ՝ կենտրոնանալով հատկապես քրեական մշակույթի հիմքերի, բռնության դրսևորումների վրա՝ դպրոցում, բանակում և ընտանիքում: Գրքում վերլուծվում է բռնության կապը քրեական բարքերի, լեզվի և վարքագծի հետ, վեր է հանվում աղքատության և ընտանեկան բռնության կապը: Ամեն հոդվածում ձևակերպված են բռնության դրսևորումները հաղթահարելուն ուղղված քայլերի և քաղաքականությունների առաջարկներ բոլոր շահառու խմբերին՝ կառավարությունից մինչև անհատ:

Ժողովածուն կարող է հետաքրքրել ինչպես որոշում ընդունողներին, այնպես էլ ոլորտային քաղաքականությունների մասնագետներին և անհատներին:

This collection of studies examines the roots of violence in the Armenian reality, focusing specifically on the origins of criminal culture, manifestations of violence in school, army and family. The book analyzes the connection between violence and criminal morals, language and behavior, and reveals the nexus between poverty and domestic violence. Each article outlines policy steps, policy proposals for all the stakeholders ranging from government to individual.

The publication is intended for decision makers, policymakers, scholars, as well as general reader.

ISBN 978-9939-1-1200-8

9 789939 112008